ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՈՒԺԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ 2020Թ. ՊԱՏԵՐԱԶՄԸ



ՆՎԻՐՎՈՒՄ Է 2020 Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ԺԱՄԱՆԱԿ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՀԵՐՈՄՆԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ

IN MEMORY OF THE HEROES WHO FELL DURING
THE 2020 ARTSAKH WAR



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE OF ORIENTAL STUDIES

TRANSFORMATION OF THE BALANCE OF POWER IN THE SOUTH CAUCASUS REGION AND THE 2020 ARTSAKH WAR

Edited by Gohar Iskandaryan

YEREVAN
"Gitutyun" Publishing House of the NAS RA
2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՈՒԺԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ 2020 Թ. ՊԱՏԵՐԱԶՄԸ

Խմբագիր՝ Գոհար Իսկանդարյան

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2024

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 390

Աշխատությունը տպագրության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդը

Հետազոտություն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5F218 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում

Հեղինակներ՝ պ.գ.թ. ***Գ. Իսկանդարյան***
պ.գ.թ. ***Լ. Պետրոսյան***
պ.գ.թ. ***Ք. Մելքոնյան***
ք.գ.թ. ***Ա. Ղևոնդյան***
բ.գ.թ. ***Ա. Տոնոյան,***
ք.գ.դ. ***Մ. Մինասյան,***
պ.գ.թ. ***Բ. Պողոսյան***

Հ 390 Հարավկովկասյան տարածաշրջանում ուժային հարաբերակցության փոխակերպումը և Արցախյան 2020 թ. պատերազմը / Գ. Իսկանդարյան և ուրիշ.- Եր., «Գիտություն» հրատ., 2024.- 407 էջ:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-1548-7
DOI: 10.54503/978-5-8080-1548-7

© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ 7

Գոհար Իսկանդարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ 11

Լիանա Պետրոսյան

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991–2023 ԹԹ. (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ) 67

Քրիստինե Մելքոնյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ 1991–2023 ԹԹ. 92

Ալեն Ղևոնդյան

ՀՀ-ՌԴ ԵՎ ՀՀ-ՀԱՊԿ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՈՒԺԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՆԵՐԿԱ ՓՈՒԼՈՒՄ 151

Արտյոմ Տոնոյան

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991–2023 ԹԹ.) 236

Սերգեյ Մինասյան

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՉԱՓՈՒՄԸ 305

Բենիամին Պողոսյան

ԱՄՆ ԵՎ ԵՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ 1991–2023 ԹԹ. 355

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ կազմել է ***Մենուա Սողոմոնյանը*** 391

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

21-րդ դարի առաջին երկու տասնամյակներում հարավկովկասյան տարածաշրջանում տեղի ունեցան տարածաշրջանային և մակրոտարածաշրջանային փոփոխություններ: Հստակ ուրվագծվեցին Թուրքիայի տարածաշրջանային դերակատարության աճը, Իրանի առավել զգուշավոր քաղաքականությունը, Ռուսաստանի ռեգիոնալ դերակատարության փոխակերպումը, ԱՄՆ-ի դերակատարության տատանումները և մակրոռեգիոնալ անկայունության օջախների (Սիրիա, Լիբանան, Իրաք, Ուկրաինա) ազդեցության աճը: Նշյալ իրողությունները պայմանավորեցին Հայաստանի Հանրապետության անվտանգությանը և ազգային շահերին ուղղված քաղաքականության դրսևորումները: ՀՀ ազգային շահերի շրջանակում դրանք ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցան արցախյան հակամարտության լուծման հնարավորությունների և տարածաշրջանային կայունության վրա: 2020 թ. սեպտեմբերին սանձազերծված և մեկուկես ամիս տևած Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով շոշափելիորեն փոխվեց նախկինում հաստատված ուժային հարաբերակցության պատկերը: Կըտրուկ ավելացավ Թուրքիայի և Ռուսաստանի ազդեցությունը ռեգիոնալ գործընթացներում, էապես մեծացան Ադրբեջանի դերն ու քաղաքական կշիռը, շոշափելի ռիսկեր ի հայտ եկան Արցախի և Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համար, է՛լ ավելի զգուշավոր դարձավ Իրանի տարածաշրջանային քաղաքականությունը: Նոր ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակում կենսական էր Հայաստանի և Արցախի ազգային շահերի տեսանկյունից տարածաշրջանային զարգացումների առկա միտումների հավաստանշումը և, ըստ այդմ, անվտանգության և ազգային շահերի վրա հիմնված իրատեսական քաղաքա-

կանության մշակումը: Սույն հետազոտական ծրագրի միջոցով հետազոտողները փորձել են ներկայացնել բոլոր այն խնդիրները, որ իրենց ազդեցությունը ունեցան տարածաշրջանային մթնոլորտի փոփոխության վրա, վեր հանել դրանց շահառուներին, վերլուծել տեղի ունեցած զարգացումները և, դրանով իսկ, փորձել որոշակի եզրահանգումներ անել:

Այնուհանդերձ, տարածաշրջանային իրողություններն այս ընթացքում այնքան արագ են փոփոխվում, որ հաճախ հնարավոր չի լինում ամբողջովին հաշվարկել գործողությունների հետագա ընթացքը, քանզի դրանում խաղացողների թիվը և նրանց շահերը Արցախյան պատերազմից հետո մեծացել են:

Արցախյան երկրորդ պատերազմը առավել տեսանելի դարձրեց բոլոր այն խնդիրները, որոնք կուտակվել էին ինչպես Հարավային Կովկասում, այնպես էլ մակրոտարածաշրջանում՝ օրակարգային դարձնելով դրանք նորովի ուսումնասիրելու անհրաժեշտությունը: Այս առումով, կարևորում ենք հատկապես Հարավային Կովկասի տարածաշրջանում ձևավորված իրողությունների և ուժային նոր հարաբերակցության հետազոտությունը, մի կողմից՝ «ռեալ պոլիտիկի», մյուս կողմից՝ գիտական անաչառության և փաստարկվածության դիրքերից: Կարծում ենք, որ հատկապես կարևոր է, նախ, ուրվագծել ուժային հարաբերակցության փոխակերպման առկա պատկերը, ապա ամրագրել և դրա հիման վրա գնահատել տարածաշրջանային ուժային բալանսի փոփոխվող միտումները:

Վերոնշյալի մասով, աշխատությունում վերլուծվել են Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ Թուրքիայի ակտիվ գործունեությունը և Իրանի հավասարակշռված քաղաքականությունը, որի հետևանքով, ըստ էության, մեծացավ Թուրքիայի ազդեցությունը Կովկասում, փոխարենը նկատելիորեն թուլացավ Իրանի դերակատարությունը Հարավային Կովկասում: Վերլուծվել է նաև Թուրքիայի տարածաշրջանային «նոր» քաղաքականությունը, որով իրացվում է Արդարություն և զարգացում կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) իշխանության գալուց հետո երկրում ընդունված

տարածաշրջանային տերության կարգավիճակի հասնելուն ուղղված հայեցակարգը: Այս առումով, հեղինակների ուշադրության կենտրոնում են եղել Հայաստանի Հանրապետության շուրջ ծավալվող զարգացումները, Իրանի, ՌԴ-ի, Վրաստանի հետ հարաբերությունների ընթացքը, ներկա հանգրվանը, ինչպես նաև վերլուծվել են Թուրքիայի և Ադրբեջանի համագործակցությունը և դրանից բխող՝ ՀՀ անվտանգությանն սպառնացող նոր մարտահրավերները: Ամդրադարձ է արվել ներտարածաշրջանային երկրների անվտանգային և ազգային շահերի քաղաքականության դրսևորումներին, ինչպես միմյանց հետ փոխհարաբերություններում, այնպես էլ ռեգիոնալ ներգրավվածության տարբեր բևեռների, ռազմաքաղաքական դաշինքների հետ: Հետազոտության առարկա հիմնահարցերը տարբեր ծավալով և տարբեր դիտանկյուններից դարձել են հայրենական և արտերկրյա պատմագիտության, իրանագիտության և թուրքագիտության, քաղաքական գիտությունների ու միջազգային հարաբերությունների գիտնականների ու վերլուծաբանների ուսումնասիրության նյութ, սակայն այս աշխատության յուրահատկությունը այն է, որ հեղինակները խնդրին նայել են առաջին հերթին ՀՀ ազգային անվտանգության դիտանկյունից և հետազոտվող երկրի շահերի տեսանկյունից:

Արցախյան երկրորդ պատերազմը փաստեց, որ լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտություն կա հատկապես ՌԴ-ի և Թուրքիայի տարածաշրջանային նոր դերակատարության, տարածաշրջանում Իրանի շուրջ նոր որակի սպառնալիքների ի հայտ գալու, հայ-ադրբեջանական ուժային հարաբերակցության փոփոխման առումով: Ավելին, կարծում ենք, որ այսպիսի ուսումնասիրությունների առկայությունը խիստ կարևոր է ՀՀ արտաքին քաղաքականությունը մշակելիս: Ուշագրավ է, որ ԻԻՀ նախկին արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Ջարիֆը վերջերս հրատարակած իր հուշերում ևս նշել է, որ «Այս պատերազմը քննության արժանի դեպք է թե՛ պատերազմի բնույթով, թե՛ տեխնիկայով, թե՛ դերակատարների քանակով, և թե՛ վերջնական արդյունքով» (ẓarīf, 2024):

Սույն աշխատության նպատակն է՝ ցույց տալ, վերլուծել հարավկովկասյան ուժային հարաբերակցության փոխակերպման հիմքերն ու պատճառները, վեր հանել հարավկովկասյան տարածաշրջանային զարգացումների միտումները աշխարհաքաղաքական նոր իրողությունների ներքո, ինչը կարող է ՀՀ ազգային անվտանգության և ազգային շահերի ապահովմանն ուղղված պետական որոշումների արդյունավետությունը բարձրացնելու հիմք հանդիսանալ:

Հարկ է նշել, որ մինչ այժմ հետազոտական սույն թեմայով հայրենական գիտահետազոտական շրջանակների կողմից իրականացվել են մասնակի, հատվածային ուսումնասիրություններ, որոնք հիմնականում իրազեկման նպատակ են հետապնդել, մինչդեռ համապարփակ և խորը հետազոտություններ առ այսօր չէր կատարվել:

Աշխատանքն, ըստ էության, հոդվածների ժողովածու է, որտեղ յուրաքանչյուր հետազոտող ազատ է եղել՝ գիտական շրջանակներում ներկայացնելու իր տեսակետները, ամրապնդելու դրանք այլ աղբյուրներով: Բոլոր հետազոտողների տեսակետները, հիմնականում, մոտ են տարածաշրջանային զարգացումների և հնարավոր սպառնալիքների առումով, սակայն որոշ տեսակետներ բացառապես հեղինակներինն են: Խմբագրի համար խիստ կարևոր է եղել նյութի գիտականությունը, արդի խնդիրների ճշգրիտ ներկայացումը, հաշվի է առնվել գիտական տեսակետների բազմազանության և ազատության իրավունքը:

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ

Ներածություն

Խորհրդային Միության փլուզմամբ, ըստ էության, ազդարարվեց հին աշխարհակարգի ավարտը և նոր աշխարհակարգի ձևավորման սկիզբը: Սույն աշխատությամբ փորձ է արվել ներկայացնելու տարածաշրջանում տեղի ունեցող վերջին զարգացումները և դրանց նկատմամբ Իրանի մոտեցումները, ինչպես նաև վերլուծվել են տարածաշրջանի և արտատարածաշրջանային երկրների շահերի համընկնումները և հակասությունները վերջին երեսուն տարիների ընթացքում:

Աշխատությունում ներկայացված են ինչպես Իրանի մոտեցումը Կովկասին՝ ընդհանրապես, այնպես էլ Կովկասյան երեք երկրների հետ ունեցած առանձին հարաբերությունները՝ մասնավորապես: Աշխատությունում հստակ պատասխաններ են տրվում առ այն, թե Կովկասը ինչ նշանակություն ունի Իրանի համար, և թե Իրանը ինչպես է փորձում դիրքավորվել և արձագանքել նոր մարտահրավերներին: Աշխատության առանձին ենթաբաժնով կներկայացվեն Հայաստան-Իրան տնտեսական համագործակցության ողջ զարգացումները:

Աշխատությունում առանցքային է այն, թե ինչ դիրքորոշում է ունեցել Իրանը Արցախյան խնդրի կապակցությամբ, և թե ինչպես է փորձել պահպանել հավասարակշռությունը Կովկասում: Արցախյան վերջին պատերազմից հետո ակնհայտ դարձավ Կովկասում Թուրքիայի ազդեցության մեծացումը, ինչը չէր կարող չան-

հանգստացնել Իրանին, քանզի ընդհանրապես խախտվել էր հավասարակշռությունը, ինչը նաև սպառնալիք է Իրանի ազգային շահերին:

Զարգացումները հետխորհրդային շրջանում

Իրանն ու Թուրքիան պատմականորեն ունեցել են իրենց ռեալ ազդեցությունը Կովկասում, սակայն ԽՍՀՄ տարիներին Կովկասում այդ ազդեցությունը գրեթե չէր նկատվում, թեև դա չէր նշանակում, թե այդ երկրները հաշտվել են Կովկասում իրենց ազդեցության կորստի հետ: Ուշագրավ է, որ ԽՍՀՄ այցելելիս Իրանի շահ Մոհամմեդ Ռեզա Փահլավին, օգտվելով առիթից, այցելում էր կովկասյան երկրներ ևս: Այդպես, 1960–70-ական թվականներին շահը մի քանի անգամ այցելել է Հայաստան, Ադրբեջան (Иванов, 1969): Սա հստակ ցուցիչ էր, որ թեպետ Կովկասը ԽՍՀՄ մաս էր կազմում, այնուամենայնիվ, Իրանը ցույց էր տալիս իր հետաքրքրությունը այս տարածքների նկատմամբ:

ԽՍՀՄ փլուզման նախաշեմին՝ 1991 թ. նոյեմբերի 25-ին, ԻԻՀ արտաքին գործերի նախարար Ալի Աքբար Վելայաթին հանդիպում է ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Էդուարդ Շևարդնաձեի հետ, փորձում ճշտել՝ Մոսկվայում դեմ չե՞ն լինի արդյոք ԽՍՀՄ մյուս հանրապետություններ իր այցին: Ստանալով դրական պատասխան, Վելայաթին քննարկման է դնում նաև Իրանին սահմանակից հանրապետություններում հյուպատոսարաններ բացելու մտահղացումը (Известия, 1991): ԻԻՀ արտգործնախարարը հանդիպում է նաև ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին: Հանդիպումների ժամանակ, ի թիվս այլ հարցերի, քննարկվել է նաև Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Իրանական կողմը մտահոգություն է հայտնել հյուսիսային իր սահմանների մոտ տեղի ունեցող հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ և առաջարկել Իրանի աջակցությունը:

Խորհրդային Միության փլուզմամբ և հանրապետությունների անկախացմամբ Իրանի և Թուրքիայի համար ստեղծվեց բարենպաստ իրավիճակ՝ Կովկասում իրենց երբեմնի ազդեցությունը

վերականգնելու համար: Ըստ էության, ԽՍՀՄ փլուզմամբ երկու տերություններն էլ մտան մրցապայքարի մեջ՝ Կովկասի համար:

1991 թ. նոյեմբերի 9-ին Թուրքիան շտապեց ճանաչել Ադրբեջանի, դեկտեմբերի 16-ին՝ Վրաստանի, դեկտեմբերի 24-ին՝ Հայաստանի անկախությունը: Մինչդեռ Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի անկախությունը ճանաչել է 1991 թ. դեկտեմբերի 25-ին՝ փորձելով ի սկզբանե հավասարություն դնել հարաբերություններում:

Եթե Թուրքիան ուներ Արևմուտքի աջակցությունը և իր զարգացած տնտեսությամբ ուներ նաև մեծ գումարներ, որոնցով կարողանում էր իր կողմը գրավել Կովկասի և Միջին Ասիայի երկրներին, ապա նույնը չենք կարող ասել Իրանի մասին: Իրանը Իսլամական հեղափոխությունից հետո ներքաշվեց հյուծող իրանա-իրաքյան պատերազմի մեջ, այնուհետև Իրանի նկատմամբ իրականացվեցին տարատեսակ պատժամիջոցներ, ինչը խախտեց Իրանի տնտեսության բնականոն զարգացումը:

Սակայն, եթե Թուրքիան մեծ հաջողության հասավ Ադրբեջանում՝ հաշվի առնելով ազգային գործոնը, իսկ Վրաստանի հետ համագործակցությունն առավելապես խարսխված էր Վրաստանի՝ Արևմուտքին ինտեգրվելու ձգտման, ինչպես նաև թուրքական կապիտալի ներհոսքն ապահովելու վրա, ապա այլ էր Հայաստանի պարագան: Հաշվի առնելով հայ ժողովրդի ցեղասպանությունը և Թուրքիայի կողմից դրա շարունակական ժխտումը, ինչպես նաև Ադրբեջանին ամեն կերպ սատարելը, այս ամենը թույլ չտվեց Հայաստանին ու Թուրքիային՝ շրջել պատմության սարսափելի էջը: Հայաստանը, չունենալով Իրանի հետ ակնհայտ լուրջ տարաձայնություններ, սկսեց համագործակցել Իրանի հետ: Որքան էլ արևմտյան երկրների համար տարօրինակ էր, շիական Իրանը և առաքելական Հայաստանը կարողացան համագործակցության լավ օրինակ դառնալ տարածաշրջանում:

Կովկասի նկատմամբ Իրանի վերաբերմունքը հիմնված է հիմնականում աշխարհաքաղաքական փոփոխությունների նկատմամբ իր մտահոգություններով. աշխարհաքաղաքական շահերը

երբեմն հակասել են իսլամական համերաշխության հետ կապված իր պարտավորություններին և պատկերացումներին: Նորանկախ կովկասյան երկրների հետ Իրանը փորձում էր զարգացնել ակտիվ համագործակցություն խնդրահարույց իրավիճակներում, իսկ երբ իր ազգային շահը երբեմն հակասում էր իսլամական համերաշխությանը՝ փորձում էր չեզոքություն պահել:

1991 թ. մարտի 15–17-ին Թեհրանում ԻԻՀ ԱԳՆ միջնորդությամբ տեղի ունեցավ հայ-ադրբեջանական հանդիպում, որի ավարտին ՀՀ փոխարտգործնախարար Արման Նավասարդյանը, ԱՀ փոխարտգործնախարար Ալբերտ Սալամովը և ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին ստորագրեցին եռակողմ համատեղ առաջին հայտարարությունը, համաձայն որի՝ հակամարտող կողմերը պետք է մեկ շաբաթով հայտարարեին զինադադար, իրականացնեին գերիների փոխանակում, Ադրբեջանի կողմից Հայաստանի ապաշրջափակում, հակամարտության գոտում դիտորդների տեղակայում:

ԻԻՀ արտգործնախարարությունը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս-Բուտրոս Ղալիին տեղեկացրել էր այս գործընթացների և Իրանի միջնորդական առաքելության կազմավորման մասին, ինչի առթիվ մարտի 19-ին ՄԱԿ-ը երախտագիտություն էր հայտնել Իրանի միջնորդական առաքելության և խնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու փորձի համար (Ramazani, 1992, Բեգիջանյան, 2001, Ramezanzadeh):

1992 թ. փետրվարի 28-ին պաշտոնական այցով Երևան ժամանեց ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին, որը ներկայացրեց Իրանի պաշտոնական դիրքորոշումը առ այն, որ Իրանը խոստանում է օժանդակել շրջափակման մեջ գտնվող Հայաստանին՝ իր տարածքով աշխարհի հետ հաղորդակցվելու համար: Իրանի արտաքին գերատեսչության ղեկավարը շեշտեց, որ Հայաստանին այլևս չեն սպառնա ցամաքային շրջափակումները (Բայբուրդյան, 2004): Հանդիպման ժամանակ Վելայաթին քննարկել էր Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման հնարավո-

րություններն ուսումնասիրելու և քաղաքական նախաձեռնություններ շուրջ փոխըմբռնման եզրեր գտնելու կարևորությունը:

Հայաստանը, Արցախյան առաջին պատերազմի ընթացքում գտնվելով Ադրբեջանի և Թուրքիայի շրջափակման մեջ, Իրանին դիտարկում էր իբրև փրկության մի ուղի, որով հնարավոր կլիներ շրջափակման մեջ հայտնված մի ողջ ժողովրդի հանել ծանր վիճակից: Հայաստանին առաջին հերթին անհրաժեշտ էր ցորեն և վառելիք, որը փորձում էր ստանալ նաև Իրանից:

Հայաստանը Իրանի համար, ըստ էության, Կովկասում ամրանալու հիմնական հարթակը դարձավ: Բացի այդ, քրիստոնյա Հայաստանի հետ համագործակցությունը միջազգային կառույցներում ի չիք էր դարձնում Իրանի՝ մոլեռանդ իսլամական պետության համբավը: Չմոռանանք նաև, որ շատ հայեր, այդ թվում նաև իրանահայեր, որ ապրում են արտերկրում, այլընտրանքային տեսակետներ են ներկայացնում Արևմուտքում Իրանի նկատմամբ վերաբերմունքի մասին, ինչը առկա բացասական և շատ հաճախ՝ չհիմնավորված վերաբերմունքը առնվազն կասկածի տակ է դնում: Իրանը փորձում է որոշ չափով օգտագործել հայկական սփյուռքի առկայությունը Արևմուտքում, իսկ հայկական սփյուռքը կարող է աշխատել միջազգային հանրությունում այդ երկրի հեղինակության բարձրացման ուղղությամբ (Öztarsu, 2012):

Նորանկախ Հայաստանը մեծ կարևորություն էր տալիս Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունների հաստատմանը և խորացմանը: Դրանով էր պայմանավորված ՀՀ առաջին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի առաջին պաշտոնական այցը հենց Իրան: Ըստ Հովհաննիսյանի, «հայ-իրանական հարաբերությունների հիմքը դրվեց հայեցակարգային մոտեցմամբ: Արտգործնախարարության և գործող նախագահի համար էլ, հայ-իրանական հարաբերություններն ունեցել են առաջնային և ռազմավարական նշանակություն» (Իսկանդարյան, 2014a):

Հայ-իրանական ձևավորվող հարբերություններին մեծ կարևորություն էր տալիս նաև ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-

Պետրոսյանը, որը այդ մասին նշել է 1992 թ. մարտի 22-ին. «Իրանի հետ հարաբերություններում որևէ բարդություն չի նկատվում: Ընդհակառակը, կողմերը ունեն նույնիսկ ընդհանուր քաղաքական շահեր, այն էլ՝ պատմական հակասությունների բացակայության պայմաններում, որ չափազանց նպաստավոր հանգամանք է հայ-իրանական հարաբերությունների զարգացման գործում: Գոհունակությամբ պետք է նշել, որ վերջին շրջանում Իրանի հետ հարաբերությունները զարգանում են բնականոն, արագացված ընթացքով և, վստահ եմ, շուտով մենք կզգանք այդ հարաբերությունների իրական արդյունքները» (Տեր-Պետրոսյան, 2006): Այսինքն, պետք է արձանագրել, որ պետական մակարդակով կար ԻԻՀ-ի հետ հարաբերություններն ակտիվ զարգացնելու քաղաքական կամք:

Միևնույն ժամանակ, Հայաստանի անկախության առաջին իսկ օրերից Իրանը որդեգրեց չափազանց հավասարակշռված, պատասխանատու մոտեցում և դրսևորեց իրեն՝ որպես Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ կառուցելու պատրաստ տարածաշրջանային ծանրակշիռ դերակատար (Սարգսյան, 2023): Այս ամենը նպաստեց հայ-իրանական հարաբերությունների զարգացմանը:

Սակայն, հարկ է նշել, որ ինչպես այժմ, այնպես էլ 30 տարի առաջ, Իրանը հանդես էր գալիս որպես գոյություն ունեցող միջազգային սահմանների անխախտելիության կողմնակից: Իրանը ծանրակշիռ չէր համարում պատմական փաստերի վրա հիմնված տարածքային պահանջները: Ըստ իրանական պաշտոնյաների, նման պահանջներն ու փաստարկները կհանգեցնեին տարածաշրջանում անվերջանալի հակամարտությունների (Բալայան, 2004):

1992 թ. մայիսի 6–8-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը պաշտոնական այցով մեկնեց ԻԻՀ, որտեղ ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի միջնորդությամբ հանդիպեց Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յաղուբ Մամեդովի հետ՝ զինադադարի շուրջ համաձայնության գալու նպատակով:

Սակայն զինադադարի շուրջ համաձայնության հասնելու գործում Իրանի ջանքերն ապարդյուն անցան, քանզի ղարաբաղյան ճակատում տեղի էին ունենում լուրջ զարգացումներ, ինչի արդյունքում ազատագրվեց Շուշին, որի մասին պարզ դարձավ հենց փաստաթղթերի ստորագրման պահին: Արցախյան ճակատում հայկական կողմի ձեռք բերած հաջողությունները բավականին լուրջ լարվածություն էին առաջացրել իրանական հասարակության որոշ շրջանակների մոտ, որոնք էլ հանդես էին գալիս կտրուկ և, հաճախ, բավականին կոշտ գործելաոճով: Իրանի թյուրքախոս բնակչությունը, Ադրբեջանի և Թուրքիայի դրդմամբ, Իրանի կառավարությանը մեղադրում էր, որ քրիստոնյա Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ են հաստատվում, և պակաս կարևորություն է տրվում դավանակից Ադրբեջանին: Սակայն, մեր կարծիքով, դա չի համապատասխանում իրականությանը, քանզի Իրանը հիմնականում հավասար մոտեցումներ է ցուցաբերել երկու հարևանների նկատմամբ էլ: Վերջին տարիներին Իրանի տարբեր պաշտոնյաներ անգամ խոստովանել են, որ պատերազմի ժամանակ օգնել են հենց Ադրբեջանին, սակայն այդ օգնությունը, ըստ էության, բավարար չի համարվել Ադրբեջանի իշխանությունների կողմից: Այլ հարց է, որ Ադրբեջանը գերադասել է հարաբերությունները խորացնել Թուրքիայի հետ՝ երկրորդական մոտեցում ցուցաբերելով Իրանին: Ադրբեջանը նաև գտնում էր, որ անկախ Իրանի հանդեպ իր վերաբերմունքից, պաշտոնական Թեհրանը պետք է միանշանակ սատարեր դավանակից «եղբորը» և մասնակից դառնար Հայաստանի ամբողջական շրջափակմանը:

1992 թ. Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը Արցախյան ճակատում Ադրբեջանի պարտության մեջ մեղադրեց Մութալիբովին, ինչպես նաև Իրանին, և հրաժարվեց հակամարտության կարգավորման ժամանակ Իրանի միջնորդական առաքելությունից: Իրանի և Ադրբեջանի միջև հարաբերություններն էականորեն լարվեցին, հատկապես 1992 թ. հունիսի սկզբին, երբ Ադրբեջանում իշխանության եկած ժողովրդական ճակատը իր կանոնադրութ-

յան մեջ ամրագրեց ԻԻՀ Ատրպատական նահանգն Ադրբեջանին միացնելու հավակնության մասին (Բեգիջանյան, 2001)։ Ադրբեջանի նորընտիր նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը, ընդհանրապես, աչքի էր ընկնում հակաիրանական և թուրքամետ գործելաոճով։ Նրա առաջին հայտարարություններից մեկը այն էր, որ Ռուսաստանը և Իրանը սպառնալիք են Ադրբեջանի անվտանգության համար, ուստի, Բաքուն պետք է դաշինքի մեջ մտնի Թուրքիայի և ԱՄՆ-ի, ինչպես նաև Արևմուտքի այլ տերությունների հետ (Բայբուրդյան, 2008)։ Սակայն Էլչիբեյը 1993 թ. արդեն մեղադրում էր Անկարային, որ պատերազմի ժամանակ Ադրբեջանին աջակցություն չի ցուցաբերել։ Նա Թուրքիայի հանրային հեռուստատեսությամբ մեղադրանք է հնչեցրել Թուրքիայի իշխանությունների հասցեին, որ վերջիններս «անգամ մի քանի ուղղաթիռ չեն տրամադրել, որպեսզի Քելբաջարից (Քարվաճառից) դուրս բերեն խաղաղ բնակչությանը» (Elçibəy, 2016)։ Այդ մասին իր հուշերում նշել է նաև Զարիֆը. «Այն ժամանակ Թուրքիան Ադրբեջանին առանձնապես չօգնեց, քանի որ Թուրքիայի քաղաքականությունն այն ժամանակ ավելի շատ ուղղված էր դեպի Եվրոպա և Արևմուտք, և, ի տարբերություն Էրդողանի ժամանակների, Թուրքիան տարածաշրջանային քաղաքականություն չէր վարում» (Ẓarīf, 2024)։

Ադրբեջանն աստիճանաբար սառեցրեց հարաբերությունները Իրանի հետ՝ ակտիվ համագործակցելով տարածաշրջանում Իրանի մրցակից Թուրքիայի հետ, իսկ որոշ ժամանակ անց խորացրեց կապերը Իրանի թշնամիներ համարվող Իսրայելի և Միացյալ Նահանգների հետ։

1993 թ. ապրիլի 13-ին ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատունը շրջափակվեց Թեհրանի համալսարանի թյուրքախոս իրանցի ուսանողների, Իրանում գտնվող Ադրբեջանի քաղաքացիների կողմից՝ ի նշան բողոքի՝ Քարվաճառում ԼՂՀ ուժերի վերահսկողության հաստատման առնչությամբ։ Ամբոխը վանկարկում էր «Հայաստանի բանակ՝ դո՛ւրս մահմեդական տարածքներից», «Դաշնակները և սիոնիստները մեկ դրամի երկու երեսն են», «Լաչինը, Քելբաջարը և Ղուբաթլին պետք է ազատվեն», «Զավթիչ պետության հետ

պետք է խզվեն դիվանագիտական հարաբերությունները» (Ազգ, 1993a):

1993 թ. ապրիլին Արցախում տեղի ունեցած թեժ բախումների ժամանակ Ադրբեջանի քաղաքական էլիտան օգնություն էր խնդրել ԻԻՀ-ից, որպեսզի վիրավորներին անմիջապես տեղափոխեն Թեհրան՝ բուժօգնություն ստանալու նպատակով (Ազգ, 1993b): Իրանը, բնականաբար, չէր կարող մերժել մարդասիրական օգնության խնդրանքը, սակայն Ադրբեջանի այս գործելաոճը, ըստ իս, պարունակում էր ենթաշերտ, այն է՝ Իրանի քաղաքացիներին ցույց տալ, թե ինչ «վայրագությունների» են դիմում հայերը՝ դրանով ավելի բորբոքելով Իրանի թյուրքախոս բնակչության ցասումը, ինչի արդյունքն էլ, թերևս, եղավ ՀՀ դեսպանատան վրա հարձակման փորձը:

Արցախյան առաջին պատերազմի ժամանակ Իրանը երբեմն որոշակի աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանին, որպեսզի կարողանա փոքր-ինչ հանդարտեցնել իր տարածքում բնակվող թյուրքախոս իրանցիներին՝ դրանով նվազագույնի հասցնելով ցնցումները իր տարածքում: Այդ մասին «Սահար» հեռուստատեսությանը տված հարցազրույցում խոսել է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հրամանատար գեներալ Մոհսեն Ռեզային՝ նշելով. «Ինձամբ ես հրաման եմ տվել, որ ադրբեջանական բանակը պատշաճ կերպով զինվի և ստանա անհրաժեշտ պատրաստվածություն: Ղարաբաղյան պատերազմում շատ իրանցիներ են զոհվել: Բացի վիրավորներից, որոնք տեղափոխվել են (Իրան), իրանցի նահատակներից շատերը թաղված են Բաքվում» (Regnum, 2013, Ẓarīf, 2024): Իրանի որոշակի աջակցության մասին հանդիպում ենք նաև ԻԻՀ նախկին արտգործնախարար Զարիֆի հուշերում, ըստ որի՝ «Իրանն օգնեց Ադրբեջանին Ղարաբաղյան առաջին պատերազմում: Օգնություն ցուցաբերվեց այն ժամանակվա Ադրբեջանի Հանրապետությանը, որը շատ թույլ էր ներքին քաղաքական «գզվռտոցի» պատճառով և պարտություն կրեց Հայաստանի Հանրապետությունից» (Ẓarīf, 2024):

Վերջերս, Հաշեմի Ռաֆսանջանիի որդին՝ Մոհսեն Ռաֆսանջանին, սկսեց հրապարակել հոր հուշերը, որով նոր լույս սփռեց Իրանի՝ Կովկասի նկատմամբ ունեցած ազդեցության վերաբերյալ: Հուշերում առկա տեղեկատվության համաձայն, Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիին խնդրել է ռազմական օգնություն ցուցաբերել Ադրբեջանին: Հանուն այդ օգնության ադրբեջանական կողմը պատրաստ էր անգամ լիակատար ազատություն տալ Իրանին՝ Ադրբեջանում գործելու համար: Հոկտեմբերի 23-ի հուշերում Ռաֆսանջանին նշում է. «Նրանք բացահայտ ասում են, որ մեր տրամադրության տակ են դնելու ամբողջ Ադրբեջանը և պատրաստ են Ադրբեջանում Իսլամական Հանրապետության ստեղծմանը, քանզի ունեն մեծ մտավախություն, որ հայերը Բաքու են մտնելու»,- ասվում է հուշագրության մեջ (Sinaiee, 2021):

Բնականաբար, նման առաջարկը խիստ հետաքրքրեց իրանական կողմին, և արդեն 1993 թ. հոկտեմբերի 26-ին Ռաֆսանջանին պաշտոնական այցով մեկնեց Բաքու՝ կարծում եմ, ի թիվս այլ հարցերի, Ալիևի առաջարկը հստակ քննարկելու համար: Ալիևը Ռաֆսանջանիին անձամբ դիմավորեց օդանավակայանում (Azərbaycan Tarixi, 2024): Թեպետ ողջ ընդունելությունն անցավ խիստ ջերմ մթնոլորտում, սակայն Ադրբեջանը, ըստ էության, չկարողացավ Իրանին ներքաշել Ղարաբաղի խնդրի մեջ և չկարողացավ խափանել հայ-իրանական հարաբերությունները: Ըստ էության, Ադրբեջանի հիմնական նպատակն էր՝ Իրանին մասնակից դարձնել Հայաստանի շրջափակմանը, որով կփորձեին սովի մատնելու գնով ծնկի բերել մի ողջ ժողովրդի:

Քանի որ այս հուշերը խիստ կարևոր են ամբողջական պատկերն ստանալու համար և կարող են նոր լույս սփռել պատմական այդ ծալքերի վրա, ուստի, հատվածաբար կներկայացնենք դրանք մեր աշխատությունում: 1993 թ. հոկտեմբերի 27-ի հուշերում կարդում ենք, որ երբ նրանք նստել էին բանակցելու, Ալիևին տեղեկացնում են, որ Զանգելանը (Կովսականը – Ի.Գ.) ուժեղ կրակի տակ է, և մարդիկ անցնում են Արաքս գետը՝ Իրան փախչելու հա-

մար: «Նրանք առաջարկում էին, որ մենք պատերազմին մասնակցենք՝ օգնելով Ադրբեջանին: Նրանք հստակ ասում էին, որ մենք ամբողջ Ադրբեջանը կթողնենք ձեր տրամադրության տակ և պատրաստ ենք Ադրբեջանում Իսլամական Հանրապետության ստեղծմանը: Կրկնում էին, որ առանց Իրանի օգնության իրենք չեն կարող պաշտպանվել, և կա հավանականություն, որ եթե հայերը շարունակեն առաջ շարժվել՝ կհասնեն Բաքու: Ես ասացի, որ սա շատ մեծ որոշում է, որն իր մեջ ներառում է տարածաշրջանային և գլոբալ բազմաթիվ շահեր, և դրա հետևանքները պետք է ուսումնասիրվեն ամեն ուղղությամբ, և մենք պետք է թեման նախ քննարկենք Թեհրանում: Մենք ասացինք, որ ներկայիս հրատապ խնդիրն է՝ փորձել ժամանակավոր զինադադար հաստատել: Առաջարկեցինք դիմադրել, որ Զանգելանը չընկնի... Այդ նպատակով դոկտոր Վելայաթին զանգահարեց Հայաստանի արտաքին գործերի փոխնախարարին և իմ ուղերձը փոխանցեց Հայաստանի նախագահին, որտեղ ասում էի, որ հայերը չպետք է անցնեն ներկայիս սահմաններից այն կողմ: Ճաշից հետո մենք դարձյալ անդրադարձանք հրադադարի խնդրին: Պարզվեց, որ հայերը պահպանել են հրադադարը» (Tik.ir, 2021):

Սակայն անգամ այս այցից հետո էլ Ալիևի առաջարկը Ռաֆսանջանիին խիստ կասկածելի էր թվացել, և այն դրվել էր Իրանի ազգային անվտանգության խորհրդի քննարկմանը, որտեղ որոշվել էր չեզոքություն պահպանել՝ հասկանալով, որ ներքաշվելու դեպքում լոկալ խնդիրը կդարձնեն տարածաշրջանային լուրջ խնդիր:

Թեպետ Իրանի ղեկավարությունը չօգտվեց Հեյդար Ալիևի առաջարկությունից, սակայն Իրանը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել Ադրբեջանի շիաների իրավունքները, թալիշների խնդիրները և, ըստ իս, «փափուկ ուժի» գործիքներով փորձել է Ադրբեջանում տարածել Իսլամական հեղափոխության գաղափարախոսությունը, որի արդյունքում, ըստ էության, Բաքվին մերձակա Նարդարանում ստեղծվեց շիա հավատացյալների մի

ամբողջ զանգված, որը մինչև այսօր էլ անհանգստություն է պատճառում Ադրբեջանի իշխանություններին:

Չկարողանալով Իրանին ներքաշել պատերազմի մեջ, Ադրբեջանը որոշեց դիմել սադրանքի: 1994 թ. մարտի 17-ին ԻԻՀ դիվանագետները իրենց ընտանիքներով Մոսկվայից մեկնում էին Թեհրան՝ նշելու Նովրուզը: Վրացական կողմի դիսպետչերները օդանավի կառավարումը հանձնել էին Գանձակի օդանավակայանին, և վերջիններս իրանական ինքնաթիռը պետք է ուղարկեին Հայաստանի օդային տարածք, սակայն կանխամտածված ուղարկել էին Ղարաբաղի կողմ՝ շատ լավ հասկանալով, թե ինչ է սպառնալու ռազմական ինքնաթիռին Արցախում՝ ռազմական բախումների շրջանում (L.A. Times, 1994):

Ղարաբաղի երկնքում իրանական ինքնաթիռը հրթիռակոծվեց և զոհվեցին ինքնաթիռում գնվող բոլոր դիվանագետները՝ իրենց ընտանիքներով հանդերձ: Իրանական կողմը, բնականաբար, բավականին կոշտ արձագանքեց: Անգամ պետական մակարդակով հայտարարվում էր, որ կխզեն հարաբերությունները Հայաստանի հետ, եթե Հայաստանն անհրաժեշտ բացատրություններ չտա այս խնդրի կապակցությամբ: ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն անմիջապես հրավիրեց Անվտանգության խորհրդի նիստ՝ քննարկելու ստեղծված իրավիճակը. որոշվեց Իրան ուղարկել հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանին:

Գագիկ Հարությունյանը իր հետ ուներ դիսպետչերական ծառայությունների ձայնագրությունների վերծանությունը, որտեղ պարզորոշ երևում էր, որ իրանական ինքնաթիռը կործանվել է Ադրբեջանի սադրանքի հետևանքով,- նշում է Գ. Առաքելյանը, ով եղել էր այդ քննարկման թարգմանիչը (Իսկանդարյան, 2014b): Ի վերջո, Գագիկ Հարությունյանի և Հասան Ռոհանիի քննարկումների արդյունքում իրանական կողմը ամբողջական պատկերացում կազմեց տեղի ունեցած սադրանքի մասին և այս, ըստ էության, ողբերգական իրադարձությունը, այնուամենայնիվ, խոչընդոտ

չդարձավ երկու երկրների հարաբերությունների զարգացման համար:

Հայաստանի և Իրանի կառավարությունների կողմից այդ շրջանում մեծ ջանքեր ներդրվեցին հարաբերությունների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: 1994 թ. նոյեմբերի 27-ին Թեհրան այցելեց ՀՀ տրանսպորտի և հեռահաղորդակցության նախարար Հենրիկ Քոչինյանը, ստորագրվեց ՀՀ և ԻԻՀ միջև Արաքս գետի վրայով սահմանային կամրջի կառուցման մասին պայմանագիր:

Ակնհայտ էր, որ հնարավոր չէր լինի հայ-իրանական հարաբերությունները զարգացնել առանց ցամաքային կապի. սա շատ լավ գիտակցում էին նաև Ադրբեջանում, ուստի իրենց դժգոհությունը հայտնեցին այս նախաձեռնության նկատմամբ ևս: Կամրջի կառուցումը դարձավ ԻԻՀ ազգային անվտանգության խորհրդի հարց, քանզի Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը նամակ էր հղել Հ. Ռաֆսանջանիին, որտեղ նշել էր. «Ավելի լավ է՝ դուք զենք մատակարարեք Հայաստանին, բայց հրաժարվեք կամրջի կառուցման գաղափարից: Եթե դուք այդ կամուրջը կառուցեք, մեր հարաբերություններն առնվազն 100 տարի այլևս չեն վերականգնվի» (Իսկանդարյան, 2014c):

Այնուամենայնիվ, հաղթահարելով քաղաքական, ֆինանսական, աշխարհագրական բոլոր խոչընդոտները և տիտանական աշխատանքի արդյունքում 1996 թ. հունվարի 9-ին բացվեց Մեղրու կամուրջը: Հայաստան-Իրան հիմնական կամրջի շահագործումից հետո Իրանը Հայաստանի համար դարձավ Պարսից ծոցի, Հեռավոր Արևելքի, Հարավ-արևելյան Ասիայի երկրների բեռնափոխադրումների տարանցիկ ճանապարհ: Բեռնափոխադրումներն ավելացան մոտ 3–4 անգամ: Հայաստանում ակտիվ սկսեցին գործել հայ-իրանական 200-ից ավելի ձեռնարկություններ (ԱԳՆ, 1998): Մի պահ ԻԻՀ-ն Հայաստանի արտաքին առևտրի մեջ գրավեց առաջին տեղը:

Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմում հայկական ուժերի տարած հաղթանակից հետո 1994 թ. ՌԴ միջնորդությամբ

կողմերի միջև կնքվեց զինադադար: Սակայն ինչպես ցույց տվեց հետագա ընթացքը, սա, ըստ էության, Ադրբեջանին ժամանակ շահելու, դիրքավորվելու հնարավորություն էր տալիս:

Հարաբերական խաղաղության շրջան

Արցախյան առաջին պատերազմից և հայկական կողմի հաղթանակից հետո, ըստ էության, հայ-ադրբեջանական սահմանին հարաբերական խաղաղություն էր տիրում: Երբեմն գրանցվում էին սահմանային լարվածություններ, սակայն դրանք հնարավոր էր լինում կանխել սեփական ուժերի միջոցով: Այս ժամանակաշրջանը համընկավ ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանիի կառավարման վերջին շրջանին, երբ ԻԻՀ փորձեց մեծ ակտիվություն ցուցաբերել Կովկասում, քանզի ՌԴ-ն, սկզբնական շրջանում ելնելով ներքաղաքական իր խնդիրներից, բավարար ուշադրություն չէր կարող դարձնել իր նախկին հանրապետությունների հետ հարաբերություններին:

1995 թ. ապրիլի 8-ին ԻԻՀ, ՀՀ և Թուրքմենստանի միջև ստորագրվեց եռակողմ համագործակցության վերաբերյալ համատեղ հայտարարություն, իսկ 1996 թ. դեկտեմբերի 25–29-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանեց 40 հոգանոց պատվիրակություն՝ ԻԻՀ առաջին փոխնախագահ Հ. Հաբիբիի գլխավորությամբ: Խիստ ակտիվացան Իրան-Հայաստան-Վրաստան-Հունաստան համագործակցության ծրագրերը ևս (Իսկանդարյան, 2014c): Բնականաբար, այս ծրագրերին խոչընդոտելու էր թուրք-ադրբեջանական տանդեմը, որն արձանագրված է ՀՀ ԱԳՆ արխիվում, որտեղ Իրանում ՀՀ առաջին դեսպան Վ. Բայբուրդյանը նշում է. «Երեկ ես հանդիպում ունեցա Թեհրանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Տրետյակովի հետ: Խոսակցության ժամանակ նա հայտնեց, որ Հեյդար Ալիևը ուժեղ ճնշում է գործադրել Շևարդնաձեի վրա, որպեսզի վերջինս հրաժարվի Իրան-Հայաստան-Հունաստան-Վրաստան քառակողմ համագործակցությանը Վրաստանի մասնակցությունից: Դեսպանի խոսքով, Վրաստանի նախագահն ընկրկել է այդ դեմարշի առջև՝ խոստանալով կատարել Ադրբեջա-

նի կամքը, որն այդ համագործակցությունը մեկնաբանում էր որպես Ադրբեջանի և Թուրքիայի դեմ ուղղված քայլ» (ԱԳՆ, 1997): Փոխարենը, Վրաստանին առաջարկվել էր դառնալ տնտեսական շատ ավելի մեծ շահույթ ապահովող ծրագրի մասնակից, ինչից Վրաստանը չհրաժարվեց:

Այս ընթացքում դրվում էր կարևոր աշխարհաքաղաքական փոփոխությունների սկիզբը: 1997 թ. Հ. Ալիևը, Վաշինգտոնից վերադառնալուց հետո, սկսեց նախապատրաստվել Բաքու–Թբիլիսի–Ջեյհան խողովակաշարի ծրագիրը կյանքի կոչելու աշխատանքներին: Սակայն նախնական փուլում, ըստ տնտեսագետների, այդ ծրագիրը տնտեսական առումով նվազ էֆեկտիվ էր համարվում, որի կապակցությամբ և՛ ԱՄՆ–ում, և՛ Ադրբեջանում ի հայտ եկան գործիչներ, որոնք գտնում էին, որ տնտեսապես առավել արդյունավետ կլինի Իրանի տարածքով խողովակաշարի անցկացումը:

1997 թ. ԻԻՀ–ում նախագահական ընտրությունների արդյունքում բարեփոխական թևի ներկայացուցիչ Մ. Խաթամին ընտրվեց նախագահի պաշտոնում: Մոհամմեդ Խաթամիի գործելաոճում նկատվում էր բոլոր երկրների հետ հարաբերությունների վերանայման, բարելավման միտում: Մոհամմեդ Խաթամիի կողմից առաջ քաշված «Քաղաքակրթությունների երկխոսություն» թեզը էականորեն փոխեց Իրանի նկատմամբ Արևմուտքի վերաբերմունքը, և նա փորձեց կյանքի կոչել այն, ինչը չկարողացավ իրականացնել նախորդ նախագահը՝ Ռաֆսանջանին, այն է՝ հանել երկիրը միջազգային մեկուսացումից: Թեպետ Խաթամին որոշակի դրական փոփոխություններ էր իրականացրել Իրանի արտաքին քաղաքականության մեջ, սակայն Միացյալ Նահանգները շարունակում էր չվստահել Իրանին, և Բաքվի նավթի խողովակաշարի կառուցման ծրագրի վերջնական փուլում թույլ չտվեց Թեհրանին, թեկուզ մասնակի, ներառել էներգետիկ նախագծերում կամ օգտագործել իրանական տարածքը՝ Կասպից ծովի ռեսուրսների արտահանման համար (Сидоров, 2015):

Նույն թվականի նոյեմբերի 17-ին Ադրբեջանի խորհրդարանը պաշտոնապես մերժեց իրանական երթուղու ծրագիրը և վերջնականապես ցրեց Իրանի պատրանքները՝ կասպյան նախագծին միանալու վերաբերյալ: 1998 թվականի դեկտեմբերի 10-ին Իրանը Ադրբեջանին տեղեկացրեց, որ հաջորդ տարի դադարեցնելու է Ադրբեջանից նավթամթերքի գնումը: Դա ուժեղ հարված էր Ադրբեջանի արտահանմանը, քանի որ Իրանն այդ ժամանակ Ադրբեջանի նավթամթերքի ամենամեծ սպառողն էր՝ մոտավորապես 180 միլիոն դոլարի չափով (Askerov, 2000):

Միևնույն ժամանակ, Հայաստանում 1998 թ. նախագահի պաշտոնից հրաժարվեց Լևոն Տեր-Պետրոսյանը և նախագահական ընտրություններում հաղթեց Ռոբերտ Քոչարյանը: Հայ-իրանական հարաբերությունների զարգացման հարցում Քոչարյանի մոտեցումը նույնպես խիստ կառուցողական էր, ինչը արձանագրված է ԻԻՀ-ում երկրորդ դեսպան Գ. Ղարիբջանյանին տրված հանձնարարությունում. «Ձեր առջև, առաջին հերթին, քաղաքական և տնտեսական հարաբերությունների մակարդակը բարձրացնելու խնդիր է դրված» (Իսկանդարյան, 2014d): Այս շրջանում Հայաստանի և Իրանի փոխարտգործնախարարների մակարդակով տարեկան երկու հանդիպում էր անցկացվում՝ ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու համար:

1999 թ. նոյեմբերի 18-ին Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի նախագահները Ստամբուլում ստորագրեցին համաձայնությունների փաթեթ' Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ կառուցելու մասին: Ըստ էության, սա հենց այն շրջադարձային պահն էր, երբ թուրք-ադրբեջանական տանդեմը ոչ միայն Կովկասում Հայաստանին դուրս թողեց մեծ ծրագրից, այլ նաև, ըստ էության, ՌԴ-ի և Իրանի քթի տակով անցկացրեց նավթամուղ, որը, բնականաբար, հակասում էր նրանց տնտեսական շահերին: Սա դարձավ հենց այն անկյունաքարային պահը, որի վրա հենվելով՝ հետագայում թուրք-ադրբեջանական տանդեմը խախտելու էր տարածաշրջանի հավասարակշռությունը:

Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի կյանքի կոչմամբ էականորեն մեծացավ Ադրբեջանի բյուջեն, որի մեծ մասն ուղղվեց ռազմական սպառազինություն ձեռք բերելուն: Նույն թվականին Ադրբեջանի և Թուրքիայի միջև կնքվեց ռազմական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, ըստ որի՝ «Ադրբեջանն առանց Թուրքիայի համաձայնության չէր կարող ռազմական գործողություն սկսել, իսկ Թուրքիան երաշխավորում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը» (Демоян, 2006):

Տարածաշրջանային այս զարգացումները, Թուրքիայի ազդեցության մեծացումը չէին կարող չանհանգստացնել Իրանին, ուստի վերջինս ևս փորձեց ակտիվություն մտցնել իր քաղաքականության մեջ՝ մշակելով այլ ծրագրեր, որպեսզի կարողանա դիմագրավել վերահաս աշխարհաքաղաքական փոփոխություններին: 2001 թ. հուլիսի 16–18-ը Հայաստան այցելեց ԻԻՀ ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար[1] Հասան Ռոհանին, որը տարածաշրջանային անվտանգության և կայունության ծիրում առանցքային համարեց Հայաստանի տեղն ու դերը: Խոսելով Հյուսիս–Հարավ առանցքի կայացման շուրջ, նա ընդգծեց այդ գործընթացում Հայաստանի պարտադիր ներգրավման անհրաժեշտության մասին (Իսկանդարյան, 2014c): Ուշագրավ է, որ տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխություններին որոշակի կերպով մասնակցում էր նաև Իսրայելը: «Իսրայելն այն ժամանակ ակտիվ համագործակցում էր նաև Ադրբեջանի հետ. իրենց (Իրանի – Ի.Գ.) համար դա, միգուցե, որոշակի առումով լատենտային բնույթ էր կրում, բայց դա մի վտանգ էր, որը միշտ իրենց զգոնությունը պահում էր» (Քոչարյան, 2023):

Ռոհանիի հետ «բանակցություններն ընթանում էին Հաղթանակի զբոսայգուն մերձակա՝ ԱԱԾ հյուրատանը, և իմ աշխատակազմը,– նշում է Սերժ Սարգսյանը,– շատ լարված էր, որ ստորագրման արարողությունը ձգձգվում է: Երբ գտնվել էին փոխադարձ ընդունելի ձևակերպումները, հարգարժան Ռոհանին ասաց

[1] Այս պաշտոնում նշանակվում են հոգևոր առաջնորդի կողմից՝ ուղղակի:

ինձ. «Լավ է մի քանի ժամ ավելի բանակցել և գալ լիարժեք փոխ-ըմբռնման, քան ստորագրել մի փաստաթուղթ, որի շուրջ կողմերը կունենան տարընթերցումներ»: Հուշագիրը բավականին հստակ մատնանշում էր փոխադարձ խնդիրների նկատմամբ աչալուրջ լինելու և գործողությունները համադրելու մեր պատրաստակա-մությունը» (Սարգսյան, 2023):

Ուշագրավ է, որ Իրանի հետ ունեցած այս բոլոր տարիների համագործակցությունը չէր կարող չազդել հայ հասարակության կարծիքի ձևավորման վրա, ուստի, Հայաստանի հասարակությու-նը 1990-ականներից մինչև 2000-ների վերջերը իր տնտեսական զարգացումը և անվտանգությունը կապում էր ՌԴ-ի և Իրանի հետ: Փաստենք, որ Հայաստանի քաղաքացիների նման վերա-բերմունքի ինդեքսը գրանցվել է նաև Միջազգային հանրապետա-կան ինստիտուտի (ՄՀԻ) հարցումների արդյունքում, որտեղ, ի թիվս այլ հարցադրումների, բնակչությանը ուղղվել է նաև այս հարցը. «Ինչպե՞ս են վերաբերվում Հայաստան-Իրան հարաբե-րություններին»: Հարցվածների 86%-ը դրական է համարել Հա-յաստան-Իրան հարաբերությունները (IRI, 2006): Հարցվածները դի-տարկել են, որ ՌԴ-ից հետո հաջորդ բարեկամ երկիրը Իրանն է:

2005 թ. ԻԻՀ նախագահ ընտրվեց ուլտրաճայրահեղական թևի ներկայացուցիչ Մահմուդ Ահմադինեժադը, որն այդ պահին ամբողջովին վայելում էր ԻԻՀ հոգևոր առաջնորդի վստահությու-նը: 2007 թ. մարտի 19-ին՝ ավելի քան տասը տարվա բանակցութ-յուններից հետո, բացվեց հայ-իրանական գազատարը՝ երկու նա-խագահների՝ Ռ. Քոչարյանի և Մ. Ահմադինեժադի կողմից, ինչն, անկասկած, հայ-իրանական հարաբերություններում ակնհայտ ա-ռաջընթաց էր: «Մենք այն բոլոր ծրագրերը, ինչը որ կյանքի կոչե-ցինք, սկսել էինք քննարկել Խաթամիի ժամանակաշրջանում,- նշում է Ռ. Քոչարյանը: Բայց շատ ավելի պրակտիկ նշանակութ-յուն ստացավ այդ ամենը Մահմուդ Ահմադինեժադի ժամանակ: ... Ինչ պայմանավորվում էինք նրա հետ, արագ կյանքի էր կոչվում: Նա մոբիլ էր աշխատում ու շատ կոնկրետ էր, տեմպ սիրող ղեկա-վար էր» (Քոչարյան, 2023):

Այս ծրագիրը, իրավամբ, կարևոր էր հատկապես ՀՀ էներգետիկ անվտանգության կտրվածքով, քանզի մինչ այդ Հայաստան գազ մտնում էր միայն ՌԴ–ից: Այս այլընտրանքային խողովակը, գազ-էլեկտրաէներգիա ծրագիրը կյանքի կոչելուց զատ, միևնույն ժամանակ, ֆորս–մաժորային իրավիճակում, ըստ անհրաժեշտության, Հայաստանին թույլ էր տալիս այդ գազն օգտագործել ներքին սպառման համար: Հարևան Վրաստանին իրանական գազը հետաքրքիր չէր ո՛չ գնային, ո՛չ էլ տարանցիկ առումներով (Իսկանդարյան, 2014e): Քոչարյանը ևս հաստատում է Վ. Օսկանյանի առաջ քաշած թեզը, որ անգամ ներքին սպառման համար նախատեսված գազատարի կառուցման վրա ևս բավական շատ մեծ ճնշում է եղել (Իսկանդարյան, 2014f): «Ճնշում եղել է, և եղել է բավականին լուրջ: Խողովակի տարանցիկության հարցը երբեք չի էլ քննարկվել: Ես չգիտեմ, թե որտեղից է դա նետվել դաշտ, թե ինչ–որ մեծ խողովակ պիտի լիներ, բայց մենք գնացինք փոքրի: Վրաստանից որևէ կերպ մեզ հետ չեն մտել բանակցությունների մեջ, թե իրենք իրանական գազով հետաքրքրված են» (Քոչարյան, 2023): Ակնհայտ է, որ ճնշումներ պետք է լինեին մի կողմից Արևմուտքից, որպեսզի Իրանը որևէ կերպ մասնակից չլիներ մեծ ծրագրերի, մյուս կողմից էլ ՌԴ–ից: Որքան էլ Իրանը կարևոր դաշնակից էր ՌԴ–ի համար, այնուամենայնիվ, գազային ոլորտում նրանք միշտ էլ եղել են մրցակիցներ: Ըստ Քոչարյանի, «Գազպրոմը միացել է այս ծրագրին այն ժամանակ, երբ տեսել է, որ Հայաստանը, միևնույն է, ծրագիրը իրականացնելու է: Անկեղծ ասեմ՝ մեր համար էլ «գտած բան էր», որովհետև մենք դա չէինք կառուցում Ռուսաստանից ազատվելու համար, մենք դա կառուցում էինք կոնկրետ որպես բիզնես ծրագիր՝ գազ՝ հոսանքի դիմաց…» (Քոչարյան, 2023): Մյուս կողմից էլ ակնհայտ էր, որ Վրաստանը չպետք է հետաքրքրված լիներ իրանական գազով. նախ, Վրաստանը արևմտյան աշխարհին ինտեգրվելու հստակ քայլեր էր իրականացնում, և բնավ ցանկություն չուներ պատժամիջոցների տակ գտնվող Իրանի հետ խորացնելու համագործակցությունը՝ այդպիսով վնասելով իր ծրագրերին: Հետո, Վրաստանն արդեն

միացել էր Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի ծրագրին և իր տարածքով նավթամուղի անցկացման համար Ադրբեջանից ստանում էր զգալի քանակի էներգակիր: Միևնույն ժամանակ, Վրաստանում մեծ տեմպերի էին հասել թուրքական ներդրումները, և այդ ամենը չէր կարող չազդել Վրաստանի արտաքին քաղաքական կողմնորոշիչների վրա:

Ուշագրավ է, որ եթե մինչև 1994 թ. Իրանն Ադրբեջանի նկատմամբ քաղաքականությունը մշակելիս առավելապես հաշվի էր առնում Թուրքիայի և Ռուսաստանի գործոնը, ապա դրանից հետո, մասնավորապես՝ 2003 թ. Ադրբեջանում Իլհամ Ալիևի՝ իշխանության գալուց հետո, Ադրբեջանի և Իսրայելի, Ադրբեջանի և Արևմուտքի, Ադրբեջանի և Պարսից ծոցի արաբական միապետությունների միջև ձևավորված նոր որակի հարաբերութիւններով պայմանավորված՝ Ադրբեջանի դերն Իրանի տարածաշրջանային քաղաքականության մեջ ավելի կարևորվեց (Իսրայելյան, 2023):

2008 թ. ՀՀ–ում նախագահ ընտրվեց Սերժ Սարգսյանը, ում համար հայ–իրանական հարաբերությունների խորացումը ևս խիստ կարևոր էր: «Բավական է հիշել, թե Իրանն ինչպես արձագանքեց 2008 թ. օգոստոսին Վրաստանում զարգացող դրամատիկ իրադարձությունների ժամանակ Հայաստանում ի հայտ եկած մատակարարումների, լոգիստիկ խնդիրների լուծմանը, որն այդ իրավիճակում մեծագույն աջակցություն էր Հայաստանին»,- նշել է ՀՀ 3-րդ նախագահ Ս. Սարգսյանը (Սարգսյան, 2023): Միայն 2008–2018 թթ. Հայաստան-Իրան առևտրաշրջանառությունն ավելացավ շուրջ 60%-ով: Շնորհիվ «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի անխափան իրագործման, Իրանը վերջին տարիներին ապահովել է Հայաստան ներմուծվող բնական գազի 15–20%-ը, ինչը կարևոր նշանակություն է ունեցել երկրի էներգետիկ անվտանգության տեսանկյունից: 2016 թվականին մեր երկրների միջև ներդրվել է առանց արտոնագրի ելքի և մուտքի ընթացակարգ: Նույն 2016 թ. Իրանի հետ իրականացվեց սահմանամերձ գյուղերի գազաֆիկացման ծրագիրը: Տնտեսական համագործակցության զարգացման համատեքստում կարևոր էր 2014 և 2017 թվականնե-

րին ազատ տնտեսական գոտիների հիմնումը Սյունիքում: Երկրի իշխանությունը վստահ էր, որ ազատ տնտեսական գոտիների հնարավորությունների արդյունավետ օգտագործումը երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար մեծ խթան կարող է լինել (Սարգսյան, 2023): Սակայն, ցավոք, տնտեսական ազատ գոտիներն այդպես էլ լուրջ արդյունքներ չգրանցեցին և երկու դեպքում էլ փակվեցին: Սակայն այդ ոլորտում տնտեսվարողները մինչև այժմ էլ փորձեր իրականացնում են:

Զուգահեռաբար, Իրան-Ադրբեջան հարաբերությունները 2005–2015 թթ., ըստ էության, չափազանց լարված էին: Խնդիրն այն էր, որ մեծ էր Իրանի վրա Իսրայելի և Միացյալ Նահանգների կողմից ռազմական հարձակման ռիսկը Ադրբեջանի տարածքից: Եվ սա Բաքվի ու Թեհրանի հարաբերություններում փոխադարձ անվստահության մթնոլորտ էր ձևավորել (Իսրայելյան, 2023):

Այսպիսով, ակնհայտ էր, որ Ադրբեջանն այս հարաբերական անդորրի տարիներին որդեգրեց պատերազմին պատրաստվելու մարտավարություն. այդ ընթացքում, ի հաշիվ սեփական նավթագազային հանածոների, հզորացնում էր իր ռազմական պոտենցիալը, Թուրքիայի հետ շարունակում էր շրջափակման մեջ պահել Հայաստանին, վիժեցնել յուրաքանչյուր մեծ ու փոքր ծրագիր, որին մասնակից կարող էր դառնալ Հայաստանը: Սրա արդյունքում սակավ բնական ռեսուրսներ ունեցող երկիրը չէր կարողանալու զարգացնել տնտեսությունը, որով պայմանավորված՝ չէր կարողանալու ձեռք բերել բավականաչափ քանակի արդիական զենք, զինամթերք, և տարիներն աշխատելու էին Հայաստանի դեմ: Այս ամենին գումարվում էր նաև Հայաստանի իշխանությունների, ըստ էության, ոչ ճիշտ կառավարումը, կոռուպցիայի մակարդակի բարձրացումը, բանակաշինության մեջ ոչ բավարար չափով բարեփոխումներ իրականացնելը:

Միևնույն ժամանակ, ի տարբերություն Ադրբեջանին Թուրքիայի ցուցաբերած միանշանակ աջակցության, Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանը տարածաշրջանում

միշտ էլ փորձել է բալանսավորողի դեր կատարել և աջակցել է թե՛ Հայաստանին, թե՛ Ադրբեջանին՝ այդպիսով փորձելով Կովկասը հնարավորինս պահել իր լիարժեք ազդեցության տակ:

Կովկասում փոփոխությունների նախերգանքը

Վերոնշյալ զարգացումների արդյունքում, մեկ տասնամյակ անց, Կովկասում ակնհայտ խախտվեց ռազմական հավասարակշռությունը, ինչը հղի էր նոր էսկալացիայով: 2016 թ. Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի՝ Բաքու կատարած այցի ժամանակ Ալիևը բացահայտ ասաց, որ երկու երկրների միջև կնքվել է 5 մլրդ դոլարի «պաշտպանական տեխնիկա» գնելու պայմանագիր (Cohen, 2016): Սա ակնհայտ ցույց էր տալիս, որ Ադրբեջանն ամեն կերպ տապալել և տապալելու է բանակցությունների միջոցով հարցի լուծումը և պատերազմի ճանապարհով փորձելու է լուծել խնդիրը՝ իր առաջ դնելով է՛լ ավելի մեծ նպատակներ՝ արդեն ի հաշիվ Հայաստանի Հանրապետության: «Հաարեց» պարբերականի պնդմամբ՝ 2016 թվականից Իսրայելը «Հերմես 900» անօդաչու թռչող սարքեր ու «Լոռա» տիպի բալիստիկ հրթիռներ է մատակարարել Ադրբեջանին (Cohen, 2016):

Բնականաբար, այս տեղեկությունն անհանգստացնում էր նաև Իրանին, քանի որ վերջին 30 տարվա ընթացքում, փաստորեն, Իրանի հյուսիսն անվտանգ էր պահվել հենց Հայաստանի և Արցախի ուժերի կողմից, իսկ 20-րդ դարի երկրորդ տասնամյակում Իսրայելն ակնհայտորեն փորձում էր խախտել վերը նշված ստատուս քվոն: Իսրայելը դիրքավորվում էր այնպես, ինչպես Իրանն է դիրքավորվել Լիբանանում՝ Իսրայելի սահմաններին մոտ: Սակայն եթե Մերձավոր Արևելքում կան ռազմաքաղաքական այնպիսի ուժեր, որոնց վրա Իրանը կարող է հենվել, աջակցել, քանի որ կիսում են Իրանի տեսակետները և համընկնում են շահերը, ապա Կովկասում Իրանը, ըստ էության, այդպիսի աջակցություն չունի:

2016 թ. Քառօրյա պատերազմի ընթացքում՝ ապրիլի 6-ին, ԻԻՀ նախագահ Ռոհանին զանգահարել է Ս. Սարգսյանին և

հստակ նշել, որ Արցախյան հիմնախնդիրը չի կարող ունենալ ռազմական լուծում: Նա նաև շեշտել է, որ լարվածության նոր օջախների ստեղծումը տարածաշրջանում առկա խնդիրների և ահաբեկչական խմբավորումների գործունեության ֆոնին՝ անընդունելի է (Սարգսյան, 2023), ինչը, ըստ էության, հայկական կողմի տեսակետների հետ նույնական էր:

Ակնհայտ նկատվեց լարվածություն Իրան–Ադրբեջան քաղաքական հարաբերություններում: Սակայն, կարծում եմ, հակասությունները խիստ չսրվեցին այն պատճառով, որ Ադրբեջանը չէր ստացել իրեն անհրաժեշտ «կանաչ լույսը»: Պարզաբանենք. 2015 թ. Իրանը Վիեննայում ՄԱԿ-ի անդամ 5 մշտական ներկայացուցիչների, ինչպես նաև Գերմանիայի հետ ստորագրել էր ՀԳՀԾ-ն[2], ինչով իրական հնարավորություն էր արձանագրվել՝ Իրանի միջուկային ծրագիրը վերահսկելի դարձնելու համար: Միևնույն ժամանակ, եվրոպական մի շարք գործարարներ ձգտում էին իրենց տեղը գտնել իրանական մեծ շուկայում: Մյուս կողմից էլ, 2018 թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո, որը կոչվեց «Թավշյա, ոչ բռնի հեղափոխություն», իշխանության եկավ Նիկոլ Փաշինյանը, ով թեպետ ցույցերի ժամանակ բազմիցս հաստատել էր, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը փոփոխության չի ենթարկվելու, և որ Հայաստանը շարունակելու է իր խորը համագործակցությունը ԵՄ-ի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Իրանի հետ, այնուամենայնիվ նկատվում էր, որ Արևմուտքում մեծ ակնկալիքներով էին հետևում Փաշինյանի գործունեությանը: Այս զարգացումները, ըստ էության, մի կողմից դանդաղեցրին Ադրբեջանի ծրագրած գործընթացները, մյուս կողմից՝ հարցեր առաջացրին Իրանում ՀՀ արտաքին քաղաքականության կողմնորոշիչների վերաբերյալ:

Ուշագրավ է այս ընթացքում ՄՀԻ իրականացրած հարցախույզը, որից պարզվեց, որ Իրանը բարեկամի իր պատվավոր 2-րդ տեղից իջել էր՝ զբաղեցնելով 4-րդ հորիզոնականը (IRI, 2018):

[2] Համատեղ գործողությունների համապարփակ ծրագիր

ՄՀԻ նույն հարցախույզի արդյունքներով, Հայաստանի հասարակության 20%-ը հավատում էր, որ Հայաստանի անվտանգությանը սպառնալիքի պարագայում Իրանը կաջակցի, հարցվածների 45%-ն էլ գտնում էր, որ Իրանը կարող է տնտեսական լավ գործընկեր լինել (IRI, 2018):

2018 թ. ԱՄՆ նախագահ ընտրված Դ. Թրամփին ամբողջությամբ հրաժարվեց նախորդ կառավարության որդեգրած քաղաքականությունից՝ միակողմանի դուրս գալով ՀԳՀԾ-ից, իսկ ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնն էլ նորընտիր նախագահին դրդում էր ավելի կոշտ քայլեր իրականացնել Իրանի նկատմամբ: 2018 թ. հոկտեմբերին Ջոն Բոլթոնը ժամանեց ՀՀ, որի գլխավոր նպատակն էր՝ հասկանալ, թե հարավկովկասյան երկրներից որոնք են պատրաստ ԱՄՆ-ի հետ առավել խորը համագործակցել ընդդեմ Իրանի: Ամգամ իր հարցազրույցում նա փաստել էր, որ հարավկովկասյան հանրապետություններ իր այցի նպատակը ոչ թե բուն այդ երկրներն են, այլ նրանց փոխհարաբերությունները Իրանի, Ռուսաստանի և Թուրքիայի հետ (Kucera, 2018):

ԱՄՆ նման բարձրաստիճան պաշտոնյայի այցը ՀՀ՝ տարբեր քննարկումների և մեկնաբանությունների առիթ դարձավ, Իրանը ուշիուշով հետևում էր այդ զարգացումներին: Այդ այցից որոշ ժամանակ անց Նիկոլ Փաշինյանը ԱԺ-ում նշեց, թե «Հայ-իրանական սահմանը դե ֆակտո ամեն պահի կարող է փակվել՝ ԱՄՆ-ի և Իրանի միջև հարաբերությունների և աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով» (Sputnik, 2018): Սակայն կարճ ժամանակ անց Ն. Փաշինյանը հարցազրույցներից մեկի ժամանակ կոնկրետ անդրադարձավ Իրանի նկատմամբ Հայաստանի դիրքորոշմանը. «Ես վերահաստատում եմ այն դիրքորոշումը, որ մենք պետք է հատուկ հարաբերություններ ունենանք Իրանի և Վրաստանի հետ, որոնք հնարավորինս հեռու կլինեն աշխարհաքաղաքական ազդեցություններից: Այս դիրքորոշումը շատ հստակ ձևակերպվեց նաև պարոն Բոլթոնի հետ իմ հանդիպման ժամանակ, և կարծում եմ, որ Հայաստանի դիրքորոշումը պարզ էր, հասկանալի

և նույնիսկ ընդունելի ԱՄՆ պատվիրակության ներկայացուցիչների համար»,– ասել է Հայաստանի վարչապետը (RFERL, 2018): Հայաստանից հետո Բոլթոնն այցելեց Ադրբեջան և Ալիևի հետ քննարկեց Իրանին զսպելու քայլերը. «Ալիևի հետ հանդիպման ժամանակ մենք ինտենսիվ բանակցություններ ենք վարել, այդ թվում՝ Իրանի հարցով: Մենք քննարկել ենք, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկենք՝ զսպելու Թեհրանի գործունեությունը, ինչպես նաև նրա միջուկային ծրագիրը» (Шакарян, 2018):

Ուշագրավ է, որ 2018 թ. սեպտեմբերի 14-ին, Բոլթոնի՝ Ադրբեջան կատարած այցից մոտ մեկ ամիս առաջ, Ադրբեջան էր այցելել Իսրայելի պաշտպանության նախարարը, որը հանդիպումների շարք էր ունեցել Ադրբեջանի նախագահի, պաշտպանության նախարարի և հետախուզության ծառայության ղեկավարի հետ (Зейналов, 2018): Ըստ էության, Ադրբեջանը ոչ միայն զինվում էր և նախապատրաստվում մեծ պատերազմի, այլև զուգահեռաբար խոստումներ էր տալիս թե՛ Իսրայելին, թե՛ ԱՄՆ-ին, որ հակաիրանական գործողությունների պարագայում կաջակցի նրանց՝ իր համար էլ ստանալով որոշակի խոստումներ ու երաշխիքներ:

Փաստացի, Կովկասում սկսեցին գեներացվել տարածաշրջանային և արտատարածաշրջանային մի շարք երկրների շահերը, որոնք, շատ հաճախ, միմյանց հակադիր էին: Կովկասը, կարծես, վերածվել էր քաղաքականության լաբորատորիայի և, ըստ էության, Կովկասում բազմաբևեռ դերակատարների շահերը այս սրությամբ երբևէ չէին խաչվել:

2020 թ. թուրք-ադրբեջանական տանդեմը արդեն իրեն լիարժեք պատրաստ էր համարում Արցախի հարցը ուժային տարբերակով լուծելու: Այսպիսով. 1. Ադրբեջանը տարիներ շարունակ զինվելով՝ համաշխարհային տերությունների աչքի առաջ խախտել էր ռազմական հավասարակշռությունը: 2. ՀՀ ռազմավարական դաշնակից ՌԴ-ի հետ Արևմուտքի երկրների համագործակցության աստիճանը էականորեն նվազել էր, ինչպես նաև մարել էր վերջին հույսը, թե Ուկրաինայի հարցը հնարավոր կլինի ՌԴ-ի հետ լուծել խաղաղ ճանապարհով: 3. Այն երկրները, որոնք շարունակելու էին

համագործակցել ՌԴ-ի հետ, ըստ էության, պետք է պատասխան տային իրենց քաղաքական կողմնորոշման համար: 4. ՀԳՀԾ-ից ԱՄՆ-ի դուրս գալով և Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերականգնմամբ Իրանը ևս չկարևորեց ձեռք բերված պայմանավորվածությունները: 5. Ադրբեջանը Իսրայելի հետ օրեցօր խորացնում էր համագործակցությունը, հատկապես հետախուզության, ինֆորմացիայի փոխանակման և ռազմական այլ բնագավառներում: 6. Ադրբեջանը դիտարկվում էր Արևմտյան աշխարհի դաշնակիցներ Թուրքիայի և Իսրայելի զինակիցը, մինչդեռ Հայաստանը, որքան էլ փորձեր չեզոք դիրք որդեգրել, միևնույն է, ՌԴ ռազմավարական դաշնակիցն էր, Իրանի՝ բնական դաշնակիցը:

Կարծում ենք, ստեղծված իրավիճակը ընդունելի դարձավ նաև Թուրքիայի համար, որն էլ «կանաչ լույս» տվեց Ադրբեջանին՝ իրականացնելու նախօրոք մշակված իր ծրագիրը:

2020 թ. Արցախյան պատերազմը և Կովկասում տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունները

Միջազգային իրավունքի երկու կարևոր սկզբունքների՝ տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարցում Իրանի Իսլամական Հանրապետությունը միշտ էլ նախապատվությունը տվել է առաջինին՝ պաշտպանելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Սակայն Իրանը կոչ է արել խնդիրը լուծել բանակցությունների ճանապարհով, որի ընթացքում մի քանի անգամ հանդես է եկել միջնորդական առաքելությամբ: Մինսկի խմբի ձևավորումից ի վեր Իրանի դերակատարումն այս հարցում նվազեց:

Ըստ էության, 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված Ղարաբաղյան երկրորդ պատերազմը երևան բերեց բոլոր այն խնդիրները, որոնց լուծումները տարիներ շարունակ հետաձգվել էին:

Հաշվի առնելով համաշխարհային մի շարք զարգացումներ, ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցող ներքաղաքական խնդիրները, Ադրբեջանը որոշեց հարցը լուծել ռազմական ճանա-

պարհով, ինչին նա անթաքույց պատրաստվում էր վերջին տարիներին՝ հաճախ խախտելով ռազմական բալանսի բոլոր թույլատրելի նորմերը:

Ակնհայտ էր, որ Իսրայելն ու Թուրքիան ոչ միայն զենք ու զինտեխնիկա էին մատակարարում Ադրբեջանին, այլ նաև ադրբեջանական սպայակազմի հետ հսկայածավալ աշխատանք էին իրականացրել: Առկա տեղեկության համաձայն, 2019–2020 թթ. Ադրբեջանը Իսրայելից ստացել էր առավել ժամանակակից «Սփայք» տիպի հրթիռներ: Իսրայելական զինատեսակների համակարգերի հետ մեկտեղ, Թուրքիան՝ Ադրբեջանի դաշնակիցը, վերջինիս մատակարարել էր իր «Bayraktar TB2» անօդաչու սարքերը, որոնք մեծ դեր պետք է խաղային հայկական թիրախները ոչնչացնելու ժամանակ: Այս բոլոր զինատեսակները, Իսրայելից դուրս գալով, հատել են Թուրքիայի սահմանը, մտել Վրաստան, այնտեղից էլ՝ Ադրբեջան (Scarf & Yaron, 2023):

Բնականաբար, Ադրբեջանին Թուրքիայի և Իսրայելի անթաքույց աջակցությունը (Borshchevskaya & Tabler, 2023) տեսնում էին նաև Իրանում, ինչը չէր կարող չմտահոգել վերջինիս: Ակնհայտ էր, որ ստեղծվում էր մի իրավիճակ, որին Արցախը, Հայաստանը չէին կարողանալու լուծում տալ, և Իրանի հյուսիսային սահմաններն այլևս նախկինի պես անվտանգ չէին լինելու, և այս ամենը կարող էր նաև ապագայում հանգեցնել տարածաշրջանային բախման: Իրանին հատկապես անհանգստացնում էր իր սահմանների մոտ Սիրիայից, Լիբիայից բերված և տեղակայված վարձկանների առկայությունը, որոնք հետագայում կարող էին փորձել խարխլել տարածաշրջանի անվտանգությունը:

Այս մտահոգությունը ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին արտահայտել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտնի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ, որտեղ, ի մասնավորի, նշել է, որ «Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը որոշ ահաբեկչական խմբավորումների առկայությունը և մասնակցությունը կարող է վտանգավոր լինել ինչպես Իրանի, այնպես էլ Ռուսաստանի և ողջ տարածաշրջանի համար» (MFA, 2020):

2020 թ. սեպտեմբերին՝ պատերազմի առաջին օրերին, Իրանը կոչ արեց անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և նստել բանակցությունների սեղանի շուրջ՝ խնդիրը լուծել բանակցությունների միջոցով: Այնուհետև, ԻԻՀ արտաքին գործերի նախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը հայտարարեց, որ ունեն բանակցությունների համար մշակած մի տարբերակ, որը կցանկանային ներկայացնել կողմերից յուրաքանչյուրին և որը, Թեհրանի կարծիքով, կհետաքրքրեր բոլորին: Օրեր անց ԻԻՀ-ն բավական կոշտ հայտարությամբ կոչ արեց զսպվածություն ցուցաբերել և կողմերից պահանջեց ռազմական գործողություններն իրականացնել միայն իրենց սահմաններում և, կամա, թե ակամա չթիրախավորել ԻԻՀ տարածքը (Tehran times, 2020): Հոկտեմբերի 13-ին ԻԻՀ օդային տարածքը հատած ադրբեջանական երկու ԱԹՍ-ները խոցվեցին, և Իրանը կրկին կոշտ հայտարարությամբ հանդես եկավ՝ նշելով, որ չի հանդուրժի իր օդային կամ ցամաքային տարածքի խախտումները, իսկ այդ նույն ընթացքում մեծ թվով ռազմական տեխնիկա տեղափոխեց երկրի հյուսիսային հատվածներ (RadioFarda, 2020): Ակնհայտ էր, որ Ադրբեջանի կողմից ձեռքբերված իսրայելական ԱԹՍ-ները ոչ միայն գործողություններ էին իրականացնում Արցախի հարավային հատվածներում, այլև տեղեկություններ էին հավաքում ԻԻՀ հյուսիսային նահանգների վերաբերյալ, ինչը նրանց չէր հաջողվել անել վերջին 20 տարվա ընթացքում, քանզի այդ հատվածները հաջողությամբ վերահսկվում էին հայկական ուժերի կողմից:

Եթե պատերազմի առաջին օրերին թվում էր, թե Ադրբեջանը փորձում է ռևանշի դիմել և հետ վերադարձնել այն, ինչը կորցրել էր 1990-ականների սկզբներին, ապա պատերազմի 15–20-րդ օրերին արդեն ակնհայտ էր, որ այստեղ միայն Արցախի հարցը չէր, և որ Թուրքիան, Իսրայելը և Մեծ Բրիտանիան փորձում էին լուծել աշխարհաքաղաքական խնդիր՝ հաշվի առնելով Ռուսաստանի դերի թուլացումը, Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի է՛լ ավելի կոշտ վերաբերմունքը: Պետք է փաստել նաև, որ այս ամենը տեղի էր ունենում ԱՄՆ-ի լուռ համաձայնությամբ: Պատերազմի առաջին օրերին

Ադրբեջանը չկարողացավ իրականացնել իր «կայծակնային օպերացիան», ուստի, նրան էական աջակցություն ցուցաբերեց ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան՝ թե՛ խորհրդատվության և ինֆորմացիայի տրամադրմամբ, և թե՛ պատերազմի պլանավորմամբ, այնուհետև նաև հատուկ միացնել ջոկատայիններ ուղարկելով: Ուշագրավ է, որ պատերազմի ընթացքում ՀՀ նախագահ Ա. Սարգսյանը հանդիպեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ և նշեց, որ. «Թուրքիան, պետք է դադարի լինել այս հակամարտության մաս և հավատարիմ մնա հրադադարի հաստատմանը» (President.am, 2020): Ակնհայտ է, որ նախագահը ակնկալում էր, որ ՆԱՏՕ-ն զսպման մեխանիզմներ կօգտագործի Թուրքիայի նկատմամբ՝ չեզոքացնելով նրա մասնակցությունը պատերազմին, սակայն Արևմուտքը հետամուտ էր տարածաշրջանում իր շահերի գծագրման նախերգանքին: Ակնհայտ էր, որ հնարավորություն էր ստեղծվել՝ թուլացնելու ՌԴ ազդեցությունը Կովկասում՝ փոխարենը մեծացնելով Արևմուտքի ներկայությունը: Հայ ժողովուրդը ստեղծված իրավիճակում մենակ էր մնացել, որը, կարծում եմ, տարիներ տևած իր իսկ քաղաքական կողմնորոշման հետևանքն էր:

Պատերազմի հենց առաջին օրերին ԻԻՀ-ում տեղի էր ունեցել ազգային անվտանգության խորհրդի նիստ, որի ժամանակ որոշվել էր ամրացնել Իրանի հյուսիսային սահմանները: Դա հաշվի առնելով՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ցամաքային մեծաթիվ ուժեր տեղակայվեցին Իրանի հյուսիսային նահանգներում (Irna, 2020): Նշենք, որ մինչ այդ ԻՀՊԿ ուժերը կանգնում էին Աֆղանստանի և Իրաքի սահմանին:

Այդ օրերին գրանցվեց մեկ այլ խնդիր ևս: ՌԴ-ն իր ռազմավարական գործընկերոջ նկատմամբ պարտավորություններից ելնելով՝ ՀՀ-ին հատկացնում էր այն զենքի ու զինտեխնիկայի տեսակները, որոնց կարիքը կար: Դրա մասին հետագայում՝ պատերազմի ավարտից հետո, խոսեց նաև ՌԴ նախագահը՝ նշելով որ «երկկողմ և բազմակողմ պարտավորությունների շրջանակներում, այդ թվում՝ ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում, ՌԴ-ն լիովին կատարել է իր բոլոր պարտավորությունները, ինչի

համար Հայաստանի ղեկավարությունը բազմիցս երախտագիտության խոսքեր է հայտնել» (Российская газета, 2020): Սակայն պատերազմի առաջին օրերից Վրաստանը փակեց օդային և ցամաքային իր ճանապարհները ՌԴ-ից Հայաստան հասցվող ռազմական նշանակության բեռների համար (Armenpress, 2020): Բնականաբար, փակ էին նաև Ադրբեջանի և Թուրքիայի օդային սահմանները: ՌԴ-ն որոշում կայացրեց անհրաժեշտ զինատեսակները ՀՀ հասցնել Կասպից ծովի արևելյան ափերի մերձակայքով՝ մտնելով Իրան, այնտեղից էլ, պատերազմի սկզբում՝ ցամաքային ճանապարհով, իսկ հետագայում, կարծում ենք, որոշ քանակով նաև՝ օդային ճանապարհով հասցվեց ՀՀ: Ցամաքային ճանապարհով օրեր շարունակ ռազմական բեռների տեղափոխումը խիստ դժգոհություն առաջացրեց Իրանի հյուսիսում բնակվող թյուրքախոս իրանցիների շրջանում, որոնք Թավրիզում մինչև անգամ դուրս եկան ցույցերի, որոնց ժամանակ հիմնական լոզունգն էր՝ «ռուսը, պարսիկը, հայը Ադրբեջանի թշնամին են» (Yeni Şafak, 2020): Ուշագրավ է, որ այս լոզունգը նախկինում կիրառվել է Ադրբեջանում և Թուրքիայում: Այստեղից կարելի է գալ եզրահանգման, որ Արցախյան վերջին պատերազմից առաջ Ադրբեջանը կարողացել էր պարարտ հող ստեղծել Իրանի թյուրքախոս իրանցիների շրջանում, որոնք էլ, առաջին իսկ պատեհ պահին, Թավրիզում դուրս եկան և, ըստ էության, թիրախավորեցին նաև պարսիկ ժողովրդին: Ակնհայտ էր նաև, որ թուրք-իրանական մրցապայքարում թուրքական կողմը գրանցում էր նորանոր հաջողություններ: Թավրիզի թյուրքախոսները որոշ ժամանակ անց մինչև անգամ հարձակվեցին Հայաստանի համար նախատեսված բեռների շարասյան վրա՝ փորձելով խոչընդոտել դրանց շարժը՝ պահանջելով փակել Իրան-Հայաստան ցամաքային սահմանը: Այս լարված մթնոլորտը լիցքաթափելու և խնդրին լուծում տալու համար հոկտեմբերի 4-ին Թավրիզ ժամանեց ԻՀՊԿ ցամաքային ուժերի հրամանատար գեներալ Մոհամմադ Փակփուրը: Ցույցերը ցրվեցին տեղական ոստիկանության միջոցով:

Ակնհայտ էր մի դրվագ ևս, ինչը, կարծում եմ, պետք է մտահոգեր Իրանին: Արցախի հարավային հատվածներով թուրք-ադրբեջանական ուժերի և ահաբեկիչների շարժերի ընթացքում Իրանի հյուսիսային նահանգների բնակչության մի որոշ հատված արտահայտում էր իր անթաքույց ուրախությունը այդ հանգամանքի հետ կապված: Սա, բնականաբար, անհանգստացրեց Իրանի իշխանություններին, որոնք այդուհետ արգելեցին բնակչությանը՝ հավաքվել սահմանամերձ հատվածներում՝ ելնելով իրենց «անվտանգությունից»:

Հոկտեմբերի 22-ի ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին հեռախոսազրույց էր ունեցել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ, որի ժամանակ անհանգստություն էր հայտնել տարածաշրջանում հաստատված ահաբեկչական խմբավորումների ներկայության կապակցությամբ: Անդրադառնալով ԼՂ ճգնաժամին և, հատկապես, Իրանի սահմանային քաղաքներում անվտանգության պահպանման հարցին, նա նշել է. «Այս առումով մեր դիրքորոշումը միանգամայն պարզ է, և համոզված ենք, որ պատերազմը լուծում չէ, և խնդիրները պետք է լուծվեն բանակցությունների միջոցով: Համոզված եմ, որ Իրանն ու Թուրքիան, որպես տարածաշրջանի երկու հզոր երկրներ, ինչպես նաև Ռուսաստանը, կարող են օգնել տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը և միջազգային իրավունքի ու տարածքային ամբողջականության կիրառմամբ ականատես դառնալ տարածաշրջանում խաղաղության հաստատմանը» (President.ir, 2020): Սակայն թե՛ Թուրքիան, թե՛ Ադրբեջանը, որ տարիներ շարունակ աշխատանքներ էին իրականացրել այս ուղղությամբ, չէին պատրաստվում բաց թողնել իրենց համար շատ բարենպաստ իրավիճակը և փորձում էին որքան հնարավոր է արագ լուծել Արցախի հարցը՝ խախտելով մարդու իրավունքների հիմնարար սկզբունքները: Միևնույն ժամանակ, Իրանի հետ ուղիղ բախման մեջ չմտնելով՝ հստակ ցույց էին տալիս, որ ստեղծված իրավիճակում Իրանը չի կարող որևէ գործողություն իրականացնել, և իրենք կա-

րող են պատերազմով լուծել հարցը՝ երկրորդ պլան մղելով բանակցային ձևաչափը:

2020 թ. հոկտեմբերի 30-ին Հայաստանում էր ԻԻՀ նախագահ Հ. Ռոհանիի հատուկ բանագնաց, ԻԻՀ փոխարտգործնախարար Աբբաս Արաղչին՝ խնդրի լուծման առաջարկներով: Հանդիպումից հետո «Ազատություն» ռադիոկայանի լրագրողին հաջողվեց հարց ուղղել Ա. Արաղչիին՝ տարածաշրջան տեղափոխված ահաբեկչական խմբերի մասին, որին ի պատասխան բանագնացը նշեց. «Շատ անհանգստացած ենք, և մեր անհանգստությունը փոխանցել ենք Բաքվին, և ես քննարկում եմ ունեցել այս հակամարտությունում բոլոր ահաբեկչական խմբերի ներկայության մասին» (Ազատություն, 2020): ԻԻՀ նախկին արտգործնախարար Զարիֆի՝ վերջերս լույս տեսած հուշերում անդրադարձ կա Արաղչիի այցին, որտեղ վերջինս, ի մասնավորի, նշում է. «Մենք առաջարկում էինք, որպեսզի կողմերն ազատեն միմյանց տարածքները, պահպանեն փոքրամասնությունների իրավունքները, բացեն բոլոր ճանապարհները, Իրանի աջակցությամբ Նախիջևանի և Ադրբեջանի միջև ստեղծելն ցամաքային կապ, ապահովելն Հայաստան-Ղարաբաղ միջանցքի աշխատանքը: Արաղչիի կողմից ներկայացված՝ Իրանի առաջին առաջարկի իրականացման ամենակարևոր խոչընդոտը Հայաստանն էր: Հայերի ռազմավարական սխալն այն էր, որ նրանք չընդունեցին արժանապատիվ զինադադարի առաջարկը, երբ դեռ չէին պարտվել պատերազմում: Պրն. Փաշինյանի վերաբերմունքը դոկտոր Արաղչիի հանդեպ՝ ամեն ինչն ի ցույց դրեց. նա իր անփորձությամբ նրան ասել էր. «Դուք ուզում եք ստիպել Հայաստանին, որ ընդունի իր պարտությունը»: Իհարկե, Արաղչին իր բարձրակարգ դիվանագիտությամբ կարողացել էր հանգստացնել Փաշինյանին, որ առաջարկն այդպես չընկալի: Մենք տեսնում էինք, թե ուր էր գնում պատերազմը» (Ẓarīf, 2024):

Այս պատերազմի ողջ ընթացքում Իրանը հետևում էր յուրաքանչյուր զարգացման, Իրանի նախագահը և արտաքին գործերի նախարարությունը փորձում էին այս «խաղից» դուրս չմնալու համար դիվանագիտական նոր «հնարքների» միջոցով մնալ որպես

տարածաշրջանային խաղացող, ինչի համար ԻԻՀ փոխարտգործնախարար Աբբաս Արաղչին իրանական առաջարկով մեկնեց նաև Մոսկվա, Բաքու և Անկարա: Ուշադրության է արժանի հոգևոր առաջնորդի վերաբերմունքը և մոտեցումը Արցախի խնդրին: Եթե 1990-ական թվականներին նա Արցախի տարածքը կոչում էր «մուսուլմանական հող» և պահանջում հետ վերադարձնել այդ տարածքները Ադրբեջանին, ապա այս պատերազմի ընթացքում հոգևոր առաջնորդը հայտարարեց, որ Ղարաբաղի պատերազմը պետք է ավարտվի, ինչի համար գլխավոր պայմաններից մեկը համարում էր Հայաստանի կողմից «գրավված տարածքների վերադարձը, իսկ Ադրբեջանի կողմից էլ՝ այնտեղ ապրող հայերի անվտանգության երաշխավոր լինելը» (Khamenei, 2020): Մյուս կողմից, սակայն, ըստ էության, թույլ էր տրվում ՀՀ հասցնել որոշ քանակի զինատեսակներ, ինչի մասին բացեիբաց խոսել է ՌԴ նախագահը՝ «Ռոսիա» հեռուստատեսությանը տված հարցազրույցի ժամանակ (JamNews, 2020):

Պատերազմի ավարտից հետո Իրանը փորձեց նախաձեռնող դիվանագիտություն իրականացնել՝ իր ծառայությունները առաջարկելով երկու երկրներին էլ, քանզի ակնհայտ էր որ Մինսկի խումբը չի կարողանում իրացնել իր գործառույթները: Իրանը առաջ քաշեց «3+3 ծրագիրը», որով ինքը ևս մասնակից կդառնար Արցախյան խնդրի խաղաղ կարգավորման գործընթացին՝ այսպիսով ամրապնդվելով Կովկասում: Ակնայտ էր, որ Կովկասում թուլացել էին Իրանի դիրքերը, և էապես մեծացել՝ Թուրքիայինը, ինչը չէր կարող չմտահոգել Թեհրանին, սակայն իրանական ակտիվ ջանքերը բախվում էին Ադրբեջանի մերժմանը: Ակնհայտ էր, որ «3+3 ծրագիրը» չէր բխում ՀՀ շահերից, միևնույն ժամանակ, «3+3 ձևաչափին» մասնակցելուց հրաժարվեց Վրաստանը և, ըստ էության՝ ծրագիրը կյանքի չկոչվեց: Կովկասում հավասարկշռութուն պահելու՝ Իրանի բոլոր ջանքերը փոշիացան, քանզի Ադրբեջանը բացահայտ ցույց էր տալիս, որ Իրանի որևէ աջակցության կարիքը չունի: Ավելին, իսրայելական «Հաարեց» պարբերականի տեղեկությամբ Իսրայելը պատերազմի ողջ ընթացքում ոչ միայն

լայնածավալ օգնություն էր ցուցաբերել Ադրբեջանին, այլև կարողացել էր ձեռք բերել Իրանի հյուսիսային շրջանները մշտադիտարկելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Իրանի դեմ գործողություններ ծավալելու հնարավորություն: Համաձայն պարբերականի՝ «Ադրբեջանի հարավային հատվածներում որոշ տարածքներ էլ հանձնվեցին Իսրայելի հատուկ ծառայություններին. մինչև անգամ օդանավակայան կառուցվեց՝ Իսրայելին աջակցելու համար, եթե վերջինս որոշի հարձակվել իրանական միջուկային օբյեկտների վրա» (Scarf & Yaron, 2023):

Ըստ իս, Իրանը պատերազմի ընթացքում չկողմնորոշվեց, թե ինչպես պետք է դրսևորի իրեն, և թե ինչպես պետք է դիրքավորվի այս պատերազմի ժամանակ, այդ իսկ պատճառով որդեգրեց չեզոք գիծը: Մի կողմից, պաշտոնական մակարդակում հնչեցրեց ադրբեջանամետ տեսակետներ, մյուս կողմից՝ չհետևեց Վրաստանի օրինակին և բաց պահեց սահմանը՝ դեպի ՀՀ ռուսական զենքի որոշ քանակի մատակարարման համար: Պատերազմի ընթացքում Իրանը խոսել է իր կարմիր գծերի մասին, որից հետո ակնկալվում էին նրա է՛լ ավելի ակտիվ գործողությունները: Իրանի համար կարմիր գծեր էին՝ իր սահմանների շարունակական ռմբակոծումը, իր քաղաքացիների կյանքին սպառնացող վտանգները, ինչպես նաև որևէ երկրի տարածքային ամբողջականության խաթարումը:

Ըստ էության, 2020 թվականից հետո Ադրբեջանն ընդգծված հակաիրանական և թուրքամետ ու իսրայելամետ քայլեր է իրականացրել, ինչը, բնականաբար անհանգստացնում է Իրանին, քանզի Կովկասում միակ երկիրը, որը փաստացի ջանում է ջերմ և ակտիվ հարաբերություններ պահել Իրանի հետ՝ թուլացած Հայաստանն է:

Ջինադադարի մասին հայտարարության ստորագրումից, դրա կետերի ուսումնասիրումից հետո Իրանի համար հստակ դարձավ, որ այս պատերազմից հետո Կովկասում իր դիրքերը էականորեն թուլանում են: Նոյեմբերի 17-ին մեջլիսի պատգամավորներից Մահմուդ Ահմադի Բիղաշը, խիստ քննադատության են-

թարկելով Թուրքիայի միջամտությանը Կովկասի երկրների ներքին գործերին և պատերազմի ողջ ընթացքին, հստակ նշեց, որ երկրի «Հյուսիս-արևմուտքում ստեղծվում են խնդիրներ, որոնք կհանգեցնեն տարածաշրջանային մեծ աղետի, եթե հեղափոխական բնույթի արձագանք չլինի Իրանի կողմից» (Parliran, 2021):

Պատերազմի հենց սկզբում և՛ Էրդողանը, և՛ Ալիևը բազմիցս նշել են, որ պատերազմից հետո տարածաշրջանն էականորեն փոփոխության է ենթարկվելու, և այժմյան քարտեզն էլ հաստատում է, որ սպառնալիքը մոտենում է Իրանի սահմաններին՝ ահաբեկիչների կամ պանթյուրքիստական նկրտումների տեսքով:

Այսպիսով, թեպետ Իրանը պաշտոնապես միշտ էլ ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, սակայն նրա շահերից էլ էր բխում Իրանի հյուսիսային հատվածների մոտ հայկական ուժերի գերակայությունը, ինչի մասին, բնականաբար, նա չէր կարող բարձրաձայնել՝ հաշվի առնելով թե՛ իր տարածքում բնակվող թյուրքախոս բնակչության հույզերը, թե՛ Ադրբեջանի հետ խիստ կարևոր տնտեսական հարաբերությունները, թե՛ Թուրքիայի հետ առկա համատեղ շահերը:

Ակնհայտ էր, որ երբ Կովսականի և Զրականի տարածքները հայկական ուժերի հսկողության տակ էին, Իրանի սահմանը պահպանվում էր հիմնականում իրանական ժանդարմերիայի, որոշ դեպքերում՝ բանակի կողմից, իսկ Արցախյան պատերազմից հետո Իրանը այս հատվածներում տեղակայեց ԻՀՊԿ զորքերը: Սա խոսում է այն վստահության մասին, որ գրանցվել էր մեր երկու երկրների միջև:

ԻԻՀ-ն իր ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք է համարում Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Իրանի հյուսիսային նահանգների մոտ տեղակայած ահաբեկչական խմբերի առկայությունը, ինչը տեղ է գտել ինչպես հոգևոր առաջնորդի, այնպես էլ նախագահի ելույթներում:

ԻԻՀ-ն խիստ անհանգստացած է նաև ՀՀ տարածքով Ադրբեջանի և Նախիջևանի միջև հնարավոր կապով. այս ծրագիրը կյանքի կոչելը նշանակում է՝ Իրանին ընդհանրապես դուրս թող-

նել կովկասյան գործողություններից: Մինչ այժմ Նախիջևան բեռներ տեղափոխելու համար Ադրբեջանն օգտվում էր Իրանի տարածքից և այդ հարցում վերջինից գտնվում էր կախման մեջ, և Հայաստանի տարածքով այդ կապը ապահովելու պարագայում Իրանի դերակատարությունը է՛լ ավելի կնվազի:

2020 թ. դեկտեմբերի 10-ին Բաքվում տեղի ունեցած ռազմական շքերթի ժամանակ Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը արտասանեց Արաքս գետի երկու ափերի միավորմանը նվիրված բանաստեղծությունը, ինչը խիստ գրգռեց իրանական կողմի զգացմունքները (AlJazeera, 2020): Շատ իրանցիներ կարծում էին, որ Թուրքիան Իսրայելի և Ադրբեջանի գործակալների օգնությամբ պատրաստվում է ապակայունացնել Հյուսիսային Իրանը:

2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից և 2021 թ. հունիսի 15-ի «Շուշիի հռչակագրից» հետո ակնհայտ դարձավ տարածաշրջանում Թուրքիայի դերի գերակայության և Իրանի՝ է՛լ ավելի մարգինալացման փաստը:

Խաղաղություն հիմնադրիա՝ ատրճանակի ապառնալիքի ներքո

2020 թ. պատերազմից հետո թուրք-ադրբեջանական տանդեմը փորձում է ամրապնդել Հայաստանի համար փակուղային կարգավիճակը, որով պաշտոնական Երևանը այլևս գրավիչ չպետք է լիներ որևէ երկրի ծրագրերի համար: Ադրբեջանը փորձում է առավելապաշտական դիրքերից Հայաստանից ստանալ այն ամենը, ինչը հնարավոր է: Այս գործում Ադրբեջանին կրկին օգնում է Թուրքիան՝ պահանջելով նորանոր զիջումներ Հայաստանից: Թուրք-ադրբեջանական տանդեմի գլխավոր նպատակն էր՝ Ադրբեջանը ցամաքային ճանապարհով միացնել Նախիջևանին, որն էլ փոքր սահման ունի Թուրքիայի հետ: Այսպիսով կիրականանար պանթուրանիզմի հարյուրամյա երազանքը՝ անմիջական սահմանով, որը ուղիղ հարված կհասցներ տարածաշրջանում Իրանի ազգային անվտանգությանը:

Տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխությունները ոչ միայն Իրանին, այլ նաև Հնդկաստանին ստիպեցին ներգրավվել,

փորձել ազդել նոր իրողությունների վրա: 2021 թ. հոկտեմբերի 12-ին առաջին անգամ ՀՀ ժամանեց Հնդկաստանի արտգործնախարար Սուբրամանյամ Ջայշանկարը, որը նշեց «Հյուսիս-հարավ» ծրագրին Հայաստանի պարտադիր մասնակցության հարցը: Եվ քանի որ, ըստ մեր կարծիքի, «Հյուսիս-հարավ» տրանսպորտային ճանապարհը վաղուց տնտեսական ուղուց վերաճել է քաղաքական նպատակներ սպասարկելու ուղու, ակնհայտ դարձավ, որ թուրք-ադրբեջանական տանդեմին, որոնց աջակցում է նաև Պակիստանը, փորձելու են դիմադրել Հնդկաստանն ու Իրանը:

Հայաստանը բավականին արագ արձագանքեց Հնդկաստանից և Իրանից եկող այս ազդակներին: ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանը հնդկական «Վիոն» լրատվամիջոցին տված հարցազրույցի ժամանակ ասաց. «Մենք ակտիվորեն քննարկում ենք կոմունիկացիոն մի շարք նախագծեր: Այս առումով, մենք շահագրգռված ենք՝ զարգացնելու մեր երկխոսությունն ու համագործակցությունը «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի նախագծի, Չաբահար նավահանգստի, ինչպես նաև «Պարսից ծոց-Սև ծով» միջազգային տրանսպորտային միջանցքի շրջանակներում, և այս հարցում նույնպես շփվում ենք այլ գործընկերների հետ: Հայաստանն այս միջանցքում Հնդկաստանի ներուժն ու հեռանկարային դերը համարում է բավականին նշանակալի: Այս առումով մենք նաև ողջունում ենք հնդկական ընկերությունների ակտիվ ներգրավածությունը Հայաստանի ենթակառուցվածքային ծրագրերում» (MFA, 2022):

Այդ նույն շրջանում Ադրբեջանը է՛լ ավելի կոշտացրեց իր հռետորաբանությունը, և հաճախակի դարձան ռազմական ճանապարհով, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» բացման սպառնալիքները, ինչը ՀՀ տարածքային ամբողջականության խախտման կոնկրետ վտանգ էր:

Իրանը մի քանի անգամ նշել է իր կարմիր գծերի մասին, ըստ որի՝ թույլ չի տա Հայաստանի հետ իր սահմանի փոփոխություն: 2022 թ. հուլիսի 19-ին ԻԻՀ հոգևոր առաջնորդը Թուրքիայի նախագահի հետ հանդիպման ժամանակ գոհունակություն հայտնեց

«Ղարաբաղը Ադրբեջանի կազմ հետ վերադարձնելու կապակցությամբ», սակայն, միևնույն ժամանակ, արձանագրեց Իրան-Հայաստան սահմանի կարևորությունը Իրանի համար և նշեց, որ «Իրանը չի հանդուրժի Հայաստան-Իրան՝ հազարամյակներով առկա սահմանի փակմանն ուղղված որևէ գործողություն» (Isna, 2022, Leader.ir, 2022):

Ուշագրավ է, որ ԻԻՀ հոգևոր առաջնորդը գրեթե նույն բովանդակությամբ քննարկում ունեցավ նաև ՀՀ ռազմավարական դաշնակից ՌԴ նախագահ Վ. Պուտինի (Leader, 2022) հետ հանդիպման ժամանակ: Կարծում ենք, որ առնվազն տարօրինակ էր, որ Իրանի ղեկավարը ՀՀ ռազմավարական դաշնակցին իրազեկում էր, որ Իրանը թույլ չի տա Հայաստանի հետ իր պատմական սահմանի փոփոխություն: Սրանից եզրակացնում ենք, որ ՌԴ շահերն այդ պահին այս հարցում համընկնում էին թուրք-ադրբեջանական տանդեմի շահերի հետ, և որ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» կիրառմանը փաստացի դեմ են Հայաստանն ու Իրանը, և այդ պատճառով է, որ Իրանին կոչում ենք բնական դաշնակից: Այստեղ տեղին է մեջբերել ԻԻՀ նախկին արտգործնախարար Զարիֆի հուշերից մի հատված, որտեղ նա նշում է. «հաշվի առնելով Ռուսաստանի ռազմավարական առաջնահերթությունները, այս երկու երկրների միջև (Ադրբեջանի և Հայաստանի – Ի.Գ.) հարաբերությունների՝ Ռուսաստանի ռազմավարական ընտրությունը այլևս Հայաստանը չէ» (Zarīf, 2024): «Զանգեզուրի միջանցքին» Իրանի դիմադրությանը վերջերս անդրադարձավ նաև Էրդողանը՝ նշելով, որ «Հիմնական դիմադրողն Իրանն է, և Թուրքիան կշարունակի աշխատել միջանցքի բացման ուղղությամբ» (Anadolu agency, 2023):

Հայաստանի տարածքային ամբողջականության պահպանման և Իրանի հետ սահմանի փոփոխության անթույլատրելիության մասին խոսել են ԻԻՀ գրեթե բոլոր բարձաստիճան պաշտոնյաները: ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Աբբաս Բադախշիան Զոհուրին մեզ հետ հարցազրույցում նշել է, որ «Սյունիքը տարբեր առումներով կարևորություն է ներկայացնում մեզ համար: Իրան-Հայաստան

սահմանը պատմականորեն եղել է բարեկամության սահման: Միջազգային ալեկոծ պայմաններում մենք դեմ ենք սահմանների ցանկացած փոփոխության: Սյունիքով է անցնում Իրանը Հայաստանին կապող կարևոր ուղին: Վերջին տարիներին Սյունիքի մարզին առնչվող հիմնախնդիրներն առավել մեծ ուշադրության են արժանացել Իրանի կողմից, և Կապանում գլխավոր հյուպատոսության հիմնումը այդ ուշադրության նշաններից մեկն է» (Զոհուրի, 2023):

Ուշագրավ է, որ միջանցքի բացման իր նպատակներին դիվանագիտական ճանապարհով չհասնելուց հետո, Ադրբեջանը Թուրքիայի և, ըստ էության՝ Իսրայելի աջակցությամբ փորձեց հարցը լուծել ռազմական ճանապարհով՝ 2022 թ. սեպտեմբերին: Այս անգամ ՀՀ զինված ուժերն արժանի դիմադրություն ցուցաբերեցին և կանգնեցրին ադրբեջանցիների շարժը: Դրանից զատ, ՀՀ ԱԳ փոխնախարար Վահան Կոստանյանի՝ «Ալ-Մոնիտորին» տված հարցազրույցից պարզ է դառնում, որ Իրանը ևս կանխարգելիչ գործողություններ է իրականացրել այս հարցում: Նա, մասնավորապես, նշել է «Մենք հետախուզական տեղեկություններ ունեինք, որ սեպտեմբերյան մարտերի ընթացքում Ադրբեջանը շատ ավելի մեծ հարձակում էր նախապատրաստում: Իրանի գործողություններն ու հայտարարությունները, սակայն, նպաստեցին, որ իրադրության հետագա վատթարացումը դադարի» (Zaman, 2023):

2022 թ. հոկտեմբերին Արաքս գետի մոտ Իրանը մեծ զորավարժություն անցկացրեց, որով իրանական արագ արձագանքման ջոկատները հեշտությամբ հատում էին Արաքս գետը (Kucera, 2022): Այսպիսով, Իրանը հստակ ցույց տվեց, որ պատրաստ է անցնել սահմանը, եթե դրա անհրաժեշտությունն զգա: Ադրբեջանում մտահոգություն հայտնեցին Իրանի զորավարժության առնչությամբ:

Իրանի իրականացրած այս ակտիվ քաղաքականության շնորհիվ Հայաստանի հասարակության վերաբերմունքում կրկին դրական դինամիկա նկատվեց Իրանի նկատմամբ: 2022 թ. հունվարին ՄՀԻ հարցախույզի արդյունքում հարցվածների 80%-ը

Հայաստան-Իրան հարաբերություններին, ընդհանուր առմամբ, դրական էր վերաբերվել, և Իրանը կրկին զբաղեցրեց պատվավոր 2-րդ հորիզոնականը: Հարցվածների 23%-ը գտնում էր, որ Իրանը կարող է դառնալ Հայաստանի քաղաքական գործընկերը, 40%-ը գտնում էր, որ Իրանը կարող է լինել տնտեսական գործընկեր, 31%-ը գտնում էր, որ Իրանը կարող է Հայաստանի անվտանգությունը պահպանող գործընկեր լինել (IRI, 2021): Հայաստանի անվտանգությունը պահպանող գործընկեր լինելու առումով Իրանը զիջում էր միայն Ռուսաստանին և Ֆրանսիային:

Սակայն խիստ ուշագրավ էր 2023 թ. փետրվարին ՀՀ ռազմավարական դաշնակից երկրի արտգործնախարար Լավրովի հայտարարությունը առ այն, որ «Երկար տարիներ Հայաստանն օկուպացրել է Ադրբեջանի 7 շրջանները» (Лавров, 2023): Սույն հայտարարությունն այնքանով է տարօրինակ, որ անգամ ՄԱԿ-ի ԱԽ-ն իր բանաձևերում երբեք չի արձանագրել, թե Հայաստանն է օկուպացրել, այլ կոչ է արվել հայկական ուժերին՝ դուրս գալ Ադրբեջանի տարածքներից: Ստացվում է, որ մեր ռազմավարական դաշնակիցը հող է նախապատրաստում Ադրբեջանի համար՝ նույն կերպ վարվել Սյունիքում՝ ունենալով նույն արդարացումը: Սա նշանակում է, որ հասունանում է մի խնդիր, որի լուծումը կարող է լինել կա՛մ Արևմուտքի և ՌԴ համագործակցությամբ ու լարվածության թուլացմամբ, կամ ռազմական ճանապարհով, որի թատերաբեմ թուրք-ադրբեջանական տանդեմը կփորձի Հայաստանի հարավը դարձնել Իրանի հյուսիսային սահմանները: Սրանով էին, թերևս, պայմանավորված Իրանի այդչափ հստակ ուղերձները թե՛ հոգևոր առաջնորդի, թե՛ նախագահի, և թե՛ արտգործնախարարի ու շատ այլ պաշտոնյաների կողմից:

Այս մասին իր հստակ տեսակետներն է ներկայացրել նաև ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Զոհուրին՝ նշելով. «Նախ, մենք դեմ ենք տարածաշրջանում սահմանների ցանկացած փոփոխության: Նորդուզից Երևան ձգվող ցամաքային ճանապարհը մեզ համար կարևոր և պատմական կարևորությամբ երթուղի է: Մենք ողջունում ենք տարածաշրջանում հաղորդակցության ուղիների ապաշրջափա-

կումը՝ տարածաշրջանի երկրների կողմից համաձայնության արտահայտման շրջանակներում և երկրների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը հարգելու պայմանով: Մենք դեմ ենք, որ մեր հարևան երկրի տարածքը և, հատկապես՝ մեր սահմանին մոտ գտնվող տարածքները տարբեր դերակատարների բախման թատերաբեմ լինեն» (Զոհուրի, 2023):

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 2020 թ. պատերազմից հետո Կովկասում ստեղծվեց ռազմաքաղաքական նոր իրողություն, որտեղ արտատարածաշրջանային երկրների շահերը երբեմն խաչվում են: Միացյալ Նահանգները, որը պատժամիջոցների մի ամբողջական փաթեթ էր ընդունել ընդդեմ Իրանի, թույլ է տալիս Հնդկաստանին՝ տարածաշրջանային իր դաշնակցին, Իրանի հետ խորացնել համագործակցությունը հատկապես Չաբահար նավահանգստում: ԱՄՆ-ի մյուս ռազմավարական դաշնակից Ճապոնիան աջակցում է Հնդկաստանին՝ Հյուսիս-հարավ միջանցքի աշխատանքները ակտիվացնելու ուղղությամբ՝ առաջարկելով իր ծառայությունները և ֆինանսական հոսքերը: Իրականում հասկանալի է, որ Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի նման «բարեհաճ» վերաբերմունքը առաջին հերթին միտված է տարածաշրջանում Չինաստանին զսպելուն: Բանն այն է, որ Կովկասով պետք է անցնեն ոչ միայն Հյուսիս-հարավ տրանսպորտային ճանապարհը, այլև Տրանսկասպյան միջազգային տրանսպորտային ճանապարհը, որի հիմնական շահառուներն են՝ Չինաստանն ու Թուրքիան: Հյուսիս-հարավ ծրագրի նկատմամբ Իրանի մոտեցումների և դրա՝ Հայաստանով անցնելու կարևորություն մասին հստակ խոսել է դեսպան Զոհուրին՝ մեզ հետ ունեցած հարցազրույցում. «Իրանի համար շատ կարևոր է Հայաստանի հյուսիս-հարավ երթուղին: Այս նախագծի իրագործումը համարում ենք արդյունավետ քայլ՝ տարածաշրջանի անվտանգության բարձրացման, Իրանի և Հայաստանի միջև առևտրային հարաբերություններին նպաստելու, ինչպես նաև միջազգային հաղորդակցության ուղիներում և, հատկապես, Հնդկական օվկիանոսից մինչև Սև ծով

ձգվող հատվածում Իրանի և Հայաստանի դիրքերի բարելավման ուղղությամբ» (Զոհուրի, 2023):

Այսպիսով, որքան էլ պարադոքսալ է՝ տարածաշրջանում ակնհայտորեն համընկնում են ԱՄՆ-ի և Իրանի շահերը՝ առնվազն երկու կետով.

1. ԱՄՆ-ին ձեռնտու է, որ զարգանա հյուսիս-հարավ տրանսպորտային ճանապարհը, ինչի համար անգամ աչք է փակում այդ ծրագրում Իրանի առանցքային դերի վրա, քանի որ այս ծրագիրը կարող է թուլացնել չինական ազդեցությունը տարածաշրջանում:

2. Ներկայումս շրջանառվում է կարծիք, որ Ադրբեջանի կողմից պահանջվող, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը» պետք է լինի ՌԴ զինված ուժերի պաշտպանության ներքո: Միացյալ Նահանգները գտնում է, որ 2020 թ. պատերազմից հետո Կովկասում ոչ միայն թուլացել են Իրանի դիրքերը, այլև Արցախի հայաթափմամբ ընդհանրապես անհասկանալի է դառնում ռուսական զորքերի մնալը Արցախում: Իսկ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» անվտանգությունը երաշխավորելու պատրվակով, ռուսական զորքերը կմեծացնեն իրենց ազդեցությունը ՀՀ-ում: ԱՄՆ-ի առաջնային նպատակն է՝ օգտվել այս եզակի հնարավորությունից, երբ տարածաշրջանում թուլացել է ռուսական ազդեցությունը, և Թուրքիայի աջակցությամբ դուրս մղել ՌԴ-ին Հարավային Կովկասից՝ ընդհանրապես:

Մյուս կողմից, Ադրբեջանն այնպես է դիրքավորվում՝ ասես միայնակ պայքարում է Իրանի «ապակայունացնող» քաղաքականության դեմ, ինչն ընդունելի է ԱՄՆ-ի համար: ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը 2023 թ. Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստում հայտարարեց, թե Վաշինգտոնի՝ Ադրբեջանին տրվող ֆինանսական աջակցությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ Ադրբեջանն Իրանի հետ ունի ընդարձակ սահման, և որ Իրանի գործողությունները սպառնում են տարածաշրջանի անվտանգությանը (Իսրայելյան, 2023):

Թեպետ Հայաստանը ռազմավարական դաշինք չունի Իրանի հետ, սակայն մեր շահերի համընկնման շնորհիվ Իրանը դառնում

է Հայաստանի բնական դաշնակիցը: Ի՞նչ նկատի ունենք՝ բնական դաշնակից ասելով. այսօր, առավել, քան երբևէ, ցայտուն երևում է Հայաստանի և Իրանի շահերի համընկնումը տարածաշրջանային մի շարք հարցերի շուրջ, որոնք հաճախ սերտորեն կապվում են երկրներից յուրաքանչյուրի ազգային անվտանգության հետ: Այս տեսակետը կիսում էր նաև ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Զոհուրին. «Մեր տպավորությունն այն է, որ վերջին տարիներին Իրանի և Հայաստանի հարաբերություններն ամրապնդվել են բոլոր ոլորտներում» (Զոհուրի, 2023):

Սակայն, ցավոք, նույնը չենք կարող ասել տնտեսական համագործակցության ոլորտի վերաբերյալ, որտեղ անելիքները շատ են, սակայն համագործակցությունում ակնհայտորեն նկատվել ու նկատվում է դանդաղկոտությունը: Անցյալ տասնամյակների ընթացքում, պայմանավորված ներքին և արտաքին հանգամանքներով, Հայաստանի և Իրանի միջև ապրանքաշրջանառությունը կայուն զարգացում չի ունեցել. 2021 թ. Հայաստան-Իրան առևտրաշրջանառությունը հատել է ընդամենը 500 մլն դոլարի շեմը (Armenpress, 2022): 2023 թ. հուլիսի 24-ին ԻԻՀ արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլահյանը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ հանդիպումից հետո թվիթերյան իր անձնական օգտահաշվում նշել է, որ շուտով Հայաստան-Իրան առևտրաշրջանառությունը կհասցվի 3 միլիարդ դոլարի (Amirabdolahian, 2023): Սակայն ներմուծման և արտահանման թվերը հավասար չեն, և ավելի շատ ապրանք բերվում է Իրանից Հայաստան, և ավելի քիչ՝ հակառակ ուղղությամբ, այն դեպքում, երբ հայկական շուկան 2,5 մլն է, իսկ իրանականը՝ 87 մլն:

Թեպետ Հայաստան-Իրան հարաբերություններին միշտ տրվել են «հատուկ հարաբերություններ», «առանձնահատուկ հարաբերություններ», «բարեկամ երկիր» որակումներ, սակայն մեր երկու երկրներին այդպես էլ չի հաջողվել կյանքի կոչել ինչպես մեծ ծրագրեր (բացառությամբ «գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի), այնպես էլ զարգացնել առևտրաշրջանառությունը:

Եզրակացություն

Հարկ է նշել, որ Արցախյան վերջին պատերազմը և Հայաստանի շուրջ առաջացած ծանր իրավիճակը ցույց տվեցին, որ Խորհրդային Միության փլուզումից հետո առկա խնդիրներն ու մարտահրավերները ոչ միայն չեն հաղթահարվել, այլ դրանց ավելացել են նորերը, և Հայաստանը այսօր վճարում է նաև իր ընտրած քաղաքական կուրսի համար:

Հայաստանը, որը փորձել է կոմպլեմենտար քաղաքականություն իրականացնել թե՛ հավաքական Արևմուտքի, թե՛ ՌԴ-ի հետ, այնուամենայնիվ, չի կարողացել ամբողջովին չեզոք լինել: Որքան էլ Հայաստանի իշխանությունները Արևմտյան աշխարհին համոզրեն բացատրում էին, որ ՌԴ-ի ու Իրանի հետ կապը Հայաստանին անհրաժեշտ է բացառապես սեփական ազգային անվտանգության պահպանման բաղադրիչից ելնելով, այնուամենայնիվ, առաջին իսկ խնդրի ժամանակ հավաքական Արևմուտքը Հայաստանին թողեց վերջինիս նախընտրած «անվտանգային կոմպոնենտներ» երաշխավորող երկրների հետ, որոնք ըստ էության՝ ի վիճակի չեղան ամբողջովին իրականացնել իրենց գործառույթները: Օր-օրի մեծանում են Իրանի նկատմամբ հավաքական Արևմուտքի ճնշումները, իսկ ՌԴ-ն 2022 թ. փետրվարից ի վեր գտնվում է պատերազմի մեջ՝ նույն հավաքական Արևմուտքի հետ: Այս համատեքստում ուշագրավ է, որ Իրանում վերջերս քննարկման նյութ դարձավ Միացյալ Նահանգների հետ որոշակի բանակցություններ սկսելու թեզը: Այդ մասին խոսել են Իրանի նախկին արտգործնախարարներ Ալի Աքբար Սալեհին և Մոհամեդ Ջավադ Զարիֆը: Սալեհին նշել է, որ Իրանը պետք է սկսի ԱՄՆ-ի հետ քաղաքական երկխոսություն, թեպետ նախկինում էլ ունեցել են որոշակի քննարկումներ Իրաքի և Աֆղանստանի վերաբերյալ, բայց այսօր՝ տարածաշրջանային նոր իրողությունների համատեքստում, անհրաժեշտ է մեծացնել քննարկման շրջանակը (BBC): Զարիֆն էլ իր հարցազրույցներից մեկում վերջերս խոսել էր, որ «Իրանի համար վտանգավոր է լինել հակառուսական կամ հա-

կաամերիկյան: Որովհետև մենք պետք է առաջնահերթություն տանք մեր ազգային շահերին, և հետո մտածենք ամերիկյան գերիշխանությանը հակազդեցության մասին» (Bitly, 2023): Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Իրանում ևս, լավ պատկերացնելով տարածաշրջանում տեղի ունեցող լրջագույն փոփոխությունները, գտնում են, որ իրենք ևս պետք է քննարկման թեմաներ դարձնեն նախկին գործիքակազմի փոփոխության և Միացյալ Նահանգների, ԵՄ-ի հետ նոր որակի քննարկումներ սկսելու, ժամանակավոր նոր դաշինքներ կնքելու հարցերը: Հղում անելով Զարիֆի թեզերին՝ վստահ ենք, որ Հայաստանը ևս, այսօր կանգնած է նոր գործընկերներ գտնելու, ռազմավարական նոր դաշինքներ կնքելու խաչմերուկում, քանզի նախկին աշխարհակարգը այս պահին չի կարողանում լավագույնս իրացնել իր առաքելությունը: Կարծում եմ, որ Հայաստանի համար այսօր խիստ կարևոր է խորը և համապարփակ քննարկումներ սկսել ռազմավարական նոր բնույթի պայմանագրերի մշակման ուղղությամբ՝ Իրանի, Հնդկաստանի և Ֆրանսիայի հետ՝ միևնույն ժամանակ փորձելով պահպանել նախկին բոլոր պայմանավորվածությունները:

Արցախի վերջին պատերազմից և Արցախի հայաթափումից հետո, ըստ իս, խախտվեց տարածաշրջանային հավասարակշռությունը: Բացի այն, որ դա Հայ ժողովրդի ողբերգությունն էր, այն նաև փոխեց տարածաշրջանի թվացյալ անդորրը: Կովկասում պայքարի բռնվեցին տարածաշրջանային և արտատարածաշրջանային երկրները: Ակնհայտ է, որ Միացյալ Նահանգները որպես տարածաշրջանում իր ներկայացուցիչ տեսնում է Թուրքիային, որը Իրանի դարավոր մրցակիցն է, իսկ Թուրքիան էլ ռազմական միջամտություններով փորձում է դիրքավորվել և հաստատել իր ազդեցությունը Կովկասում: Թուրքիան ոչ միայն տարածաշրջանում, այլ ընդհանրապես՝ ողջ աշխարհում իր վարած քաղաքականությամբ ցույց է տալիս, որ աշխարհը պետք է փոխի իր մոտեցումները Թուրքիայի նկատմամբ, և որ այդ երկիրը այլևս չի կարող լինել Արևմուտքի կրտսեր գործընկերը, այլ հավակնում է դառնալու լիիրավ գործընկեր: Բնականաբար, սա խիստ մտահո-

գում է Իրանին, քանզի տարեցտարի մեծանում է տարածաշրջանային մրցակիցների միջև անջրպետը: Եվ ակնհայտ է, որ հավասարակշռության էական խախտման պարագայում տարածքային ոտնձգությունների հաջորդ չափաբաժինը հասնելու է Իրանին:

Ներկա փուլում կարծում ենք, որ Իրանը կվարի բալանսավորված քաղաքականություն՝ մի կողմից սերտորեն համագործակցելով Հնդկաստանի, մյուս կողմից՝ պահելով համագործակցությունը Չինաստանի հետ՝ որպես Միացյալ Նահանգների հիմնական մրցակցի, և ամեն ինչ կանի, որպեսզի մաս կազմի թե՛ Մետաքսի ճանապարհին, թե՛ Հյուսիս-հարավին: Իրանն, ըստ էության, կարևորում է վերջին տարիներին Հայաստանի վարած քաղաքականությունը, որը միտված է խաղաղության հաստատմանը: Այս մասին մի քանի անգամ խոսել է ԻԻՀ դեսպանը՝ կարևորելով կայուն խաղաղությունը, ինչը նմանատիպ մեծ ծրագրերի կարևոր բաղադրիչ է: 2024 թ. ԻԻՀ-ում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Մասուդ Փեզեշկիանը հեռախոսազրույց են ունեցել, որի ժամանակ ԻԻՀ Նախագահը վերահաստատել է Էբրահիմ Ռայիսիի կառավարության՝ Հայաստանին վերաբերող թեզին հավատարիմ մնալու պատրաստակամությունը: Նա, մասնավորապես, նշել է «Մենք դեմ ենք միջազգային սահմանների ցանկացած փոփոխության» (Irna, 2024):

Այսպիսով, ամփոփելով, գալիս ենք այն եզրահանգման, որ Հայաստանը գտնվում է իր պատմության բախտորոշ ժամանակահատվածում, ինչն ստիպում է գերճշգրիտ, հաշվարկված արտաքին քաղաքականություն իրականացնել, փորձել պահել նախկին դաշնակցային հարաբերությունները, սակայն դրանց կողքին ավելացնել նորերը: Փորձել ոչ միայն չհայտնվել փակուղային երկրի կարգավիճակում, այլև ապահովել հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք խաչմերուկում Հայաստանի պարտադիր մասնակցությունը և դերակատարությունը:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

Մենագրություններ

1. ***Բալայան (2004),*** Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991–1994 թթ. Interview with M.Vaezi, the Iranian Depuuty Foreign Minister for European and American Affairs and Iran's special envoy formediating in the crisis in Nagorno-Karabakh // Keyhan-21.05.1992, Գասպրինտ, Երևան, 2004, էջ 33–34:
2. ***Բեգիջանյան (2001),*** Բեգիջանյան Է. Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Սուրբ-Սեր, Երևան, 2001, էջ 54, 58:
3. ***Իսկանդարյան (2014c),*** Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991–2014 թթ.), Երևան, 2014, էջ 50–51, 58–59, 48:
4. ***Իսրայելյան (2023),*** Իսրայելյան Ա., Իրան-Ադրբեջան հարաբերությունները քսանամյա պատմափուլում (2003–2023 թթ.), Երևան, 2023, էջ 15, 212, 197:
5. ***Տեր-Պետրոսյան (2006),*** Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի. ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Երևան, 2006, էջ 278–279:
6. ***Демоян (2006),*** Демоян Г., Турция и Карабакский конфликт в конце XX – начала XXI веков, Ереван, 2006, с. 133.
7. ***Ẓarīf (2024),*** Ẓarīf Moḥammad-Javād, Pāyāb Shakībā'ī: Bardāsht-hā'ī az Hasht Sāl-e Vezārat (Տոկուն համարձակություն. նախարարի մտորումները ութնամյա ղեկավարումից հետո), Enteshārāt-e Ettel'āt, Tehran, 2024, 281–291 pp.

Հոդվածներ

8. ***Բայբուրդյան (2004),*** Բայբուրդյան Վ., Իսլամական Հեղափոխության քառորդ դարը: Քաղաքակրթությունների երկխոսություն, Հայաստան–Իրան, Միհր, 2 (46), 2004, էջ 37:
9. ***Բայբուրդյան (2008),*** Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան. Հարևաննե՞ր, թե՝ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXII, Երևան, 2008, էջ 10:
10. ***Иванов (1969),*** Иванов М., Иран сегодня, Издательство Наука, Москва, 1969, с. 6.
11. ***Сидоров (2015),*** Сидоров И.Е., Ирано-Азербайджанские отношения в первый год президентства М. Хатами, Международные Отношения, ISSN 1998–9938, Вестн. Волгогр. гос. ун-та., Сер. 4, № 6 (36), 2015, с. 18,

https://hfrir.jvolsu.com/index.php/en/component/attachments/download/1047 (д/в. 19.08.2024).
12. ***Askerov (2000),*** Askerov G., Oil and gas pipeline strategy of a landlocked country: case of Azerbaijan, Khazar Journal of Humanities and Social Sciences, Vol. 3, № 4, 2000, p. 33.
13. ***Ramazani (1992),*** Ramazani R.K., Iran's Foreign Policy: Both North and South, The Middle East Journal, Vol. 46, No. 3, Summer 1992, pp. 393–412.

Օրաթերթ, ամսագիր

14. ***Ազատություն (2020)***, Իրանը «շատ անհանգստացած է» Ադրբեջանում ահաբեկիչների ներկայությունից, 30.10.2020, https://www.azatutyun.am/a/30921042.html (հսև. 19.08.2024):
15. ***Ազգ (1993a),*** Ազգ, օրաթերթ, 15.04.1993թ., https://azg.am/%D5%A1%D5%A6%D5%A3-%D5%B7%D5%A1%D5%A2%D5%A1%D5%A9%D5%A1%D5%A9%D5%A5%D6%80%D5%A9-%D5%A1%D6%80%D5%AD%D5 %AB%D5%BE/ (հսև. 19.08.2024):
16. ***Ազգ (1993b),*** Ազգ, օրաթերթ, 22.04.1993թ., https://azg.am/%D5%A1%D5%A6%D5%A3-%D5%B7%D5%A1%D5%A2%D5%A1%D5%A9%D5%A1%D5%A9%D5%A5%D6%80%D5%A9-%D5%A1%D6%80%D5%AD%D5%AB%D5%BE/, (հսև. 19.08.2024):
17. ***Известия (1991),*** «Известия», № 281, Московский вечерний выпуск, 26.11.1991.
18. ***Российская газета (2020),*** Путин: Россия сделала все, чтобы Армения не чувствовала себя брошенной, https://rg.ru/2020/11/17/putin-rossiia-sdelala-vse-chtoby-armeniia-ne-chuvstvovala-sebia-broshennoj.html (д/в. 19.08.2024).

Պաշտոնական փաստաթղթեր

19. ***ԱԳՆ (1997),*** ՀՀ ԱԳՆ, ցուցակ 2, գործ N 167, համար 02.05, 5.02.1997:
20. ***ԱԳՆ (1998),*** Համառոտ տեղեկանք Իրանի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակի վերաբերյալ, 20.08.1998, ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 239:

Հարցազրույցներ

21. ***Զոհուրի (2023),*** Հարցազրույց ԻԻՀ դեեսպան Աբբաս Բաղախշիան Զոհուրիի հետ, հարցազրույցը իրականացվել է առցանց տարբերակով, 12.05.2023 թ., Երևան:
22. ***Խականդարյան (2014a),*** Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1991–1992 թթ.) Րաֆֆի Հովհաննիսյանի հետ, (03.05.2013), Իս-

կանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991–2014 թթ.), Երևան, 2014, էջ 278–279:

23. ***Իսկանդարյան (2014b),*** Հարցազրույց ԻՀՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գ.Առաքելյանի հետ (2009–2015 թթ.), (02.11.2012, Թեհրան, ԻՀՀ), Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991–2014 թթ.), Երևան, 2014, էջ 364–371:
24. ***Իսկանդարյան (2014d),*** Հարցազրույց ԻՀՀ-ում ՀՀ դեսպան Գեղամ Ղարիբջանյանին հետ, Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991–2014 թթ.), Երևան, 2014, էջ 344:
25. ***Իսկանդարյան (2014e),*** Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001–2014 թթ.) Արմեն Մովսիսյանի հետ, Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991–2014 թթ.), Երևան, 2014, էջ 145:
26. ***Իսկանդարյան (2014f),*** Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1998–2008 թթ.) Վարդան Օսկանյանի հետ, Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991–2014 թթ.), Երևան, 2014, էջ 313:
27. ***Սարգսյան (2023),*** Հարցազրույց ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանի հետ, հարցազրույցը իրականացվել է առցանց տարբերակով, 12.07.2023:
28. ***Քոչարյան (2023),*** Հարցազրույց ՀՀ 2-րդ նախագահ Ռ. Քոչարյանի հետ, 13.03.2023, Երևան:

Համացանցային աղբյուրներ

29. ***Зейналов (2018),*** Зейналов М., Азербайджан хочет получить больше оружия из Израиля, 14.09.2018, https://www.bbc.com/russian/news-45518964, (д/в. 19.08.2024).
30. ***Лавров (2023),*** Лавров: Армения много лет оккупировала земли Азербайджана, но он их вернул, 02.02.2023, https://info24.ru/news/lavrov-ar meniya-mnogo-let-okkupirovala-zemli-azerbajdzhana-no-on-ih-vernul.html, (д/в. 19.08.2024).
31. ***Шакарянц (2018),*** Шакарянц С., Болтон хамит в Закавказье, а в мире – разоблачительные скандалы вокруг США, 27.10.2018, https://regnum.ru/article/2508688 (д/в. 19.08.2024).

32. ***AlJazeera (2022),*** Iran protests to Turkey over ‘meddling’ poem recited by Erdogan, 11.12.2020, https://www.aljazeera.com/news/2020/12/11/iran-protests-to-turkey-over-meddling-poem-recited-by-erdogan (Acc. 19.08.2024).
33. ***Amirabdolahian (2023),*** Amirabdolahian H., 24.06.2023, https://x.com/amirabdolahian?lang=en (Acc. 19.08.2024).
34. ***Anadolu agency (2023),*** Opening of Zangezur corridor is issue with Iran, not with Armenia, Turkish President Erdogan says, adding Tehran's attitude upsets both Azerbaijan and Türkiye, 14.06.2023, https://x.com/anadoluagency/status/1668921484641812484?fbclid=IwAR14XqpytxjaMbg3giToelEZqlJ-L9llHbMyGCXbdoyzhezh4-yEP4l9uS4 (Acc. 19.08.2024).
35. ***Armenpress (2022),*** 30 years of diplomatic ties: Iran is Armenia’s 3rd top trading partner, 10.02.2022, https://armenpress.am/en/article/1075181, (Acc. 19.08.2024).
36. ***Armenpress (2020),*** Грузия запретила перевозку через свою территорию в Армению и Азербайджан грузов военного назначения, https://armenpress.am/ru/article/1030133 (Acc. 26.08.2024).
37. ***BBC,*** Vazīr-e khāreje-ye pīshīn-e Irān az zarūrat-e «tanzīm-e rābeṭe bā Āmrikā» va toṣīye-ye Rūsiye va Chīn dar in bāre goft (Իրանի նախկին արտգործնախարարը «Ամերիկայի հետ հարաբերությունները կարգավորելու» անհրաժեշտության և այս հարցում Ռուսաստանի ու Չինաստանի հորդորների վերաբերյալ ասել է), https://www.bbc.com/persian/articles/c72e44xvy1do, (Acc. 19.08.2024).
38. ***Bitly (2023),*** Zarīf: zadd-e Rūs va zadd-e Āmrikā būdan barāye Irān khatarnāk ast / Tehrān fekr mikonad Rūsīye mitavānad motaḥedesh bāshad / eshtebāh-e moḥāsabātī dar dawran-e goẓār bā‘es-e nābūdī mīshavad (Զարիֆ՝ հակառուս և հակաամերիկա լինելը վտանգավոր է Իրանի համար / Թեհրանը կարծում է, որ Ռուսաստանը կարող է իր դաշնակիցը լինել / սանցյալի հաշվարկային սխալները ոչնչացման են հանգեցնելու), 12.07.2023, http://bitly.ws/S7Qb, (Acc. 19.08.2024).
39. ***Borshchevskaya & Tabler (2023),*** Borshchevskaya A., Tabler A.J., Iran’s Tensions with Azerbaijan Point to Broader Shifts in the South Caucasus, 31.03.2023, https://www.washingtoninstitute.org/policy-analysis/irans-tensions-azerbaijan-point-broader-shifts-south-caucasus, (Acc. 19.08.2024).
40. ***Cohen (2016),*** Cohen G., Azerbaijan's President: We've Bought Almost $5 Billion in Israeli Military Goods, 14.12.2016, https://www.haaretz.com/israel-news/2016-12-14/ty-article/.premium/azerbaijan-has-bought-5-billion-in-israeli-military-goods/0000017f-dee5-d3a5-af7f-feef0e170000 (Acc. 19.08.2024).

41. ***Elçibəy (2016),*** Elçibəy: Türkiyədən dörd helikopter istədim, vermədilər, 07.10.2016, https://www.youtube.com/watch?v=Ko4DidoU3PA (Acc. 19.08.2024).
42. ***IRI (2006),*** IRI poll, Armenia National Voter Study, 2006, p. 29, https://www.iri.org/wp-content/uploads/2021/12/200620November20 Survey 20of20Armenian20Public20Opinion20November2010-1920200628129.pdf, (Acc. 19.08.2024).
43. ***IRI (2018),*** IRI poll, Public Opinion Survey: Residents of Armenia, 2018, pp. 48-50, https://www.iri.org/wp-content/uploads/2018/11/2018.11.23_armenia _poll.pdf, (Acc. 19.08.2024).
44. ***IRI (2021),*** IRI poll, Public Opinion Survey: Residents of Armenia December, 2021, pp. 32-36, https://www.iri.org/resources/?_resource_type= poll&_paged=, (Acc. 19.08.2024).
45. ***Irna (2020),*** IRGC deploys forces to northwest borders close to Nagorno-Karabakh conflict region, 25.10.2020, https://en.irna.ir/news/84087689/ IRGC-deploys-forces-to-northwest-borders-close-to-Nagorno-Karabakh, (Acc. 19.08.2024).
46. ***Irna (2024),*** IRNA: Iranian President told Pashinyan that Tehran is against any change in international borders, 10.07.2024, https://news.am/eng/news/ 833434.html, (Acc. 19.08.2024).
47. ***Isna (2022),*** Military attack on northern Syria harmful to Turkey, region: Iran's Supreme Leader, 19.07.2022, https://en.isna.ir/news/1401042819309/ Military-attack-on-northern-Syria-harmful-to-Turkey-region (Acc. 19.08.2024).
48. ***JamNews (2020),*** Владимир Путин о карабахском конфликте, 17.11.2020, https://www.youtube.com/watch?v=w_wFQL2SjpQ, (Acc. 19.08.2024).
49. ***Khamenei (2020),*** Bayānāt dar sokhanrānī-ye televīzīūnī be monāsebat-e sālrūz-e velādat-e Peyāmbar-e ʿAẓam (ṣ) va Imām-e Ṣādiq (ʿ) (Հայտարարություններ հեռուստատեսային ելույթի ընթացքում, որը նվիրված էր Մոհամմադ մարգարեի և Իման Սադեղի ծննդյան տարեդարձին), 03.11.2020, https://farsi.khamenei.ir/speech-content?id=46771 (Acc. 19.08.2024).
50. ***Kucera (2018),*** Kucera J., After Bolton takes aim at Russia and Iran, is Armenia the collateral damage?, 30.10.2018, https://eurasianet.org/after-bolton-takes-aim-at-russia-and-iran-is-armenia-the-collateral-damage, (Acc. 19.08.2024).
51. ***Kucera (2022),*** Kucera J., Iran's military starts "massive" drills on Azerbaijani border, 20.10.2022, https://eurasianet.org/irans-military-starts-massive-drills-on-azerbaijani-border, (Acc. 19.08.2024).

52. ***L.A. Times (1994),*** 32 Die as Iranian Plane Strays, Crashes in Karabakh War Zone, 19.03.1994, https://www.latimes.com/archives/la-xpm-1994-03-19-mn-35859-story.html, (Acc. 19.08.2024).
53. ***Leader (2022),*** The Americans in Syria should be withdrawn from the east of the Euphrates River, 19.07.2022, https://www.leader.ir/en/content/25922/The-Leader-of-the-Islamic-Revolution-in-a-meeting-with-the-President-of-Russia, (Acc. 19.08.2024).
54. ***Leader.ir (2022),*** One of the causes of discord and enmity is the usurping Zionist regime, 19.07.2022, https://www.leader.ir/en/content/25923/The-Leader-of-the-Islamic-Revolution-in-a-meeting-with-the-President-of-Turkey, (Acc. 19.08.2024).
55. ***MFA (2020),*** President in a phone call with his Russian counterpart: War not a solution to Nagorno-Karabakh conflict; resolution only possible through dialogue under int'l law, 10.10.2020, https://en.mfa.gov.ir/portal/newsview/613416/War-not-a-solution-to-Nagorno-Karabakh-conflict-resolution-only-possible-through-dialogue-under-intl-law, (Acc. 19.08.2024).
56. ***MFA (2022),*** ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հարցազրույցը հնդկական «ՎԻՈՆ»-ին, 30.05.2022, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2022/05/30/Wion_interview/11477 (հսկ. 19.08.2024):
57. ***Öztarsu (2012),*** Öztarsu M.F., Why does Iran support Armenia about Karabakh issue?, 24.06.2012, https://www.fatihoztarsu.com/why-does-iran-support-armenia-about-karabakh-issue.html, (Acc. 19.08.2024).
58. ***Parliran (2021),*** Dar jang-e Qarābāgh bāyad taʿārof rā kenār mīgozāshtīm va az tāwāzun-e qowwat-e Armenistān ḥemāyat mīkonīm (Ղարաբաղի պատերազմում պետք է մոռանայինք ձևականությունները և աջակցեինք Հայաստանի ուժերի հավասարակշռությանը), 12.01.2021, https://parliran.ir/%D8%A7%D8%AE%D8%A8%D8%A7%D8%B1/%D8%AF%D8%B1-%D8%AC%D9%86%DA%AF-%D9%82%D8%B1%D9%87-%D8%A8%D8%A7%D8%BA-%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AF-%D8%AA%D8%B9%D8%A7%D8%B1%D9%81-%D8%B1%D8%A7-%DA%A9%D9%86%D8%A7%D8%B1-%D9%85%DB%8C-%DA%AF%D8%B0%D8%A7%D8%B4%D8%AA%DB%8C%D9%85-%D9%88-%D8%A7%D8%B2-%D8%AA%D9%88%D8%A7%D8%B2%D9%86-%D9%82%D8%AF%D8%B1%D8%AA-%D8%A7%D8%B1%D9%85%D9%86%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86-%D8%AD%D9%85%D8%A7%DB%8C%D8%AA-%D9%85%DB%8C-%DA%A9%D9%86%DB%8C%D9%85 (Acc. 19.08.2024).
59. ***President.am (2020),*** ՆԱՏՕ-ի անդամ երկիրը՝ Թուրքիան, պետք է դադարի լինել այս հակամարտության մաս և հավատարիմ մնա հրադադա-

րին. Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը Բրյուսելում հանդիպել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ, 21.10.2020, https://www.president.am/hy/press-release/item/2020/10/21/President-Armen-Sarkissian-in-Brussel/, (Acc. 19.08.2024).

60. ***President.ir (2020),*** Dr Rouhani in a phone call with his Turkish counterpart: Iran-Turkey ties a model for neighbors/ Emphasis on fighting terrorism in region; terrorist groups can be a major threat to region/ Continued cooperation between Iran, Turkey, Russia essential to resolve the Syrian crisis, 22.10.2020, https://president.ir/en/117912, (Acc. 19.08.2024).
61. ***RadioFarda (2020),*** Iran Troops Deployed On Border Near Nagorno-Karabakh Conflict, 25.10.2020, https://en.radiofarda.com/a/iran-troops-deployed-on-border-near-nagorno-karabakh-conflict/30911772.html, (Acc. 19.08.2024).
62. ***Ramazanzadeh,*** Ramezanzadeh A., Iran's Role as Mediator in the Nagorno-Karabakh Crisis, Contested borders in the Caucasus, http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0701.htm, (Acc. 19.08.2024).
63. ***Regnum (2013),*** Иранский генерал признался, что ВС Ирана помогали Азербайджану в годы карабахской войны, 06.03.2016, https://regnum.ru/news/1633013, (д/в. 19.08.2024).
64. ***RFERL (2018),*** Pashinian Says He Made 'Clear' To U.S. That Armenia Will Maintain Ties With Iran, 02.11.2018, https://www.rferl.org/a/pashinian-says-made-clear-to-us-bolton-armenia-will-maintain-ties-with-iran/29578365.html, (Acc. 19.08.2024).
65. ***Scarf & Yaron (2023),*** Scarf A., Yaron O., Haaretz investigation reveals dozens of cargo flights from Baku to Israeli airstrip used for export of explosives. Israel sells Azerbaijan weaponry worth billions – and, per sources, receives oil and access to Iran. Tensions between Azerbaijan and both Iran and Armenia have ratcheted up recently, 06.03.2023, https://www.haaretz.com/israel-news/security-aviation/2023-03-06/ty-article-magazine/.premium/92-flights-from-israeli-base-reveal-arms-exports-to-azerbaijan/00000185-fd3d-d96e-adef-ff3dc38e0000?v=1690451030751, (Acc. 19.08.2024).
66. ***Sinaiee (2021),*** Sinaiee M., Baku Asked Integration With Iran In 1990s, Memoires Say, 10.10.2021, https://www.iranintl.com/en/20211010484719, (Acc. 19.08.2024).
67. ***Azərbaycan Tarixi (2024)***, 26.10.1993 Iranian President Akbar Hashemi Rafsanjani's visit to Baku Heydar Aliyev, https://www.youtube.com/watch?v=G5S_wTtrnOs, (Acc. 19.08.2024).

68. ***Sputnik (2018),*** Հայ-իրանական սահմանն ամեն պահի կարող է փակվել. Փաշինյան, 01.11.2018, https://arm.sputniknews.ru/20181101/armenia-iran-sahman-15441453.html, (հսն. 19.08.2024):
69. ***Tehran times (2020),*** Drone crashes inside Iran as Azerbaijan-Armenia war rages on, 13.10.2020, https://www.tehrantimes.com/news/453526/Drone-crashes-inside-Iran-as-Azerbaijan-Armenia-war-rages-on, (Acc. 19.08.2024).
70. ***Tik.ir (2021),*** Pāsokh-e Mohsen Hāshami be edʿāʾi dar mōred-e pīshnahād-e elḥāq-e Jumhūri-ye Āzārbāyjān be Irān va vākoneš-e Āyatollāh Hāshami Rafsanjāni (Մոհսեն Հաշեմիի պատասխանը Ադրբեջանի Հանրապետությունը Իրանին միացնելու առաջարկի վերաբերյալ պնդումներին և այաթոլլահ Հաշեմի Ռաֆսանջանիի արձագանքը), 11.11.2021, https://tik.ir/fa/news/361028/%D9%BE%D8%A7%D8%B3%D8%AE-%D9%85%D8%AD%D8%B3%D9%86-%D9%87%D8%A7%D8%B4%D9%85%DB%8C-%D8%A8%D9%87-%D8%A7%D8%AF%D8%B9%D8%A7%DB%8C%D B%8C-%D8%AF%D8%B1-%D9%85%D9%88%D8%B1%D8%AF-%D9%BE%DB%8C%D8%B4%D9%86%D9%87%D8%A7%D8%AF-%D8%A7%D9%84%D8%AD%D8%A7%D9%82-%D8%AC%D9%85%D9%87%D9%88%D8%B1%DB%8C-%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86-%D8%A8%D9%87-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D9%88-%D9%88%D8%A7%DA%A9%D9%86%D8%B4-%D8%A2%DB%8C%D8%AA-%D8%A7%D9%84%D9%84%D9%87-%D9%87%D8%A7%D8% B4%D9%85%DB%8C-%D8%B1%D9%81%D8%B3%D9%86%D8%AC%D8%A7%D9%86% DB%8C, (Acc. 19.08.2024).
71. ***Zaman (2023),*** Zaman A., Turkey rises, Russia fades as Iran and Azerbaijan clash over Armenia, 31.01.2023, https://www.al-monitor.com/originals/2023/01/turkey-rises-russia-fades-iran-and-azerbaijan-clash-over-armenia, (Acc. 19.08.2024).
72. ***Yeni Şafak (2020),*** İran ateşle oynuyor: Ermenistan'a silah yardımları 35 milyon Türk'ü ayaklandırdı (Իրանը կրակի հետ է խաղում, Հայաստանին սպառազինության տրամադրումը 35 մլն թուրքի ոտքի հանեց), 01.10.2020, https://www.yenisafak.com/dunya/iran-ermenistanin-yardimina-kostu-irandaki-azerbaycan-turkleri-sokaga-dokuldu-iranda-ne-kadar-turk-yasiyor-3569403, (Acc. 19.08.2024).

GOHAR ISKANDARYAN

ARMENIA AND IRAN'S APPROACHES TO EMERGING REGIONAL CHALLENGES

The breakup of the Soviet Union signified the end of a global order and the beginning of a new one. At the same time, instead of resolution of longstanding issues, it brought new geopolitical problems. Among them, the First Artsakh (Nagorno-Karabakh) War erupted, changing the political landscape of the South Caucasus. While Armenia's victory in this conflict brought some stability to the region, the results of the Second Artsakh War fundamentally undermined this equilibrium. Turkey's increased influence in the Caucasus, in particular, alarmed Iran, as it disrupted the regional balance and presented a direct challenge to Tehran's national interests.

Armenia, struggling to maintain a balanced foreign policy with both the collective West and the Russian Federation, tried to maintain complete neutrality amidst the region's shifting dynamics. Armenian officials did their best to communicate to Western actors that their ties to Russia and Iran were grounded solely in national security imperatives. However, when confronted with a crisis, Armenia found itself left reliant on the very actors that had ostensibly guaranteed its security – actors that ultimately failed to meet Armenia's expectations.

Today, Armenia stands at a crossroads, seeking new alliances and strategic partnerships, as the established global order increasingly proves inadequate in addressing its security needs. It is imperative for Armenia to engage in robust discussions about forming new strategic alliances with countries such as Iran, India, and France while preserving its existing agreements where feasible.

The Second Artsakh War and the subsequent ethnic cleansing of Artsakh not only represented a significant blow to the Armenian people but also shattered the regional power equilibrium. The conflict fundamentally transformed the seeming peace in the South Caucasus,

triggering competition among both regional and extra-regional actors. The United States, for example, now views Turkey as its key ally in the region, despite Turkey's long-standing rivalry with Iran. Turkey, through its active military interventions, has sought to solidify its influence in the Caucasus, thereby weakening Iran's standing and influence.

Turkey's assertive foreign policy indicates a departure from its previous role as a junior partner to the West. The country now pursues recognition as a fully-fledged partner, projecting itself as a rising power on the world stage. This geopolitical shift deeply alarms Iran, as the growing gap between the two regional competitors further threatens to destabilize the region. In case the balance of power continues to shift in Turkey's favor, Iran fears that it may soon face direct territorial threats.

The South Caucasus has become a geopolitical arena where the interests of various regional and global actors converge, often in conflict. The region, in many ways, now functions as a geopolitical laboratory, with powers competing for influence in an increasingly multipolar environment. Rivalry among these actors has rarely been more obvious.

Iran has consistently expressed its support for Armenia's efforts to pursue peace. Iran's ambassador has reiterated Tehran's commitment to regional stability, emphasizing the importance of maintaining peace in the South Caucasus. Following the 2024 presidential election, Iran's newly elected president, Masud Pezeshkian, restated the policies of his predecessor, declaring that Iran opposes any changes to internationally recognized borders.

In conclusion, Armenia faces a decisive moment in its history. It is essential for the country to execute a carefully calibrated foreign policy that not only preserves its existing alliances but also establishes new strategic partnerships. Armenia must avoid becoming isolated and instead position itself as a key player at the intersection of north-south and east-west.

ԼԻԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ասիստենտ

ՀԱՅ–ԻՐԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991–2023 ԹԹ. (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)

1991 թ. Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի անկախության հռչակումից ի վեր Հայաստանի Հանրապետությունը տարբեր ուղիներ է փնտրել՝ ամրապնդելու ինչպես իր քաղաքական, այնպես էլ տնտեսական և միջազգային կապերը: Այս փնտրտուքի ճանապարհին կարևոր գործընկերներից է եղել Իրանի Իսլամական Հանրապետությունը: Հայաստանի անկախությունը 1991 թ. հարևան Իրանի հետ տնտեսական հարաբերությունների ոլորտում նոր հնարավորությունների հիմք դրեց: Իրանը առաջին պետություններից էր, որը 1991 թ. հունվարին ճանաչեց Հայաստանի անկախությունը և ձեռնամուխ եղավ էներգետիկայի, տրանսպորտի, գիտության, մշակույթի, գյուղատնտեսության և այլ ոլորտներում համագործակցության ձևավորմանը: Հայ-իրանական քաղաքական հարաբերությունները ձևավորվեցին անբարենպաստ արտաքին քաղաքական միջավայրում, որը համընկավ ԽՍՀՄ փլուզման և Հարավային Կովկասում տարաբնույթ քաղաքական իրադարձությունների և կոնֆլիկտների հետ: Այս շրջանում Հայաստանը զրկվել էր արտաքին աշխարհի հետ շփումներից՝ շրջափակման մեջ լինելով սահմանային թշնամիներ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Հայաստանի համար հարևան Վրաստանը ևս չէր կարող պատուհան դառնալ դեպի արտաքին աշխարհ, քանի որ ներգրավված էր քաղաքացիական և միջազգային հակամարտությունների մեջ: Ուստի, Իրանը Հայաստանին դեպի արտաքին աշխարհ դուրս գալու հնարավորություն էր տալիս, այլընտրանքային հնարավորություն էր ստեղծում էներգակիրների

հարցում, տարածաշրջանում հակակշռում էր Թուրքիայի աճող ազդեցությանը, ինչպես նաև 1990-ականներից սկսած աջակցություն էր ցուցաբերում Հայաստանին, փորձելով խաղաղ ճանապարհով կարգավորել արցախյան հակամարտությունը:

Աշխատանքի նպատակն է՝ քննության առնել հայ-իրանական տնտեսական հարաբերությունների հետագիծը Հայաստանի անկախությունից ի վեր՝ ուսումնասիրելով առանցքային ոլորտները, մարտահրավերները և հնարավորությունները, որ երկու հարևան երկրների միջև ձևավորել են երկկողմ տնտեսական հարաբերությունները: Ասվածի համատեքստում հատուկ ուշադրության է արժանի այն, թե ինչպես է զարգացել իրավիճակը 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո:

Իրանի և Հայաստանի միջև տնտեսական հարաբերությունները զգալիորեն ընդլայնվել են վերջին երեք տասնամյակների ընթացքում, և երկկողմ հարաբերություններում Հայաստանի համար գլխավորը եղել է Իրանի հավասարակշռված մոտեցումը արցախյան հակամարտության հարցում: Հայաստանի քաղաքական վերնախավը բոլոր ժամանակներում համոզված է եղել, որ Իրանը շահագրգռված էր Արցախի Հանրապետությունում ստատուս քվոյի պահպանմամբ՝ 1994 թ. մայիսյան հրադադարի ստորագրումից հետո: Սակայն այն փաստը, որ Ադրբեջանի դաշնակից Թուրքիան Իրանի հիմնական մրցակիցներից է Հարավային Կովկասում, և որ թուրքական ազդեցության ցանկացած աճ տարածաշրջանում կարող է իրականացվել ի հաշիվ Իրանի կենսական շահերի, և, հատկապես Իրանի սահմանամերձ շրջաններում պանթյուրքիզմի գաղափարախոսության տարածումը՝ Թեհրանի գլխավոր մտահոգությունն էր:

Հատկանշական է, որ հարաբերությունների ձևավորման սկզբնական շրջանում հայ-իրանական սահմանին անգամ ժամանակակից մայրուղիներ չկային, ուստի, հայ-իրանական շփումները զգալի ընդլայնվեցին միայն 1995 թ.՝ սահմանամերձ Արաքս գետի վրա ճանապարհային կամրջի կառուցումից հետո: Երկկողմ տնտեսական հարաբերությունները զգալի աճ գրանցեցին 2000-

ականներին, ինչի համար, իր հերթին, խթան հանդիսացան համատեղ էներգետիկ ծրագրերի նախագծերը: Քայլեր ձեռնարկվեցին նաև տարածաշրջանում անվտանգության ամրապնդման համար, ինչպես նաև տրանսպորտային և էներգետիկ ոլորտում հարաբերությունների ընդլայնման և համատեղ նախագծերի իրականացման ուղղությամբ:

Ըստ էության, պետք է նշել, որ հայ-իրանական տնտեսական հարաբերությունները, ի տարբերություն քաղաքականի, բավականին ցածր մակարդակի վրա են: Ի վերջո, հայ-իրանական քաղաքական հարաբերությունները արհեստական բնույթ են ստանում, եթե չեն կապվում տնտեսական ենթակառուցվածքային նախագծերով: Այսօր սա ավելի քան արդիական է, երբ մի կողմից սրված է Հայաստանի անկախության և անվտանգության հարցը, և հուսալի գործընկերոջ հետ հարաբերություններն ու այլընտրանքները կենսական նշանակություն ունեն, իսկ մյուս կողմից Հարավային Կովկասում կարևոր աշխարհաքաղաքական զարգացումներ են տեղի ունենում, և դրանց ֆոնին հայ-իրանական կապերը կարող են կարևոր գործոն հանդիսանալ հարավկովկասյան տարածաշրջանում նոր քաղաքական իրադրության ձևավորման մեջ:

Առևտուր և ապրանքաշրջանառություն. Հայաստանը հարավկովկասյան տարածաշրջանի այն երկրներից է, որը համարվում է փոքր տնտեսություն ունեցող պետություն՝ ՀՆԱ-ի և առևտրային շուկայի առումով: Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականությունը ձևավորվել է ազատական սկզբունքների վրա՝ համաշխարհային տնտեսության հետ ինտեգրումն ընդլայնելու նպատակով և ունի ազատ առևտրի կանոններ և կանոնակարգեր՝ հիմնված Առևտրի համաշխարհային կազմակերպության սկզբունքների վրա: Ըստ ՀՀ կառավարության հաղորդագրությունների, Հայաստանի արտաքին առևտրային քաղաքականությունն ուղղված է արտաքին առևտրի համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը և արտադրված ապրանքների արտահանման խթանմանը (Arlis, 2021):

1991 թ. անկախություն ձեռք բերելուց կարճ ժամանակ անց՝ 1992 թ., Հայաստանը դարձավ Համաշխարհային բանկի անդամ (World Bank, 2023), իսկ 1993 թ. միացավ Միջազգային զարգացման ընկերակցությանը, որը հանդիսանում է այս բանկի դուստր ձեռնարկությունը (World Bank, 2023): 2003 թ. փետրվարին Հայաստանը դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ (Mineconomy), և, գրեթե ավելի քան երեք տասնամյակ Հայաստանն ունեցել է զգալի տնտեսական ցուցանիշներ, և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի յոթակի աճ է գրանցել (Armstat): Արդյունքում, 2019 թ. Հայաստանը ճանաչվեց որպես միջինից բարձր եկամուտ ունեցող տնտեսություն (Դիլանյան, 2020): Չնայած վերոնշյալին, կարծում ենք, որ Հայաստանի տնտեսությունը դեռևս կանգնած է կառուցվածքային մարտահրավերների առջև, ինչպիսիք են բիզնեսի և ներդրումային միջավայրի հետագա բարելավման անհրաժեշտությունը, բարձր գործազրկության զսպումը, աշխատաշուկայում հմտությունների պակասի լուծումը և ընկերությունների թույլ մրցակցությունը:

Իրանը Հայաստանի առևտրային գործընկերներից է, և երկու երկրների միջև առևտուրը 1990-ականներից ի վեր դինամիկ աճ է գրանցել: Տնտեսական հարաբերությունների հաստատման սկզբնական շրջանում քաղաքական անորոշությունները և ենթակառուցվածքային մարտահրավերները խոչընդոտել են առևտրի աճին, սակայն, արդեն ավելի ուշ, տրանսպորտային ուղիների և դիվանագիտական հարաբերությունների աստիճանական բարելավումների արդյունքում առևտրային հոսքերը զգալի առաջընթաց են գրանցել: Երկկողմ առևտրի հիմնական ոլորտները ներառում են էներգետիկան, գյուղատնտեսությունը և արտադրական ապրանքները: Իրանը որպես Հայաստանին էներգետիկ ռեսուրսների, մասնավորապես՝ բնական գազի մատակարար է ծառայել, որը վճռորոշ ազդեցություն է ունեցել Հայաստանի էներգետիկ անվտանգության համար: Ակնկալվում էր, որ Իրանի և Հայաստանի միջև առևտրային հարաբերությունները կբարելավվեն Եվրասիական տնտեսական միության հետ արտոնյալ առևտրային հա-

մաձայնագրի կնքումից հետո, սակայն, ըստ իրանական մաքսատան վիճակագրական տվյալների, այն էական օգուտներ չի ներառում երկու երկրների համար:

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների, երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը 2012 թ. կազմել է 340 մլն դոլար, 2013 թ.՝ 300 մլն դոլար: Մինչդեռ նախորդ տարիներին (2009–2012 թթ.) արտաքին ապրանքաշրջանառության ցուցանիշը ավելի վստահ աճ է գրանցել: 2009 թ. Հայաստանի և ԻԻՀ-ի միջև արտաքին ապրանքաշրջանառությունը կազմել է 195.423 մլն դոլար, 2010 թ.՝ 284.715 մլն դոլար, 2011 թ.՝ 323.042 մլն դոլար, իսկ 2012 թ.՝ 327.925 մլն դոլար (Armenianow), 2013 թ. այն կազմել է 293.531 մլն դոլար, իսկ 2014 թ.՝ 291 մլն դոլար: Հատկանշական է, որ 2011–2014 թթ. ապրանքաշրջանառության ծավալները աստիճանաբար նվազել են, ինչը, ըստ էության, կարելի է կապել Իրանի միջուկային ծրագրով պայմանավորված միջազգային պատժամիջոցների սաստկացման հետ:

Արդեն 2015–2016 թթ. ընթացքում Իրանի նկատմամբ միջազգային պաժամիջոցները որոշակիորեն թուլացան, ինչն էլ դրական ազդեցություն ունեցավ Հայաստան–Իրան ապրանքաշրջանառության ծավալների վրա: Այսպես, 2015 թ. ապրանքաշրջանառությունը կազմել է մոտ 208 մլն դոլար, 2016 թ.՝ 239 մլն դոլար, 2017 թ.՝ 259 մլն դոլար, իսկ 2018 թ. աճել է մոտ 40 տոկոսով՝ կազմելով 363 մլն դոլար: Այս ժամանակահատվածում Իրանի կշիռը Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության կազմում 4.9% է եղել, մասնավորապես, արտահանման կազմում այն եղել է 3.9%, ներմուծման կազմում՝ 5.4% (Hetq, 2019): Ապրանքաշրջանառության ցուցանիշների կայուն աճը շարունակվել է նաև 2019 թ.՝ կազմելով 409 մլն դոլար:

2020 թ. ծանր տարի էր ողջ աշխարհի համար. կորոնավիրուսի տարածումը կանխարգելող հաղորդակցության և տնտեսական սահմանափակումները էական ազդեցություն են ունեցել ամբողջ աշխարհում սոցիալ-տնտեսական զարգացումների վրա: Փոխադարձ ճանապարհորդությունները նվազել են, համաշխարհային

առևտրային հարաբերությունները խիստ տուժել են, իսկ զբոսաշրջության ոլորտը, որը կազմում է համաշխարհային տնտեսության մինչև 10 տոկոսը, խորը ճգնաժամի մեջ էր հայտնվել: Հայաստանի Հանրապետությունը զերծ չի մնացել վերոնշյալ զարգացումներից, որին գումարվել է նաև 2020 թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմը: Արդեն 2020 թ. վերջին երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 400–401 մլն դոլար, որից 315 մլն դոլարն արտահանվել է Իրանից: Թեհրանը Հայաստանին մատակարարել է ինչպես պարենային, այնպես էլ արդյունաբերական ապրանքներ, ինչպես նաև նավթամթերք և գազ: Պաշտոնական տվյալներով, 2022 թ. 10 ամսվա ընթացքում ՀՀ և ԻԻՀ միջև ապրանքաշրջանառությունն ավելացել է մոտ 45,3%-ով՝ տարեվերջին հասնելով 710 մլն ԱՄՆ դոլարի: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով, 2022 թ. հունվար–հոկտեմբերին ՀՀ և Իրանի միջև 565,5 մլն ԱՄՆ դոլարի փոխադարձ առևտրի հաշվեկշռում ՀՀ-ից դեպի Իրան արտահանումը կազմել է 91,71 մլն դոլար, իսկ Իրանից դեպի Հայաստան ներկրումը՝ 473,78 մլն դոլար (Sputnik news, 2022):

Ընդհանուր առմամբ, ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Հայաստանի և Իրանի միջև առևտրի ծավալները.

Հայ-իրանական արտահանման և ներմուծման հարաբերակցությունը՝ ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների (մլն. ԱՄՆ դոլար)			
Տարեթիվ	**Արտահանում**	**Ներմուծում**	**Ընդհանուր ծավալը**
1993	5.5	15.8	21.3
1994	14.6	42.5	57.1
1995	35.042	59.8	94.842
1996	43.912	149.8	193.712
1997	42.583	88.7	131.283
1998	31.392	63.9	95.292
1999	34.160	78.5	112.660

2000	30.089	82.9	112.989
2001	31.870	78.120	109.990
2002	31.468	62.150	93.619
2003	22.478	51.281	73.760
2004	30.559	62.284	92.844
2005	28.513	89.166	117.679
2006	29.642	114.399	144.042
2007	38.499	141.663	180.162
2008	25.056	202.991	228.047
2009	33.025	162.398	195.423
2010	84.831	199.884	284.715
2011	106.250	216.792	323.042
2012	108.512	219.413	327.925
2013	95.036	198.494	293.531 (Իսկանդարյան, 2016)
2014	84.63	206.542	291.172
2015	82	198	280
2016	75	164	239
2017	84	175	259
2018	94	269	363 (Aniarc, 2022)
2019	83.9	325	409
2020	84	317	401
2021	65	439	504
2022	111	599	710
2023	95	598	693 (Mfa, 2024)

Տվյալները ընդհանուր առևտրի ծավալի տատանվող միտումներ են ցույց տալիս, որոնց վրա հիմնականում ազդեցություն են ունեցել համաշխարհային տնտեսական իրադրությունը, Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցները և Արցախի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը: Ըստ էության,

պետք է փաստել, որ հայկական արտահանումն Իրան՝ գրանցել է չափավոր աճ՝ արտացոլելով հայկական գյուղմթերքի, մեքենաների և էլեկտրոնիկայի պահանջարկը: Իրանից ներմուծումը, որը հիմնականում բաղկացած է եղել էներգետիկ ռեսուրսներից, ինչպիսին է բնական գազը, պահպանել է Հայաստանի ընդհանուր ներմուծման զգալի մասը:

Հայաստան–Իրան երկաթուղային համագործակցություն. դեռևս 2015 թ. հունվարին Հայաստան կատարած այցի ժամանակ Իրանի արտաքին գործերի նախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը կարևորել է «Հայաստանի հարավային երկաթուղու» կառուցման անհրաժեշտությունը, ինչը, ըստ նրա, կբարելավեր երկու երկրների միջև տրանսպորտային կապը: Մ.Ջ. Զարիֆը նաև ողջունել է Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը՝ ընդգծելով, որ այն լայն հնարավորություններ է ստեղծում Հայաստանի, Իրանի և Ռուսաստանի համար (168.am, 2015): Ճանապարհի կառուցումը Իրանի և Ռուսաստանի համար առևտրային այլընտրանքային կարևոր ուղի կարող էր հանդիսանալ, մանավանդ, որ Ռուսաստանը դեռևս 2013 թ. խիստ հետաքրքրված էր դրա կառուցմամբ:

Սակայն պետք է նաև նկատի ունենալ, որ Հայաստանը, Իրանի և ԵԱՏՄ-ի միջև տրանզիտային երկիր դառնալով, չի կարողանա զգալի եկամուտներ ապահովել, քանի որ ԵԱՏՄ անդամ որևէ երկրի հետ անմիջական սահման չունի, իսկ Հայաստանի սահմանին մաքսազերծումներից ստացված գումարները, միևնույն է, գնում են ԵԱՏՄ կենտրոնական բյուջե (A1plus, 2015): Պետք է նաև նշել, որ երկաթուղու կառուցման համար կպահանջվի ամենաքիչը 4 մլրդ դոլար, ինչը արտաքին ֆինանսավորման բացակայության պայմաններում դժվար կլինի հայթայթել, ինչպես նաև երկաթուղու շահավետության համար անհրաժեշտ է ապահովել 7-8 մլն տոննա բեռնափոխադրում՝ այն պայմաններում, երբ Հայաստան-Իրան բեռնափոխադրման ծավալները չեն գերազանցում 600 հազար տոննան: Սրանք, ըստ էության, երկաթուղու կառուցման ճանապարհին լուրջ խոչընդոտներ են: Թեպետ այն Հայաստանին

ծով դուրս գալու հնարավորություն կտար, և որպես հակակշիռ հանդես կգար Կարս–Ախալքալաք–Բաքու, ինչպես նաև Նախիջևան–Կարս երկաթգծերի ազդեցությանը, կնպաստեր Իրան–Հայաստան–Ռուսաստան տնտեսական համագործակցության ամրապնդմանը, որոշակիորեն կապաշրջափակեր հայ-թուրքական սահմանը և տարածաշրջանում կբարձրացներ տնտեսական անվտանգության մակարդակը (Մանուկեան):

Արդեն 2016 թ. միջազգային ասպարեզում մեծ աղմուկ բարձրացրած իրադարձություններից էր՝ Մոսկվայում Ռուսաստանի, Իրանի, Ադրբեջանի և Հնդկաստանի միջև համաձայնությունը՝ Կովկասում Հյուսիս–Հարավ երկաթուղագծի բացման շուրջ (Фалях ов, 2016): Երկաթուղու վերաբերյալ համաձայնությունը, ըստ էության, արտացոլում էր Բաքվի հետ համաձայնության գալու՝ Մոսկվայի շարունակական ջանքերը: Այն նաև ընդգծում էր Ռուսաստանի համար Հայաստանի տնտեսական և քաղաքական կարևորության նվազումն ու կապերի ընդլայնումը Ադրբեջանի ու Թուրքիայի հետ: Իրանն էլ, իր հերթին, կարծես նահանջում էր դեպի Երևան կառուցվելիք երկաթուղու ծրագրերից՝ նախընտրելով ուշադրությունը կենտրոնացնել Ադրբեջանի վրա:

«Հայաստանի հարավային երկաթուղու» առաջխաղացումը սահմանափակող ամենաէական գործոնը ռելսամիջյան տարածության տարբերությունն էր մի կողմից՝ ՌԴ-ում և Ադրբեջանում, մյուս կողմից՝ Իրանում և Հնդկաստանում: Առաջիններն օգտագործում էին ռուսական ստանդարտը (1–520 կամ 1–524 մմ), իսկ վերջինները՝ միջազգային (1–435 մմ): Ըստ այդմ, Ադրբեջան–Իրան սահմանը հատելիս վագոնները պետք է փոխեին անիվների պլատֆորմը: Տվյալ դեպքում, սակայն, սա աշխատում էր հօգուտ Ադրբեջանի, և կարծես ամրապնդում էր Ադրբեջանի՝ որպես տարանցիկ ուղու տարածաշրջանային կենտրոնի դերը և հնարավոր դարձնում ապագայում Ռուսաստանին ավելի ինտեգրվելու հեռանկարը (Գոբլ):

Արդեն 2021 թ. ՀՀ վարչապետի՝ Իրան կատարած այցի շրջանակներում Հայաստանի և Իրանի ղեկավարները քննարկել են

առևտրատնտեսական կապերի ամրապնդմանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Զրուցակիցները, մասնավորապես, այս ոլորտում համագործակցության զարգացման խթան են համարել Մեղրիի ազատ տնտեսական գոտու ակտիվ գործունեության ապահովումը և Իրանի ու ԵԱՏՄ-ի միջև ազատ առևտրի ռեժիմի կիրառման հնարավորությունը: Կողմերը առաջնահերթ են համարել տարածաշրջանային հաղորդակցությունների զարգացումը, որտեղ առանցքային նշանակություն կունենա Պարսից ծոցից դեպի Սև ծով տրանսպորտային և կաբելային հաղորդակցությունների զարգացումը: ՀՀ վարչապետը նաև նշել է, որ ՀՀ կառավարությունը պատրաստ է քննարկելու իրանական շինարարական ընկերությունների մասնակցությունը վերոնշյալ ծրագրի՝ Սիսիան-Մեղրի հատվածի միջազգային մրցույթին (Prime minster, 2022): Ղեկավարները քննարկել են նաև առողջապահության, նորագույն տեխնոլոգիաների, կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում համատեղ նոր ծրագրերի իրականացմանն առնչվող հարցեր:

2022 թ. տեղի ունեցավ ՀՀ վարչապետի գլխավորած պատվիրակության երկրորդ պաշտոնական այցը ԻԻՀ, որի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը և Իրանի նավթի փոխնախարար, Ազգային գազային ընկերության տնօրեն Մաջիդ Չեգենին ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր բնական գազի ոլորտում համագործակցության վերաբերյալ: Բացի այդ, Հայաստանի վարչապետի՝ Իրան կատարած այցի շրջանակում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր Իրանի հետ համագործակցության վերաբերյալ, և, ի լրումն համաձայնագրի՝ գազի դիմաց էլեկտրաէներգիայի փոխանակման համաձայնագիրը մինչև 2030 թ. երկարաձգելու վերաբերյալ: Դրա հիման վրա, արտահանվող գազի ծավալների ավելացմամբ կփոխվի նաև էլեկտրաէներգիայի փոխանակման սակագինը: Մասնավորապես, Իրանը օրական մեկ միլիոն խորանարդ մետր գազ էր արտահանում Հայաստան, իսկ նոր հուշագրի հիման վրա այն կկրկնապատկվի (Prime minister, 2022):

Այցի շրջանակներում կողմերը քննարկել են նաև ենթակառուցվածքների զարգացման, էներգետիկայի, գյուղատնտեսության, շինարարության և այլ ոլորտներում համագործակցության հարցեր: Նշվել է բեռնափոխադրումների դյուրացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացման կարևորությունը, ինչպես նաև Հայաստանի և Իրանի միջև էլեկտրահաղորդման երրորդ գծի շինարարության ավարտի անհրաժեշտությունը: Որոշում է կայացվել նաև 2023 թ. գարնանը մեկնարկ տալ իրանական ընկերությունների կողմից 7,2 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարությունը: Ըստ այդմ, Նորդուզից Վերզեգան և Թավրիզ նոր Հյուսիս-Հարավ միջանցքի ստեղծմամբ կբարելավվեն ապրանքների տեղաշարժը և տարանցիկ հնարավորությունները Իրանի և Հայաստանի համար, ինչպես նաև զգալիորեն կկրճատվեն ճանապարհի երկարությունն ու ժամանակը:

Էներգետիկ ոլորտում համագործակցություն. հայ-իրանական էներգետիկ համագործակցությունը ձևավորվել է 1991 թ. Հայաստանի անկախությունից անմիջապես հետո: Երկու երկրներն էլ ձգտում էին համագործակցային նախագծերի միջոցով լուծելու իրենց էներգետիկ կարիքները, ուստի, այս երկրների էներգետիկ համագործակցությունը զարգացել է ռազմավարական համաձայնագրերի և ենթակառուցվածքային նախագծերի միջոցով, որոնք համահունչ են նրանց տնտեսական և աշխարհաքաղաքական շահերին: Էներգետիկ համագործակցությունն, իր հերթին, առանձնանում է որպես հայ-իրանական տնտեսական հարաբերությունների հիմնաքար: Հայ-իրանական էներգետիկ համագործակցությունը ներառում է էներգետիկայի ոլորտում համագործակցության տարբեր ձևեր՝ կենտրոնանալով ինչպես ավանդական, այնպես էլ վերականգնվող էներգիայի աղբյուրների վրա:

2007 թ. Իրան-Հայաստան բնական գազատարի կառուցումը նշանակալի իրադարձություններից էր, որը Հայաստանին իր էներգիայի աղբյուրները բազմազանեցնելու և տարածաշրջանային այլ տերություններից կախվածությունը նվազեցնելու հնարավորություն տվեց: Այս խողովակաշարը նախատեսված էր Իրանից

Հայաստան բնական գազի փոխադրման համար. բացի այդ, Հայաստանը հույս ուներ, որ կկարողանա իրանական գազի արտահանման համար տարանցիկ ճանապարհ դառնալ դեպի Վրաստան և, ապա, Եվրոպա: Պետք է նշել սակայն, որ այդ հույսերը ոչ միայն չարդարացան, այլև մեծացրին Հայաստանի կախվածությունը ռուսական գազից:

Գազատարը ունի 140 կմ երկարություն, որից 100 կմ-ը գտնվում է Իրանի, իսկ 40 կմ-ը՝ Հայաստանի տարածքում: Նախատեսվում էր, որ առաջին փուլում այս խողովակաշարով Իրանից Հայաստան պետք է փոխանցվեր օրական մեկ միլիոն խորանարդ մետր գազ, որը, ըստ նախագծի պատասխանատուների, մոտակա ամիսներին պետք է հասներ 3-ից 4 միլիոն խմ-ի (Mehr, 2007):

Հայաստանն ու Իրանը համաձայնագրեր են ստորագրել նաև էլեկտրաէներգիայի և բնական գազի փոխադարձ փոխանակման համար՝ «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի շրջանակներում: «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» փոխանակման պայմանագրի շրջանակում Հայաստանը 2009 թ. բնական գազ է ստանում Իրանից, և այն էլեկտրաէներգիայի վերածելուց հետո վերադարձնում է Իրան (Mehr, 2023): Հայաստանը Իրանից տարեկան ներկրում է 365 մլն խմ գազ: Արդեն 2023 թ. օգոստոսին Հայաստանն ու Իրանը փաստաթուղթ են ստորագրել էլեկտրաէներգիայի դիմաց բնական գազի մատակարարման պայմանագիրը մինչև 2030 թ. երկարաձգելու մասին (Azatutyun, 2023): Ըստ այս վերանայված պայմանագրի, Իրանը կավելացնի բնական գազի արտահանումը Հայաստան, իսկ Երևանը կավելացնի էլեկտրաէներգիայի արտահանումը Թեհրան:

Բնական գազի շուրջ համագործակցությունից զատ, Հայաստանն ու Իրանը փորձել են համագործակցել նաև էլեկտրաէներգիայի ոլորտում: Հայաստանն ու Իրանը ներգրավված են համատեղ էներգետիկ նախագծերում, ինչպիսիք են հիդրոէլեկտրակայանների կառուցումը և վերականգնվող էներգետիկայի նախագծերը (Shana, 2005): Հատկանշական է սակայն, որ էներգետիկ նախագծերի իրականացման մասին միայն պաշտոնական քննար-

կումներ են տեղի ունենում, իսկ գործնականում դրանք անկատար են մնում:

Հայ-իրանական էներգետիկ համագործակցությունը ներառում է նաև էներգետիկ ենթակառուցվածքների զարգացում, ինչպիսիք են հաղորդման գծերը, խողովակաշարերը և էլեկտրակայանները (Shana, 2005): Այս ենթակառուցվածքը կարող է նպաստել երկու երկրների միջև էներգիայի փոխադրմանը և բաշխմանը, եթե կյանքի կոչվի և լիարժեք գործարկվի:

Հայ-իրանական տնտեսական հարաբերություններում առկա մարտահրավերները. չնայած հայ-իրանական տնտեսական հարաբերությունների առավելություններին, դրանք բախվում են նաև մի շարք մարտահրավերների: Այս պարագայում երկկողմ տնտեսական հարաբերություններին զգալի վնաս են հասցնում Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության բռնազավթումը, հայ-ադրբեջանական պայթյունավտանգ հարաբերությունները և Իրանի նկատմամբ սահմանված միջազգային պատժամիջոցները, ինչը բարդացնում է ֆինանսական գործարքները և սահմանափակում երկու երկրների միջև առևտրի և ներդրումների շրջանակը:

2020 թ. Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմը զգալի ազդեցություն ունեցավ հայ-իրանական տնտեսական հարաբերությունների վրա: Հայաստանի ուշադրությունը սևեռվեց հետպատերազմյան իրողությունների և ներքաղաքական խմորումների վրա՝ ազդելով նաև տնտեսական առաջնահերթությունների և տարածաշրջանային գործընկերների, այդ թվում՝ Իրանի հետ հարաբերությունների վրա:

Պատերազմի հետևանքով Հարավային Կովկասում տեղի ունեցան աշխարհաքաղաքական վերադասավորումներ՝ ազդեցություն ունենալով տարածաշրջանային տնտեսական դինամիկայի վրա: Արցախյան երկրորդ պատերազմից գրեթե անմիջապես հետո Երևան կատարած այցի ժամանակ Իրանի ԱԳ նախարար Մ.Ջ. Զարիֆը հայտարարել էր, որ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը Իրանի կարմիր գիծն է (Armenpress, 2021): Հատկանշական է, որ Իրանը սկսեց

հրապարակայնորեն խիստ կարևորել Հայաստանի հետ 42 կիլոմետրանոց սահմանի պահպանումը:

2020 թ. 44-օրյա պատերազմի ավարտը համընկավ Իրանում նոր կառավարության ձևավորման հետ՝ Էբրահիմ Ռաիսիի գլխավորությամբ, որը 2021 թ. իր առաջին մամուլի ասուլիսի ընթացքում հայտարարել էր, որ արտաքին քաղաքական իր առաջնահերթությունը լինելու է տարածաշրջանը, ինչպես նաև հարաբերությունները Իրանի հարևանների հետ (Isna, 2021):

Իրանի համար առաջին մտահոգությունը Ադրբեջանի և Հայաստանի միջև լարվածության և սահմանային վեճերի բացասական ազդեցությունն է Հայաստանով իրանական տարանցիկ ճանապարհի վրա: Վառ օրինակ են Գորիս-Կապան ավտոճանապարհին իրանական բեռնատարների հետ կապված խնդիրները: Մինչ Արցախյան երկրորդ պատերազմը իրանական տարանցումը նման խնդիրներ չուներ: Փաստացի, Իրանի հետ սահմանակից Նորդուզից Հայաստանի մայրաքաղաք Երևան տանող 400 կիլոմետրանոց երթուղու 21 կիլոմետրն այժմ գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ: Մինչ 2020 թ. պատերազմը, երբ երթուղու այս հատվածը լիարժեք գտնվում էր Հայաստանի Հանրապետության վերահսկողության տակ, իրանցի վարորդները Հայաստան և Վրաստան մեկնելիս խնդիրներ չէին ունենում: Սակայն 44-օրյա պատերազմից հետո իրավիճակը փոխվեց, և Ադրբեջանի կառավարությունը, պնդելով, որ Գորիս-Կապան մայրուղու մի մասը գտնվում է Ադրբեջանի տարածքում, իրանական յուրաքանչյուր տարանցիկ բեռնատարի համար պահանջում էր 130 դոլար վճարել (Civilnet, 2022): Ի պատասխան, Իրանի կառավարությունը որոշել էր այլընտրանքային ուղիներ մշակել՝ կանխելու իրանական տարանցման և առևտրի խաթարումը Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի և Մոսկվայի գլխավորած Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետ: Առաջին այլընտրանքային ցամաքային միջանցքը Տաթև-Աղվանի երթուղին է, որն ամբողջությամբ շրջանցում է Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքը: Իրա-

նը հայտարարել է, որ ավարտին է հասցնելու այս ճանապարհի անավարտ հատվածը Հայաստանի ներսում (Irna, 2021):

Իրանի երկրորդ արձագանքը Գորիս–Կապան ավտոմայրուղու վրա Ադրբեջանի սահմանած սահմանափակումներին Կասպից ծովի առավել ակտիվ օգտագործումն էր՝ որպես Ադրբեջանի տարածքով դեպի Ռուսաստան ցամաքային ճանապարհի այլընտրանք: Առաջին փուլում՝ արդեն 2021 թ. հոկտեմբերի 23-ից, Իրանի հյուսիսային նավահանգիստներից գործարկվել էր վեց նավագնացություն դեպի ռուսական Աստրախան և Մախաչկալա, ինչպես նաև դեպի Ղազախստանի Ակտաու նավահանգիստ: Երկրորդ փուլում՝ մինչև 2022 թ. մարտի վերջ, նախատեսվում էր դրանց թիվը հասցնել ութի (Каспийский вестник, 2021): Գորիս–Կապան ավտոճանապարհին տիրող իրավիճակը հստակ ցույց տվեց, որ Ադրբեջանական Հանրապետության և Հայաստանի միջև տարաձայնություններն ու սահմանային լարվածությունը ազդում են ոչ միայն այս երկու երկրների, այլև Իրանի վրա:

Պետք է նշել, որ հայ-իրանական տնտեսական հարաբերությունների խորացման համար ռազմավարական հնարավորություններ կան, որոնցից են՝ Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ որպես Եվրոպայի և Ասիայի միջև կամուրջ, զուգորդված Իրանի հսկայական շուկայական ներուժի և բնական ռեսուրսների հետ, ինչը երկու երկրներին էլ հնարավորություն է տալիս օգտվելու ենթակառուցվածքների զարգացման, զբոսաշրջության և տեխնոլոգիական ոլորտներում ընդլայնված համագործակցությունից: Նախաձեռնությունները, ինչպիսին է «Հյուսիս–Հարավ» տրանսպորտային միջանցքը, փոխադարձ տնտեսական աճի նոր հնարավորություններ են ստեղծում:

Այն բաղկացած է մի քանի բաղադրիչից՝ երկաթգիծ Իրանի և Հայաստանի միջև և Հյուսիս–Հարավ ճանապարհի կառուցում, որը Իրանը և Հայաստանը կմիացնի Վրաստանի սևծովյան նավահանգիստներին:

Դեռևս 2021 թ. մայիսի 25-ին աշխատանքային այցով Հայաստան էր ժամանել Իրանի ճանապարհաշինության և քաղաքաշի-

նության նախարար Մոհամմադ Էսլամիի գլխավորած պատվիրակությունը: Իրանն այսօր Հայաստանի չորրորդ առևտրային գործընկերն է շրջանառության ծավալով, ուստի, Մ. Էսլամին Երևանում ներկայացրել էր մի քանի ծրագիր, որոնք կարող էին նպաստել առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է շինարարության ոլորտում Իրանի մասնակցությանը, հատկապես՝ ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին, համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը և երկու երկրներից ներդրողների ներգրավման համատեղ նախագծերին:

Եվ, իհարկե, իրանցի նախարարը վերահաստատել է իր երկրի շահագրգռությանը՝ մասնակցելու Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի հարավային հատվածի կառուցմանը: «Իրանական ընկերությունները պատրաստ են մասնակցելու Արտաշատ-Մեղրի հատվածի կառուցման նախագծին, որը պետք է իրականացվի մի քանի փուլով: Մասնավորապես, Սիսիան-Քաջարան-Մեղրի ճանապարհի հատվածը հրատապ և անհապաղ լուծում է պահանջում: Դրա համար մենք պատրաստ ենք իրանական առաջատար ընկերությունների կոնսորցիում ստեղծել՝ նպատակ ունենալով դրանց ներգրավել այս ծրագրի մշակմանը, ֆինանսավորմանը և իրականացմանը»,- ասել է Էսլամին: Նա Հայաստանի տարածքով Պարսից ծոց-Սև ծով միջազգային տրանսպորտային միջանցքի նախագիծը համարել է որպես հայ-իրանական հարաբերությունների զարգացման առանցքային խնդիրներից մեկը (Mineconomy, 2021):

Մ. Էսլամիի այցի հաջորդ օրը Երևան է ժամանել Իրանի արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը: Վերջինս արդեն հանդիպումներ էր ունեցել Հայաստանի բարձրագույն քաղաքական ղեկավարության, այդ թվում՝ վարչապետի, նախագահի և իր հայ գործընկերոջ հետ: Սակայն նրա այցի վերաբերյալ ընդամենը մեկ հայտարարություն է եղել, ըստ որի՝ Հայաստանը և Իրանը շարունակում են աշխատանքը Պարսից ծոց-Սև ծով տրանսպորտային միջանցքի ուղղությամբ (Mfa, 2021):

Այսպիսով, Պարսից ծոցը Սև ծովին կապող միջազգային տրանսպորտային և լոգիստիկ միջանցքի ստեղծման նախագծի իրականացման անհրաժեշտությունը և Հյուսիս–Հարավ ավտոմայրուղու կառուցումը քննարկվում է առնվազն 15 տարի, իսկ իրականացման հարցում վերջին շրջանում Իրանի հետաքրքրության աճը ունի մի քանի պատճառ: Թվում է, թե դրանց իրականացման ուղղությամբ Թեհրանի վերջին նախաձեռնությունները մեծապես պայմանավորված են ներկայիս տարածաշրջանային աշխարհաքաղաքական տեղաշարժերով. մասնավորապես, 44-օրյա պատերազմի հետևանքով տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակման նախագծերի ի հայտ գալով: Այստեղ տեղին է հիշեցնել, որ Մ. Ջ. Զարիֆի նույն այցը Հայաստան՝ կայացել է Հարավային Կովկասում նրա տարածաշրջանային շրջագայության շրջանակներում: Ասվածի համատեքստում պետք է ընդգծել նաև, որ 44-օրյա պատերազմից հետո Հարավային Կովկասում ձևավորված աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում տեղի ունեցավ ԻԻՀ գլխավոր հյուպատոսության պաշտոնական բացումը, որին մասնակցեց Իրանի արտաքին գործերի նախարար Հոսեին Ամիր Աբդոլահիանը (Սահակյան, 2022):

Բացի այդ, դեռևս 2023 թ. քննարկումներ էին ընթանում հայ-իրանական սահմանին նոր կամուրջ կառուցելու հնարավորությունների շուրջ: Մասնավորապես, Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարար Մեհրդադ Բազրփաշը նշել է, որ իրանական կողմը պատրաստ է Հայաստանին փոխանցել ենթակառուցվածքների զարգացման գործում ունեցած փորձը՝ խթանելով, մասնավորապես, «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղու շինարարությունը (EJC, 2023): Արդեն 2024 թ. մայիսին տեղի է ունեցել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի տնօրինության և Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարարության պաշտոնյաների միջև հանդիպումը, որի շրջանակներում Հայաստանի և Իրանի միջև Արաքս գետի վրա 2-րդ կամուրջ կառու-

ցելու հարցով աշխատանքային խումբ ստեղծելու որոշում է կայացվել (Sputnik, 2024):

Եզրակացություն

Ըստ էության, Հայաստանի անկախությունից ի վեր հայ-իրանական տնտեսական հարաբերությունները պատմական կապերից վերածվել են կառուցվածքային համագործակցության՝ էներգետիկայի, առևտրի և մշակութային փոխանակման ոլորտներում: Չնայած միջազգային պատժամիջոցներին և տարածաշրջանային դինամիկայից բխող մարտահրավերներին, երկու երկրներն էլ հանձնառություն են դրսևորել՝ ընդլայնելու իրենց տնտեսական գործընկերությունը: Հայաստանի ռազմավարական դիրքը և Իրանի տնտեսական ներուժը լայն հնարավորություններ են ընձեռում տարբեր ոլորտներում հետագա համագործակցության համար: Քանի որ համաշխարհային դինամիկան շարունակում է փոխվել, ավելի խորը տնտեսական ինտեգրման խթանումը կարող է նպաստել երկու երկրների կայուն զարգացմանն ու տարածաշրջանային կայունության ամրապնդմանը:

Պայմանականորեն, հայ-իրանական տնտեսական հարաբերությունները կարելի է երկու փուլի բաժանել, որոնցից առաջինը վերաբերում է Հայաստանի անկախությունից հետո մինչև 2020 թ. ընկած ժամանակահատվածին, իսկ երկրորդը՝ 44-օրյա պատերազմից հետո տեղի ունեցող գործընթացներին: Ըստ այդմ, հայ-իրանական տնտեսական հարաբերությունների առաջին փուլի դրական ֆոնին կարելի էր նկատել երկրների միջև առկա որոշակի խնդիրներ, որոնք պայմանականորեն կարելի էր 3 տեսակի դասակարգել. առաջինը կապված էր ադրբեջանական գործոնի հետ, երկրորդը պայմանավորված էր Հայաստանի տնտեսության մեջ Ռուսաստանի գերիշխող դիրքի հետ, իսկ երրորդը Իրանի միջուկային ծրագրով պայմանավորված արևմտյան պատժամիջոցներն էին, որոնք որոշակի դժվարություններ էին ստեղծում հայ-իրանական տնտեսական հարաբերությունների համար: Որպես հավելում պետք է նշել, որ կային նաև մի շարք հայ-իրանական համատեղ

նախագծեր, ինչպիսիք էին Իրան-Հայաստան երրորդ բարձրավոլտ էլեկտրական գծի և Արաքս գետի երկու ափերին հիդրոէլեկտրակայանների կառուցումը, որոնք դեռևս կյանքի չեն կոչվել, իսկ իրականացման դեպքում երկու երկրներին կարող էին քաղաքական և տնտեսական մեծ օգուտներ բերել:

Հայաստանը, օգտագործելով տարբեր ոլորտներում առկա հայ-իրանական համագործակցությունը, պետք է Իրանի օգնությամբ փորձի տնտեսական և քաղաքական օգուտներ ստանալ: Հայաստանի համար զգալի նշանակություն կարող են ունենալ Հայաստանի տարածքում նավթավերամշակման գործարանի և Հայաստան-Իրան միջպետական երկաթգծի կառուցումը, որոնք նոր լիցք կհաղորդեն երկկողմ հարաբերություններին: Միևնույն ժամանակ, այս նախագծերի իրականացումը կախված չէ միայն հայ-իրանական հարաբերություններից. այն ուղղակիորեն կապված է Իրանի տարածաշրջանային, իսկ որոշ առումներով նաև համաշխարհային ռազմավարության հետ, որն իր մեջ քաղաքական և տնտեսական բաղադրիչներ է ներառում:

Չնայած առկա հնարավորություններին, կան նաև որոշակի թերություններ, որոնք ներկայումս խոչընդոտում են հայ-իրանական տնտեսական հարաբերությունների ողջ ներուժի իրացմանը: Մասնավորապես, տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավումները, ինչպիսիք են ուղիղ երկաթուղային կապի կառուցումը, կարող են զգալիորեն հեշտացնել և խթանել առևտրի ծավալների աճը Հայաստանի և Իրանի միջև:

Ավելի սերտ տնտեսական համագործակցության մյուս խոչընդոտը երկու երկրների միջև բանկային սահմանափակ կապերն են: Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների պատճառով շատ բանկեր չեն կարողանում իրանական կազմակերպությունների հետ ֆինանսական գործարքներ իրականացնել, ինչը խոչընդոտում է երկու երկրների ձեռնարկությունների՝ անդրսահմանային առևտրով և ներդրումներով զբաղվելու կարողությանը:

Այս ամենով հանդերձ, չնայած նրան, որ հայ-իրանական տնտեսական հարաբերությունները բախվել են որոշակի մար-

տահրավերների, պատմական կապերի և փոխադարձ տնտեսական շահերի հիմքը ամուր հարթակ է ստեղծում ապագա համագործակցության և աճի համար: Հայաստանն ու Իրանը կարող են ավելի բարենպաստ միջավայր ստեղծել առևտրի և ներդրումների համար՝ խթանելով փոխադարձ բարգավաճումը:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

Մենագրություններ

1. ***Իսկանդարյան (2016),*** Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991–2014 թթ.), Երևան, 2016, էջ 123–124:

Պաշտոնական փաստաթղթեր

2. **Arlis (2021),** ՀՀ ԱԺ որոշումը՝ ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին, 26.08.2021, https://www.arlis.am/Banners/26.08.21_%D4%B1%D4%BA%D5%88-002-%D5%86.pdf, 26.08.2021, (հսկ. 17.08.2024):
3. **Armstat,** Հայաստանի ԿՀՆ ցուցանիշներ, https://armstat.am/am/?nid=699&thid=8&submit=Search, (հսկ. 17.08.2024):
4. **Mfa (2021),** Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների վերաբերյալ համառոտ տեղեկանք (2019-2020թթ.), 26.01.2021, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/01/26/armenia_iran/10770, (հսկ. 08.07.2024):

Համացանցային աղբյուրներ

5. ***Գոբլ,*** Գոբլ Փ., Մոսկվան շրջանցում է Հայաստանը, http://armef.com/hy/news/verlutsutyun/moskvan-hrjancum-e-hayastany.-pol-gobl/, (հսկ. 08.07.2024):
6. ***Դիլանյան (2020),*** Դիլանյան Հ., Հայաստանը՝ միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր. դրական ու բացասական կողմերը, https://hy.armradio.am/archives/278302, 15.07.2020, (հսկ. 17.08.2024):
7. ***Մանուկեան,*** Մանուկեան Ս., Իրան-Հայաստան երկաթգծի նշանակությունը տարածաշրջանային գործընթացներում, http://old.hooys.com/Iran-Hayastan/ 93_Iran_Hayastan_Yerkatagitz.htm, (հսկ. 08.07.2024):

8. ***Սահակյան (2022),*** Սահակյան Ն., Կապանում բացվեց Իրանի գլխավոր հյուպատոսությունը, 21.10.2022, https://www.azatutyun.am/a/32094690.html, (հսև. 29.08.2024):
9. ***Каспийский вестник (2021),*** Иран запустит шесть судоходных линий по Каспийскому морю в Россию и Казахстан, 18.10.2021, http://casp-geo.ru/iran-zapustit-shest-sudohodnyh-linij-po-kaspijskomu-moryu-v-rossiyu-i-kazahstan/, (հսև. 08.07.2024):
10. ***Фаляхов (2016),*** Фаляхов Р., Россия, Иран и Азербайджан достроят международный транспортный коридор, 08.08.2016, https://www.gazeta.ru/business/2016/08/08/10110611.shtml, (հսև. 08.07.2024):
11. ***A1plus (2015),*** Փամբուխչյան Ա., Հայ-իրանական հարաբերությունները, պատժամիջոցներն ու Ռուսաստանը, 29.05.2015, http://www.a1plus.am/1386433.html, (հսև. 08.07.2024):
12. ***Aniarc (2022),*** Հայաստան-Իրան առևտրի ծավալը 1995-2021 թվականներին, 03.04.2022, https://www.aniarc.am/2022/04/03/armenia-iran-trade-since-1995/, (հսև. 08.07.2024):
13. ***Armenianow,*** Հայ-իրանական հարաբերություններ. վարչապետն այցի ընթացքում քննարկել է զարգացման խնդիրներ, https://www.armenianow.com/hy/news/politics/57876/iranarmenia_relations_hovik_abrahamyan_eurasian_economic_union, (հսև. 08.07.2024):
14. ***Armenpress (2021),*** Մեր կարմիր գիծը Հայաստանի տարածքային ամբողջականությունն է. Իրանի ԱԳ նախարար, 27.01.2021, https://armenpress.am/arm/news/1041595.html, (հսև. 08.07.2024):
15. ***Azatutyun (2023),*** Հայաստանը և Իրանը երկարաձգեցին էներգետիկ ոլորտում գործող համաձայնագրի ժամկետը, 10.08.2023, https://www.azatutyun.am/a/32542872.html, (հսև. 08.07.2024):
16. ***Civilnet (2022),*** Գորիս-Կապան ճանապարհին գանձումների վերաբերյալ Ադրբեջանի պաշտոնական թվերը իրատեսական չեն, 31.01.2022, https://www.civilnet.am/news/648166/, (հսև. 08.07.2024):
17. ***EJC (2023),*** Հայաստանն ու Իրանը դիտարկում են սահմանին երկրորդ կամուրջ կառուցելու հնարավորությունը, 24.10.2023, https://ejc.am/hy/article/14787, (հսև. 29.08.2024):
18. ***Hetq (2019),*** Հերգնյան Ս., Հայաստան-Իրան առևտուրը 2018-ին. էներգակիրների կշիռն ու ցեմենտի ներմուծման զգալի աճը, 17.04.2019, https://hetq.am/hy/article/102873, (հսև. 16.08.2024):
19. ***Mfa (2024),*** Իրան, երկկողմ հարաբերություններ, 13.06.2024, https://www.mfa.am/hy/bilateral-relations/ir, (հսև. 08.07.2024):
20. ***Mineconomy,*** Հայաստանի ԱՀԿ անդամակցության գործընթացը, https://www.mineconomy.am/page/90, (հսև. 17.08.2024):

21. ***Mineconomy (2021),*** Վահան Քերոբյանն ու ԻԻՀ ճանապարհների և քաղաքաշինության նախարար Մոհամմադ Էսլամին ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, https://mineconomy.am/news/2293, 05.05.2021, (հսկ. 08.07.2024):
22. ***Prime minister (2022),*** Տեղի է ունեցել ՀՀ վարչապետի կարճատև այցը Իրան. ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև ստորագրվել է Բնական գազի ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր, 01.11.2022, https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/11/01/Nikol-Pashinyan-visit-to-the-Iran/, (հսկ. 08.07.2024):
23. ***Sputnik news (2022),*** Հայաստան–Իրան տնտեսական կապերն ընդլայնվում են. առևտուրը՝ թվերով ու ապրանքատեսակներով, 08.12.2022, https://armeniasputnik.am/20221208/hajastaniran-tntesakan-kapern-yndlajnvum-en-arevtury-tvervov-u-apranqatesaknervov-52364680.html, (հսկ. 08.07.2024):
24. ***World Bank (2023),*** Հայաստանը Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցության դոնոր է դառնում, 10.04.2023, https://www.worldbank.org/hy/news/press-release/2023/04/10/armenia-becomes-a-donor-to-the-international-development-association-of-the-world-bank, (հսկ. 17.08.2024):
25. ***168.am (2015),*** Վարչապետն ընդունել է Իրանի արտաքին գործերի նախարարին, 27.01.2015, https://168.am/2015/01/27/449364.html, (հսկ. 08.07.2024):
26. ***Irna (2021),*** Ǧozīyāt-e tavāfoq-e Īrān va Ārmanestān barāī-e sāẖt-e masīrhāī-e trānzītī-e ǧadīd (Իրանի և Հայաստանի միջեւ տարանցիկ նոր ուղիների կառուցման մասին համաձայնագրի մանրամասները), 06.10.2021, https://irna.ir/xjGcvZ, (հսկ. 08.07.2024):
27. ***Isna (2021),*** Avalīn nešast-e ẖabarī-e raisī be oʿnvān-e rais ǧomhūr-e montaẖab (Ռաիսիի առաջին ասուլիսը՝ որպես հանրապետության նորընտիր նախագահ), 21.06.2021, https://www.isna.ir/amp/1400033123906/, (հսկ. 08.07.2024):
28. ***Mehr (2007),*** Khat-e looleh-ye enteghāl-e gāz-e Irān beh Armanestān eftetāh shod (Բացվել է Իրան-Հայաստան գազատարը), 28.03.2007, https://www.mehrnews.com/news/462342/%D8%AE%D8%B7-%D9%84%D9%88%D9%84%D9%87-%D8%A7%D9%86%D8%AA%D9%82%D8%A7%D9%84-%DA%AF%D8%A7%D8%B2-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%A8%D9%87-%D8%A7%D8%B1%D9%85% D9%86%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86-%D8%A7%D9%81%D8%AA%D8%AA%D8%A7%D8%AD-%D8%B4%D8%AF, (հսկ. 08.07.2024):

29. ***Mehr (2023),*** Armanestān az afzāyesh-e hamkāri bā Irān dar zamineh-ye gāz va barq khabar dād (Հայաստանը հայտարարեց գազի և էլեկտրաէներգիայի ոլորտում Իրանի հետ համագործակցության ավելացման մասին), 28.11.2023, https://www.mehrnews.com/news/5952714/%D8%A7% D8%B1%D9%85%D9%86%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86-%D8%A7%D8%B2-%D8%A7%D9%81%D8%B2%D8%A7%DB%8C%D8%B4-%D9%87%D9%85%DA%A9%D8%A7%D8%B1%DB%8C-%D8%A8%D8%A7-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%AF%D8%B1-%D8%B2%D9%85%DB%8C%D9%86%D9%87-%DA%AF%D8%A7%D8%B2-%D9%88-%D8%A8%D8%B1%D9%82-%D8%AE%D8%A8%D8%B1-%D8%AF%D8%A7%D8%AF, (hսն. 08.07.2024):
30. ***Shana (2014),*** Irān va Armanestān; eneržī-ye marz-e moshtarak-e hamkāri (Իրան և Հայաստան. Էներգետիկ ընդհանուր սահմանային համագործակցություն), 07.06.2005, https://www.shana.ir/news/54390/%D8%A7%DB% 8C%D8%B1%D8%A7%D9%86-%D9%88-%D8%A7%D8%B1%D9%85%D9%86%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86-%D8%A7%D9%86%D8%B1%DA%98%DB%8C-%D9%85%D8%B1%D8%B2-%D9%85%D8%B4%D8%AA%D8%B1%DA%A9-%D9%87%D9%85%DA%A9%D8%A7%D8%B1%DB%8C, (hսն. 08.07.2024):
31. ***Sputnik (2024),*** Արաքս գետի վրա ևս մեկ կամուրջ կառուցելու հարցով աշխատանքային խումբ կստեղծվի, 14.05.2024, https://arm.sputniknews.ru/20240514/araqs-geti-vra-evs-mek-kamurj-karucelu-anhrazheshtutjun-ka-ashkhatanqajin-khumb-ksteghtsvi-75727574.html, (hսն. 29.08.2024):

LIANA PETROSYAN

ARMENIAN–IRANIAN ECONOMIC RELATIONS IN 1991–2023 (GENERAL OVERVIEW)

In South Caucasus, the post-Soviet era, along with other socio-political and economic processes, has witnessed a complex interplay of economic and geopolitical forces shaping the relationship between Armenia and Iran. Their economic relations, driven by shared history, geographic proximity, and a shared desire for economic independence, have undergone a fascinating evolution marked by periods of growth,

setbacks, and strategic maneuvering. This essay will analyze the key developments and dynamics of Armenian-Iranian economic relations between 1991 and 2023, highlighting the driving factors, challenges, and future prospects.

Early Years of Independence (1991–2000): A Foundation Laid: The early years following the collapse of the Soviet Union saw Armenia actively seeking to diversify its economic partners and reduce its dependence on Russia. Iran, similarly aiming for regional economic influence, viewed Armenia as a valuable gateway to the Caucasus and Central Asia. This mutual interest fueled a burgeoning trade relationship, primarily driven by Iranian exports of oil, gas, and manufactured goods, while Armenia exported agricultural products, minerals, and processed goods. Iran's role as a crucial energy supplier, providing natural gas and electricity, proved particularly vital during Armenia's transition period. The development of transportation infrastructure, including roads and railways, further strengthened the economic bond, facilitating trade and passenger movement. However, the looming shadow of international sanctions imposed on Iran cast a significant constraint, limiting potential investment and full-scale economic collaboration.

Expansion and Constraints (2000–2010): The Rise and Fall of Cooperation: The period between 2000 and 2010 witnessed a further expansion of economic cooperation, marked by increasing trade volumes and Iranian investments in Armenian industries, particularly mining and manufacturing. The North-South Corridor project, aiming to connect Iran to Russia via Armenia, exemplified the strategic importance of this partnership. Despite this progress, the ongoing international sanctions on Iran remained a constant hurdle, hindering the full realization of the relationship's potential.

A Window of Opportunity (2010–2018): The JCPOA and its Impact: The signing of the Joint Comprehensive Plan of Action (JCPOA) in 2015 offered a glimmer of hope for closer economic integration. The lifting of many sanctions paved the way for a surge in trade volumes, making Iran a leading trading partner for Armenia. New investment projects were

launched across various sectors, demonstrating a renewed commitment to economic collaboration. However, the US withdrawal from the JCPOA in 2018 and the reimposition of sanctions dealt a heavy blow, creating uncertainty and hindering long-term economic planning.

Navigating Volatility (2018–2023): Resilience and Adaptation: Despite the challenges, Armenia and Iran have displayed a degree of resilience, maintaining economic relations even amidst political and economic volatility. While Armenia continues to prioritize economic diversification and seeks to reduce its energy dependence on Russia and Iran, the need for continued cooperation remains evident, particularly in energy, transportation, and regional integration.

In this case, the development of the economic relations between Armenia and Iran in the future appears quite complicated. Armenia must strike a balance by reconciling its geopolitical constraints with its economic diversification strategies whilst Iran has to continually contend with sanctions and instability of the Middle East. This means devising mechanisms that reinforce enduring commitment to mutual goals, closer coordination of joint actions in pursuing regional objectives, and flexibility in adapting to the new realities. The achievement of this partnership will not only enhance the welfare of both countries but will also contribute positively to the status and development of the entire Caucasus region.

So, the economic relationship between Armenia and Iran has been a complex journey, shaped by a confluence of geopolitical realities, economic interests, and external pressures. While challenges remain, the potential for a mutually beneficial partnership is evident. The ability to navigate these challenges effectively will determine the future trajectory of this relationship and its impact on the broader regional landscape. The future of this complex economic dance hinges on a careful balancing act between shared interests, strategic maneuvering, and a commitment to mutual prosperity.

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ (1991–1923 ԹԹ.)

Ներածություն

20-րդ դարի ավարտը նշանավորվեց «սառը պատերազմի» ավարտով և ԽՍՀՄ փլուզմամբ, որի արդյունքում ստեղծվեց նոր աշխարհաքաղաքական իրավիճակ: Նոր իրողությունների պայմաններում ի հայտ եկան մի շարք հնարավորություններ և մարտահրավերներ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային տերությունների համար՝ աշխարհաքաղաքական ազդեցության գոտիների վերաբաժանման հարցում: Հարավային Կովկասը, որը գտնվում է Սև և Կասպից ծովերի միջև, Հարավարևելյան Եվրոպայի և Մեծ Մերձավոր Արևելքի խաչմերուկում, ինչպես նաև սահմանակից է տարածաշրջանի ազդեցիկ պետությունների՝ Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության հետ, 1990-ական թվականներից կրկին հայտնվեց աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում: Թուրքիան ավանդաբար ներգրավվում է հարավկովկասյան քաղաքականության մեջ և քայլեր իրականացնում տարածաշրջանում ազդեցության հաստատման ուղղությամբ: Վերջինիս որդեգրած արտաքին քաղաքականությունը, հանդիսանալով միջազգային գործընթացների անբաժանելի մասը, բախվում էր ինչպես արժեքային հիմնախնդիրների, այնպես էլ Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության առաջնահերթությունների վերանայման անհրաժեշտության:

Այսինքն, Սառը պատերազմի ավարտը և ԽՍՀՄ փլուզման արդյունքում հարավկովկասյան երեք ինքնիշխան հանրապետությունների ի հայտ գալը հիմնովին փոխեցին Թուրքիայի եվրասիական քաղաքականությունը և նախադրյալներ ստեղծին Թուրքիայի աշխարհաքաղաքական դերի և ռազմավարության փոխակերպման համար: Այլ կերպ ասած, ԽՍՀՄ փլուզմամբ այս տարածաշրջանում սկսվեց Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր փուլը: Վերջինս Հարավային Կովկասում դարձավ կարևոր դերակատար՝ շնորհիվ ամուր պատմական կապերի, տարածաշրջանը Եվրոպայի հետ կապող աշխարհագրական դիրքի գրավչության, ինչպես նաև Ադրբեջանի և Վրաստանի հետ տնտեսական, քաղաքական և անվտանգային հարաբերությունների: Միաժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ վերջին Արցախյան պատերազմից հետո Թուրքիայի տարածաշրջանային ներգրավվածությունը է՛լ ավելի է մեծանում: Ավելին, չնայած աշխարհաքաղաքական զարգացումներին, մոտ ապագայում Հարավային Կովկասում դժվար թե կայունություն հաստատվի, սակայն ակնհայտ է, որ Թուրքիան կշարունակի առաջին հերթին տնտեսական նոր կապեր հաստատել հարավկովկասյան հանրապետությունների հետ՝ մեծացնելով իր ազդեցությունը տարածաշրջանում:

Այս ուսումնասիրության շրջանակում փորձ է արվել դիտարկելու Թուրքիայի հարավկովկասյան արդի քաղաքականությունը: Հատկապես Հարավային Կովկասի քաղաքական իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին 30 տարիների ընթացքում Թուրքիան դարձել է տարածաշրջանի ակտիվ խաղացողներից: Նրա ազդեցությունը մեծացել է հիմնականում Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, ինչը պայմանավորված էր ինչպես Հարավային Կովկասում Ռուսաստանի պասիվությամբ, այնպես էլ այդ պատերազմի հետևանքով ստատուս-քվոյի փոփոխությամբ:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ 1990-ական թթ.

Հարավային Կովկասը աշխարհատնտեսական, ռազմավարական և անվտանգության տեսանկյունից մեծ կարևորություն է ներկայացնում Թուրքիայի համար, ինչը պայմանավորված է տարածաշրջանի աշխարհաքաղաքական և ռազմավարական նշանակությամբ՝ պայմանավորված աշխարհագրական դիրքով, տարանցիկ գոտի լինելու հանգամանքով և բնական ռեսուրսների առկայությամբ (Մարտիրոսյան, 2020): Այսինքն, Թուրքիայի համար Հարավային Կովկասը Միջին Ասիայի թյուրքախոս հանրապետությունների հետ կապ հաստատելու և Կասպյան ավազանի էներգապաշարներն իր երկրի տարածքով դեպի Եվրոպա արտահանելու հնարավորություն է, ինչի արդյունքում պաշտոնական Անկարան ձեռք է բերում տնտեսական և քաղաքական հզոր գործիք: Ավելին, այս տարածաշրջանը միշտ եղել է Թուրքիայի աշխարհաքաղաքական և ռազմական շահերի հետաքրքրության շրջանակներում, ինչպես նաև թուրքական էքսպանսիայի ամենաակտիվ ուղղություններից է: Ռուսական կայսրությունը, ապա՝ Խորհրդային Միությունը, զսպող գործոն էին թուրքական առաջխաղացման համար, թեև սառը պատերազմի տարիներին Թուրքիան պահպանում էր իր հավակնությունները՝ որպես մեծ տարածաշրջանային տերություն, և ակտիվ մասնակցություն ունենում ԽՍՀՄ և ԱՄՆ առճակատման գործընթացում:

Հարավային Կովկասում Թուրքիայի դերը էականորեն փոխվել է սառը պատերազմին հաջորդած առաջին տասնամյակից ի վեր: Նախ, Թուրքիան այլևս ցամաքային սահման չուներ իր հյուսիսային մեծ հարևանի հետ: Ի սկզբանե՝ 1990-ական թվականներին, արևմտյան քաղաքական գործիչները և վերլուծաբանները ենթադրում էին, որ պաշտոնական Անկարան արագ կլրացնի Մոսկվայի կողմից առաջացած քաղաքական վակուումը Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նորանկախ հետխորհրդային հանրապետություններում: Այդ կերպ Թուրքիան նպատակ

ուներ թուլացելու Ռուսաստանի Դաշնության ազդեցությունը տարածաշրջանում, և հիմնվելով պանթյուրքիստական գաղափարախոսության վրա, իր ազդեցությունը հաստատելու թյուրքախոս, մահմեդական հանրապետություններում:

Հարավային Կովկասում իր ազդեցությունը տարածելու՝ Թուրքիայի նկրտումները ստացան Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի աջակցությունը, որը վերլուծաբան Գ. Ֆուլերի կողմից առաջարկված «թուրքական մոդելը» ակնկալում էր տեսնել Եվրասիայի թյուրքախոս պետություններում (Bal, 1998): Այս նկրտումները տեսական ձևակերպում էին գտնում թուրք վերլուծաբանների ու տեսաբանների մշակած «Եվրասիական ռազմավարության» մեջ, որը նախատեսում էր Թուրքիայի գերիշխանության տարածումը Եվրասիայում (Дружинин [и др.], 2017; Safrastyan 2005): Նման նկրտումները, բնականաբար, բախվելու էին Ռուսաստանի շահերին, որը 1993 թվականից արտաքին քաղաքականության դրույթներում ԱՊՀ-ն, այդ թվում՝ Կենտրոնական Ասիան ու Կովկասը, դիտարկում էր որպես Ռուսաստանի կենսական շահերի ոլորտ (Dawisha & Dawisha, 1995):

Տարածաշրջանում Թուրքիա–Ռուսաստան մրցակցության դրսևորումներում էական դեր էին խաղում ԽՍՀՄ փլուզումից հետո բռնկված հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները: Հատկապես Արցախյան հիմնախնդրում վերջիններս պաշտպանում էին հակամարտությունում ընդգրկված հակադիր կողմերի, և հակամարտությունը օգտագործում էին որպես տարածաշրջանում ազդեցության հաստատման կարևոր միջոց: 1990-ականների սկզբին պաշտոնական Մոսկվան փորձում էր թույլ չտալ Անկարայի՝ Բաքվի միջոցով տարածաշրջան ներթափանցելը: Ռուսաստանը քաջ գիտակցում էր, որ Հարավային Կովկասում Թուրքիայի ազդեցության մեծացումը որոշակի ռիսկեր և սպառնալիքներ է պարունակում Հյուսիսային Կովկասի անվտանգության և տարածքային ամբողջականության համար (Qelikpala, 2015): Այդ պատճառով, երկու պետությունների միջև շահերի բախումը անխուսափելի էր, և 1990-ական թթ. վերջիններիս բարձրաս-

տիճան պաշտոնյաները հանդես էին գալիս միմյանց մեղադրող կոշտ հայտարարություններով: Հատկապես Ռուսաստանի համար բացարձակապես անընդունելի էր հակամարտությունում Թուրքիայի ցուցաբերած շահագրգռվածությունը, քանի որ Մոսկվան Հարավային Կովկասը համարում էր բացառապես իր ազդեցության գոտի:

Այսպիսով, Արցախյան հակամարտությունում Թուրքիան ու Ռուսաստանը հանդես եկան որպես փոխադարձ վտանգավոր պետություններ: Պատերազմում հայկական կողմի հաղթանակը, ինչպես նաև Մոսկվայի միջնորդությամբ զինադադարի հաստատումը հանգեցրին տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ամրապնդմանը:

Ա. Դավութօղլուի գնահատմամբ՝ 1990-ական թթ. սկզբին գրանցված անհաջողությունները պայմանավորված էին այն հանգամանքով, որ Թուրքիան հոգեբանորեն ու դիվանագիտական առումով պատրաստ չէր տարածաշրջանում գերիշխանության հասնելու (Davutoğlu, 2001): Չնայած այդ ամենին, Հարավային Կովկասը մնում էր Թուրքիայի հետաքրքրության գոտի, ուստի, պաշտոնական Անկարան սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել՝ ներթափանցելու այս տարածաշրջան: Այդ ուղղությամբ առաջին քայլերից մեկը Ադրբեջանի ու Վրաստանի հետ սերտ տնտեսական հարաբերություններ հաստատելու քաղաքականությունն էր:

Հատկապես Ադրբեջանի միջոցով Թուրքիան ձգտում էր ներթափանցել հարավկովկասյան տարածաշրջան, որտեղ, ի տարբերություն Ռուսաստանի, նա ազդեցության հաստատման փորձ չուներ: 1991 թ. Թուրքիան առաջին երկիրն էր, որ ճանաչեց Ադրբեջանի անկախությունը, իսկ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թ:

Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները՝ 1990-ական թթ.

Ինչպես վերը նշվել է, Թուրքիան նպատակադրվել էր Հարավային Կովկասի տարածքով կապ հաստատելու Միջին Ասիայի թյուրքախոս մահմեդական պետությունների հետ: Բացի այդ, Ան-

կարայի համար էական նշանակություն ունեին ադրբեջանական գազը և նավթը, որոնց արտահանումը պետք է իրականացվեր Թուրքիայի միջոցով: Ուստի, Թուրքիան սկսեց տարբեր միջոցներով ազդել Ադրբեջանի վրա՝ օգտագործելով այդ երկրի բնակչության՝ հիմնականում թյուրքական ծագումը, լեզվական նմանությունը, մշակութային մի շարք ընդհանրությունները: Ավելին, Թուրքիան, պետական մակարդակով հարաբերությունների ամրապնդման հետ մեկտեղ, Ադրբեջանի վրա անուղղակի ազդելու և վերջինիս դեպի իրեն կողմնորոշելու մարտավարություն որդեգրեց՝ ազգայնական, մասնավորապես՝ պանթյուրքական գաղափարախոսությունը, ինչպես նաև սուննի իսլամի և նուրջուական[1] շարժումը ներարկելով Ադրբեջանում: Դրան նպաստել է նաև «թուրքական մոդելը», որը 1990-ական թթ. սկզբներին օգտագործվում էր նաև որպես Իրանի ազդեցության տարածման հակակշիռ: Արդյունքում, 1990-ական թթ. սկզբին Ադրբեջանի անկախացման առաջին տարիներից ի վեր թուրք ազգայնականները և կրոնական կազմակերպություններն սկսեցին լայն գործունեություն ծավալել Ադրբեջանում: Հատկապես Թուրքիա–Ադրբեջան հարաբերությունների կայուն և դինամիկ զարգացում արձանագրվեց Ադրբեջանի ժողովրդական ճակատի առաջնորդ, ազգայնական Ա. Էլչիբեյի նախագահության օրոք (1992–1993 թթ.), երբ դրանք ավելի շուտ գաղափարական ուղղվածություն ունեին: Արդյունքում, Ադրբեջանը ակտիվորեն սկսեց խորացնել իր հարաբերությունները

[1] Նուրջուական շարժման կամ «Նուր» համայնքի անդամները նուրջուներն են (թուրք. լույսի հետևորդներ), որոնք իրենց համարում են իսլամական հոգևոր առաջնորդ Սաիդ Նուրսիի (1876–1960 թթ.) հետևորդներ: Սաիդ Նուրսիի մահից հետո շարժումը բաժանվեց 6 տարբեր հոսանքների, որոնց առաջնորդներն էին՝ Հյուսրև Ալթընբաշաքը, Մեհմեդ Քայալարը, Հուլուսի Յահյագիլը, Զյուբեյր Գյունդուզալփը, Մուսթաֆա Սունգուրը (նուրջուների մեծ մասը հարում է նրան), Մեհմեդ Քուրդօղլուն: Ֆեթուլլահ Գյուլենը Նուրսիի աշակերտներից էր և սկզբնական շրջանում հարում էր Զյուբեյր Գյունդուզալփի շարժմանը, սակայն 1970-ական թթ. Գյուլենի և մյուս ավանդական նուրջուների հայացքները բաժանվեցին, և Գյուլենի հետևորդներն սկսեցին անվանվել ֆեթուլայականներ, «Գյուլենական համայնք» կամ «Հիզմեթ» (թուրք. ծառայություն) շարժում, սակայն հաճախ նրանց բոլորին ընդհանուր կոչում են «նուրջուներ»:

Թուրքիայի հետ և, նույնիսկ, հրաժարվեց անդամակցել ԱՊՀ-ին (Гребенников, 2017), ստեղծվեցին մի շարք թուրք-ազգայնական և իսլամական ենթակառույցներ: Նույն ժամանակահատվածում Ադրբեջանի պետական լեզու հռչակվեց թուրքերենը, ինչպես նաև ակտիվորեն կիրառվում է «ազերի թուրք» եզրույթը՝ շեշտելու համար նույն ազգին պատկանելու գործոնը: Իսկ Հ. Ալիևի իշխանության տարիներին այդ ամենն ստացավ ինստիտուցիոնալ բնույթ՝ տեղավորվելով «Մեկ ազգ՝ երկու պետություն» բանաձևի շրջանակներում, ավելին՝ այն դարձավ Թուրքիա-Ադրբեջան երկկողմ հարաբերությունների ուղղորդող սկզբունքը (Аватков, 2022): Միևնույն ժամանակ, Թուրքիայի ներսում օգտագործվում է «ազգայնական» գործոնը՝ թուրք ժողովրդի մեջ Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի թյուրքախոս ժողովուրդների նկատմամբ ազգակցային-բարեկամական զգացմունքներն ամրապնդելու նպատակով, իսկ 2000-ական թթ. զուգահեռաբար նաև «իսլամական» գործոնը՝ մահմեդական աշխարհում «իսլամական համերաշխության» սկզբունքի համատեքստում Թուրքիայի տարածաշրջանային դիրքի ամրապնդման և քաղաքական հեղինակության աճի նպատակով: Ուստի, տվյալ դեպքում «ազգայնական» և «իսլամական» գործոնների կիրառումը կարելի է դիտել քաղաքագիտության մեջ հայտնի եզրույթի՝ «փափուկ ուժի» համատեքստում (Joseph & Nye, 2005): Հարկ է նշել սակայն, որ Թուրքիայի քաղաքականության տեսանկյունից այդ երկու՝ «ազգայնական» և «իսլամական» գործոնները միմյանցից խիստ տարանջատելը կամ, առավել ևս, հակադրելը ճիշտ չէ, քանի որ շատ դեպքերում դրանք կիրառվել են զուգահեռաբար կամ, նույնիսկ, համատեղ:

Այսպիսով, 1990-ականների սկզբին նկատվեց Թուրքիայի քաղաքականության ակտիվացում Ադրբեջանի նկատմամբ՝ հիմնված լեզվի, կրոնի և մշակույթի միասնության վրա: Միաժամանակ, Թուրքիան չէր կարող անտարբեր մնալ Արցախյան հակամարտության հարցում, քանի որ Ադրբեջանն առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ:

1990-ական թվականների կեսերից Թուրքիայում նոր պան-թյուրքական ոգևորությունն սկսեց անկում ապրել, և գիտակցվեց թյուրքախոս երկրների հետ հարաբերությունների հաստատման համար ավելի արդյունավետ քաղաքական, մշակութային, ռազ-մական և տեխնիկական մեխանիզմների ձևավորման անհրաժեշ-տությունը: Անշուշտ, կարևոր էր նաև այնպիսի գաղափարախո-սության ձևավորումը, որը, զգացմունքային դրսևորումներից զատ, պետք է արտացոլեր ազգային շահերը և լիներ կենսունակ: Այս համատեքստում ձևավորվեց Ադրբեջանի նկատմամբ քաղա-քականությունը, քանի որ Անկարան Ադրբեջանին համարում էր կարևոր ռազմավարական դիրք ունեցող թյուրքական պետութ-յուն՝ դարպաս դեպի Կենտրոնական Ասիա, հնարավոր տնտեսա-կան գործընկեր՝ նավթի հարուստ պաշարներով, և բնական դաշ-նակից՝ Հարավային Կովկասում ռուսական ազդեցությունը սահ-մանափակելու համար (Bölükbaş, 1997):

Ադրբեջանի համար ևս կարևոր էր Թուրքիայի հետ համա-գործակցությունը, ինչը պայմանավորված էր, առաջին հերթին, վտանգի առկայությամբ, երբ Արցախյան առաջին պատերազմում Ադրբեջանը պարտություն կրեց: Ադրբեջանի համար կարևոր խնդիր դարձավ բանակի վերակառուցումը և ՆԱՏՕ-ի հետ համա-գործակցության հաստատումը: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, և միայն նա պատրաստակամություն հայտնեց վերակառուցելու ադրբեջանական բանակը: Կողմերի միջև համագործակցությունն սկսվեց ռազմական կրթության ոլորտում, ապա աստիճանաբար վերածվեց ռազմատեխնիկական համագործակցության:

Այսպիսով, ռազմական ոլորտում համագործակցելով Թուր-քիայի հետ, Ադրբեջանը լուծեց մի շարք խնդիրներ. նախևառաջ կրճատեց ռուսական ռազմական ազդեցությունը՝ միաժամանակ Արցախյան հիմնախնդրում և ռազմատեխնիկական ոլորտում ձեռք բերելով վստահելի դաշնակից և գործընկեր (Մինասյան, 2023): Արդյունքները պաշտոնական Բաքուն արձանագրեց Ար-ցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում:

Թուրքիա–Վրաստան հարաբերությունները 1990-ական թթ.

Հարավկովկասյան տարածաշրջանում Թուրքիայի կարևոր արտաքին գործընկերներից էր նաև Վրաստանը, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոնով. թուրք-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում Վրաստանը դիտվում էր որպես տարանցիկ երկիր, որի տարածքը ծառայելու էր իբրև միջանցք դեպի Ադրբեջան և միջինասիական երկրներ, ինչը կարևոր էր հատկապես Թուրքիա–Հայաստան–Ադրբեջան փակ սահմանների պարագայում (Էվոյան, 2012)։

Վրաստանի անկախությունը Թուրքիան ճանաչել է 1991 թ. նոյեմբերին, սակայն դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են միայն 1992 թ. մայիսին։ Այդ ընթացքում Վրաստանում արդեն տապալվել էր երկրի առաջին նախագահ Զ. Գամսախուրդիայի վարչակազմը և իշխանության էր եկել Էդ. Շևարդնաձեն (Արշակյան, 2009)։ Հիշեցնենք, որ այդ ժամանակաշրջանում Վրաստանում ընթանում էր քաղաքացիական պատերազմ, և երկրում կայունություն հաստատվեց միայն 1992 թ. մարտի իշխանափոխությունից հետո, երբ Էդ. Շևարդնաձեի ղեկավարությամբ ձևավորվեց Պետական խորհուրդ (Szporluk, 1994)։

Թուրքիա–Վրաստան հարաբերությունների ձևավորումը և զարգացումը բխում էր երկու երկրների շահերից։ Պաշտոնական Թբիլիսին Թուրքիային դիտարկում էր որպես կարևոր դաշնակից տարածաշրջանում և նրա միջոցով ձգտում էր դուրս գալ միջազգային շուկա և ապահովել ներդրումներ, որոնք թույլ կտային հակազդելու Վրաստանի տնտեսության վրա Ռուսաստանի ազդեցությանը։ Այլ կերպ ասած, Թուրքիային ներգրավելով տարածաշրջանային գործընթացներում, Վրաստանը փորձում էր Հարավային Կովկասում նվազեցնել Ռուսաստանի դիրքերը։ Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ Թուրքիան հանդիսանում է ՆԱՏՕ-ի անդամ, վերջինիս հետ հարաբերությունների սերտացումը կնպաստեր Վրաստան–ՆԱՏՕ կապերի զարգացմանը (Wennmann, 2006)։

1990-ական թվականների կեսերին Թուրքիային հաջողվեց էապես ամրապնդել իր դիրքերը Վրաստանում, ինչը պայմանավորված էր թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության սերտացմամբ: Միաժամանակ, դրական ազդեցություն ունեցել է նաև այն հանգամանքը, որ Վրաստանը 1990-ական թթ. երկրորդ կեսից ակնհայտորեն արևմտամետ քաղաքականություն էր վարում և ձգտում էր սերտացնելու հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ: Միջազգային զարգացումների, հատկապես 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչության հետևանքով ԱՄՆ-ի ավելի ակտիվ ներգրավածությունը հետխորհրդային տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներում, նույնպես էական դեր խաղաց Վրաստանում Թուրքիայի դիրքերի ամրապնդման համար: Սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո թուրք-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները թևակոխեցին համագործակցության նոր փուլ: Թուրք-վրացական համագործակցության կարևոր արդյունքն էր, որ 2001 թ. Վրաստանի Մառնեուլի քաղաքում Թուրքիայի օժանդակությամբ բացվեց վերազինված ռազմաօդային բազան (Արշակյան, Եղիազարյան, 2013):

Ավելին, այս ժամանակահատվածում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ կարևորվում էր Անկարա-Թբիլիսի-Բաքու եռակողմ համագործակցության ձևաչափը, որն, ի սկզբանե, դրվել էր տնտեսական հիմքերի վրա: Համագործակցությունը հիմնական ընթանում էր երկու ոլորտներում՝ էներգետիկ և տրանսպորտային հաղորդակցության:

1990-ական թվականներին Թուրքիան, օգտագործելով իր աշխարհագրական դիրքը, փորձում էր դառնալ տարածաշրջանում էներգետիկ ուղիների հանգուցային միջանցիկ կենտրոն (Roberts, 2010): Ավելին, Թուրքիան տարանցիկ միջանցք լինելուց բացի, էներգետիկ ռեսուրսներ ներկրելով կկարողանար բավարարել իր երկրի էներգետիկ պահանջարկը: Մինչդեռ Ռուսաստանի Դաշնությունը ցանկանում էր, որ ծրագրված նոր նավթամուղն անցներ արդեն իսկ գոյություն ունեցող Բաքու–Նովոռոսիյսկ գծով, որտեղից ադրբեջանական նավթը թուրքական նեղուցներով կմատա-

կարարվեր Եվրոպային (Каспийский регион, 2023)։ Իսկ Թուրքիան Արևմուտքի աջակցությամբ առաջ քաշեց Ռուսաստանը շրջանցող Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի նախագիծը, ըստ որի՝ կասպյան նավթային ռեսուրսները Ադրբեջանից Վրաստանի տարածքով կտեղափոխվեին Թուրքիա, իսկ այնտեղից էլ՝ համաշխարհային շուկա (Митранян, 2021)։ Իհարկե, վերջին տարբերակը կենսական նշանակություն ուներ Անկարայի համար, քանի որ այդ նախագծի արդյունքում թուրքական Ջեյհանը կդառնար նավթային խոշոր կենտրոն, Թուրքիան կվերահսկեր ադրբեջանական նավթային ռեսուրսները, արդյունքում կամրապնդեր իր դիրքերը Հարավային Կովկասում։ Թուրքիայի առաջարկած ծրագրի իրականացմանն ակտիվ աջակցեց Արևմուտքը, մասնավորապես՝ ԱՄՆ–ն, որի նպատակն էր՝ նվազեցնել տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը (Balcer, 2009)։

1993 թ. հուլիսին Անկարայում Թուրքիայի և Վրաստանի համատեղ տրանսպորտային հանձնաժողովի հանդիպման ընթացքում առաջին անգամ բարձրացվեց Կարս–Թբիլիսի երկաթգծի կառուցման հարցը (Gaudiano, 2007)։ Իսկ ավելի ուշ՝ 2005 թ. մայիսի 25–ին, Բաքվում Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի նախագահներն ստորագրեցին Կարս–Թբիլիսի–Բաքու երկաթգծի կառուցման վերաբերյալ փաստաթուղթը։ Նկատենք, որ եռակողմ տարածաշրջանային բոլոր ծրագրերն իրականացվում էին Հայաստանի շահերի հաշվին (Կարապետյան, 2017), ավելին՝ պաշտոնական Երևանին դուրս էին թողնում այդ ծրագրերից և մեկուսացնում։

Հարավային Կովկասի երեք հանրապետություններից Թուրքիայի համար ամենաբարդը Հայաստանի հետ հարաբերությունների կառուցումն էր։ 1991 թ. Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, սակայն հրաժարվեց հաստատել դիվանագիտական հարաբերություններ՝ իր քայլը պատճառաբանելով ՀՀ Անկախության հռչակագրում Ցեղասպանության և Արևմտյան Հայաստանի վերաբերյալ պահանջատիրությամբ (Անանյան, 2004)։ 1993 թ. Արցախում պատերազմական գործողությունների ընդլայն-

ման պայմաններում, ի նշան Ադրբեջանի հետ համերաշխության, Թուրքիան փակեց ՀՀ հետ սահմանը: Ադրբեջանում առկա էներգետիկ շահերն ու էթնիկ համերաշխությունը, թուրք քաղաքագետ Ա. Գյորգուլուի գնահատմամբ՝ «սահմանափակեցին հայ-ադրբեջանական հակամարտությունում միջնորդելու՝ Թուրքիայի հնարավորությունը» (Görgülü, 2010): Պաշտոնաթող թուրք դեսպան Վ. Վուրալը այդ տարիները Թուրքիայի համար կորսված ժամանակահատված է համարում՝ նշելով, որ Թուրքիան խիզախություն չունեցավ հաստատելու դիվանագիտական հարաբերություններ (Düzel, 2008):

Եթե Հայաստանի հետ հարաբերություններ այդպես էլ չձևավորվեցին, ապա հարավկովկասյան մյուս երկրներում Թուրքիայի հաջողություններն ակնհայտ էին: Նախ, Թուրքիայի ազդեցությունն Ադրբեջանում հիմնականում տարածվում էր պետության կյանքի բազմաթիվ ոլորտների վրա՝ պաշտպանությունից մինչև մշակույթ և սպորտ: Վրաց-թուրքական հարաբերությունները ևս բավականին հաջող ընթացք ունեցան՝ կրթությունից և տնտեսությունից մինչև ռազմատեխնիկական համագործակցություն: Ինչպես վերը նշել ենք, արևմտյան երկրները, հատկապես ԱՄՆ-ը, օգնում էին Թուրքիային՝ ներթափանցել Հարավային Կովկաս՝ փորձելով տարածաշրջանը այդ կերպ Ռուսաստանից կտրել: Դրա առաջին խոշոր արդյունքը գրանցվեց արդեն 1997 թ., երբ Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի և Մոլդովայի մասնակցությամբ ձևավորվեց ՎՈՒԱՄ-ը, որը պետք է ժամանակի ընթացքում հակակշռեր ռուսական ազդեցությամբ հետխորհրդային տարածքում ձևավորված կառույցներին: Կառույցի ձևավորմամբ նոր փուլ թևակոխեց նաև վրաց-ադրբեջանական համագործակցությունը (Կարապետյան, 2017):

Այսպիսով, Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասում ակտիվացան տարածքային հակամարտությունները, որոնք ոչ միայն խաթարեցին տարածաշրջանի անվտանգության մթնոլորտը, այլև կանխորոշեցին տարածաշրջանի երկրների միջև փոխհարաբերությունների հետագա ընթացքը:

Տարածաշրջանում ամրապնդվելու առաջին հաստատուն փորձերն արեց Թուրքիան, որը գրեթե յոթանասուն տարի սպասել էր այդ հնարավորությանը: Առաջին քայլերն ուղղված էին տնտեսական բնույթի կապերի ձևավորմանը, որոնք հետագայում ամուր հիմքեր ստեղծեցին քաղաքական և ռազմական համագործակցության համար: 1990-ական թվականներին մշակվեցին, իսկ 21-րդ դարի մեկնարկին իրագործվեցին էներգետիկ, տրանսպորտային բնույթի մի շարք ծրագրեր, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ «սառը պատերազմից» հետո Թուրքիայի նպատակներից էր՝ վերածվել էներգետիկ կամրջի կամ հանգույցի և ապահովել Կասպից ծովի ավազանի ածխաջրածնային ռեսուրսների տեղափոխումը դեպի եվրոպական շուկաներ: Այս տեսանկյունից կարևոր էր նաև Ադրբեջանի դերը, որը ուներ էներգետիկ հարուստ պաշարներ, որոնք Թուրքիան կարտահաներ արևմուտք, և որոնց կարիքը, ինչպես նշել ենք վերը, ինքն էլ էր զգում: Միաժամանակ, Ադրբեջանի տարածքով Թուրքիան ղազախական նավթը և թուրքմենական գազը ևս կարող էր տեղափոխվել Եվրոպա: Այսինքն, Թուրքիայի համար Ադրբեջանի կարևորությունը պայմանավորված էր աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործոններով, հետևաբար, Ադրբեջանի նկատմամբ քաղաքականությունը դարձավ ավելի համակարգված և նպատակային, ինչը սահմանափակ էր տարածաշրջանային մյուս երկրների դեպքում:

«Արդարություն և զարգացում» կուսակցության արտաքին քաղաքականության շուրջ

2002 թ. նոյեմբերին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում հաղթած «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ) Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում (ԹԱՄԺ) ստացավ տեղերի բացարձակ մեծամասնությունը: Ընտրություններում ԱԶԿ-ի տպավորիչ հաղթանակը բացատրվում է, թերևս, հետևյալ գործոններով.

- Առաջին հերթին, պետք է հաշվի առնել, որ թեև ԱԶԿ-ն իրականում ձևավորվել էր նախկին «Բարօրություն» կուսա-

կցության անդամներից, սակայն Թուրքիայի բնակչության կողմից ընդունվեց իբրև նոր ուժ:

- Երկրորդ, 2001 թ. փետրվարյան տնտեսական ճգնաժամից հետո շատերը նոր ուժի հետ էին կապում երկրի հնարավոր տնտեսական առաջընթացը:
- Երրորդ, ոչ պակաս կարևոր դեր էր խաղում ԱԶԿ-ի առաջնորդի խարիզմատիկ կերպարը: Շատերն անուղղակի քվեարկեցին Ռ.Թ. Էրդողանի օգտին, թեև վերջինս չէր կարող մասնակցել ընտրություններին (Գևորգյան, 2013):

Դիտարկելով ԱԶԿ-ի գաղափարախոսությունը, պետք է մատնանշել, որ այն աջակողմյան եվրասիականության, չափավոր իսլամական ավանդականության և դեպի ԱՄՆ և ԵՄ կողմնորոշման միաձուլում է: Ա. Գևորգյանը, անդրադառնալով այդ կուսակցության պահպանողական գաղափարներին, ընդգծում է, որ սկզբից ևեթ պիտի հիշատակել Էրդողանի 2004 թ. հունվարի 15-ի ելույթը, որտեղ Թուրքիայի վարչապետը նշում էր, որ «Արդարություն և զարգացումը» ձգտում է՝

1. արդիականացման, որը չի մերժում ավանդույթները,
2. համընդհանրության, որը չի մերժում տեղայինը,
3. ռացիոնալության, որը չի մերժում աստվածային իմաստը,
4. փոփոխության, որը չի մերժում արմատները (Գևորգյան, 2013):

Նման զգուշավորությունը, առաջին հերթին, պայմանավորված է թուրքական հասարակական շրջանակներում առկա գաղափարական զգալի բևեռացմամբ: Ուստի, Էրդողանի կարծիքով, Թուրքիային առավել համապատասխան էր «պահպանողական ժողովրդավարությունը» (Аватков, Бадранов, 2013): Փորձելով հակիրճ բնորոշել պահպանողական ժողովրդավարությունը, ռուս հեղինակները հիշատակում են ԱԶԿ նախկին փոխկուսակցապետ, ազգությամբ քուրդ Դենգիր Միր Մեհմեթ Ֆըրաթի ձևակերպումը, թե այն «պահպանողականության ու ժողովրդավարության սինթեզ է, որ կապում է ավանդական թուրքական արժեքները և ևվ-

րոպական պահպանողականության տարրերը» (Аватков, Бадранов, 2013):

Ինչ վերաբերում է ԱԶԿ վարած արտաքին քաղաքականությանը, ապա այն հիմնականում պայմանավորվում էր Ահմեթ Դավութօղլուի անձով (Davutoğlu, 2001): Նրա «ստրատեգիական խորության» տեսությունը ենթադրում էր քաղաքական ուղեգծի բավականին լուրջ փոփոխություններ, որի մասին խոսելիս ինքը՝ Ա. Դավութօղլուն նկարագրել է նախկին Թուրքիայի քաղաքական կերպարը. «Թուրքիան ուներ հզոր բանակ, բայց թույլ տնտեսություն, ինքնավստահության պակաս և ոչ այնքան լավ ստրատեգիական մտածողություն» (Davutoğlu, 2001; Seker, 2009): ԱԶԿ-ի կառավարման տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, թուրքագետ Վ. Տեր-Մաթևոսյանի գնահատմամբ, անհրաժեշտ է դիտարկել «որպես առավելապես նոր մեթոդների կիրառմամբ նախկինում սահմանափակ հաջողություններ արձանագրած տարածաշրջաններում և միջազգային հարթակներում Թուրքիայի ազգային և պետական շահերի նորովի դիրքավորման հետևողական քաղաքականություն» (Տեր-Մաթևոսյան, 2016):

Երկրի նման արտաքին նկարագիրը փոխելու ձգտմամբ պայմանավորված՝ Երկրորդ համաշխարհայինից հետո «արևմտամետ» պիտակը կրող Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ արձանագրվեցին մի շարք փոփոխություններ, որոնք, ըստ Ա. Գևորգյանի՝ ի հայտ եկան հատկապես 2007 թ. ԹԱՄԺ-ում անցկացված նախագահական ընտրություններից հետո (Գևորգյան, 2013):

Ինքը՝ Ա. Դավութօղլուն, առանձնացնում է Թուրքիայի նոր արտաքին քաղաքականության հետևյալ սկզբունքները. երկրի ներսում անվտանգության և ժողովրդավարության համակշռում, «զրո խնդիր հարևանների հետ», պրոակտիվ խաղաղության դիվանագիտություն տարածաշրջանում և դրանից դուրս, կոմպլեմենտարիզմ աշխարհի ուժային բևեռների հետ հարաբերություններում, այսպես կոչված «ռիթմիկ» դիվանագիտություն (Davutoğlu, 2001): Նկատենք, որ վերը նշված բոլոր սկզբունքները հանգամանորեն

վերլուծվել են ինչպես թուրք, այնպես օտարերկրյա միջազգայնագետների, քաղաքագետների և այլ վերլուծաբանների կողմից:

Թուրքիա–Ռուսաստան հարաբերությունները 2002–2020 թթ.

Ա. Դավութօղլուն իր աշխատությունում Ռուսաստանին, ինչպես և Թուրքիային դասում է «կենտրոնական երկրների» շարքին (Davutoğlu, 2001): Ավելին, ԱԶԿ-ն ծրագրում նախատեսվում էր «Ռուսաստանի հետ հարաբերությունները Կենտրոնական Ասիայում և Կովկասում պահպանել համագործակցության, ոչ թե մրցակցության հիման վրա» (Özbay, 2011):

Դեռևս 2001 թ. պաշտոնական Անկարայի և Մոսկվայի միջև ստորագրվել էր Եվրասիայում Թուրքիայի ու Ռուսաստանի միջև համագործակցության վերաբերյալ փաստաթուղթը (MFA, 2001): Սակայն երկկողմ հարաբերությունների զարգացումն սկսեց նկատվել ԱԶԿ-ի կառավարման տարիներին, ինչը զգալիորեն պայմանավորված էր տնտեսական գործոնով: Հատկապես թռիչք ապրեցին երկու երկրների կապերի տնտեսական ցուցանիշները, հիմնականում՝ էներգակիրների առևտրի շնորհիվ: 2003 թ. Ռուսաստանի հետ ընդամենը 6 միլիարդ դոլարի առևտրաշրջանառությունը 2019 թ. դրությամբ հասել էր 26 միլիարդի (Аватков, 2021):

Երկկողմ մերձեցմանը, տնտեսական շահերից բացի, նպաստում էր նաև երկու պետությունների դժգոհությունը՝ Արևմուտքի կողմից իրենց հատկացված միջազգային դերակատարումից: Ելնելով միջազգային հարաբերություններում ինքնուրույնությունը մեծացնելու, Արևմուտքից կախվածությունը նվազեցնելու միտումից, պաշտոնական Անկարան ավելի զգուշավոր էր Արևմուտք–Ռուսաստան հակամարտության մեջ ներքաշվելու հարցում: Անկարայի ինքնուրույն քաղաքական գիծը երբեմն ընկալվում էր որպես ռուս–թուրքական առանցք (Hill & Taspinar, 2006): Այս առանցքի մասին քննարկումներն ավելի խորացան 2008 թ. օգոստոսի ռուս–վրացական պատերազմի ընթացքում Անկարայի առաջարկած «Կովկասյան կայունության ու անվտանգության պլատֆորմի» համատեքստում, որով տարածաշրջանի գերիշխանությունը

վերապահվում էր Թուրքիային ու Ռուսաստանին, իսկ Արևմուտքը դուրս էր թողնվում (Սաֆրաստյան և ուր, 2020)։ Ա. Դավութօղլուն փորձում էր տարածաշրջանում Ռուսաստանի և Թուրքիայի ազդեցության հաստատումը հիմնավորել պատմական և բարոյական պատասխանատվությամբ (Давутоглу, 2010)։ Ըստ ռուս վերլուծաբանների, վերոնշյալ նախաձեռնության հանգամանքը պայմանավորված էր նաև Ռուսաստանի հետ քայլերը համակարգելու և այդ միջոցով Մոսկվայի ազդեցությունը մեղմելու հաշվարկով (Маркедонов, 2008)։ Պատահական չէ, որ 2008 թ. ռուս-վրացական պատերազմի ընթացքում Ռուսաստանը ոչ միայն արգելափակեց թուրքական առևտրային բեռնատարներն իր մաքսակետերում, այլև սպառնաց պատասխանատվության ենթարկել պաշտոնական Անկարային, եթե ՆԱՏՕ-ի նավերը երեք շաբաթից ավելի մնան Սև Ծովում (Jenkins, 2008)։ Թուրքիայի և Ռուսաստանի աշխարհաքաղաքական հակասությունները խորացան՝ Հարավային Կովկասում Թուրքիայի կողմից նոր բաժանարար գծեր ստեղծելու քաղաքականությանը զուգահեռ։ 2010 թ. Հայաստանի և Ադրբեջանի հետ, համապատասխանաբար, Ռուսաստանի և Թուրքիայի ստորագրած ռազմա-քաղաքական պայմանագրերի պայմաններում Մոսկվան և Անկարան հայտնվեցին բաժանարար գծերի հակադիր կողմերում։ Սակայն Թուրքիայի և Ռուսաստանի շահերի բախման միակ տարածաշրջանը Հարավային Կովկասը չէր։ Արաբական գարունից հետո կողմերը հակադիր բևեռներում հայտնվեցին հիմնականում Մերձավոր Արևելքում, իսկ 2014 թ. Ղրիմի անցումը ՌԴ վերահսկողության տակ՝ կտրուկ փոխեց ուժերի հարաբերակցությունը Սև ծովում՝ Ռուսաստանին պատկանող ծովեզրի ընդարձակման շնորհիվ։ Ավելին, նկատենք, որ չնայած պաշտոնական Անկարան պարբերաբար շեշտում էր, որ չի ճանաչում Ղրիմի անցումը ՌԴ-ին, սակայն այդպես էլ չմիացավ վերջինիս դեմ Արևմուտքի պատժամիջոցներին։ Ավելին, թուրքական շատ նավեր նավարկում են դեպի Ղրիմ՝ պատճառ դառնալով Ուկրաինայի հետ տարաձայնությունների (Аватков, Крылов, 2022)։

Երկողմ հարաբերությունների զարգացումը հատկապես խթանում էր էներգետիկ համագործակցությունը. 2020 թ. հունվարին Ստամբուլում Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների մասնակցությամբ տեղի ունեցավ «Թուրքական հոսք» գազամուղի բացումը, որը ռուսական գազը հասցնելու էր Թուրքիա, ապա Եվրոպա՝ շրջանցելով Ուկրաինան (Koylu, 2020): Գազամուղը մի կողմից մեծացնում էր էներգետիկ կենտրոն դառնալու՝ Թուրքիայի հնարավորությունները, մյուս կողմից՝ խորացնում այդ երկրի ռազմավարական կախումը Ռուսաստանից: Չնայած երկու պետությունների խորացող համագործակցությանը, պետք է շեշտել, որ այն ռազմավարական դաշինք չէ: ՌԴ-ն և Թուրքիան շարունակում են մնալ աշխարհաքաղաքական հակառակորդներ Սև ծովում, Հարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում, ուստի, համագործակցությունը կրում է մարտավարական և միջնաժամկետ բնույթ և չի կարող բնութագրվել որպես ռազմավարական դաշինք:

Այսպիսով, կարելի է մատնանշել, որ ԱՋԿ կառավարման առաջին տարիներին Թուրքիան փոխեց Ռուսաստանի հետ ավանդական հակամարտող գիծը՝ նախորդ իշխանությունների օրոք սկիզբ դրված և ԱՋԿ կառավարման շրջանում խորացող էներգետիկ և առևտրատնտեսական համագործակցության շնորհիվ: Մերձեցումը նաև պայմանավորված էր որոշակի պատմական ժամանակահատվածում Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի հետ Թուրքիայի վատթարացած հարաբերություններով: Առաջին տասնամյակի վերջում, սակայն, երկկողմ հարաբերություններում կրկին ասպարեզ եկած աշխարհաքաղաքական լուրջ հակասությունները վկայում են, որ էներգետիկ գործոնն ի զորու չէ կանխելու աշխարհաքաղաքական մրցակցությունը:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում (2002–2020 թթ.)

Ժողովրդականությունը, ներքին և արտաքին քաղաքականության մեջ հաջողությունները, որոնք ԱՋԿ-ն ձեռք էր բերել իր կառավարման տարիներին, սկսում է թուրքական հասարակութ-

յան գիտակցության մեջ ավելի ու ավելի դնել նոր կայսերական մտածողության սկիզբը: Նկատենք, որ 2002 թ. իշխանության եկած ԱԶԿ-ն սկսում է ավելի վճռական արտաքին քաղաքականություն իրականացնել Հարավային Կովկասում: Սակայն, պետք է նկատենք, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության կովկասյան ուղղությունն առանձնակի փոփոխություններ չկրեց ԱԶԿ կառավարման առաջին երկու ժամանակահատվածների տարիներին: Նման իրավիճակը պայմանավորված էր, նախ, այն հանգամանքով, որ տվյալ ժամանակահատվածում Թուրքիան զբաղված էր եվրոպական օրակարգով: Բացի այդ, ինչպես նշում է Ն. Գյոքսելը. «Ի տարբերություն իննսունականների, Թուրքիան այժմ զգուշավոր էր, որ տարածաշրջանային գերիշխանության վերաբերյալ հռետորաբանությունը չգերազանցի կոնկրետ ձեռքբերումները» (Гоксел, 2008): Այսինքն, Թուրքիան փորձում էր Կովկասում չափազանց հավակնոտ չլինել, որպեսզի խուսափի ավելորդ ճնշումներից: Թուրքիայի զգուշավորությունը պայմանավորված էր Ռուսաստանի դերի գիտակցմամբ և վերջինիս հետ զարգացող հարաբերություններով: Այս զգուշավոր քաղաքականության շրջանակում 2004 թ. Անկարան չարձագանքեց Աջարիայի նախագահ Ա. Աբաշիձեի՝ Աջարիայի խնդրին միջամտելու կոչերին (Aydin, 2010): Ինչպես նկատել է Ռ. Սաֆրաստյանը, Հարավային Կովկասում հաստատվել էր աշխարհաառազմավարական զինադադար, սակայն երկու կողմերի միջև հավասարակշռությունը չուներ ավանդույթներ, և բարենպաստ պայմանների առաջացման դեպքում չէր բացառվում, որ կողմերից մեկը կփորձի խախտել այն (Սաֆրաստյան, 2005): Ավելին, 2007 թ. Թուրքիայի նախագահական ընտրությունների հետ կապված ներքաղաքական ճգնաժամի սրման ֆոնին երկրի իշխանությունը մինչև 2008 թվականի վերջը ձեռնպահ մնաց որևէ կտրուկ արտաքին քաղաքական քայլ անելուց, այդ թվում՝ Կովկասում:

Ռուս-վրացական պատերազմը կարելի է համարել տարածաշրջանում Թուրքիայի քաղաքականության ջրբաժանը: 2008 թ. օգոստոսի 11-ին Թուրքիան հանդես եկավ «Կովկասյան դաշինքի»

ստեղծման առաջարկով, որը հետագա երկու օրերին վերանվանվեց, նախ, «Կովկասյան կայունության ֆորում», ապա՝ «Կովկասյան կայունության ու անվտանգության պլատֆորմ» (Mkrtchyan & Petrosyan, 2009): Ինչպես նկատել են հայ վերլուծաբաններ Տ. Մկրտչյանն ու Վ. Պետրոսյանը. «Փաստը, որ երեք օրում գաղափարը երեք անգամ փոխակերպվեց, վկայում է, որ այն դեռևս մշակման ընթացքի մեջ էր ու նախապես մշակված չէր եղել» (Mkrtchyan & Petrosyan, 2009):

Կովկասը միավորելու գաղափարը նոր չէր թուրքական դիվանագիտության համար: 2000 թ. հունվարին Վրաստան այցի ընթացքում Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը հանդես եկավ «Հարավային Կովկասի կայունության պակտի» ստեղծման առաջարկով (Իսրայելյան, 2016): Թուրքիայի նոր իշխանությունների կողմից «պակտի» փոխարինումը «պլատֆորմով»՝ կոչված էր պետությունների ավելի հեշտ մերձեցմանը, քանզի «պլատֆորմի» նպատակը պետությունների միջև վստահության ձևավորումն էր (Իսրայելյան, 2016): Ձևաչափերի տարբերությունից բացի, ուշագրավ է Թուրքիայի նոր նախաձեռնության տարբերությունը Ս. Դեմիրելի առաջարկից: Նրա նախաձեռնության տրամաբանությունն էր՝ Հարավային Կովկասը Թուրքիայի հովանու ներքո կտրել Ռուսաստանից և միացնել առավել լայն Եվրոպային, այսինչ, ԱՋԿ վերնախավի ընկալմամբ, Հարավային Կովկասը Թուրքիայի և Ռուսաստանի ազդեցության գոտին էր, ուր ոչ տարածաշրջանային ուժերին տեղ չէր հատկացվում:

«Պլատֆորմի» վերաբերյալ Հարավային Կովկասի պետությունների դիրքորոշումը հակասական էր: Թեև, ի վերջո, բոլոր երեք ճանաչված պետությունները կողմ արտահայտվեցին նման գաղափարին, սակայն տարածաշրջանային պետություններն ունեին իրենց մտահոգությունները:

Թուրքիայի նախաձեռնած պլատֆորմում հայ-թուրքական կարգավորման գործընթացի նախաձեռնությունը պատկանում էր Հայաստանին: 2008 թ. հունիսի 24-ին Մոսկվայում հայկական համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը ՀՀ նախագահ Ս.

Սարգսյանը Թուրքիայի նախագահ Ա. Գյուլին հրավիրեց Երևան՝ Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը միասին դիտելու (Հովհաննիսյան, 2008): Հայաստանի իշխանություններն ավելի վճռական էին տրամադրված դեպի Եվրոպա տանող սահմանի բացման խնդիրը լուծելու հարցում: Մյուս կողմից, հայկական դիվանագիտությունը խնդիր ուներ նախաձեռնողական քաղաքականության միջոցով Թուրքիային զրկելու ՀՀ-ին ապակառուցողական լինելու մեջ մեղադրելու՝ երկարամյա խաղաքարտից: Միջազգային իրադրությունը ևս նպաստավոր էր: Արևմուտքը նպատակ ուներ հայ-թուրքական սահմանի բացմամբ նվազեցնել Հայաստանում ՌԴ ազդեցությունը: Ռուսաստանն, իր հերթին, նպատակ ուներ իջեցնելու Վրաստանի ռազմավարական կարևորությունը: Այնուամենայնիվ, հայ-թուրքական կարգավորման գործընթացին Ռուսաստանի աջակցությունը միանշանակ չէր (Իսրայելյան, 2016): Ինչպես նկատել է քաղաքագետ Ս. Մարկեդոնովը, բանակցություններին Ռուսաստանի աջակցությունը պայմանավորված էր այն գիտակցությամբ, որ խնդիրը, միևնույն է, չի ավարտվի սահմանի բացմամբ, ուստի պետք չէ լրացուցիչ խոչընդոտել կարգավորման ջանքերին (Маркедонов, 2008):

Թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավում այս հրավերը դրական չընդունվեց: Ա. Գյուլի խորհրդական Ա. Սևերի բնորոշմամբ՝ «Արտաքին գործերի նախարարությունը անվտանգային և, հատկապես, Ադրբեջանի հետ հարաբերությունների նկատառումներից ելնելով, բացասական էր վերաբերում այցին: Գյուլի մերձավոր շրջապատը ևս չէր կողմնորոշվում: Վարչապետ Էրդողանը նույնպես իրեն հեռու էր պահում այդ այցից» (Sever, 2015): Գյուլի դիրքորոշումը հետևյալն էր. «Սա Հայկական հարցը լուծելու և Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու հնարավորություն է: Բացի այդ, այս հրավերով գնդակը հայտնվել է մեր կիսադաշտում, այն չպետք է մնա մեր դաշտում: Անհրաժեշտ է խիզախ լինել: Չեմ կարող մեր առջև խնդիր տեսնելիս ասել՝ եկենք այն թաքցնենք գորգի տակ» (Sever, 2015): Այսպիսով, անձի գործոնը

իր դերակատարումն ունեցավ հայ-թուրքական կարգավորման գործընթացի մեկնարկի հարցում: 2008 թ. սեպտեմբերի 6-ին Թուրքիայի նախագահը պատմության մեջ առաջին անգամ այցելեց Հայաստան և սկիզբ դրվեց «ֆուտբոլային դիվանագիտությանը»:

Թուրքական կողմը Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ քայլեր ձեռնարկելիս հետապնդում էր մի քանի նպատակ: Խորքային պատճառն էր՝ Հարավային Կովկասում ազդեցությունը մեծացնելու ձգտումը: Ինչպես ժամանակը ցույց տվեց, Թուրքիայի վերնախավը նաև չէր հրաժարվում հայ-թուրքական կարգավորման գործընթացը ԼՂ խնդրին կապելուց, սակայն ակնկալում էր այդ շաղկապումը կատարել կարգավորման գործընթացի մեկնարկից հետո՝ հաշվարկելով, այսպես կոչված, զուգահեռ գործընթաց տանել: Այս նախաձեռնության մեջ կար նաև պատեհապաշտություն: ԱՄՆ-ում Բ. Օբամայի ընտրությունը, ով մինչ այդ պաշտպանում էր Հայոց Ցեղասպանության դատապարտումը, մեծացրել էր ԱՄՆ նախագահի կողմից «ցեղասպանություն» եզրի օգտագործման հավանականությունը, ուստի, Անկարայում հաշվարկում էին, որ գործընթացի մեկնարկով կկասեցվի Ցեղասպանության ճանաչման արշավը: Բացի այդ, Հայաստանի հետ հարաբերությունները մնում էին գլխավոր ուղղությունը, որտեղ Ա. Դավութօղլուի՝ հարևանների հետ զրո խնդիր ունենալու սկզբունքը գործնականում չէր իրականանում և ազդում էր նաև Թուրքիայի կողմից հռչակված «տեսլականի վրա հիմնված» քաղաքականության հեղինակության վրա (Görgülü, Iskandaryan, Minasyan, 2010): Թուրքական կողմն ակնկալում էր նաև հարաբերությունների կարգավորման մեկնարկով առաջընթաց ապահովել ԵՄ հետ դանդաղեցված բանակցություններում: Ինչպես կարելի է նկատել, գործընթացի մեկնարկը զգալիորեն պայմանավորված էր նախագահ Ա. Գյուլի ու ԱԳ նախարար Ա. Բաբաջանի մոտեցումից, որոնք, ունենալով տնտեսագետի անցյալ, միջպետական հարաբերությունները դիտարկում էին պրագմատիկ դաշտում: Շվեյցարիայի միջնորդությամբ կայացած բանակցությունների արդյունքում՝ Հայաստանի և Թուրքիայի ԱԳ նախարարներ Է.

Նալբանդյանի և Ա. Դավութօղլուի կողմից դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և զարգացնելու մասին երկու արձանագրություններն ստորագրվեցին 2009 թ. հոկտեմբերի 10-ին՝ Ցյուրիխում (արձանագրությունների ստորագրմանը նախորդել էին 2009 թ. ապրիլի 22-ի «ճանապարհային քարտեզի» հրապարակումը, ապա և 2009 թ. օգոստոսի 31-ին՝ դրանց նախաստորագրումը) (Սաֆրաստյան և ուր., 2020):

Ա. Դավութօղլուն 2009 թ. հոկտեմբերին խորհրդարանում ելույթի ժամանակ արձանագրությունները ներկայացրեց որպես դիվանագիտական հաղթանակ, որը լուծում է Թուրքիայի առջև ծառացած երեք հիմնական խնդիրները՝ հայ-թուրքական սահմանի ճանաչումը, պատմության խնդիրների հանձնաժողովի ստեղծումը ու Լեռնային Ղարաբաղի հարցում առաջընթացի ապահովումը (Phillips, 2015): Իրադարձությունների հետագա ընթացքը վեր հանեց Թուրքիայի սխալ հաշվարկները:

Թուրքական կողմի առաջին սխալ հաշվարկը կապված էր կարգավորման գործընթացը ԼՂ խնդրի հետ շաղկապելու հետ: 2009 թ. ապրիլից Ադրբեջանն սկսեց դեմարշ Թուրքիայի դեմ՝ ՀՀ հետ հարաբերությունները կարգավորելու պատճառով: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հրաժարվեց մասնակցել ապրիլի 6–7-ը Ստամբուլում Քաղաքակրթությունների դաշինքի հանդիպմանը՝ դրա փոխարեն մեկնելով Մոսկվա (Russia today, 2009): Ապրիլի 22-ին ՀՀ և Թուրքիայի միջև «ճանապարհային քարտեզի» հրապարակվելուց մի քանի օր անց Ադրբեջանի պետական նավթային ընկերության նախագահ Ռովնագ Աբդուլաևը հայտնեց, որ Թուրքիային գազ մատակարարելու մասին պայմանագիրն արդեն սպառված է, և նոր գնի սահմանման շուրջ բանակցություններն ընթացքի մեջ են (Իսրայելյան, 2016): Թուրքիան, ճնշմանն ի պատասխան՝ ստիպված էր քայլեր ձեռնարկել՝ Ադրբեջանի կողմից հակաթուրքական քայլերը բացառելու համար: 2009 թ. մայիսի 13-ին Բաքու այցելած Թուրքիայի վարչապետ Էրդողանն Ադրբեջանի խորհրդարանում խոստացավ. «Մինչև Ղարաբաղի գրավմանը վերջ չդրվի, սահմանները չեն բացվելու» (Hurriyet, 2009):

Ինչպես պարզվեց հետագայում, Թուրքիան գերագնահատել էր իր ազդեցությունը պաշտոնական Բաքվի վրա: 2009 թ. հոկտեմբերի 16-ին՝ Հայաստանի և Թուրքիայի միջև արձանագրությունների ստորագրումից օրեր անց, Ադրբեջանի նախագահը հայտարարեց, որ Թուրքիան միջազգայինից երեք անգամ էժան գին է վճարում գազի համար, որն անտրամաբանական է: Ալիևը նշեց, որ Ադրբեջանը մտադիր է բազմազանեցնել գազի արտահանման ուղիները՝ իբրև տարբերակներ ակնարկելով Ռուսաստանը, Իրանը, Եվրամիությունը (RFERL, 2009): Էներգակիրների հարցում Անկարայի վրա բանեցրած ճնշումից զատ, Ադրբեջանը նաև քայլեր կատարեց Թուրքիայի ներսում հակազդեցության մեծացման ուղղությամբ՝ ստանալով ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական և «Ազգայնական շարժում» կուսակցությունների աջակցությունը (Today's Zaman, 2009):

Հայկական նախաձեռնության անհաջողությունը վերջնականապես ի չիք դարձրեց նաև «Կովկասյան կայունության և անվտանգության պլատֆորմի» ստեղծման հնարավորությունը: Հատկանշական է թուրք քաղաքագետ Բ. Օրանի այն բնորոշումը, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացի տապալումը Թուրքիայի՝ հարևանների հետ զրո խնդիր ունենալու սկզբունքի ձախողման ամենավառ օրինակն է (Oran, 2013): Թուրքիայի հաշվարկները՝ կապված Հարավային Կովկասում սեփական ազդեցությունը հայ-թուրքական կարգավորման գործընթացին զուգահեռ ղարաբաղյան կարգավորման խնդրում միջնորդելով ամրապնդելու հետ, ևս հաջողություն չունեցան:

Այսպիսով, «Ֆուտբոլային դիվանագիտությունը» տապալվեց Թուրքիայի կողմից: Այն սկսվեց Թուրքիայի քաղաքական վերնախավի կառուցողական հատվածի կողմից ՀՀ դիվանագիտական նախաձեռնությանը արձագանքելով և ընթացավ միջազգային միջնորդների ինտենսիվ աջակցությամբ: «Ֆուտբոլային դիվանագիտությունը» ցույց տվեց, որ ռազմավարական առումով Թուրքիայի կախումը Ադրբեջանից՝ սպասվածից վեր է: Անկարան, փաստորեն, չկարողացավ կառավարել Բաքվի արձագանքը:

Մյուս կողմից, Ցեղասպանությունը չվիճարկելու՝ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմանը Թուրքիայի արձագանքը ի ցույց դրեց, որ Մնկարայի նպատակների մեջ առաջնային տեղ էր գրավում Ցեղասպանության հարցի չեզոքացումը: Այս գործընթացում առաջնային դերակատարում ունեցող Գյուլն ու Բաբաջանը, ի վերջո, աստիճանաբար կորցրին իրենց ազդեցությունը Թուրքիայի քաղաքական վերնախավում: ԵՄ անդամակցության գործընթացի խցանումը, Թուրքիայում ավտորիտարիզմի վերելքը, Ադրբեջանի հետ նոր մակարդակի հարաբերությունները, հանգեցրին Հայաստանի հանդեպ Թուրքիայի դիրքորոշման կոշտացման՝ անգամ հայեցակարգային մակարդակում: 2011 թ. կառավարության ծրագրային դրույթներում, ինչպես և «Թիրախ 2023» տեսլականում ամրագրվեց, որ Թուրքիան շարունակելու է Լեռնային Ղարաբաղի «գրավմանը» վերջ դնելուն ուղղված իր ջանքերը (TCCB, 2023): ՀՀ հետ հարաբերությունների կարգավորումը ԱԶԿ-ն կապում էր Ղարաբաղի խնդիրը լուծելու և «Ցեղասպանության անհիմն պնդումներին» վերջ դնելու հետ (TCCB, 2023):

Հարավային Կովկասում Թուրքիայի առաջնահերթությունը էներգետիկ ոլորտում էր և, «դարի նախագծի» իրականացմանը՝ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան խողովակաշարի կառուցմանը, այդ երկրի մասնակցությունը կարևոր դեր խաղաց: Եռակողմ՝ Թուրքիա–Վրաստան–Ադրբեջան համագործակցությունը նոր փուլ մտավ 2006 թվականին՝ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի բացումից հետո: 2007 թ. փետրվարի 27-ին Թբիլիսիում Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի արտգործնախարարներն ստորագրեցին Թբիլիսյան հռչակագիրը: Վրաստանի մայրաքաղաքում հավաքվելու առիթը Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթգծի շինարարության մեկնարկի պայմանագիրն էր: Սակայն կնքված փաստաթուղթը վերաբերում էր տարածաշրջանում երեք երկրների ռազմավարական համագործակցության քաղաքական դիրքորոշմանը:

Բացի այդ, նկատենք, որ ԱԶԿ կառավարման շրջանում չափազանց ուշագրավ զարգացում էր Թուրքիայի վրա Ադրբեջանի ազդեցության մեծացումը: 2008–2012 թթ. Ադրբեջանի պետական

նավթային ընկերության մասնաճյուղի՝ SOCAR Türkiye Enerji-ի միջոցով Թուրքիայի միակ խոշոր նավթաքիմիական ընկերության՝ «Փետքիմ»-ի բաժնետոմսերի 61 %-ը ձեռք բերելով՝ պաշտոնական Բաքուն պլանավորում էր ներդնել 7 միլիարդ դոլար՝ «Փետքիմ-ի կարողությունները զարգացնելու, նոր նավթազտարան կառուցելու համար (Socar, 2012): 2012 թ. հունիսին ստորագրված Տրանսանատոլիական գազամուղի կառուցման վերաբերյալ պայմանագիրն ադրբեջանական Շահ Դենիզ հանքավայրից Վրաստանի և Թուրքիայի տարածքով նախատեսում էր գազ մատակարարել դեպի Եվրոպա (Natural gas, 2014): Այսպիսով, 17 միլիարդ դոլարի հասնող ներդրումների ծավալով Ադրբեջանը դարձել էր Թուրքիայում խոշորագույն ներդրում կատարող պետությունը: Այս հանգամանքը նշանավորում է, որ Ադրբեջանը վերածվել էր կարևոր դերակատարի, որը լուրջ լծակներ ուներ Թուրքիայի վրա: Հատկանշական է թուրք պաշտոնաթող դեսպան Վ. Վուրալի բնորոշումը, թե Ադրբեջանն արդեն ավելի շատ լծակներ ունի Թուրքիայի վրա, քան հակառակը (Yinanç, 2014):

Ինչպես վերը նշել ենք, 2008 թ. վրաց-հարավօսական պատերազմից անմիջապես հետո Թուրքիան առաջ քաշեց Կովկասում անվտանգության և համագործակցության պլատֆորմի ստեղծման գաղափարը: Նախատեսվում էր դրա մեջ ներառել Հարավային Կովկասի երեք երկրները, Թուրքիան և Ռուսաստանը: Նպատակը՝ ստեղծել երկխոսության հարթակ տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման համար: Թեև առաջարկ ստացած երկրներից և ոչ մեկը չառարկեց, սակայն այս պլանը շուտով սառեցվեց: Հիմնական բացն այն էր, որ տարածաշրջանի փաստացի գոյություն ունեցող երկրների համար մասնակցության որևէ ձևաչափ չէր նախատեսվում, մինչդեռ նրանց մասնակցությունը կբարձրացներ նախատեսվող ձևաչափի արդյունավետությունը:

Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմի տապալումից հետո Թուրքիան նախաձեռնեց համագործակցության նոր ձևաչափեր՝ Թուրքիա-Իրան-Ադրբեջան և Թուրքիա-

Վրաստան-Ադրբեջան եռակողմ մեխանիզմների ձևով, որով կրկին մեկուսացնում էին ՀՀ-ին: 2011 թ. ապրիլի 16-ին Իրանի Ուրմիա քաղաքում հիմք դրված Թուրքիա-Իրան-Ադրբեջան մեխանիզմը հռչակում էր եռակողմ տնտեսական ծրագրեր զարգացնելու պատրաստակամությունը. այդ նպատակով ստեղծվել էր եռակողմ տնտեսական կոմիտե (Trend, 2011): Հաջորդ եռակողմ հանդիպումը, որը տեղի ունեցավ 2012 թ. մարտին՝ Ադրբեջանում, ընդունեց Արցախի վերաբերյալ լիովին ադրբեջանամետ ձևակերպում, որը նախատեսում էր խնդրի արագ կարգավորում՝ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության հիման վրա և միջազգայնորեն ճանաչված սահմաններում (MFA, 2012a): Հռչակագիրը նաև նախատեսում էր ուսումնասիրել Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին Նախիջևան-Ձուղա-Թավրիզ երկաթգծին կապելու հնարավորությունը, որը ևս դիտարկվում էր ՀՀ շրջափակումն ամրապնդելու համատեքստում (MFA, 2012a):

2010 թ. սեպտեմբերի 16-ին Բաքվում Թայիփ Էրդողանի ու Իլհամ Ալիևի միջև ստորագրվեց նաև Թուրքիայի ու Ադրբեջանի միջև Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհուրդ ստեղծելու մասին պայմանագիրը (World bullet, 2010): Այս պայմանագիրն ինստիտուցիոնալացրեց Թուրքիայի և Ադրբեջանի ռազմավարական դաշինքը:

2012 թ. հունիսի 8-ին Տրապիզոնում երեք երկրների արտգործնախարարները ստորագրեցին Տրապիզոնի հռչակագիրը, որն ուղղված էր էներգետիկ, տրանսպորտի ու տուրիզմի ոլորտներում համագործակցությանը (Hurriyet, 2012): Փաստաթուղթը ենթադրում էր.

- միջազգային կազմակերպություններում միասնական և միմյանց աջակցելու քաղաքականություն,
- համագործակցություն Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հիմնախնդիրների կարգավորման հարցում՝ հիմք ընդունելով Ադրբեջանի և Վրաստանի՝ միջազգայնորեն ընդունված սահմանները,

- բոլոր, հատկապես տնտեսական ոլորտներում համագործակցության հետագա զարգացման խթանում,
- ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շուրջ համատեղ աշխատանքի շարունակում, որի արդի փուլը ներառում է Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթգիծը,
- Բաքվի միջազգային ծովային առևտրի նոր նավահանգստի կառուցման նախագծի հաստատում, որը կդառնար հաջորդ կարևոր կապող օղակը արևելք–արևմուտք տրանսպորտային միջանցքում (Trabzon Declaration, 2012):

Ըստ Ա. Դավութօղլուի, Բաքու–Թբիլիսի–Ջեյհան, Բաքու–Թբիլիսի–Կարս եռակողմ նախագծերին այլ կարևոր նախագծեր գումարելու և Կասպից, Սև և Միջերկրական ծովերն իրար կապելուն ուղղված մեծ նախագիծ է Տրապիզոնի հռչակագիրը (Trabzon Declaration, 2012): Սա եռակողմ առաջին պաշտոնական նման փաստաթուղթն է, որը համարժեք է ռազմավարական փաստաթղթի: Տրապիզոնի հռչակագրով, փաստորեն, եռակողմ տնտեսական համագործակցությունը դրվեց նոր հարթության վրա՝ ամրապնդվելով քաղաքական համագործակցության բավականին բարձր մակարդակի փաստաթղթով: Այս եռակողմ մեխանիզմը ևս ՀՀ դեմ ուղղվածություն ունի, քանզի Հայաստանը դուրս թողնելուց բացի, բոլոր նման հռչակագրերը Արցախյան խնդրին անդրադառնում են լիովին ադրբեջանամետ դիրքերից (MFA, 2012b): Թուրքիան շահագրգիռ է նաև մեխանիզմի ռազմական բաղադրիչը զարգացնելու հարցում. 2012-ից Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի միջև անցկացվում են ամենամյա զորավարժություններ (World view, 2013): 2017 թ. գործի դրվեց նաև Թուրքիա–Ադրբեջան–Պակիստան եռակողմ մեխանիզմը, որն ունի հատկապես ռազմական համագործակցության խորացման մեծ հեռանկար, և որը կարելի է որակել որպես ռազմավարական երկարատև մարտահրավեր Հայաստանի համար (Pakistan today, 2017):

Եռակողմ ձևաչափով ռազմական համագործակցությունն առավել ակտիվ փուլ մտավ 2014 թ. օգոստոսին պաշտպանության նախարարների մակարդակով Նախիջևանում կայացած հանդի-

պումից հետո: 2015 թ. մայիսի 4-ին Անկարայում երեք երկրների զինված ուժերի ղեկավարների հանդիպման ընթացքում քննարկվել է երկաթուղային գծերի և էներգակիրների մատակարարման ենթակառուցվածքների անվտանգության հարցը: Ստորագրված արձանագրությամբ որոշվել է ստեղծել երեք երկրների զինված ուժերի միացյալ խումբ: 2015 թ. վերջին ռուս-թուրքական հարաբերությունների սրման ֆոնին, դեկտեմբերի 17-ին Ստամբուլում կայացել է երեք երկրների պաշտպանության նախարարների հերթական հանդիպումը, որտեղ հիմնական շեշտը դրված էր պաշտպանական անվտանգության և զինված ուժերի արդիականացման հարցերի վրա: Եթե նախկինում Թուրքիան խուսափում էր բարձրաձայն խոսել Աբխազիայի և Հարավային Օսիայի պատկանելության հարցում իր դիրքորոշման մասին, ապա այդ ժամանակահատվածում դա անում էր հատուկ շեշտադրումով: 2016 թ. փետրվարի 19-ին Թբիլիսիում արտգործնախարարների եռակողմ հանդիպման ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Մ. Չավուշօղլուն հայտարարեց, որ Աբխազիան և Հարավային Օսիան Վրաստանի, իսկ Ղարաբաղը՝ Ադրբեջանի տարածք են (Կարապետյան, 2017): Մի քանի անգամ հետաձգվելուց հետո, 2016 թ. ավարտին նախատեսվում էր նաև կատարել Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի բացումը, որը տեղի ունեցավ 2017 թ.:

Միևնույն ժամանակ, 2017 թվականից հետո ԵՄ-ի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև սկսվեց «տրանսպորտային» դիվանագիտության նոր փուլ, որը ներառում էր Հարավային գազային միջանցքի կառուցման ավարտը, որով Ադրբեջանը պետք է Թուրքիայի տարածքով միանար Հարավային Եվրոպայի երկրների հետ (Айвазян, 2018): 2018 թ. հունիսի 12-ին շահագործման հանձնվեց Անդրանատոլիական գազատարը (TANAP): Ընդ որում, Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանի խնդրանքով Ադրբեջանը TANAP-ի բացումն իրականացրեց սահմանված ժամկետից ավելի շուտ՝ հունիսի 24-ին՝ Թուրքիայում նշանակված արտահերթ խորհրդարանական և նախագահական չափազանց կարևոր ընտրություններից առաջ (Akşam, 2018): Ստացվում էր, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ

Ալիևն, այդպիսով, նպաստում էր Թուրքիայի նախագահի թեկնածու Ռ. Էրդողանի իմիջի բարձրացմանը և հավելյալ քվեներ ստանալուն: Ավելին, 2020 թ. նոյեմբերի 15-ին շահագործման հանձնվեց Անդրադրիատիկ գազատարը: Այս նախագիծը վերածվեց չիրականացված Nabucco-ի[2] կրճատ տարբերակին և դարձավ կարևոր քաղաքական իրադարձություն ադրբեջանա-թուրքական տնտեսական և ռազմաքաղաքական միության ամրապնդման համատեքստում (Neftegaz, 2016):

Ավելին 2020 թ. Թուրքիայի հռետորաբանության մեջ փոփոխություններ նկատվեցին, հատկապես եթե համեմատենք 2016 թ. Արցախի ապրիլյան պատերազմի և 2020 թ. հուլիսի տավուշյան մարտերի ընթացքում արված հայտարարությունները: 2016 թ. Ադրբեջանին անվերապահ աջակցության հետ մեկտեղ, Թուրքիան պահպանեց դիվանագիտական քաղաքական կոռեկտությունը Հայաստանի նկատմամբ, իսկ հիմնական քաղաքական նպատակը արցախյան կարգավորման բանակցային ձևաչափի փոփոխությունն ու այդ գործընթացում Անկարային ներգրավելն էր: Մինչդեռ 2020 թ. թուրքական կողմի՝ էականորեն տարբերվող արձագանքը խոսում է այն մասին, որ վերափոխվել էր Թուրքիայի դերը տարածաշրջանում:

2016 թվականին Թուրքիան արմատապես տարբերվում էր 2020 թվականի Թուրքիայից: Նախ, 2016 թ. ապրիլին Թուրքիան դեռ նախագահական երկիր չէր, և Ռեջեփ Թայիփ Էրդողանի անսահմանափակ իշխանությունը ամրագրված չէր օրենքով: Բացի այդ, 2015 թվականին ռուսական Սու-24-ի խոցումից հետո Անկարա-Մոսկվա լարված հարաբերությունները դեռ չէին կարգավորվել: Մինչդեռ 2016 թվականից հետո Արևմուտքը բավարար քայլեր չի ձեռնարկել Թուրքիայի տարածաշրջանային գործողությունները զսպելու ուղղությամբ: Ուժերի այս հարաբերակցությունը, ըստ

[2] Նաբուկո (Nabucco) գազամուղի կառուցումով նախատեսված էր Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների գազը մատակարարել Եվրոպական երկրներին: Այս գազամուղը անցնելու էր Թուրքիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Բելգիայի և Ավստրիայի տարածքով՝ շրջանցելով Ռուսաստանը:

թուրքական կողմի, նրան ազատ գործելու հնարավորություն է տվել, ինչով էլ պայմանավորված էին Հարավային Կովկասում իր դերն ուժեղացնելու՝ Թուրքիայի ձգտումները:

Այսպիսով, Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության հիմքում ընկած էր համագործակցության ինտեգրացիոն մոդելը՝ դրան բնորոշ թուրքական առանձնահատկություններով, որն իր գոյության տարբեր ժամանակաշրջաններում ենթարկվել է փոխակերպումների՝ ուղղակիորեն կախված արտաքին, ինչպես նաև ներքին քաղաքական իրողություններից. քաղաքական մթնոլորտ, որը տիրում էր հետխորհրդային գործընկեր պետությունների տարածքներում:

Այս առումով տեղին է թվում առանձնացնել հետխորհրդային տարածքի հետ Թուրքիայի փոխգործակցության երեք հիմնական փուլերը.

1) 1991–2002 թթ.՝ «հույսի դարաշրջան». ակտիվ աշխատանք բոլոր ոլորտներում ջանքերը համատեղելու համար ինտեգրացիոն հարթակներ ստեղծելու ուղղությամբ:

2) 2002–2014 թթ. «փուլերի դարաշրջան». համակարգված ինտեգրում և ազդեցություն տեղական քաղաքական էլիտայի վրա:

3) 2014 – մինչ օրս – «թյուրքական ինտեգրման դարաշրջան». ժամանակ, երբ Անկարան դառնում է «հանգույց»՝ օգտագործելով ազդեցության կուտակված ռեսուրսները:

Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ Արցախյան 44-օրյա պատերազմից հետո

2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով Թուրքիայի Հանրապետությունը զգալիորեն ամրապնդել է իր դիրքերը Հարավային Կովկասում:

Այս հակամարտությունը դադարել է լինել բացառապես տարածաշրջանային էթնոքաղաքական առճակատում՝ կապված Խորհրդային Միության փլուզման հետևանքների հետ: Անկարա-Բաքու ռազմավարական կապը, որը ձևավորվել էր 1990-ական թթ. սկզբին, զգալի ամրապնդվել է: Ընդլայնվել են ադրբեջանա-

թուրքական համատեղ ճնշման հնարավորությունները Հայաստանի վրա՝ ռազմաքաղաքական և դիվանագիտական գծով, ինչպես նաև Վրաստանի վրա՝ տնտեսական համագործակցության ոլորտում:

2020 թ. աշնանը Արցախում ռազմական գործողությունները և դրանցում Թուրքիայի աննախադեպ ներգրավվածությունը փոխեցին Հարավային Կովկասում ընթացող գործընթացներում ներգրավված գրեթե բոլոր խաղացողների խաղաքարտերը (Հովսեփյան, 2022): Պաշտոնական Անկարան, մի կողմից, մարտահրավեր է նետում Ռուսաստանի ղեկավարությանը թե՛ տարածաշրջանում, թե՛ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Բայց, մյուս կողմից, Թուրքիայի գործողությունները դրդված էին ոչ թե ՆԱՏՕ-ին անդամակցությամբ, այլ ազգային շահերով: Ավելին, դրանք մեծապես հակասում էին ԱՄՆ-ի և Թուրքիայի դաշնակիցների մոտեցումներին: Արցախյան պատերազմը լրացուցիչ շարժիչ դարձավ Փարիզի և Անկարայի հարաբերությունների վատթարացման համար: Միևնույն ժամանակ, Հարավային Կովկասում ռուսական և թուրքական ռազմական ներկայության միաժամանակյա ուժեղացումը, Ռուսաստանի և Թուրքիայի միջև համագործակցության հավանականությունը մտահոգում են ԱՄՆ-ին: Մինչդեռ Հարավային Կովկասի երկու խոշոր տարածաշրջանային տերությունների՝ Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների զարգացումը, ռուս վերլուծաբան Վ.Ավատկովի գնահատմամբ, մի կողմից մրցակցային են, մյուս՝ կողմից՝ համագործակցային, քանի որ մի ոլորտում առկա տարաձայնությունները հաճախ հավասարակշվում են մեկ այլ ասպարեզում կողմերի միջև համագործակցությամբ: Վերլուծաբանը քիչ հավանական է համարում Մոսկվայի և Անկարայի միջև ուղիղ բախման հնարավորությունը, քանի որ, ըստ նրա, կողմերը կարողանում են հարթել տարաձայնությունները (Ավատկով, 2022):

Բացի այդ, Հարավային Կովկասում Անկարայի դիրքերի ամրապնդումը ավելի մեծ հնարավորություններ է բացում նրա համար՝ Կասպից ծովի և սևծովյան տարածաշրջանում ինչպես քա-

ղաքական, այնպես էլ տնտեսական ազդեցությունը մեծացնելու համար: Ուկրաինայի հետ ռազմատեխնիկական համագործակցության ընդլայնումը նախկին Խորհրդային Միության տարածքում թուրքական ներթափանցման ամենաակնառու հետևանքներից մեկն է: Անկարայի և Բաքվի միջև ռազմավարական համագործակցության աճը Թուրքիային փաստացի դարձրեց մեկ այլ կասպյան տերություն, որը շահագրգռված է՝ ընդլայնել կապերը Կենտրոնական Ասիայի երկրների (հատկապես Ղազախստանի և Թուրքմենստանի) հետ, ինչը մարտահրավեր է ԻԻՀ-ին:

Միևնույն ժամանակ, հակառուսական պատժամիջոցներին միանալու հարցում ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի դժկամությունը, դեռ մի բան էլ ավելի՝ Ռուսաստանի Դաշնության հետ համատեղ գազային հանգույց բացելու պատրաստակամությունը Անկարային դարձրեց Մոսկվայի բարդ, բայց կարևոր գործընկերը Եվրասիայում, և այստեղ կարևորվում էր Հարավային Կովկասը: Արցախյան 44-օրյա ռազմական գործողությունների դադարից հետո երկու երկրներն էլ ուժեղացնում էին իրենց ռազմական ներկայությունը (ռուս խաղաղապահները՝ Ղարաբաղում, թուրք զինվորականները՝ Ադրբեջանում, համատեղ մոնիտորինգի կենտրոնը՝ Աղդամում):

Լեռնային Ղարաբաղի շուրջ իրավիճակն սկսեց վատթարանալ այն բանից հետո, երբ 2023 թվականի գարնանը ադրբեջանական կողմը փակեց Լաչինի միջանցքը՝ Ղարաբաղը և Հայաստանը կապող միակ տրանսպորտային ուղին, և այնտեղ պաշտոնական անցակետ հիմնեց, ինչը ահռելի դժվարություններ ստեղծեց՝ կապված Հայաստանից հումանիտար օգնության առաքման հետ:

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը հայտարարեց Լեռնային Ղարաբաղում «հակաահաբեկչական միջոցառումների» մեկնարկի մասին՝ «սահմանադրական կարգը վերականգնելու» պատրվակով: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 20-ին, ռուս խաղաղապահների միջնորդությամբ կողմերի միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց Ադրբեջանի պայմաններով տարածաշրջանում զինադադարի մասին, որը պահանջում էր չճանաչված բանակի

ամբողջական զինաթափում և հայկական զինտեխնիկայի ու ռազմական անձնակազմի դուրսբերում տարածաշրջանից:

Սեպտեմբերի 25-ին Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը նույն օրը մեկօրյա այցով Նախիջևան ժամանած Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանի հետ բանակցություններից հետո հայտարարեց, որ «հինգ օր առաջ երկիրը լիովին վերականգնեց իր ինքնիշխանությունը», որը «ևս մեկ անգամ հաստատեց Բաքվի դիրքերի անպարտելիությունը, որը ապահովվեց ոչ առանց եղբայրական Անկարայի աջակցության» (BBC, 2023):

Բացի այդ, պետք է նկատել, որ վերջին տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքականությունում նկատելի է նախագահ Ռ. Թ. Էրդողանի հավակնությունների մեծացումը: Նա առաջ է քաշում Թուրքիայի գլխավորությամբ «թուրքակենտրոն» միության ստեղծման տեսլականը՝ Թյուրքական պետությունների կազմակերպությունը (Turkic states, 2021): Այս ծրագրերի ակտիվ քննարկումներն սկսվել են Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, երբ Թուրքիայի անմիջական ռազմական աջակցությամբ և մասնակցությամբ Ադրբեջանը հաղթանակ է գրանցել: Ըստ Էրդողանի, «մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքը Ադրբեջանի հետ համերաշխության հիմնական փիլիսոփայությունն է: Նրա գնահատմամբ, երկու պետությունների միջև գոյություն ունեցող միասնությունն ու համերաշխությունը հիմք են հանդիսացել «Ղարաբաղի ազատագրման» համար (Daily sabah, 2020): Դա ևս մեկ անգամ վկայում է, որ պաշտոնական Անկարան, 2020 թ. Արցախյան պատերազմում ռազմական ներգրավվածությամբ, փորձում է մեծացնել իր ազդեցությունը Հարավային Կովկասում, ինչը կարող է հանգեցնել Թուրքիայից Ադրբեջանի ավելի մեծ կախվածության, քան Ռուսաստանից: Բացի այդ, նկատենք, որ 2024 թ. հուլիսի 28-ին Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը, սպառնալով Իսրայելին, հայտարարել է, որ Թուրքիան կարող է մտնել իրենց երկիր՝ «ինչպես մտավ Լիբիա և Ղարաբաղ» (Jpost, 2024):

Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները Արցախյան 44-օրյա պատերազմից հետո

Թուրքիան ակտիվորեն մասնակցել է և շարունակում է անմիջական մասնակցություն ունենալ Ադրբեջանի զինված ուժերի կազմավորման և հզորացման գործընթացին: Ներկայումս Թուրքիան Ադրբեջանին զենքի գլխավոր մատակարարներից է, ավելին՝ թուրք-ադրբեջանական հարաբերությունները ռազմաքաղաքական ոլորտում ավելի խորն են: Ադրբեջանցի զինվորականները վերապատրաստվում են Թուրքիայի ռազմական ուսումնական հաստատություններում: Երկու երկրները նաև ծրագրեր են իրականացնում՝ համատեղ ուժերով ռազմական տեխնիկայի արտադրության համար: Թուրք ռազմական խորհրդականները մշտապես տեղակայված են ադրբեջանական բանակում: Չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանը խորացնում է ռազմատեխնիկական համագործակցությունը այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Իսրայելը և Բելառուսը, սակայն ռազմական ոլորտում Անկարայի հետ Բաքվի հարաբերությունները առանձնահատուկ նշանակություն ունեն Ադրբեջանի համար:

Ավելին, կովկասյան տարածաշրջանում կարևոր դեր խաղալով՝ Անկարան փորձում է ԱՄՆ-ին և Եվրոպային ապացուցել, որ տարածաշրջանային խնդիրները չեն կարող լուծվել՝ առանց Թուրքիային հաշվի առնելու: Թուրքիայի միջամտությամբ Հարավային Կովկասում փոխվեց ստատուս-քվոն (Dadparvar, Azizi, 2020), երբ Ռուսաստանի ազդեցության թուլացման պայմաններում Թուրքիան ներգրավվեց այստեղ տեղի ունեցող գործընթացներում: Ադրբեջանին Անկարայի աջակցությունը Թուրքիայի նախագահը որակել է որպես «նոր համաշխարհային կարգում Թուրքիային արժանի տեղ հատկացնելու» ուղղությամբ Թուրքիայի գործադրած ջանքերի մի մաս (Sde.org, 2021): Թուրքիայի նախագահը ունի հեռուն գնացող նպատակներ. նա պատկերացնում է ՄԱԿ-ի բարեփոխմամբ, մասնավորապես՝ Անվտանգության խորհրդի մշտական անդամների ցանկի վերանայմամբ ապահովել

Թուրքիայի մասնակցությունը Անվտանգության խորհրդի կազմում (Coskun & Spicer, 2020): Այս համատեքստում է նա առաջ քաշել «աշխարհը հինգից ավելի է» կարգախոսը և այս մասին հայտարարել 2022 թ. ՄԱԿ-ում ունեցած ելույթի ժամանակ (Մինասյան, 2023): Նրա հիմնական նպատակն է՝ նոր ձևավորվող աշխարհակարգում Թուրքիայի համար ապահովել առանցքային տերության կարգավիճակ, ինչին, իհարկե, հարկ է մոտենալ վերապահումով: Միևնույն ժամանակ, հասկանալով, որ Թուրքիան միայնակ չի կարող ձգտել նման կարգավիճակի, նա առաջ է քաշել թյուրքական ինտեգրման գաղափարը, քանի որ միավորված թյուրքական աշխարհն ունի բավականաչափ մարդկային և նյութական ռեսուրսներ, ինչպես նաև ռազմավարական նշանակության աշխարհագրական դիրք և կարող է հավակնել միջազգային համակարգում իր ուրույն տեղն ունենալու: Էրդողանի իշխանության տարիներին ավելի ամրապնդվեցին Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները, իսկ 44-օրյա պատերազմից հետո դրանք դրվեցին դաշնակցային հիմքերի վրա, երբ ստորագրվեց Շուշիի հռչակագիրը (Aze.media, 2021): Ըստ էության, երկու երկրների միջև սկսվեց միավորման մի այնպիսի գործընթաց, որը կողմերը համարում էին ավելին, քան «մեկ ազգ՝ երկու պետություն» հայեցակարգը (Մինասյան, 2023):

Փոխշահավետ համագործակցություն ծավալվում է նաև տնտեսական ոլորտում, այդ թվում՝ էներգետիկ ռեսուրսների առնչությամբ: Վերջինս ունի աշխարհաքաղաքական բաղադրիչ՝ պայմանավորված Ռուսաստան-Արևմուտք մրցակցությամբ: Ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումների մաս են կազմում Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք հաղորդուղիների նախագծերը: Թուրքիան կարևորում է Արևելք-Արևմուտք նախագիծը, որի համատեքստում առաջ է քաշել Անդրկասպյան Արևելքն ու Արևմուտքը միացնող Միջին միջանցքի («Trans-Caspian East-West Middle Corridor") ծրագիրը: Դրա շրջանակներում թուրք-ադրբեջանական զույգը փորձում է Հայաստանին պարտադրել, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը»: Կողմերն այն «փաթեթավորել» են Ադր-

բեջանի և նրա արևմտյան շրջանների միջև կապեր հաստատելու ձևակերպմամբ, և ներկայացնում են որպես տնտեսական շահավետ նախագիծ նաև Հայաստանի համար (Can, 2022)։ Սակայն այս վերջին պնդումը զուրկ է փաստարկներից։ Խնդրի ռազմավարական կողմը պայմանավորված է Թուրքիայի և թյուրքախոս պետությունների միջև ուղիղ ցամաքային կապի ստեղծմամբ։ Բացի այդ, Թուրքիան և Ադրբեջանը այդ նախագծից կունենան մեծ տնտեսական օգուտներ և կվերահսկեն կարևոր ռազմավարական հանգույցը։

Թուրքիայի և Ադրբեջանի միջև այլ տնտեսական ոլորտներում ևս կատարվում են ներդրումներ, աճել է առևտրաշրջանառությունը, որը 2021 թ. հասել է 5 մլրդ ԱՄՆ դոլարի, այն դեպքում, երբ 2016 թ. այն կազմել է ընդամենը 2,3 մլրդ դոլար (Айдын, 2023)։ 2022 թ. այդ ցուցանիշը հասել է 6 մլրդ դոլարի, իսկ 2023 թ. առաջին կեսին եղել է 3,9 մլրդ դոլար (Айдын, 2023)։ Ի տարբերություն ռազմատեխնիկական ոլորտի, այստեղ միավորված կառույցների ձևավորման հարցի քննարկումներ չկան, ինչը, գուցե, կապված է թուրքական տնտեսության ոչ համաչափ զարգացման և դրանում առկա ճգնաժամերի հետ։ Մյուս կողմից, Ադրբեջանն իր տնտեսական ներուժով կարող է ավելի ակտիվ դեր ստանձնել, քան Թուրքիան։

Տնտեսական և ռազմաքաղաքական համագործակցությունից բացի, Թուրքիան հաջողությամբ մեծացնում է իր մշակութային և կրթական ներկայությունը Ադրբեջանում։ 2021 թ. սկզբին Թուրքիան համաձայնություն է ձեռք բերել՝ Ադրբեջանում Թուրքական կրթական հիմնադրամի գրասենյակ և «Մաարիֆ» դպրոցներ բացելու վերաբերյալ (Инфотека 24, 2021)։ Արդեն 2022 թ. Բաքվում բացվել է առաջին նման դպրոցը (Каспия, 2022a), որի կարևոր խնդիրներից էր՝ ադրբեջանցի երիտասարդության շրջանում թուրքամետ տրամադրությունների ամրապնդումն ու ընդլայնումը։ Ադրբեջանում Թուրքիայի դեսպանը նման դպրոցների բացումը գնահատում է որպես ներդրում Ադրբեջանի մարդկային կապիտալում (Каспия, 2022a)։ Այսպիսով, Թուրքիան փորձում է ազդե-

ցություն ձեռք բերել Ադրբեջանի կրթական և կառավարման համակարգերում: 2023 թվականին Թուրքիան և Ադրբեջանը հայտարարեցին նաև համատեղ համալսարան ստեղծելու նախագծի մասին (Russian Turkiye, 2023): Կրթության և մշակույթի ոլորտներում թուրք-ադրբեջանական համագործակցությունը նպատակ ունի թյուրքական ինքնությամբ դաստիարակել նոր սերունդ և ստեղծել ընդհանուր արժեքներ ու գաղափարներ: Ներկայումս դա կիրառվում է Արցախի բռնազավթված բնակավայրերի նկատմամբ, մասնավորապես՝ խորհրդանիշ է համարվում Շուշին, որը հայտարարվել է ոչ միայն Ադրբեջանի, այլև թյուրքական աշխարհի մշակութային կենտրոն (Մինասյան, 2023): Թեև կրթությունն ու մշակույթը պետությունների վարած քաղաքականության մի մասն են, հատկապես՝ «փափուկ ուժի» առումով, սակայն դա բավարար չէ դաշինքի ստեղծման համար: Այսպիսով, «մեկ ազգ՝ երկու պետություն» հայեցակարգի հիմքում դրված են երկկողմ փոխշահավետ համագործակցությունը և ռազմավարական այլ նպատակներ:

Բացի այդ, Անկարան ակտիվ քայլեր է ձեռնարկում լրատվամիջոցների ոլորտում երկկողմ համագործակցության ամրապնդման ուղղությամբ: 2020 թվականի սեպտեմբերին Ադրբեջանն ու Թուրքիան համաձայնություն են ձեռք բերել երկու պետությունների միջև համատեղ մեդիա հարթակ ձևավորելու վերաբերյալ (T24, 2020): Կողմերն ընդգծել են ապատեղեկատվության դեմ պայքարն ինչպես երկու երկրների ներսում, այնպես էլ միջազգային լրատվական հարթությունում: Եվ հատկանշական է, որ այս համաձայնությունը ձեռք է բերվել 2020 թ. Արցախյան պատերազմի նախօրեին: Արդեն նույն տարվա դեկտեմբերին ստորագրվել է «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ԶԼՄ-ների ոլորտում ռազմավարական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը» (Lenta, 2021): Թուրքիայի հիմնական նպատակն է՝ ուժեղացնել Ադրբեջանում հասարակական կարծիքի վրա իր ազդեցությունը, ինչպես նաև միջազգային ասպարեզում ձևավորել թուրք-ադրբեջանական միասնության կեր-

պարը: Այս երկկողմ փոխգործակցությունը կարող է դառնալ Թուրքիայի նախաձեռնած թուրքական ԶԼՄ-ների համագործակցության առանցքը (Алексанян, 2023):

Հայաստան-Թուրքիա հարաբերությունները՝ Արցախյան 44-օրյա պատերազմից հետո

2021 թ. վերջին մեկնարկել է ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորման նոր գործընթաց: 2022 թ. հուլիսի 1-ին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչները Վիեննայում պայմանավորվածություն են ձեռք բերել՝ հնարավոր ամենասեղմ ժամկետներում ապահովելու ՀՀ-Թուրքիա ցամաքային սահմանը հատելու հնարավորություն երկու երկրների դիվանագիտական անձնագրերով օժտված քաղաքացիների և, համապատասխանաբար, ՀՀ և Թուրքիա այցելող երրորդ երկրների քաղաքացիների համար: Նույն հանդիպման ընթացքում կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև հնարավոր ամենասեղմ ժամկետներում սկսել ՀՀ-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումների իրականացումը և այդ ուղղությամբ անհրաժեշտ գործընթացները (MFA, 2024): Թեպետ 2023 թ. հունվարի 6-ին թուրքական կողմը տեղեկացրել է, որ վերացվել են երկու երկրների միջև ուղիղ օդային բեռնափոխադրումներ իրականացնելու բոլոր խոչընդոտները, անհրաժեշտ է նշել, սակայն, որ մինչ այս պահը Թուրքիայից օդային բեռնափոխադրման կազմակերպման որևէ դեպք չի արձանագրվել (MFA, 2023): Այսինքն, արգելքը հանելու մասին տեղեկությունն այս պահին տեսական հարթության մեջ է: 2022 թ. փետրվարից վերականգնվել էր երկու երկրների միջև ուղիղ ավիահաղորդակցությունը, որը, սակայն, արդեն որոշ խնդիրների է բախվել այն բանից հետո, երբ 2023 թվականի մայիսին Թուրքիան հայկական գրանցում ունեցող օդանավերի համար միակողմանի փակեց իր օդային տարածքը (Reuters, 2023): 2022 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի է ունեցել երկու երկրների միջգերատեսչական մասնագիտական խմբերի երկու հանդիպում (Զեկույց, 2023): Հանդիպումների

ընթացքում քննարկվել են երրորդ երկրների քաղաքացիների և դիվանագիտական անձնագրեր կրող քաղաքացիների համար սահմանների բացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքային և տեխնիկական հարցեր: Հարկավոր է նշել, որ մասնագիտական խմբերի աշխատանքից պարզ է դարձել, որ սահմանի բացման համար գործնականում ենթակառուցվածքային կամ տեխնիկական խոչընդոտներ չկան: Օրինակ, Մարգարայի կամուրջը գտնվում է աշխատանքային վիճակում, բայց սահմանների բացման համաձայնեցված գործընթացը մինչ օրս դեռ չի մեկնարկել: Նկատենք, որ 2023 թ. փետրվարին, երկար դադարից հետո, կամուրջը կրկին գործարկվել է՝ երկրշարժից տուժած Թուրքիային մարդասիրական օգնություն հասցնելու նպատակով (Kentron, 2023):

Թուրքական կողմի հրավերով 2022 թ. մարտի 10–12-ը ՀՀ ԱԳ նախարարը մասնակցել է Անթալիայի դիվանագիտական ֆորումին, որի շրջանակներում հանդիպել է Թուրքիայի ԱԳ նախարարի հետ (MFA, 2022): Անթալիայում տեղի ունեցած հանդիպման ընթացքում կողմերը փորձել են քննարկել ամենակարևոր խնդիրները, և, ըստ էության, արձանագրվել է, որ Թուրքիայի միակ նախապայմանը ադրբեջանական կողմի պահանջների կատարումն է (ECFR, 2022): Այսինքն, Հայաստանի և Թուրքիայի միջև խնդիրների օրակարգ չկա, կա միայն Ադրբեջանի շահերի բավարարման օրակարգ, ինչը միջազգային պրակտիկայում քիչ հանդիպող երևույթ է: Վերը նշված հանդիպման ընթացքում որոշակի աշխատանք է կատարվել ադրբեջանական պահանջների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումները և դրանց հիմքերը թուրքական կողմին ներկայացնելու ուղղությամբ, հատկապես Արցախյան հարցին վերաբերող թեմաների շուրջ, թեպետ հենց այս թեմայով խոսակցությունը և աշխատանքը պետք էր սկսել ավելի վաղ և շարունակել մշտապես:

2022 թ. հուլիսի 11-ին ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանի հետ: Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջա-

նակներում 2022 թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում ևս տեղի է ունեցել Ն. Փաշինյանի և Ռ. Թ. Էրդողանի հանդիպումը (Prime Minister, 2022): Առաջնորդների մակարդակով հադիպումները կարևոր են հատկապես կողմերի մոտ գործընթացի նկատմամբ քաղաքական կամքի ձևավորման տեսանկյունից: Թուրքիայի պարագայում գործընթացի արդյունավետությունն ու արագությունը մեծապես կախված է գործընթացի նկատմամբ երկրի ղեկավարի վերաբերմունքից: Այս թեմայով Թուրքիայի նախագահի հայտարարությունները բավականին հստակ են: Թուրքիայի ղեկավարը խոսում է ադրբեջանական կողմի պահանջների կատարման հրամայականի մասին (Azatutyun, 2022) և ՀՀ-Թուրքիա բանակցություններում առաջընթացը կապում ՀՀ-Ադրբեջան բանակցություններում առաջընթացի հետ (Guldogan & Eruygur, 2023):

Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից մեկ օր անց՝ 2023 թ. փետրվարի 7-ին, կայացել է ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի հեռախոսազրույցը Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանի հետ: ՀՀ կառավարության որոշմամբ՝ փետրվարի 8-ին ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության որոնողափրկարարական թիմի 27 անդամներ գործուղվել են Թուրքիայի Ադըյաման քաղաք և մինչև փետրվարի 16-ը մասնակցել երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներին: Փետրվարի 11-ին հարյուր տոննա մարդասիրական օգնությամբ բեռնված հայկական հինգ բեռնատարները, հատելով հայ-թուրքական Մարգարա-Ալիջան ցամաքային սահմանը, ուղևորվել են Թուրքիա: Փետրվարի 15-ին նույն ճանապարհով երկու բեռնատարով Ադըյաման է տեղափոխվել մարդասիրական օգնության երկրորդ խմբաքանակը՝ տասներկու տոննայի չափով: Փետրվարի 15-ին Անկարայում կայացել է նաև ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԹՀ ԱԳ նախարար Մևլութ Չավուշօղլուի հանդիպումը, որից հետո նախարար Միրզոյանը Ադըյամանում այցելել է մարդասիրական օգնության երկրորդ խմբաքանակի բեռնաթափման և հայ որոնողափրկարարական ջոկատի տեղակայման վայրեր: Այս այցելության ընթացքում նշվեց նաև Անիի պատմական կամրջի վերականգնման շուրջ առկա համա-

ձայնության մասին (Kucera, 2023)։ Այս ամենը, միասին վերցված, ստեղծել էր ՀՀ–Թուրքիա հարաբերությունների կարգավորման որոշակի հնարավորություն, որը, սակայն, հնարավոր չեղավ նյութականացնել թե՛ Թուրքիայի կողմից առաջ քաշվող նախապայմանի՝ Ադրբեջանի պահանջների կատարման, և թե՛ Թուրքիայի ներքաղաքական իրավիճակի՝ ընտրական փուլի մեկնարկի պատճառով։

2023 թվականի մայիսի 6-ին Թուրքիայի ԱԳ նախարար Մ. Չավուշօղլուն հանդես եկավ հայտարարությամբ, որ Թուրքիան փակել է իր օդային տարածքը Հայաստանի գրանցում ունեցող օդանավերի համար՝ կապված ավելի վաղ Երևանում տեղի ունեցած Հայոց Ցեղասպանության կազմակերպիչներին սպանած վրիժառուներին նվիրված արձանի բացման հետ (Reuters, 2023)։ Սա, ըստ էության, նախորդ փուլում ստեղծված իրավիճակի վերացումն էր, որը Թուրքիայում ընտրական փուլում ազգայնականների ձայների համար պայքարի արդյունք էր (ECFR, 2022)։ Բացի դրանից, մինչ Թուրքիայում նախագահական ընտրությունների ավարտը և նոր կառավարության ձևավորումը ՀՀ–Թուրքիա կարգավորման գործընթացի հիմնական խոչընդոտող հաստատությունը, համաձայն երրորդ երկրներից հանդես եկող աղբյուրների, Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունն էր, ուստի, տրամաբանական է, որ վերջինիս անհրաժեշտ էր ուռճացված մեդիաառիթ, որը կստվերեր նախորդ փուլի դրական խոսույթը (ECFR, 2022)։ Թեպետ հույս կա, որ իրավիճակը կփոխվի ԱԳ նախարարի պաշտոնում նոր անձի նշանակմամբ, բայց նաև առավել հավանական է, որ խնդիրը հետևանք է ինստիտուցիոնալ դիմադրության, ոչ թե անհատական «ճաշակի»։

Հունիսի 3-ին ՀՀ վարչապետ Փաշինյանը կարճատև այց կատարեց Անկարա՝ մասնակցելու Թուրքիայի նախագահի երդմնակալության արարողությանը։ Արարողության ընթացքում ղեկավարները կարճատև խոսակցություն են ունեցել, որի ընթացքում Թուրքիայի նախագահը շնորհակալություն է հայտնել Փաշինյա-

նին՝ արարողությանը ներկա գտնվելու համար (Prime Minister, 2023):

Հունիսի 26-ին ՀՀ հատուկ բանագնաց Ռ. Ռուբինյանը ասուլիսի ժամանակ նշել է. «Վերջին պայմանավորվածությունը եղել է այն, որ զբոսաշրջային սեզոնի սկզբում պետք է ցամաքային սահմանը բացվի երրորդ երկրների քաղաքացիների և դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար: ... Հայկական կողմն աշխատանքներ է տանում Թուրքիայի հետ սահմանին գտնվող «Մարգարա» անցակետի սահմանային ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ: Այդ աշխատանքներն առաջիկայում կավարտվեն, և Հայաստանը հույս ունի, որ թուրքական կողմը նույնպես կպահպանի պայմանավորվածությունները և այս ամառվա ընթացքում դրանք կիրագործվեն» (Factor, 2023): Այս հայտարարության կարևորագույն մասը, ըստ էության, իրավիճակի ամրագրումն է առ այն, որ կա շատ հստակ պայմանավորվածություն, հստակ ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ: Ուստի, այս փուլում բոլոր ուժերը և ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնացվեն հենց այդ պայմանավորվածության կատարման վրա, իսկ եթե պայմանավորվածությունները չեն կատարվում, գործընթացը դառնում է անիմաստ:

Միջազգային հարթակներում հաճախ են հնչում մտքեր, թե 44-օրյա պատերազմից հետո ստեղծվել է Հայաստանի Հանրապետություն-Թուրքիա հարաբերությունների կարգավորման «պատմական հնարավորություն»: Այս միտքը նշանակում է, թե 44-օրյա պատերազմը իր հետ որոշ փոփոխություններ է բերել, փոփոխություններ, որոնք հնարավորություններ են ստեղծել նշված հարաբերությունների կարգավորման գործընթացի համար: Մինչդեռ «պատմական հնարավորությունը» հետևանք է ոչ թե եղած տարաձայնությունների հաղթահարման, այլ կողմերից մեկի, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ռազմական մեքենայի՝ մարտի դաշտում ջախջախման, դրա բազմաշերտ անվտանգային ճարտարապետության փլուզման և տարիներ շարունակ հռչակված կարմիր գծերի խախտման պատճառով:

ՀՀ իշխանությունները, ըստ էության, փոխել են վերաբերմունքը «ռուսական երաշխիքներ» կամ «ռուսական անվտանգային ճարտարապետություն» հասկացության նկատմամբ (IRI, 2023): Այսպիսով, անկախությունից ի վեր, իսկ գուցե նաև ընդհանրապես, առաջին անգամ ՀՀ քաղաքական ընտրանին խնդիր ունի առերեսվելու Թուրքիայի հետ՝ առանց այլ ուժերի երաշխավորության:

Հայաստանի Հանրապետությունում ավելի ու ավելի են ընկալում Թուրքիայի աճող ազդեցությունը տարածաշրջանում: Անշուշտ, Թուրքիայի ազդեցության աճը Հարավային Կովկասում և, ընդհանրապես, սևծովյան ավազանում, նոր երևույթ չէ. Վրաստանում և Ադրբեջանում դա տեղի է ունենում առնվազն մեկ տասնամյակից ավելի, սակայն նոր է ՀՀ-ում (Gis reports, 2023):

Հայաստանի Հանրապետություն-Թուրքիա հարաբերությունների կարգավորման ճանապարհին գլխավոր խոչընդոտը մշտապես եղել են հայ-ադրբեջանական հարաբերությունները: Ադրբեջանը մշտապես կարողացել է չեզոքացնել ՀՀ-Թուրքիա կարգավորման հնարավորությունը (Aliev, 2021): Թուրքիան, տարածաշրջանում իր ազդեցության տարածման հիմնական աջակից համարելով Ադրբեջանը, միշտ գերադասում էր չվնասել վերջինիս հետ իր հարաբերությունները: 44-օրյա պատերազմից հետո, սակայն, Հայաստանի Հանրապետություն-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման համար ստեղծվել է տեսական հնարավորություն: Ըստ էության, ՀՀ-Թուրքիա կարգավորման մեջ առկա որոշակի ձեռքբերումները պետք է դիտարկել մեկ հարթության մեջ՝ ՀՀ-Ադրբեջան կարգավորման ճանապարհին առկա ձեռքբերումների հետ. դրանք, աննշան շեղմամբ, ընթանում են համատեղ: Ավելին, գործ ունենք ոչ թե երկու երկրների հարաբերությունների բարելավման փորձի, այլ դիվանագիտական շանտաժի հետ: Այս ամենի մեջ ամենամեծ խնդիրն այն է, որ Ադրբեջանի հետ կարգավորումը գործնականում նշանակում է Ադրբեջանի բոլոր պահանջների կատարում, իսկ Ադրբեջանի պահանջները կայուն չեն, դրանք հետզհետե դառնում են սողացող և ավելի ու ավելի մեծ (Web.archive, 2023):

Ռուսաստանի Դաշնությունը պաշտոնապես աջակցել է ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորման ներկա գործընթացին: Ավելին, հատուկ բանագնացների առաջին հանդիպումը տեղի է ունեցել ՌԴ տարածքում: Սա, իր հերթին, հիմք է հանդիսացել պնդումնների համար, թե Ռուսաստանն իրապես կողմնակից է ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացին: Մինչդեռ, կարծում եմ, մշտապես պետք է հաշվի առնել, որ Ռուսաստանի տարածաշրջանային ազդեցության և ՀՀ-ի վրա ազդեցության կարևորագույն խարիսխներից մեկը Հայաստանի Հանրապետության համար Թուրքիայի դեմ պատնեշի դերն է: Եթե կարգավորվում են ՀՀ-Թուրքիա հարաբերությունները, ապա, խոշոր հաշվով, Ռուսաստանի ազդեցության նվազեցման ճանապարհին ռուսական հիբրիդային զինանոցում առկա բոլոր միջոցները, միջնաժամկետ կտրվածքով, հաղթահարելի են դառնում հայկական կողմի համար:

ԱՄՆ դիրքորոշումն այս հարցում տրամագծորեն հակառակն է: ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը եղել է ԱՄՆ տարածաշրջանային կարևոր նպատակներից մեկը: Այս մոտեցման գլխավոր հիմքը հենց այն գիտակցումն է, որ ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը էականորեն նվազեցնելու է Ռուսաստանի ազդեցությունը մեր տարածաշրջանում: Սրանով հանդերձ, կարծում եմ, որ չի կարելի բացարձականացնել ԱՄՆ կամ Ռուսաստանի դերը՝ թե՛ դրական, և թե՛ բացասական ազդեցությունների հնարավորություններով: Բանակցությունների հաջողությունը և անհաջողությունն, առաջին հերթին, բնականաբար, կախված է պայմանավորվող կողմերից և, հատկապես այն կողմից, որը առավել զորեղ է: Միևնույն ժամանակ, ասվածը չի նշանակում, թե հնարավոր է և կարելի է անտեսել Ռուսաստանի և ԱՄՆ-ի դերը այս գործընթացում: Սա նույնպես կլինի մեծագույն բացթողում: ԵՄ դիրքորոշումն այս հարցում գրեթե նույնական է ԱՄՆ-ի դիրքորոշմանը, սակայն էականորեն նվազ են դրա դերն ու նշանակությունը:

ՀՀ–Թուրքիա կարգավորման գործընթացում արդեն իսկ նշմարելի են որոշ խնդիրներ: Նախ՝ դանդաղաշարժությունը. պայմանավորվածությունների ձեռքբերումը և դրանց իրագործումը տեղի են ունենում կա՛մ չափազանց դանդաղ, կա՛մ ընդհանրապես տեղի չի ունենում: Ապա՝ անկայունությունը. խնդիր է նաև արդեն ձեռք բերված պայմանավորվածությունների և մեկնարկած գործընթացների չեղարկումը և հեռանկարում՝ կայունության բացակայությունը: Սրա լավագույն օրինակն է՝ մեկ օրում Թուրքիայի օդային տարածքի փակումը հայաստանյան գրանցում ունեցող օդանավերի համար: Այս ամենը ակնհայտ վկայում է, որ Թուրքիայի Հանրապետությունը հետաքրքրված չէ Հայաստանի հետ հարաբերությունների հաստատմամբ: Նրա հիմնական խնդիրը Ադրբեջանի առավելապաշտության խրախուսումն է, և այս երկիրը չի արձագանքում հայ–ադրբեջանական հարաբերություններում առկա շարժերին:

Եզրակացություն

Այսպիսով, Հարավային Կովկասում Թուրքիայի շահերի էությունը դարերի ընթացքում չի փոխվել, այն է՝ տարածաշրջանում թուրքական ներկայության ապահովումը: Եթե նախկինում Թուրքիան փորձում էր նվաճել այդ տարածքները, որպեսզի ապահովեր իր ներկայությունը տարածաշրջանում, ապա ներկա փուլում իր նպատակին հասնելու համար այն տարածում է իր քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային ազդեցությունը: Հարկ է նշել, որ Թուրքիայի ռազմավարական շահերը և տարածաշրջանային առաջնորդի հավակնությունները որոշակիորեն հակասում են Ռուսաստանի կենսական շահերին: 44-օրյա պատերազմի «արդյունքները» ոչ միայն մեծացրեցին Թուրքիայի հեղինակությունը և վերջինս թևակոխեց տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդման նոր փուլ՝ նվազեցնելով ռուսական ազդեցությունը, այլև այդ երկիրը հնարավորություն ստացավ ԽՍՀՄ նախկին թյուրքախոս մյուս պետություններին Թուրքիա–Ադրբեջան հարաբերությունները ներկայացնելու որպես համագործակցութ-

յան նախատիպ: Թուրքիայի այսպիսի քաղաքականությունը պայմանավորված էր, նախևառաջ, տարածաշրջանում ՌԴ պասիվությամբ, ինչպես նաև 44-օրյա պատերազմի հետևանքով ստատուս-քվոյի փոփոխությամբ:

Ադրբեջանը, որը մշակութային և քաղաքականան առումով ամենամոտն է Թուրքիային, իր ուրույն տեղ է գրավում վերջինիս արտաքին քաղաքականության մեջ, ընդ որում, ոչ միայն Կովկասում, այլև դրանից դուրս: Այդ մերձությունը պայմանավորված է ոչ միայն մշակութային և լեզվական ընդհանուր կապերով, այլ այս երկու երկրների միջև առկա քաղաքական և ռազմավարական շահերով: Արդյունքում, Արցախյան վերջին պատերազմում Ադրբեջանին Թուրքիայի ցուցաբերած աջակցությունը պաշտոնական Անկարային հնարավորություն տվեց իր ձեռքում կենտրոնացնելու ադրբեջանական պաշտպանական համակարգի կառավարումը: Ավելին, վերջինիս պնդմամբ՝ թուրք-ադրբեջանական միասնությունը շարունակելու է մնալ տարածաշրջանում խաղաղության և կայունության երաշխիքը:

Դրանով է պայմանավորված ներկայումս ընթացող ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը, որը, առավել քան երբևէ, ուղիղ առնչություն ունի Հայաստան-Ադրբեջան բանակցությունների հետ: Կարգավորման գործընթացը ստեղծում է Թուրքիայի համար որոշակի դրական իմիջ և է՛լ ավելի է կարևորում Թուրքիայի դերը, հատկապես Արևմուտքում: Այս պահի դրությամբ գնդակը թուրքական կողմի դաշտում է, և գործընթացի առաջընթացը հնարավոր է միայն առկա պայմանավորվածությունների կատարման դեպքում:

Գործնականում, Թուրքիան կախվածություն չունի այն զիջումներից, որոնք նա պահանջում է ՀՀ-ից՝ հօգուտ Ադրբեջանի: Այդ զիջումները թեպետ հարաբերակցվում են տարածաշրջանում Թուրքիայի տնտեսական ու քաղաքական ազդեցության հետ, բայց հայկական կողմի հետ լուրջ աշխատանքի պարագայում նշված ազդեցությունը հնարավոր է նաև առանց այդ զիջումների:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա վերջինս հայտնվել է Թուրքիայից և Ադրբեջանից տնտեսական-քաղաքական կախվածության վիճակում: Միջազգային էներգետիկ և տրանսպորտային նախագծերին համատեղ մասնակցությունն ու քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը ակնհայտորեն չեն խթանել վրացական ապրանքների արտահանումն այդ երկրներ: Ավելին, վրացական շուկան ինքը հեղեղված է թուրքական ապրանքներով, իսկ թուրքական և ադրբեջանական սփյուռքը ակտիվ մասնակցում է այդ երկրի ներքին հասարակական-քաղաքական կյանքին:

Այսպիսով, Հարավային Կովկասում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը վարքագծի հատուկ մոդել է. ռազմադիվանագիտական շփումներ տարբեր խաղացողների և ուժային կենտրոնների հետ՝ խուսափելով բացահայտ առճակատումից: Միևնույն ժամանակ, Անկարան ինքն իրեն դիրքավորում է որպես ուժի և քաղաքական ազդեցության անկախ կենտրոն: Թուրքիայի հետ փոխգործակցությունը, շահերի ուղղակի բախման բացակայության դեպքում, դառնում է Հարավային Կովկասի գործընթացներում ներգրավված ցանկացած խաղացողի հաջողության կարևոր նախապայմաններից մեկը, լինի դա ԱՄՆ, ԵՄ, Ռուսաստան, թե Չինաստան:

Ամփոփելով, արձանագրենք, որ 44-օրյա պատերազմի «արդյունքում», Թուրքիան լուրջ հայտ է ներկայացրել՝ տարածաշրջանում հանդես գալու ոչ միայն որպես Ադրբեջանի դաշնակից, այլ նաև որպես տարածաշրջանային անվտանգության ապագա վեկտորը որոշելու ունակ առանցքային խաղացողներից մեկը: Միևնույն ժամանակ, արցախյան օրինակն առաջին անգամ էր տեղի ունենում հարավկովկասյան տարածաշրջանում, երբ հստակ դրսևորվեց տարածքային խնդրի՝ ռազմական ճանապարհով լուծման մոդելի արդյունավետությունը: Սակայն այս փաստը կարող է վտանգավոր նախադեպ ստեղծել այլ երկրների համար, որոնք ձգտում են կյանքի կոչել ՄԱԿ-ի՝ ազգերի ինքնորոշման իրավունքը:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

Մենագրություններ

1. ***Գրիգորյան (2009),*** Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991–2001 թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2009, էջ 47:
2. ***Իսրայելյան (2016),*** Իսրայելյան Ա., Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման առաջին տասնամյակում (2002–2012թթ.), ՎՄՎ-Պրինտ, Երևան, 2016, էջ 186, 189, 193:
3. ***Սաֆրաստյան և ուր. (2020),*** Սաֆրաստյան Ռ., Տեր-Մաթևոսյան Վ., Մանուկյան Տ., Հովհաննիսյան Ա., Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման ժամանակահատվածում (2002–2012), «Զանգակ» հրատ., Երևան, 2020, էջ 157:
4. ***Каспийский регион (2023),*** Каспийский регион в процессах регионализации Евразии: Коллективный научный доклад, Отв. ред. Л.Б. Вардомский, Институт экономики РАН, Москва, 2023, с. 32, https://inecon.org/docs/ 2023/Vardomsky_paper_2023.pdf, с. 74, (д/в. 04.09.2024).
5. ***Dawisha & Dawisha (1995),*** Dawisha A. & Dawisha K., The Making of Foreign Policy in Russia and the New States of Euroasia, New York, 1995. pp. 96–97.
6. ***Davutoğlu (2001),*** Davutoğlu A., Stratejik derinlik: Türkiye'nin uluslararası konumu, Ankara, Küre Yayınları, 2001, ss. 81, 128, 95, 96, 174, 198.
7. ***Joseph & Nye (2005),*** Joseph S. & Nye Jr., Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs Books, 2005, p. 119, https://www.belfercenter.org/sites/default/files/legacy/files/joe_ nye_wielding _soft_power.pdf, (Acc. 04.09.2024).
8. ***Phillips (2012),*** Phillips D., Diplomatic History: The Turkey-Armenia Pro tocols, Institute for the Study of Human Rights in collaboration with the Future of Diplomacy Project, Harvard Kennedy School, 2012, p. 26.
9. ***Szporluk (1994),*** Szporluk R., National Identity and Ethnicity in Russia and the New States of Eurasia, New York, 1994, p. 287.
10. ***Sever (2015),*** Sever A., Abdullah Gül ile 12 Yıl. Yaşadım, Gördüm, Yazdım, Doğan Egmont Yayıncılık ve Yapımcılık Tic. A.Ş., İstanbul: Doğan Kitap, 2015, ss. 89–90.
11. ***Wennmann (2006),*** Wennmann A., Renewed Armed Conflict in Georgia? Options For Peace Policy in a New Phase of Conflict Resolution, Program for

the Study of International Organization(s), Graduate Institute of International Studies, Geneva, 2006, p. 25.
12. ***Aydın M.,*** Kafkasya ve Orta Asya'yla İlişkiler, Türk Dış Politikası Cilt III 2001–2012, İstanbul: İletişim Yayınları, 2013, pp. 487–488.
13. ***Oran (2013),*** Oran B., Türk Dış Politikası (2001–2012), Cilt III. lsıanbul, 2013, s. 230.

Հոդվածներ

14. ***Անանյան (2004),*** Անանյան Ա., Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, Հայոց ցեղասպանության և պատմության հարցեր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2004, էջ 3–27:
15. ***Արշակյան, Եղիազարյան (2013),*** Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրք-վրացական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 1991–2001 թթ., 21-րդ ԴԱՐ, №2 (48), 2013, էջ 41–59:
16. ***Գևորգյան (2013),*** Գևորգյան Ա., «Արդարություն և զարգացում» կուսակցության գործունեության ու գաղափարախոսության շուրջ. Վերլուծական տեղեկագիր, Հ. 6, Երևան, 2013, էջ 151–178:
17. ***Էվոյան (2012),*** Էվոյան Լ., Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան. Ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման միտումները, ՎԷՄ, №3(12), 2012, էջ 186–194:
18. ***Կարապետյան (2017),*** Կարապետյան Ռ., Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ ընդլայնվող համագործակցությունը, 21-րդ դար, № 2 (72), 2017, էջ 5–16:
19. ***Հովհաննիսյան (2008),*** Հովհաննիսյան Ն., ՀՀ նախագահի հրավերն Աբդուլլահ Գյուլին ճիշտ ժամանակին կատարված համարձակ քայլ է, «Ազգ», N 171, 19.09.2008:
20. ***Հովսեփյան (2022),*** Հովսեփյան Լ., Ներպետական գործոնների ազդեցությունը Թուրքիայի ռազմաքաղաքական վարքագծի վրա Արցախյան առաջին և 44-օրյա պատերազմներում. համեմատական վերլուծություն, Գիտական Արցախ, №3(10), 2022, էջ 195–208:
21. ***Մարտիրոսյան (2020),*** Մարտիրոսյան Ս., Ռուս-թուրքական էներգետիկ մրցակցությունը Հարավային Կովկասում, Հայկական քաղաքագիտական հանդես, № 2(14), 2020, էջ 133–157:
22. ***Մինասյան (2023),*** Մինասյան Ն., «Մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգը Թուրքիա–Ադրբեջան հարաբերություններում, Հայկական բանակ, № 3, 2023, էջ 23–37:

23. ***Սաֆրաստյան (2005),*** Սաֆրաստյան Ռ., Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադա՞ր, 21-րդ դար, № 4 (10), 2005, էջ 34–46:
24. ***Տեր-Սաթևոսյան (2016),*** Տեր-Սաթևոսյան Վ., Թուրքիայի արտաքին քաղաքականության իրավական և հաստատութենական կազմակերպվածքի առանձնահատկությունները, Ժամանակակից Եվրասիա, Թուրքիա. արտաքին քաղաքականության հարցեր, Երևան, 2016, էջ 10–39:
25. ***Bal (1998),*** Bal I, The Turkish Model and The Turkic Republics, Perceptions: Journal of International Affairs, SAM, Vol. III, No. 3, September-November 1998, pp. 1–17, https://dergipark.org.tr/en/download/article-file/817155 (Acc. 04.09.2024).
26. ***Balcer (2009),*** Balcer A., The Future of Turkish-Russian Relations: A Strategic Percpective. Turkish Policy Quarterly, 2009, p. 77–90, http://turkishpolicy.com/Files/ArticlePDF/the-future-of-turkish-russian-relations-a-strategic-pers pective-spring-2009-en.pdf, (Acc. 04.09.2024).
27. ***Bölükbaş (1997),*** Bölükbaş S., Ankara's Baku-Centered Transcaucasia Policy: Has It Failed? Middle East Journal, Vol. 51, N 1, 1997, s. 80–94.
28. ***Can (2022),*** Can D., The Organization of Turkic States: Implications for the Regional Balance of Power. "Ğüvenlik Stratejileri Dergisi TDT Özel Sayısı", 2022, p. 46–66. https://dergipark.org.tr/tr/download/article-file/2379443, (Acc. 04.09.2024).
29. ***Dadparvar, Azizi (2020),*** Dadparvar Sh., Azizi S., Exploring Turkey's Strategic Goals in Caucasus Region During the 2020 Nagorno-Karabakh Crisis, International Relations and Diplomacy, Vol. 8, No 11, 2020, p. 475–482.
https://www.researchgate.net/publication/350458801_Exploring_Turkey%27s_Strategic_Goals_in_Caucasus_Region_During_the_2020_Nagorno-Karabakh _Crisis, (Acc. 04.09.2024).
30. ***Davutoğlu (2008),*** Davutoğlu A., Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, Insight Turkey, Vol. 10 Issue 1, 2008, pp. 77–96.
31. ***Gaudiano (2007),*** Gaudiano M., Can Energy Security Cooperation Help Turkey, Georgia and Azerbaijan to Strengthen Western Oriented Links? NATO Defense College Academic Research Branch Research Note, N. 5, June, 2007, pp. 1–27.
32. ***Görgülü (2010),*** Görgülü A., Iskandaryan A., Minasyan S., Turkey-Armenia Dialogue Series: Assessing the Rapprochement Process, Working Paper, TESEV Publications, 2010, https://www.tesev.org.tr/wp-content/uploads/report_Turkey_Armenia_Dialogue_Series_Assessing_The_Rapprochement_Process.pdf, (Acc. 04.09.2024).

33. ***Hill & Taspinar (2006),*** Hill F., Taspinar O., Turkey and Russia: Axis of the Excluded? Survival, Global Politics and Strategy, vol. 48, no. 1, Spring 2006, pp. 81–92.
34. ***Jenkins (2008),*** Jenkins G., Ongoing Trade Crisis Demonstrates Turkey's Lack of Leverage Against Russia, Eurasia Daily Monitor, 09.09.2008.
35. ***Mkrtchyan & Petrosyan (2009),*** Mkrtchyan T., Petrosyan V., Integration of Transcaucasia: Continued Failure and Hope, Turkish Policy Quarterly, Vol 8, No 1, 2009, pp. 59-76, https://www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_vol8_no1_mkrtchyan_petrosyan.pdf, (Acc. 04.09.2024).
36. ***Özbay (2011),*** Özbay, F., The Relations between Turkey and Russia in the 2000s, Perceptions: Journal of International Affairs, Vol. XVI, No. 3, 2011, pp. 69–92. https://dergipark.org.tr/en/download/article-file/816445, (Acc. 04.09.2024).
37. ***Qelikpala (2015),*** Qelikpala M., Turkish-Russian relations in search of a way out of the rivarly-competition dilemma, Bilig, Vol. 72. DOI:10.12995/bilig.2015.7206, 2015, pp. 117–144, (Acc. 04.09.2024).
38. ***Roberts (2010),*** Roberts J., Turkey as Regional Hub, Insight Turkey, vol. 12, No. 3, 2010, pp. 39–48.
39. ***Socor (2012),*** Socor V., Azerbaijan‘s Petkim Takeover to Overhaul Turkey‘s Petrochemical Industry, Eurasia Daily Monitor, Vol.: 9 No. 73, 12.04.2012, https://jamestown.org/program/azerbaijans-petkim-takeover-to-overhaul-turkeys-petrochemical-industry/, (Acc. 04.09.2024).
40. ***Аватков (2021),*** Аватков В., Постсоветское пространство и Турция: итоги 30 лет, Том 14, № 5, 2021, с. 162-174.
41. ***Аватков (2022),*** Аватков В., Крылов Д., Идейно-ценностное воздействие Турции на процессы в информационном пространстве Республики Крым, Россия: общество, политика, история, № 5(5), 2022, с. 84–93.
42. ***Аватков, Бадранов (2013),*** Аватков В., Бадранов А., «Мягкая сила» Турции во внутренней политике России, Право и управление, XXI век, № 2(27), 2013, с. 5–10.
43. ***Айвазян (2018),*** Айвазян Д., Южный газовый коридор как инструмент диверсификации импорта газа в Европейский Союз, Научно-аналитический вестник Института Европы РАН, № 2, 2018, с. 128–134.
44. ***Айдын (2023),*** Айдын М., Кавказская политика Турции в 2000–2022 гг., Connections: The Quarterly Journal, № 1, 2023, с. 83–95.
45. ***Алексанян (2023),*** Алексанян Л., Роль южно-кавказского региона во внешней политике Турции на современном этапе (на примере Азербайджана) // Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература. Сер. 9, Востоковедение и африканистика: Реферативный

журнал, 2023, № 4, с. 35–46, https://cyberleninka.ru/article/n/rol-yuzhno-kavkazskogo-regiona-vo-vnesh ney-politike-turtsii-na-sovremennom-etape-na-primere-azerbaydzhana, (д/в. 04.09.2024).

46. ***Гоксел (2008),*** Гоксел Д., Кавказская Политика Турции, Кавказское соседство, Турция и Южный Кавказ, Институт Кавказа, Ереван, 2008, с. 15–29.
47. ***Гребенников (2017),*** Гребенников Е.А., Международное сотрудничество России и Азербайджана в годы правления Народного фронта Азербайджана (1992-1993 гг.): проблемы и вызовы, ИСОМ. т. 9, №3-2, 2017, https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodnoe-sotrudnichestvo-rossii-i-azerbaydzhana-v-gody-pravleniya-narodnogo-fronta-azerbaydzhana-1992-1993-gg-problemy-i-vyzovy, (д/в. 10.07.2024).
48. ***Дружинин и др. (2017),*** Дружинин А. и др., Российский вектор в современной евразийской геополитике Турции, Научная мысль Кавказа, № 3, 2017, с. 5–12.
49. ***Мигранян (2021),*** Мигранян А.А., Внешнеэкономическая политика Туркмении: итоги десятилетия. Геоэкономика энергетики, № 1, 2021, с. 43–66.

Հարցազրույց

50. ***Ավետիով (2022),*** Ավետիով Վ., Հարցազրույց, 2022:

Համացանցային հղումներ

51. ***Զեկույց (2023),*** Զեկույց Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021–2026 թթ.) 2022 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին, 27.02.2023, https://www.gov.am/files/docs/5274.pdf (հսկ. 04.09.2024):
52. ***Aliev (2021),*** Aliev J., Azerbaijan's investment in Turkey sign of confidence, 24.02.2021, https://www.aa.com.tr/en/world/azerbaijans-investment-in-turkey-sign-of-confidence/2154972, (Acc. 04.09.2024).
53. ***Azatutyun (2022),*** Էրդողանը վերստին պայման է առաջադրում Հայաստան-Թուրքիա կարգավորման համար, 10.11.2022, https://www.azatutyun.am/a/32123984.html, (հսկ. 04.09.2024):
54. ***Aze.media (2021),*** The full text of the Shusha Declaration, 18.06.2021, https://aze.media/thefull-text-of-the-shusha-declaration/, (Acc. 04.09.2024).
55. ***Coskun & Spicer (2020),*** Coskun O., Spicer J., In Nagorno-Karabakh conflict, Erdogan eyes Turkey's “place in world order”, 07.10.2020, https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-erdogan-analysis-int-idUSKBN26S0HZ, (Acc. 04.09.2024).

56. ***Daily sabah (2020),*** Altay: 6-country regional cooperation platform win-win for actors in Caucasus, Erdoğan says, Daily Sabah, 12.12.2020, https://www.dailysabah.com/, (Acc. 04.09.2024).
57. ***ECFR (2022),*** Acts of normality: The potential for Turkey-Armenia rapprochement, 15.03.2022, https://ecfr.eu/publication/acts-of-normality-the-potential-for-turkey-armenia-approchement/, (Acc. 04.09.2024).
58. ***Factor (2023),*** Ես, ըստ անհրաժեշտության, խոսում եմ Թուրքիայի հատուկ ներկայացուցչի հետ. Ռուբեն Ռուբինյան, 26.06.2023, https://actor.am/661481.html, (հսկ. 04.09.2024):
59. ***FRERL (2009),*** Azerbaijan Criticizes Turkey Over Gas Prices, To Seek New Routes, 16.10.2009, https://www.rferl.org/a/Azerbaijan_Criticizes_Turkey_Over_Gas_Prices_To_Seek_New_Routes/1853890.html, (Acc. 04.09.2024).
60. ***Gis reports (2023),*** Geopolitical transformation in the South Caucasus, 10.03.2023, https://www.gisreportsonline.com/r/geopolitical-transformation-south-caucasus/, (Acc. 04.09.2024).
61. ***Guldogan & Eruygur (2023),*** Guldogan D. & Eruygur B., Establishing Zangezur corridor will strengthen Ankara-Baku ties: Turkish president, 13.06.2023, https://www.aa.com.tr/en/politics/establishing-zangezur-corridor-will-strengthen-ankara-baku-ties-turkish-president/2921304, (Acc. 04.09.2024).
62. ***Hurriyet (2012),*** Turkey to boost Azeri, Georgian cooperation, 08.06.2012, https://www.hurriyetdailynews.com/turkey-to-boost-azeri-georgian-cooperation-22762, (Acc. 04.09.2024).
63. ***IRI (2023),*** Public Opinion Survey: Residents of Armenia, January-March 2023, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-january-march-2023/, (Acc. 04.09.2024).
64. ***JPost (2024),*** Erdogan's threats to invade Israel are inflammatory and only serve to escalate tensions, 28.07.2024, https://www.jpost.com/opinion/article-812424, (Acc. 04.09.2024).
65. ***Kentron (2023),*** Մարզարայի կամրջի բացումը և փակումը, 11.02.2023, https://kentron.am/am/news/259535, (հսկ. 04.09.2024):
66. ***Koylu (2020),*** Koylu H., Turkey and Russia: TurkStream pipeline not a fix for bilateral woes, 07.01.2020, https://www.dw.com/en/turkey-and-russia-turk stream-pipelinenot-a-fix-for-bilateral-woes/a-51923019 (Acc. 04.09.2024).
67. ***Kucera (2023),*** Kucera J., Armenia-Turkey border opens for earthquake aid delivery, Eurasianet, 13.02.2023, https://eurasianet.org/armenia-turkey-border-opens-for-earthquake-aid-delivery, (Acc. 04.09.2024).
68. ***Lenta (2021),*** Турция и Азербайджан договорились о союзничестве и обороне, 15.06.2021, https://lenta.ru/news/2021/06/15/podpisali/, (д/в. 04.09.2024).

69. ***MFA (2001),*** Türkiye-Rusya Federasyonu Siyasi İlişkileri, http://www.mfa.gov.tr/turkiye-rusya-federasyonu-siyasi-iliskileri.tr.mfa, (Acc. 04.09.2024).
70. ***MFA (2012a),*** Nakhchivan Statement of the Ministers of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, the Islamic Republic of Iran and the Republic of Turkey, 07 March 2012, Nakhchivan, 07.03.2012, https://www.mfa.gov.tr/nakhchivan-statement-of-the-ministers-of-foreign-affairs-of-the-republic-of-azerbaijan_-the-islamic-republic-of-iran-and-the-republic-of-turkey_-07-march-2012_-nakhchivan.en.mfa, (Acc. 04.09.2024).
71. ***MFA (2012b),*** Trabzon Declaration Of The Ministers Of Foreign Affairs Of The Republic Of Azerbaijan, Georgia And The Republic Of Turkey, 08 June 2012, Trabzon, https://www.mfa.gov.tr/trabzon--declaration-of-the-ministers-of-foreign-affairs-of-the-republic-of-azerbaijan_-georgia-and-the-republic-of-turkey_-08-june-2012_-trabzon.en.mfa, (Acc. 04.09.2024).
72. ***MFA (2022),*** ՀՀ և Թուրքիայի ԱԳ նախարարների հանդիպումը, 12.03.2022, https://www.mfa.am/hy/press-releases/2022/03/12/Armenia_Turkey/11344, (հսկ. 04.09.2024):
73. ***MFA (2023),*** ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղարի պատասխանը ԶԼՄ-ների հարցին, 06.06.2023, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/ 2023/01/06/ps_comment/11805, (հսկ. 04.09.2024):
74. ***MFA (2024),*** Երկկողմ հարաբերություններ. Թուրքիա, 13.06.2024, https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr, (հսկ. 04.09.2024):
75. ***Natural gas (2014),*** Turkey, Azerbaijan Sign Deal For TANAP Pipes Supply, 14.10.2014, http://www.naturalgaseurope.com/turkey-azerbaijan-sign-deal-tanap-pipes-supply, (Acc. 04.09.2024).
76. ***Neftegaz (2016),*** Газ из РФ и Азербайджана могут поставлять в Европу через газопровод TAP, 02.11.2016, ttps://neftegaz.ru/news/transport-and-storage/205655-gazprom-mozhet-ispolzovat-gazoprovod-tar-dlya-eksporta-gaza-v-evropu-iz-rossii-cherez-sistemu-botas/, (д/в. 04.09.2024).
77. ***Pakistan today (2017),*** Defence triangle taking shape between Pakistan, Azerbaijan, Turkey, 18.12.2017, https://www.pakistantoday.com.pk/2017/12/17/defence-triangle-taking-shape-between-pakistan-azerbaijan-turkey/, (Acc. 04.09.2024).
78. ***Prime Miniter (2022),*** ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Պրահա, 06.10.2022, 07.10.2022, https://www.primeminister.am/hy/foreign-visits/item/2022/10/06/Nikol-Pashinyan-visiting-Praha/, (հսկ. 04.09.2024):
79. ***Prime Miniter (2023),*** Վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Թուրքիա, ՀՀ վարչապետի պաշտոնական կայք, 03.06.2023,

https://www.primeminister.am/hy/foreign-visits/item/2023/06/03/Nikol-Pashinyan-visiting-Turkey, (հսն. 04.09.2024):

80. ***Reuters (2023),*** Turkey has shut its airspace to Armenian flights, minister says, 03.05.2023, https://www.reuters.com/world/middle-east/turkey-has-shut-its-airspace-armenian-flights-minister-2023-05-03/, (Acc. 04.09.2024).
81. ***Russia today (2009),*** Azerbaijan President's Moscow visit puts gas into buyers' market, 27.10.2009, http://www.russiatoday.com/Business/2009041 7/Azerbaijan_President_s_Moscow_visit_puts_gas_into_buyers_market.ht ml, (Acc. 04.09.2024).
82. ***Russian Turkiye (2023),*** Турция и Азербайджан создадут совместный университет, Russian Turkiye, 13.07.2023, https://www.russianturkiye.com/ news/turcziya-i-azerbajdzhan-sozdadut-sovmestnyj-universitet/, (д/в. 04.09.2024).
83. ***Safrastyan (2005),*** Safrastyan R, The Concept of Eurasia and Turkey's Regional Strategies, Global Politician, 24.05.2005, https://www. armenian club.com/2005/05/24/the-concept-of-eurasia-and-turkeys-regional-strategies/, (Acc. 04.09.2024).
84. ***Seker (2009),*** Seker N., A Shift in Turkish Foreign Policy: Turkey's Strategic Depth/ Qantara, 07.08.2009, http://en.qantara.de/Turkeys-Strategic-Depth/ 6894c155/index.html, (Acc. 04.09.2024).
85. ***Today's Zaman (2009),*** MHP wants trancparency in Armenia talks, 25.04.2009, https://www.eurotopics.net/en/141933/MHP+wants+trancparency+in+Armen ia+talks/(Acc. 04.09.2024).
86. ***Trabzon Declaration (2012),*** Trabzon Declaration, Trabzon, 08.06.2012, http:/www.mfa.gov.ge, (Acc. 04.09.2024).
87. ***Trend (2011),*** Главы МИД Азербайджана, Ирана и Турции приняли совместную декларацию, состоящую из девяти пунктов (версия 2), 16.04.2011, https://www.trend.az/azerbaijan/politics/1862689.html, (д/в. 04.09.2024).
88. ***Turkic states (2021),*** Declaration of the Eighth Summit of the Organization of the Turkic States, 12.11.2021, https://www.turkicstates.org/assets/pdf/ haberler/declaration-of-8th-summit-2395-148.pdf, (Acc. 04.09.2024).
89. ***Web.archive (2023),*** Present-day Armenia located in ancient Azerbaijani lands - Ilham Aliyev, 13.07.2023, https://web.archive.org/web/2015072115 0915/http://www.news.az/articles/24723, (Acc. 04.09.2024).
90. ***World bullet (2010),*** Turkey, Azerbaijan establish Strategic Cooperation Council, 16.09.2010, http://www.worldbulletin.net/?aType=haber&ArticleID =63950, (Acc. 04.09.2024).

91. ***World view (2013),*** Azerbaijan and Turkey's Evolving Military Ties, 19.07.2013, https://worldview.stratfor.com/article/azerbaijan-and-turkeys-evolving-military-ties, (Acc. 04.09.2024).
92. ***Yinanç (2014),*** Yinanç B., A new honeymoon in Turkish – Azerbaijan relations, 21.04.2014, https://www.hurriyetdailynews.com/opinion/barcin-yinanc/a-new-honeymoon-in-turkish--azerbaijan-relations-65341, (Acc. 04.09.2024).
93. ***Давутоглу (2010),*** Давутоглу А., Внешняя политика Турции и Россия, Россия в глобальной политике, 28.02.2010, https://globalaffairs.ru/articles/vneshnyaya-politika-turczii-i-rossiya/, (д/в. 04.09.2024).
94. ***Инфотека 24 (2021),*** Турецкие школы в Азербайджане и Кыргызстане - шаг Анкары по созданию Великого Турана, 19.02.2021 https://infoteka 24.ru/2021/02/19/78160/, (д/в. 04.09.2024).
95. ***Каспия (2022a),*** В Азербайджане состоялось открытие международной школы «Маариф», 03.10.2022, https://kaspiy.az/index.php/v-azerbajdzhane-sostoyalos-otkrytie-mezhdunarodnoj-shkoly-maarif-foto, (д/в. 04.09.2024).
96. ***Каспия (2022b),*** Посол: В Азербайджане начнут действовать турецкие международные школы «Маариф», 29.08.2022, https://new.kaspiy.az/posol-v-azerbajdzhane-nachnut-dejstvovat-tureckie-shkoly-maarif, (д/в. 04.09.2024).
97. ***Маркедонов (2008),*** Маркедонов С., Турецкий марш на Кавказ, 25.10.2008, http://polit.ru/article/2008/09/25/tur/, (д/в. 04.09.2024).
98. ***Akşam (2018),*** Tanap seçimden önce açılacak, 26.04.2018. https://www.aksam.com.tr/siyaset/tanap-secimden-once-acilacak/haber-729561, (Acc. 04.09.2024).
99. ***BBC (2023),*** Cumhurbaşkanı Erdoğan Nahçıvan'ı ziyaret etti: 'Erivan, uzatılan barış elini tutmalı, BBC News, 25.09.2023, https://www.bbc.com/turkce/articles/cl7xwvj0kxwo, (Acc. 04.09.2024).
100. ***Düzel (2008),*** Düzel N., Volkan Vural: "Ermeni ve Rumlar tekrar vatandaş olsun", Turkish news, 08.09.2008, https://www.turkishnews.com/tr/content/2008/09/08/ermeni-ve-rumlar-tekrar-vatandash-olsun/, (Acc. 04.09.2024).
101. ***Hurriyet (2009),*** Başbakan Erdoğan, Azeri Meclisi'nde konuştu, 14.05.2009, https://www.hurriyet.com.tr/gundem/basbakan-erdogan-azeri-meclisinde-konustu-11642551, (Acc. 04.09.2024).
102. ***Sde.org (2021),*** Azerbaycan'da Başarıyı Getiren "İki devlet Tek Millet" Milli Stratejisi, Stratejik Düşünce Enstitüsü, 14.01.2021, https://www.sde.org.tr/azerbaycanda-basariyi-getiren-iki-devlet-tek-milletmilli-stratejisi-bolgesel-analiz-16, (Acc. 04.09.2024).

103. ***T24 (2020),*** Turkiye ile Azerbaycan Ortak Medya Platformu Kururyor, 09.09.2020, https://t24.com.tr/haber/turkiye-ile-azerbaycan-ortak-medya-platformu-kuruyor,901845, (Acc. 04.09.2024).
104. ***TCCB (2023),*** "2023, yeni vizyonumuz Türkiye Yüzyılı'nın başlangıcıdır", 18.01.2023, https://tccb.gov.tr/haberler/410/142559/-2023-yeni-vizyonumuz-turkiye-yuzyili-nin-baslangicidir-, (Acc. 04.09.2024).

CHRISTINE MELKONYAN

TURKEY'S FOREIGN POLICY IN THE SOUTH CAUCASUS (1991–2023)

The end of the Cold War and the establishment of three sovereign republics in the South Caucasus after the downfall of the Soviet Union essentially changed Turkey's Eurasian policy and led to the renewal of its geopolitical role and strategy. In other words, the dissolution of the USSR triggered the beginning of a new phase in Turkey's foreign policy in this region. Turkey became an important player in the South Caucasus, thanks to its deep historical ties, strategic geographical position connecting the region to Europe, and its economic, political, and security relationships with Azerbaijan and Georgia.

This study examines Turkey's contemporary policy in the South Caucasus. An analysis of the political landscape over the past 30 years shows that Turkey has become one of the most active players in the region. Besides, it must be acknowledged that the core of Turkey's interests in the South Caucasus has stayed unchanged over the centuries—that is, guaranteeing a continued Turkish presence in the region. In the past, Turkey pursued to achieve this through territorial conquest, whereas today, it goes for the same objective through the expansion of its political, economic, military, and cultural influence. It is worth noting that Turkey's strategic goals and aspirations to regional leadership are, in some ways, in conflict with Russia's essential interests in the region. The results of the 44-day war boosted Turkey's status and allowed it to enter a new phase of strengthening its position in the South

Caucasus, and simultaneously reduced Russia's influence. At the same time, it also provided Turkey the opportunity to present its relations with Azerbaijan as an example for other former Soviet Turkic-speaking countries. This approach has been possible due to Russia's relative passiveness in the region, as well as by the shifting status quo resulting from the 44-day war.

Azerbaijan shares the closest cultural and political ties with Turkey and occupies a unique place in its foreign policy, both in the Caucasus and beyond. This close relationship is a result of not only common cultural and linguistic bonds but also shared political and strategic interests. Turkey's support for Azerbaijan during the recent Artsakh (Nagorno-Karabakh) conflict enabled Ankara to get a central role in managing the Azerbaijani defense system. Furthermore, Turkey has upheld that its union with Azerbaijan will continue to serve as a guarantee of peace and stability in the region. This has direct implications for the current normalization process between Armenia and Turkey, which is now closely linked with the Armenia-Azerbaijan negotiations.

Thus, Turkey's foreign policy in the South Caucasus represents a specific example, characterized by military-diplomatic contacts with numerous actors and power centers, at the same time avoiding open conflict. Simultaneously, Ankara represents itself as an independent center of power and political influence. Any external actor, including the United States, the European Union, Russia, or China, recognizes the importance of working together with Turkey in order to achieve their goals in the South Caucasus.

In conclusion, the 44-day war marked a major turning point for Turkey's role in the region, positioning it not only as Azerbaijan's ally but also as one of the key players that is capable of influencing the regional security. Additionally, the case of Artsakh represents the first example in the South Caucasus that clearly demonstrated the effectiveness of solving a territorial dispute through military means. However, this precedent may raise a dangerous challenge for other countries that seek to implement the UN's principle of national self-determination.

ԱԼԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ
Քաղաքական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ

ՀՀ–ՌԴ ԵՎ ՀՀ–ՀԱՊԿ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՈՒԺԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՆԵՐԿԱ ՓՈՒԼՈՒՄ

Ներածություն

ԽՍՀՄ կազմալուծումը հանգեցրեց միջազգային հարաբերությունների համակարգում էական փոփոխությունների: Երկբևեռ գլոբալ հավասարակշռությունը փոխվեց միաբևեռի, իսկ միջազգային նոր իրողությունների մեջ հայտնված բալթյան, հարավկովկասյան և կենտրոնասիական երկրները հայտվեցին մի կողմից աշխարհաքաղաքական և անվտանգային նոր ինքնության փնտրտուքի, մյուս կողմից՝ ԽՍՀՄ փլուզումով պայմանավորված լրջագույն խնդիրների՝ ի հայտ եկած էթնո-քաղաքական կոնֆլիկտների, ազգային իշխանությունների ձևավորման, տնտեսական խնդիրների կարգավորման բարդագույն իրավիճակներում:

Նորանկախ պետություններում ազգայնականության աճը, ինքնորոշման շարժումները և միջէթնիկ թաքնված հակադրությունները խաղի նոր կանոններ պարտադրեցին նորանկախ երկրներին և դա, հատկապես, տեսանելի եղավ Հվ. Կովկասում: Այս իրավիճակը պայմանավորեց նորանկախ պետությունների ինչպես ներպետական, այնպես էլ միջպետական օրակարգը: Որպես հետևանք, հարավկովկասյան նորանկախ երկրներում ձևավորվեցին նոր վերնախավեր. Վրաստանում իշխանության եկավ ազգայնական Զվիադ Գամսախուրդիան, ՀՀ-ում՝ առավել ազատական հայացքների կրող Լ. Տեր-Պետրոսյանը, իսկ Ադրբեջանում՝

նախկին «պարտիական» Այազ Մութալիբովը: Երեք երկրներում էլ նոր էլիտաների իշխանության գալը կապված էր ազգային հարցերի հետ, որոնք այդ երկրներից երկուսում վերածվել էին էթնոքաղաքական հակամարտությունների (վրաց-օսական ու վրաց-աբխազական և Լեռնային Ղարաբաղի): ՀՀ-ում էթնոքաղաքական ներքին կոնֆլիկտ առկա չէր, սակայն ՀՀ-ն օժանդակում էր ԼՂԻՄ հայերի կյանքի իրավունքը պաշտպանելու շարժմանը, ապա ԽՍՀՄ օրենսդրության պայմաններում Ադրբեջանական ԽՍՀ-ից դուրս գալու և ՀԽՍՀ-ին միանալու, իսկ հետագայում արդեն նաև անկախանալու իրավունքների իրացմանը:

Նման պայմաններում հարավկովկասյան բոլոր երեք երկրներն էլ ունեին ինչպես անվտանգության վակուում, այնպես էլ արտաքին քաղաքական ուղեգծի ճշգրտման կենսական հարցեր: Չնայած ԽՍՀՄ վերացմանը, նախկին կենտրոնի հետ շփումները դեռ երկար ժամանակ արդիական ու կարևոր էին նորանկախ երկրներում, և դրանք դեռ տևական ժամանակ շարունակեցին ազդեցություն ունենալ այդ երկրների արտաքին ու ներքին քաղաքական օրակարգերի վրա: Մյուս կողմից, հենց նույն ՌԴ-ում ձևավորված իրավիճակը՝ կապված ներքաղաքական անկայունության և Հս. Կովկասում կենտրոնախույս ուժերի անջատողականության աճի հետ, բարդ, երբեմն էլ անվերահսկելի իրավիճակ էր ստեղծում նախկին կենտրոնի ծայրագավառներում: Նորանկախ պետությունները, միաժամանակ, ամենևին դեմ չէին ձևավորված ազդեցության վակուումը միջազգային հարաբերությունների ամենատարբեր տարածաշրջանային ու գլոբալ դերակատարներով լրացնելուն (ԱՄՆ, ԵՄ, Թուրքիա, Իրան Չինաստան և այլն), որոնք աստիճանաբար կարգավորում էին հարաբերությունները իրենց պոտենցիալ գործընկերների և, ինչու չէ՝ դաշնակիցների հետ:

Հարավկովկասյան երկրներից Ադրբեջանը և Վրաստանը անկախությունից անմիջապես հետո հռչակեցին ՌԴ-ից աստիճանաբար հեռանալու ռազմավարություն՝ առաջնահերթությունը տալով Մոսկվայի աշխարհաքաղաքական հակառակորդներին, որոնք սեփական շահերն ունեին նոր ձևավորված Հարավային Կովկա-

սում: Վրաստանը ձգտում էր իր հարաբերությունները խորացնել Արևմուտքի և ԵՄ-ի հետ՝ դա դիտարկելով որպես քաղաքակրթական և աշխարհաքաղաքական ընտրություն: Ադրբեջանը սեփական արտաքին քաղաքական գիծը կառուցեց մի քանի բաղադրիչների վրա՝ ռազմավարական շփումներ Թուրքիայի հետ, գործակցություն ՆԱՏՕ-ի հետ, ԵՄ-ի հետ ակտիվ շփումներ՝ հատուկ նշանակություն տալով ԱՄՆ-ի հետ փոխհարաբերություններին: Նշենք, որ Ադրբեջանի աշխարհաքաղաքական նշանակությունը պայմանավորված էր դրա կողմից տիրապետվող էներգետիկ պաշարներով, իսկ Վրաստանի ռազմավարական դերակատարումը՝ վերջինիս հաղորդակցային կարգավիճակով, ընդգծված հակառուսականությամբ, ՌԴ հյուսիսկովկասյան տարածաշրջանի հետ աշխարհագրական կապով:

Ի տարբերություն Վրաստանի ու Ադրբեջանի, ՌԴ հետ ՀՀ հարաբերությունները նոր՝ անկախ պետության կարգավիճակում, ձևակերպվեցին ակտիվ գործակցության ու բարիդրացիության ներքո, որն իր մեջ ուներ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք բաղադրիչներ: Թեև նորանկախ ՀՀ-ն Արևմուտքի հետ ընդհանուր շփումների ձևաչափերի մասնակից էր, սակայն իր անվտանգության հիմքում դրեց ՌԴ կողմից երկկողմ հարաբերությունները և հետխորհրդային տարածքում անվտանգային և տնտեսական ինտեգրացիոն միավորումների ձևավորմանը իր մասնակցությունն ու ակտիվ անդամակցությունը, որը, շփումների ակտիվության որոշակի փուլից հետո, ձևակերպվեց որպես «ռազմավարական գործակցության և դաշնակցային» հարաբերություններ:

Հայ-ռուսական ռազմաքաղաքական գործակցության համակարգը

Ռազմաքաղաքական համագործակցությունը նախկին ԽՍՀՄ երկու երկրների՝ ՌԴ-ի և ՀՀ-ի միջև զարգացավ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով, սակայն տարածաշրջանային անվտանգության ապահովման մեջ առանցքային դեր ու նշանակություն, այնուամենայնիվ, խաղաց հայ-ռուսական երկկողմ գոր-

ծակցությունը: Վերջինը, լինելով ՀՀ անվտանգության քաղաքականության առանցքը՝ որոշակի կանխատեսելի ուժային բալանս էր ապահովում Հվ. Կովկասում՝ մինչև 2020-ի սեպտեմբերին սկսված պատերազմը:

Հայ-ռուսական ռազմավարական գործակցության առանցքային բաղադիչը երկու երկրների միջև առկա ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցությունն ու դաշնակցային հարաբերություններն են, որոնց կարևորագույն կառուցատարր ՀՀ-ում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազան է: Դրա կարգավիճակը և գործունեությունը կանոնակարգվում են երկու երկրների նախագահների միջև Մոսկվայում 1995 թ. մարտի 16-ին կնքված «ՀՀ տարածքում ՌԴ ռազմական բազայի մասին» պայմանագրով (МИД РФ, 1995), որը նորանկախ Հայաստանի համար ռազմական անվտանգության կարևոր օղակ էր, իսկ ՌԴ-ի համար՝ տարածաշրջանում ուժային հավասարակշռության և սեփական քաղաքական ազդեցության կարևոր գործիք:

ՌԴ 102-րդ ռազմաբազայի ստորաբաժանումները, կառուցվածքային առումով, ՀՀ ԶՈՒ-ի հետ միասին Միացյալ ռազմական խմբավորման մաս են կազմում, և, համաձայն 1992 թ. սեպտեմբերի 30-ի պայմանագրի, ապահովում են հայ-թուրքական 345կմ և հայ-իրականան՝ 45կմ ձգվող սահմանների անվտանգությունը: Դրա մեջ են մտնում ՀՀ-ում ՌԴ անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ ստորաբաժանումները, որոնք ներառում են սահմանային 4 խմբեր՝ տեղակայված Գյումրիում, Մեղրիում, Արմավիրում և Երևանի Զվարթնոց օդանավակայանում (Զվարթնոցի սահմանապահ ստորաբաժանումները 2024 թ. օգոստոսից դուրս են բերվել օդանավակայանի տարածքից): Ըստ մամուլում առկա տեղեկատվության, ՌԴ 102-րդ ռազմաբազայի զորակազմի և սահմանապահ ստորաբաժանումների թվակազմը կազմում է 4.5 հազար ծառայող: Ռազմաբազայի նյութատեխնիկական սպասարկումը և ապահովումն իրականացվում է հավասար հիմունքներով: Ռազմատեխնիկական առումով, 102-րդ ռազ-

մաբազայի տրամադրության տակ առկա են տարաբնույթ հարձակողական ու պաշտպանական միջոցներ (ТАСС, 2013):

ՌԴ 102-րդ ռազմաբազայի հիմնական խնդիրը ԱՊՀ/ՀԱՊԿ արտաքին սահմանների շուրջ ռազմավարական հավասարակշռություն ապահովելն էր, որը տեղավորվում էր ՌԴ շահերի և ՀՀ անվտանգության առաջնահերթությունների միջակայքում՝ համաձայն Հավաքական անվտանգության պայմանագրի (ՀԱՊ)՝ 1992 թ. մարտի 15-ի դրույթների:

21-րդ դարի սկզբին հայ-ռուսական հարաբերությունները թևակոխեցին որակապես նոր փուլ: Սա պայմանավորված էր մի շարք իրողություններով: Մասնավորապես, նախ տարածաշրջանում էականորեն ավելացել էր Արևմուտքի և Թուրքիայի ազդեցությունը՝ ի հաշիվ ՌԴ-ի, ապա՝ Վրաստանում առաջ էր եկել ռուսական ռազմական բազաները հանելու քաղաքական օրակարգ (Российская Газета, 2007), որը պայմանավորված էր ԵԱՀԿ ստամբուլյան գագաթնաժողովում ՌԴ ստանձնած հանձնառություններով:

Այս փուլում արդեն հստակ տեսանելի էր Վրաստանի արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխությունը, Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունները խորացնելու՝ Վրաստանի մտադրությունը, ԱՄՆ-ի հետ ռազմավարական շփումների օրակարգը, ինչպես նաև ՌԴ ազդեցությունը նվազեցնելու գործնական քայլերը: Նման իրողությունները պատճառ դարձան, որ ՌԴ-ն 2000 թ. վերախմբագրի արտաքին քաղաքականության իր ռազմավարությունը՝ կենտրոնանալով ԱՊՀ տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործընթացների վրա՝ դա իրականացնելով երկկողմ և բազմակողմ ձևաչափերով:

2000-ի հոկտեմբերի 5-ին ՌԴ և ՀՀ միջև ստորագրվեց «ՀՀ և ՌԴ միջև դաշնակցային փոխգործակցության հռչակագիրը»՝ ուղղված 21-րդ դարի մարտահրավերներին միացյալ ուժերով հակադարձելուն (МИД РФ, 2000): 2001թ. հոկտեմբերի 3-ին 102-րդ ռազմաբազայում ՌԴ և ՀՀ ՀՕՊ միջոցները, որ ներառում էին ՀՀ ՀՕՊ ուժերը, ՌԴ ավիացիոն խմբավորումը և ՌԴ ռազմական բազայի զենիթահրթիռային գունդը, անցան շուրջօրյա ռազմական

հերթապահության: Սա որակապես նոր մակարդակի բարձրացրեց ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը: Ակնհայտ է, որ «ՀՀ-ի համար ՌԴ/ՀԱՊԿ հետ գործակցության առաջնահերթ ոլորտը ՀՕՊ-ն էր, որը պայմանավորված էր Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրական վտանգի առկայության փաստով» (Минасян, 2005): Նշենք, որ ՀՀ-ում գործող ՀՕՊ-ը ինտեգրված էր ՌԴ Հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի ՀՕՊ համակարգին:

2010-ին Հվ. Կովկասը հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում՝ մի շարք կարևոր քաղաքական գործընթացների պատճառով: 2010-ի օգոստոսի 20-ին ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի՝ ՀՀ պաշտոնական այցի ժամանակ ստորագրվեց ՀՀ և ՌԴ միջև ռուսական ռազմական բազայի՝ ՀՀ-ի տարածքում գտնվելու վերաբերյալ 1995 թ. մարտի 16-ի պայմանագրի 5-րդ արձանագրությունը, որի համաձայն՝ ռազմաբազայի գործունեության ժամկետը երկարաձգվեց մինչև 2044 թ. (Президент РФ, 2015): Համաձայն Արձանագրության 3 հոդվածում տեղի ունեցած խմբագրումների, ՌԴ-ն, ՀՀ հետ համատեղ ուժերով ՌԴ շահերը և ՀՀ անվտանգությունը ապահովելու գործառույթից բացի, նաև ստանձնում էր հետևյալ պարտավորությունը. «այդ նպատակներին հասնելու համար ռուսական կողմը աջակցություն է ՀՀ-ին՝ ժամանակակից ռազմական (հատուկ) տեխնիկայով ապահովելու գործում» (Кавказский узел, 2015): Տեքստում նշվում էր, որ այդ երկարացված ժամկետից հետո պայմանագրի ժամկետը ինքնաբերաբար երկարաձգվում էր 5 տարով, եթե կողմերից որևէ մեկը պայմանագրի գործողության ժամկետից առնվազն 6 ամիս առաջ մյուս կողմին գրավոր չհրազեկի պայմանագրին իր մասնակցությունը դադարեցնելու մասին:

Հայ-ռուսական հարաբերություններում զենքի ձեռքբերման թեման, առհասարակ, առանցքային կարևորության հարց է եղել ու շարունակում է այդպիսին մնալ: Այս հարցը Հայաստանի համար ունի նաև հավելյալ կարևորություն, քանի որ ՌԴ-ն, ՀՀ-ից բացի, զենք էր վաճառում նաև Ադրբեջանին, իսկ Բաքվի հռետորաբանությունը հաշվի առնելով, դա մտահոգիչ հանգամանք էր

Հայաստանի համար: Մյուս կողմից, առկա էր ՌԴ–ՀՀ ռազմավարական գործակցության ձևաչափը, և այդ քայլը չէր համապատասխանում դրա ոգուն ու փիլիսոփայությանը:

ՌԴ–ն, կողմերին զինտեխնիկա վաճառելով, փաստացի փորձում էր ռազմատեխնիկական հավասարակշռություն ապահովել հակամարտության կողմերի միջև, որպեսզի դրանցից որևէ մեկը չփորձի պատերազմ վերսկսել, քանի որ լավ գիտակցում էր, որ պատերազմի պայմաններում կարող է խախտվել տարածաշրջանային ուժային հավասարակշռությունը և իր դերակատարումը: Նաև դա էր պատճառը, որ ԼՂ հակամարտության ընթացքում Մոսկվան հավասար հեռավորություն էր պահպանում, և չէր աջակցում խնդրի որևէ կողմին, քանի որ իր համար թե՛ Երևանը, և թե՛ Բաքուն ունեին միմյանցից տարբերվող, սակայն կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն:

Զենքի վաճառքի բանաձևը բնորոշվում էր մի շարք հանգամանքերով. նախ՝ կապված էր կողմերի առաջնորդների հետ անձնական շփումների փաստով, երկրորդ՝ ուներ նաև առևտրային բաղադրիչը, որը ռուսական կողմին ապահովում էր ֆինանսական մեծածավալ հոսքերով: Աշխարհաքաղաքական իմաստով, զենքի վաճառքը սեփական ռազմաքաղաքական ազդեցության բաղադրիչ էր (այս տարրը որոշակիորեն փոփոխվեց այն ժամանակ, երբ Ադրբեջանն սկսեց զենք ձեռք բերել Թուրքիայից, Իսրայելից, Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներից): Առևտրային բաղադրիչի մասով կար ընկալում, որ երբ ՌԴ-ն ՀՀ-ին էր փոխանցում 200 մլն արժողությամբ որևէ զինտեխնիկա, ապա դրանով իր համար ապահովում էր 3 մլրդ դոլարի պատվեր Ադրբեջանից:

Զենքի վաճառքի ու կողմերին դրա փոխանցման թեման, առհասարակ, միշտ առանցքային է եղել Արցախի շուրջ պատերազմների բոլոր փուլերում: Այդ տեղեկատվությունը, սովորաբար, փակ էր, իսկ տեղի ունեցած գործարքների մասին փորձագետները տեղեկանում էին շատ ուշ: 1992 թ. ԽՍՀՄ ռազմատեխնիկական գույքը բաժանելուց հետո ՀՀ-ն, ըստ մամուլում տարածված տեղեկատվության, առնվազն մինչև 1996-ի կեսերը, ՌԴ-ից ստացել է

հավելյալ զինտեխնիկա ու զինամթերք: Դրանք կամ ԽՍՀՄ գույքի ուշացած փոխանցումներն էին, կամ, որ առավել իրատեսական ու ճշմարտացի էր, ՌԴ–ից ՀՀ–ին փոխանցված հավելյալ միջոցներ: Այս թեմայով ՌԴ Պետական դումայի պաշտպանության հանձնաժողովի ղեկավար Լ. Ռոխլինը 1997 թ. ապրիլին հայտարարեց, որ ՀՀ–ին փոխանցված գործարքի գինը եղել է մեկ միլիարդ դոլար, և դրա հիմքով ՌԴ–ում հետաքննություն է սկսվել: Սակայն, ինչպես հետագայում պարզվեց, ՌԴ նախագահի և վարչապետի մակարդակով նման հրամանի ստորագրում տեղի չի ունեցել, մինչդեռ ՌԴ ՊՆ մակարդակում գործարքի փաստը հաստատվեց («Коммерсантъ», 1997):

Ձենքի վաճառքի և հայ–ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունների վերաբերյալ ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի հետ անցկացված հարցազրուցում նա նշել է. «Ռազմատեխնիկական հարաբերությունները սերտագույն էին, և ՀՀ–ին հաջողվում էր ձեռք բերել այդ ժամանակի համար արդիական և ՀՀ–ին անհրաժեշտ տեխնիկա: Մի կողմից, դա երկրների ղեկավարների անձնական հարաբերությունների, մյուս կողմից՝ երկու երկրների միջև առկա դիվանագիտական և ռազմավարական ընդհանուր պատկերացումների արդյունք էր: Նշեմ, որ մեծ աշխատանք էր տարվում, որ պատվիրված և համաձայնեցված տեխնիկան տրամադրման ժամկետների հետ կապված մեծ շեղումներ չունենար, հետևաբար, հայկական կողմը ինտենսիվ աշխատում էր դաշնակից երկրի կառարավարման համակարգի բոլոր մակարդակների հետ» (Քոչարյան, 2023):

ՀՀ և ՌԴ ռազմատեխնիկական համագործակցության հետագա մյուս դրվագները ունեին արդեն առավել կոնկրետ, հասցեական դրսևորումներ, որը կապված էր նաև ՀՀ–ում առկա ֆինանսական բարդ իրողությունների հետ: Արդյունքում, ՌԴ–ն սկսեց վճարման նոր համակարգ գործարկել ՀՀ–ի հետ իր շփումներում՝ հաշվի առնելով երկու երկրների հարաբերությունների դաշնակցային բնույթը: 2015 թ. ՌԴ–ն ՀՀ–ին տրամադրեց 200 մլն դոլարի միջպետական վարկ, որի շրջանակներում Երևանը ձեռք բերեց

ՀԿՀՀ «СМЕРЧ» համակարգեր՝ իրենց ռազմամթերքով, ՇԶՀՀ «Верба» և «Игла-С», ТОС-1А «Солнцепек» համակարգեր, հակատանկային «Конкурс-М» и «Корнет-Э» միջոցներ, «Тигр» զրահամեքենա, ռադիոհետախուզական պայքարի «Автобаза-М» միջոցներ, կապի միջոցներ և այլն (Известия, 2018): Հետագայում՝ արդեն 2016-ին, ՀՀ-ին զինտեխնիկայի փոխանցումները շարունակվեցին, որի արդյունքում ՀՀ-ն ստացավ օպերատիվ մարտավարական «Искандер-Э» համակարգեր (2016 թ., 300մլն դոլար արժեքով), ԶՀՀ «Бук-М1-2» և այլն: ՌԴ-ից զենք ձեռք բերելու նպատակով 2017-ի հոկտեմբերին ձևակերպվեց միջպետական նոր վարկ, որով հայկական կողմին նախատեսված տեխնիկայի փոխանցումը պետք է տեղի ունենար 2018–2022 թթ. ընթացքում: ՀՀ-ն այս զինտեխնիկայի համար վճարում էր ընդամենը 10% կանխավճար, իսկ մյուս մասը վճարվում էր միջպետական վարկի միջոցներից: Այս գործարքի արդյունքում ՀՀ-ն ՌԴ-ից ձեռք բերեց 4 միավոր Су-30СМ ինքնաթիռ: Ինքնաթիռները ՀՀ-ն ձեռք բերեց ՌԴ-ի ներքին գներով՝ հիմք ընդունելով ՀՀ-ի՝ ՀԱՊԿ անդամ լինելու փաստը («Коммерсантъ», 2019):

Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ-ից բացի, ՌԴ-ից զինտեխնիկա գնում էր նաև Ադրբեջանը, և անհամեմատ ավելի մեծ քանակով: Դա, մի կողմից, կապված էր Ադրբեջանի ռազմական բյուջեի՝ ՀՀ ռազմական բյուջեի ծավալները գերակշռելու հանգամանքով, մյուս կողմից՝ այն իրողությամբ, որ Ի. Ալիևը ԼՂ-ի խնդրի լուծման իր մոտեցումներում ռազմական լուծումը օրակարգից երբեք դուրս չէր բերում: 2003 թ. ՌԴ և Ադրբեջանի միջև կնքվեց ռազմատեխնիկական համագործակցության համաձայնագիր, իսկ 2010–13 թթ. Ադրբեջանն արդեն անհամեմատ մեծ ծավալի զինտեխնիկայի պատվեր տվեց ՌԴ-ին (Макиенко, 2018):

Ռազմատեխնիկական ուժային նման հավասարակշռությունը բավականին բարդ իրավիճակ էր ստեղծում տարածաշրջանում, և ՀՀ-ն իր անվտանգության պլանավորման մեջ այս առումով առանձնահատուկ կարևորություն էր տալիս ՌԴ 102-րդ ռազմաբազային և ՌԴ հետ դաշնակցային պարտավորություններին: Ի

դեպ, նշենք, որ ՌԴ անվտանգային երաշխիքները ՀՀ անվտանգության գծով տարածվում էին բացառապես ՀՀ-ի՝ միջազգային ճանաչված տարածքների վրա, որն իր մեջ չէր ներառում ԼՂՀ-ն և դրա շուրջ ազատագրված 7 շրջանները: Զուգահեռաբար նշենք, որ մինչև 2018 թվականը ՀՀ-ն իրեն հռչակում էր ոչ թե որպես հակամարտության կողմ, այլ որպես ԼՂՀ անվտանգության երաշխավոր՝ հաշվի առնելով այնտեղ բնակվող էթնիկ հայ ազգաբնակչությանը Ադրբեջանից սպառնացող գոյութենական սպառնալիքները և ԼՂՀ-ի՝ դիմադրության ռեսուրսի անհամապատասխանությունը Ադրբեջանի միջոցներին: Իրեն հռչակելով ԼՂՀ անվտանգության երաշխավոր՝ ՀՀ-ն, փաստացի, հանձնառություն էր ստանձնում՝ ԼՂՀ դեմ ռազմական գործողությունների վերսկսման դեպքում ներգրավվել ռազմական գործողությունների մեջ: Այստեղ ամենահիմնական հարցը հետևյալն էր. Երևանը իրեն դիտարկում էր աջակցողի՞, թե՝ լիարժեք մասնակցի կարգավիճակում: Իրավական առումով, եթե ՀՀ և Ադրբեջանի միջև պատերազմ սկսվեր, ապա դա պետք է տարածվեր նաև այլ մակարդակների ու շրջանակի վրա թե՛ ՀՀ, և թե՛ Ադրբեջանի մասով: Փաստացի, ՀՀ զինուժը վաղուց ժամկետային զինծառայության, ինչպես նաև պայմանագրայինների գծով հնարավոր ամեն կերպ ներգրավված էր ԼՂՀ անվտանգության ապահովման մեջ: Ակնհայտ է, որ այս պարագայում հարց է ծագում, թե ՌԴ-ն ինչպե՞ս էր ապահովելու 2010-ին իր ստանձնած դաշնակցային պարտավորությունները, եթե ռազմական գործողությունները տարածվեին հայ-ադրբեջանական սահմանային այլ հատվածների վրա (այս պարագայում կարելի է հիշել ՌԴ կոշտ դիրքորոշումը՝ 2018-ի օգոստոսին Տավուշում տեղի ունեցած հայ-ադրբեջանական սահմանային էսկալացիայի վերաբերյալ, երբ այդ առնչությամբ շատ սուր գնահատականներ հնչեցին, և որոնց հիմնական հասցեատերը ՀՀ-ն էր (Rusarminfo, 2020): Փաստենք նաև, որ ՌԴ 102-րդ ռազմաբազայի պատասխանատվության ոլորտի ընդլայնումն, առաջին հերթին, մեծացնում էր ՀՀ մոբիլիզացիոն հնարավորությունները, որ պետք է ուղղվեին դեպի ԼՂՀ-ի անվտանգության ապա-

հովում, իսկ գործող ՋՈՒ ստորաբաժանումները, պատերազմի վերսկսման դեպքում, պետք է տեղափոխվեին ԼՂ-Ադրբեջան ճակատ: Հենց նման իրավիճակում չհայտնվելու համար ՌԴ-ն փորձում էր ապահովել տարածաշրջանում ուժային այնպիսի բալանս, որը կլիներ իր կողմից հնարավորինս կառավարելի, քանի որ դրա խախտումը նրան ստիպելու էր ընտրություն կատարել ՀՀ և Ադրբեջանի միջև, ընդ որում, գործընթացում կարող էին ներգրավվել նաև գեոպոլիտիկ այլ խաղացողներ: Մեծ հաշվով, այն, ինչ տեղի ունեցավ 2020-ի սեպտեմբերին սկսված պատերազմի հետևանքով, տարածաշրջանային ուժային բալանսի խախտում էր, որտեղ խախտվեց ՌԴ մենիշխան դերը Հվ. Կովկասում: Նման հետևանքի հանգեցրին այդ ժամանակահատվածում տեղ գտած երկու կարևոր իրադարձություններ. առաջին՝ ՀՀ-ում 2018-ին տեղի ունեցած իշխանափոխությունը, և երկրորդ՝ 2022 թ. փետրվարի 22-ին ՌԴ կողմից Ուկրաինայի դեմ նախաձեռնած հատուկ ռազմական գործողությունը, որը վերաճեց ՌԴ և Արևմուտքի շուրջ 55 պետության միջև գլոբալ առճակատման:

Վերադառնալով հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունների դիտարկմանը, նշենք, որ այդ հարաբերությունների խորացմանը զուգահեռ, տարածաշրջանում տեղի էին ունենում ուժային այլ բևեռների հարաբերությունների սերտացման որակական նոր փուլի անցնելու գործընթացներ. մասնավորապես՝ հայ-ռուսական 2010-ի արձանագրության ստորագրումից 4 օր առաջ՝ օգոստոսի 16-ին, ստորագրվեց «Ադրբեջանի և Թուրքական Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության և փոխօգնության» պայմանագիրը (Президент Азербайджана, 2015): Կողմերը պարտավորվում էին միմյանց տրամադրել բազմակողմ, այդ թվում՝ ռազմական օգնություն՝ երրորդ կողմի հնարավոր ագրեսիայի պայմաններում: Պայմանագրում կային կետեր, որոնք կանոնակարգում էին ռազմատեխնիկական ոլորտում ակտիվ գործակցության միացյալ քայլերը, սահմանների անվտանգության ապահովման և տարածքային ամբողջականության ապահովման հետ կապված խնդիրները:

Զուգահեռաբար նշեք, որ Ադրբեջանը, Թուրքիայից զատ, ակտիվ գործակցում էր նաև ՌԴ հետ՝ երկկողմ շփումները բնորոշելով որպես «ռազմավարական-գործընկերային» (Президент РФ, 2015): Բացի դա, Ադրբեջանը Մոսկվայի հետ ուներ մեկ տասնյակից ավելի համագործակցային փաստաթղթերի փաթեթներ: Սա, իհարկե, անհանգստության աղբյուր էր ՀՀ-ի համար, սակայն անգամ ռազմավարական գործընկերային շփումների իրավական և փաստացի առկայության պայմաններում ՀՀ-ն հարցին մոտենում էր իրատեսականության դիրքերից՝ հասկանալով, որ ՌԴ-ի պես ազդեցություն և ներուժ ունեցող պետության շահերը շատ ավելի լայն և խորն են, քան հայ-ռուսական հարաբերությունների շրջանակը: Հետևաբար, պետք է աշխարհաքաղաքական իմաստով իրատես լինել և այնպես դիրքավորվել, որ իրական շփումներում ձեռքբերումները դառնան իրողություն, և ոչ թե կառչել ֆորմալ, դեկլարատիվ բնորոշումներից և դառնալ դրանց պատանդը: Մյուս կողմից, այստեղ առերեսվում ենք այնպիսի իրավիճակի հետ, երբ քաղաքական գործիչները «ռազմավարական գործընկերություն» հասկացության տակ ենթադրում և նկատի են ունենում հարաբերությունների խորության տարբեր աստիճաններ: ՀՀ-ի պարագայում, եզրույթի կիրառումը ՌԴ-ի դեպքում առաջին հերթին նկատի է առնվում ռազմաքաղաքական գործընկերությունը, Ադրբեջանի դեպքում շեշտադրումն առաջին հերթին արվում էր էներգետիկայի և տնտեսության ոլորտում գործակցության վրա:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՌԴ-ում կար կարծիք, որ Երևանն առավել շահագրգիռ է իր տարածքում ռուսական ռազմական ներկայությամբ, քան Մոսկվան: Սակայն նշենք նաև, որ տարածաշրջանում ռուսական միակ ռազմաբազան պակաս կարևոր չէր նաև ՌԴ-ի համար: Հիպոթետիկ այն պարագայում, եթե ՀՀ-ն պահանջի ՌԴ զորքերի դուրս բերում իր տարածքից, ապա ՌԴ-ն կկորցնի իր ռազմատեխնիկական ներկայությունը տարածաշրջանում, հետևաբար նաև՝ Հվ. Կովկասում իր ազդեցության կարևորագույն գործիքը, որը կարող է բավականին վատ անդրադառնալ Թուրքիայի և Իրանի հետ իր շփումների վրա: ՀՀ-ի նկատմամբ Անկա-

րայից բխող սպառնալիքի շարունակության դեպքում, նման պայմաններում ձևավորված վակուումը կարող է լցվել այլ պետության ռազմական կոնտինգենտով: Միաժամանակ, այն գաղափարը, թե ռազմաբազան ԼՂՀ-ի վրա Ադրբեջանի հնարավոր հարձակումը զսպող հիմնական գործոնն է, իրականում չէր համապատասխանում իրականությանը, քանի ու ՌԴ-ն երբեք հանձառություն չէր ստանձնել, որ ԼՂ-ի շուրջ ռազմական գործողությունների պարագայում կպաշտպանի ԼՂՀ-ին:

ՀԱՊԿ-ը՝ որպես հավաքական անվտանգության համակարգ. միֆեր և իրականություն

ՀԱՊԿ-ի՝ որպես կազմակերպության, հիմքը Հավաքական անվտանգության պայմանագիրն է, որը կնքվել է 1992 թ. մայիսի 15-ին և մինչ 1999-ը ներառում էր 9 պետություն (անդամ երկրների էին ՀՀ-ն, Ղազախստանը, Ղրղզստանը, ՌԴ-ն, Տաջիկստանը, Ուզբեկստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը): Ադրբեջանը, Վրաստանը և Ուզբեկստանը 1999 թ. դուրս եկան ՀԱՊ-ից: ՀԱՊ-ի ինստիտուցիոնալացման գործում առաջնահերթ դերակատարում խաղաց ԱՊՀ 2002 թ. հոկտեմբերի քիշնևյան հանդիպումը, որի ժամանակ հաստատվեց ՀԱՊ կանոնադրությունը, որով և ձևավորվեց ՀԱՊԿ-ը. անդամներ դարձան ՀՀ-ն, ՌԴ-ն, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը: 2002-ից այն ինստիտուցիոնալ ձևակերպում ստացավ ՄԱԿ-ի քարտուղարությունում՝ որպես հավաքական «ինքնապաշտպանության» և «անվտանգության» սկզբունքների վրա հիմնված ռազմաքաղաքական դաշինք: 2024-ի դրությամբ ՀԱՊԿ անդամ երկրներ են ՌԴ-ն, Բելառուսը, ՀՀ-ն, Ղազախստանը, Տաջիկստանը և Ղրղզստանը:

Հայեցակարգային առումով, ՀԱՊԿ-ի գործունեությունն ածանցվում է «հավաքական ինքնապաշտպանության» սկզբունքից, համաձայն որի՝ դաշինքի անդամ-երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ ագրեսիայի ցանկացած դրսևորում (այդ թվում՝ ռազ-

մական) դիտարկվում է որպես հարձակում ողջ դաշինքի վրա, հետևաբար, դաշնակիցները պարտավորվում են հնարավոր բոլոր, այդ թվում՝ ռազմական միջոցների ներգրավմամբ համատեղ քայլեր ձեռնարկել՝ ընդհանուր սպառնալիքին հակադարձելու համար: Այս սկզբունքը արտացոլված է դաշինքի հիմնարար փաստաթղթերում՝ պայմանագրում և հայեցակարգում, որոնք նաև նախանշում են դաշինքի և դրա անդամների քաղաքական վարքը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, որոշակիացնում են ՀԱՊԿ նպատակներն ու խնդիրները, զարգացման տեսլականը: Ինչպես ընդունված է միջազգային պայմանագրերի պրակտիկայում, ՀԱՊԿ-ի հիմնարար պայմանագրի դեպքում ևս, դրա բովանդակությունը (այդ թվում՝ համատեղ միջոցառումների բնույթն ու ծավալը) որոշվում է դաշինքի անդամ երկրների միջև դիրքորոշումների համաձայնեցման ու ամբողջացման միջոցով: 11 հոդվածները, որոնք վերախմբագրվել են 2010-ին, նախատեսում են, որ «Հավաքական անվտանգության պայմանագիրը» ստորագրած երկրները պարտավորվում են միմյանց դեմ գործողություններ չծավալել, համաձայնեցնել անվտանգության, արտաքին քաղաքականության ոլորտներում իրենց դիրքորոշումները, ստեղծել ընդհանուր մոտեցումները համակարգող մարմիններ, իրականացնել ընդհանուր մարտահրավերներին և սպառնալիքների հակադարձելու միացյալ գործողություններ:

Թեև հավաքական անվտանգության պայմանագրի երկրորդ և չորրորդ հոդվածները (ОДКБ, 2012), ինչպես բովանդակությամբ, այնպես էլ գաղափարական հենքով նման են 1949 թ. Վաշինգտոնում կնքված Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության հիմնարար փաստաթղթի չորրորդ և հինգերորդ հոդվածներին (NATO, 1949), սակայն, ի տարբերություն ՆԱՏՕ-ի, ՀԱՊԿ-ի անդամ երկրների հավաքական ինքնապաշտպանության համակարգի՝ իրավականորեն պարտավորեցնող գործառույթները գործի են դրվում միայն այն դեպքում, եթե կազմակերպության անդամ՝ ագրեսիայի ենթարկված պետությունը օգնության և օժանդակության խնդրանքով պաշտոնապես դիմում է դաշինքի մյուս անդամներին:

Այս հանգամանքը բավականին խնդրահարույց իրավիճակ է ստեղծում՝ կաթվածահար անելով կազմակերպության արդյունավետությունը: Մյուս կողմից, սա յուրահատուկ մեխանիզմ է, որն առանձին դեպքերում կազմակերպության որոշ անդամների հնարավորություն է տալիս չկատարելու կազմակերպության շրջանակներում իրենց դաշնակից համարվող անդամ երկրի նկատմամբ ստանձնած պարտավորությունները: Դրա վառ օրինակներից էր, երբ 2022 թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ-ն դիմեց ՀԱՊԿ-ին՝ Ադրբեջանի կողմից իր տարածք ներխուժման փաստի առթիվ: Ըստ ՀՀ պաշտոնական հաղորդագրության, ՀՀ-ն ՀԱՊԿ-ին դիմել էր դրա կանոնադրության 4-րդ հոդվածի հիման վրա (Sputnik-news, 2022) (մինչդեռ կազմակերպությունում ակնկալում էին, որ դիմումը կլինի 2-րդ հոդվածի հիմքով): Ոչ գործուն քայլերը, որոնց ՀՀ-ն առերեսվեց ՀԱՊԿ-ի մասով, կապված էին մի շարք իրողությունների հետ. մասնավորապես, ՀԱՊԿ-ի հեղինակազրկման ուղղությամբ ՀՀ նախորդ քայլերի (ՀԱՊԿ Գլխավոր քարտուղար Յու. Խաչատուրովի ձերբակալությունը, հակառուսական հռետորաբանությունը, կառույցին և ՌԴ-ին ուղղված մեղադրանքները առ այն, որ ԼՂ մասով ՀՀ-ին, իբրև, անհրաժեշտ չափի և ծավալի օգնություն չեն ցուցաբերել, և այլն):

Այսպիսով, ՀԱՊԿ-ը, հոչակագրային առումով հավաքական ինքնապաշտպանության ֆորմալ համակարգ է, որն առաջնորդվում է «հավաքական անվտանգության» սկզբունքով: Քաղաքական առումով, այն ընդհանուր խորհրդային անցյալ և անվտանգության մարտահրավերներ ունեցող երկրների միություն է, որոնց շփման առանցքը ՌԴ-ն է, իսկ դրա տարբեր անդամների միջև կան բազմաթիվ հակասություններ և հակադրություններ, որոնք երբեմն անգամ վերածվում են սահմանային միջադեպերի (Armenpress, 2022): Այս առումով ՀԱՊԿ-ի կայացման՝ ամենից կարևոր ցուցիչը դրա քաղաքական դերի և անդամ երկրների համար անվտանգության ընդհանուր ընկալումների ձևավորումն է, հավաքական շահերի մշակումն ու իրացումը, որը, սակայն, կազմակերպության գործունեության ներկա փուլում բացակայում է:

Դրա հիմնական պատճառներն են՝ կազմակերպության անդամների ազգային շահերի՝ միմյանցից օբյեկտիվորեն տարբերվող բաղադրիչները, վտանգների ու սպառնալիքների ընդհանուր ընկալումների տարբերությունները, հավաքական միջոցներով դրանց արձագանքելու՝ ոչ միշտ առկա պատրաստակամությունը, կանոնադրությամբ պարտադիր իրացման ենթակա փոխադարձ աջակցության և օժանդակության գործողությունների նկատմամբ անդամների տարբերվող մոտեցումները, երրորդ երկրների հետ հարաբերություններում անդամ երկրների՝ միմյանցից տարբերվող շահերն ու քաղաքականությունը, արտաքին հարթակներում պատշաճ համագործակցության բացակայությունը և այլն: Նշյալի ամենից բնորոշ օրինակը վերաբերում է ՀԱՊԿ անդամ ՀՀ-ին և ՀԱՊԿ անդամ չհանդիսացող Ադրբեջանի նկատմամբ կազմակերպության մյուս անդամների վերաբերմունքին, որը շատ տարբեր կերպ է դրսևորվում. ՀԱՊԿ անդամների զգալի մասը ունի ջերմագույն, ռազմավարական հարաբերություններ Ադրբեջանի հետ, ընդ որում, դրանց մի զգալի մասն էլ շատ սառը հարաբերություններ ունի Հայաստանի հետ: Այստեղ կան բազմաթիվ պատճառներ՝ կապված ՀՀ ներկայիս իշխանությունների, արտաքին քաղաքականության և, մասնավորապես, Արևմուտքի հետ սերտ գործակցություն հաստատելու՝ Երևանի մոտեցումների հետ, ինչպես նաև Հվ. Կովկասում պաշտոնական Երևանի տարածաշրջանային ուժային հավասարակշռության փոփոխության, Արևմուտք–Արևելք մակրոտարածաշրջանային հաղորդակցային ուղիների ծրագրերին աջակցելու և շատ այլ հանգամանքերի հետ: Այս առումով, ՀԱՊԿ-ում առկա խնդիրների բնույթի և դրսևորումների վերաբերյալ առավել հստակ պատկերացում կազմելու համար հարկավոր է մի շարք ցուցիչներով վերլուծել կազմակերպության անդամ երկրների քաղաքականությունը՝ դրանք դիտարկելով ՀՀ և Ադրբեջանի հանդեպ մյուս անդամ երկրների վերաբերմունքի լույսի ներքո:

ՀԱՊԿ-ի քաղաքական դերակատարության կարևորագույն մարտահրավերներից մեկը դրա անդամների ազգային շահերի և դրանց վերաբերյալ երբեմն տարբերվող պատկերացումներն են:

Պետության ազգային շահերն, առաջին հերթին, դրա անվտանգության, զարգացման և հեռանկարի ուղենիշներ են, որոնք ուրվագծում են պետության քաղաքականության հիմքերը, բնույթը, շեշտադրումները և դինամիկան: ՀԱՊԿ անդամ երկրների ազգային շահերի համատեղելիությունն ըմբռնելու համար, բացի հռչակագրային և հայեցակարգային փաստաթղթերից, պետք է առաջին հերթին հետազոտել այդ շահերի քաղաքական, տնտեսական, ռազմական, քաղաքակրթական և այլ բաղադրիչները: Շահերի համատեղելիության վերաբերյալ մոտեցումներն է՛լ ավելի իրատեսական և առարկայական կլինեն, եթե դրանք դիտարկվեն և համեմատվեն ՀՀ-ի և ՀԱՊԿ-ում վերջինիս դաշնակիցների, ինչպես նաև ՀՀ հակառակորդ պետության՝ Ադրբեջանի և ՀԱՊԿ երկրների շփումները, ապրանքաշրջանառությունը, քաղաքական օրակարգը և այլն: Վերոնշյալի մասով առաջնային բաղադրիչ է կողմերի ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալը (Տես՝ աղյուսակ 1):

Աղյուսակ 1. (*ՀՀ վիճակագրական պետական ծառայություն (2020*), *Внешняя Торговля России (2020), Внешняя Торговля России (2021), Financial One (2023), ЭКСПЕРТ (2024), Sputnik (2024), ИНТЕРНЕТ-ПОРТАЛ СНГ ПРОСТРАНСТВО ИНТЕГРАЦИИ (2022):* Երկրների միջև ապրանքաշրջանառությունը ներկայացված է ԱՄՆ դոլարով:

	2020 թ.		2021 թ.		2022 թ.		2023 թ.	
Երկրներ*	**ՀՀ**	**Ադրբեջ.**	**ՀՀ**	**Ադրբեջ.**	**ՀՀ**	**Ադրբեջ.**	**ՀՀ**	**Ադրբեջ.**
ՌԴ	3,7 մլրդ	2,8 մլրդ	4.6 մլրդ	3,3 մլրդ	7,9 մլրդ	3.71 մլրդ	11,3 մլրդ	4,358
Ղազախ.	18,9 մլն	109 մլն	27,7 մլն	332,2 մլն	69,2 մլն	463.3 մլն	135, 7 մլն	529.4 մլն

Բելառուս	139 մլն	313,1 մլն	156,2 մլն	424,4 մլն	305,4 մլն	363,5 մլն	278,4 մլն	356,5 մլն

Ներկայացված վիճակագրական տվյալներից երևում է, որ բացի ՌԴ-ից, դիտարկված ՀԱՊԿ երկրներից հաջորդ երկու ամենամեծ տնտեսություն ունեցող երկրները Ադրբեջանի հետ ունեն բազմապատիկ ավելի ապրանքաշրջանառություն, քան ՀՀ-ն, ուստի, դրանց համար Բաքվի շահերի կարևորությունը օբյեկտիվ է: Ինչ վերաբերում է ՌԴ-ին, ապա ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների և ՌԴ-ից ՀՀ տեղափոխված ՌԴ քաղաքացիների առկայության բերումով, հայ-ռուսական ապրանքաշրջանառությունը վերջին 4 տարվա մեջ աննախադեպ է: Մյուս կողմից, ՌԴ-Ադրբեջան ապրանքաշրջանառության մի շարք բաղադրիչներ միշտ չէ, որ արտացոլվում են պաշտոնական վիճակագրության մեջ, և դա, առաջին հերթին, կապված է ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների պայմաններում Ադրբեջանի միջոցով երրորդ երկրներին էներգառեսուրսներ վաճառելու հետ: Վերոնշյալ վիճակագրությունը փաստում է, որ ՀԱՊԿ անդամ երկրների համար կշեռքի նժարներից մեկին իրենց իրավաքաղաքական պարտավորություններն են՝ ՀԱՊԿ-ի ձևաչափում, մյուսին՝ տնտեսական կարևոր գործընկերոջ հետ շփումները կորցնելու հնարավոր հեռանկարը:

ՀԱՊԿ անդամ պետությունների ազգային շահերի ընդհանրության հաջորդ կարևոր ցուցիչը անդամ երկրների ռազմատեխնիկական գործակցությունն է ՀՀ-ի և Ադրբեջանի հետ, որի բաղադրիչներ են՝ ռազմական գնումները, ռազմատեխնիկական շփումները, խորհրդակցությունները: Տեսականորեն, հավաքական անվտանգության համակարգերը պետությունների կողմից ստեղծվել են, որպեսզի միացյալ, առավել արդյունավետ և նվազ ծախսատար լուծումներ տան պետական անվտանգության, հատկապես ռազմական անվտանգության խնդիրներին ու սպառնալիքներին, արձագանքեն դրանց՝ նվազեցնելով արտակարգ կամ

ռազմական իրավիճակներում կորուստների քանակը, արտոնյալ պայմաններով համագործակցեն ռազմական գնումների ոլորտներում: ՀԱՊԿ-ի շրջանակներում ՀՀ ռազմական անվտանգության խնդիրների լուծման առումով, պաշտոնական Երևանը միշտ հնարավորություն ունեցել է՝ օգտվելու այդ բոլոր տարբերակներից:

Ռազմական գործակցության ցուցիչի հիմքով Ադրբեջանի և ՀԱՊԿ անդամ երկրների շփումները դիտարկելիս ու վերլուծելիս բավականին հետաքրքիր պատկեր ենք նկատում: Դա, մասնավորապես, վերաբերում է կողմերի միջև ռազմատեխնիկական համագործակցությանն ու զենքի առևտրին: ՀԱՊԿ շրջանակներում ՀՀ դաշնակից համարվող երկու երկիր՝ ՌԴ-ն և Բելառուսը, Ադրբեջանի հետ ակտիվ գործակցում են մեկ տասնամյակից ավելի: Օրինակ, Զենքի վաճառքի միջազգային կենտրոնի տվյալներով, 2009–2016 թթ. ընթացքում Ադրբեջանը ՌԴ–ից, ընդհանուր առմամբ, 4,07 մլրդ, իսկ Բելառուսից՝ 611,2 մլն դոլարի զենք ու զինամթերք է ձեռք բերել (ЦАМТО, 2017): Զինտեխնիկայի նշյալ խմբաքանակի մեջ մտնում են ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական միջոցներ: Տրամաբանական է, որ նման գործակցությունն անհանգստացնող և մտահոգիչ է ՀՀ-ի համար: Այդ մասին պաշտոնական Երևանը մեկ անգամ չէ, որ բարձրաձայնել է: 2015 թ. մարտին այս հարցադրման շուրջ ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանը հայտարարեց, որ գլխավոր խնդիրն այն է, որ «հայ զինվորը հասկանում է՝ իրեն ուզում են սպանել ռուսական զենքից… այդ հարցը պետք է լուծել» (Panarmenian, 2015): 2015 թ. սեպտեմբերին BBC-ին տված հարցազրույցում ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանը «բնական» անվանեց այն փաստը, որ ՌԴ-ն զենք է վաճառում Ադրբեջանին: «Անշուշտ, չեմ կարող ասել, թե մեզ դուր է գալիս այն փաստը, որ Ադրբեջանը զենք է գնում ՌԴ–ից, սակայն, հավանաբար, դա բիզնեսի, առևտրի հարց է» (ЦАМТО, 2017):

Այս համատեքստում հարկ է նաև անդրադառնալ Ադրբեջանին զինտեխնիկա վաճառելու հարցադրման վերաբերյալ ՌԴ տարբեր պետական պաշտոնյաների մոտեցումներին ու հիմնավորումներին: Օրինակ, ՌԴ նախկին վարչապես Դ. Մեդվեդևը 2016

թ. ապրիլի դեպքերից անմիջապես հետո ՊՏՊ հեռուստաալիքին տված իր հարցազրույցում նշեց, որ. «Եթե ՌԴ-ն հրաժարվի (Ադրբեջանին – Ա.Ղ.) զենք վաճառելուց, ապա այդ տեղը կզբաղեցնեն այլ երկրներ, և վաճառված զինտեխնիկայի մահաբերության աստիճանը դրանից չի պակասի: Այդ հանգամանքը կարող է խախտել ուժային առկա հարաբերակցությունը, այն առումով, որ մենք (ռուսները) հասկանում ենք մեր գործընկերների պահանջները և պատկերացնում ենք առկա ուժային հարաբերակցությունը» (Правда, 2016): Ի պատասխան նման մոտեցումների, ՀՀ Աժ պատգամավոր Կ. Բեքարյանն իր ռուս գործընկերների հետ հեռուստաասուլիսի ժամանակ ընդգծեց, որ «Փաստարկը, որ եթե Ադրբեջանը ՌԴ-ից զենք չգնի, նույն զենքը կարող է ձեռք բերել այլ երկրներից, բավարար հիմնավոր չէ, քանզի ՌԴ-ն ժամանակ առ ժամանակ Ադրբեջանին վաճառում է այնպիսի զինատեսակներ, որոնք վերջինս չի կարող ձեռք բերել որևէ այլ երկրից: Մյուս կողմից, երբ Ադրբեջանը զենք է ձեռք բերում ՌԴ-ից, ապա ներքուստ համոզվում է, որ այդ կերպ Մոսկվան «դեմ չէ» այդ զինտեխնիկան ՀՀ-ի կամ ԼՂՀ-ի դեմ կիրառելուն: Հենց այս առումով, հարկավոր է աշխատել ՌԴ-ի հետ» (Առավոտ, 2017):

Դիտարկելով հարցի ֆինանսատնտեսական կողմը՝ նշենք, որ ՌԴ-Ադրբեջան ռազմատեխնիկական գործակցությունից Մոսկվան շոշափելի եկամուտներ էր ստանում: Բավականին խոսուն է թեկուզևմիայն այն փաստը, որ, օրինակ՝ 2015 թվականին Ադրբեջանին S-90 տանկերի վաճառքի փաթեթը կազմել է 1 մլրդ դոլար (Взгляд, 2016): Քաղաքական առումով, զենք վաճառելը պետությանը, որը ռազմական հակադրության մեջ է քեզ գործընկեր երկրի հետ, փաստում է այն մասին, որ գործարքի կողմ պետությունների միջև առկա քաղաքական երկխոսությունն ունի «ռազմավարական» բնույթ (Panarmenian, 2016): «Ռազմավարական» եզրույթը միջպետական փոխհարաբերությունների այնպիսի որակ և վիճակ է, երբ դրա կողմ պետությունների փոխադարձ կարևորությունն անփոխարինելի է, իսկ տնտեսական, ռազմական, մշակութային, սոցիալ-ժողովրդագրական և այլ ոլորտներում գործակցությունը՝

անփոխարինելի: Ռազմատեխնիկական ակտիվ շփումներ ունենալով Ադրբեջանի հետ, ՌԴ-ն երկկողմ և տարածաշրջանային ձևաչափերում նաև հնարավորություն է ստանում քաղաքական և ռազմատեխնիկական գործիքներ ձեռք բերել և ազդել Բաքվի արտաքին քաղաքական վարքի որոշ դրսևորումների վրա: Նշենք, սակայն, որ տարածաշրջանի երկրների հետ ռազմատեխնիկական գործակցության ակտիվացումը, մյուս կողմից, նաև անուղղակի նպաստում է սպառազինությունների մրցավազքին, որը, հաշվի առնելով ՀՀ-ի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների հնարավորությունները, ինչ-որ մի փուլում էականորեն խախտելու է տարածաշրջանային ուժային հարաբերակցությունը (SIPRI, 2016): Սակայն, արձանագրենք նաև, որ միջազգային իրավունքի տեսանկյունից, ինչպես նաև ՀԱՊԿ կանոնադրության մասով, ինչպես ՌԴ-ն, այնպես էլ ՀԱՊԿ անդամ-երկրներից որևէ մեկը Ադրբեջանի և ՀՀ-ի հետ ռազմատեխնիկական համագործակցության առումով որևէ սահմանափակող պարտավորություն չունի: Ավելին, նման սահմանափակումներ ՀԱՊԿ-ից դուրս նույնպես չկան, բացառությամբ այն երկրների, որոնցում օրենսդրորեն արգելված է ԼՂ հակամարտության մեջ ներգրավված կողմերին զինտեխնիկա վաճառել:

ՀԱՊԿ անդամ երկրների ազգային շահերի ձևավորման և մեկտեղման կարևոր բնութագրիչներ են՝ դրանց քաղաքակրթական ընկալումներն ու արժեքաբանության ընդհանրությունը, «վտանգի» և «անվտանգության» մասին պատկերացումները, զարգացման տեսլականների ուրվագծումը: Քաղաքական իրականության մեջ դրանք արտացոլվում են պետությունների, այդ թվում ՀԱՊԿ անդամ երկրների՝ միջազգային տարբեր կազմակերպություններին անդամակցելու նախապատվություններում, այդ կառույցներում դրանց որդեգրած մոտեցումներում, քվեարկություններում: Շեշտենք, որ այդ ցուցիչները մենք դիտարկում և վերլուծում ենք դրանք կրող պետությունների դաշնակցային պարտավորություններին, և, մասնավորապես՝ համաձայնեցված քաղաքականություն մշակելու հանձնառությանը համապատասխա-

նելու տեսանկյունից: Օրինակ, ՀԱՊԿ ձևաչափում ՀՀ դաշնակից համարվող Ղազախստանը և Ղրղզստանը քաղաքակրթական և քաղաքական «Թյուրքական պետությունների կազմակերպության» անդամներ են (այն Ադրբեջանի և Թուրքիայի նախաձեռնողական քաղաքականության կարևոր հարթակ է), որի հռչակած նպատակներում կարևոր տեղ է տրվում թյուրքախոս երկրների միջև փոխադարձ վստահության ամրապնդմանն ու քաղաքական համախմբմանը, որի իրականացման գործիքներ են դիտարկվում տնտեսական ու տեխնիկական շփումների ակտիվացումը, մարդկային ներուժի գործարկումը, մշակութային ժառանգության վերականգնումն ու զարգացումը (Organization of Turkic States, 2009):

ՀԱՊԿ անդամ երկրների փոխադարձ պարտավորություններից է՝ միջազգային հարթակներում դիրքորոշումների համապատասխանեցումը, ինչն արտացոլվում է տարբեր կազմակերպություններում քվեարկությունների տեսքով: Նկատելի է, որ նման կարևորագույն հարցում կազմակերպության անդամների անհրաժեշտ խորությամբ գործակցությունը և մոտեցումների համապատասխանեցումը դեռևս բավարար չէ: Դրա վառ օրինակ է ՄԱԿ-ում 2010, 2011, 2012 թվականներին Վրաստանի նախաձեռնությամբ քվեարկության դրված և ՌԴ շահերին հակասող՝ «Վրաստանի մաս կազմող Աբխազիայից, բուն Վրաստանից և Վրաստանի Հվ. Օսիայի Ցխինվալի շրջանից ներքին տեղահանվածների և փախստականների կարգավիճակի մասին» բանաձևի քվեարկության պատկերը, որի ժամանակ ՀԱՊԿ անդամ երկրներից միայն ՀՀ-ն էր «դեմ» քվեարկել այդ բանաձևին, մինչդեռ մյուս երկրները կա՛մ չէին մասնակցել քվեարկությանը, կա՛մ քվեարկել էին «ձեռնպահ» (UN, 2016):

ՀԱՊԿ-ում առկա վերոնշյալ խնդիրներն իրենց հստակ արտացոլում ստացան 44-օրյա պատերազմի և դրա շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական միջավայրում, որտեղ ՀԱՊԿ-ը չկարողացավ պատշաճ դրսևորել իրեն՝ իր կանոնադրության հոդվածներին համապատասխան: Այստեղ մեծ դեր խաղաց, իհարկե, նաև այն, որ ՀՀ ղեկավարությունը որդեգրեց Հավաքական Արև-

մուտքի քաղաքական օրակարգը Հվ. Կովկաս բերելու գործելաոճը: Անկախ վերոնշյալից, ՀԱՊԿ-ն ինքը իրեն այս իրավիճակում իրեն դրսևորեց շատ ոչ նախաձեռնող և անարդյուվետ ձևով, որով հայ հանրույթի և, առհասարակ, մյուս պետությունների հասարակությունների մոտ ի ցույց դրեց իր ոչ կենսունակությունը: Այս առիթով Ռազմական տնտեսագիտության և ռազմավարության ինստիտուտի գիտական ղեկավար Դմիտրի Տրենինը նշում է, որ «ԼՂ հակամարտության իրավիճակում ՀԱՊԿ-ը ցույց տվեց իր ներսում առկա թույլ կողմերը և այն անորոշությունները, որոնք ժամանակին ծառայում էին այդ կառույցի գոյության օգտին, իսկ հետո, երբ իրավիճակը սրվեց, հայտնվեցին «իրենց ողջ փայլով» (News, 2024): Մյուս կողմից, ՀԱՊԿ-ի մասին ընկալումը բավականին սխալ է, քանի որ բոլորին թվում է, թե ՌԴ-ն իր դիրքորոշումն է պարտադրում կառույցին, մինչդեռ դա այդպես չէ: Օրինակ, պետք է հաշվի առնել, որ ՀԱՊԿ երկրները չեզոք դիրք են զբաղեցնում ՌԴ-ի համար ուկրաինական ամենակարևոր հարցում. «ՀԱՊԿ երկրներից ոչ մեկը, այդ թվում՝ Բելառուսը, չի ճանաչել Ղրիմի ներառումը ՌԴ-ի կազմ: Ռուսաստանին, իհարկե, դա դուր չի գալիս, բայց նա դա չի պարտադրում» (News, 2024): Դ. Տրենինը նշում է, որ ի սկզբանե շատերը ՀԱՊԿ-ն ընկալել են կա՛մ որպես Վարշավայի պայմանագրի տարբերակ, կա՛մ որպես պատասխան ՆԱՏՕ-ին, մինչդեռ, իրականում, դա այնքան էլ այդպես չէ: «Սա միություն չէ, սա դաշինք չէ, այլ ռազմաքաղաքական միավորում՝ շատ հարցերի վերաբերյալ արձանագրություններով, որոնք հստակ սահմանված չեն» (News, 2024):

Այսինքն, կարելի է փաստել, որ ՀԱՊԿ-ում ավելի շատ խնդիրներ կան, քան լուծումներ և դրանց մասին պատկերացումներ, հետևաբար, այդ միավորի հետ շփվելիս պետք է ելակետ ընդունել հենց այդ կանխավարկածը, չպահանջել որևէ բան, ինչն այն չի կարող տալ, այլ հարաբերվել այն շրջանակներում, որոնք այս կամ այն կերպ կարող են ավելացնել սեփական պետության անվտանգության շեմը. սա այն պարագայում, եթե չկա մեկ այլ՝ առավել մրցունակ և իրատեսական այլընտրանք:

ՌԴ արտաքին քաղաքական հայեցակարգի (ԱՔՀ) հարավ-կովկասյան բաղադրիչի փոխակերպումը մինչև 2023 թ.

Հայ-ռուսական հարաբերությունների և Հվ. Կովկասում ՌԴ մոտեցումների և ուժային հավասարակշռության դինամիկայի ընկալման համար կարևոր է դիտարկել ու վերլուծել անկախության շրջափուլում ՌԴ-ի արտաքին քաղաքական հայեցակարգը, որն առավելագույնս ի ցույց կդնի Մոսկվայի պատկերացումները ռեգիոնի և գործընկերների վերաբերյալ, ինչպես նաև դրա շահերի միջակայքն ու բնույթը: Այս առումով, մենք կդիտարկենք այդ հայեցակարգերից մի քանիսը, մասնավորապես՝ նախագահներ Բ. Ելցինի (1991–1996, 1996–2000), Վ. Պուտինի (2000–2008, 2012 – մինչ օրս) և Դ. Մեդվեդևի (2008–2012) կառավարման ժամանակահատվածներում ՌԴ-ում 1993, 2000, 2008, 2013, 2016, 2023 ընդունված արտաքին քաղաքականության հայեցակարգերը:

ՌԴ-ում արտաքին քաղաքական առաջին հայեցակարգն ընդունվել է 1993 թ. ապրիլին, որը մասնագիտական գրականության մեջ կոչվում «Կոզիրևի դոկտրին»: Այն արտաքին քաղաքական հիմնական մոտեցումները հայեցակարգի վերածելու՝ ՌԴ ղեկավարության առաջին փորձն էր: Այն, բացի նման փաստաթղթերի համար պարտադիր դրույթներից («անվտանգության և ինքնիշխանության ապահովում, ՌԴ քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանություն, ներքին զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ստեղծում» և այլն), կրում էր ժամանակի աշխարհաքաղաքական փոփոխությունների դրոշմը, նոր աշխարհում իր տեղն ու դերը գտնելու օրակարգը, ինչպես նաև՝ արդեն հետխորհրդային երկրների հետ նոր կարգավիճակում հարաբերություններ ձևավորելու իրողությունները: 1993-ի հայեցակարգը վառ արտահայտված հռչակագրային բնույթ ուներ (Неймарк, 2020), իսկ դրույթները աչքի էին ընկնում ձևակերպումների անորոշությամբ, պարունակում էին մեծաթիվ կրկնություններ, որից եզրակացնում ենք՝ այն ընդունվել էր Սառը պատերազմի ավարտի և ԽՍՀՄ փլուզման պայմաններում:

Հետխորհրդային տարածաշրջանում և Հվ. Կովկասում վերոնշյալ հայեցակարգի դրույթները կյանքի կոչելու տեսանելի քայլերից ամենանշանակալին 1991 թ. դեկտեմբերին Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ձևավորումն էր: ՌԴ-ն, փաստորեն, իրավական առումով հանդես էր գալիս որպես ԽՍՀՄ իրավահաջորդ. դա ենթադրում էր միջազգային բոլոր կազմակերպություններում (այդ թվում՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում) մասնակցություն, տեղի պահպանում և միջազգային պայմանագրերի կատարում: ՌԴ-ն նաև ժառանգեց ԽՍՀՄ միջուկային զինանոցը և պետական պարտքը: Այսպես կոչված «քաղաքակիրթ բաժանման» շնորհիվ կարգավորվեցին նախկին միութենական հանրապետությունների հետ քաղաքական, իրավական, տնտեսական, հումանիտար և այլ հարցեր (Козырев, 1994): ՌԴ և հետխորհրդային երկրների շահերի տեսանկյունից կարևոր քայլ էին նաև 1992 թ. մայիսին Հավաքական անվտանգության պայմանագրի կնքումը, 1993 թ. հունվարին ԱՊՀ կանոնադրության ընդունումը (Козырев, 1994a), որով ավարտվեց կազմակերպության ինստիտուցիոնալացման գործընթացը, և «ԱՊՀ-ում ռազմական դիտորդների և խաղաղության պահպանման հավաքական ուժերի խմբերի մասին համաձայնագրի ստորագրումը» (1992 թ. մարտի 20), որը տարածաշրջանում խաղաղապահ գործողություններ իրականացնելու անհրաժեշտ ենթակառուցվածք է: Չնայած ձեռնարկված քայլերին, այնուամենայնիվ, ՌԴ-ն և արտասահմանյան մերձավոր երկրները չկարողացան պահպանել ռազմավարական և տնտեսական միասնական տարածքները, որոնց գործունեությունը պետք է իրականացվեր միավորված զինված ուժերի և միասնական ռուբլու գոտու միջոցով:

2000 թ. հունիսի 28-ին հաստատվեց ՌԴ արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը, որը բովանդակային հիմք ծառայեց հետագա՝ 2008, 2013 և 2016 թվականների հայեցակարգերը մշակելիս: Նշենք, որ առաջին փաստաթղթի կառուցվածքը, մինչ 2023-ի հայեցակարգը, գրեթե նույնն էր: Փաստաթղթի 4-րդ մասը նվիրված էր ՌԴ-ի «Տարածաշրջանային գերակայություններին»,

որտեղ շարադրված էին ՌԴ-ի և ԱՊՀ-ի, Եվրոպայի (ինչպես նաև՝ ԱՄՆ-ի), Ասիայի, Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի և Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի երկրների միջև հարաբերությունների վիճակն ու հեռանկարները: Նշենք, որ 2000 թ. ՌԴ ԱՔՀ-ն գաղափարապես սերտ փոխկապակցված էր ռազմավարական փաստաթղթերի մեկ այլ փաթեթի, մասնավորապես՝ ՌԴ 1997 թ. Ազգային անվտանգության հայեցակարգի հետ, որի նպատակը միաժամանակ երկու խնդիր լուծելն էր. նախ՝ առաջնային էր համարվում 1990-ականների երկրորդ կեսին արտաքին քաղաքական ուղեգծում տեղի ունեցած փոփոխությունները ամրագրելը և XXI դարում գործարկելի մոտեցումները հստակեցնելը: Փաստենք, որ նոր հայեցակարգի էությունը տեղավորվում էր բազմաբևեռ աշխարհի ունենալու՝ ՌԴ ռազմավարական նպատակի մեջ, որտեղ, ըստ պաշտոնական Մոսկվայի, պետք է հատկացվեին իր ներուժին և ազդեցությանը համապատասխան դեր և կարգավիճակ: ՌԴ-ի համար ԱՔՀ-ում հետխորհրդային տարածաշրջանը և դրա հարավկովկասյան ուղղությունը կարևորագույն գործոն էին, որտեղ նա նոր կարգավիճակ ձեռք բերած հարևան երկրների հետ փորձում էր արդի իրողություններին համահունչ հարաբերություններ հաստատել: Դրանք, իհարկե, տարբեր նպատակներ էին հետապնդում՝ պայմանավորված այն բանով, թե հարաբերման մյուս սուբյեկտը որ երկիրն է, և թե անկախության այս շրջանում ինչ է փոխվել նրանց միջև: Հետաքրքիր էր, որ դեռևս այս շրջանում Մոսկվան որոշել էր հետխորհրդային տարածաշրջանի երկրների հետ իր հարաբերություններում օգտագործել ինտեգրացիոն միավորներ ստեղծելու գործելաոճը, որի միջոցով ինչպես անհատական, այնպես էլ հավաքական տարաբնույթ ձևաչափեր էր կիրառելու: Ըստ ՌԴ քաղաքական նպատակներ մշակող շրջանակների, իրենց համար նախկին ԽՍՀՄ տարածքում ամենաահեռանկարային ինտեգրացիոն նախագիծը պետք է դառնար 1999 թ. ձևավորված ՌԴ-Բելառուս միութենական պետությունը, որի ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկվել էին դեռևս 1996-ից: Ավելին, 2001 թ., զարգացնելով 1994 թ. Մոսկվայի համալսարանում Ղազախստանի

նախագահ Ն. Նազարբաևի հնչեցրած գաղափարը (Khabar, 2021), Ղրղզստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը (և Հայաստանը՝ դիտորդի կարգավիճակում) արդեն առկա Մաքսային միության հիմքի վրա ձևավորեցին Եվրասիական տնտեսական համայնքը (*ԵվրԱզԷՄ*), որի նպատակն էր՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի ձևավորումը: Իսկ մեկ տարի անց այդ նույն երկրները (բացառությամբ Ուզբեկստանի) Հավաքական անվտանգության պայմանագիրը (1992 թ.) վերափոխեցին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ):

Ինտեգրացիոն ծրագերում նախաձեռնող լինելուց զատ, ՌԴ քաղաքականությունը հետխորհրդային և, հատկապես, կովկասյան տարածաշրջանում ածանցվում էր այնտեղ առկա հակամարտությունները խաղաղ լուծելու գործընթացներում կարևոր և ազդեցիկ դերակատարի գործոնից. դա վերաբերում էր ինչպես Մերձդնեստրյան հակամարտությանը՝ Մոլդովայում, այնպես էլ աբխազական և հարավօսական հակամարտությանը՝ Վրաստանում, և իհարկե, ԼՂ հակամարտությանը՝ Ադրբեջանում:

1997-ից ի վեր լինելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներից մեկը (ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ), ՌԴ-ն մասնակցել էր Ղարաբաղյան խնդրի վերջնական կարգավորման տարբեր ծրագրերի մշակմանը և մաքոքային դիվանագիտությանը: Այսպես, օրինակ, ըստ 1996-ին Մոսկվայի կազմած «փաթեթային» տարբերակի, առաջարկվում էր Ստեփանակերտի և Երևանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչում և դրա կազմում ինքնավարության ամենից բարձր կարգավիճակով ԼՂ-ի պետաիրավական միավորի ստեղծում: Քանի որ այդ նախագիծը մերժվել է ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի կողմից, ՌԴ-ն, ԱՄՆ-ն և Ֆրանսիան հանդես են եկել կարգավորման «փուլային» տարբերակի առաջարկով, որի համաձայն՝ առաջին փուլը կներառեր ԼՂ-ի՝ որպես «անկլավի» վերացումը, Հայաստանի և ԼՂՀ-ի միջև Լաչինի միջանցքի պահպանումը՝ 1992–94 թթ. պատերազմի ժամանակ անջատված յոթ շրջան-

ները (ԼՂ «անվտանգության գոտի») Ադրբեջանին վերադարձնելու դիմաց, Հայաստանի շրջափակման վերացումը, ինչպես նաև անվտանգության գոտու սահմանումը՝ միջազգային խաղաղապահ ուժերի վերահսկողության ներքո, իսկ երկրորդ փուլում կիստակեցվեր ԼՂ կարգավիճակը Ադրբեջանի սահմաններում: Ստեփանակերտի և Երևանի իշխանությունները այս տարբերակը ևս մերժեցին:

Այս ժամանակահատվածում բարդ էին ՌԴ հարաբերությունները Վրաստանի հետ, որի պատճառը Աբխազիայի և Հվ. Օսիայի շուրջ ձևավորված իրավիճակն էր: Չնայած հակամարտության հատուկենտ բռնկումներին (իրադարձությունները Գալիի շրջանում՝ 1996 թ., և Կոդորի կիրճում՝ 2001 և 2006 թթ.), վրաց-աբխազական դիմակայությունը այս ժամանակահատվածում չհանգեցրեց ռազմական լայնածավալ գործողությունների՝ Վրաստանում ՄԱԿ-ի դիտորդական առաքելության և ռուս զինծառայողներով համալրված ԱՊՀ հավաքական ուժերի տեղակայված լինելու շնորհիվ: Նման զարգացում է նկատվել նաև վրաց-հարավօսական հակամարտությունում, որտեղ 2004 թ. իրավիճակի սրումը պատերազմի չվերածվեց ՌԴ-ի, Վրաստանի և Հվ. Օսիայի ներկայացուցիչներից բաղկացած խառը վերահսկողական հանձնաժողովի գործունեության շնորհիվ: Այնուամենայնիվ, չնայած ՌԴ և Վրաստանի հարաբերություններում դիպվածային համագործակցությանը (ինչպես, օրինակ, 2003–2004 թթ. Աջարիայի ճգնաժամի ժամանակ), Ամդրկովկասում ստեղծված ստատուս քվոն խախտվեց 2008 թ. օգոստոսին, երբ վրացական իշխանությունները ռազմական ներխուժում ձեռնարկեցին Հվ. Օսիա՝ անմիջականորեն հարձակվելով նաև այնտեղ տեղակայված ռուս խաղաղապահների վրա:

2008 թ. ՌԴ նախագահ ընտրվեց Դ. Մեդվեդևը, որը հուլիսի 15-ին հրամանագիր ստորագրեց ՌԴ ԱՔՀ-ն խմբագրելու վերաբերյալ: Նոր հայեցակարգի հիմնական փոփոխությունները վերաբերում էին ոչ թե արտաքին քաղաքականության ռազմավարության «տառին», այլ «ոգուն», որը, չնայած արտաքին քաղաքական

ուղեգծի շարունակականությանը, հարստացավ նոր միտումներով: Մասնավորապես, հենց այս շրջանում ՌԴ-ն առաջ քաշեց մի շարք ընդգրկուն նախաձեռնություններ, որոնք ուղղված էին համաշխարհային և տարածաշրջանային ամենատարբեր հարցերի շուրջ տարաձայնությունները մեղմելուն (առավելապես Արևմուտքի երկրների հետ):

Անդրադառնալով հետխորհրդային տարածքում և, հատկապես, Հվ. Կովկասում ՌԴ մոտեցումներին, նշենք, որ ինչպես և նախորդ տարիներին, ՌԴ արտաքին քաղաքական հիմնական ակտիվությունը հետխորհրդային տարածքում կենտրոնացած էր ինտեգրացիոն գործընթացները տարբեր ձևաչափերով շարունակելու և բազմաթիվ հակամարտությունների կարգավորմանն աջակցելու վրա (Президент РФ, 2008): Օրինակ, շարունակելով հումանիտար համագործակցության զարգացման ուղղությամբ աշխատանքը, 2011-ին ԱՊՀ շրջանակներում ՌԴ-ն կառույցի գործընկերների հետ ստորագրեց «Ազատ առևտրի գոտի» ստեղծելու համաձայնագիրը: Որոշակի հաջողություններ գրանցվեցին նաև ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում, որտեղ ինտեգրացիոն նախագծի երեք մասնակիցներ (ՌԴ-ն, Բելառուսը և Ղազախստանը) 2010 թ. հունվարի 1-ին ստեղծեցին Մաքսային միությունը, իսկ երկու տարի անց՝ Միասնական տնտեսական տարածքը (Президент РФ, 2010), որի շրջանակներում, փաստորեն, գործարկվեց հետխորհրդային տարածքում ինտեգրման առաջին վերազգային մարմինը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը:

Թեև տարածաշրջանում հակամարտությունները «սառեցված» էին՝ այս շրջանում դրանց կարգավորման գործում նկատվեց Մոսկվայի միջնորդական ջանքերի ակտիվացում: ՌԴ-ն, խաղաղություն պարտադրելու գործողությունները ավարտելուց հետո, որոնք իրականացվել էին 2008 թ. օգոստոսի 6-ից 12-ը Հվ. Օսիայի և այնտեղ գտնվող ռուս խաղաղապահների վրա Վրաստանի հարձակման հետևանքների հաղթահարման նպատակով, ընդունեց, այսպես կոչված, «Մեդվեդև–Սարկոզի» 2008 թ. օգոստոսի 12-ի պլանը և մի շարք լրացուցիչ կետեր, որոնց հիման վրա

էլ իրականացվեց ռուս խաղաղապահների դուրսբերումը Վրաստանից, վրացական զորքերի վերադարձը տեղակայման վայրեր, ԵՄ-ի ռազմական դիտորդների տեղակայումը, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ դիտորդների պահպանումը, ինչպես նաև Ժնևում միջազգային քննարկում անցկացնելը: Ավելին, այս իրավիճակում ՌԴ-ն պաշտոնապես ճանաչեց Աբխազիայի և Հվ. Օսիայի անկախությունը, ինչն, իր հերթին, հանգեցրեց Մոսկվայի և Թբիլիսիի միջև դիվանագիտական հարաբերությունների խզման:

Այս ժամանակահատվածում դիվանագիտական ակտիվության աճ էր նկատվում նաև ԼՂ հակամարտության գոտում, որի լուծման ուղղությամբ իր ջանքերը Մոսկվան ձգտում էր առաջ տանել ոչ միայն ԵԱՀԿ Մինսկի խմբի ավանդական ձևաչափով, այլև ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև ուղիղ բանակցություններ կազմակերպելու միջոցով (ընդհանուր առմամբ՝ 11 եռակողմ հանդիպում): Որպես կարգավորման հիմք ՌԴ-ն դիտարկել է 2009–2013 թթ. «G-8» և «G-20» գագաթնաժողովների շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահող երկրների ղեկավարների հայտարարությունները (ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա): Ենթադրվում էր ԼՂ հարակից տարածքների վերադարձ Ադրբեջանին, ԼՂ-ին միջանկյալ կարգավիճակի շնորհում՝ ինքնակառավարման և անվտանգության երաշխիքների տրամադրման պարտադիր պայմանով, Հայաստան-Լեռնային Ղարաբաղ կապող միջանցքի պահպանում, ԼՂ վերջնական իրավական կարգավիճակի հստակեցում՝ նրա ժողովրդի ազատ կամարտահայտման միջոցով, որը պետք է ունենար պարտադիր իրավական ուժ, փախստականների և ներքին տեղահանված անձանց նախկին բնակության վայրեր վերադառնալու իրավունքների տրամադրում, անվտանգության միջազգային երաշխիքների ապահովում (ներառյալ՝ խաղաղապահ գործողության անցկացում):

2012 թ. ՌԴ-ում կրկին նախագահ դարձավ Վ. Պուտինը և իր պաշտոնավարումից մեկ տարի անց՝ 2013-ի փետրվարի 12-ին, հաստատեց արտաքին քաղաքականության հայեցակարգի հեր-

թական տարբերակը: Ստեղծված ավանդույթի համաձայն, արտաքին քաղաքական գլխավոր փաստաթղթի այս տարբերակը ժառանգել էր նախորդ հայեցակարգի կառուցվածքը՝ միայն «կոսմետիկ» փոփոխություններով: 2013-ից ի վեր, հետխորհրդային տարածքում ՌԴ շահերը և նպատակները տեղավորվում էին ինտեգրացիոն նախագծերի խորացման և նոր որակի համախմբման գործողություններում, որի առարկայական դրսևորումը 2014 թ. Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) ձևավորումն էր: Այն ՌԴ-ի, Բելառուսի և Ղազախստանի դիվանագիտական բազմամյա ջանքերի արդյունք էր, որին միացան նաև ՀՀ-ն և Ղրղզստանը: Ինչ վերաբերում է Ուկրաինային, որը երկար ժամանակ համարվում էր եվրասիական ինտեգրման պոտենցիալ մասնակից, ապա երկրում բռնկված քաղաքացիական պատերազմը կանխելու ուղղությամբ ՌԴ-ի՝ որպես միջնորդի ջանքերը «նորմանդական քառյակի» (ՌԴ, Գերմանիա, Ֆրանսիա և Ուկրաինա) շրջանակներում ավարտվեցին 2015 թ. փետրվարի 12-ին Մինսկի համաձայնագրերի ստորագրմամբ: Հետագա իրողությունները, սակայն, փաստեցին, որ Ուկրաինան, միևնույն է, պոկվելու է հետխորհրդային այդ ձևաչափից, ավելին՝ ՌԴ-ի հետ նրա հարաբերություններն ընդամենը մի քանի տարի հետո դառնալու էին թշնամական:

- ՌԴ նախագահ Վ. Պուտինի 2016 թ. նոյեմբերի 30-ի հրամանագրով հաստատվեց երկրի արտաքին քաղաքականության հայեցակարգի հերթական խմբագրումը: Հայեցակարգի այս տարբերակի նորամուծություններից կարելի է առանձնացնել հետևյալը.

- արտաքին քաղաքական գործունեության հիմնական նպատակների վերաձևակերպում. «ազգային շահերի ապահովում և ռազմավարական առաջնահերթությունների իրականացում»,

- նոր խնդիրների ավելացում, մասնավորապես, «ՌԴ-ի՝ որպես ժամանակակից աշխարհի ազդեցիկ կենտրոններից մեկի, դիրքերի ամրապնդում» և «համաշխարհային տեղեկատվական տարածքում ռուսական ԶԼՄ-ների դիրքերի ամրապնդում, միջազգային գործընթացների վերաբերյալ ռուսական տեսակետի լուսաբանում համաշխարհային հանրության լայն շրջանակներում,

- ՌԴ-ի գործառնական առաջնահերթություններից մեկի փոփոխում, այն է՝ «արդար և կայուն աշխարհակարգի ձևավորում»,

- տարածաշրջանային առաջնահերթությունների բաժնում շեշտադրումների փոփոխություն. եվրատլանտյան ուղղությամբ դադարում էին որպես սուբյեկտներ շրջանառվել Արևելյան Եվրոպայի, Բալթիկայի և Բալկանների երկրները (Президент РФ, 2014):

ՌԴ արտաքին քաղաքականության առանցքային հայեցակարգային հիմքերից էր՝ նոր աշխարհակարգի հիմունքների տեսլականը: Այդ կապակցությամբ ՌԴ-ն դեռ 1990-ականներից հանդես էր գալիս բազմակենտրոն (Козырев, 1994), բազմաբևեռ (Примаков, 1996) աշխարհ կառուցելու օգտին, որը հիմնված կլիներ աշխարհի տարածաշրջանները ներկայացնող ուժային կենտրոնների միջև փոխգործակցության բազմակողմ ձևաչափերի (միջազգային կազմակերպությունների և «ցանցային» դաշինքների), միջազգային իրավունքի և պետությունների միջև իրավահավասար, գործընկերային հարաբերությունների գերակայության հիման վրա՝ պահպանելով միջազգային հարաբերություններում ՄԱԿ-ի կենտրոնական համակարգող դերը: Ընդ որում, նշենք, որ Մոսկվան իրեն համարում է որպես աշխարհի այս բազմաբևեռ կառուցվածքի ինքնուրույն կենտրոն: Հարկ է նշել, որ բազմակենտրոն աշխարհակարգի ձևավորումը, որը տեղի էր ունենում «երկբևեռ աշխարհից» անցում կատարելու ճանապարհով՝ շրջանցելով «միաբևեռության» կարճ ժամանակահատվածը, ընկալվում է որպես օբյեկտիվորեն ձևավորվող գործընթաց, որը պատմական երկար ժամանակաշրջան է տևելու: Որպես գալիք փոփոխությունների նախանշան պետք է դիտարկել Արևմուտքի օբյեկտիվ թուլացումը և, որպես հետևանք՝ ուժի նոր կենտրոնների քաղաքական և ֆինանսատնտեսական հզորացումը, որը ժամանակակից աշխարհում մշակույթների, քաղաքակրթությունների բազմազանության, ինչպես նաև պետությունների ներքին զարգացման մոդելների արտացոլանքն է: 2016-ի հայեցակարգում առանցքային էր պետության կողմից ուժի կիրառման նախապայմանների և լեգիտիմության հարցադրումը: ՌԴ արտաքին քաղաքականության 2016 թ. հայե-

ցակարգի և 2014 թ. ռազմական դոկտրինի դրույթների համաձայն, նման գործողությունների իրականացման համար իրավական հիմքեր են՝ ինքնապաշտպանության նպատակով ուժի կիրառումը (ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն), այդ թվում՝ զանգվածային ոչնչացման զենքերի տարածման և միջազգային ահաբեկչության, միութենական պետության և ՀԱՊԿ-ի դաշնակիցների դեմ ագրեսիայի դեպքում, խաղաղության պահպանման կամ վերականգնման (համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և հավաքական անվտանգության այլ կառույցների որոշման), ինչպես նաև արտերկրում գտնվող ՌԴ քաղաքացիների պաշտպանության համար (Российская Газета, 2014):

Իսկ ինչ վերաբերում է ՌԴ դաշնակիցներին, թեև ըստ ռուսական ընկալման, արժեքաբանական և ռեալպոլիտիկի առումով իրենց միակ դաշնակիցները իրենց «բանակն ու նավատորմն» են, այնուամենայնիվ, ռազմաքաղաքական տեսանկյունից որպես դաշնակիցներ են դիտվում ՀԱՊԿ անդամ երկրները (Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան), որոնց վրա տարածվում է Հավաքական անվտանգության պայմանագրի 4-րդ հոդվածը, իսկ քաղաքական առումով ՌԴ-ն որպես դաշնակից է համարում նաև BRICS-ի, ՇՀԿ-ի, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Ասիայի մի շարք պետությունների:

Հարկ է նշել, որ արտաքին քաղաքականության հայեցակարգային հիմքերի մասին դատողությունները թերի և ոչ լիարժեք կլինեին՝ առանց հաշվի առնելու այն արժեքները, որոնց վրա, նախ, ՌԴ-ն կառուցում է իր ազգային շահերի հայեցակարգը, ապա՝ դրանցով ներկայանում աշխարհին: ՌԴ արտաքին քաղաքականության բարոյահոգեբանական և արժեքային համակարգում կենտրոնական տեղ է զբաղեցնում պահպանողականությունը, որը բխում է ուղղափառ քրիստոնեական ավանդույթից: Քննադատելով Արևմուտքին քրիստոնեական արժեքները զանց առնելու համար, ՌԴ-ն դիրքավորվում է որպես բարոյահոգեբանական այնպիսի ուղենիշների հենարան, ինչպիսիք են՝ հասարակության մեջ կրոնի դերը, ավանդական ընտանիքը՝ որպես տղա-

մարդու և կնոջ միություն, հայրենասիրությունը՝ բառի ամենալայն իմաստով և այլն, որոնք հատուկ են ոչ միայն քրիստոնեությանը, այլև համաշխարհային բոլոր կրոններին ու դավանանքներին:

Այսպիսով, պետք է նշել, որ ՌԴ ԱՔՀ հիմնադրույթները և, հատկապես՝ հետխորհրդային երկրների ու Հվ. Կովկասի նկատմամբ ՌԴ-ի քաղաքական կուրսը, այնուամենայնիվ, միատարր չեն: Այսպես, օրինակ, «մերձավոր արտասահմանն» ձևակերպումը ՌԴ-ն դիտարկում է մի քանի ենթատարածաշրջանների համատեքստում. արևելաեվրոպական ուղղություն (Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա), կովկասյան ուղղություն (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան, ինչպես նաև Աբխազիա և Հարավային Օսիա) և կենտրոնասիական ուղղություն (Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան): Ընդհանուր սահմաններ ունենալով յուրաքանչյուր ենթատարածաշրջանի հետ՝ ՌԴ-ն իր արտաքին քաղաքականությունը ածանցում է երեք հիմնական խնդիրների լուծման օրակարգից.

- ինտեգրացիոն տարբեր խմբավորումների և միջազգային կազմակերպությունների (ԱՊՀ, Միութենական պետություն, ԵԱՏՄ, ՀԱՊԿ) ամրապնդում,
- պետություններից յուրաքանչյուրի հետ երկկողմ հարաբերությունների զարգացում,
- «սառեցված» հակամարտությունների կարգավորում (Ուկրաինա–ԴԺՀ և ԼԺՀ, Մոլդովա–Մերձդնեստր, Վրաստան–Աբխազիա և Հվ. Օսիա):

ԱՊՀ-ն համարելով որպես ԽՍՀՄ փլուզումից հետո «քաղաքակիրթ քաղաքական ապահարզանի» կառույց և հետևողականորեն փորձելով այն զարգացնել՝ ՌԴ-ն իր ջանքերը ուղղում էր երկու հիմնական կառույցների՝ ՀԱՊԿ-ի և ԵԱՏՄ-ի զարգացմանը: Տրամաբանական ու հասկանալի է, որ ինտեգրացիոն նման բաղադրիչների զարգացումը ինչ-որ մի փուլից սկսած ենթադրելու էր այդ անդամ կազմակերպությունների միջև քաղաքական ինտեգրման նոր որակի հեռանկար, որը, սակայն, այսօր առավել շատ խնդիրներ ունի, քան լուծումներ, առավել շատ տարակարծութ-

յուններ, քան դրանց հարթման մեխանիզմներ: Հենց այս համատեքստում պետք է դիտարկել ԵԱՏՄ-ն՝ որպես հետխորհրդային տարածքում ՌԴ շահերի տեսանկյունից ամենագլխավոր ինտեգրացիոն նախագիծ: Գնահատելով ԵԱՏՄ դերը, պետք է նշել, որ ստեղծելով և զարգացնելով այդ կազմակերպությունը՝ ՌԴ-ն երկակի խնդիր է լուծում. նախ, հետխորհրդային տարածաշրջանը տնտեսական ներգրավման կենտրոնի վերածելը, ապա՝ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ինտեգրացիոն գործընթացներում ներդրումներ կատարելը: Ընդ որում, այս նախագծի հիմնական «շարժիչը» մնում է հենց ՌԴ-ն, որի տնտեսության ծավալը կազմում է միավորման ընդհանուր շուկայի 90%-ը: Այսպիսով, փոխգործակցության հաջողությունը (առաջին հերթին՝ երկրների միջև ապրանքաշրջանառության աճը) ուղղակի կախված է ռուսական տնտեսության վիճակից:

Ինչպես արդեն նշել ենք, ՌԴ-ն հետխորհրդային և կովկասյան տարածաշրջանում քաղաքականության պլանավորումն իրականացնում էր ինտեգրացիոն և հակամարտությունների լուծմանը միջնորդական ներգրավվածության գործիքակազմով: Այդ առումով, ՌԴ արտաքին քաղաքականության համար Հվ. Կովկասում ամենից բարդ հիմնախնդիրը ԼՂ հակամարտությունն էր, որը վերաճել էր միջազգայինի՝ ներգրավելով մրցակից շահեր ունեցող միջնորդ երկրների:

2020-ին Հվ. Կովկասի երկրների (հատկապես ՀՀ-ի ու Ադրբեջանի) միջև ուժային հավասարակշռության խախտմամբ պայմաններ ստեղծվեցին, որ նույն թվականին ԼՂ հակամարտության բանակցային տրամաբանությունը «ինքնորոշման իրավունքից» տեղափոխվի «տարածքային ամբողջականության» տիրույթ: Դա բավականին շահեկան էր, առաջին հերթին, Ադրբեջանի համար, որը և 2020 թ. սեպտեմբերի 27-ին լայնածավալ հարձակման անցավ ԼՂ-Ադրբեջան շփման գծի ողջ երկայնքով: 44 օր տևած ռազմական գործողությունների հետևանքով հայկական կողմը ՌԴ միջնորդությամբ ստորագրեց նոյեմբերի 9-ի հայտնի հայտարարությունը: Հետաքրքիրն այն էր, որ հրադադարի ու ռազմական

գործողությունները դադարեցնելու առաջարկներ մինչև նոյեմբերի 9-ը նույնպես եղել էին, մասնավորապես՝ դեռ հոկտեմբերին, սակայն հենց հայկական կողմն էր հրաժարվել դրանցից (Rbc, 2020): Մեծ հաշվով, նոյեմբերի 9-ի փաստաթուղթը միակողմանի կապիտուլյացիոն փաստաթուղթ էր, որը պարունակում էր Արցախի Հանրապետության և ՀՀ ազգային շահերին հակասող դրույթներ, որոնք հետագայում կարող էին ծնել նաև գոյութենական ռիսկեր՝ երկու երկրների համար էլ: Սակայն դա միակ տարբերակն էր, որին կողմերը կարողացան հասնել: ՌԴ նախաձեռնությամբ հաստատված հրադադարի կայունության համար Արցախում տեղակայվեցին ռուսական խաղաղապահ ստորաբաժանումներ, որոնք, չունենալով երկու կողմերի կողմից հաստատված մանդատ, այնուամենայնիվ, փորձում էին ապահովել տեղի բնակչության անվտանգությունն ու կենսագործունեությունը, խաղաղության ռեժիմը:

2023 թ. մարտին հաստատվեց ՌԴ արտաքին քաղաքական հայեցակարգի նոր խմբագրումը: 2022 թ. փետրվարի 24-ին ՌԴ-ի կողմից Հատուկ ռազմական գործողության մեկնարկից և ՌԴ-«Հավաքական Արևմուտք» համակարգային հակադրության պայմաններում արտաքին քաղաքական վերախմբագրված առաջնահերթությունները կրում էին նոր իրողությունների անմիջական դրոշմը: Մասնավորապես, առաջին անգամ հայտարարվեց Արևմուտքի կողմից նեոգաղթուցման դեմ անհրաժեշտ պայքարի մասին, որի գործիքներից են՝ նոր տիպի հիբրիդային պատերազմները. վերջինի ամենից վառ օրինակը «ուկրաինական» սցենարն է: Նոր աշխարհակարգի հաստատման առաջնահերթությունը սահմանվեց որպես գլոբալ նոր գերակայություն, որը պայմաններ է ստեղծելու նաև միջազգային ինստիտուտների բարեփոխման և արդյունավետության բարձրացման համար:

ՌԴ-ն սահմանեց իր ազգային շահերի առաջնահերթության վրա հիմնված արտաքին քաղաքականություն վարելու հայեցակարգը, որը ենթադրում է՝ գործընկերների հետ հարաբերություններում ելակետ ընդունել ՌԴ-ի ներուժի գլոբալ ազդեցությունը: Սա նշանակում էր, որ աշխարհում տեղի է ունենում ազդեցության

գոտիների վերաբաշխում, որը բազմաբևեռ աշխարհին բնորոշ երևույթ է, և այդ բաժանումներում ուժային հավասարակշռությունը որոշվելու է տարածաշրջանային երկրների ուժային հարաբերակցության և գործակցության արդյունքում: Չի լինելու որևէ երկիր, որը իր սեփական պատկերացումների համաձայն կորոշի աշխարհի տարբեր տարածաշրջանների ու պետությունների ճակատագիրը: Այլևս իրողություն է դառնալու «կամ-կամ» հայեցակարգը: ՌԴ ԱՔՀ-ի նշյալ վերախմբագրումն իր անմիջական արտացոլումները ունեցավ Մոսկվայի հարավ-կովկասյան քաղաքականության մեջ, որտեղ նա տարածաշրջանային իր գործընկերներին զգուշացնում է, որ չդառնան Հավաքական Արևմուտքի գործիքը՝ բերելով ուկրաինական կամ նախկին վրացական՝ այդ երկրների համար աղետաբեր նախադեպերը: Ելնելով այն թեզից, որ տարածաշրջանում ուժային բալանսը պետք է հաստատվի տարածաշրջանային երկրների շահերին ու պատկերացումներին համապատասխան, Մոսկվան կարծում է, որ տարածաշրջանից դուրս ցանկացած ուժային բևեռի մասնակցությունը կապակայունացնի անվտանգային և գործակցային իրավիճակը Հվ. Կովկասում: ՌԴ-ն հենց այս համատեքստում է նաև դիտարկում ՀՀ հրապարակային հայտարարությունները՝ Արևմուտքին տարածաշրջան բերելու, Արևմուտքի հետ հարաբերությունները սերտացնելու մասով, որին զուգահեռ ընթանում է հակառուսականության պլանավորած և հետևողական քարոզչություն:

2023-ի սեպտեմբերի 19-20-ին Ադրբեջանի կողմից 9 ամիս շրջափակման մեջ գտնվող Արցախի նկատմամբ ծավալված ռազմական գործողությունների հետևանքով տեղի ունեցավ էթնիկ զտում և բռնաճնշման սպառնալիքով՝ Արցախի լիարժեք հանձում Ադրբեջանին: Որևէ աջակցություն չստանալով ՀՀ-ից, մի քանի օր տևած ռազմական դիմադրությունից հետո, Արցախի ողջ բնակչությունը լքեց ԼՂՀ-ն, իսկ երկրի գործող և պաշտոնաթող մի շարք նախագահներ և պետական այլ պաշտոնյաներ գերեվարվեցին ու տեղափոխվեցին Բաքու: Սա որակապես նոր իրավիճակ ստեղծեց ՌԴ-ի քաղաքականության և ուժային հավասարա-

կշռության մասով, քանի որ ԼՂ խնդիրը, փաստացի, լուծվեց հօգուտ Ադրբեջանի՝ ռազմական ճանապարհով: Նշենք նաև, որ մինչ այդ՝ 2022 թ. հոկտեմբերի 7-ին Պրահայում ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը ճանաչել էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ դրա մեջ ներառելով նաև ԼՂՀ-ն, իսկ սա, փաստացի, արձանագրում էր այն մասին, որ Արցախում տեղի ունենալիք որևէ բանի հետ ՀՀ-ն այլևս գործ չի ունենալու և կանաչ լույս էր վառվում Ադրբեջանի համար, որ 2023-ի սեպտեմբերի 19–20-ը ձեռնարկի էթնիկ զտման օպերացիա:

Այս իրողությունները որակապես նոր դրության մեջ դրեցին ՌԴ-ին, որը, փաստացի, հայկական կողմի մոտեցումների և Բաքվի գրագետ քայլերի հետևանքով գեոպոլիտիկ իմաստով այս փուլում կորցրեց «արցախյան խաղաքարտը»՝ տարածաշրջանում դիրքավորվելու առումով: Ավելին, 2024 թ. ապրիլին խաղաղապահները դուրս եկան Արցախից:

Ամփոփելով՝ նշենք, որ ՌԴ ԱՔՀ-ի փոխակերպումները, մի կողմից, ՌԴ-ում իշխանության փոխակերպման, մյուս կողմից՝ աշխարհում ուժային հավասարակշռության փոփոխության արդյունք և դրսևորում էին: Այդ առումով, ՌԴ արտաքին քաղաքականությունը, ավանդաբար, ռեակցիոն էր, և փորձ էր՝ այն համապատասխանեցնելու օրվա համաշխարհային աշխարհաքաղաքական օրակարգերին՝ դրանից առավելագույն օգուտներ քաղելու համար: Հվ. Կովկասը համարվում է Մոսկվայի կենսական շահերի ոլորտ, սակայն համաշխարհային մրցակցության, ՌԴ-ի և Արևմուտքի ծայրահեղ հակադրության պայմաններում այն վերածվել է նաև այլ երկրների ազգային շահերի իրացման վայրի, որին ՌԴ-ն ոչ միշտ է անհրաժեշտ չափով և արագությամբ արձագանքում՝ տարածաշրջանային գործընկեր որոշ երկրների խնդիրներին Ուկրաինայում ՌԴ հատուկ գործողության ներկա փուլի բերած բարդությունների, տնտեսական պատժամիջոցների և ՌԴ ներսում քաղաքական իրավիճակի սրումներից խուսափելու պատճառով:

Հայ-ադրբեջանական ուժային հարաբերակցության հիմնահարցը՝ տարածաշրջանային կայունության ապահովման համատեքստում

Ամերիկյան քաղաքական ռեալիզմի դպրոցի ներկայացուցիչները կարծում են, որ միջազգային հարաբերությունների անարխիկ համակարգում պետությունների միջև փոխհարաբերությունները կարգավորում են տարբեր գործոններով, որոնցից առանցքայինը պետությունների տիրապետության տակ առկա ներուժն ու ազգային շահերի համար միջպետական մրցակցությունն են (Morgenthau, 1948)։ Եթե ներուժը դրսևորվում է որոշակի ցուցանիշների հարաբերակցության տեսքով, ապա մրցակցությունն արտահայտվում է միջպետական շփումների միջոցով հավասարակշռություն ապահովելով կամ դրա խախտմամբ՝ պատերազմով։ Այս ելակետային չափորոշիչները բնութագրում են ինչպես միջպետական փոխհարաբերությունների գլոբալ համակարգը, այնպես էլ դրա տարածաշրջանային չափումը։ Եթե ռեալիստների դրույթները տեղայնացնենք հայ-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում, ապա ուժային հարաբերակցության գնահատման մեջ, մեթոդաբանական առումով, պետք է հաշվի առնել երկու գործոն.

– ներուժի ստատիկ գնահատումն ու քանակական ցուցիչների հիմքով համեմատությունը չեն կարող արտացոլել ուժային հարաբերակցության առկա պատկերը, քանի որ կողմերի միջև ներուժային հարաբերակցության քանակական բաղադրիչներից պակաս կարևոր չեն որակական ցուցիչները,

– ուժային հարաբերակցության պատկերն ուրվագծելու համար պետք է գնահատման պարտադիր պայման դիտարկել երկու երկրների միջև հնարավոր ռազմական բախման՝ պատերազմի սցենարը։

Հվ. Կովկասում ՀՀ-ի և Ադրբեջանի հարաբերման բանալին Արցախյան հակամարտությունն է։ Գաղտնիք չէ, որ Ադրբեջանը ռազմական կարողություններով գերազանցում է ՀՀ և Արցախի միացյալ ներուժին։ Այս փաստը կարևոր էր, հատկապես, եթե

հաշվի առնենք, որ պաշտոնական Բաքուն պարբերաբար հիշեցնում էր Արցախյան հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու իր մտադրության մասին: Սակայն նշենք նաև, որ չնայած կողմերի ներուժի նման հարաբերակցությանը՝ մինչև 2020-ը Ադրբեջանը տարածաշրջանում ուժային հավասարակշռությունը խախտելու ընդգծված քայլեր չէր ձեռնարկում: Սկսած 1994 թ. հրադադարից, բացառությամբ մի քանի ռազմական միջադեպերի և 2016 թ. արկածախնդրության, ՀՀ և Ադրբեջանի միջև ուժային հարաբերակցության և տարածաշրջանային հավասարակշռության խախտման մասշտաբային փորձ, ըստ էության, չի եղել: Ռեալիստական տեսության դիրքերից, նման իրավիճակը փաստում է, որ տարածաշրջանում ձևավորվել էր ուժային հավասարակշռության վիճակ:

Ուժային հավասարակշռության բնույթը, դրա խախտման պատճառներն ու հիմքերը, ինչպես նաև հակամարտության կողմերի՝ իրենց առջև դրված նպատակներին հասնելու հնարավորությունները հասկանալու համար դիտարկենք և համեմատենք կողմերի տնտեսական ներուժի, ռազմական հզորության, մարդկային կապիտալի և անվտանգության ռազմավարության բաղադրիչները:

Արցախյան հակամարտության գոտում կողմերի ուժային հավասարակշռությունը ենթակա էր ոչ միայն քանակական, այլև որակական չափումների: Եթե վերջինիս վերաբերյալ հանրային տեղեկատվությունն առավել հասանելի էր, ապա քանակական տվյալները սովորաբար գաղտնի էին կամ ոչ միշտ էին ճշգրիտ:

Ակնհայտ է, որ Արցախյան հակամարտության հարցում ՀՀ գերխնդիրը 1992–94 թթ. պատերազմում ձեռք բերած արդյունքները նվազ կորուստներով լեգիտիմացնելն էր: Մինչդեռ Ադրբեջանի պարագայում այդ շահերը բացահայտ ռևանշիստական էին, և պարունակում էին նաև ներքաղաքական, իշխանապահպանման խնդիրներ: Այս համատեքստում, եթե Ադրբեջանը ձգտում էր իր ռազմական ներուժի բոլոր բաղադրիչներով հասնել քանակական ու որակական առավելության, ապա մինչև 2018-ը Հայաստանի/Արցախի մոտեցումն այս առումով այլ էր: Արցախի ճանաչման

իրավաքաղաքական բանակցային գործընթացին զուգահեռ, հայկական կողմը ռազմական ծախսերի կառավարումը կազմակերպում էր՝ առաջնորդվելով առկա խնդիրների՝ առավելագույն օպտիմալ լուծումներ մշակելու ճանապարհով, այդ թվում՝ սեփական ռազմական քաղաքականության մեջ մեկտեղելով հավաքական անվտանգության և նախահարձակ ինքնապաշտպանության հարացույցները:

Անդրադառնալով Արցախյան հակամարտության մեջ ներգրավված կողմերի ռազմական ներուժի հարաբերակցությանը՝ նշենք, որ դա բարդ և դժվար չափելի ցուցիչ էր: Ռազմական ոլորտում ուժերի հարաբերակցության և դրա դինամիկայի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել մի շարք խորքային ցուցիչներ, որոնք են՝ զինված ուժերի քանակական տվյալները, սպառազինությունների քանակական ու որակական տվյալները, ռազմական ոլորտի ծախսերը, մարտունակության աստիճանը, օպերատիվ մակարդակում բանակային ստորաբաժանումների ու սպայական կազմի գործողությունների համակարգվածությունը և այլն:

Ռազմական հզորությունների գնահատման ամենաընդհանուր ցուցիչը կողմերի զինված ուժերի (ԶՈՒ) քանակն էր: Ըստ հրապարակված տվյալների, ՀՀ զինված ուժերի կազմում ընդգրկված էր 49 հազ., Արցախի Հանրապետության զինված ուժերում՝ 18–20 հազ. զինվոր, Ադրբեջանի՝ 81 հազ. (Минасян, 2016): Այս հարաբերակցությունը փաստում էր, որ թեև Ադրբեջանի բնակչությունը երեք անգամ ավելին էր (Countermeters, 2024; Panorama, 2017), սակայն զինծառայողների քանակով շոշափելի առավելություն չուներ: Կարևոր է հաշվի առնել, որ ի տարբերություն Ադրբեջանի, ՀՀ-ի պետական սահմանի հայ-թուրքական և հայ-իրանական հատվածներում ծառայությունն էին իրականացնում ՌԴ սահմանապահ զորամիավորումները:

Ռազմական հարաբերակցության գնահատման հաջորդ կարևոր ցուցիչը մինչ 2020-ի սեպտեմբերը կողմերի ԶՈՒ-ում սպառազինությունների հարաբերակցությունն էր: Զինված ուժերում

կողմերի սպառազինության տեսակները և չափը որոշելը բարդ է, եթե չասենք՝ անհնար: Որպես կանոն, այս պարագայում անհրաժեշտ տեղեկատվության հիմնական աղբյուր են միջազգային թեմատիկ զեկույցները (SIPRI, Militari Balance, Центр анализа мировой торговли оружием, Janes world armies և այլն), մամուլը, ՄԱԿ-ի՝ սպառազինությունների շրջանառությունը կանոնակարգող փաստաթղթերը («The Global Reported Arms Trade», The UN Register of Conventional Arms.), պաշտոնական հայտարարությունները և, երբեմն էլ՝ «մասնավոր» բնույթի տեղեկատվությունը, որոնք մի շարք եզրահանգումներ կատարելու հնարավորություն են տալիս.

- կողմերի զինտեխնիկայի զգալի մասը ռուսական էր, որը փաստում էր՝ կողմերի սպառազինությունների հարաբերակցությունը կառավարելի է տարածաշրջանային տերության կողմից, այսինքն Արցախյան հակամարտության և կողմերի ընդհանուր մրցակցության վրա երրորդ կողմերի ազդեցությունը շոշափելի է:
- Երկու կողմերն էլ ունեին ինչպես պաշտպանողական, այնպես էլ հարձակողական զինանոց, որի միջոցով կարող էին խոցել հակառակորդի՝ շփման գծին մերձակա, ինչպես նաև խորը թիկունքում տեղակայված օբյեկտները (ներառյալ ռազմավարական նշանակության օբյեկտները, նավթամուղները, գազամուղները, երկաթգիծը) և կենդանի ուժը:
- Կողմերի մոտ ռուսական սպառազինության գերակայությունը թույլ էր տալիս ենթադրել, որ դրանց տեխնիկական սպասարկումը, մատակարարումները կառավարելի են լինելու ՌԴ-ի կողմից:

Կողմերի ուժային հարաբերակցության հաջորդ ցուցիչը ՀՀ-ի ու Ադրբեջանի բյուջեներից ռազմական կարիքներին հատկացումների չափն էր: 2017-ի դրությամբ ՀՀ-ն ռազմական կարիքների համար ծախսում էր մոտ 437 մլն ԱՄՆ դոլար, Ադրբեջանը՝ 1.479 մլրդ (SIPRI, 2016): Դա արձանագրվել էր դրան նախորդող տասը տարիներին էներգակիրների վաճառքից ստացված ֆինանսական մուտքերի թռիչքային աճի շնորհիվ: Անկախությունից ի վեր, ռազմական ոլորտում ՀՀ-ի և Ադրբեջանի ընդհանուր ծախսերը կազ-

մել են, համապատասխանաբար, 4.042 և 19.6 մլրդ դոլար: Այսինքն, Բաքուն մոտ 4.85 անգամ ավելի միջոցներ է հատկացրել ռազմական ոլորտին, քան Երևանը (SIPRI, 2016):

Ֆինանսական հատկացումների նման պատկերի պայմաններում հայկական կողմը, հավասարակշռություն պահպանելու նպատակով, առաջնորդվում էր ոչ թե սպառազինությունների մրցավազքի տրամաբանությամբ, այլ իր անվտանգային կարիքներից բխող պահանջներով: Նման իրավիճակում ՀՀ-ն վարում էր ֆինանսական միջոցները հնարավորինս արդյունավետ տնօրինելու քաղաքականություն, եղած հնարավորությունների շրջանակում ձեռք բերելով անվտանգության կոնկրետ խնդիրներ լուծող սպառազինություն: Հենց այս նպատակով էին նաև 2015-16 թթ. ընթացքում ձեռք բերվել հարձակողական բնույթի «Իսկանդեր» օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրները:

Հավելենք, որ Ադրբեջանի ռազմական բյուջեին իր ռազմական բյուջեի անհամամասնությունը ՀՀ-ն փորձում է մեղմել միջպետական համաձայնագրերով ստացվող զինատեսակներով՝ որպես ՀԱՊԿ անդամ երկիր օգտվելով ՌԴ տրամադրած վարկային միջոցներով ներքին գներով սպառազինություններ ձեռք բերելու ֆինանսական արտոնություններից: Սակայն փաստենք, որ, այնուամենայնիվ, ռազմական հատկացումների վիճակի և դինամիկայի պահպանումը ՀՀ-ի համար մինչև 2020-ի դեպքերը ակնհայտ ռիսկային էին:

Ինչպես արդեն նշվեց, տարածաշրջանային ուժային հարաբերակցության վրա ազդող կարևորագույն հաջորդ գործը կողմերի տնտեսական ներուժն էր և մարդկային կապիտալը: Նշենք, որ առնվազն վերջին 10 տարիներին Ադրբեջանի ռազմական ծախսերը ավելացել էին գրեթե տասնապատիկ՝ վառելիքաէներգետիկ ռեսուրսների շնորհիվ: Պարզ էր, որ հայկական կողմը Ադրբեջանի նավթին հակադրելու անհրաժեշտ տնտեսական միջոցներ չուներ, մանավանդ վերջին տարիներին երկրում տնտեսական աճի տեմպերի նվազման պարագայում: Դա, իհարկե, շոշափելի հարված էր տարածաշրջանում ՀՀ մրցակցային դիրքերին: Երկրների

տնտեսական հզորությունների հարաբերակցության բնույթը առավել լավ պատկերացնելու համար փորձենք մի քանի ցուցանիշով դիտարկել այն (տե՛ս Աղյուսակ 2)։

Աղյուսակ 2. ՀՀ և Ադրբեջանի տնտեսական հիմնական ցուցանիշները (***Мировой Атлас Данных (2008–2018)***

Տարեթիվ	ՀԱՅԱՍՏԱՆ				ԱԴՐԲԵՋԱՆ			
	ՀՆԱ, մլրդ, $	Փոփոխություն, %	ՀՆԱ 1 շնչի հաշվով, $	Փոփո խություն, %	ՀՆԱ, մլրդ, $	Փոփոխություն, %	ՀՆԱ 1 շնչի հաշվով, $	Փոփոխություն, %
2018	12,41	7,58	4149	7,57	45,42	10,09	4569	8,78
2017	11,54	9,40	3857	9,38	41,26	9,06	4200	7,76
2016	10,55	-0,07	3526	-0,08	37,83	-25,60	3898	-26,46
2015	10,55	-9,10	3529	-9,26	50,84	-32,42	5300	-33,24
2014	11,61	4,40	3889	4,21	75,24	1,46	7939	0,17
2013	11,12	4,73	3732	4,38	74,16	6,42	7926	5,04
2012	10,62	4,70	3576	4,63	69,69	5,60	7546	4,18
2011	10,14	9,52	3417	9,46	65,99	24,71	7243	23,16
2010	9,26	7,08	3122	7,21	52,91	19,47	5881	18,47

2009	8,65	-25,84	2912	-25,60	44,29	-9,58	4964	-11,02
2008	11,66	26,68	3913	27,10	48,98	48,02	5579	46,10

Մարդկային կապիտալի և ժողովրդագրության ոլորտում Հայաստանը, որոշ չափով նաև Արցախը, վերջին 20 տարիների ընթացքում լուրջ հետընթաց են արձանագրել: Ըստ ոլորտի մասնագետների հաշվարկների, ՀՀ բնակչությունն անցած երկու տասնամյակների ընթացքում մոտ 1/3-ով կրճատվել է, ինչը լուրջ մարտահրավեր է պետության համար: Ի տարբերություն ՀՀ-ի, Ադրբեջանում գրանցվում էր բնակչության աճ: Թեև միջազգային փորձագետները վստահեցնում էին, որ Ադրբեջանի բնակչության 25–30 տոկոսը աշխատանքային միգրացիայի հետևանքով տեղափոխվել է արտերկիր, սակայն երկրի պաշտոնական վիճակագրությունն այդ մասին լռում էր: ՄԱԿ-ի կանխատեսումներով, առաջիկայում Ադրբեջանում բնական աճի տեմպերը թեև կնվազեն, սակայն կունենան դրական միտում: Մինչդեռ ՀՀ-ում միջնաժամկետ կտրվածքով սպասվում է բնական աճի բացասական հաշվեկշիռ՝ առաջին հերթին՝ պայմանավորված արտագաղթով (տես՝ Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ՀՀ և Ադրբեջանի ընդհանուր և աշխատունակ տարիքի ազգաբնակչության տվյալներ (ՄԱԿ, 2024)

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ				
Տարեթիվ	Հայաստան		Ադրբեջան	
	Բնակչություն մլն	15–64 տարեկան անձինք	Բնակչություն մլն	15–64 տարեկան անձինք
2000	3076000	1973000	8118000	5141000
2005	3015000	2005000	8563000	5786000

2010	2963000	2043000	9095000	6492000
2015	2989000	2073000	9613000	6939000
2020	2991000	2048000	10030000	7109000
2025	2989000	2023000	10309000	7193000
2030	2970000	1978000	10474000	7261000

Ըստ աղյուսակ 3-ի, եթե Հայաստանի և Ադրբեջանի բնակչության՝ 15-64 տարեկան (աշխատունակ տարիքի) սեգմենտի հարաբերակցությունը 2010-ին 3.17 էր, ապա, ըստ կանխատեսումների, 2030-ին այն կկազմի 3.67: Հայաստանում սա ինչպես ծնելիության տեմպերի նվազման, այնպես էլ արտագաղթի և բնակչության ծերացման հետևանք էր: Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալները վկայում են, որ ՀՀ-ն արդեն կանգնած է կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում ժողովրդագրական իրավիճակը շտկելու լուրջ մարտահրավերի առաջ: Շարունակական արտագաղթը ոչ միայն խոչընդոտում էր երկրի կայուն զարգացմանը, այլև ամենատարբեր ոլորտներում առաջատար մասնագետների արտահոսքի հետևանքով խնդիրներ էին ստեղծվում մարդկային կապիտալի մեջ ներդրումներ կատարելու գործընթացում: Մինչդեռ այդ ոլորտը 21-րդ դարում պետությունների միջև ռազմավարական առավելություն ստանալու երաշխիքներից մեկն է:

Հայ-ադրբեջանական տարածաշրջանային մրցակցության ձևավորված պատկերի ներքո, ուր կողմերի մոտ առկա ռազմաքաղաքական, տնտեսական հզորության և մարդկային կապիտալի ցուցիչները տեսանելի անհամաչափություն էին ստեղծել ուժային հարաբերակցության առումով, պետք է պարզել ու վերլուծել, թե ինչու նախկինում այդ վիճակը չէր հանգեցնում ԼՂ-ի հակամարտության ռազմական սրացման, իսկ արդեն 2020 թ. պայմաններում հանգեցրեց դրան: Այս առումով, անհրաժեշտ է պարզել ու վերլուծել, թե հատկապես ինչը նպաստեց, որ Ադրբեջանը գնա ԼՂ խնդրի լուծման ռազմական ճանապարհով, իսկ ՀՀ ղեկավարն էլ իր 2024 թ. հրապարակային հայտարարությամբ արձանագրի,

որ ինքը «դեռ 2018-ին պետք է Արցախը ճանաչեր Ադրբեջանի մաս» (News, 2024a):

Պատճառները, որոնք հանգեցրին ԼՂ խնդրի շուրջ իրավիճակի սրման, կարելի է դիտարկել մեթոդաբանական տարբեր տեսությունների դիրքերից. հարցը նեոռեալիստական տեսության տրամաբանությամբ հետազոտելով՝ կարելի է արձանագրել, որ, ըստ նրանց, պատերազմների պատճառները լինում են միջազգային քաղաքականության երեք հիմքով՝ անհատական/անձնական մակարդակի պատճառներ, ազգային պետության մակարդակի պատճառներ և միջազգային հարաբերությունների ընդհանուր համակարգի պատճառներ (Waltz, 1959): Այս մեթոդաբանությամբ փորձենք վերհանել ու վերլուծել այն պատճառ-գործոնները, որոնք նպատեցին հակամարտության շուրջ իրավիճակի սրմանը և ռազմական գործողությունների վերսկսմանը:

Հակամարտության վերսկսման անհատական, միջանձնային մակարդակի գործոնների մեջ նեոռեալիզմի ներկայացուցիչ Ք. Ուոլթսը առանձնացնում է միջանձնային հարաբերությունների բնույթը, քաղաքական գործիչների միջև փոխըմբռնման մակարդակը, քաղաքական որոշումների ընդունման ժամանակ թույլ տրվող անհատական սխալները (Waltz, 1959): Ուոլթսը նշում էր, որ պետք չէ գերագնահատել անձնական գործոնի նշանակությունը, սակայն, միաժամանակ, այն չի կարելի թերագնահատել. այն կարևոր է (Waltz, 1959): ԼՂ հակամարտության ողջ ընթացքի վրա հստակ ազդեցություն ունեցան հակամարտության մեջ ներգրավված կողմերը ներկայացնողների անձնական փոխհարաբերությունները: Մասնավորապես, դեռ 1990-ականներին իշխանության վերադարձած Հ. Ալիևը, կարողանալով կարգավորել հարաբերությունները հայկական կողմի հետ, որոշակի կայունություն մտցրեց իրավիճակում: Արդյունքում, թե՛ Հ. Ալիևը, թե՛ նրա որդին՝ Իլհամը, չնայած բոլոր հակասություններին, պարբերաբար շփվում էին ՀՀ նախագահներ Ռ. Քոչարյանի, ապա նաև՝ Ս. Սարգսյանի հետ: Մասնավորապես, Ի. Ալիևը և Ս. Սարգսյանը ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի միջնորդությամբ ինտենսիվ երկխոսութ-

յուն էին վարում ընդհուպ մինչև 2018-ը: ՀՀ-ում 2018-ին տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունը» կտրուկ փոխեց իրավիճակը: Ի. Ալիևի և Ն. Փաշինյանի միջև անձնական հարաբերությունները անկայուն էին և որոշակիորեն լարված: ՀՀ և Ադրբեջանի առաջնորդները միմյանց հասցեին սկսեցին թույլ տալ ձևակերպումներ, որակումներ, սպառնալիքներ, ծաղրական գնահատականներ (Sev.tv, 2020), որոնք աննախադեպ էին և բնորոշ չէին 1994-ի Բիշքեկյան արձանագրությունն ստորագրած երկրների ղեկավարներին՝ մինչ 2018-ը:

ՀՀ և ՌԴ ղեկավարների միջև շփման ոճն ու որակը նույնպես փոխվեց, չնայած դաշնակցային հարաբերություններն այդ փուլում չփոփոխվեցին ոչ՛ երկկողմ, ո՛չ ՀԱՊԿ-ի կամ ԵԱՏՄ ձևաչափերում, սակայն նշենք, որ ՀՀ-ում Ն. Փաշինյանի իշխանության գալու արդյունքում տեղ գտան ձևակերպումներ, որոնք, այնուամենայնիվ, կասկածի տակ դրեցին ՀՀ-ի մասնակցությունը ՌԴ-ի հետ համատեղ ինտեգրացիոն ծրագրերին: ՀՀ նոր իշխանություններն սկսեցին քրեական գործեր նախաձեռնել ՀՀ նախկին պետական, ռազմական գործիչների նկատմամբ, որոնցից ամենից աղմկահարույցը ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի գործն էր: Ադրբեջանում տեսնում էին, որ պոպուլիզմը, որի միջոցով լեգիտիմացվեց ՀՀ-ում իշխանության եկած Ն. Փաշինյանը, թափանցել է իրական քաղաքականության դաշտ, իսկ դա Բաքվի համար շահեկան միջավայր է ստեղծելու:

Վերլուծելով անհատական հատկանիշների գործոնի ազդեցությունը ԼՂ շուրջ ռազմական գործողությունների վերսկսման վրա, պետք է կենտրոնանալ ՀՀ և Ադրբեջանի ղեկավարների՝ որպես պետական առաջնորդների անձնական հատկանիշների ուսումնասիրության վրա: Ն. Փաշինյանի և Ի. Ալիևի հիմնական տարբերությունը կոմպետենտության աստիճանն էր քաղաքական փորձի առկայության ու պետական կառավարման ոլորտում: Ի. Ալիևը 4 անգամ (2003, 2008, 2013 և 2018 թթ.), հաղթել էր նախագահական ընտրություններում՝ դառնալով Ադրբեջանի ղեկավար՝ հաջորդելով իր հորը: Ն. Փաշինյանը իշխանության եկավ պատե-

րազմի սկսվելուց առնվազն երկու տարի առաջ: Քաղաքական փորձ նա ձեռք էր բերել որպես ընդդիմադիր՝ 2008-ից, ուներ լրագրողի և բլոգերի փորձ: Նա իշխանության եկավ զանգվածային դժգոհությունների ալիքի ներքո՝ ակտիվ օգտագործելով պոպուլիստական հռետորաբանություն: ՀՀ նոր վարչապետի առջև ծառացան բազմաթիվ ներքին ու արտաքին խնդիրներ, որոնցից ամենից կարևորը, իհարկե, ԼՂ հարցն էր: Այս հիմնախնդրի մասով նա իրեն թույլ տվեց մի շարք ոչ միանշանակ ձևակերպումներ ու արտահայտություններ, որոնցից հետագայում օգտվեց Ադրբեջանը: Մի կողմից, նա կոչ էր անում խնդիրը լուծել ՀՀ-ի, ԼՂՀ-ի և Ադրբեջանի ժողովուրդների համատեղ շահերը հաշվի առնելով (Armenpress, 2020), մյուս կողմից՝ ադրբեջանական կողմի համար անընդունելի վարք էր ցուցաբերում: Մասնավորապես, 2019-ին ելույթ ունենալով Ստեփանակերտի հրապարակում, նա իրեն թույլ տվեց մի շարք խնդրահարույց ձևակերպումներ (Civilnet, 2019): Արձանագրենք, որ հենց այս ձևակերպումը շատ օգտակար եղավ Ի. Ալիևին՝ հետագայում հիմնավորելու ռազմական գործողություններ նախաձեռնելու իր քայլը, քանի որ միջնորդ երեք երկրներին նա կարողացավ փաստարկել, որ հայկական կողմը ԼՂ-ի խնդրի լուծումը տանում է տարածքային հավակնությունների դաշտ, որն անընդունելի էր արդեն բոլորի համար: Նշենք նաև, որ Ն. Փաշինյանը, գոնե հրապարակային կերպով, խիստ գերագնահատում էր Մինսկի խմբի արևմտյան համանախագահների աջակցության հնարավորությունները և նրանց իրական ազդեցությունը ԼՂ խնդրի լուծման հարցում: ՀՀ ղեկավարության նման հակասական, երբեմն էլ անկանխատեսելի դիրքորոշումները և վարքը շատ շահեկան էին Ադրբեջանի համար:

Մինչդեռ Ի. Ալիևը, ԼՂ խնդիրը նաև ռազմական ճանապարհով լուծելու մասին խոսելով հանդերձ, հստակ գիտակցում էր դրա հետ կապված բոլոր ռիսկերը՝ հատկապես գլոբալ և տարածաշրջանային աշխարհաքաղաքական առումներով: Ի. Ալիևին հարկավոր էր այդ քայլի գեոպոլիտիկ երաշխավոր, կամ, առնվազն պետություն, որը դեմ չէր լինի Ադրբեջանի այդ քայլին:

Նախկինում Ալիևի այդ սպառնալիքները սովորաբար ընկալվում էին որպես հայկական կողմի վրա ճնշման գործիք, ներքին ազգայնական ուղերձ սեփական հասարակությանը: Եվ երբ 2020-ի աշնանը Ալիևը հռետորաբանությունից անցավ քայլերի, ապա դա զգալիորեն պայմանավորված էր ՀՀ-ում և Ադրբեջանում ներքաղաքական գործընթացների, այդ երկու երկրների միջպետական հարաբերությունների բնույթով, տարածաշրջանային և գլոբալ միջազգային կոնյուկտուրայի փոփոխությամբ:

Ազգային պետությունների հարաբերությունների մակարդակը, ըստ Ք. Ուոլթսի, միշտ շարունակում է մնալ ռազմավարական հակամարտությունների ու պատերազմների հիմնական պատճառը (Waltz, 1979): Ռազմական հակամարտությունից ու պատերազմից զերծ մնալու լավագույն գործոններից մեկը ինչպես ռեալիստները, այնպես էլ նեոռեալիստները, համարում էին ուժերի բալանսի պահպանումը: Բալանսի խախտումը կամ դրա խախտման սպառնալիքը կարող է խթանել նման բախում: 2018-ի դրությամբ ՀՎ. Կովկասում ձևավորված հավասարակշռությունը ՀՀ-ի ու Ադրբեջանի միջև՝ էականորեն խախտված էր, և միայն ՌԴ զսպող գործոնն էր, որ թույլ չէր տալիս, որ ռազմական գործողություններ վերսկսեն: Սակայն գործընթացներին նոր խաղացողների միանալը փոփոխեց դրա ուղղությունը:

Նշենք, որ ԼՂ հակամարտությունը այն ասիմետրիկ կոնֆլիկտներից էր, որին բնորոշ էր կողմերի տարբեր ներուժների առկայությունը (Paul, 1994): Ադրբեջանը ինչպես ազգաբնակչության, այնպես էլ տնտեսության մասով գերազանցում էր ՀՀ-ին և ԼՂՀ-ին: Սակայն մինչ 2020-ի պատերազմը Ադրբեջանը, փաստացի, պարտված կողմ էր. լինելով ներուժով առավել հզոր, նա պարտվել էր Արցախյան առաջին պատերազմում: ՀՀ-ի և ԼՂՀ-ի ստորաբաժանումների կազմակերպվածությունը, ռազմական ոգին, բարոյական մոտիվացվածությունը առավել բարձր մակարդակում էին, որոնք էլ կանխորոշեցին պատերազմի ելքը: Կարևոր էր նաև այդ փուլում Ադրբեջանում առկա ներքաղաքական անկայունության գործոնը, որը շահեկան եղավ ՀՀ-ի ու ԼՂՀ-ի համար:

Պատերազմի առաջին փուլից հետո կողմերն սկսեցին պատրաստվել հաջորդ պատերազմին, սակայն արդեն որպես ՋՈւ ունեցող երկրներ: Իսկ պատերազմի հավանականությունը բավականին մեծ էր գնահատվում: Նշենք, որ ԼՂՀ-ն գալիք պատերազմում կարող էր ռազմական աջակցություն ստանալ Հայաստանից և հույսը դնել բացառապես վերջինիս վրա, իսկ ՀՀ-ն իր հերթին հույսը դրել էր ՌԴ-ի հետ ռազմատեխնիկական գործակցության վրա: Որպես ՀԱՊԿ երկիր, ՀՀ-ն հնարավորություն ուներ ՌԴ-ից էական զեղչերով ձեռք բերելու իրեն անհրաժեշտ զինտեխնիկա: Ադրբեջանը, իր հերթին, ՌԴ-ից ձեռք էր բերում զինտեխնիկա ոչ արտոնյալ պայմաններով, սակայն զարգացնելով Ռուսաստանի հետ ռազմատեխնիկական գործակցությունը: Ադրբեջանը նաև ակտիվ ռազմատեխնիկական համագործակցություն էր վարում Իսրայելի հետ: ՀՀ-ի և Ադրբեջանի ռազմական բյուջեների անհամաչափությունը տրամաբանորեն հանգեցնելու էր ուժային հավասարակշռության խախտման, որն արդեն 2016-ի դրությամբ տեսանելի էր: Քանակական ցուցիչներից բացի, Ադրբեջանը զարկ էր տալիս նաև բարձրտեխնոլոգիական զենքի ձեռքբերմանը ու արտադրությանը: Մի բան, որ ՀՀ-ում այդպես էլ չստացվեց իրագործել: Դեռ այդ ժամանակ, ռազմական փորձագետները զգուշացնում էին, որ Ադրբեջանի կողմից ԱԹՍ-ների ձեռքբերումը և արտադրությունը վճռորոշ է լինելու պատերազմի դեպքում և կարող է մեծ խնդիրներ ստեղծել հայկական և ԼՂՀ ՀՕՊ-երի համար (Дергилазова, Минасян 2011): Ռազմական ներուժի ավելացումը Ադրբեջանի ղեկավարության մոտ գայթակղություն էր ստեղծում, որ լուծումը, այնուամենայնիվ, հանգելու է ռազմական գործոնին: Սակայն կային նաև խոչընդոտող գործոններ, և դրանք, առաջին հերթին, միջնորդ երկրներն էին, որոնք տարիներ շարունակ ցանկություն չունեին փոփոխելու Հվ. Կովկասում առկա ուժային բալանսը: Սակայն միջազգային հարաբերությունների համակարգի փոփոխությունները, աշխարհում բազմակենտրոնության և տարածաշրջանային նոր ազդեցիկ դերակատարների առկայությունը նպաստավոր պայմաններ ստեղծեցին իրավիճակն այս մասով փոփոխելու հա-

մար: Այսինքն, ժամանակի հետ այդ գործոնների քանակը նվազեց, և Բաքվում չէին կարող չտեսնել, որ 2018-ից հետո ՀՀ-ում պետական և հանրային ինստիտուտների ճգնաժամ էր, որն էականորեն թուլացրել էր երկիրը ոչ միայն քաղաքական, այլև ռազմական և ռազմավարական առումով:

Նեոռեալիստական մոտեցման համաձայն, պատերազմների պատճառների ցանկում երրորդը միջազգային հարաբերությունների ընդհանուր համակարգն է, որի փոփոխությունը, փոխակերպումը պայմաններ է ապահովում ռազմական գործողությունների վերսկսման համար (Waltz, 1994): Մերօրյա գլոբալ միջազգային հարաբերությունների համակարգի փոփոխությունները հստակ ցույց են տալիս, որ աշխարհը դառնում է բազմակենտրոն: Նախկինում դերակատարում չունեցող առանձին երկրներ այսօր էական ազդեցություն են ձեռք բերել:

Տասնամյակներ շարունակ ՌԴ-ն, մի կողմից որպես տարածաշրջանային առաջատար պետություն, մյուս կողմից որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկիր, փորձել է զսպել ԼՂ շուրջ ռազմական էսկալացիայի փորձերը: Ի դեպ, տարիներ շարունակ ՌԴ-ին հաջողվում էր պահպանել ՀՀ-ի և Ադրբեջանի միջև բալանսը՝ առավելապես պետական կառավարչական էլիտաների միջև անձնական հարաբերությունների շնորհիվ: Մինչ 2018-ը այդ հանդիպումները ունեին պարբերական բնույթ: Հենց անձնական կապերն էին հնարավորություն տալիս մեղմելու և հարթելու սահմանային միջադեպերը, սրացումները, ինչպես դա եղավ 2016-ին: Դա, իհարկե, որևէ կերպ չէր տեղավորվում Արմտյան երկրների և, հատկապես Մինսկի համանախագահ ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի շահերի տիրույթում, քանի որ նրանք կարծում էին, որ դա հնարավորություն է տալիս ՌԴ-ին՝ ինչ-որ մի փուլից հետո հակամարտության գոտում տեղակայել ռուս խաղաղապահներ (ու կյանքը ցույց տվեց, որ նրանք այդ հարցում չէին սխալվում – Ա.Ղ.)՝ դրանով մեծացնելով իր ազդեցությունը տարածաշրջանում: Ի դեպ, դրան դեմ էր նաև ադրբեջանական կողմը: ՀՀ-ում էլ կային ուժեր, որոնք, չնայած հայ-ռուսական դաշնակցային հարաբերություննե-

րին, նպատակ ունեին դուրս մղելու ՌԴ-ին կարգավորման գործընթացից: Չնայած ձեռնարկվող միջոցառումներին, խնդրի խաղաղ լուծումը իրողություն չդարձավ, սակայն 1994 թ. կնքված հրադադարը, մեծ հաշվով, պահպանվում էր:

ԼՂ-ի շուրջ ստատուս քվոյի պահպանումը առավելապես ձեռնտու էր հայկական կողմին, քանի որ այդ պայմաններում վերջինիս վերահսկողության տակ էին մնում ինչպես ԼՂՀ-ն, այնպես էլ շրջապատող տարածքները: Մինչդեռ ադրբեջանական կողմը մեկ անգամ չէ, որ հայտարարել էր, որ խնդիրը կլուծի ռազմական ճանապարհով, սակայն դեռևս ձեռնպահ է մնում նման քայլ անելուց:

Այս իրավիճակում, ինչպես արդեն նշել ենք, ՌԴ-ն բավականին բարդ ընտրության առաջ էր. 2018-ին ՀՀ-ում փոփոխված իշխանության գոյության պայմաններում կարևորը տարածաշրջանային ուժային հավասարակշռությունն ապահովելն էր՝ թույլ չտալով ռազմական զանգվածային սրացումներ և տարածաշրջանային «նոր» դերակատարների, տվյալ դեպքում՝ Ամերիկայի ազդեցության ավելացում: Ինչպես հայտնի է, ՌԴ-ն, մի կողմից, ուներ սերտ տնտեսական և ռազմաքաղաքական հարաբերություններ ՀՀ-ի հետ, և վերջինիս առջև ուներ կոնկրետ դաշնակցային պարտավորություններ՝ անվտանգության ոլորտում (Федулова, 2010): Մյուս կողմից, Մոսկվան շահագրգիռ էր Ադրբեջանի հետ հարաբերությունների ընդլայնման հարցում: ՌԴ ղեկավարությունը գնահատում էր ՆԱՏՕ-ին չանդամակցելու, իր երկրում ԱՄՆ ռազմական կոնտինգենտ չտեղակայելու՝ Բաքվի մոտեցումները: Մոսկվան ցանկանում էր Կասպից ծովի հարցում, ի դեմս Բաքվի, տեսնել դաշնակցի, Բաքվի միջոցով էներգետիկ ծրագրեր իրականացնել (Федулова, 2010): Այս բոլոր գործոնները պայմաններ էին ստեղծում, որ իրավիճակը տարածաշրջանում փոփոխվի, և ՌԴ-ն այդ ամենի հետ պետք է հաշվի նստեր:

Ինչպես նշեցինք, Ի. Ալիևին ռազմական գործողություններ սկսելու համար հարկավոր էին արտաքին քաղաքական աջակիցներ, որոնց մի մասը իրենց առավելապես չեզոք կպահեին, իսկ

մյուսները անմիջականորեն կաջակցեին Բաքվին: Դրա համար «անհրաժեշտ բոլոր պայմանները» ապահովեց նաև ՀՀ ղեկավարը՝ 2019-ի իր՝ «Արցախը Հայաստան է և վերջ» հայտնի ելույթով (Factor tv, 2019):

Բաքվին անմիջականորեն աջակցող պետությունների ցանկում առաջինն, իհարկե, Թուրքիան էր, որը դա անում էր հրապարակային: Ինչպես նշում է ռուս քաղաքագետ Վ. Գ. Բառանովսկին. «Միջազգային հարաբերությունների համակարգի տրամաբանությունն այսօր ծնում է այնպիսի իրողություններ, երբ երկբևեռ աշխարհի ազդեցությունը մնացել է անցյալում, և տարածաշրջանային մի շարք խաղացողների առջև դռներ են բացվել միջազգային հարթակներում ինքնադրսևորվելու համար: Վիճակ, որ նախկինում իրենք անգամ չէին էլ պատկերացնի... Այսօր այդ երկրների մոտ զգացողություն է, որ իրենց ձեռքերին ոչ միայն ազատություն է տրվել, այլև, որ կարող են հանդես գալ սեփական օրակարգով, որը կարող է անգամ դրսևորվել առաջնորդության կամ տարածաշրջանային գերակայության տեսքով» (Барановский, 2019): Քաղաքագետի այս որակումները Թուրքիայի մասին են, որը ոչ միայն էականորեն բարելավել է իր աշխարհաքաղաքական դերակատարումը, այլև կարողացել է անմիջականորեն մասնակցել Հվ. Կովկասում ուժային հավասարակշռության փոփոխությանը՝ դառնալով տարածաշրջանում աշխարահաքաղաքական կլիմա որոշող կարևոր դերակատար:

Վստահաբար, 2020-ին հստակ տեսանելի էր Անկարայի ձգտումը՝ առավել մեծ ու ազդեցիկ դերակատարություն ունենալ ողջ Մերձավոր Արևելքում: Այս երկիրն սկսեց առաջնորդության հայտ ներկայացնել մահմեդական ողջ աշխարհում: Հիմնվելով նեոօսմանիզմի և պանթուրքիզմի գաղափարների վրա, թուրքական ղեկավարությունը ջանքեր էր գործադրում՝ պատմական Օսմանյան կայսրության ողջ տարածքում և թուրքական աշխարհում իր ազդեցությունն ամրացնելու համար: Թուրքիան ակտիվորեն մասնակցում է տարածաշրջանային մի շարք հակամարտությու-

ների՝ Սիրիայում, Լիբիայում, արևելյան միջերկրածովյան ռեգիոնում: Փաստորեն, 2020-ի աշնանը հերթը Հվ. Կովկասինն էր:

Արցախյան 44-օրյա պատերազմը և Հվ. Կովկասում ուժային հավասարակշռության փոխակերպման գործընթացը

2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմը Հվ. Կովկասում ուժային հավասարակշռության փոփոխման պայմաններ ստեղծեց: Այն, մի կողմից, նախկինում ձևավորված ուժային բալանսի խախտման հետևանք էր, մյուս կողմից՝ նոր ուժային բալանսի ձևավորման նախապայման: 44-օրյա պատերազմի հետևանքով տարածաշրջանը հայտնվեց ուժային հարաբերակցության նոր կարգավիճակում, որտեղ էականորեն ավելացան Թուրքիայի դերն ու նշանակությունը: Մինչ օրս դեռևս վերջնականապես չձևավորված տարածաշրջանային ուժային հավասարակշռության պայմաններում ունենք մի վիճակ, երբ տարածաշրջանի երկրները անվտանգության ու զարգացման շահերի անորոշության, նոր գործընկեր-դերակատարներ փնտրելու, նոր աշխարհաքաղաքական ինքնություն ձևավորելու, գոյապահպանման խնդիրներ լուծելու տիրույթում են:

44-օրյա պատերազմը, որը տարածաշրջանային ուժային հավասարակշռության խախտում էր, ներկա համաշխարհային փոխակերպումների պայմաններում նաև նոր աշխարհակարգի վերափոխման տեղային դրսևորում էր. աշխարհակարգ, որը համաշխարհային ուժային հավասարակշռություն է և կազմված է երկրագնդի տարբեր տարածաշրջաններում (այդ թվում՝ Հվ. Կովկասում) պետությունների ուժային հարաբերակցությունից: Նշենք, որ ուժային հավասարակշռության խախտման գործընթացը միայն ռազմական բաղադրիչով չէ, որ պայմանավորված է: Այն նաև ոչ ռազմական բնույթի մի խումբ գործոնների ազդեցություն կրող բազմամակարդակ համակարգ է, որը պայմանավորում է նաև աշխարհաքաղաքական ու ռազմավարական գործընթացների բնույթը: Այս առումով, ՀՀ անվտանգային և զարգացման շահերը անմիջականորեն կախված են հարավկովկասյան տարածաշրջանում

ուժային հարաբերակցության բնույթից և աշխարհաքաղաքական նոր դերակատարում ստանձնելու իրողություններից:

Որևէ տարածաշրջանի աշխարհաքաղաքական կշիռն ու այնտեղ ուժային հարաբերակցության բնույթը պայմանավորում են տարբեր ցուցիչներ, որոնց մեջ առաջնային են տվյալ տարածաշրջանում առկա և պոտենցիալ հակամարտության շրջանները, տարածաշրջանի էներգետիկ և հաղորդակցային հնարավորությունները, էթնիկ-ազգային կազմը, տեղական և համաշխարհային ուժային կենտրոնների հետ տարածաշրջանի երկրների ռազմաքաղաքական-անվտանգային հարաբերությունները, տնտեսական ներուժը և դրա կառուցվածքը, երկրների էլիտաների լեգիտիմության աստիճանը և քաղաքական փոխակերպումների բնույթը:

2020 թ. սեպտեմբերի 27-ից հետո Հվ. Կովկասում հակամարտությունների նկարագիրը միանշանակ չէր: Եթե նախկինում՝ մինչև 2008 թ. օգոստոսը, Աբխազիան և Հվ. Օսիան չճանաչված իրավաքաղաքական միավորներ էին, ապա 2008-ին ռուս-վրացական պատերազմից հետո դրանք օգոստոսի 26-ին ՌԴ կողմից ճանաչվեցին որպես անկախ պետություններ. այդ միավորների ինքնիշխանությունը հետագայում ճանաչեցին նաև Վենեսուելան, Նիկարագուան, Սիրիան:[1] Ճանաչմամբ պայմանավորված, այդ միավորների դերն ու նշանակությունը փոփոխվեց և դրանք, էթնոքաղաքական հակամարտության նախկին կարգավիճակից դուրս գալով, ստացան նոր որակի քաղաքական և անվտանգային վարք ցուցաբերելու հնարավորություն, կարգավիճակ: Իհարկե, Վրաստանի և շատ այլ երկրների կողմից դրանց չճանաչումը տեսականորեն հնարավորություն է ստեղծում, որ անհրաժեշտ ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական ներուժի կուտակման պայմաններում ինչ-որ մի օր Վրաստանը փորձի դրանք վերադարձնել ինքն-

[1] Որոշ երկրներ, օրինակ՝ Վանուատուն, Տուվալուն, սկզբում ճանաչեցին, սակայն հետագայում հրաժարվեցին 2014 թ. Աբխազիայի և Հվ. Օսիայի ճանաչման իրենց իրավական ակտերից (ծանոթագրությունը՝ Ա.Ղ.):

իշխանության իր գոտի, սակայն, այս պահի դրությամբ, այդ միավորների ապագան, ավելի շուտ, ՌԴ-Արևմուտք օրակարգի հարց է:

ԼՂ-ն ավանդաբար եղել է Հվ. Կովկասի ամենից ակտիվ հակամարտությունը. հենց միայն զինադադարի ընթացքում շփման գծում զոհերի թիվը դրա վառ վկայությունն է: 1994-ի զինադադարից մինչ 2020 թ. հայկական կողմի ընդհանուր զոհերի թիվը կազմել է ավելի քան 2000 մարդ (ANIARC, 2020): 1994-ի զինադադարից հետո, 2008 թվականը շփման գծում լարվածության սրման մեկնարկի տարի էր, որով արձանագրվեց, որ հակամարտությունը մտել է կայուն ակտիվության փուլ, իսկ 2016-ին արդեն տեղի ունեցավ քառօրյա պատերազմը, որը մի շարք մասնագետների կողմից որակվեց որպես գալիք մեծածավալ պատերազմի նախավարժանք: 2020 թ. սեպտեմբերի 27-ին արցախ-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով Ադրբեջանն անցավ լայնածավալ հարձակման: 44 օր տևած ակտիվ մարտերից հետո ՀՀ քաղաքական ղեկավարությունը նոյեմբերի 9-ին գնաց կապիտուլյացիոն հայտարարության ստորագրման: Սեպտեմբերին սանձազերծված պատերազմի արդյունքում էականորեն և հիմնովին փոխվեց ուժային հարբերակցությունը ԼՂ հակամարտության գոտում, բայց խնդիրը, բնականաբար, չլուծվեց: Արցախի՝ ԼՂԻՄ քարտեզով նախատեսված և չկորսված հողերի վրա տեղակայվեցին ռուսական խաղաղապահ ուժեր, որոնք մինչ 2025-ը պետք է լինեին արցախահայության ֆիզիկական անվտանգության երաշխավորը: Ի դեպ, ինչպես հետո պարզվեց, ռուս խաղաղապահները գործունեության մանդատ, այսինքն լիազորությունների ու պարտականությունների հստակ շրջանակ չունեին, քանի որ Բաքուն հրաժարվել էր դրանք հաստատել: Ռուսական խաղաղապահները անորոշ կարգավիճակով օբյեկտիվորեն չէին կարող արդյունավետ գործողություններ իրականացնել, որը հանգեցրեց հեղինակազրկման, իսկ հետո նաև՝ հակառուսական քարոզչական արշավների ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Արցախի որոշ շրջանակներում:

Հվ. Կովկասի ներքին հակամարտողականության ցուցիչը ավանդաբար պայմանավորել է տարածաշրջանում արտաքին դերակատարների, ուժային բևեռների քաղաքական մոտեցումները և դրանց աշխարհաքաղաքական դիրքավորումը: Եթե նախկինում հակամարտությունների առկայության փաստն էր ստեղծում պայմաններ, որ ուժային բևեռները ակտիվ ներգրավվեն տարածաշրջանային զարգացումներում, ապա նոր իրավիճակը, որի հիմքում ՀՀ-ում 2018-ին տեղի ունեցած քաղաքական փոփոխությունն էր և դրանով պայմանավորված 44-օրյա պատերազմը, դրսևորվեց տարածաշրջանի ուժային պատկերի փոփոխությամբ. պատերազմի հետևանքով Թուրքիայի և ՌԴ-ի տարածաշրջանային դերակատարության շեշտակի փոփոխությամբ: Հիշեցնենք, որ նախկինում Ակարան Ադրբեջանի հետ «աշխատում էր» Հվ. Կովկասի քաղաքական սահմաններից դուրս, և այդ կերպ ազդեցություն էր ունենում ներտարածաշրջանային գործընթացների վրա: Նոր պայմաններում Ադրբեջանում նրա ազդեցության շեշտակի աճը պայմաններ ստեղծեց, որ Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններում Ակարայից Բաքվի կախվածությունը էականորեն ավելանա, որը, բնականաբար, ինչ-որ մի փուլում խնդրահարույց վիճակ է ստեղծելու Ի. Ալիևի, ինչպես նաև բարդ իրավիճակ՝ Մոսկվայի շահերի համար: Եթե նախկինում ՌԴ-ն ՀՀ-ի ու Ադրբեջանի հետ աշխատում էր երկկողմ ձևաչափով, իսկ ԵԱՀԿ Մինսկի ձևաչափում որոշակի լեգիտիմ առաջատար դիրք ուներ հակամարտության հարցերում, ապա պատերազմի հետևանքով իր ռազմաքաղաքական ազդեցությունը հաստատեց Արցախում խաղաղապահների տեղակայման և պատերազմը դադարեցնելու ջանքերի միջոցով: Եթե մինչ պատերազմը տարածաշրջանային և արտատարածաշրջանային մի շարք ուժերի ետնանպատակը ՀՀ-ում և տարածաշրջանում առհասարակ ՌԴ-ի դերի ու նշանակության թուլացումը և տեղական ու համաշխարհային ուժային այլ կենտրոնների հաշվին նրան փոխարինելն էր, ապա պատերազմով պայմանավորված աշխարհաքաղաքական նոր իրողությունները, առնվազն

մինչ 2021 թ. կեսերը, եկան փաստելու, որ ՌԴ ազդեցությունը ոչ միայն չի թուլացել, այլև, առանձին դեպքերում, ավելացել է:

Տարածաշրջանում աշխարհաքաղաքական միջավայրի փոփոխման կարևորագույն բաղադրիչ է՝ տարածաշրջանի երկրներում քաղաքական-պետական էլիտաների ձևավորման, իշխանափոխության և նոր իշխանությունների քաղաքական առաջնահերթությունները հստակեցնելու, հնարավոր փոխակերպումները արձանագրելու ցուցիչները: Հվ. Կովկասի երկու երկրներում՝ Վրաստանում՝ 2004-ին, և ՀՀ-ում՝ 2018-ին, փողոցի միջոցով տեղի ունեցան իշխանափոխություններ, որոնք ընդունված է բնորոշել որպես հեղափոխություններ: Ի տարբերություն վերոնշյալ երկու երկրների, Ի. Ալիևի վարչակազմը Ադրբեջանում հաստատվել ու անփոփոխ է մնացել 2003-ից, որի ընթացքում Ի. Ալիևը որոշակի պարբերականությամբ «քաղաքական զտումներ» է կատարել կառավարման հիերարխիայի ամենատարբեր օղակներում. քրեական գործեր են հարցուվել տարբեր պաշտոնյաների նկատմամբ, այդ թվում՝ ԳՇ պետի, ԱԱԾ ղեկավարի, բազմաթիվ այլ պաշտոնյաների և նախարարների (Currenttime, 2015):

Հարկ է նշել, որ պետական էլիտաների ձևավորման և դրանց կողմից պետական կառավարման, արտաքին քաղաքական ընտրված ուղեգծի բնույթը նույնպես կարևոր ցուցիչ է՝ տարածաշրջանային երկրների աշխարհաքաղաքական դերն ու դրանց փոխակերպումները բացահայտելու և գնահատելու համար: Վրաստանում 2003 թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո Մ. Սաակաշվիլին որդեգրեց ընդգծված հակառուսական ուղեգիծ. հակառուսականությունը Վրաստանում դիտարկվեց ու ներկայացվեց որպես ինքնիշխան Վրաստանի քաղաքական ու գոյաբանական միակ լեգիտիմ հենք, իսկ ՌԴ-ն պիտակավորվեց որպես Վրաստանի բոլոր խնդիրների հիմնական և միակ աղբյուր: Վրաստանում իրավիճակը փոխվեց, երբ Մ. Սաակաշվիլին պարտվեց 2012 թ. խորհրդարանական ընտրություններում և իշխանության եկավ Բ. Իվանիշվիլու «Վրացական երազանք» կուսակցությունը, որի կառավարման և դրան հաջորդած շրջանում ռուս-վրացական

հարաբերությունները դանդաղորեն փոխակերպվեցին և նկատվեց որոշակի դրական դինամիկա՝ Մ. Սաակաշվիլու թիմի կառավարման տարիների համեմատ:

2018-ին ՀՀ-ում տեղի ունեցավ պետական կառավարման էլիտայի փոփոխություն. իշխանության եկած քաղաքական թիմի անդամների մի զգալի մասը, իրենց քաղաքական և հանրային կյանքի կազմակերպման նախորդ ժամանակաշրջանում աչքի էին ընկել, առավելապես, արևմտյան արժեքային կողմնորոշմամբ և Արևմուտքի հետ քաղաքական հարաբերությունների խորացման մոտեցումներով: 2018 թ. քաղաքական փոխոխությունների հիմնական հարցադրումն այն էր, թե կփոփոխվի՞ արդյոք հայ-ռուսական հարաբերությունների առկա որակը, և ՀՀ-ն կփոխի՞ արդյոք իր արտաքին քաղաքական ուղեգիծը: ՌԴ-ի նկատմամբ ՀՀ նոր իշխանությունների արտաքին քաղաքականությունը ժամանակագրորեն և բովանդակային առումով կարելի է բաժանել մի քանի փուլի. անցումային՝ 2018–19 թթ., զարգացման՝ 2019–20 թթ., համաճարակի՝ 2020–21 թթ. ՌԴ-ի և ՀԱՊԿ-ի դերի ու նշանակության հրապարակային վերագնահատման՝ 2021–23 թթ., ինչպես նաև ՌԴ-ի նկատմամբ վերաբերմունքի փոփոխության, հրապարակային փոխադրաձ սուր քննադատության փուլ՝ 2023-ից ի վեր: Օրինակ, 2019-ին Ն. Փաշինյանը հայտարարեց, որ ինքը և իր գաղափարակիցները չեն պատրաստվում ՀՀ-ն «տանել տարբեր արկածախնդիր ուղիներով» (Arminfo, 2019): Մեկ այլ առիթով ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը արձանագրեց, որ «չկա աշխարհաքաղաքական որևէ դավադրություն ՌԴ-ի դեմ, չեն լինելու աշխարհաքաղաքական հետդարձներ, և հայ-ռուսական հարաբերություններին ոչինչ չի սպառնում» (BBC, 2021), և որ որևէ մեկը երբեք ու որևէ պարագայում կասկածի տակ չի դնելու հայ-ռուսական հարաբերությունների ռազամավարական կարևորությունը (ARKA, 2019): Ավելին, այս փուլում Փաշինյանի քաղաքական թիմի ռազմավարական առաջնահերթությունների ցանկում ՌԴ-ի հետ ռազմավարական-դաշնակցային գործընկերության և ռազմատեխնիկական գործակցության օրակարգը, առնվազն հրապարակավ, դիտվում

էր որպես ՀՀ անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչ (Parliament, 2019): Իհարկե, հնչեցված մոտեցումները հետագայում ենթարկվեցին որոշակի փոփոխությունների, որտեղ ի հայտ եկան նոր նրբերանգներ, որակումներ, դետալներ, գնահատականներ: Մասնավորապես, «Երկկողմ հարաբերություններում ահրաժեշտ է նոր մոտեցում, որը հիմնված կլինի բարիդրացիության, հավասարության, անկեղծության, միմյանց ներքին գործերին չմիջամտելու և ինքնիշխանության, ինչպես նաև առկա հարցերն ու խնդիրները համատեղ ջանքերով լուծելու պատրաստակամության վրա (Parliament, 2019): Կամ մեկ այլ ձևակերպում. «Հայ-ռուսական հարաբերությունները շատ բարձր մակարդակի վրա են, սակայն դա չի նշանակում, որ դրանք անթերի են: Մենք պետք է այնպես անենք, որ դրանք լինեն անթերի» (Parliament, 2019): Հետագայում ինչպես ձևակերպումները, այնպես էլ որակումները էականորեն փոփոխվեցին, ընդհուպ մինչև Արցախը ՌԴ-ի կողմից Ադրբեջանին հանձնելու, ՀԱՊԿ-ի գծով դաշնակիցներին սուր քննադատելու, ՌԴ-ի կողմից իր դաշնակցային պարտավորությունները չկատարելու, ՀԱՊԿ-ին անգործության մեջ մեղադրելու տեսքով, որոնց ոչ պակաս սրությամբ արձագանքեցին ՌԴ տարբեր տրամաչափի պետական պաշտոնյաներ, ընդհուպ մինչև ՌԴ ԱԳ նախարար Ս. Լավրովը («Коммерсантъ», 2024):

Ի տարբերություն ՀՀ-ի և Վրաստանի, Ադրբեջանի պարագայում արտաքին քաղաքական ուղեգիծը իր հիմքում ուներ մի քանի ավանդական ելակետային հանգամանք, որոնք են՝ էներգետիկ և հաղորդակցային դերակատարությունը, համաթուրքականության քաղաքակրթական պատկանելությունը և դրա՝ քաղաքական նպատակով մակրոտարածաշրջանային ներգրավումը և ռազմավարական գործակցությունը ՌԴ-ի հետ: Նշյալ երեք իրողություններն իրար են սոսնձում Ի. Ալիևի վարչակազմի անփոխարինելիության թեզը, և դրա արդյունքում Ադրբեջանն ամենատարբեր մակարդակներում փորձում է հավասարակշռության ու հակակշռման քաղաքականություն վարել. դրա ամենաթարմ դրսևորումը 2021 թ. հունվարի 15-ին Թուրքիայի հետ կնքված Շուշիի հռչակա-

գրի տարածաշրջանային բալանսավորումն էր՝ 2022 թ. փետրվարի 22-ին Ադրբեջանի և ՌԴ միջև ստորագրված «Դաշնակցային փոխգործակցության հռչակագրով», իսկ 2024-ի հուլիսին էլ Չինաստանի հետ Աստանայում ստորագրվեց ռազմավարական գործընկերության հռչակագիր:

Հվ. Կովկասում աշխարհաքաղաքական փոխակերպումների էական ու առանցքային բաղադրիչը տարիներ շարունակ եղել է այն կազմող մի շարք երկրների էներգետիկ ու հաղորդակցային ներուժը: Էներգետիկ ու հաղորդկցային թեմատիկան է՛լ ավելի կենսական դարձավ 44-օրյա պատերազմից հետո, որի ավարտին ստորագրված հռչակագրում մինչև անգամ նշվեց «տարածաշրջանում հայ և ադրբեջանական կողմերում առկա հաղորդակցային ուղիների ապաշրջափակման կարևորության և կողմերի հանձնառության մասին» (Президент РФ, 2020): Տարիներ և տասնամյակներ շարունակ Հվ. Կովկասի և, հատկապես, Ադրբեջանի աշխարհաքաղաքական կշիռը որոշվում է էներգետիկ և հաղորդակցային այլընտրանք լինելու հանգամանքով: Մասնավորապես, Եվրոպական մի շարք պետություններ (Իտալիա, Ավստրիա, Արևելյան Եվրոպայի երկրներ, Գերմանիա և այլն), որոնք կենսական կախվածություն ունեն ռուսական գազից, հետևաբար, իրենց քաղաքականության վրա զգում են ռուսական ազդեցությունը, պարբերաբար փնտրել են գազի գնման այլընտրանքային աղբյուրներ, որոնք ունակ կլինեն թուլացնելու նրանց էներգետիկ կախվածությունը ռուսական «գազային քաղաքականությունից»: Հվ. Կովկասում և, հատկապես, Կասպից ծովում նավթային ու գազային ռեսուրսների արդյունաբերական ծավալների հայտնաբերումը, որը տեղի ունեցավ 20-րդ դարի 90-ականներին և 2000-ականների սկզբներին, եվրոպացիների մոտ հույս արթնացրեց, որ ադրբեջանական (Ղազախստանի և Թուրքմենստանի էներգետիկ, հատկապես՝ գազային ռեսուրսների հետ մեկտեղման պայմաններում) էներգետիկ ներուժը, գուցեև, հնարավորություն ընձեռի գտնելու հատկապես ռուսական գազի այլընտրանքային աղբյուր, որով կթուլանար եվրոպացիների կախումը ՌԴ-ից: Այս առումով, որպես

միջանկյալ հաղորդակցային երկրներ դիտարկվում էին Վրաստանը, որը արևմտյան քաղաքակրթական ու քաղաքական ազդեցության ներքո էր, և Թուրքիան, որը, մի կողմից, ադրբեջանական էներգետիկ ռեսուրսներն սպառում էր իր կարիքների համար մյուս կողմից՝ ձեռք էր բերում էներգետիկ հաղորդակցային կարևոր դերակատարություն Եվրոպային գազ և նավթ մատակարարելու հարցում: Սա այն ժամանակ կարևոր էր Թուրքիայի համար, քանի որ օրակարգային էր ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցը: Էներգետիկ դերի ու նշանակության տեսանկյունից տարածաշրջանի առաջին պետությունը, իհարկե, Ադրբեջանն է, որը Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի կառուցումից և Կասպից ծովում գազային հանքավայրեր հայտնաբերելուց հետո էականորեն ավելացրել է իր նկատմամբ հետաքրքրությունը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ մակրոտարածաշրջանային և համաշխարհային գործընթացների համատեքստում: Որպեսզի պարզ լինի էներգետիկ սեկտորի տեղն ու դերը Ադրբեջանի տնտեսության ու կարողությունների ամրապնդման գործում, փաստենք, որ Ադրբեջանի եկամուտները 1994-ի «դարի նավթային գործարքի» կնքումից հետո, 2001–21 թթ. ժամանակահատվածում կազմել են 150 մլրդ դոլար (Давтян, 2022): Ինչ վերաբերվում է գազի եվրոպական շուկային, ապա Ադրբեջանը այստեղ, լավագույն դեպքում, կկարողանա մատակարարել գազի անհրաժեշտ ծավալի 2–2,5%-ը, և դա՝ Եվրոպայում գազի սպառման ծավալների ավելացման և Անդրանատոլիական (TANAP) և Անդրադրիատիկ (TAP) գազամուղների հնարավոր թողունակության իրական պայմաններում: Դա է նաև պատճառը, որ ԵՄ-ն ամեն ջանք գործադրում է, որ Եվրոպական հարավային գազային հոսքին միանա Թուրքմենստանը՝ Ամդրկասպյան գազամուղի հնարավոր ծրագրի իրացման ներքո (CPC, 2020):

Հվ. Կովկասով էներգետիկ արտահանման նշյալ ծրագրերը փաստացի նպատակ ունեն՝ կտրելու ողջ տարածաշրջանը ՌԴ-ից, որի համար Հվ. Կովկասը կենսական շահերի գոտի է: Այս համատեքստում ինչպես հավաքական Արևմուտքի, այնպես էլ Թուր-

քիայի շահերը լայն առումով համընկնում են, սակայն մարտավարական և ազդեցության գոտիների սահմանման ու որոշակիացման առումով դրանք միշտ չէ, որ նույնական են: Թուրքիան, որ իրեն արդեն վաղուց անկախ աշխարհաքաղաքական սուբյեկտ է դիտարկում, և լինելով ՆԱՏՕ-ի անդամ, երբեմն շատ սուր հակասություններ է ունենում դաշինքի ազդեցիկ այլ անդամների հետ, իր քայլերը հաճախ պայմանավորում է բացառապես սեփական ազգային շահերով: Նա իր այդ գործելաոճը հաջողությամբ կարողանում է կիրառել ինչպես տարածաշրջանային խոշոր և ընդգրկուն գործընթացներում՝ սկսած Ուկրաինայից մինչ Հվ. Կովկաս, Միջին Ասիա, այնպես էլ ՌԴ-ի հետ իր երկկողմ շփումներում, որոնց ընթացքում մի ձեռքով գործակցում, մյուսով՝ մրցակցում է և հակադրվում ՌԴ-ին: Այս առումով, հիշատակման արժանի է Ռ. Թ. Էրդողանի՝ սեփական երկրի քաղաքական ազդեցության ավելացման «անկայունության գոտիները» ստեղծելու ռազմավարությունը: Դրանով նա խնդրահարույց օջախներ, իրավիճակներ է ստեղծում աշխարհի տարբեր հատվածներում, հատկապես ՌԴ-ին սահմանակից տարածքներում ու տարածաշրջաններում, ապա հանդես գալիս այդ իրավիճակների հարթմանն ուղղված նախաձեռնություններով՝ դրանով ավելացնելով սեփական դերն ու նշանակությունը՝ նոր որակի կարգավիճակ ստանձնելով իր համար ինչպես մրցակից, այնպես էլ դաշնակից երկրների հետ հարաբերություններում:

Վերադառնալով տարածաշրջանի աշխարհաքաղաքական դերակատարման փոխակերպման իրողություններին, հարկ է նշել, որ 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում հաղորդակցային ուղիների ապաշրջափակման պայմանավորվածության պայմաններում ակնհայտ է, որ դա անդրադառնալու է ողջ տարածաշրջանի ապագայի վրա: Հաղորդակցային նոր կլիմայի պայմաններում է՛լ ավելի կհստակեցվեն տարածաշրջանի պետությունների աշխարհաքաղաքական կշիռն ու դրա ծավալման մակարդակները: Ակնհայտ է, որ առավել շահեկան վիճակում կհայտնվեն այն երկրները, որոնք, ի համեմատություն ՀՀ-ի, ունեն

առավել մեծ տնտեսական կարողություններ ու ֆինանսական ռեսուրսներ, շահեկան աշխարհագրություն, օրինակ՝ Ադրբեջանը, Թուրքիան: Այս համատեքստում, կարծում ենք, որ պետք է նախ դիտարկել տարածաշրջանում գոյություն ունեցող հատկապես երկաթուղային ցանցը, ապա հստակեցնել 2020 թ. նոյեմբերի 9-ի հայ-ռուս-ադրբեջանական հայտարարությամբ նախատեսված, կառուցման և ապաշրջափակման ենթակա երկաթուղային ուղիների հետ կապված հանձնառությունների ցանկը և դրանց շուրջ կողմերի փոխադարձ ընկալումները: Ակնհայտ է, որ երկու պարագայում էլ, հաշվի առնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոններ, ապաշրջափակումից ամենից շատ օգտվելու է Ադրբեջանը, ինչը, բնականաբար, կավելացնի վերջինիս նկատմամբ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային գործընկերների հետաքրքրությունը, և կմեծացնի նրա աշխարհաքաղաքական կշիռը, ազդեցության գործակիցը:

Տարածաշրջանում ռազմատեխնիկական ուժային հարաբերակցությունը 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքով էականորեն փոփոխվեց: Եթե նախկինում հարձակողական և պաշտպանողական ուժերի մասով ռազմատեխնիկական առումով կարողոշ չափով կառավարելի ուժային հավասարակշռություն, ապա պատերազմի հետևանքով այն հիմնավորապես փոփոխվեց ոչ հօգուտ ՀՀ-ի: Պատերազմի ժամանակ տեղ գտած զինվորական և քաղաքացիական բնակչության, ինչպես նաև կողմերի ռազմատեխնիկական միջոցների կորուստը ուժային նոր հարաբերակցություն ստեղծեցին տարածաշրջանում, որով պայմանավորվեցին նաև տարածաշրջանի երկրների արտաքին քաղաքական ուղեգծերը, քաղաքական վարքը և դիրքավորումը (Oryxspioenkop, 2020): Նաև այս հանգամանքով են պայմանավորված ադրբեջանական կողմի հավակնոտ ու ագրեսիվ քաղաքական հայտարարություններն ու մոտեցումները ինչպես տարածաշրջանային ձևաչափում, այնպես էլ ՀՀ-ի նկատմամբ (1lurer, 2023):

44-օրյա պատերազմը տեսանելի փոփոխություններ մտցրեց տարածաշրջանում ռազմաքաղաքական շփումների մեջ: Եթե տա-

րածաշրջանի երեք երկրները անվտանգային իրենց օրակարգերը նախկինում տեսնում էին տարբեր համակարգերում, ապա պատերազմից հետո տարածաշրջանում էականորեն ավելացավ հատկապես Թուրքիայի ազդեցությունը, որի հարաբերությունները Ադրբեջանի հետ զգալիորեն խորացան՝ հասնելով ռազմաքաղաքական դաշնակցության և խորը գործընկերության մակարդակի: Դրա ամենից վառ դրսևորումը եղավ Շուշիի հռչակագիրը, որտեղ հստակ որակում տրվեց թուրք-ադրբեջանական հարաբերություններին՝ դրանք անվանելով ռազմավարական-դաշնակցային (Trend, 2021): Ավելի ուշ՝ արդեն 2022 թ. փետրվարի 21-ին, ստորագրվեց ռուս-ադրբեջանական դաշնակցային փոխգործակցության հռչակագիրը, որը ռազմավարական որակի փաստաթուղթ էր և արձանագրում էր երկու երկրների հարաբերությունների խորությունը և փոխադարձ կարևորությունը՝ անվտանգային նոր իրողությունների ներքո:

Ադրբեջանի նման մոտեցումների ներքո, ՀՀ-ում նոր իրողությունների պայմաններում ռազմաքաղաքական գործընկերների հետ հարաբերությունները տեղավորվեցին անորոշության և տարածաշրջանից դուրս նոր գործընկերներ փնտրելու գործելաոճի միջակայքում:

Վրաստանը, որ ավանդաբար ուներ արևմտյան արտաքին քաղաքական կողմնորոշում և ձգտում էր անդամակցել ԵՄ-ին և դաշնակցել ՆԱՏՕ-ի հետ, նույնպես սրբագրումներ սկսեց իր արտաքին քաղաքական ուղեգծում: Սրբագրման ամենավառ դրսևորումներից էր այն, որ վերջին տարիներին Վրաստանում գործող կառավարությունները աչքի էին ընկել ՌԴ-ի հետ առճակատումը մեղմելու և գործակցելու մոտեցմամբ: Այդ միտումը է՛լ ավելի ընդգծվեց 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, ինչպես նաև հատկապես ռուս-ուկրաինական ճգնաժամի ժամանակ ՌԴ-ի դեմ տնտեսական պատժամիջոցներին Վրաստանի չմիանալու որոշման համատեքստում (Interfax, 2024):

Ամփոփելով, հարկ է նշել, որ 44-օրյա պատերազմը՝ որպես խախտված ուժային հավասարակշռության հետևանք, դարձավ

ՀՎ. Կովկասում նոր ուժային պատկեր ձևավորելու և քաղաքական օրակարգ հաստատելու կարևոր նախապայման: Եթե տարածաշրջանում դաշնակցային հարաբերությունների ուղեգծերը նախկինում հստակ տեսանելի էին, ապա ներկայումս դրանք դեռևս ձևավորման, փոխակերպման ու խորացման փուլում են: Պատերազմի հետևանքով ՀՎ. Կովկասում Անկարայի ավելացած դերակատարումը նոր օրակարգ սահմանեց տարածաշրջանի համար, որը նաև դրսևորվեց տարածաշրջանային գործակցության՝ վերակենդանացած «3+3» առաջարկի տեսքով:

Հայ-ադրբեջանական խաղաղության պայմանագիրը. ուժային բալանսի նոր պատկերը և Հայաստանը

2020-ի պատերազմի և նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության կնքման արդյունքում տարածաշրջանում փոփոխվող ուժային հավասարակշռությամբ արձանագրվեց, որ հայ-ռուսական հարաբերությունները լրջագույն քննություն են անցնում, որի հետևանքով դրանց ձևը և բովանդակությունը կարող են խորքային փոփոխությունների ենթարկվել:

Մեծ հաշվով, քաղաքական խնդիրների առնչությամբ ՌԴ-ն ՀՀ-ի հետ և հայ-ադրբեջանական փոխհարաբերություններում դիրքավորվում էր երեք հիմնահարցերի մասով՝ ԼՂ հակամարտություն, հայ-թուրքական սահմանի պաշտպանություն և ՀՀ անվտանգության ապահովում: Սակայն 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո այդ հիմնահարցերի ցանկում ավելացավ ՀՀ կողմից Ադրբեջանին Սյունիքով դեպի Նախիջևան տրամադրվելիք հաղորդակցային ուղու անվտանգության ապահովման առաքելությունը:

Ընդհանուր առմամբ, տարածաշրջանային գործընթացներում ՌԴ-ի մոտեցումների ողջ տրամաբանությունը ուժային այնպիսի պատկեր ապահովելն էր, որտեղ Մոսկվան կլիներ անփոխարինելի արբիտր: Սակայն Թուրքիայի՝ 2020-ից հետո փոխակերպված նոր դերակատարությունը և 2022 թ. փետրվարից Ուկրաինայում մեկնարկած հատուկ ռազմական գործողությունը փոխեցին ՌԴ

առաջնահերթությունների ցանկը: Այս ամենը պայմաններ ստեղծեց, որ ինչպես Ադրբեջանը, այնպես էլ Թուրքիան առավել անկախ և ինքնիշխան վարք դրսևորեն տարածաշրջանային հարցերում՝ երբեմն ՌԴ–ին առերեսելով իր շահերից չբխող նոր իրողությունների հետ: Այս պայմաններում փոփոխվեցին նաև ՀՀ-ի մոտեցումները. Երևանը հասկանում էր, որ փոփոխվել են ՌԴ արտաքին քաղաքական առաջնահերթությունները ինչպես ողջ տարածաշրջանի, այնպես էլ իր մասով, հետևաբար, անհրաժեշտություն կար այլ գործընկերների հետ ձևավորելու նոր օրակարգեր՝ փորձելով սերտացնել հարաբերությունները եվրոպական և ատլանտյան մայրաքաղաքների հետ: Երևանի այս մոտեցումը վերահաստատվեց, երբ չարդարացան նրա սպասումները ՌԴ–ի և ՀԱՊԿ-ի արձագանքների մասով, երբ Ադրբեջանը 2021 թ. երկու անգամ ներթափանցեց ՀՀ տարածք և բռնազավթեց Հայաստանի մի շարք հատվածներ[2]: Հետագայում՝ արդեն 2022-ի սեպտեմբերին, Ադրբեջանը է՛լ ավելի լայնածավալ հարձակման գնաց ՀՀ մի շարք բնակավայրերի ուղղությամբ, մասնավորապես՝ Սյունիք, Գեղարքունիք, Վայոց Ձոր, ապա նաև՝ Արարատ՝ ընդհանուր առմամբ բռնազավթելով 127 կմ^2 տարածք (Azatutyun, 2022): Այս անգամ ՌԴ–ն արձագանքեց (Tass, 2022), սակայն Երևանը այլ որակի գնահատականներ էր ակնկալում ինչպես Մոսկվայից, այնպես էլ ՀԱՊԿ-ից: Վերջիններիս փաստարկները և հիմնավորումները Երևանի համար ընկալելի ու ընդունելի չէին, և, փաստորեն, Երևանը լիովին լեգիտիմ համարեց իր խնդիրների լուծման սլաքը ուղղել Արևմուտք, առավել ևս, որ Արևմտյան մայրաքաղաքները, Ադրբեջանի քայլերի գնահատման մասով հանդես եկան առավել կոշտ հայտարարություններով (Tacc, 2022): Նշենք, որ ՀԱՊԿ-ը

[2] Խոսքը, մասնավորապես, գնում է 12.05.2021 Ադրբեջանի ԶՈՒ կողմից ՀՀ սահմանամերձ շրջաններից՝ Սև լճի հատվածում, Գորիսից մոտ 15կմ հեռավորության վրա Գորիս տանող միջպետական մայրուղու մի հատվածի նկատմամբ վերահսկողության հաստատմանը, ինչպես նաև նույն տարվա 25.08.2021 Ադրբեջանի ԶՈՒ-ի կողմից ՀՀ-ի տարածք ներթափանցելու և Գորիս–Կապան ճանապարհի մի հատված վերահսկողության տակ վերցնելուն Մոսկվայի ու ՀԱՊԿ-ի արձագանքների մասին (ծանոթագրություն՝ Ա.Ղ.):

պաշտոնական Երևանին 2022-ի սեպտեմբերին առաջարկեց համատեղ զորավարժություններ, որից, սակայն, հայկական կողմը հրաժարվեց. հետագայում Երևանը նմանօրինակ մի քանի առաջարկներ ևս մերժեց:

Այս ամբողջ ընթացքում Ստեփանակերտում դեռևս կար ընկալում, որ խնդիրների լուծման բանալին բացառապես Մոսկվայում է, և մի շարք հարցերում նրանք չէին կիսում Երևանի մոտեցումները: Մինչդեռ 2022 թվականից հետո որպես առաջնահերթություն դիտարկելով ուկրաինական ճակատը, ՌԴ-ն ԼՂ խնդրով անհրաժեշտ չափով և արագությամբ չէր ձեռնարկում Արցախի շահերից բխող քայլեր: Այստեղի իր քաղաքականությունը ՌԴ-ն, փաստացի, սահմանապահում էր այդպես էլ մանդատ չստացած խաղաղապահների քայլերով և երկրների ղեկավարների մակարդակում երբեմն տեղի ունեցող քննարկումներով: Մինչդեռ ակնհայտ էր նաև մեկ այլ բան, որ Ադրբեջանն այս ընթացքում փորձելու է արագ և լիարժեք լուծել Արցախի հարցը:

Նշենք, որ պատերազմի ավարտից ի վեր, Արցախի շուրջ ձևավորված իրավիճակի մասով ՀՀ-ի, Ադրբեջանի ու ՌԴ-ի փոխհարաբերությունները կանոնակարգվում էին 2020-ի նոյեմբերի 9-ին կնքված փաստաթղթով, որի կետերը կողմերի մի մասը մեկնաբանում էր կամընտրական ու հատվածային ձևով: Ադրբեջանը փաստաթղթի կետերի՝ իր մեկնաբանություններով փորձում էր ճնշում բանեցնել ՀՀ-ի վրա՝ նորանոր պահանջներ դնելով Երևանի առաջ, և դա, առաջին հերթին, կապված էր, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» հետ: Մինչդեռ Երևանը այդ հարցերին փորձում էր մոտենալ առավել լայն պրիզմայով՝ առաջարկելով ապաշրջափակել տարածաշրջանի բոլոր ուղիները՝ հույս ունենալով, որ այդ կերպ խաղաղության օրակարգն առավել իրատեսական կլինի: ՌԴ-ն իր հերթին արձանագրում էր, որ ուղիները պետք է բացվեն, և ըստ նոյեմբերի 9-ի հայտարարության, ինքը պետք է ապահովի Սյունիքով անցնող հաղորդուղու անվտանգությունը:

2022 թ. սեպտեմբերի իրադարձություններից հետո ՀՀ ղեկավարությունն առաջարկեց «Հայկական խաչմերուկ» նախագիծը, որն, իբրև, նախատեսվում էր որպես այլընտրանք այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք» նախագծին և ածանցվում էր տարածաշրջանում բոլոր հաղորդուղիները բացելու գաղափարից՝ միաժամանակ պահպանելով յուրաքանչյուր երկրի ինքնիշխանությունն իր տարածքով անցնող ճանապարհների նկատմամբ (Infocom 2021)**:** Այս ծրագիրը, սակայն, որևէ ոգևորություն չառաջացրեց գործընթացի մեջ ներգրավված կողմերի մոտ, մինչդեռ պաշտոնական Երևանը ակնկալում էր, որ այս կերպ կկարողանա հիմնավորապես հերքել այն թեզը, թե Հայաստանն է տարածաշրջանային ապաշրջափակման հիմնական մեղավորը: Նշենք նաև, որ Բաքվի ագրեսիվ հայտարարությունների ու գործողությունների ֆոնին ՀՀ-ի ղեկավարության խաղաղասիրական հռետորաբանությունը Հայաստանում կոշտ դիմադրության էր հանդիպում. հանրային դաշտում՝ բարձրաձայն, պետական համակարգում՝ լռելյայն:

Այս շրջափուլում Ի. Ալիևն արդեն սկսել էր շատ հստակ ձևակերպել և իր հարցազրույցներում ու ուղերձներում հանրայնացնել այն բոլոր պահանջ-թեզերը, որոնք ակնկալում և պահանջում էր Երևանից, որպեսզի տարածաշրջանում կայունություն ապահովվի և կնքվի հայ-ադրբեջանական խաղաղության պայմանագիրը: Հրապարակային պահանջներին զուգահեռ, այս ընթացքում երկու կողմերի մեջ ինչպես ՌԴ, այնպես էլ ԵՄ միջնորդների ներգրավվածությամբ բանակցությունները չէին դադարում: Միջնորդ կողմերը չէին էլ թաքցնում, որ իրենց միջև այս հարցում կա սուր մրցակցություն:

2022 թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում ՀՀ ղեկավար Ն. Փաշինյանը ճանաչեց (Azatutyun, (2022a) Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ներառյալ՝ Արցախը: Դա տեղի ունեցավ ԵՄ նախաձեռնությամբ կազմակերպված ՀՀ և Ադրբեջանի նախագահների հանդիպման ժամանակ, որին ներկա էին ԵՄ Խորհրդի ղեկավար Շառլ Միշելը և Ֆրանսիայի նախագահ Է. Մակրո-

նը: Այս փաստը վերջ դրեց Արցախի ապագայի վերաբերյալ բանակցային ճշգրտումներին: ՀՀ իշխանություններն ընդունեցին իրենց կապիտուլյացիան և Արցախը հանձնեցին Ադրբեջանին: Սա անակնկալ էր ՌԴ-ի համար, քանի որ սրանով փակվեց ԼՂ խնդրի միջազգային բանակցային օրակարգը, որտեղ ՌԴ-ն առաջնահերթ դերակատար էր, ինչպես նաև պատմականորեն աշխարհաքաղաքական դատավորի դեր էր խաղում: Սա, ակնհայտորեն, շահեկան չէր Մոսկվայի, ինչպես նաև ՀՀ-ի և Արցախի համար, սակայն պայմանավորված էր բացառապես շահի վերաբերյալ ՀՀ իշխանությունների պատկերացումներով: Արցախի ճանաչումը Ադրբեջանի կազմում՝ կանաչ լույս էր Ի. Ալիևի համար, և նրան գործողությունների ու քայլերի ազատություն էր տալիս, որոնք չուշացան:

2022 թ. դեկտեմբերին Ադրբեջանը փակեց Լաչինի միջանցքը, իսկ 2023-ի ապրիլին՝ Հակարիի կամուրջը, որտեղ տեղակայեց անցակետ: 2023-ի հուլիսին Ադրբեջանը լիարժեք փակեց Արցախի և ՀՀ կապի վերջին ուղին՝ դա հիմնավորելով այն հանգամանքով, որ Կարմիր խաչի միջոցով Արցախ մաքսանենգ ապրանք է մտնում (Nor, 2023): Որպես այս ամենի տրամաբանական շարունակություն, 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը, մեկ օր առաջ նախապես տեղյակ պահելով ՌԴ խաղաղապահների ղեկավարությանը, հայտարարեց, որ հակաահաբեկչական միջոցառումներ է ձեռնարկում ԼՂ-ում առկա զինված ստորաբաժանումների զինաթափման ուղղությամբ: Արդյունքում, Արցախի հետ շփման գծի ողջ երկայնքով ադրբեջանական ԶՈւ-ն զանգվածային հարձակման անցան: Նույն օրը ՀՀ վարչապետը հայտարարեց, որ «ՀՀ-ն Արցախում սկսված պատերազմական գործողություններին որևէ կերպ չի մասնակցի՝ հայտարարելով, որ դա սադրանք է՝ ուղղված ՀՀ դեմ» (Լուրեր, 2023): Ամիսներ շարունակ հյուծված Արցախը միայնակ չէր կարող դիմագրավել Ադրբեջանին, և ԼՂՀ նորընտիր նախագահ Ս. Շահրամանյանը ստիպված եղավ ընդունել ադրբեջանական պահանջները՝ լուծարել ՊԲ-ն, հանձնել զինտեխնիկան: 2023 թ. սեպտեմբերի 20-24-ը ընկած ժամանակահատվածում Ար-

ցախում տեղի ունեցած էթնիկ զտման հետևանքով Արցախից ՀՀ տեղափոխվեց 100 հազարից ավելի ԼՂՀ բնակիչ (Azatutyun, 2023): Այս ժամանակահատվածում ադրբեջանական ուժայինների կողմից ձերբակալվեցին և Բաքու տեղափոխվեցին Արցախի նախկին նախագահները, պետական ու ուժային կառույցների նախկին պաշտոնյաներ:

Արցախի հայաթափումը ուժային հավասարակշռության առումով որակապես նոր իրավիճակ ստեղծեց Հվ. Կովկասում: Ի. Ալիևը, փաստացի, ստացավ ամեն բան և ամենակարևորը՝ առանց հայերի Արցախ: ՌԴ-ն փաստացի մնաց ԼՂ շուրջ ստեղծված խաղից դուրս իրավիճակում: Սակայն ասել, որ Արցախի հանձնումով տարածաշրջանում ուժային հավասարակշռություն հաստատվեց, այդպես չէ: Հակառակը, Արցախի հանձնումով տարածաշրջանային ուժային հավասարակշռության փոփոխման գործընթացը միայն սկսվեց: Նոր իրավիճակում Ադրբեջանի համար առնվազն նոր առաջնահերթություններ ի հայտ եկան, որոնք դարձան նրա արտաքին քաղաքական օրակարգի գերակայությունները: Դրանցից մեկը «ՀՀ-ի հետ խաղաղության պայմանագիր կնքելու» թեզն էր, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ՀՀ-ից առավելագույն նոր զիջումներ կորզելու գործիք, միջոց: Մյուս գերակայությունը «Արևմտյան Ադրբեջանի» գաղափարն էր, որը հռչակվեց որպես Ադրբեջան պետության ազգային գաղափարախոսության հիմք:

2024 թ. ապրիլին ՌԴ խաղաղապահները դուրս եկան Արցախից, որոնց առաքելությունը, ըստ նոյեմբերի 9-ի հայտարարության, պետք է տևեր մինչև 2025 թ.: ՌԴ-ն այս փուլում Արցախում աշխարհաքաղաքական լուրջ պարտություն կրեց՝ զրկվելով տարածաշրջանային ազդեցության կարևորագույն լծակից: Սակայն, հաշվի առնելով այսօր առկա միջազգային կոնյուկտուրան և նոր աշխարհակարգի ձևավորման միտումները, որոնք կարող են ձգվել մի քանի տասնամյակ, Արցախի հարցը, մեծագույն հավանականությամբ, անկասկած դեռ կմնա որպես ՌԴ-ի տարածաշրջանային քաղաքականության օրակարգի մաս:

Առհասարակ, խաղաղության օրակարգը, որին ամեն գնով ձգտում է ՀՀ-ն, Ի. Ալիևը բավականին հմտորեն կիրառվում է որպես ՀՀ-ից զիջումներ կորզելու մեխանիզմ: Իսկ խաղաղության պայմանագրի կնքման մասով Ալիևի պահանջները և նախապայմանները շատ հստակ են՝ ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, կատարել սահմանազատում ու սահմանագծում՝ Բաքվի մոտեցումներին համապատասխան, փոփոխել ՀՀ անկախության հռչակագիրը և Սահմանադրությունը, ՀՀ վերադարձնել այստեղ խորհրդային տարիներին բնակվող ադրբեջանցիներին ու նրանց սերունդներին, Ադրբեջանին տրամադրել, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը», որտեղ ադրբեջանական բեռները չեն ենթարկվի մաքսազերծման կամ դիտարկման, ճանաչել Արցախյան առաջին պատերազմի ժամանակ, ինչպես իրենք են որակում, «Խոջալուի ցեղասպանությունը» և պատժել դրա կազմակերպիչներին, Ադրբեջանին փոխանցել ՀԽՍՀ տարիների ադրբեջանական կոչվող անկլավները և ադրբեջանաբնակ դարձնել այդ անկլավների հարակից տարածքները, հրաժարվել միջազգային արդարադատության ատյաններում Ադրբեջանի դեմ առկա բոլոր հայցերից, վճարել «օկուպացված Ղարաբաղի» բնական ռեսուրսների շահագործման տուգանքները և այլն (Civilnet 2023):

Ադրբեջանի նշյալ պահանջ-նախապայմանների բավարարման դեպքում հայկական պետության գոյության օրակարգը կարող է առհասարակ վերանալ: Ադրբեջանը փորձելու է հասնել առավելագույնին, քանի դեռ ուժեղ է և հարցերին մոտենում է հաղթողի դիրքերից: Բաքուն, սակայն, հասկանում է նաև մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր բան, որ իր հավակնությունները պետք է տեղավորվեն տարածաշրջանային ու միջազգային կոնյուկտուրայի մեջ, լինեն ընկալելի և ընդունելի, չխոչընդոտեն տարածաշրջանային կարևոր դերակատար որևէ երկրի ազգային շահերին: Վերջինը հատկապես վերաբերում է Իրանին, որը տարածաշրջանային միակ երկիրն է, որը ոչ հեռու անցյալում, ինչպես նաև իր նորընտիր նախագահի շուրթերով 2024 թ. հուլիսի 11-ին վերահաստա-

տեց, որ տարածաշրջանում պետությունների սահմանների և ժողովրդագրության հնարավոր փոփոխությունը իրենց համար կարմիր գիծ է (Armenpress, 2024)։ Միաժամանակ, կա մեկ այլ հարց, որի շուրջ Իրանը և տարածաշրջանային մյուս երկրները՝ ՌԴ-ն, Թուրքիան և Ադրբեջանը ունեն ընդհանուր մոտեցումներ. տարածաշրջանային հարցերը չպետք է լուծվեն արտատարածաշրջանային երկրների ներգրավմամբ։ Այս մոտեցման հասցեատերը հատկապես ՀՀ-ն է, որը փորձում է ԵՄ-ի և ԱՄՆ-ի ներգրավմամբ Հվ. Կովկասում խնդիրներ լուծել։

Եզրակացություն

2020 թ. «44-օրյա» պատերազմը հիմնովին նոր իրավիճակ ստեղծեց Հարավային Կովկասում։ Տարածաշրջանի հանրապետությունների, տարածաշրջանային առաջատար երկրների ու գերտերությունների շահերի նոր որակի մրցակցությունը, որը մեկնարկեց Արցախի շուրջ ստատուս քվոյի փոփոխությամբ, խախտեց մինչ այդ տարածաշրջանի մասով առկա գրեթե բոլոր պայմանավորվածությունները, դիրքավորումները, կարմիր գծերը, հավասարակշռությունը։ Այն պայմաններ ստեղծեց, որ Հվ. Կովկասի երկրները վերախմբագրեն իրենց արտաքին քաղաքական ուղեգծերը՝ փորձելով աշխարհում ձեռք բերել իրենց ընկալումներին համապատասխան նոր աշխարհաքաղաքական դերակատարություն, ստանալ անվտանգության նոր երաշխիքներ, առավել խորությամբ հարաբերվել նոր գործընկերների հետ։

Այս պայմաններում Հայաստանը, թերևս, առավել ոչ միանշանակ կարգավիճակում հայտնված տարածաշրջանային երկիրն է՝ ի տարբերություն Ադրբեջանի, որը 2020 թ. պատերազմից հետո իր դերակատարման աճը ենթարկում է աշխարհաքաղաքական կապիտալիզացիայի՝ արտաքին քաղաքական իր օրակարգի մաս դարձնելով «Արևմտյան Ադրբեջան» ծրագիրը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ ՀՀ-ի նկատմամբ նրա հավակնոտ քաղաքականության շարունակություն։

Ինչ վերաբերում է ՌԴ հարավկովկասյան քաղաքականությանը, որն այս փուլում իր բացարձակ առաջնահերթություն է սահմանել ուկրաինական ճակատը, իսկ Հվ. Կովկասում գործընթացներում ընդգծված ակտիվությամբ հանդես չի գալիս, հատկապես հայ-ռուսական ներկա լարված հարաբերությունների համատեքստում, այս երկիրն այսօր ավելի շուտ մարտավարական խնդիրների լուծմամբ պատրաստվում է մակրոտարածաշրջանային ռազմավարական ծրագրերի իրականացմանը: Դա, իհարկե, կախված է մի շարք գործոններից ու գործընթացներից, այդ թվում, մասնավորապես, 2024 թ. աշնանը ԱՄՆ նախագահական ընտրությունների արդյունքներից, Վրաստանում 2024 թ. նախատեսված ընտրական գործընթացներից, Իրանում նոր նախագահի մոտեցումներից, Չինաստանի գլոբալ հաղորդակցային ու առևտրային ծրագրերի իրացման արագությունից և շատ այլ հանգամանքներից: Այս պայմաններում ՀՀ վարքը պետք է առավելագույնս շրջահայաց և իրատեսական լինի, քանի որ նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացն այսօր հիմնվում է տարածաշրջանային առաջատար և ազդեցիկ պետությունների շուրջ ուժային հավասարակշռության հաստատման վրա, այլ ոչ՝ արտատարածաշրջանային դերակատարների՝ ՌԴ-ի և Իրանի դեմ մրցակցային շահերի տիրույթում, հետևաբար, առանց այս հանգամանքները պատշաճ հաշվի առնելու՝ Երևանը չի կարող որևէ կերպ ապահովել իր առջև դրած խաղաղության օրակարգը:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

Մենագրություններ

1. ***Козырев (1994),*** Козырев А.В., Преображение. Международные отношения, М., 1994, с. 53.
2. ***Макиенко (2018),*** Макиенко К.В., В ожидании бури: Южный Ковказ, Центр анализа стратегий и технологи, М., 2018, с. 177–182.
3. ***Минасян (2016),*** Минасян С., Сдерживание в карабахском конфликте, Институт Кавказа, Ереван, 2016, с. 266.

4. ***Неймарк (2020),*** Неймарк М.А., Эволюция внешнеполитической стратегии России, М., 2020, с. 73.
5. ***Morgenthau (1948),*** Morgenthau H., Politics Among Nations: The Struggle for Power and Peace, Richard Little, University of Bristol, 1948, pp. 80–109.
6. ***Paul (1994),*** Paul T.V., Asymmetric conflicts. War initiation by weaker powers. Cambridge, NY: Cambridge University Press, 1994, p. 27.
7. ***Waltz (1959),*** Waltz K., Man, the state and war: a theoretical analysis. New York, NY: Columbia University Press., 1959, pp. 16–79.
8. ***Waltz (1979),*** Waltz K., Theory of international politics. Berkeley, CA: University of California; Addison-Wesley Publishing Company, 1979, 102–112.
9. ***Waltz (1994),*** Waltz K., The origins of war in neorealist theory. In R.K. Betts. Conflict after the Cold War (pp. 88–95), Boston, Allyn and Bacon, 1994, p. 92.

Հոդվածներ

10. ***Барановский (2019),*** Барановский В., Новый миропорядок: преодоление старого или его трансформация? Мировая экономика и международные отношения, Т. 63, № 5, 2019, с. 16.
11. ***Козырев (1994),*** Козырев А.В. Стратегия партнерства // Международня жизнь, N 5, 1994, с. 9.
12. ***Козырев (1994а),*** Козырев А.В., Внешная политика преображаюшейся России, Вопросы истории. № 1, 1994, с. 6–7.
13. ***Минасян (2005),*** Минасян С., В контексте проблем региональной безопасности // Военнопромышленный курьер, № 20(87), 2005.
14. ***Примаков (1996),*** Примаков Е.М., Международные отношения накануне XXI века: проблемы и перспективы // Международная жизнь, 1996, с. 3–14.
15. ***Федулова (2010),*** Федулова Н., Конфликтогенные зоны ближнего зарубежья: угроза интересам России, Мировая экономика и международные отношения, № 2, 2010, с. 75–89, 79.

Պաշտոնական փաստաթղթեր

16. ***Кавказский узел (2015),*** Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения, Кавказский узел, http://www.kavkaz-uzel.ru/articles/173310/, (д/в. 04.09.2024).

17. ***МИД РФ (1995),*** Договор о российской военной базе на территории Армении, https://www.mid.ru/ru/foreign_policy/international_contracts/ international_contracts/2_contract/47983/, (д/в., 04.09.2024), (д/в. 04.09.2024).
18. ***МИД РФ (2000),*** Декларация о союзническом взаимодействии между Российской Федерацией и Республикой Армения, ориентированном в XXI век, 05.10.2000, https://mid. ru/ru/detail-material-page/1682171/, (д/в. 04.09.2024).
19. ***NATO (1949),*** «The North Atlantic Treaty», Washington D.C. 04.04.1949, https://www.nato.int/cps/ic/natohq/official_texts_17120.htm (Acc. 04.09.2024).
20. ***ОДКБ (2012),*** «Договор о коллективной безопасности», 26.04.2012, http://www.odkb-csto.org/documents/detail.php? ELEME NT_ ID=126, (д/в. 04.09.2024).
21. ***Президент Азербайджана (2015),*** Состоялась церемония подписания Азербайджано-Турецких документов, Президент Азербайджана, http://ru.president.az/articles/603, (д/в. 04.09.2024).
22. ***Президент РФ (2014),*** Указ Президента Российской Федерации от 30.11.2016 г. № 640. Об утверждении Концепции внешней политики Российской Федерации http://www.kremlin.ru/acts/bank/41451, (д/в. 04.09.2024).
23. ***Президент РФ (2015),*** Документы, подписанные по итогам российско-армянских переговоров, Президент России, Официальный сайт, http://news.kremlin.ru/ref_notes/682, (д/в. 04.09.2024).
24. ***Российская Газета (2014),*** Военная доктрина 2014г., http//www.rg.ru/ 2014/12/30/doktrina-dok.html, (д/в. 04.09.2024).
25. ***Trend (2021),*** Опубликован полный текст Шушинской декларации, подписанной между Азербайджаном и Турцией, 16.07.2021, https://www. trend.az/azerbaijan/politics/3440708.html?fbclid=IwAR3lReRWajigORsNF 9Dx-T9u9TRNzq7glS95f-2Eeuw Mc2tXXA2VJdjSleM, (д/в. 04.09.2024).
26. ***UN (2016),*** «Status of internally displaced persons and refugees from Abkhazia, Georgia and the Tskhinvali region/ South Ossetia, Georgia», Resolution adopted by the General Assembly on 07.06.2016, https://guam-organization.org/en/un-ga-resolution-70-265-status-of-internally-displaced-persons-and-refugees-from-abkhazia-georgia-and-the-tskhinvali-region-south-ossetia-georgia/, (Acc. 04.09.2024).

Հարցազրույցներ

27. ***Քոչարյան (2023),*** Հարցազրույց ՀՀ 2-րդ նախագահ Ռ. Քոչարյանի հետ, 19.05.2023, Երևան:

Թերթեր, ամսագրեր

28. ***Արավոտ (2017),*** «Россия продает Азербайджану оружие, которое тот ни у кого больше купить не сможет: Карен Бекарян возражает российским коллегам», http://www.aravot-ru.am/2017/02/16/234519/, (д/в. 04.09.2024).
29. ***«Коммерсантъ» (1997),*** Ельцин не разрешал давать оружие Армении. Ельцин не поставлял оружие в Армению, Грачев тоже. Так считает начальник ГКУ президента Владимир Путин. Газета «Коммерсантъ», 15.04.1997, https://www.kommersant.ru/doc/176132, (д/в. 04.09.2024).
30. ***«Коммерсантъ» (2019),*** Россия продала Армении истребители как себе. Четыре Су-30СМ ушли покупателю по внутрироссийским ценам, 31.01.2019, https://www.kommersant.ru/doc/3868951, (д/в. 04.09.2024).
31. ***«Коммерсантъ» (* 2024),** Поздно пить «Джермук»: Отношения России и Армении вступили в стадию полураспада, 03.03.2024, https://www.kommersant.ru/doc/6551693, (д/в. 04.09.2024).
32. ***Дериглазова, Минасян (2011),*** Дериглазова Л, Минасян С., Нагорный Карабах: парадоксы силы и слабости в асимметричном конфликте. Аналитические доклады Института Кавказа. № 3. Ереван, 2011, с. 42:
33. ***Известия (2018),*** В кредит и за наличные: Какое Россия поставляет оружие в Армению и в Азербайджан, Константин Богданов 30.03.2018, https://iz.ru/726079/konstantin-bogdanov/v-kredit-i-za-nalichnye, (д/в. 04.09.2024).
34. ***Правда (2016),*** «Медведев объяснил, почему Россия продает оружие и Армении, и Азербайджану», https://www.pravda.ru/news/world/formerussr/09-04-2016/1297832-weapons-0/, (д/в. 04.09.2024).
35. ***Российская Газета (2007),*** 2006թ-ին Վրաստանից դուրս բերված ՌԴ-ի ռազմաբազաների (Գուդաուտա և Ախալքալաք) ռազմական տեխնիկայի մի մասը տեղափոխվեց Գյումրիի 102-րդ ՌԴ ռազմաբազա, Последний воинский эшелон из Грузии проследовал в Гюмри, 16.11.2007, https://rg.ru/2007/11/16/eshelon-gruziya-anons.html, (д/в. 04.09.2024).

Զեկույցներ, տվյալների բազաներ

36. ***ՀՀ վիճակագրական կոմիտե (2020),*** https://www.armstat.am/am/, (հսկ. 04.09.2024):
37. ***ՄԱԿ (2024),*** ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտի բազայից, http://esa.un.org/wpp/Excel-Data/population.htm, (հսկ. 04.09.2024):

38. ***Внешняя Торговля России (2020),*** Торговля между Россией и Азербайджаном в 2020 г., https://russian-trade.com/reports-and-reviews/2021-02/torgovlya-mezhdu-rossiey-i-azerbaydzhanom-v-2020-g/, (д/в. 04.09.2024).
39. ***Внешняя Торговля России (2021),*** Торговля между Россией и Азербайджаном в 2021 г., https://russian-trade.com/reports-and-reviews/2022-02/torgovlya-mezhdu-rossiey-i-azerbaydzhanom-v-2021-g/, (д/в. 04.09.2024).
40. ***Интернет-портал СНГ пространство интеграции (2022),*** Минск и Баку увеличили товарооборот в два раза, 29.01.2022, https://e-cis.info/news/568/97862/, (д/в. 04.09.2024).
41. ***Мировой Атлас Данных (2008-2018),*** https://knoema.ru, (д/в. 04.09.2024).
42. ***ЦАМТО (2017),*** Центр анализа мировой торговли оружием, 2023, https://armstrade.org/files/analytics/457.pdf, (д/в. 04.09.2024).
43. ***ЭКСПЕРТ (2024),*** Товарооборот России и Азербайджана в 2023 г. вырос на 17,5%, 18.01.2024, https://expert.ru/news/ tovarooborot-rossii-i-azerbaydzhana-v-2023-g-vyros-na-17-i-5rotsenta/#:~:text=составил%20%244%2C358%20млрд%2C%20что%20на,6%25%2C%20до%20%243%2C162%20млрд, (д/в. 04.09.2024).
44. ***ANIARC (2020),*** Հայկական բանակի զոհերը (մարտական և ոչ մարտական) 1994-ի մայիսյան զինադադարից ի վեր, 15.02.2020, http://www.aniarc.am/2020/02/15/about-2000-victims-since-1994-2020/, (հսն. 04.09.2024), (հսն. 04.09.2024).
45. ***Oryxspioenkop (2020),*** The Fight For Nagorno-Karabakh: Documenting Losses On The Sides Of Armenia And Azerbaijan, https://www.oryxspioenkop.com/2020/09/the-fight-for-nagorno-karabakh.html, (Acc. 04.09.2024).
46. ***CPC (2020),*** Caspian Policy Center, 30.04.2020, https://twitter.com/caspiancenter/status/1255593675008151553, (Acc. 04.09.2024).
47. ***Financial One (2023),*** Азербайджан и Россия в 2022 году увеличили товарооборот почти на 24%, 25.01.2023, https://fomag.ru/news-streem/azerbaydzhan-i-rossiya-v-2022-godu-uvelichili-tovarooborot-pochti-na-24/, (Acc. 04.09.2024).
48. ***SIPRI (2016),*** ՀՀ-ի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների հարաբերակցությունը դոլարային համարժեքով ունի հետևյալ տեսքը. 2011 թ.՝ համապատասխանաբար 391մլն և 1,7մլրդ, 2012 թ.՝ 381մլն և 1,7մլրդ, 2013 թ.՝ 445մլն և 1,9 մլրդ, 2014 թ.՝ 458մլն և 1,7մլրդ, 2015 թ.՝ 447մլն և 1,7մլրդ, 2016 թ.՝ 431մլն և 1,4մլրդ, 2017 թ.՝ 440մլն և 1,5մլրդ, 2018 թ.՝ 518մլն և 1,6 մլրդ (առավել մանրամասն տե՛ս Trends In World Military Expenditure, 2016, https://www.sipri.org/sites/default/files/Trends-world-military-expenditure-2016.pdf, (հսն. 04.09.2024):

49. ***Sputnik (2024)***, С 2020 года товарооборот Казахстана и Азербайджана увеличился в 5 раз, 18.04.2024, https://ru.sputnik.kz/20240310/v-5-raz-uvelichilsya-tovarooborot-mezhdu-kazakhstanom-i-azerbaydzhanom-s-2020-goda---tokaev-42775476.html, (д/в. 04.09.2024).

Համացանցային աղբյուրներ

50. ***Լուրեր (2023),*** Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ուղերձով դիմում է ժողովրդին, https://www.youtube.com/watch?v=mLEPp_8VNx4, (հսև. 04.09.2024):
51. ***1lurer (2023),*** Բաքուն փորձում է ակտիվացնել «Արևմտյան Ադրբեջան» և «Արևմտյան Զանգեզուր» կեղծ թեզերը, 22.01.2023, https://www.1lurer.am/hy/2023/01/22/Բաքուն-փորձում-է-ակտիվացնել-«Արևմտյան-Ադրբեջան»-և-«Արևմտյան-Զանգեզուր»-կեղծ-թեզերը/868380, (հսև. 04.09.2024):
52. ***ARKA (2019),*** Armenia intends to give a new impetus to relations with Russia-Prime Minister, http://arka.am/ru/news/politics /armeniya_namerena_pridat_novyy_impuls_otnosheniyam_s_rossiey_premer/, (Acc. 04.09.2024).
53. ***Armenpress (2019),*** Nikol Pashinyan only expects positive developments in the Armenian-Russian relations, https://armenpress.am/rus/news/932939.html, (Acc. 04.09.2024).
54. ***Armenpress (2020),*** Լուծումը պետք է ընդունելի լինի Հայաստանի, Արցախի, Ադրբեջանի ժողովուրդների համար. Փաշինյան, 06.05.2020, https://armenpress.am/hy/article/1014429, (հսև. 04.09.2024):
55. ***Armenpress (2022),*** Ղրղզստանի և Տաջիկստանի սահմանին փոխհրաձգություն է տեղի ունեցել, 10.03.2022, https://armenpress.am/hy/article/1077508, (հսև. 04.09.2024):
56. ***Armenpress (2024),*** Իրանի նորընտիր նախագահի առաջին արտաքին քաղաքական ուղերձները, 11.07.2024, https://armenpress.am/hy/article/1195484, (հսև. 04.09.2024):
57. ***Arminfo (2019),*** Nikol Pashinyan promised to make Armenia's relations with the outside world "flawless" after coming to power, http://arminfo.info/full_news.php?id=31071&lang=2, (Acc. 04.09.2024).
58. ***Azatutyun (2022),*** Ադրբեջանը Հայաստանի տարածքից մոտ 127 քառակուսի կմ է օկուպացրել. իշխանական պատգամավոր, 24.10.2022, https://www.azatutyun.am/a/32098182.html, (հսև. 04.09.2024).
59. ***Azatutyun (2022a),*** 2022-ի ապրիլին Ն. Փաշինյանը ԱԺ ամբիոնից հայտարարեց, որ Միջազգային հանրությունը մեզ կրկին ասում է, որ «ԼՂ կարգավիճակի վերաբերյալ մեր բանակցային նշաձողը պետք է իջեց-

նենք, որը մեծ կոնսոլիդացիա կտա ՀՀ-ի ու Արցախի շուրջ» https://www.youtube.com/watch?v=LCRpR6geD_Q, ապա խոսքում հավելեց, որ. «մենք կարող էինք կանխարգելել պատերազմը, որի արդյունքում մեզ մոտ կլիներ նույն վիճակը, սակայն արդեն առանց զոհերի» https://www.youtube.com/watch?v=oNaXd_N2nAU, (հսն. 04.09.2024):

60. ***Azatutyun(2023),*** Ավելի քան 100 հազար բռնի տեղահանված անձ Արցախից ժամանել է Հայաստան, 30.09.2023, https://www.azatutyun.am/a/32617179.html, (հսն. 04.09.2024):
61. ***BBC (2021),*** Nikol Pashinyan: nothing threatens Armenia's relations with Russia, https://www.bbc.com/russian/features-43940532, (Acc. 04.09.2024).
62. ***Currenttime (2015),*** В Азербайджане отправлен в отставку министр национальной безопасности, 19.10.2015, *https://www.currenttime.tv/a/27313946.html*, (д/в. 04.09.2024).
63. **Civilnet (2019),** Արցախը Հայաստան է և վերջ, 06.08.2019, https://www.civilnet.am/news/192977/արցախը-հայաստան-է-և-վերջ/, (հսն. 04.09.2024):
64. ***Civilnet (2023),*** Ալիևի պահանջները Հայաստանին՝ բռնազավթված Թալիշից, 20.03.2023, https://www.civilnet.am/news/695209/ալիևի-պահանջները-հայաստանին՝-բռնազավթված-թալիշից/, (հսն. 04.09.2024):
65. ***Countermeters (2024),*** Ադրբեջանի ազգաբնակչությունը կազմում է 10101070, ՀՀ-ի ազգաբնակչությունը՝ 3059609, https://countrymeters.info/ru, (հսն. 04.09.2024):
66. ***Infocom (2021),*** «Միջանցքային» տրամաբանությամբ հարց Հայաստանի Հանրապետությունը չի քննարկել, չի քննարկում և չի քննարկելու. Փաշինյան, 19.05.2021, https://infocom.am/hy/article/54429, (հսն. 04.09.2024):
67. ***Interfax (2024),*** Премьер Грузии заверил, что Тбилиси не будет вводить санкции против РФ, 20.02.2024, https://www.interfax.ru/world/947003, (д/в. 04.09.2024).
68. ***Factor tv (2019)***, «Արցախը Հայաստան է և վերջ, միացո՛ւմ». Ն. Փաշինյանի ելույթը Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում, 05.08.2019, https://www.youtube.com/watch?v=5aOVle6tV8s, (հսն. 04.09.2024):
69. ***Khabar (2021),*** Рождение евразийской идеи, 20.09.2021, https://khabar.kz/ru/news/politika/item /135794-rozhdenie-evrazijskoj-idei, (Acc. 04.09.2024).
70. ***News (2024),*** «ՀԱՊԿ-ը ԼՂ հակամարտության իրավիճակում ցույց տվեց այն թույլ կողմերը, որոնք բնորոշ էին այդ կառույցին», Դ. Տրենին, 12.06.2024, https://news.am/arm/news/828634.html, (հսն. 04.09.2024):
71. ***News (2024a),*** «Պետք է 2018-ին ասեի, որ ԼՂ-ն պետք է լինի Ադրբեջանի կազմում, իմ ձախողումն է, որ չեմ ասել». Փաշինյան, 12.06.2024, https://news.am/arm/ news/828743.html, (հսն. 04.09.2024):

72. ***Nor (2023),*** Азербайджан обвинил Красный Крест в контрабанде: Лачинская дорога полностью закрыта, 11.07. 2023, https://nor.ge/233118/, (д/в. 04.09.2024).
73. ***Organization of Turkic States (2009),*** https://www.turkicstates.org/en, (Acc. 04.09.2024).
74. ***Panarmenian (2016),*** «МИД РФ: Азербайджан - наш важный стратегический партнер на Южном Кавказе и в Каспийском регионе», 09.07.2016, http://www.panarmenian.net/rus/news/216611/ (д/в. 04.09.2024).
75. ***Panarmenian (2015),*** Ինչպես են Հայաստանի ՀԱՊԿ դաշնակիցները զինում Ադրբեջանին, 29.10.2015, https://panarmenian.net/arm/details/199693/, (հսկ. 04.09.2024):
76. ***Panorama (2017),*** Արցախի բնակչությունը՝ 146000, https://www.panorama.am/am/news/2017/07/04/Արցախի-բնակչության-թիվը/1802738, (հսկ. 04.09.2024):
77. ***Parliament (2019),*** Speech of the candidate for Prime Minister of the Republic of Armenia Nikol Pashinyan, http://parliament.am/news. php?cat_id=2&NewsID=10269& year=2018& month=05&day=08&lang=arm, (Acc. 04.09.2024).
78. ***Rbc (2020),*** Путин заявил об упущенной возможности прекратить бои в Карабахе в октябре, 18.11.2020,https://www.rbc.ru/rbcfreenews/5fb4474f9a7947bf2574be33, (д/в. 04.09.2024).
79. ***Rusarminfo (2020),*** «К конфликту привел целый комплекс причин. В основе, разумеется, нерешенность карабахской проблемы. Плюс исключительная перегретость публичного пространства по обе стороны границы. Своего рода спусковым крючком послужил и географический фактор: решение армянской стороны реанимировать старый приграничный КПП, расположенный в 15 км от экспортных азербайджанских трубопроводов, вызвало повышенное беспокойство одних, неоправданную ответную реакцию других и в итоге запустило маховик противостояния с самыми непредсказуемыми последствиями», - сказал Сергей Лавров, https://rusarminfo.ru/2020/08/21/lavrov-nazval-prichiny-iyulskogo-konflikta-azerbajdzhana-s-armeniej/, (д/в. 04.09.2024).
80. ***Sev.tv (2020),*** Жизнерадостный Алиев смеётся над Пашиняном, 2020.11.10 09:23:32, https://sev.tv/news/zhizneradostnyj aliev_smeetsja_nad_pashinjanom/29036.html, (д/в. 04.09.2024).
81. ***Sputniknews (2022),*** Հայաստանը ՀԱՊԿ-ին է դիմել 4-րդ հողվածով. Փաշինյանը մանրամասներ հայտնեց, 14.09.2022, https://arm.sputniknews.ru/20220914/hajastany-hapkin-e-dimel-4-rd-hodvatsvov-pashinjany-manramasner-hajtnec-48274709 .html, (հսկ. 04.09.2024):

82. ***Взгляд (2016),*** «России удается зарабатывать на поставках оружия и Азербайджану и Армении», 08.04.2016, https://vz.ru/world/2016/4/8/804 094.html, (д/в. 04.09.2024).
83. ***Давтян (2022),*** Давтян В., Энергетика Армении, Азербайджана и Грузии: Прогноз на 2022 год, https://eurasia.expert/ energetika-armenii-azerbay dzhana-i-gruzii-prognoz-na-2022/, (д/в. 04.09.2024).
84. ***Президент РФ (2008),*** Интервью Президента РФ Д.А. Медведева информационному агентсву Рейтер. 25.06.2008, www.kremlin.ru/events/ resident/transkripts/542, (д/в. 04.09.2024).
85. ***Президент РФ (2010),*** Пресс-конференция Президента РФ Д.А. Медведева по итогам заседаний Вышего совета Евразийского экономического сообщества, 09.12.2010, www.kremlin.ru/events/presidents/transcripts/ 9764, (д/в. 04.09.2024).
86. ***Президент РФ (2020),*** Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, 10.11.2020, http://kremlin.ru/events/president/ news/ 64384, (д/в. 04.09.2024).
87. ***ТАСС (2013),*** Военно-техническое сотрудничество между Россией и Арменией. Досье, Информационное агентство России ТАСС, декабря 2013, обновлено 23 апреля 2015, 12:51, https://tass.ru/info/803760, (д/в. 04.09.2024).

ALEN GHEVONDYAN

ARMENIA–RUSSIA AND ARMENIA–CSTO RELATIONS AMID THE CHANGING BALANCE OF POWER IN THE SOUTH CAUCASUS

The fall of the Soviet Union brought important changes in the international system. The bipolar global order transitioned into unipolar. Amidst these new international realities, the countries of the South Caucasus searched for geopolitical identity, foreign policy orientation, and security arrangements. In spite of the breakup of the USSR, the former center continued to influence the foreign and domestic policies of the newly independent republics for a considerable time. At the same

time, it became obvious that these states wanted to fill the power vacuum looking for partnerships with various regional and global actors, such as the United States, the European Union, Turkey, Iran, and China.

In contrast with Georgia and Azerbaijan, Armenia actively cooperated with Russia and maintained good relations. This was thanks to both objective and subjective factors. Although Armenia cooperated with the West in several formats, official Yerevan prioritized its bilateral relations with the Russian Federation and its involvement in post-Soviet security and economic integration mechanisms assuming this as the cornerstone of its national security. By the late 1990s, Armenian-Russian relations had developed into a "strategic cooperation and alliance" framework.

Russia's broader policy in the South Caucasus, including its active involvement in the Nagorno-Karabakh conflict, its cooperation with Azerbaijan, Armenia's participation in the Collective Security Treaty Organization (CSTO), the relative passivity of the West, and Russia's competitive relationship with Turkey combined with its strategic dialogue with Iran, created a balance of power in the region. This status quo was generally acceptable to most regional actors, with the exception of Azerbaijan, which consistently raised concerns about the occupation of Nagorno-Karabakh and its territorial losses.

In 2018, a change of government occurred in Armenia. Initially, the new leadership acknowledged the importance of cooperation with the Russian Federation and the CSTO. However, foreign policy priorities began to shift over time. The 44-day war of 2020 brought about a fundamentally new reality in the South Caucasus, altering Armenia-Russia relations and the nature of Armenia's engagement with the CSTO. Mutual criticism and accusations gradually became integral to bilateral relations.

With the transfer of control over Artsakh (Nagorno-Karabakh) to Azerbaijan, the balance of power in the South Caucasus was profoundly disrupted. Turkey's role in the region significantly expanded, Armenia's position weakened, and Russia's previous influence shifted. These

developments prompted the countries of the South Caucasus to recalibrate their foreign policy strategies and pursue deeper relations with new partners. In this evolving context, Armenia faced heightened challenges and threats from Azerbaijan, which had bolstered its influence following the war. Alongside its calls for a peace treaty, Azerbaijan introduced the concept of "Western Azerbaijan" into its foreign policy discourse, a clear signal of its territorial ambitions towards Armenia.

During this period, Russia, having prioritized the Ukrainian front, focused on advancing macro-regional strategic initiatives while addressing immediate tactical concerns. These efforts were influenced by a range of factors, including the outcome of the 2024 U.S. presidential election, the 2024 electoral processes in Georgia, the policies of the new Iranian leadership, and the pace of China's global infrastructure and trade projects. These interconnected realities created an increasingly complex environment for Armenia, which faced the challenge of defining its national interests within the newly emerging regional power dynamics.

ԱՐՏՅՈՄ ՏՈՆՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Իրանի բաժնի գիտաշխատող
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
իրանագիտության ամբիոնի դոցենտ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991–2023 ԹԹ.)

Ներածություն

Խորհրդային Միության փլուզումից և Ադրբեջանի անկախացումից անցել է արդեն ավելի քան երեք տասնամյակ, որի ընթացքում այդ պետության արտաքին քաղաքականությունը թեև ենթարկվել է որոշակի տեղաշարժերի և փոփոխությունների՝ պայմանավորված արտաքին քաղաքականության վրա ազդող ներքին, տարածաշրջանային և վերտարածաշրջանային փոփոխականների և առաջնահերթությունների դինամիկ փոխակերպումներով, սակայն մի քանի հասկացություններ, այնուամենայնիվ, կարող են դիտարկվել որպես «առանցքային և անփոփոխ»՝ առնվազն հետէլչիբեյական շրջանի համար: Դրանք են՝

- առաջնորդակենտրոնություն,
- բազմավեկտորություն,
- չմիավորում,
- ադրբեջանականություն (Аватков, 2020):

Սույն աշխատանքի նպատակն է՝ քննության առնել Ադրբեջանի արտաքին քաղաքականության և արտաքին քաղաքական որոշումների ընդունման վրա ազդած և ազդող գործոնները՝ տեղայ-

նացնելով դրանք մի կողմից եռամակարդակ (ներքին, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական) չափման համակարգի մեջ, մյուս կողմից կենտրոնանալով այդ պետության տարածաշրջանային արտաքին քաղաքականության վրա՝ ըստ համապատասխան երկրների հետ հարաբերությունների վերլուծության: Ըստ այդմ, այս քննության մեջ առանձնացվել են հետևյալ ենթաբաժինները՝

- Ադրբեջան–Հայաստան հարաբերություններ,
- Ադրբեջան–Թուրքիա հարաբերություններ,
- Ադրբեջան–Իրան հարաբերություններ,
- Ադրբեջան–Ռուսաստան հարաբերություններ,
- Ադրբեջան–Իսրայել հարաբերություններ:

Մեկ առանձին ենթաբաժին է հատկացվել նաև Ադրբեջան–Արևմուտք հարաբերություններին, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ այս պետության հարաբերությունների առանձնահատկություններին:

Ժամանակագրական կառուցվածքի առումով բոլոր ենթաբաժիններում տիրապետող է շարադրանքի հետևյալ հերթականությունը՝

- Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության շրջան (1992–1993 թթ.),
- Հեյդար Ալիևի նախագահության շրջան (1993–2003 թթ.),
- Իլհամ Ալիևի նախագահության պայմանական առաջին շրջան (2003–2020 թթ.),
- Իլհամ Ալիևի նախագահության պայմանական երկրորդ՝ ընթացքի մեջ գտնվող շրջան (2020 թվականից ցայսօր):

Իլհամ Ալիևի կառավարման տարիների ժամանակագրական բաժանման հիմքում դրվել է 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմը՝ այն դիտարկելով որպես Ադրբեջանի արտաքին քաղաքականության համակարգում որակական նոր շարժերի և փոփոխությունների մեկնակետ:

Աշխատանքը զերծ է զուտ իրադարձությունների, կնքված պայմանագրերի և այլնի թվարկումից և, այս առումով, նկարա-

գրական մեթոդի ուղղակի գործածության շրջանակը այստեղ խիստ սահմանափակ է:

Քննության համար օգտագործված մեթոդների թվում են պատմահամեմատականը, խոսույթի քննական վերլուծության և կառուցվածքային վերլուծության մեթոդները:

Հետխորհրդային Ադրբեջանի պատմությունը, այդ թվում նաև արտաքին քաղաքականության պատմությունը սահմանող ժամանակագրությունը կարելի է բաժանել մի քանի սկզբունքով, այդ թվում ըստ նախագահների կառավարման տարիների (ա. Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության շրջան (1992–1993 թթ.), բ. Հեյդար Ալիևի շրջան (1993–2003 թթ.), գ. Իլհամ Ալիևի շրջան (2003–ից ցայսօր)),[1] ըստ կուսակցական կամ «դինաստիական» գերակայության շրջանների (ա. «Ադրբեջանի ժողովրդական ճակատի» և «Մուսավաթի» համատեղ կառավարման շրջան (1992–1993 թթ.), բ. «Նոր Ադրբեջան» կուսակցության կամ Ալիևների կառավարման շրջան (1993 թվականից ցայսօր)), ըստ գաղափարախոսական գերակայության շրջանների (ա. թյուրքականության գերակայության կամ Էլչիբեյի շրջան (1992–1993 թթ.), բ. ադրբեջանականության գերակայության շրջան (1993–2003 թթ.), գ. ադրբեջանականության և թյուրքականության հաշտեցման և միաձուլման շրջան (2003–2020 թթ.), դ. հանրային մակարդակում ադրբեջանականությունից թյուրքականության անցման և պետական հակազդման քաղաքականության շրջան (2020 թվականից ցայսօր)), ըստ Արցախյան հակամարտության փուլերի (ա. Արցախյան առաջին պատերազմի

[1] Ժամանակագրական այս նույն սկզբունքով, սակայն այլ անվանումներով է պարբերաբաժանված Ադրբեջանի հետխորհրդային շրջանի արտաքին քաղաքականությունը նաև այս պետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքում, որում այն ունի հետևյալ տեսքը՝ ա. **առաջին փուլ**, որն ընդգրկում է անկախության առաջին տարիները, համաշխարհային պետությունների և խոշոր միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների հաստատման տարիները, **երկրորդ փուլ**, որն ընդգրկում է 1993–2003 թվականները և բնութագրվում է միջազգային հարաբերությունների հետագա ընդլայնմամբ, և **երրորդ՝ ընթացիկ փուլ**, որը բնութագրվում է միջազգային հարաբերություններում Ադրբեջանի՝ ազդեցիկ պետություն և հուսալի գործընկեր դառնալով (MFA, 2024a):

շրջան (1992–1994 թթ.), բ. առաջին հետպատերազմական շրջան (1994–2020 թթ.), գ. Երկրորդ պատերազմի և երկրորդ հետպատերազմական շրջան (2020 թվականից ցայսօր) ևն):

Այս աշխատանքում ընտրվել է ըստ նախագահների կառավարման շրջանների բաժանման մոտեցումը՝ մի վերապահմամբ, որ Իլհամ Ալիևի նախագահության ընթացքը ևս բաժանվել է երկու շրջանի՝ մինչև 2020 թ. պատերազմ և դրան հաջորդած և առ այսօր շարունակվող շրջան: Ըստ այդմ, ստացվել է այն պատկերը, որը տրված է վերևում:

Ադրբեջանական Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական առանձնահատկություններն Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության շրջանում (1992–1993 թթ.)

Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության շրջանը (1992 թ. հունիսի 17-ից մինչև 1993 թ. հունիսի 24), որն Ադրբեջանի այսօրվա նախագահ Իլհամ Ալիևն անվանում է «հեղաշրջման հետևանք»,[2] հաջորդել է ԽՍՀՄ փլուզմանը հետևած և Այազ Մութալիբովի նախագահած անցումային շրջանին և համընկել Արցախյան առաջին պատերազմի ակտիվ փուլի հետ:

Լինելով Ադրբեջանում ԽՍՀՄ փլուզմանը նախորդած շրջանի պանթյուրքական ազգայնականության հիմնական գաղափարախոսներից, ինչպես նաև այդ շրջանում Ադրբեջանում ամենակազ-

[2] 2019 թ. փետրվարի 12-ին Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևն ադրբեջանական «Real TV» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում, մասնավորապես, նշել է. «*Ցավոք, այն անձինք, ովքեր ժամանակին ղեկավարում էին Ադրբեջանը, չկարողացան հասկանալ իրենց պատասխանատվությունը և պաշտպանել մեր երկրի շահերը: Մասնավորապես, 1992 թվականի հեղաշրջման հետևանքով իշխանության եկած «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» - «Մուսավաթ» զույգը և նրա դավաճանական քաղաքականությունը հիմնական գործոններն էին, որոնք հանգեցրին [Լ.Ղ. և արտալիմյան տարածքների] բռնազավթմանը: Այն ժամանակ իշխանության համար պայքար էր ընթանում, և հեղաշրջման նախօրեին գրավված էին Շուշին և Լաչինը (Բերձոր – Ա.Տ.): Հեղաշրջումից մեկ տարի էլ չանցած՝ 1993 թվականի ապրիլին, Քելբաջարը (Քարվաճառ – Ա.Տ.) բռնազավթվեց, և այդպիսով Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միջև աշխարհագրական կապ հաստատվեց: Հետո՞ Ալիևը երբեք դա թույլ չէր տա:*» (President, 2019):

մակերպված կառույցն ունեցող շարժման՝ «Ադրբեջանի ժողովրդական ճակատի» առաջնորդը, Աբուլֆազ Էլչիբեյն իր նախագահության շրջանում վարել է բացահայտ թուրքամետ արտաքին և ներքին քաղաքականություն, որը մասնագիտական գրականության մեջ անվանվել է նաև «Ադրբեջանի թուրքականացման քաղաքականություն» (Marquardt, 2011):

Առհասարակ, Էլչիբեյի նախագահության շրջանում նրա գլխավորած քաղաքական ուժի՝ «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության վարած արտաքին քաղաքականությունն անվանվում է ոչ թե պրագմատիկ, այլ բացարձակ գաղափարահեն (Cornell, 2011), որին բնորոշ են հետևյալ հիմնական գծերը՝

- հակահայկականություն,
- հակառուսականություն,
- հակաիրանականություն,
- թրքամետություն, դեպի Թուրքիա անվերապահ հակվածություն,
- արևմտամետություն, Արևմուտքի հետ խորը ինտեգրացիայի հակվածություն:

Թվարկված առաջին երեք կետերն ադրբեջանցիների ազգային ինքնության հիմնասյուներ են, քանի որ ի դեմս հայերի, իրանցիների և ռուսների են կերպավորված «թշնամի օտարները», և դա ամփոփված ժամանակակից ադրբեջաներենում տարածված մի հանրաճանաչ ասույթի մեջ, որում ասվում է. «Ռուսը, պարսիկը և հայն են թյուրքի (ադրբեջանցու – Ա.S.) թշնամին»:[3]

Աբուլֆազ Էլչիբեյը, ի տարբերություն իր հաջորդների, արտաքին քաղաքականության մեջ չի սահմանափակվել միայն հակահայկականությամբ, այլ որդեգրել էր նաև բացահայտ թե՛ հակաիրանական, թե՛ հակառուսական կուրս, ինչի պատճառով վերջինիս արտաքին քաղաքականությունը կարելի է անվանել անհավասարակշիռ, քաոտիկ, հախուռն, իսկ ըստ Քամրան Իսմայիլովի՝ նաև «սխալ հաշվարկված» (Ismayilov, 2020):

[3] Ադրբ. Rus, fars, erməni – bunlar türkün düşməni.

Էլչիբեյի կառավարության վարած արտաքին քաղաքականության հետևանքով 1992–1993 թթ. բացահայտ կերպով վատացան Ադրբեջանի հարաբերությունները Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հետ, իսկ Թուրքիան, որի հետ խորը համագործակցության հաշվարկի վրա էր կառուցված Էլչիբեյի արտաքին քաղաքականությունը, չարդարացրեց վերջինիս հույսերը, մանավանդ Արցախյան հակամարտության մեջ ուղիղ ներգրավվելու իմաստով:

Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական առանձնահատկությունները Հեյդար Ալիևի նախագահության շրջանում (1993–2003 թթ.)

Հեյդար Ալիևը, ով 1993 թ. ամռանը Բաքու է տեղափոխվում Նախիջևանից և փոխարինում իր ծննդավայր Քաղաքիկ[4] հեռացած Ա. Էլչիբեյին, կարողանում է իր ձեռքերում կենտրոնացնել իշխանությունը Բաքվում և ապա Ադրբեջանի մյուս հատվածներում՝ սկզբում՝ 1993 թ. հունիսի 15-ից որպես Գերագույն խորհրդի (խորհրդարան) նախագահ, ապա 1993 թ. հոկտեմբերի 3-ից՝ որպես համապետական ընտրություններով ընտրված նախագահ:

Իր տասնամյա նախագահության շրջանում (մինչև 2003 թ. հոկտեմբերի 10-ը) Հեյդար Ալիևն աչքի է ընկնում պրագմատիկ և հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարելով, որի շնորհիվ որոշակիորեն կարգավորվում են ոչ միայն ԻԻՀ և ՌԴ հետ նախկինում բարդ բնույթ ստացած հարաբերությունները, այլ նաև որոշակի ինստիտուցիոնալ հիմքերի վրա են դրվում Թուրքիայի և Արևմուտքի հետ հարաբերությունները: Վերջինի պարագայում հատկապես մեծ դեր է հատկացվում էներգետիկ համագործակցությանը: 1994 թ. սեպտեմբերի 20-ին Բաքվի «Գյուլիստան» պալատում Ադրբեջանի պետական նավթային ընկերության և «Բրիթիշ Փեթրոլիումի» գլխավորած արևմտյան ընկերությու-

[4] Ադրբ. Kələki, որը գտնվում է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանում:

ների կոնսորցիումի միջև ստորագրված փաստաթուղթը, որը ստացել է «Դարի պայմանագիր» անվանումը (Cornell, 2011), դառնում է Ադրբեջանի արտաքին քաղաքականության արևմտյան ուղղության հիմքում ընկած էական գործոն: Ընդ որում, նշված պայմանագիրը հետագա ողջ ժամանակաշրջանում ապահովում է ոչ միայն Արևմուտքի հետ Ադրբեջանի հարաբերությունների ամրապնդումն ու կայուն զարգացումը, այլ դառնում է նաև Ադրբեջանի տարածքում ռազմական և քաղաքական կայունության վրա դրականորեն ազդող կարևոր գործոն (Tonoyan, 2018):

Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական առանձնահատկություններն Իլհամ Ալիևի նախագահության պայմանական առաջին շրջանում (2003–2020 թթ.)

Իլհամ Ալիևի վարած արտաքին քաղաքականությունը 2003–2020 թթ. ընթացքում ընդհանուր գծերով չի շեղվել իր հոր՝ Հեյդար Ալիևի վարած արտաքին քաղաքականությունից: 2003–2020 թթ. ընթացքում Ադրբեջանի արտաքին քաղաքականությանը, դրան նախորդող շրջանի նման, հատուկ են եղել պրագմատիզմը, հավասարակշռվածությունը և բազմավեկտորությունը: Իլհամ Ալիևը ևս փորձել է պահպանել որոշակի հավասարակշռություն տարածաշրջանային ուժային կենտրոնների՝ Թուրքիայի, Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերություններում, իսկ արևմտյան ուղղությամբ արտաքին քաղաքականության մեջ դարձյալ որպես հենարան ունեցել է էներգետիկ, մասնավորապես նավթագազային ոլորտում հնարավորինս խորը ինտեգրացիա արևմտյան համակարգերի և շուկաների հետ:

Ի տարբերություն իր հոր՝ Իլհամ Ալիևը արտաքին քաղաքականության մեջ ավելի ագրեսիվ և հետևողական է եղել հատկապես արցախյան հակամարտությանը վերաբերող հարցերում և Ադրբեջանի տարածաշրջանային դերակատարության բարձրացմանը միտված գործողություններում:

Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական առանձնահատկություններն Իլհամ Ալիևի նախագահության երկրորդ՝ ընթացքի մեջ գտնվող շրջանում (2020 թվականից ցայսօր)

2020 թ. հուլիսյան բախումները, որոնք տեղի ունեցան ՀՀ-ԱՀ սահմանի Տավուշ-Թովուզ ուղղությամբ, սկիզբը դարձան Իլհամ Ալիևի նախագահության պայմանական երկրորդ շրջանում մեկնարկած որոշակի փոփոխությունների նաև արտաքին քաղաքականության ոլորտում: Այդ փոփոխությունները նշանավորվեցին ոչ միայն արտգործնախարարի պաշտոնում ավելի քան 16 տարի աշխատած Էլմար Մամեդյարովի հեռացմամբ (02/04/2004–16/07/2020), այլ նաև արտաքին քաղաքականության մեջ նոր մարտավարության՝ այսպես կոչված **«հարձակողական դիվանագիտության»** կիրառմամբ, որը, առավելապես վերաբերելով արցախյան հիմնահարցին և արտաքին քաղաքական հարթությունում ՀՀ դեմ տարվող պայքարին, շարունակվում է մինչև այսօր:

Այսպես, 2020 թ. հուլիսի 15-ին՝ արտգործնախարար Էլմար Մամեդյարովին պաշտոնից հեռացնելուց ընդամենը մեկ օր առաջ, Իլհամ Ալիևը, կառավարության նիստում դժգոհելով Ադրբեջանի արտգործնախարարի և դեսպանների աշխատանքից, հայտարարում է. «*Ես բազմիցս ասել եմ, որ **մեր դիվանագիտությունը պետք է լինի հարձակողական** (ընդգծումը մերն է – Ա.Տ.), ոչ թե պասիվ, ինքնապաշտպանական: Չպետք է լինի դիվանագիտություն, որը խուսափում է բարձրաձայն ասել իր խոսքը՝ հանուն ինչ-որ մեկին հաճոյանալու: Ես դա բազմիցս եմ ասել տարբեր միջոցառումների ժամանակ, արտաքին գործերի նախարարությունում, օտար երկրներում Ադրբեջանի դեսպանների հետ հանդիպումների ժամանակ: Ես ձեզ ցույց եմ տվել, թե ինչ պետք է անեք, ինչ քայլեր պետք է ձեռնարկեք Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված, ինչպես պետք է աշխատեք արտասահմանյան լրատվամիջոցների հետ, ինչպես պետք է պաշտպանեք Ադրբեջանի տնտեսական շահերը, ինչպես պետք է պաշտպանեք Ադրբեջանի քաղաքացիների իրավունքները, ինչպես պետք է արդյունավետ դարձնեք սփյուռքի*

կազմակերպությունների հետ աշխատանքները, ինչպես պետք է արձագանքեք միջազգային կազմակերպություններում որոշ դեպքերում Ադրբեջանի հասցեին հնչող անհիմն մեղադրանքներին, և թե ինչպես պետք է լռեցնեք թշնամուն: Ես ասել եմ և ամեն հարցում ճանապարհ եմ ցույց տվել: Բայց արդյո՞ք մենք տեսնում ենք այս հրահանգների արտացոլումն իրականության մեջ: Շատ դեպքերում չենք տեսնում: Ցավոք, վերջին շրջանում մեր դիվանագիտությունը համատեղելի չէ մեր երկրի հաջող զարգացման հետ, որոշ դեպքերում զբաղված է անհիմնաստ գործերով ու անհիմնաստ բանակցություններով» (President, 2019):

Նույն արտահայտությունը, այն է՝ «հարձակողական դիվանագիտությունը», Իլհամ Ալիևը գործածել է նաև մեկ օր անց՝ հուլիսի 16-ին, երբ հանձնարարականներ էր տալիս նորանշանակ արտգործնախարար Ջեյհուն Բայրամովին. «*Ես ասել եմ, որ մեր դիվանագիտությունը պետք է լինի հարձակողական դիվանագիտություն: Ազգային շահերը պետք է ամբողջությամբ բավարարվեն: Բայց շատ դեպքերում մենք հակառակն ենք տեսնում: Մենք տեսնում ենք, որ հիմք է ընդունվում համաձայնության սկզբունքը, և փորձում են ինչ-որ մեկին հաճոյանալ՝ մի կողմ դնելով ազգային շահերը: Ես դրա մասին ունեմ բազմաթիվ տեղեկություններ: Հետևաբար, հաշվի առե՛ք այս հանգամանքները: Մեզ պետք են այնպիսի դիվանագիտական կադրեր, ովքեր հմուտ են, ունեն ազգային ոգի, հավատարիմ են ազգային արժեքներին և կարող են պաշտպանել մեր երկիրը*» (President, 2020b):

Ընդհանրապես, Իլհամ Ալիևի՝ 2020 թ. հուլիսի 16-ի հանդիպումը նորանշանակ արտգործնախարարի հետ և այդ հանդիպմանը վերջինիս տրված հանձնարարականները, ներկայացված մեկնաբանությունները թվում են կարևոր՝ հասկանալու համար ոչ միայն Իլհամ Ալիևի շրջանում ԱՀ արտաքին քաղաքականության առաջնահերթությունները, այլ նաև 2020 թ. հուլիսից մեկնարկած արտաքին քաղաքական փոխակերպումների էությունը:

Նշված հանդիպման ժամանակ Իլհամ Ալիևի կողմից առանձնացվել են Ադրբեջանի արտաքին քաղաքականության համար

առաջնային ուղղությունները՝ ըստ ստորև ներկայացված հերթականության՝

- հարևան երկրներ,
- Իսլամական համագործակցության կազմակերպություն և անդամ պետություններ,
- թյուրքալեզու պետություններ,
- Եվրոպական Միություն,
- ԱՄՆ,
- Մեծ Բրիտանիա,
- Չմիավորման շարժում,
- Արցախյան հակամարտություն:

2020 թ. հուլիսի 16-ին առանձնացված ուղղությունների մի մասին Իլհամ Ալիևի կողմից հատուկ անդրադարձ է եղել նաև 2024 թ. փետրվարի 14-ին՝ իր երդմնակալության արարողության ժամանակ, ինչը թույլ է տալիս համեմատությունների միջոցով ուրվագծել այն էական փոխակերպումները, որոնք տեղի են ունեցել Ադրբեջանի նախագահի՝ արտաքին քաղաքականության առաջնահերթությունների ընկալումներում 2020 թ. Արցախյան պատերազմից և, թերևս նաև 2022 թ. փետրվարին մեկնարկած ռուս-ուկրաինական զինված հակամարտությունից հետո:

Հարևան երկրներ

Այսպես, 2020 թ. հուլիսի 16-ին նորանշանակ արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի հետ հանդիպմանը Իլհամ Ալիևը հարևանների հետ հարաբերությունների մասին նշել է հետևյալը. «*Հարաբերությունները հարևան երկրների հետ՝ մեզ համար առաջնահերթություն են: Այդ հարաբերությունները կառուցված են շատ առողջ հիմքի վրա: Կյանքն ու իրադարձությունների ընթացքը ցույց են տալիս, որ դա շատ ճիշտ քաղաքականություն է: Հարևան երկրների քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ ևս շատ դրական է: Մենք այդ հարևանների հետ մեր քաղաքականությունը կառուցել ենք՝ հիմնվելով բարեկամության և բարիդրացիության սկզբունքների վրա: Մենք ոչ մի խնդիր չունենք հարևան պետութ-*

յունների հետ՝ բացառությամբ Հայաստանի: Մնցյալից մնացած խնդիրները լուծվել են: Որոշ դեպքերում որոշ երկրների [համապատասխան] շրջանակներ ցանկանում են արհեստականորեն ինչ-որ խնդիրներ ստեղծել, բայց դրանք մնում են անարդյունք» (President, 2020b):

Նույն տեղում հարևանների հետ հարաբերությունները Իլհամ Ալիևն անվանել է **ռազմավարական բնույթի** (ընդգծումը մերն է – Ա.S.), ընդ որում, այդ համատեքստում չառանձնացնելով հարևան այն պետություններից որևէ մեկի անունը, որոնք համարվում են տարածաշրջանային ուժային բևեռներ (Թուրքիա, Ռուսաստան, Իրան). «*Հարևան պետությունների հետ մեր հարաբերությունները կրում են ռազմավարական բնույթ: Մենք ապրում ենք միևնույն տարածաշրջանում, հարևաններ ենք, և այս հարևանությունը հավերժական է լինելու*» (President, 2020b):

Հարևանների հետ հարաբերությունների առնչությամբ, Իլհամ Ալիևը առանձնահատուկ կարևոր է համարել հարևան երկրներում բնակվող «ադրբեջանցիների» հանգամանքը. «*Միևնույն ժամանակ, հարևան երկրներում ապրող ադրբեջանցիներն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում այս հարաբերություններում, և նրանց հանգիստ ապրելը, բնականաբար, մեզ համար շատ կարևոր է: Այս տեսանկյունից ևս, հարևան երկրների հետ հարաբերություններն առանձնահատուկ նշանակություն ունեն*» (President, 2020b):

Իլհամ Ալիևի հայտարարության այս հատվածից թեև անմիջականորեն պարզ չէ, թե արդյո՞ք «հարևան երկրներում ապրող ադրբեջանցիներ» արտահայտությունը վերաբերում է միայն Ռուսաստանում, Թուրքիայում և Վրաստանում ապրող ադրբեջանցիներին, թե՝ նաև Իրանի հյուսիսի թյուրքախոսներին, սակայն հաշվի առնելով, որ Ադրբեջանում տասնամյակներ շարունակ Իրանում ապրող թյուրքախոսները պետական ուղղորդված քարոզչությամբ անվանվում են «հարավային ադրբեջանցիներ» (ադրբ. cənubi azərbaycanlilar, նաև günəy azərbaycanlilar) և, հետևաբար, նաև այսպես կոչված «ադրբեջանական սփյուռքի» մաս, ապա, ըստ էության, «ադրբեջանցի» տերմինի տակ Իլհամ Ալիևը ի նկա-

տի ունի նաև Իրանի թյուրքախոս բնակչությանը: Այս իրողությունը հաստատվում է անձամբ նրա[5] և վերնախավի տարբեր անձանց՝ տարբեր ժամանակահատվածներում արած մի շարք հայտարարություններով:[6]

Հարևան երկրների հետ հարաբերությունների մասին Ջեյհուն Բայրամովին ներկայացրած մանրամասների մեջ Իլհամ Ալիևն ընդհանրական անդրադարձել է նաև տնտեսական, էներգետիկ և այլ համագործակցություններին և տարածաշրջանային ձևաչափերին՝ նշելով. «*Բոլոր ոլորտներում, այդ թվում քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, մշակութային, այս հարաբերությունները կարելի է գնահատել բարձր: Կարող եմ ասել, որ մեր հարաբերությունները մեր հարևանների հետ օրինակելի են, որովհետև աշխարհում ընթացող գործընթացները ցույց են տալիս, որ որոշ դեպքերում հարևանների միջև հարաբերությունները խնդրահարույց են լինում*» (President, 2020b):

Ալիևի՝ հարևանների հետ հարաբերություններին վերաբերող նկատառումներն ավարտվում են տարածաշրջանային ձևաչափերին անդրադարձով. «*Մենք գործում ենք նաև հարևան երկրների հետ եռակողմ համագործակցության ձևաչափով: Ասեմ նաև, որ այս*

[5] Օրինակ, 2022 թ. նոյեմբերի 11-ին Իլհամ Ալիևը Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում անցկացված Թյուրքական պետությունների կազմակերպության (անգլ. Organization of Turkic States) 9-րդ գագաթնաժողովում հայտարարել է. «*Ցավոք սրտի, Աղրբեջանի սահմաններից դուրս ապրող 40 միլիոն աղրբեջանցիների մեծ մասը զրկված է մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորությունից: Կազմակերպության օրակարգում միշտ պետք է լինի թյուրքական պետություններից դուրս ապրող մեր հայրենակիցների՝ մայրենի լեզվով կրթությունը: Այս ուղղությամբ պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր: Աղրբեջան պետությունը հատուկ ուշադրություն է դարձնում օտար երկրներում ապրող աղրբեջանցիների իրավունքների ու ազատությունների, անվտանգության ապահովմանը*» (President, 2022): Այս հայտարարությունը անմիջապես տարածվել է Ադրբեջանի իշխանական և իշխանամերձ մամուլում՝ հրապարակումների վերնագրերում արդեն որոշակիացված, թե որ պետության տարածքում ապրող «40 միլիոն աղրբեջանցիներին» է նկատի ունեցել Ադրբեջանի նախագահը (Press Klub, 2022):

[6] Օրինակ, Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշազադեն 2023 թ. հունվարի 30-ին հայտարարել է, որ Իրանի տարածքում ապրում է 40 միլիոն աղրբեջանցի (Report, 2023a):

եռակողմ ձևաչափերի նախաձեռնողները մենք ենք եղել: Այսօր բոլոր հարևանների հետ տարբեր կոնֆիգուրացիաներով իրականացվում է համագործակցության եռակողմ ձևաչափ, ինչը դրականորեն է ազդում տարածաշրջանային անվտանգության վրա, ինչպես նաև լավ հիմք է ստեղծում տնտեսական, էներգետիկ և տրանսպորտային նախագծերի իրականացման համար: Ուստի, արտաքին գործերի նախարարության գործունեության մեջ հարևան երկրների հետ հարաբերությունները կշարունակեն մնալ որպես առաջնահերթություն» (President, 2020b):

Ադրբեջանը արտգործնախարարների տարեկան հանդիպումների մակարդակով մասնակից է տարածաշրջանային եռակողմ մի քանի ձևաչափերի, այդ թվում՝ Ադրբեջան–Թուրքիա–Ռուսաստան, Ադրբեջան–Թուրքիա–Իրան, Ադրբեջան–Թուրքիա–Վրաստան, Ադրբեջան–Թուրքիա–Թուրքմենստան, Ադրբեջան–Թուրքիա–Պակիստան, իսկ նախագահների մակարդակով՝ նաև Ադրբեջան–Իրան–Ռուսաստան:[7]

Պետք է նշել, որ թե՛ քաղաքական, և թե՛ հատկապես տնտեսական ոլորտներում տարածաշրջանային տարբեր ձևաչափերի (եռակողմ, քառակողմ ևն) նախաձեռնումը, որի մասին նշել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը՝ Ձեյհուն Բայրամովին հանձնարարականներ տալիս, հատուկ է եղել հիմնականում մինչև 2016–2020 թվականների, մասնավորապես 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմից մինչև 2020 թ. Արցախյան պատերազմն ընկած ժամանակահատվածի համար և, մաս կազմելով ԱՀ կողմից ՀՀ դեմ վարվող տարածաշրջանային մեկուսացման ավելի երկարաժամկետ (սկսված դեռևս 1990-ականների կեսերից) քաղաքականութ-

[7] Ադրբեջանի, ՌԴ և ԻԻՀ նախագահների մակարդակով առաջին եռակողմ հանդիպումը եղել է 2016 թ. օգոստոսի 8-ին Բաքվում, երկրորդը՝ 2017 թ. նոյեմբերի 1-ին՝ Թեհրանում (President, 2016; 2017), որից հետո այս ձևաչափով հանդիպումներ այլևս տեղի չեն ունեցել: Հերթական հանդիպումը նախատեսված է եղել 2019 թ. օգոստոսի 14-ին՝ ՌԴ Սոչի քաղաքում, սակայն, ըստ պաշտոնական հայտարարությունների, աշխատանքային օրակարգի համաձայնեցման հետ կապված խնդիրների պատճառով՝ հետաձգվել է դրանից օրեր առաջ (Mehr News, 2019), և հետագայում էլ այդ ձևաչափով հանդիպումներ չեն եղել:

յան, խորքում նաև ՀՀ հասարակության վրա նաև քարոզչական ազդեցության մեծացման և, հատկապես, այդ շրջանում (2016–2020 թթ.) Հայաստանը որպես բացարձակ մեկուսացված պետություն ներկայացնելու նպատակ է ունեցել:

Նշված քաղաքականության հիմնական նպատակի մասին է խոսում, օրինակ, Իլհամ Ալիևի՝ 2020 թ. հուլիսի 29-ի հետևյալ հայտարարությունը. «*Հայաստանը մեկուսացված է տարածաշրջանային բոլոր նախագծերից: Մենք նրանց մեկուսացրել ենք: Նայե՛ք մեր տարածաշրջանի էներգետիկ, տրանսպորտային և հեռահաղորդակցային նոր քարտեզներին: Հայաստանը չկա դրանցում: Այդ բոլոր ուղիները, ներառյալ նաև մեր նախաձեռնությամբ իրականացվող նախագծերը, շրջանցել են Հայաստանը: Այժմ նրանք լիովին դուրս են տարածաշրջանային համագործակցությունից: Մենք դա արել ենք և չենք թաքցնում: Մենք մոբիլիզացնելու ենք մեր բոլոր հնարավորությունները և այսուհետ մեկուսացման մեջ ենք պահելու այդ երկիրը: Նրանք (Հայաստանի Հանրապետությունը և նրա բնակչությունը – Ա.Տ.) զրկված են այդ հնարավորություններից: Սակայն մենք կվերադառնանք մեր հողերը, անպայման կվերադառնանք, Ադրբեջանը կվերականգնի իր տարածքային ամբողջականությունը*» (President, 2020c):

Նշված ռազմավարության մասին Իլհամ Ալիևը խոստովանել է նաև 2020 թ. պատերազմից մի քանի ամիս անց՝ 2021 թ. փետրվարի 26-ին՝ Ադրբեջանի և արտասահմանցի լրագրողների հետ հանդիպման ժամանակ. «*Մենք հետևողականորեն մեկուսացրել ենք Հայաստանը բոլոր միջազգային և տարածաշրջանային նախագծերից: Մեր քաղաքականությունն էր՝ տնտեսապես քայքայել, փլուզել և մեկուսացնել Հայաստանը: Ես դա երբեք չեմ թաքցրել և բազմիցս բացեիբաց ասել եմ, որ քանի դեռ մեր հողերը բռնազավթված են, մենք այս քաղաքականությունն ենք իրականացնելու: Ես ասում էի, որ Հայաստանը պետք է դուրս բերի իր զինված ուժերը մեր հողերից, դրանից հետո տարածաշրջանում կարող է լինել և՛ գործակցություն ու համագործակցություն, և՛ կարող է լինել նաև փոփոխություն մեր քաղաքականության մեջ*» (President, 2021a):

Թեև վերևում բերված հայտարարության վերջում տեղ գտած որոշ ակնարկներին, ընդհանուր առմամբ, Հայաստանն արտաքին աշխարհից և տարածաշրջանային համագործակցության տարբեր ձևաչափերից մեկուսացված ներկայացնելու ադրբեջանական այս քաղաքականությունը և քարոզչությունը շարունակվել են նաև 2020 թ. պատերազմից հետո, և եթե մինչև պատերազմը դրա նպատակը Արցախյան հակամարտության հարցում ՀՀ իշխանությունների և հասարակության վրա ճնշում գործադրելն էր, ապա պատերազմից հետո նախագահի մակարդակով իրականացվող այդ քարոզչության նպատակը դարձել է ՀՀ-ից արտատարածքային միջանցք կորզելը:

Դա է վկայում, օրինակ, Իլհամ Ալիևի՝ 2020 թ. պատերազմից մեկ ամիս չանցած՝ դեկտեմբերի 1-ին կատարած մի հայտարարություն, որտեղ, խոսելով ՀՀ-ից պահանջած միջանցք(/ներ)ի մասին, նշել է. «*Եթե պետք լինի, լինելու է երկու միջանցք: Սա մեր պատմական ձեռքբերումն է: Մենք Նախիջևանը դուրս ենք բերում շրջափակումից, միաժամանակ բացում ենք նոր տրանսպորտային զարկերակ: Կարող եմ ասել, որ սրանից կշահեն բոլոր երկրները: Ադրբեջանը միավորվում է Նախիջևանի հետ, որը նրա անբաժանելի մասն է: Դրանով Ադրբեջանը միավորվում է նաև Թուրքիայի հետ: Այս միջանցքին կարող են միանալ Ռուսաստանը, Ադրբեջանը, Թուրքիան, Իրանը, ցանկության դեպքում՝ նաև Հայաստանը*» (President, 2020d):

Իսլամական համագործակցության կազմակերպություն (ԻՀԿ)

Նորանշանակ նախարար Ջեյհուն Բայրամովին տված իր հանձնարարականների հաջորդ կետում Իլհամ Ալիևը անդրադարձել է հենց ԻՀԿ անդամ պետությունների հետ Ադրբեջանի հարաբերություններին՝ ընդգծելով այդ կազմակերպության կարևորությունն ու նշանակությունն Ադրբեջանի վարած արտաքին քաղաքականության և, հատկապես, Արցախյան հակամարտության համատեքստում. «*Մենք շատ լավ հարաբերություններ ունենք Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ երկր-*

ների հետ: Ադրբեջանն իսլամական աշխարհի մի մասն է, և այն երկրները, որոնք մեզնից ամենաշատ աջակցությունն են ստանում միջազգային կազմակերպություններում, հենց մուսուլմանական երկրներն են: Մենք նույնպես ամենաշատ աջակցությունն ստանում ենք մուսուլմանական երկրներից» (President, 2020b):

Տեղին է այստեղ նշել, որ Ադրբեջանն իր պատմության հետխորհրդային ողջ շրջանում արտաքին քաղաքականության մեջ մեծ դեր է հատկացրել իսլամական ուղղությանը, որի նպատակն է մի կողմից իսլամադավան պետությունների հետ քաղաքական հարաբերությունների ամրապնդումը, այդ երկրների ֆինանսատնտեսական ներուժի օգտագործումը, մյուս կողմից՝ Արցախյան հակամարտությունում և հակահայկական քարոզչության հարցերում մուսուլմանական պետությունների և կազմակերպությունների աջակցությունը ստանալը (Փաշայան, 2014): Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ, հատկապես վերևում նշված երկու ուղղություններում (Արցախյան հակամարտություն և հակահայկական քարոզչություն) իսլամական գործոնի կիրառման հիմնական հարթակներից է եղել և կա Իսլամական համագործակցության կազմակերպությունը:[8] Սրանով էր, թերևս, պայմանավորված, որ Իլհամ Ալիևը Ջեյհուն Բայրամովին արտգործնախարար նշանակելիս անդրադարձել է այդ կառույցին նաև հակահայկական հայտարարությունների տարածման համատեքստում. «*Վերջերս Իսլամական համագործակցության կազմակերպությունը հայտարարություն է տարածել Հայաստանի հերթական ռազմական սադրանքի վերաբերյալ՝ պաշտպանելով Ադրբեջանի իրավացի դիրքորոշումը, և մենք դա բարձր ենք գնահատում*» (President, 2020b):

ԻՀԿ և, առհասարակ, իսլամական ուղղության շրջանակներում, Ադրբեջանը դիրքավորվում է որպես մուսուլմանական պետությունների միջև առկա տարաձայնությունների վերացման ուղ-

[8] Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ իսլամական գործոնի, ինչպես նաև ԻՀԿ–ում այդ պետության կողմից ծավալած գործունեության և այնտեղ ընդունված հակահայկական բանաձևերի մասին մանրամասն (տե՛ս Փաշայան, 2003, Փաշայան, 2014, Փաշայան, 2021):

ղությամբ ջանքեր գործադրող պետություն, որի մասին Իլհամ Ալիևը 2020 թ. հուլիսին Ադրբեջանի նորանշանակ արտգործնախարարին հայտնել է հետևյալը. «*Ադրբեջանը չի ինապում իր ջանքերը՝ մեղմելու կամ վերացնելու մուսուլմանական որոշ երկրների միջև առկա տարաձայնությունները, և որոշ դեպքերում այդ ջանքերը լավ արդյունքների են հանգեցնում, քանզի իսլամական աշխարհում առաջին հերթին պետք է համերաշխություն լինի: Դա անհրաժեշտ է, որպեսզի մենք կարողանանք առողջ հիմքի վրա կառուցել մեր ապագան մեր ավանդական բարեկամների հետ*» (President, 2020b):

ԻՀԿ հետ Ադրբեջանի համագործակցությունն Իլհամ Ալիևը կարևորել է նաև 2024 թ. փետրվարի 14-ին՝ իր երդմնակալության արարողության ժամանակ՝ մասնավորապես նշելով. «*Իսլամական համագործակցության կազմակերպությունը թե՛ բռնազավթման տարիներին և դրանից հետո, թե՛ նաև Ղարաբաղյան երկրորդ պատերազմի, հակահաբեկչական գործողության[9] ընթացքում և դրանցից հետո եղել է Ադրբեջանի կողքին: Ադրբեջանն այս կազմակերպության անդամն է, որտեղ բարձր է գնահատվում մուսուլմանական կրոնի և բոլոր կրոնների նկատմամբ Ադրբեջանում առկա վերաբերմունքը: ԻՀԿ-ն միավորում է բոլոր մուսուլմանական երկրներին, և իհարկե, այս կազմակերպությունում մեր կողմից ներկայացվող նախաձեռնությունների ընդունվելն ու աջակցություն գտնելն առանձնահատուկ հնաստ է պարունակում*» (President, 2020b):

Հատկանշական է այն, որ Իլհամ Ալիևի 2003–2024 թթ. ելույթների և հարցազրույցների ամբողջական ուսումնասիրությունը բացահայտում է այն, որ «իսլամ», «իսլամական», «իսլամական արժեքներ», «իսլամական համերաշխություն» բառերն ու արտահայտությունները գործածվել են առավելապես արտաքին աշխարհում հակահայկական քարոզչության իրականացման դեպքերում, և նույն այդ բառերն ու արտահայտությունները գրեթե բացակայում

[9] Արցախի դեմ 2023 թ. սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական հարձակումը և ցեղասպանական գործողությունները, ինչպես նաև Արցախի ամբողջական բռնի հայաթափումը Ադրբեջանում պաշտոնապես անվանում են «Հակահաբեկչական գործություն»:

են բուն ադրբեջանական իրողություններին վերաբերող մնացած բոլոր դեպքերում: Ավելին, Ադրբեջանում Իլհամ Ալիևի կառավարման տարիներն առանձնանում են շիա հավատացյալների նկատմամբ կոշտ քաղաքականությամբ, մասնավորապես նրանց նկատմամբ բիրտ ուժի գործադրմամբ, շինծու քրեական գործերի հարուցմամբ և կալանավորմամբ,[10] ինչպես նաև խղճի և դավանանքի ազատության իրավունքի ոտնահարումներով, կրոնական ծեսերի իրականացման սահմանափակումներով (Տոնոյան, 2019), մզկիթները հիմնահատակ քանդելու դեպքերով (Arannews, 2009):

Թյուրքալեզու (Թյուրքական) պետությունների կազմակերպություն (Organization of Turkic States)[11]

Ադրբեջանի ներկա քաղաքական վերնախավը, որպես Հեյդար Ալիևի կողմից վերամշակված ադրբեջանականության և դրա հետ սերտորեն փոխկապակցված պանազարիականության կամ պանադրբեջանականության գաղափարախոսությունների կրող և շարունակող, այնուամենայնիվ, ոչ միայն չի խոչընդոտել, այլև հատկապես 2016–2021 թթ. ընթացքում ոչ առանձնապես բացահայտ խրախուսել է նաև պանթյուրքական ազգայնականությու-

[10] Դրա օրինակներից են նարդարանյան դեպքերը (Վարդանյան և այլք, 2018) և Գանձակում 2018 թ. տեղի ունեցած իրադարձությունները (Տոնոյան, 2019):

[11] Այս կազմերպությունը հիմնադրելու միտքը դեռևս 2006 թ. առաջ է քաշել Նուրսուլթան Նազարբաևը, սակայն դրա պաշտոնական հիմնադրումը տեղի է ունեցել 2009 թ. հոկտեմբերի 3-ին՝ Նախիջևանում: Հիմնադրման պահին կազմակերպությունը կոչվում էր Թյուրքալեզու/թյուրքախոս պետությունների համագործակցության խորհուրդ (ադրբ. Azərbaycan Türkdilli Dövlətlərin Əməkdaşlıq Şurası, անգլ. Cooperation Council of Turkic Speaking States), կրճատ տարբերակով՝ Թյուրքական խորհուրդ: Այն Թյուրքական պետությունների կազմակերպություն (ԹՊԿ) է վերանվանվել 2021 թ.՝ կազմակերպության՝ Ստամբուլում տեղի ունեցած 8-րդ գագաթնաժողովի ժամանակ: ԹՊԿ գլխավոր քարտուղարությունը գտնվում է Թուրքիայի Ստամբուլ քաղաքում: Կազմակերպությանը անդամակցում է հինգ պետություն (Թուրքիա, Ադրբեջան, Ղազախստան, Ուզբեկստան, Ղրղզստան), ևս երկուսը (Թուրքմենստանը և Հունգարիան) ունեն դիտորդական կարգավիճակ:

նը,[12] իսկ Թյուրքական պետությունների կազմակերպությունը, որպես վերջինի իրացման կիրառական միջոց, օգտագործել է որպես օժանդակ միջոց ինչպես Թուրքիայի հետ Ադրբեջանի հարաբերությունները որակական նոր մակարդակի բարձրացնելու, այնպես էլ Կենտրոնական Ասիայի թյուրքախոս պետությունների հետ քաղաքական և տնտեսական հարաբերություններն ավելի ընդլայնելու համար:

Վերևում նշվածով է պայմանավորված, որ ստեղծման օրվանից, բայց ավելի ակտիվ հատկապես 2016 թ. քառօրյա պատերազմից հետո, այս կառույցն Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ դարձել է կարևոր գործիքակազմ՝ Արցախյան հակամարտության թեմայով թյուրքախոս պետությունների միասնական դիրքորոշում ձևակերպելու և հակահայկական քարոզչության իրացման հարցում թյուրքական պետությունների շարունակական աջակցությունը ստանալու հարցերում:

Այսպես, գործող նախագահ Իլհամ Ալիևը թե՛ իր տարեկան ամփոփիչ հաշվետվությունների մեջ, և թե՛ Ադրբեջանի արտաքին քաղաքականության մասին խոսելիս, հաճախ է հիշել ԹՊԿ անունը և ներկայացրել դրա կարևորությունը Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ:

Բացառություն չի եղել նաև 2020 թ. հուլիսի 16-ին նորանշանակ արտգործնախարար Ջ. Բայրամովի հետ հանդիպումը, որտեղ Ադրբեջանի արտաքին քաղաքականության մասին Ալիևի կողմից ներկայացված բացատրություններում տեղ է գտել նաև ԹՊԿ ուղղությամբ աշխատանքների դրույթը. «*Թյուրքալեզու երկրները մեզ համար եղբայրական երկրներ են, և մենք շատ լավ հարաբերություններ ունենք բոլոր թյուրքալեզու երկրների հետ: Ինչպես գիտեք, Ադրբեջանը ներկայումս նախագահում է Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդը: Պետք է նաև*

[12] Ադրբեջանում ազգայնականության, դրա տարբեր ուղղությունների և գաղափարական հոսանքների մասին մանրամասն տե՛ս Broers & Mahmudlu 2023; Ergun 2022; Goyushov 2021; Guliyeva 2022; Mahmudlu 2017; Tokluoglu 2005; Yilmaz 2013 etc.

փաստեմ, որ թյուրքալեզու երկրների մասնակցությամբ գագաթնաժողովներն անցկացվում են արդեն երկար տարիներ: Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդը, որպես կազմակերպություն, հիմնվել է Նախիջևան քաղաքում: [Թյուրքական պետությունների մասնակցությամբ] հենց այնտեղ անցկացված համաժողովներից մեկի ժամանակ ստեղծվեց Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդը և այն այժմ ուժեղացնում է իր ներուժը: Նշեմ նաև, որ Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդը նույնպես հայտարարություն է տարածել՝ աջակցելով Ադրբեջանին՝ օրերս տեղի ունեցած սահմանային հակամարտության[13] առնչությամբ» (President, 2020b):

Էական մի փոփոխություն, որ կա Ալիևի 2020 թ. հուլիսյան հանձնարարականներում և 2024 թ. փետրվարի 14-ի երդմնակալության տեքստում, դա Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ թյուրքական աշխարհին և ԹՊԿ-ին առանձնահատուկ դերի հատկացումն է, մասնավորապես ԹՊԿ-ն հռչակելը Ադրբեջանի համար «գլխավոր միջազգային կազմակերպություն». «*Այսուհետ ևս, միջազգային կազմակերպությունների հետ կապված, մենք անելու ենք մեր քայլերը, և առաջին հերթին շարունակելու ենք մեր ջանքերը ԹՊԿ շրջանակներում: Սա մեզ համար առաջնահերթություն է: Ուզում եմ սա հստակ ասել, թեև մեր ներկայիս քաղաքականությունը, թերևս, դա բոլորին պարզ է դարձնում: Սա մեզ համար գլխավոր միջազգային կազմակերպությունն է, քանի որ դա մեր ընտանիքն է: Մենք ուրիշ ընտանիք չունենք: Մեր ընտանիքը թյուրքական աշխարհն է*» (President, 2024a):

Ի տարբերություն 2020 թ. հուլիսի՝ 2024 թ. փետրվարին Իլհամ Ալիևը հակադրության մեջ է դնում թյուրքական աշխարհի հետ համագործակցությունը մնացյալ աշխարհի հետ, և դա պայմանավորված է այն իրողություններով, որոնք ուղիղ կապ ունեն մինչպատերազմական և հետպատերազմական գործընթացների, 2020

[13] Խոսքը վերաբերում է 2020 թ. հուլիսի սկզբներին ՀՀ-Ադրբեջան սահմանի Տավուշ-Թովուզ ուղղությամբ տեղի ունեցած սահմանային բախումներին:

թ. պատերազմից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստացի լուծարման, և հատկապես 2023 թ. սեպտեմբերին Արցախի դեմ իրականացված ռազմական գործողությունից ու արցախցիների բռնի տեղահանությունից հետո Ադրբեջանի վրա որոշակի միջազգային ճնշումների գործադրման, ԱՄՆ և Ֆրանսիայի հետ Ադրբեջանի հարաբերությունների լարման, նաև ԵԽԽՎ-ին Ադրբեջանի անդամակցությունը սառեցնելու հետ: Նշվածով է պայմանավորված այն, 2024 թ. երդմնակալության ելույթում Ալիևը, շարունակելով թյուրքական աշխարհի հետ ավելի սերտորեն համագործակցելու ուղենիշային դրույթի սահմանումը, նշել է. «*Եթե որևէ մեկը կարծում է, որ մենք պետք է ընտանիք փնտրենք այլ տեղ, կարող եմ ասել, որ մեզ ոչ մի տեղ չեն սպասում և դա այլևս չեն էլ թաքցնում: Եթե նախորդ տարիներին, հատկապես բռնազավթման շրջանում, մեզ փորձում էին գրավել որոշակի խոստումներով՝ շփոթեցնելու, այն է՝ մեր աչքերին հող ու մոխիր փչելու համար, ապա այժմ այդ դիմակները պատռվել են, և այստեղ նկատվում են հստակ բաժանարար գծեր: Մե՛նք չենք գծել այդ բաժանարար գծերը: Դե՛մ ենք դրանց: Այդ բաժանարար գծերը մենք այսօր հստակ տեսնում ենք նույնիսկ Հարավային Կովկասում, որտեղ ընդամենը երեք երկիր է գտնվում: Այսպիսի իրավիճակում արդյո՞ք մենք պետք է գլուխ խոնարհենք նրանց առաջ, ովքեր չեն ցանկանում մեզ ինչ-որ տեղ ընդունել: Բացարձակապես, դա չի լինի: **Մեր ընտանիքը թյուրքական աշխարհն է** (ընդգծումը մերն է – Ա.Տ.): Մենք մեզ շատ լավ ենք զգում*» (President, 2024a):

Ընդ որում, շարունակության մեջ Ալիևը ԹՊԿ շրջանակներում թյուրքական աշխարհի հետ Ադրբեջանի խորը ինտեգրացիայի անհրաժեշտության դրույթը փորձել է կապել տնտեսական և շուկայական առավելությունների հետ, և ԹՊԿ-ն մնացյալ միջազգային կազմակերպությունների հետ քաղաքական հակադրության մեջ դնելը այս դեպքում հիմնավորվում է ոչ թե քաղաքական առավելություններով, այլ հիմնականում տնտեսական, և ավելի թույլ՝ նաև ռազմական. «Մենք եղբայրական հարաբերություններ ունենք բոլոր այն երկրների հետ, որոնք անդամակցում են ԹՊԿ-

ին, և մեր քաղաքականությունը միտված է ԹՊԿ հզորացմանը: Դա մեծ աշխարհագրություն է, մեծ տարածք, մեծ ռազմական ուժ, մեծ տնտեսություն, բնական ռեսուրսներ, տրանսպորտային ուղիներ, երիտասարդ բնակչություն, աճող բնակչություն և ցեղակից ժողովուրդներ: Սրանից ուժեղ միություն կարո՞ղ է լինել: Իհարկե՝ ոչ» (President, 2024a):

ԹՊԿ վերաբերյալ իր դատողություններն Ալիևն իր երդմնակալության ելույթում ամփոփել է այն ուղենիշային հեռանկարի ուրվագծմամբ, որը նա տեսնում է միջազգային համակարգում այդ կազմակերպության հետագա տեղի և դերի առնչությամբ. «*Մենք պետք է համատեղ ջանքեր գործադրենք, որպեսզի ԹՊԿ-ն դառնա միջազգային ասպարեզում կարևոր դերակատար և ուժային կենտրոն: Մենք կարող ենք դրան հասնել միայն միասին*» (President, 2024a):

Երդմնակալության ելույթում ԹՊԿ-ին ու թյուրքական աշխարհին Ալիևի երկար անդրադարձը, միջազգային և տարածաշրջանային նոր իրողություններում Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ այս ուղղությանը տրվող գրեթե բացարձակ առաջնահերթությունը ցույց տալուց բացի, մատնանշում է այն դերը, որը ցանկանում է ստանձնել Ադրբեջանը թյուրքական աշխարհում:

Մեկ այլ հանգամանք է այն, որ իր այդ ելույթում, չտալով ոչ մի հարևան պետության, այդ թվում նաև Թուրքիայի Հանրապետության անունը, Ալիևը փորձել է Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ թյուրքական աշխարհին և ԹՊԿ-ին հատկացրած իր դերով մեղմել հնարավոր այն դժգոհությունը, որ կարող էր, նշված հանգամանքով պայմանավորված, առաջանալ Թուրքիայի քաղաքական վերնախավի մոտ:

Եվրոպական Միություն (ԵՄ)

Ի տարբերություն 2020 թ. հուլիսի, երբ Իլհամ Ալիևը դրական է արտահայտվել Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ ԵՄ ուղղության առնչությամբ, հայտարարել, որ ԵՄ հետ Ադրբեջանի հարաբերությունները կառուցված են շատ ամուր հիմքերի

վրա, ապա նաև հանձնարարություններ տվել նորանշանակ նախարարին՝ անմիջապես զբաղվելու ԵՄ և Ադրբեջանի միջև ստորագրման պատրաստվող նոր համաձայնագրի շուրջ բանակցություններով,[14] 2024 թ. փետրվարի երդմնակալության խոսքում Ալիևը գրեթե չի հիշել ԵՄ մասին: Բացառություն է այն հատվածը, երբ տնտեսական քաղաքականության հեռանկարների մասին խոսելիս նշել է, որ ջանքեր են գործադրվելու առաջիկայում գազի արտահանման աշխարհագրությունը դեպի ԵՄ ընդլայնելու ուղղությամբ (President, 2024a): Փոխարենը, արտաքին քաղաքականության վերաբերյալ իր հայտարարություններում բավականին երկար կանգ է առել նեոգաղութատիրության դեմ պայքարի վրա և դա ներկայացրել՝ Ադրբեջանի արտաքին քաղաքականության համար որպես նոր առաջադրանք մեկնարկող նոր ժամանակաշրջանում. «*Ընդհանրապես, այս նոր դարաշրջանում մենք պետք է նոր հորիզոններ բացենք արտաքին քաղաքականության ուղղությամբ: Եթե նախորդ ժամանակաշրջանում մեր արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը հայ-ադրբեջանական հակամարտության լուծումն էր, ապա այսօր այդ հարցը, կարելի է ասել, օրակարգում չկա: Սրանից ելնելով՝ մեր արտաքին քաղաքականության նոր ուղղությունները պետք է դառնան գերակա և առաջնային: Մենք ավելի ակտիվ ենք լինելու աշխարհին հուզող խնդիրների լուծման գործում, այդ թվում նաև կլիմայական փոփոխությունների հետ կապված: Մենք պետք է լինենք նեոգաղութատիրության դեմ պայքարող երկրների կողքին*» (President, 2024a):

«Նեոգաղութատիրություն» եզրի ի հայտ գալը Ալիևի բառապաշարում, որպես հակաարևմտյան քարոզչության միջոց, թերևս, ինչպես վերևում նշվեց, կապված է 2020 թ. հաջորդած հետպատե-

[14] Խոսքը վերաբերում է ԵՄ-Ադրբեջան ռազմավարական համագործակցության մասին համաձայնագրին, որի վերաբերյալ բանակցությունները կողմերի միջև սկսվել են դեռևս 2010-ականների կեսերին, սակայն այդպես էլ վերջնական արդյունքի չեն հասել: Փոխարենը, 2022 թ. հուլիսի 18-ին՝ ռուս-ուկրաինական պատերազմից ընդամենը ամիսներ անց, ստորագրվել է միայն էներգետիկ ոլորտում ԵՄ-Ադրբեջան ռազմավարական գործընկերության փոխըմբռնման հուշագիր (Azatutyun, 2022):

րազմական շրջանում և հատկապես 2023 թ. Արցախի բռնազավթումից և արցախահայության բռնի տեղահանումից հետո ԵՄ անդամ որոշ պետությունների (Ֆրանսիա, Նիդերլանդներ ևն) հետ Ադրբեջանի լարված հարաբերությունների հետ: Այս իրողությունը պարզ է դառնում նաև այն ակնարկներից, որոնք Ալիևի կողմից արվել են նույն ելույթի ժամանակ՝ «նեոգաղութատիրության դեմ պայքարը» Ադրբեջանի արտաքին քաղաքականության առաջադրանք սահմանելու մասով. «*Նեոգաղութատիրության առաջին շարքերում կանգնածները պետք է իմանան, որ իզուր են մեր դեմ սառը պատերազմի դուրս եկել: Մենք հետ չենք մնալու: Մենք երբեք պաշտպանվողի դիրքում չենք եղել: Մեր դեմ արվող քայլերի դեմ մենք համարժեք քայլեր ենք անելու, և վստահ եմ՝ փոշմանելու են նրանք, ովքեր մեր դեմ նենգ ծրագրեր են դավում*» (President, 2024a):

Իլհամ Ալիևը նեոգաղութատիրության քննադատության համատեքստում Ֆրանսիային թիրախավորել է նաև ավելի վաղ, մասնավորապես 2023 թ. նոյեմբերի 20-ին՝ «Հմիավորման շարժում» կազմակերպության նախաձեռնությամբ Բաքվում անցկացված մի համաժողովի ժամանակ՝ նշելով. «*Մենք համաշխարհային մակարդակով մերկացրել ենք որոշ երկրների, հատկապես Ֆրանսիայի կողմից իրականացվող նեոգաղութատիրության քաղաքականությունը և հնչեցրել ենք այդ ամոթալի գործելակերպին վերջ դնելու պահանջը*» (President, 2023a):

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ)

2024 թ. փետրվարի 14-ի երդմնակալության ելույթում Ալիևն ընդհանրապես չի խոսել ԱՄՆ-ի հետ Ադրբեջանի հարաբերությունների և Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ այդ ուղղության վերաբերյալ, սակայն 2020 թ. հուլիսին Ձեյհուն Բայրամովին ներկայացրել է դրա կարևորությունն Ադրբեջանի հա-

մար.[15] «*ԱՄՆ-ի հետ մեր հարաբերությունները շատ կարևոր բնույթ ունեն, և դրանք երկար պատմություն ունեն: Թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ էներգետիկ և թե՛ անվտանգության ոլորտներում կան շատ լավ արդյունքներ: ԱՄՆ-ն բարձր է գնահատում Ադրբեջանի ցուցաբերած ջանքերը Աֆղանստանում խաղաղապահ առաքելություններում: Ադրբեջանով է անցնում շատ կարևոր տրանսպորտային մի միջանցք, որը կոչվում է Հյուսիսային տրանսպորտային միջանցք: Իրականում, դա օդային փոխադրումների համար է, և բեռների անվտանգ փոխադրումն այսօր շատ կարևոր է յուրաքանչյուր երկրի համար*» (President, 2020b):

Ադրբեջանի ԱԳՆ կայքում նշված է, որ Ադրբեջանական Հանրապետության և ԱՄՆ միջև ստորագրվել է 86 փաստաթուղթ, և լայնածավալ համագործակցության համար ստեղծվել է համապատասխան նորմատիվ-իրավական բազա (MFA, 2024b): Բացի դրանից, ԱՄՆ-ի հարավկովկասյան քաղաքականության մեջ Ադրբեջանը տարբեր պատճառներով ավանդաբար ունեցել է կարևոր նշանակություն (էներգետիկ ռեսուրսների տիրապետում, դրանց արտահանում, դեպի Եվրոպա դուրս եկող նավթագազային խողովակաշարերի և տրանսպորտային ցանցերի տիրապետում, Իրանի հետ սահմանակցություն, Իսրայելի հետ սերտ գործակցություն, Կասպից ծովի առափնյա երկրի կարգավիճակ, ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ դաշնակցային հարաբերություններ, ևն): Այնուամենայնիվ, 2022 թ. սկսված ռուս–ուկրաինական պատերազմից, բայց և հատկապես 2023 թ. սեպտեմբերին Արցա-

[15] Պատճառներից մեկը, որ 2020 թ. հուլիսին Ալիևն առանձնահատուկ կանգ է առել ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների վրա և կարևորել դրանք, իսկ 2024 թ. օգոստոսին իր երդմնակալության արարողության ժամանակ խուսափել է ԱՄՆ հետ հարաբերությունների մասին խոսելուց, կարող է լինել ԱՄՆ-ում նշված թվականներին գործող կառավարությունների տարբերությունը: 2020 թ. հուլիսին ԱՄՆ-ում նախագահ էր Դոնալդ Թրամփը, որի հետ Ադրբեջանի վարչակարգն ուներ ավելի գործուն և ջերմ հարաբերություններ, իսկ արդեն 2024 թ. փետրվարին՝ Ջո Բայդենը, որի կառավարության հետ Ալիևի կառավարության հարաբերությունները եղել են համեմատաբար լարված, հատկապես 2023 թ. սեպտեմբերին Արցախի դեմ իրականացված ռազմական գործողություններից և ամբողջական հայաթափումից հետո:

խի վրա իրականացված հարձակումից և արցախահայության ամբողջական բռնի տեղահանումից հետո, ԱՄՆ–Ադրբեջան հարաբերություններում առաջ են եկել որոշակի լարումներ: Դրանց առանձին դրսևորումներ մի կողմից ցույց են տալիս բացասական դինամիկայի շարունակականություն, մյուս կողմից ակնհայտ դարձնում Ադրբեջանի քաղաքական վերնախավի մոտ Հարավային Կովկասում ԱՄՆ դերի ընկալման փոփոխություն: Այս վերջին հանգամանքի վրա անուղղակի ազդեցություն է ունեցել նաև Արցախի վերջնական բռնազավթումը, ԱՄՆ համանախագահությամբ գործող Մինսկի խմբի փաստացի լուծարումը, Աֆղանստանից ԱՄՆ ռազմուժի դուրսբերումը, և, առհասարակ, մերձավորարևելյան տարածաշրջանում ու Այսրկովկասում տարածաշրջանային ուժերի (ՌԴ, ԻԻՀ և Թուրքիա) դերի բարձրացումը 2010-ականների կեսերից սկսած:

2023 թ. սեպտեմբերի 19-ից Արցախի վերջնական բռնազավթումից և ամբողջական բռնի հայաթափումից հետո, ԱՄՆ արձագանքները և ընդունած որոշումները, այդ թվում նաև «Հայկական պաշտպանության ակտ» օրինագիծը,[16] ունեցել են բացասական ազդեցություն ԱՄՆ–Ադրբեջան հարաբերությունների վրա, որը հատկապես ընդգծվել է և՛ Ադրբեջանի խորհրդարանում 2023 թ. նոյեմբերի 21-ին Իլհամ Ալիևի գլխավորած «Նոր Ադրբեջան» կուսակցության անդամների ելույթներում, և՛ խորհրդարանի ընդունած հայտարարության մեջ (Ayna, 2023): Դրանում, մասնավորապես, նշվել է. «*Խորհրդարանը կտրականապես մերժում է Ադրբեջանի դեմ ԱՄՆ սենատում ընդունված ակտը՝ այն համարելով լուրջ հարված երկու երկրների հարաբերություններին: Սա լրջորեն խոչընդոտում է տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ջան-*

[16] «Հայկական պաշտպանության ակտ» օրինագիծը ԱՄՆ սենատի կողմից միաձայն ընդունվել է 2023 թ. նոյեմբերի 16-ին: Դրանով չեղարկվել է 2024 և 2025 թթ. համար «Ազատության աջակցության ակտի» 907-րդ հոդվածի (907-րդ բանաձև) ամենամյա չեղարկման նախագահական իրավասությունը, և դրա արդյունքում Ադրբեջանը զրկվել է ԱՄՆ ռազմական օժանդակությունից (Armenpress, 2023a):

քերին: ԱՄՆ Սենատի ընդունած ակտը երկակի ստանդարտների և ընտրովի մոտեցման վառ օրինակ է» (Ayna, 2023):

Նշված հայտարարության եզրափակիչ հատվածում անդրադարձ է եղել նաև ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականությանը. «*Վերջին տարիներին ԱՄՆ արտաքին քաղաքականությունը լիովին ձախողվել է: Հատկապես պետք է նշել Մերձավոր Արևելքի և Աֆղանստանի ուղղությամբ վարված քաղաքականությունը: Ադրբեջանի խորհրդարանը ևս մեկ անգամ հայտարարում է, որ Ադրբեջանը միշտ վճռականորեն է պատասխանելու միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների վրա հիմնված բոլոր բացասական քայլերին*» (Ayna, 2023):

Մեծ Բրիտանիա

Ըստ Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնական կայքի, Ադրբեջանի և Մեծ Բրիտանիայի միջև 1992 թվականից ի վեր ստորագրվել է 26 փաստաթուղթ (MFA, 2024c): Այս երկու երկրների հարաբերություններում ավանդաբար մեծ ազդեցություն է ունեցել էներգետիկ-տնտեսական ոլորտը, և այդ իրողությունն արձանագրված է նաև Ադրբեջանի ԱԳՆ կայքում՝ հետևյալ ձևակերպմամբ. «*Ադրբեջանի և Միացյալ Թագավորության միջև էներգետիկայի ոլորտում ռազմավարական գործընկերությունը պատմական բնույթ ունի: Մեր համագործակցությունը հաստատվել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: 20-րդ դարի սկզբին անգլիական ընկերությունները մեծ կապիտալ են ներդրել Բաքվի նավթային ձեռնարկություններում*» (MFA, 2024c):

Ադրբեջանի ԱԳՆ կայքում նաև նշված է, որ Մեծ Բրիտանիան Ադրբեջանի տնտեսության մեջ ամենախոշոր ներդրումն ունի (30,6 մլրդ ԱՄՆ դոլար), և Ադրբեջանում գրանցված է մոտ 600 բրիտանական ընկերություն (MFA, 2024c):

Այս երկու երկրների հարաբերությունների հիմքում ընկած ամենաազդեցիկ՝ էներգետիկ-տնտեսական գործոնով է պայմանավորված նաև Ադրբեջանի ԱԳՆ կայքում առանձին պարբերութ-

յամբ անդրադարձը «Բրիթիշ Փեթրոլիում» ընկերության գործունեությանը Ադրբեջանում (MFA, 2024c):

Վերևում թվարկված գործոնների վրա է եղել շեշտը նաև Իլհամ Ալիևի՝ 2020 թ. հուլիսի 16-ին նորանշանակ արտգործնախարարի հետ հանդիպման ժամանակ տված բացատրություններում, երբ Մեծ Բրիտանիայի հետ Ադրբեջանի հարաբերություններն անվանել է շատ կարևոր. «***Մեր ռազմավարական ներդրողը Մեծ Բրիտանիան է*** *(ընդգծումը մերն է – Ա.Տ.): Մենք նաև շատ սերտ գործընկերություն ունենք Մեծ Բրիտանիայի հետ: Նախորդ շրջանում մենք վերլուծել և գնահատել ենք այդ հարաբերությունները միաժամանակ Եվրամիության տեսանկյունից: Բայց Մեծ Բրիտանիան այլևս Եվրամիության անդամ չէ, և մեր ու նրանց փոխադարձ հետաքրքրությունն օրեցօր աճում է: Մեծ Բրիտանիայի* ***«Բրիթիշ Փեթրոլիումը» մեր ռազմավարական գործընկերն է*** *(ընդգծումը մերն է – Ա.Տ.): Անցած տարի մենք արդեն նշեցինք այս համագործակցության 25-ամյակը և այսուհետ ևս միասին կաշխատենք առնվազն 25–30 տարի: Սա, իհարկե, դրական ազդեցություն է ունեցել երկկողմ հարաբերությունների վրա: Բայց երկու կողմերի տեսակետն այն է, որ մենք պետք է ավելին անենք ոչ նավթային հատվածում: Մի խոսքով, այս հարաբերությունները մեզ համար շատ կարևոր են»* (President, 2020b):

Ի տարբերություն ԱՄՆ և ԵՄ հետ հարաբերությունների, որոնցում եղել է փոփոխությունների որոշակի բացասական դինամիկա 2020 թ. պատերազմից հետո՝[17] Մեծ Բրիտանիայի հետ հարաբերությունները ունեցել են առաջընթաց:

Թեև Իլհամ Ալիևը 2024 թ. իր երդմնակալության ելույթի՝ արտաքին քաղաքականության վերաբերյալ հատվածում առաձին կետով չի անդրադարձել այս պետության և Ադրբեջանի միջև հա-

[17] ԱՄՆ պարագայում որոշակի կապ կարող է լինել նաև հայկական լոբբիի գործունեության հետ, որը ավանդաբար ավելի ակտիվ է համագործակցում դեմոկրատների հետ, և այս առումով, Ջո Բայդենի նախագահության շրջանը (2021 թ. հունվարից) համընկնում է նաև ԱՄՆ-Ադրբեջան հարաբերություններում նկատված բացասական միտումների հետ:

րաբերությունների հեռանկարին, սակայն մինչ այդ՝ Արցախի վերջնական բռնազավթումից և արցախահայության բռնի տեղահանումից հետո՝ 2023 թ. նոյեմբերի 22-ին, Բաքվում ընդունել է Միացյալ Թագավորության՝ Եվրոպայի հարցերով նախարար Լեո Դոքերթիին և երկու երկրների հարաբերություններն անվանել «բարձր մակարդակի վրա գտնվող», և հերթական անգամ դարձյալ մանրամասն խոսել է այդ հարաբերությունների ամրապնդման և զարգացման հարցում «Բրիթիշ Փեթրոլիումի» խաղացած դերի մասին (President, 2023b):

Համավորման շարժում

Ադրբեջանը լիիրավ անդամակցել է Համավորման շարժմանը (ՀՇ) 2011 թ. մայիսի 26-ին, իսկ 2019–2022 թթ. ընթացքում այս կազմակերպությունում եղել է նաև նախագահող երկիր:[18] Ավելին, 2019 թ. հոկտեմբերին Բաքվում է անցկացվել ՀՇ անդամ պետությունների ղեկավարների մասնակցությամբ կազմակերպության 18-րդ գագաթնաժողովը (MFA, 2024d):

2020 թ. հուլիսի 16-ին Ի. Ալիևը նորանշանակ արտգործնախարարին հանձնարարականներ տալու ժամանակ միջազգային կազմակերպություններում ԱՀ գործունեությանը անդրադառնալիս Իսլամական համագործակցության կազմակերպության հետ միասին անդրադարձել է նաև ՀՇ-ին՝ նշելով. «*Մենք ներկայումս Համավորման շարժման կազմակերպությունում նախագահող երկիր ենք, և այս նախագահությունը ձեռք ենք բերել 120 երկրի միաձայն որոշմամբ: Երբ մենք ստանձնեցինք այս նախագահությունը, ես ասացի, որ դա ձևական նախագահություն չի լինելու: Մենք պաշտպանելու ենք Համավորման շարժման անդամ պետությունների շահերը միջազգային կազմակերպություններում, ինչպես նաև միջազգային իրավունքն ու արդարադատությունը, և գործնականում մենք դա ցույց ենք տվել*» (President, 2022):

[18] Կազմակերպության և դրան Ադրբեջանի անդամակցության մանրամասների մասին տե՛ս Ադրբեջանական Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայք (MFA, 2024d):

Հուլիսյան իր մեկնաբանությունների մեջ Ադրբեջանի նախագահը անդրադարձել է նաև այդ կազմակերպության շրջանակներում իր պետության գործունեությանը և ներկայացրել մանրամասներ թագավարակի համաճարակի ժամանակ արված աշխատանքների, ինչպես նաև Ադրբեջանի միջնորդությամբ միջազգային այլ կազմակերպությունների և ՉԾ համագործակցության վերաբերյալ:[19]

ՉԾ-ին ԱՀ անդամակցությանն ու այդ կառույցի հետագա գործունեության մեջ Ադրբեջանի մասնակցությանը Իլհամ Ալիևը անդրադարձել է նաև 2024 թ. փետրվարին՝ իր երդմնակալության արարողության ժամանակ. «*Թեև մենք արդեն հանձնել ենք ՉԾ նախագահությունը, բայց մենք ներկայացված ենք դրա եռյակում:*[20] *Մեր նախագահության ժամանակ ՉԾ-ն մտավ նոր հարթություն, և մենք, բնականաբար, չենք կարող թույլ տալ, որ այն որոշակի անկում ապրի: Ես վստահ եմ, որ դա տեղի չի ունենա: Մեր կողմից անելու ենք ամեն ինչ, որպեսզի ՉԾ-ն, որպես կառույց, է՛լ ավելի հզորանա: Եթե անհրաժեշտություն լինի օգնել լուծելու անդամ երկրների առջև ծառացած խնդիրները, մենք, իհարկե, կանենք դա*» (President, 2024a):

Ադրբեջանի քաղաքական վերնախավը, այդ թվում և նախագահ Իլհամ Ալիևը, ինչպես նաև իշխանությունների հետ ասոցացվող փորձագետները, պարբերաբար հիշատակել են ՉԾ-ին ԱՀ

[19] Դրանց առնչությամբ Ի. Ալիևը նշել է. «*Համաճարակի ժամանակ մեր նախաձեռնությամբ տեղի են ունեցել Չմիավորման շարժման և Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի գագաթնաժողովի հանդիպումները: Մենք մարդասիրական օգնություն ենք ցուցաբերել ՉԾ անդամ երկրներին ինչպես ուղղակիորեն, այնպես էլ Առողջապահության համաշխարհային կազմակերպության միջոցով: Մենք ՉԾ անունից նախաձեռնել ենք ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի արտահերթ նստաշրջան, և ինչպես գիտեք, ավելի քան 130 երկիր միացել է այդ նախաձեռնությանը: Կարծում եմ՝ սա մեր հերթական քաղաքական հաջողությունն է*» (President, 2022):

[20] Չմիավորման շարժման նախագահության եռյակում, որի անդամները մշտական չեն, ներառված են կազմակերպության նախկին, ներկա և հաջորդ նախագահող երկրները: 2024 թ. ՉԾ նախագահությունը փոխանցվել է Ուգանդային, իսկ Ադրբեջանը, որպես նախկին նախագահող, շարունակում է դեռևս մնալ ՉԾ «նախագահության եռյակում» (MFA, 2024e):

անդամակցության փաստը, երբ քննարկվել է ԵԱՏՄ-ին ԱՀ անդամակցության հարցը: Ընդհանուր առմամբ, դատելով արված հայտարարություններից՝ ՉԾ-ն ծառայել է Ադրբեջանի համար որպես պաշտպանիչ բարձիկ՝ մերժելու համար ՌԴ կողմից արվող ԵԱՏՄ ինտեգրացիայի առաջարկները:

Այսպես, օրինակ, 2023 թ. մայիսի 25-ին Իլհամ Ալիևը հյուրի կարգավիճակով Մոսկվայում ներկա է եղել ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի՝ ընդլայնված կազմով նիստին, և իր համառոտ ելույթում ԱՀ անդամակցած միջազգային կազմակերպություններից առանձնացրել է միայն Չմիավորման շարժումը՝ հետևյալ ձևակերպմամբ. «*Մենք հասել ենք լիարժեք տնտեսական անկախության: Սա կարևոր գործոն է անկախ արտաքին քաղաքական կուրս վարելու հնարավորության հարցում, որը մենք հաջողությամբ իրականացրել ենք: Շուրջ չորս տարի Ադրբեջանը հաջողությամբ նախագահել է Չմիավորման շարժումը, որը միավորում է 120 երկիր: Չմիավորման շարժումը ՄԱԿ-ից հետո երկրորդ միջազգային կազմակերպությունն է: Ադրբեջանի տնտեսությունն ինքնաբավ է և արտաքին աջակցության կարիք չունի*» (President, 2023c):

Նույնկերպ և ՉԾ-ին Ադրբեջանի անդամակցության հանգամանքը Իլհամ Ալիևը հիշել է 2024 թ. ապրիլի 23-ին Բաքվում՝ Ադրբեջանի դիվանագիտական ակադեմիայում (ԱԴԱ) տեղի ունեցած «COP29 և կանաչ տեսլականը Ադրբեջանի համար» միջազգային ֆորումում, որտեղ, ի պատասխան Միջազգային և անվտանգային խնդիրների հետազոտության գերմանական ինստիտուտի (SWP) փորձագետ Դարիա Իսաչենկոյի այն հարցին, թե սպասվո՞ւմ է արդյոք Ադրբեջանի անդամակցություն ԵԱՏՄ-ին, նշել է, որ Ադրբեջանն ունի ԵԱՏՄ անդամ երկրների հետ, բացառությամբ Հայաստանի, բավականին լավ երկկողմ, այդ թվում նաև տնտեսական հարաբերություններ, և դա բավարար է: Այդ հարցի համատեքստում Ադրբեջանի նախագահը նաև հավելել է. «*Միջազգային կառույցներին անդամակցելու մեր բոլոր քայլերը միշտ հիմնված են եղել պրագմատիզմի վրա: Նույնը կարող եմ ասել ՉԾ-ին մեր անդամակցության մասին: Մենք ՉԾ անդամ ենք 10 տարուց մի*

փոքր ավելի: Դա մտածված և ճիշտ քայլ էր: Դրանից հետո մենք ստանձնեցինք նախագահությունը այս հաստատությունում, ցուցադրեցինք մեր հնարավորությունները և ձեռք բերեցինք բազմաթիվ ընկերներ: Այս պահին նման ծրագրեր (անդամակցություն ԵԱՏՄ-ին – Ա.Տ.) չունենք» (President, 2024b):

Թեև Ադրբեջանը ՉԾ անդամակցության հանգամանքը օգտագործում է որպես միջոց կամ պատրվակ ՌԴ կողմից արվող ԵԱՏՄ անդամակցության առաջարկը մերժելու համար, սակայն նույն այդ գործոնով չի կաշկանդվում ԲՐԻԿՍ-ին (BRICS) անդակցության իր ցանկության մասին հայտարարելիս:[21]

Պետք է նաև նշել, որ ինչպես Իսլամական համագործակցության կազմակերպության (ԻՀԿ) դեպքում, ՉԾ անդամակցությունը և դրանում ակտիվ գործունեությունը նույնպես Ադրբեջանի կողմից օգտագործվել է Արցախի և ՀՀ դեմ հակաքարոզչության, հակահայկական հայտարարությունների և բանաձևերի ընդունման հարցերում:[22] Օրինակ, 2020 թ. ապրիլի 4-ին ՉԾ համակարգող բյուրոն տարածել է հայտարարություն, որ կազմակերպության անդամ երկրները չեն ճանաչում «Ադրբեջանից բռնազավթված

[21] Տե՛ս, օրինակ, 6-րդ գումարման խորհրդարանի նախագահ Սահիբա Գաֆարովայի հայտարարությունը՝ արված 2024 թ. հուլիսի 11-ին Սանկտ Պետերբուրգում՝ BRICS-ի խորհրդարանական ֆորումի լիագումար նիստում (Meclis.gov, 2024):

[22] Սրա մասին հայտարարել է նաև ՀՀ նախկին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը դեռևս 2012 թ. մայիսի 10-ին Եգիպտոսի Շարմ էլ-Շեյխ քաղաքում տեղի ունեցած ՉԾ անդամ պետությունների արտգործնախարարների հանդիպման ժամանակ, երբ Ադրբեջանին հաջողվել էր ՉԾ համակարգող բյուրոյի նիստում ընդունված եզրափակիչ փաստաթղթում, մասնավորապես դրա 382-րդ կետում, ներառել տալ քարոզչական բնույթի ձևակերպում՝ միտված Արցախյան հակամարտության էության խեղաթյուրմանը և դրա կարգավորման սկզբունքներից միայն մեկի՝ պետությունների տարածքային ամբողջականության շեշտադրմանը. «*Աղրբեջանը ընդամենը մեկ տարի առաջ դարձավ Չմիացած երկրների շարժման անդամ եւ արդեն փորձում է, շահարկելով իր անդամակցությունը, թյուրիմացության մեջ գցել կազմակերպության անդամ երկրներին՝ ուղղորդելով նրանց միջազգային հանրության դիրքորոշումների դեմ*» (ԱԳՆ, 2012):

ԼՂ տարածքում անցկացված նախագահական և խորհրդարանական ընտրությունները, և դրանք անօրինական են»:[23]

Ավելին, 2023 թ. հուլիսի 5-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը օգտագործել է ՁԾ համակարգող բյուրոյի՝ Բաքվում տեղի ունեցած նախարարական հանդիպումը՝ հայտարարելու համար, որ Արցախի տարածքում առկա են Հայաստանի զինված ուժեր, ինչպես նաև այն, որ Հայաստանը խոչընդոտում է այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» բացումը, որն, իբր, ամրագրված է 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությամբ:[24]

Արցախյան հակամարտություն և ՀՀ հետ հարաբերություններ

Խորհրդային Միության փլուզումը և Ադրբեջանի անկախացումը ժամանակագրորեն համընկել են Արցախյան հիմնահարցի և հակամարտության մեկնարկի հետ, որն էլ պայմանավորել է նորանկախ Ադրբեջանի արտաքին քաղաքականության բնույթը անցած ավելի քան երեք տասնամյակների ընթացքում:

Արցախյան հակամարտությունը անկյունաքարային նշանակություն է ունեցել ոչ միայն Ադրբեջանում ինքնության բյուրեղացման և ազգակերտման գործընթացների հարցում, այլ նաև որոշիչ է եղել ՀՀ հետ այդ պետության հարաբերությունների ձևի ու բովանդակության և, ընդհանրապես, արտաքին քաղաքականութ-

[23] Այս և մինչև 2020 թ. այս կազմակերպության կողմից ընդունված հակահայկական (ներառյալ Արցախի Հանրապետության դեմ) ընդունված հայտարարությունների մասին ամփոփ տե՛ս Ադրբեջանական Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայք (MFA, 2024d):

[24] Տե՛ս Ադրբեջանական Հանրապետության նախագահի պաշտոնական կայք (President, 2023d): ՀՀ ԱԳՆ խոսնակ Անի Բաղալյանի արձագանքը այս հայտարարությունների առնչությամբ կենտրոնացել է այն իրողության շեշտադրման վրա, որ Ադրբեջանը հերթական անգամ օգտագործել է ՁԾ հարթակը՝ հակահայկական պատումներ տարածելու համար. «*Հերթական անգամ տեսնում ենք, որ Ադրբեջանը օգտագործում է Մինսկի շարժման ու նրա նախագահության հարթակն ագրեսիվ ու հակահայկական պատմություների համար, ներառյալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խեղաթյուրված պատճառները և էությունը: Սա խախտում է ինչպես ՁԾ-ի սկզբունքների, այնպես էլ միջազգային իրավունքի սկզբունքներն ու միջազգային պայանների որոշումները*» (Ilurer, 2023):

յան վարման տրամաբանության և առանձնահատկությունների իմաստով:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում, Արցախյան հիմնահարցի առանցքի շուրջ են կառուցվել պետական բոլոր համակարգերը, այդ թվում և արտաքին քաղաքականություն իրականացնող կառույցները: Եվ նշվածի բերումով, ինչպես Հայաստանի երրորդ հանրապետությունն է իր ողջ բնույթով արցախյան, ճիշտ նույնկերպ կարելի է պայմանականորեն «ղարաբաղյան» համարել նաև հետխորհրդային Ադրբեջանը:

Հեյդար Ալիևի նախագահության առաջին շրջանից սկսած՝ հօգուտ Ադրբեջանի՝ Արցախյան հակամարտության լուծման, մասնավորապես 1994 թ. հաստատված ստատուս-քվոն փոխելու ռազմավարական երկարաժամկետ նպատակին են միտված եղել այդ պետության թե՛ ռազմական քաղաքականությունը և բանակաշինությունը, թե՛ տնտեսական, և թե՛ արտաքին քաղաքականությունը, թե՛ սոցիալական ինժեներիան, և թե՛ պետական քաղաքական մյուս կարևոր ուղղությունները: Հետևաբար, թե՛ արտաքին աշխարհի (տարածաշրջանային և վերտարածաշրջանային մակարդակներում) հետ հարաբերությունների հաստատման և գործակցության, թե՛ միջազգային տարբեր կազմակերպություններին Ադրբեջանի անդամակցության պրագմատիկ նպատակների մեջ էական դեր է ունեցել Արցախյան հիմնահարցի դիտանկյունից դրանց գնահատումը:

Հակահայկական քարոզչությունը և ՀՀ-ն արտաքին աշխարհից մեկուսացնելու, թուլացնելու քաղաքականությունը օրակարգային են եղել Ադրբեջանի համար ինչպես այլ պետությունների հետ երկկողմ, եռակողմ կամ այլ ձևաչափերով հարաբերություններում, այնպես էլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներում:[25]

[25] Միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերի և հայտարարությունների մասին մանրամասն տե՛ս Ադրբեջանական Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայք (MFA, 2024d):

2020 թ. հուլիսին Ադրբեջանի նախագահը նորանշանակ արտգործնախախար Ջեյհուն Բայրամովի հետ հանդիպման ժամանակ, օգտագործելով Ադրբեջանում ավանդական «ԼՂ շուրջ Հայաստան-Ադրբեջան հակամարտություն» արտահայտությունը,[26] այն անվանել է գլխավոր խնդիր և ազգային խնդիր, և ապա նրան տրվող հանձնարարության մեջ նշել. «*Ձեր գործունեության հիմնական մասն ուղղվելու է ԼՂ շուրջ Հայաստան-Ադրբեջան հակամարտության լուծմանը: Սա մեզ համար գլխավոր խնդիր է, ազգային խնդիր է: Վերջին տարիներին ձեռնարկված միջոցառումների արդյունքում բոլոր միջազգային կազմակերպությունները հայտնել են իրենց դիրքորոշումն այս հարցում*» (President, 2022):

Նշված հանդիպման ժամանակ հակամարտության վերաբերյալ Ալիևի ներկայացրած թեզերից, որոնք ադրբեջանական հասարակությանը ներկայացվող հաշվետվության բնույթ ունեին նաև,[27] շեշտվում է այն հանգամանքը, որ անցած 25 տարիների ընթացքում՝ մինչև 2020 թ., Ադրբեջանի արտաքին քաղաքականության ջանքերն այդ ուղղությամբ հիմնականում նպատակ են ու-

[26] Ադրբ. *Ermənistan-Azərbaycan Dağlıq Qarabağ münaqişəsi.*

[27] Արցախի հակամարտության և, առհասարակ, Ադրբեջանի արտաքին քաղաքականության մասին Ալիևի կողմից նոր արտգործնախարարին ներկայացրած մեկնաբանությունների հաշվետվողական բնույթը՝ ուղղված առավելապես ադրբեջանական հասարակությանը, պայմանավորված էր լարված ներքաղաքական իրավիճակով, որը տիրում էր այդ պահին Բաքվում: Մասնավորապես, ՀՀ-Ադրբեջան սահմանի Տավուշ-Թովուզի ուղղությամբ տեղի ունեցած բախումների հետևանքով Ադրբեջանի բանակի բարձրաստիճան սպաների, այդ թվում գեներալ Փոլադ Հաշիմովի ոչնչացումը ի սկզբանե խորը հակահայկական տրամադրությունների վրա ձևավորված հանրային դժգոհություններն արդեն փողոցային երթերի ընթացքում փոխակերպել էր Ադրբեջանի գործող իշխանությունների դեմ բողոքի և հուլիսի 15-ի գիշերը տեղի էր ունեցել ցուցարարների զանգվածային ներխուժում խորհրդարանի շենք: Տվյալ դրվագում ցուցարարների բողոքը վերաբերում էր Արցախյան հակամարտության հարցով գործող իշխանությունների քաղաքականությանը և տասնամյակներ շարունակ այդ հարցը լուծել չկարողանալուն: Թերևս, դրանով էր պայմանավորված այն, որ նույն օրը կառավարության նիստում Ալիևը քննադատության թիրախ դարձրեց արտգործնախարար Էլմար Մամեդյարովին, իսկ մեկ օր անց արդեն նրան հեռացրեց զբաղեցրած պաշտոնից՝ այդկերպ հանրային բողոքն իր վրայից տեղափոխելով արտգործնախարարի և ԱԳՆ վրա (Հովհաննիսյան, 2020):

նեցել ստեղծելու հակամարտության լուծման համար (այդ թվում նաև ռազմական ճանապարհով) միջազգային իրավական բազա. «*Եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը չորս բանաձև է ընդունել հակամարտության ակտիվ փուլում, մյուս բոլոր կազմակերպություններն էլ, այսինքն ԵԱՀԿ, ԻՀԿ, ԵԽ, ԵԽԽՎ, ՉՇ, ՆԱՏՕ ևն, նմանատիպ որոշումներ և բանաձևեր են ընդունել հետագա ժամանակաշրջանում: Երկու տարի առաջ Եվրամիության և Ադրբեջանի միջև նախաստորագրված «Գործընկերության առաջնահերթություններ» փաստաթղթում հատուկ կետ կա մեր երկրի տարածքային ամբողջականության, ինքնիշխանության և սահմանների անձեռնմխելիության վերաբերյալ: Այսինքն, իրավական հիմքն ամբողջությամբ ապահովված է*» (President, 2022):

Եթե մինչև 2020 թ. պատերազմն Ադրբեջանի քաղաքական վերնախավի և արտաքին քաղաքականության իրացնողների համար առաջնային խնդիր էր ստատուս-քվոն փոխելու և Արցախյան հակամարտությունը հօգուտ Ադրբեջանի լուծելու համար միջազգային կազմակերպություններում ակտիվ աշխատանքներ տանելը, պատերազմը լեգիտիմ դարձնելու համար իրավական բազայի ստեղծումը, դրա քարոզումը, ինչպես նաև տարբեր պետությունների հետ երկկողմ, եռակողմ և այլ ձևաչափերով հարաբերությունների ներուժի օգտագործումը՝ ՀՀ դեմ հակաքարոզչության և ՀՀ-ն մեկուսացնելու համար, ապա 2020 թ. պատերազմից հետո տեղի է ունեցել իրավիճակի կտրուկ փոփոխություն, և այն քաղաքականությունը, որը վարվում է հանդեպ ՀՀ-ին նշված պատերազմից հետո, բոլոր չափորոշիչներով հարկադրանքի քաղաքականություն է, որի հիմքում դրված է ռազմական ուժի գործադրման սպառնալիքը:[28]

Թեև 2024 թ. փետրվարի 14-ին իր երդմնակալության արարողության ժամանակ Իլհամ Ալիևը հայտարարել է, որ ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի (մինչև 2023 թ. սեպտեմբերի

[28] Խնդրի տեսական քննություն և համապատասխան օրինակները տե՛ս Ghahriyan et al 2024.

19-ը – Ա.Տ.), երբ Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը եղել է Հայաստան-Ադրբեջան հակամարտության լուծումը, այսօր այդ հարցը գրեթե օրակարգային չէ, և դրա համար Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ պետք է գերակայեն նոր ուղղություններ,[29] սակայն Ադրբեջանի համար ազգակերտման և «ադրբեջանական» ինքնության բյուրեղացման գործընթացներն ավարտին հասցնելու տեսակետից ՀՀ հետ հակամարտային վիճակի պահպանումը ունի գոյաբանական անվտանգության նշանակություն: Նշվածի իմաստով ՀՀ հետ խաղաղության պայմանագիրը, որի հնարավորության մասին խոսել է Ալիևը նաև փետրվարի 14-ին, ունի առավելապես քարոզչական բնույթ, և մաս է ՀՀ դեմ 2020 թ. պատերազմից հետո իրականացվող հարկադրանքի քաղաքականության, քանի որ ՀՀ հետ իրական խաղաղությունը և հայ ժողովրդի հետ խաղաղ համակեցությունը, վերևում նշված իրողությունների բերումով, Ադրբեջանի քաղաքական վերնախավի ներկայացուցիչների, և հատկապես Ալիևի ընկալումներում ունի գոյաբանական սպառնալիքի նշանակություն:

Խաղաղության պայմանագրի վերաբերյալ Ալիևի մեկնաբանության մեջ, որ նա արել է 2024 թ. փետրվարի 14-ին, կա տոնայնության առարկայական փոփոխություն նախորդ երեք տարիների ընթացքում այդ թեմային նրա կատարած անդրադարձերի հետ համեմատության մեջ, և այդ տոնայնությունը ևս անուղղակի ձևով ցույց է տալիս, այսպես կոչված, «խաղաղության պայմանագրի» կնքման հարցում Ադրբեջանի շահագրգռվածության բացակայությունը. «*Մենք մեր խնդիրը լուծել ենք: Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման նախաձեռնողն էլ, հինգ հայտնի սկզբունքների հեղինակն էլ մենք ենք եղել: Խաղաղության պայմանագրի տեքստը ևս մենք ենք գրել և ուղարկել հայկական*

[29] Նոր ուղղությունների թվում Ալիևը նշել է աշխարհին անհանգստացնող խնդիրները՝ կապված նաև կլիմայական փոփոխությունների հետ, ինչպես նաև իսլամաֆոբիայի և նեոգաղութատիրության դեմ պայքարը (President, 2022):

կողմին: Հիմա, եթե Հայաստանը ցանկանա պահպանել միջազգային իրավունքի նորմերը, այս պայմանագիրը կստորագրվի: Եթե չուզենա, և եթե մեր դեմ կրկին անհիմն պահանջներ հնչեն, այդ պայմանագիրը չի կնքվի, բայց դրանից Ադրբեջանի համար ոչինչ չի փոխվի» (President, 2022):

Բերված մեկնաբանության շարունակության մեջ պարզ երևում է նաև ՀՀ հետ հարաբերությունների կարգավորման հարցում Ալիևի վերաբերմունքը և վերջինիս դեմ լինելը այդ հարցի միջազգայնացմանը. «*Կարծում եմ, որ Ադրբեջան–Հայաստան հարաբերությունների կարգավորման գործընթացը պետք է հանվի միջազգային օրակարգից, քանի որ ամեն պատահած ուզում է զբաղվել այդ հարցով: Գնացե՛ք, ձեր գործերով զբաղվեք: Սա է պատճառը, որ ես չեմ ուզում շատ ժամանակ հատկացնել այս թեմային, քանի որ դա այդքան չարժե: Մենք լուծել ենք մեր խնդիրը*» (President, 2022):

Խաղաղության պայմանագրի ստորագրման համար անհրաժեշտ հինգ սկզբունքները, որոնց մասին հիշատակել է Ալիևը 2024 թ. փետրվարի 14-ին, տեղադրված են Ադրբեջանի ԱԳՆ կայքում՝ ներկայացված ԱԳՆ նախկին խոսնակ Լեյլա Աբդուլլաևի կողմից՝ 2022 թ. մարտի 14-ին (MFA, 2024f): Դրանք են՝

1. Պետությունները փոխադարձաբար ճանաչում են միմյանց ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, միջազգային սահմանների անձեռնմխելիությունը և քաղաքական անկախությունը:

2. Պետությունները փոխադարձաբար հաստատում են, որ չունեն միմյանց նկատմամբ տարածքային պահանջներ և ստանձնում են իրավական պարտավորություն, որ հետագայում նման պահանջ չի ներկայացվելու:

3. Զերծ են մնում միջպետական հարաբերություններում միմյանց անվտանգության նկատմամբ սպառնալիքներ ստեղծելու, քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության դեմ ուղղված սպառնալիքներից և ուժի կիրառումից, ինչպես

նաև ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին չհամապատասխանող այլ իրավիճակներից:

4. Կատարում են պետական սահմանների սահմանազատում և սահմանագծում, հաստատում են դիվանագիտական հարաբերություններ:

5. Բացվում են տրասպորտային և հաղորդակցային ուղիները, հաստատվում են այլ համապատասխան հաղորդակցություններ և հաստատվում է համագործակցություն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում (MFA, 2024f):

Թեև ՀՀ իշխանությունները հետևողականորեն գնացել են Ադրբեջանի կողմից ներկայացված սկզբունքների (իրականում՝ պայմանների) միակողմանի կատարման,[30] սակայն խաղաղության պայմանագիր ՀՀ և Ադրբեջանի միջև չի կնքվել: Ավելին, Ադրբեջանը, հղում անելով 2020 թ. նոյեմբերի 9(/10)-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետում տեղ գտած «անխոչընդոտ տեղաշարժ» արտահայտությանը[31] և ներկայացնելով դրա կամայական մեկնաբանություն, սկսել է ՀՀ-ից պահանջել արտատարածքային

[30] Որպես ասվածի օրինակ՝ կարելի է բերել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից 2022 թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում, 2023 թ. մայիսի 14-ին և հուլիսի 15-ին Բրյուսելում, ինչպես նաև 2023 թ. հոկտեմբերի 5-ին Գրանադայում Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» ճանաչումը՝ 86.600 կմ^2 տարածքով և հետագայում նաև ավելի կոնկրետացման նպատակով արված հայտարարությունները, որ «Ադրբեջանի 86.600 կմ^2-ն ներառում է նաև Լեռնային Ղարաբաղը» (Armenpress, 2023b), և, հակառակ դրա, Ադրբեջանի կողմից փոխադարձության սկզբունքով առ այսօր (2024 թ. օգոստոսի 28-ի դրությամբ) ՀՀ տարածքային ամբողջական չճանաչումը: Ընդ որում, նույն դիտարկումը կարելի է անել նաև իբր «սահմանազատման և սահմանագծման» հարցում ՀՀ կողմից արված միակողմանի զիջումների մասին:

[31] 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետում նշված է. «*Ապաշրջափակվում են տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները*» (Prime Minister, 2024):

միջանցք և անվանել դա «Զանգեզուրի միջանցք» (Prime Minister, 2023):

Ավելի ուշ Ադրբեջանը ավելացրել է նոր պահանջներ, որոնք վերաբերում են ՀՀ Սահմանադրությունը փոխելուն, այսպես կոչված «արևմտյան ադրբեջանցիների» վերադարձի համար պայմաններ ստեղծելուն, նրանց անվտանգությունը ապահովելուն և այլն:

2020 թ. պատերազմից հետո ՀՀ դեմ Ադրբեջանի կողմից վարվող ճնշման և հարկադրանքի քաղաքականության մաս է դարձել, այսպես կոչված, «Արևմտյան Ադրբեջանի» թեման, որով Ադրբեջանի քաղաքական վերնախավը, «գիտաակադեմիական» հանրույթը և արդեն նաև հանրության զգալի մի հատված անվանում է Հայաստանի Հանրապետության տարածքը:

Թափ հավաքող այդ համակարգային պետական քարոզչության շրջանակներում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը ներկայացվում է որպես ադրբեջանցիների «պատմական հայրենիք»՝ «Արևմտյան Ադրբեջան», ուր իբր պետք է «վերադառնան» ադրբեջանցիները: Այս թեմայով քարոզչության վրա դրվել են պետական շոշափելի միջոցներ, ստեղծվել են ՀԿ-ներ և տարատեսակ կազմակերպություններ, լրատվամիջոցներ, հեռուստաալիքներ, որոնք ամենօրյա ռեժիմով Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում են որպես «Արևմտյան Ադրբեջան»: Ավելին, Ադրբեջանի տարբեր համալսարաններում, գիտահետազոտական կենտրոններում և Գիտությունների ազգային ակադեմիայի տարբեր ինստիտուտներում ստեղծվել են «Արևմտյան Ադրբեջանի ուսումնասիրության բաժիններ», որոնք պետական պատվերների և տարբեր պետական ֆոնդերից, այդ թվում և Հեյդար Ալիևի ֆոնդից տրվող դրամաշնորհների հաշվին զբաղված են պատմության զեղծարարություններով, կեղծ քարտեզների ստեղծմամբ, Հայաստանի Հանրապետության տեղանունների ցանկերը փոփոխելով և յուրաքանչյուր բնակավայրի համար իբր ադրբեջանական անվանումներ գտնելով և դրանք շրջանառության մեջ

դնելով: Ավելին, նշված պետական քաղաքականության հետևանք է այն, որ Ադրբեջանի տարբեր գերատեսչությունների, այդ թվում և պաշտպանության նախարարության կայքում 2022 թվականի վերջերից սկսած, ըստ էության, արգելված է ՀՀ-ին վերաբերող տեղանունների դեպքում հայկական պաշտոնական ձևերի գործածությունը: Փոխարենը, գործածական են դարձել հորինովի և կեղծ ադրբեջանական տարատեսակ անվանումներ, որոնք վերցվում են դարձյալ պետական պատվերով գրված ինչ-որ «հանրագիտարաններից», տեղանվանական ուղեցույցներից և այլն:

Թուրքիայի Հանրապետության հետ հարաբերություններ և ինքնութենական փոխակերպումներ

Հետխորհրդային Ադրբեջանի ամբողջ պատմությունը սերտորեն կապված է Թուրքիայի հետ հարաբերությունների շարունակական խորացման, այդ պետության միջոցով արտաքին քաղաքականության կառուցման, Արցախի հակամարտության լուծման և Ադրբեջանի ներքաղաքական պայքարում այդ պետության հետ հարաբերությունների խորության և սահմանների ճշտման խոսույթի ծավալման հետ:[32]

Թուրքիայի հետ հարաբերությունները հետխորհրդային Ադրբեջանում մշտապես սերտ կապակցության մեջ են եղել ինքնութենական խնդիրների հետ, և Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունները, դրանց փոփոխությունները, հատկապես 2020 թ. պատերազմից հետո հասկանալու հարցում կարևոր է հենց Ադրբեջանի ներսում ինքնությունների հետ կապված գաղափարախոսությունների պայքարի և դրանց ընթացքի վերլուծությունը: Ընդհանրապես, Ադրբեջանի բնակչության ինքնության շուրջ խոսույթը ձևավորվել է և մինչև այժմ ընթանում է գաղափարախոսական երկու ուղղությունների՝ «թյուրքականության» և ադրբեջանականության (Ergun, 2022) միջև մրցակցությամբ և պայքարով: Տարբեր ժամա-

[32] Հետխորհրդային շրջանում Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունների տարբեր ասպեկտների վերաբերյալ տե՛ս Ismayilov & Graham 2016.

նակներում և հատկապես Ալիևների կառավարման շրջանում տարվել և տարվում է լուրջ պետական աշխատանք՝ Ադրբեջանի բնակչության ինքնության վրա մեծ ազդեցություն ունեցող գաղափարախոսական այս երկու հոսանքները միավորելու, այդ երկուսը միմյանց հակադրելու պրակտիկան հաղթահարելու ուղղությամբ, սակայն այդ աշխատանքները վերջնական արդյունք, այնուամենայնիվ, չեն տվել, քանի որ պայմանավորված են ոչ միայն զուտ ադրբեջանական իրողություններով, Ադրբեջանի ներսում վարվող քաղաքականությամբ, այլ պատճառները հաճախ դուրս են գտնվում Ադրբեջանի տարածքից և պայմանավորված են Թուրքիայի ներսում ընթացող գործընթացներով, այդ պետության արտաքին քաղաքականության վեկտորների և նրա՝ տարածաշրջանային դերի փոփոխություններով:

Էլչիբեյը, լինելով թյուրքականության գաղափարախոս և արտաքին քաղաքականության մեջ բացառապես Թուրքիայի վրա հենվելու ջատագով, չկարողացավ ստանալ Թուրքիայից այնպիսի աջակցություն, որը թույլ կտար նրան հաջողության հասնել Արցախյան առաջին պատերազմում և պահպանել նաև սեփական իշխանությունը: Ի տարբերություն Էլչիբեյի՝ Իլհամ Ալիևը, ով միայն մասամբ էր շարունակում ադրբեջանականության գաղափարախոս իր հոր ուղեգիծը արտաքին քաղաքականության մեջ և առնվազն 2010-ականների կեսերից վարում էր այդ երկու գաղափարախոսությունների հաշտեցման քաղաքականություն, կարողացավ հասնել հաջողության և ստանալ Թուրքիայի բացահայտ և համակողմանի աջակցությունը 2020 թ. պատերազմի ժամանակ: Էլչիբեյի ձախողման և Իլհամ Ալիևի հաջողելու պատճառները, հետևաբար, պետք է փնտրել Թուրքիայի արտաքին քաղաքականության և դրա առաջնահերթությունների փոփոխության մեջ՝ համապատասխանաբար 1990-ականների սկզբին և 2010-ականների առնվազն 2-րդ կեսից: Եթե 1990-ականների Թուրքիայի համար առանցնահերթ էր արևմտյան ինտեգրացիայի քաղաքականությունը, ապա էրդողանական Թուրքիային հատուկ էր և է ծավալապաշտական, նախկին Օսմանյան կայսրության տարածքնե-

րում այսօրվա Թուրքիայի ազդեցության մեծացման, թյուրքական աշխարհի հետ ավելի սերտ համագործակցության և Թուրքիայի գերակա դիրքի հաստատման արտաքին քաղաքական առաջնահերթությունը:

Այդ փոփոխությունը ընկալած և հմտորեն օգտագործած Իլհամ Ալիևը 2020 թ. պատերազմից հետո շարունակում է խորացնել հարաբերությունները Թուրքիայի հետ, ընդլայնել ռազմավարական դաշնակցությունը, որն ամենից շատ դրսևորվում է հենց Ադրբեջանի զինված ուժերում ընթացող փոփոխություններով և թուրքական մոդելին անցմամբ (Hovsepyan & Tonoyan, 2024):

Պատերազմին հաջորդած ժամանակահատվածում որոշակիորեն ուրվագծվում է Թուրքիայի կողմից Ադրբեջանի ռազմաքաղաքական կլանման գործընթաց, ինչպես այդ երկրի ռազմական ու անվտանգային համակարգում, այնպես էլ՝ հասարակության շրջանում թուրքամետ տրամադրությունների աննախադեպ աճի համատեքստում (Hovsepyan & Tonoyan, 2024), ինչը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացներում ունենալու է երկարաժամկետ նշանակություն: 2021 թ. հունիսի 15-ին Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրված հռչակագրով ամրագրվել են երկու երկրների դաշնակցային հարաբերությունները, հատկապես ռազմական փոխօգնության, ՋՈւ-ի համակարգված գործողությունների ու համատեղ գործելու կարողությունների բարձրացման դրույթները (President, 2021b), որով ռազմական ինտեգրացիայի որակական նոր հիմք է դրվել: Կողմերը զինված ուժերի վերակազմավորման ու արդիականացման ուղղությամբ քայլերի շարունակման հանձնառություն են ստանձնել, որով Թուրքիան շարունակելու է ադրբեջանական բանակի արդիականացման գործում էական իր դերակատարությունը:

Թեև նախկին տարիներին Թուրքիան ծանրակշիռ դերակատարություն է ունեցել Ադրբեջանի բանակաշինության գործում, 2020 թ. պատերազմից հետո երկու երկրների միջև ռազմական ոլորտում համագործակցությունը որակապես նոր ընթացք է ստացել: Ադրբեջանական կողմը քանիցս հայտարարել է, որ ադրբե-

ջանական բանակն անցնում է թուրքական զինված ուժերի մոդելին: Ադրբեջանի պաշտպանության նախարար Հասանովը, կարեվորելով 2020 թ. պատերազմում թուրքական փորձի կիրառման հաջողությունն ու կատարված հետևությունները, հայտարարել է թուրքական զինված ուժերի մոդելով ադրբեջանական բանակի վերակազմավորման ու արդիականացման մասին (Güneş, 2021): Անկարայում Ադրբեջանի դեսպան Ռ. Մամադովը ևս հայտարարել է Թուրքիայի և Ադրբեջանի զինված ուժերի փոխհամաձայնեցված և համահունչ գործելու հնարավորությունները մեծացնելու նպատակով թուրքական մոդելին անցնելու մասին (Yeni Akit, 2021): Թուրքական մոդելով բանակ ստեղծելու նպատակի մասին դեռևս պատերազմի սկզբներին նշել էր նաև Ադրբեջանի նախագահը (President, 2020e), իսկ 2021 թ. փետրվարին հայտարարել գործընթացի մեկնարկը տալու և այդ ուղղությամբ գործնական քայլերի իրականացման մասին (President, 2021a): Այս համատեքստում առաջին գործնական քայլերից մեկն ադրբեջանական բանակի հատուկ նշանակության ստորաբաժանումների վերակազմավորումն էր, որի արդյունքում ստեղծվեցին թուրքականի նմանությամբ հատուկ նշանակության, այսպես կոչված, «կոմանդո բրիգադներ»: Առաջին նոր բրիգադը ստեղծվել է 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքով Ադրբեջանի կողմից օկուպացված Հադրութի շրջանում (Anadolu Ajansi, 2022), և Թուրքիան ստանձնել է այդ բրիգադների կազմի ուսուցման ու պատրաստման ողջ գործը (İhlas Haber Ajansi, 2021): Ադրբեջանական զինված ուժերի վերակազմավորման ու թուրքական մոդելին համապատասխանեցման գործընթացի իրականացման, ինչպես նաև երկու երկրների ռազմական համակարգերի ինտեգրացիայի ապահովման նպատակով էր նաև, որ 2021 թ. Թուրքիայի բարձրագույն ռազմական խորհրդի որոշմամբ Ադրբեջանում ստեղծվեց Թուրքիայի զինված ուժերի հատուկ ներկայացուցչություն՝ բարձրաստիճան զինվորականների ներգրավմամբ (Yeni Şafak, 2021):

Դեպի թուրքական մոդել անցման քայլերից էր նաև ադրբեջանական բանակի ամենամեծ զորատեսակի՝ ցամաքային զորքե-

րի հրամանատարության ստեղծումը, որը նախկինում, որպես այդպիսին, չուներ առանձին հրամանատարություն, այլ կառուցվածքային առումով՝ դրա տակ մտնող բանակային կորպուսների հրամանատարները ենթարկվում էին ԳՇ-ին (Teref, 2021): Նաև նախատեսվում է թուրքական մոդելի նմանությամբ ռոտացիայի սկզբունքի ներդրումը զինված ուժերի հրամանատարություններում (Yeni çağ, 2021): Բացի այդ, նախատեսվում է նաև կառուցվածքային և կազմակերպչական փոփոխություններ իրականացնել Նախիջևանի Առանձին համազորային բանակում (ՆԱՀԲ): Հաշվի առնելով Թուրքիայի և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև ցամաքային կապի առկայությունը, ՆԱՀԲ-ի վրա ավանդաբար ավելի մեծ է եղել և է Թուրքիայի ռազմաքաղաքական ազդեցությունը:[33] Տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ գնալով ավելի ինտենսիվ են դարձել Թուրքիայի հետ ՆԱՀԲ համատեղ զորավարժությունները, իսկ դրա հեռահաղորդակցության և կապի ամբողջ համակարգի արդիականացումը իրականացվել է Թուրքիայի գործուն աջակցությամբ և դրանք թուրքական համակարգի հետ ինտեգրելով (Հովսեփյան, 2018):

Ընդհանրապես, երկու երկրների ռազմական ինտեգրացիայի շուրջ հասարակական-քաղաքական խոսույթում ուշագրավ է մի կետ, ըստ որի՝ Հեյդար Ալիևի՝ 1993 թ. ձևակերպած «մեկ ազգ, երկու պետություն» բանաձևից պետք է անցում կատարվի «մեկ ազգ, մեկ բանակ» բանաձևի: Թեև այս բանաձևի մասին առաջին անգամ 2013 թ. օգոստոսին խոսել է Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Զահիդ Օրուջը (մինչև 2019 թ. «Ana Vətən» կուսակցություն, 2019-ից՝ անկուսակցական) (Milli, 2013), սակայն այն ակտիվ շրջանառության մեջ է մտել հատկապես 2020–2022 թթ., երբ «մեկ ազգ, մեկ բանակ» հայեցակարգին անցման մասին խոսել են նաև թյուրքականության գաղափարախոսության կրող

[33] ՆԱՀԲ այսպես կոչված խնամակալությունը դրված է Թուրքիայի ցամաքային ուժերի 3-րդ բանակի հրամանատարության վրա (Hovsepyan & Tonoyan, 2024):

ադրբեջանցի հասարակական-քաղաքական գործիչներ Ռաուֆ Արիֆօղլուն («Մուսավաթ» կուսակցության նախկին անդամ, «Yeni Musavat» թերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր), Ֆազիլ Մուսթաֆան (Great Order Party կուսակցության առաջնորդ, պատգամավոր) (Dünya İnformasiya Agentliyi, 2020), Սյուլիադդին Աքբարը (Azerbaijan Democrat Party համահիմնադիր) (Dünya İnformasiya Agentliyi, 2020), նեօսմանականությունը պաշտոնապես իր հիմնադրած կուսակցության գաղափարախոսություն հռչակած Թուրալ Աբբասլին (Ağ Party հիմնադիր և գործող առաջնորդ) (Dünya İnformasiya Agentliyi, 2020), Ազայ Գուլիևը (անկուսակցական պատգամավոր) (Fact Azərbaycan, 2024), ինչպես նաև Ադրբեջանում Թուրքիայի նախկին դեսպան Հուլուսի Քըլըջը (Kiliç, 2021):

Արդյունքում, 2020 թ. պատերազմի շնորհիվ՝ Թուրքիան ապահովել է ռազմաքաղաքական լրջագույն ազդեցություն Ադրբեջանում և ստացել հնարավորություն՝ այժմ արդեն ընդգծված պրոթուրքական տրամադրություններով ադրբեջանական հասարակության շրջանում ինքնության տրասֆորմատիվ փոփոխությունների արագացման և թյուրքականության կորսված դիրքերի վերականգնման նոր մեկնարկ տալու համար (Hovsepyan & Tonoyan, 2024): Պատահական չէր, որ 2021 թ. դեկտեմբերի 11-ին Թուրքիայի պաշտպանության նախարար Հուլուսի Աքարը հաղթանակի օրվա իր շնորհավորանքն ուղղել է ոչ թե «ադրբեջանցիներին», այլ «Ադրբեջանի թուրքերին»՝ բառացիորեն ասելով. «*Ադրբեջանի թուրքերը 44 օր տևած և հաղթանակով ավարտված «Մեկ հայրենիք» գործողությամբ վերջ տվեցին 30-ամյա բռնազավթմանը*» (APA informasiya agentliyi, 2021):

Միաժամանակ, վերջին պատերազմից հետո ադրբեջանական հասարակության շրջանում ինքնության մակարդակում թուրքերի հետ նույնացման գործընթացի արագացումը և խորացումը հանգեցրել է այդ հասարակության ներսում, այսպես կոչված, «փոքր եղբոր սindրոմի» բյուրեղացման: Սրա համատեքստում պետք է բացատրել այն փաստը, որ հաճախադեպ են դարձել Ադրբեջանի քաղաքական դաշտի ակտիվ դերակատարների՝

թուրքերենով խոսելու փորձերը, այն դեպքում երբ վերջիններս նորմալ չեն տիրապետում թուրքերենին, և թուրքերին հաճոյանալու այդ երևույթը ադրբեջանցի գրող Սեյմուր Բայջանը անվանում է «փոքր եղբոր ախտանիշ» (Baycan, 2022):

Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերություններ

ԻԻՀ հետ Ադրբեջանի հարաբերությունները հետխորհրդային շրջանի տարբեր ժամանակահատվածներում թեև ունեցել են տարբեր ընթացք (բացահայտ թշնամականից մինչև սերտ համագործակցային), սակայն, ընդհանուր առմամբ, առկա են մի շարք գործոններ, որոնք այդ հարաբերություններում հակամարտածին են:[34] Դրանցից առաջինը վերաբերում է կրոնական գործոնին: Հետխորհրդային ողջ շրջանում Իրանն Ադրբեջանի տարածքում վարել է կրոնական փափուկ ուժի քաղաքականություն՝ հենվելով այն հանգամանքի վրա, որ այդ պետության բնակչության մեծամասնությունը շիա մուսուլմաններ են:[35] Իր հերթին, Ադրբեջանի քաղաքական վերնախավի համար Իրանի կառավարման համակարգի թեոկրատական բնույթը եղել է մշտապես սպառնալիքի աղբյուր, և Ադրբեջանում առկա իրանաֆոբիան սնուցող գործոններից մեկը հենց դա է (Տոնոյան, 2021): Ադրբեջանի քաղաքական վերնախավի տարբեր ներկայացուցիչներ ոչ մեկ անգամ են հայտարարել, որ ԻԻՀ-ն նպատակ ունի ԱՀ-ում իրականացնել պետական հեղաշրջում, ստեղծել այնտեղ իսլամական պետություն և հաստատել կառավարման այն համակարգը, որը գործում է Իրանում:

Հակամարտածին մեկ այլ գործոն է եղել և կա անջատողականությունը, որի աջակցության մեջ այս պետությունները ժամա-

[34] Հետխորհրդային շրջանում Իրան-Ադրբեջան հարաբերությունների բնույթի և առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս Իսրայելյան 2023, Արցախյան 2020 թ. պատերազմին հաջորդած ժամանակահատվածի համար՝ Kızılyurt 2023:

[35] Ադրբեջանի նկատմամբ ԻԻՀ փափուկ ուժի քաղաքականության մասին տե՛ս Valiyev 2017; Mozaffari & Akbar 2022:

նակ առ ժամանակ մեղադրում են միմյանց: Ադրբեջանում, որպես ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունից մնացած ժառանգություն, Իրանի հյուսիս-արևմտյան թյուրքախոս տարածքները (պատմական Ատրպատական) անվանում են Հարավային Ադրբեջան, համարում «պատմական Ադրբեջանի» մի հատված, իսկ այդ տարածքների բնակիչներին՝ ադրբեջանցիներ: Այդ քարոզչությունը հատկապես սուր է եղել պանթյուրքականության ջատագով Էլչիբեյի կառավարման շրջանում և պատճառ դարձել Իրանի հետ հարաբերությունների լարվածության, սակայն տարբեր դրսևորումներով, ավելի քողարկված և հաճախ ոչ շատ բացահայտ, շարունակվել է նաև Հեյդար և Իլհամ Ալիևների կառավարման շրջաններում:

Իր հերթին, Ադրբեջանը Իրանից զգուշանում է ոչ միայն կրոնական քարոզչության, այլ նաև Ադրբեջանի իրանախոս ժողովուրդների (թալիշներ, թաթեր, քրդեր) շրջանում հնարավոր անջատողականության հովանավորման պատճառով: Այդ խնդիրը հատկապես սուր է եղել թալիշների դեպքում, որոնց կոմպակտ բնակության գոտին Ադրբեջանի հարավային վարչական շրջաններն են՝ անմիջապես սահմանակից Իրանի Իսլամական Հանրապետության հետ, և որոնց բնակիչները հայտնի են որպես ջերմեռանդ շիա հավատացյալներ:

Երկու երկրների հարաբերություններում հակամարտածին մեկ այլ գործոն է Կասպից ծովի կարգավիճակի հարցը, որը թեև վերջին տարիներին չի ունենում սուր դրսևորումներ, սակայն հատկապես 2000-ականների սկզբին եղել է այդ երկրների հարաբերություններում լարվածություն առաջացնող բավականին լուրջ գործոն:

Ավանդաբար, երկու երկրների հարաբերությունների վրա բացասաբար են ազդել և ազդում նաև այդ պետությունների հարաբերություններն այն երկրների հետ, որոնք եղել են կողմերից մեկի համար բացահայտ հակառակորդ կամ թշնամի: Համապատասխանաբար, Հայաստանի հետ ԻԻՀ հարաբերությունները, և Իսրայելի հետ Ադրբեջանի հարաբերությունները լարվածության հիմք

են եղել ԱՀ-ԻԻՀ հարաբերություններում՝ հետխորհրդային ողջ շրջանում: Արցախյան առաջին պատերազմից հետո հատկապես Ադրբեջանում տարվող հակաիրանական քարոզչության մեջ մեծ տեղ է ունեցել այն թեզերի տարածումը, համաձայն որոնց՝ ԻԻՀ-ն աջակցել է ՀՀ-ին այդ պատերազմում, մասնավորապես, ի տարբերություն Թուրքիայի՝ չի փակել ՀՀ հետ իր սահմանը և տրամադրել է նաև վառելանյութ, առանց որի հայկական կողմը, իբր, ի վիճակի չէր լինելու հաղթել այդ պատերազմում: Այս համատեքստում Ադրբեջանում տարվող հակաիրանական քարոզչության մեջ մեծապես օգտագործվել է նաև Արցախի առաջին պատերազմի ժամանակ ԻԻՀ միջնորդական առաքելության փորձը և պետությունների ղեկավարների մակարդակում Սպահանում տեղի ունեցած եռակողմ (ԻԻՀ, ՀՀ, Ադրբեջան) հանդիպման օրը Շուշիի «անկումը» (Իսկանդարյան, 2016):

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները շարունակում են մնալ լարվածության օջախ և հակամարտածին գործոն ԻԻՀ-ԱՀ հարաբերություններում նաև 2020 թ. պատերազմից հետո: ԻԻՀ դիրքորոշումը ՀՀ-ԻԻՀ սահմանների առնչությամբ, մասնավորապես բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակներում արված հայտարարություններն առ այն, որ պետությունների միջազգայնորեն ճանաչված սահմանները ենթակա չեն փոփոխության, Ադրբեջանում ընկալվում է որպես խոչընդոտ իրենց կողմից պահանջվող այսպես կոչված «Զանգեզուրի միջանքի» կյանքի կոչման:

Առհասարակ, 2020 թ. պատերազմից հետո, երբ ԻԻՀ-ն ակտիվացրել է հարավկովկասյան իր քաղաքականությունը և ավելի նախաձեռնող է դարձել ՀՀ հետ հարաբերությունների խորացման հարցում, ավելի առարկայական քայլեր է ձեռնարկում ՀՀ սահմանների դեմ հնարավոր սադրանքները բացառելու ուղղությամբ (Ադրբեջանի հետ սահմանների երկայնքով զորավարժությունների անցկացում, բարձրաստիճան պաշտոնյաների և ռազմական գործիչների մակարդակով կոշտ հայտարարությունների տարածում և այլն), Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը ևս ակտիվացրել է իր հակաիրանական քարոզչությունը, սուր և կոշտ

հայտարարությունները ԻԻՀ հասցեին: Դրա համար առիթ է դարձել նաև ԻԻՀ-ում ԱՀ դեսպանատան դեմ տեղի ունեցած զինված հարձակումը, որից հետո ԱՀ-ն ժամանակավորապես փակել էր իր դեսպանությունը Թեհրանում և հետ կանչել դիվանագիտական բոլոր աշխատակիցներին:[36]

Ադրբեջան–Իսրայել հարաբերություններն, իրենց հերթին, հակամարտածին գործոն են եղել և շարունակում են մնալ ԻԻՀ–Ադրբեջան հարաբերություններում: ԻԻՀ-ն շարունակում է մեղադրել Ադրբեջանին՝ Իսրայելի հետ հարաբերությունների ամրապնդման և զարգացման մեջ՝ հայտարարելով, որ Ադրբեջանի տարածքը դարձել է «հետնաբակ» Իսրայելի հատուկ ծառայությունների համար: ԻԻՀ համար իր հարևանությամբ իսրայելական ցանկացած ներկայություն դիտարկվում է որպես անվտանգային սպառնալիք, և պատահական չէ, որ 2020 թ. պատերազմից հետո այդ սպառնալիքը ոչ միայն չի նվազել, այլ մեծացել է՝ ի հաշիվ նրա, որ Արցախից բռնազավթված տարածքներում կա իսրայելական ներկայություն, ըստ իրանական աղբյուրների (Irdiplomacy, 2023):

Ադրբեջանի հետ սահմանների երկայնքով ԻՀՊԿ զորավարժությունների անցկացումը, որոնք ԻԻՀ-ում ներկայացվում էին որպես «պատմության մեջ առաջին անգամ՝ վերջին 30 տարիների ընթացքում», դրանցից մեկի ժամանակ ռազմատեխնիկայի տեղաշարժի ապահովման համար Արաքս գետի վրա կամրջի նետումը, ինչպես նաև ԻՀՊԿ և բանակի հրամանատարության կոշտ հայտարարությունները, թույլ են տալիս զգուշավոր ենթադրություն անել առ այն, որ Էբրահիմ Ռայիսիի նախագահության շրջանում (2021 թ. ամառվանից մինչև 2024 թ. գարուն), ԻԻՀ-ն որդեգրել է ԱՀ նկատմամբ փափուկ ուժից դեպի կոշտ ուժի անցման քաղաքականություն, որի շարունակականությունը ԻԻՀ-ում Մ. Փեզեշքիանի գլխավորությամբ 2024 թ. հուլիսին ձևավորված նոր կառավարության շրջանում կարող է ընդհատվել: Պատճառներից մեկը այն

[36] Թեհրանում Ադրբեջանի դեսպանատունը վերաբացվել է և վերսկսել իր գործունեությունը 2024 թ. հուլիսին:

պատմական փորձն է, որը ցույց է տալիս, որ Ադրբեջան-Իրան հարաբերությունները ԻԻՀ-ում բարեփոխիչների կառավարման շրջաններում ունենում են ավելի դրական և համագործակցային ընթացք, տնտեսական ոլորտում խորացման միտում՝ ի տարբերություն պահպանողականների իշխանության տարիների, երբ տեղի է ունենում երկկողմ հարաբերությունների լարում և հակամարտային միջավայրի ձևավորում:

Ընդհանուր առմամբ, 2020 թ. պատերազմից և դեսպանատան դեմ տեղի ունեցած զինված հարձակումից հետո ադրբեջանական պետական հեռուստաալիքները և լրատվամիջոցները դարձել են ավելի բացահայտ և ագրեսիվ՝ հակաիրանական քարոզչության մեջ, իսկ նախագահ Իլհամ Ալիևը հակաիրանական իր հայտարարություններում և անուղղակի ակնարկներում անցել է այնպիսի տոնայնության, որը աննախադեպ է իր կառավարման ավելի քան 20 տարիների ընթացքի համար:

Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա բացասաբար է ազդում թերևս նաև Հարավային Կովկասում և հատկապես Ադրբեջանի տարածքում ազդեցությունների համար ընթացող ԻԻՀ-Թուրքիա ավանդական մրցակցությունը, բայց և հատկապես 2020 թ. պատերազմից հետո Թուրքիայի ստացած բացահայտ առավելությունը, այդ թվում նաև ադրբեջանական հասարակության ընկալումներում:

Իսրայելի հետ հարաբերություններ

Ըստ Ադրբեջանի ԱԳՆ կայքի՝ 1991 թ. դեկտեմբերի 25-ին Իսրայելը ճանաչել է Ադրբեջանի անկախությունը, և 1992 թ. ապրիլի 7-ին երկու երկրների միջև հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ: Ադրբեջանի ԱԳՆ կայքում նաև նշված է, որ Ադրբեջանի և Իսրայելի միջև ստորագրվել է տարբեր ոլորտներում համագործակցության 13 փաստաթուղթ, առկա են միջխորհրդարանական հարաբերություններ և այլն: Ըստ նույն պաշտոնական աղբյուրի՝ Ադրբեջանում գործում են հրեական մոտ 20 սոցիալ-մշակութային և բարեգործական կազմակերպություններ,

այդ թվում և «Հրեական տունը», «Ադրբեջան-Իսրայել» ընկերությունը, «Ադրբեջանի հրեա կանանց ասոցիացիան», «Հրեական մշակութային կենտրոնը», «Սոկնուտ» միջազգային հրեական կազմակերպության ադրբեջանական մասնաճյուղը և այլն (MFA, 2024g):

Սերտ են հարաբերությունները Ադրբեջանի և Իսրայելի միջև հատկապես տնտեսական և ռազմական ոլորտներում: Իսրայելը հանդիսանում է Ադրբեջանից արտահանվող նավթի խոշոր գնորդներից, իսկ Ադրբեջանն իր հերթին իսրայելական արտադրության ռազմաարդյունաբերական արտադրանքների, այդ թվում և ԱԹՍ-ների խոշոր գնորդ է:

Իսրայելի համար մեծ է Ադրբեջանի կարևորությունը՝ որպես Իրանի հետ ցամաքային և ծովային սահման ունեցող իսլամադավան, ոչ արաբական պետության, իսկ Ադրբեջանի համար Իսրայելը կարևոր է թե՛ որպես ռազմական որակյալ գնումների համար թիրախային երկիր, թե՛ որպես պետություն, որի սփյուռքի լոբբինգը որոշակի իրավիճակներում կարող է ծառայել հայկական սփյուռքի գործողություններին հակազդմանը և ադրբեջանական շահերի առաջմղմանը:

2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանը չի դադարեցրել իր ռազմական գնումներն այդ երկրից և շարունակում է զարգացնել հարաբերությունները ինչպես տարբեր այլ, այնպես էլ ռազմական ոլորտում: Ավելին, նշված պատերազմից հետո ակտիվացել է Ադրբեջան-Իսրայել համագործակցությունը հատկապես կիբերանվտանգության ոլորտում (Report, 2023b): Բացի այդ, Իսրայելը տարբեր ձևաչափերով մասնակցություն ունի Արցախից բռնազավթված տարածքների վերակառուցման և նոր ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքներում (Irdiplomacy, 2023):

Հատկանշական է այն, որ Իսրայել-Ադրբեջան հարաբերությունների ոչ բոլոր մանրամասներն են բաց և թափանցիկ, և պատահական չէ, որ ժամանակին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը այդ հարաբերություններն անվանել է «սառցաբեկոր», որի 9/10-րդ մասը ջրի տակ է և չի երևում (Lindenstrauss, 2015):

Արցախյան հակամարտության համատեքստում Իսրայելը հակամարտության թե՛ ակտիվ, թե՛ պասիվ փուլերում բացահայտ աջակցել է Ադրբեջանին, որը պայմանավորված է եղել ոչ միայն ռազմական և այլ ոլորտներում համագործակցությամբ, այլ նաև այդ պետության՝ Իրանի հանդեպ զբաղեցրած աշխարհագրական դիրքով, նաև վերջին պատերազմի արդյունքներով այդ պետության՝ Իրանի հետ ունեցած փաստացի սահմանների ընդլայնմամբ՝ ի հաշիվ Արցախի և հարակից տարածքների (մերձարաքսյան) բռնազավթման (Ben Aharon, 2024):

2020 թ. պատերազմից հետո, օգտագործելով ԻԻՀ հետ լարված հարաբերությունների ֆոնը, ինչպես նաև ԻԻՀ-ում Ադրբեջանի դեսպանատան դեմ տեղի ունեցած զինված հարձակման առիթը, Ադրբեջանը վերջապես Իսրայելում պաշտոնապես հիմնեց դեսպանատուն:[37]

ՌԴ հետ հարաբերություններ

Ռուսաստան-Ադրբեջան հարաբերությունները եղել են բարդ և բազմակողմանի, որոնք ազդվել են և աժմ էլ շարունակում են ազդվել քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ գործոններից:[38] Մինչև 2020 թ. պատերազմը երկու երկրների միջև հարաբերություններին հատուկ էր զգույշ համագործակցությունը, որի հիմքում ընկած էր նրանց խորհրդային ընդհանուր պատմությունը՝ որպես փոխվստահության աղբյուր, և տարածաշրջանային կայունությունը պահպանելու փոխշահագրգռությունը՝ որպես փոխհամագործակցության համար կարևոր պայման: Այնուամենայնիվ, այս պետությունների հարաբերությունները զգալի դինամիկ զարգացում են ապրել հատկապես 2020 թ. Արցախյան պատերազմից

[37] Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների մասին տե՛ս նաև Ismayilov 2013; Souleimanov et al. 2014; Göksel 2015; **Lindenstrauss** 2015; Cohen & Lev 2021; Traub et al. 2024:

[38] ՌԴ ուղղությամբ Ադրբեջանի քաղաքականության մասին տե՛ս Valiyev & Mamishova 2019, դրա փոփոխությունների և Արցախյան հիմնախնդրի վրա դրանց ազդեցության մասին՝ Jović-Lazić & Bošković 2024.

և դրան դրան հաջորդած աշխարհաքաղաքական տեղաշարժերից հետո:

Մինչև 2020 թ. ՌԴ–ն և Ադրբեջանը պահպանում էին պրագմատիկ հարաբերություններ, որոնք բնութագրվում էին տնտեսական համագործակցությամբ և դիվանագիտական փոխգործակցությամբ: 2008 թ. ռուս–վրացական պատերազմից հետո աստիճանաբար ավելի են սերտացել հարաբերությունները ՌԴ և Ադրբեջանի միջև, և Ռուսաստանը, մոտավորապես հենց այդ շրջանից սկսած, անհամեմատ մեծացրել է իր սպառազինային մատակարարումները դեպի Ադրբեջան՝ դառնալով վերջինի համար զենքի հիմնական մատակարար:

Չնայած պրագմատիկ համագործակցության դրական ընթացքին, այնուամենայնիվ, Արցախյան հիմնահարցը մշտապես եղել է լարվածության որոշակի կետ ռուս–ադրբեջանական հարաբերություններում, ինչպես նաև Ադրբեջանի հասարակության շրջանում հակառուսական քարոզչության համար շատ արդյունավետ միջոց: Այդ հակամարտությունում առկա ստատուս-քվոն և ՌԴ ունեցած դերը դրանում՝ որպես սառեցված հակամարտություն, ստիպել են Ադրբեջանին՝ զգուշանալ ՌԴ–ից բարձր կախվածության մեջ հայտնվելուց, որը Ադրբեջանի ռազմաքաղաքական վերնախավի ընկալումներով կարող էր հանգեցնել սեփական ինքնիշխանության ու ռազմավարական ինքնավարության սահմանների կրճատման:

Իրավիճակը կտրուկ փոխվել է 2020 թվականին՝ Արցախյան երկրորդ պատերազմից հետո, երբ Ադրբեջանը ՌԴ հետ հարաբերություններում դարձել է ավելի անկաշկանդ և համագործակցության ավելի հակված: Ավելին, ռուս–ուկրաինական պատերազմի մեկնարկի օրը Ադրբեջանը ռազմավարական դաշինքի համաձայնագիր է կնքել ՌԴ հետ, իսկ հընթացս կարողացել առանց ՌԴ առարկության բռնազավթել ամբողջ Արցախը և ապա հեռացնել նաև ՌԴ խաղաղապահներին (Al Jazeera, 2024)՝ Աղդամի ռուս-թուրքական մոնիտորինգային կենտրոնի զինծառայողների հետ միասին (Caucasus Watch, 2024):

2020 թ. պատերազմից հետո ՌԴ–Ադրբեջան հարաբերությունների սերտացումը և համագործակցության բացահայտ խորացումը պայմանավորված է մի քանի հանգամանքով, որոնց թվում առաջնային են հետևյալները՝

- 2020 թ. պատերազմից հետո մեծացել է Ադրբեջանի տարածաշրջանային կշիռը, և վերջինս հավակնում է փոքր պետության կարգավիճակից անցման դեպի միջին պետության կարգավիճակի: Այդ առարկայական փոփոխությունը ազդել է նաև Ադրբեջանի նկատմամբ ՌԴ քաղաքականության վրա և պատճառ դարձել որոշակի վերանայումների:

- Պատերազմից և դրան հաջորդած որոշակի զարգացումներից հետո որոշակիորեն լարվել են ՀՀ–ՌԴ հարաբերությունները, և հատկապես ՀՀ սահմանների նկատմամբ ադրբեջանական ռազմական սադրանքների հետևանքով ԵՄ դիտորդական առաքելության՝ ՀՀ-ում ժամանակավորապես տեղակայվելուց հետո, ՌԴ–ում է՛լ ավելի են հակվել ԱՀ հետ այլ որակի հարաբերությունների կառուցմանը՝ դիտարկելով այդ պետությունը մի կողմից որպես ՀՀ-ին ճնշելու միջոց, մի կողմից հակազդելու համար ՀՀ-ում մեծացող արևմտյան ազդեցությունը:

- 2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանում և ադրբեջանական հասարակության շրջանում Թուրքիայի ազդեցության աննախադեպ աճը հակում է Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությանը դեպի այդ ազդեցությունը հակակշռելու համար գործուն քայլերի մշակման, և թերևս նաև դրանով է պայմանավորված ՌԴ հետ հարաբերությունների խորացումը և այդ պետության հետ ռազմավարական դաշնակից դառնալը:

- ՌԴ հետ ԱՀ հարաբերությունների խորացմանն ու ընդլայնմանը նպաստող հանգամանք է նաև Արևմուտքի հետ ԱՀ հարաբերությունների որոշակի վատթարացումը հատկապես 2023 թ. սեպտեմբերին Արցախի դեմ իրականացված ռազմական գործողություններից և այն վերջնականապես հայաթափելուց հետո:

- Արևմուտքի ճնշումներից բացի, հատկապես 2021–2023 թթ. ընթացքում, լարված են եղել նաև Իրանի հետ հարաբերություննե-

րը, և այդ պետության ճնշումների հակակշռումը ևս Ադրբեջանը նպատակահարմար է տեսել իրականացնել ոչ թե միայն ԹՀ, այլ միաժամանակ նաև ՌԴ միջոցով:

- Ռուս-ուկրաինական պատերազմից հետո ՌԴ-Ադրբեջան հարաբերություններում է՛լ ավելի կարևոր տեղ ունի տնտեսական համագործակցությունը, քանի որ պատժամիջոցների տակ հայտնված ՌԴ համար Ադրբեջանը ծառայում է որպես պատժամիջոցների շրջանցման միջոց հատկապես էներգակիրների արտահանման ոլորտում, և այս հանգամանքը ևս, մի կողմից մեծացրել է ԱՀ նշանակալիությունը ՌԴ համար, մյուս կողմից նպաստել երկկողմ հարաբերությունների ավելի առարկայական սերտացման:

Եզրակացություն

- Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը էական տեղաշարժերի է ենթարկվել հատկապես հետխորհրդային առաջին շրջանում, երբ թյուրքականության գաղափարախոս Էլչիբեյին փոխարինելու է եկել ադրբեջանականության գաղափարախոս Հեյդար Ալիևը:

- Ի տարբերություն Էլչիբեյի, որն իր արտաքին քաղաքականության մեջ փորձում էր առաջնորդվել միավեկտոր մոտեցմամբ՝ հենվելով միայն Թուրքիայի վրա, և արդյունքում վատթարացրեց հարաբերությունները ՌԴ և ԻԻՀ հետ, Հեյդար Ալիևը ավելի հավասարակշռված և տարածաշրջանային պետություններից ՌԴ և ԻԻՀ հետ ավելի զգուշավոր քաղաքականության վարման կողմնակից էր: Այդ առանձնահատկությունը դրսևորվել է նրա նախագահության երկու շրջաններում էլ և, մեծ հաշվով, շարունակվել նաև որդու՝ Իլհամ Ալիևի նախագահության առաջին երեք շրջաններում:

- Թուրքիայի արտաքին քաղաքականության փոփոխություններն ու վերանայումները, մասնավորապես՝ արևմտյան ինտեգրացիայի քաղաքականությունից աստիճանական անցումը դեպի ավելի ծավալապաշտական և ԹՀ սահմաններից դուրս ազդեցությունների ընդլայնման՝ էրդողանական շրջանում, դարձել է

հնարավորության պատուհան Ադրբեջանի համար՝ Արցախյան հիմնահարցը ռազմական ճանապարհով լուծելու և այդ հարցում Թուրքիայի ակտիվ աջակցությունն ստանալու համար:

- 2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանում և ադրբեջանական հասարակության շրջանում աննախադեպ մեծացել է Թուրքիայի ազդեցությունը, տիրապետող է դարձել թյուրքականության գաղափարախոսությունը, որի պայմաններում, մասնավորապես, ներքնից դեպի վերև բարձրացող թյուրքականությունը ստիպում է Ադրբեջանի ներկայիս իշխանությանը գնալ որոշ վերանայումների իր արտաքին քաղաքականության մեջ:

- Մասնակիորեն նշված մարտահրավերով է պայմանավորված 2020 թ. պատերազմից արդեն 3 տարի անց Ադրբեջանի և Ռուսաստանի միջև հարաբերությունների կտրուկ սերտացումը: Ադրբեջանի ռազմաքաղաքական վերնախավի համար ՌԴ-ն դարձել է հարմար հենարան թուրքական մեծացող ազդեցությունները հակակշռելու համար:

- 2020 թ. պատերազմից հետո, հատկապես 2021–2023 թթ. ընթացքում, բարձր լարվածություն է արձանագրվել Ադրբեջան-Իրան հարաբերություններում, որը հետևանք է Հարավային Կովկասում մի կողմից Թուրքիայի դերի կտրուկ բարձրացման, մյուս կողմից հայկական կողմի պարտության հետևանքով ԻԻՀ-ՀՀ սահմանի վտանգվածության և դրա նկատմամբ Ադրբեջանի դրսևորած հավակնությունների և նախաձեռնած սադրանքների:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

Մենագրություններ

1. ***Իսկանդարյան (2016),*** Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991–2014 թթ.), «Արման Ասմանգուլյան» ԱՁ տպագրատուն, Երևան, 2016, էջ 33–35:
2. ***Իսրայելյան (2023),*** Իսրայելյան Ա., Իրան-Ադրբեջան հարաբերությունները քսանամյա պատմափուլում (2003–2023), Քոփի Փրինթ, Երևան, 2023, 286 էջ:

3. ***Փաշայան (2003),*** Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպություն. նպատակները, կառուցվածքը, դիրքորոշումը Ղարաբաղյան հարցի նկատմամբ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2003, 248 էջ:
4. ***Փաշայան (2014),*** Փաշայան Ա., Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, «Նորավանք» ԳՀԿ, Երևան, 2014, էջ 135–159:
5. ***Cornell (2011),*** Cornell S., Azerbaijan since Independence, M. E. Sharpe, Armonk – New York, 2011, p. 70, 85.
6. ***Ismayilov & Graham (2016),*** Ismayilov M., Graham Norman A. (eds.), Turkish-Azerbaijani relations. One nation – two states? Routledge, London & New York, 2016, 137–139.

Հոդվածներ

7. ***Հովսեփյան (2018),*** Հովսեփյան Լ., Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականության փոխակերպումները. վերագնահատելով Հայաստանի անվտանգության մարտահրավերները // Հայկական բանակ, № 4(98), 2018, էջ 33–48:
8. ***Վարդանյան և այլք (2018),*** Վարդանյան Ժ., Սուքիասյան Ս., Հովհաննիսյան Տ., Ադրբեջանի շիաների ըմբոստ ավանը երեկ և այսօր // Ադրբեջան. Ռազմաքաղաքական հանդես, № 1, խմբ.՝ Կարեն Վրթանեսյան, Զորակն ԳԿԵՀ, Երևան, 2048, էջ 141–166:
9. ***Տոնոյան, (2019),*** Տոնոյան Ա., Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. Կարգախո՞ս, թե՞ չափելի արժեք // Ժամանակակից ժողովրդավարության համախմբման մարտահրավերները, ԺՄԻ համեմատական վերլուծություն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ.՝ Արուսյակ Ալեքսանյան, ԵՊՀ հրատակչություն, Երևան, էջ 101–144:
10. ***Տոնոյան (2021),*** Տոնոյան Ա., Մի քանի դիտարկում Ադրբեջանում իրանաֆոբիայի դրսևորումների շուրջ // Դրօշակ, 75-րդ տարի, հուլիս, № 7 (1653), 2021, էջ 23–25:
11. ***Փաշայան (2021),*** Փաշայան Ա., Իսլամական գործոնը Արցախյան 2020 թ. պատերազմի համատեքստում. հայկական աշխարհի դեմ Ադրբեջանի քարոզչության գործիքակազմը // Գիտական Արցախ, № 4(11), 2021, էջ 250-259, doi.org/10.52063/25792652-2021.4-250:
12. ***Аватков (2020),*** Аватков В., Основы внешнеполитического курса Азербайджанской Республики на современном этапе, Контуры глобальных трансформаций: политика, экономика, право. Том 13/3, 2020, с. 118–139, doi.org/10.23932/2542-0240-2020-13-3-7.

13. ***Ben Aharon (2024),*** Ben Aharon E., 'Profiles in intelligence': an interview with 8th Mossad chief Danny Yatom, Intelligence and National Security, 2024, pp. 1–15. https://doi.org/10.1080/02684527.2024.2332030.
14. ***Broers & Mahmudlu (2023),*** Broers L., Mahmudlu C., Civic Dominion: Nation-Building in Post-Soviet Azerbaijan over 25 Years of Independence, Nationalities Papers, Vol. 51, Issue 1, 2023, pp. 47–63, doi.org/10.1017/nps.2021.92.
15. ***Cohen & Lev (2021),*** Cohen R. A., Lev T., Azerbaijan's State Building Power as a Reflection of Israel–Iran Hostility, British Journal of Middle Eastern Studies, Vol. 50(1), 2021, pp. 107–122, doi:10.1080/13530194.2021.1937516.
16. ***Ergun (2022),*** Ergun A., Citizenship, National Identity, and Nation-Building in Azerbaijan: Between the Legacy of the Past and the Spirit of Independence, Nationalities Papers, Vol. 50, Issue 4, 2022, 813–830. doi.org/10.1017/nps.2020.81.
17. ***Ghahriyan (2024),*** Ghahriyan M., Torosyan V., Harutyunyan A., Azerbaijan's Power Plays: Analyzing Baku's Policy towards Armenia and Nagorno-Karabakh after 2020, Small Wars & Insurgencies, Vol. 35, Issue 5, 2024, pp. 747–76, doi.org/10.1080/09592318.2024.2336991.
18. ***Goyushov (2021),*** Goyushov A., A Brief Description of Azerbaijani Nationalism from its Inception to Today, Baku Research Institute, 06.10.2021, https://bakuresearchinstitute.org/en/a-brief-description-of-azerbaijani-nationalism-from-its-inception-to-today, (31.05.2024).
19. ***Göksel (2015),*** Göksel O., Beyond Countering Iran: A Political Economy of Azerbaijan-Israel Relations, British Journal of Middle Eastern Studies, Vol. 42(4), 2015, pp. 655–675, doi:10.1080/13530194.2015. 1048973.
20. ***Guliyeva (2022),*** Guliyeva N., The evolution of national identity and nationalism in Azerbaijan (1900-2018). A thesis submitted to the Graduate School of Social Sciences of Middle Eastern Technical University, 2022.
21. ***Hovsepyan & Tonoyan (2024),*** Hovsepyan L., Tonoyan A. A., From Alliance to 'Soft Conquest': The Anatomy of the Turkish-Azerbaijani Military Alliance before and after the 2020 Nagorno-Karabakh War, Small Wars & Insurgencies, Vol. 35(4), 2024, pp. 622–655. doi:10.1080/09592318.2024.2312957.
22. ***Ismayilov (2013),*** Ismayilov E., Israel and Azerbaijan: The Evolution of a Strategic Partnership, Israel Journal of Foreign Affairs, Vol. 7(1), 2013, pp. 69–76, doi:10.1080/23739770.2013.11446535.
23. ***Ismayilov (2020),*** Ismayilov K., "Rethinking Azerbaijan's foreign policy strategies vis-à-vis hegemony-seeking Russia, 1991–2017", In: Shafiyev,

Farid (ed), Azerbaijan's geopolitical landscape. Contemporary issues, 1991–2018, Charles University: Carolinum Press, 2020, pp. 28–56.
24. ***Jović-Lazić & Bošković (2024),*** Jović-Lazić A., Bošković S., Azerbaijan's Foreign Policy Positioning towards Russia and its Impact on the Second Nagorno-Karabakh War: A Hedging Strategy, The Review of International Affairs, Vol. 75, 2024, pp. 55–82, https://doi.org/10.18485/iipe_ria.2024.75.1190.3.
25. ***Kızılyurt (2023),*** Kızılyurt Ö., The Formative Years of Iran's 'Jihadi Field Diplomacy' in Azerbaijan, Politics, Religion & Ideology, Vol. 24(3), 2023, pp. 398–425, doi:10.1080/21567689.2023.2262392.
26. ***Lindenstrauss (2015),*** Lindenstrauss G., Israel-Azerbaijan: Despite the constraints, a special relationship, Strategic Assessment, Vol. 17(4), 2015, pp. 69–79.
27. ***Mahmudlu (2017),*** Mahmudlu C., Theorizing Nation Building in Azerbaijan. In Mammadli, Aliaga; Brauxe, Adeline & Mahmudlu, Ceyhun (eds), "Azerbaijani" and beyond, Perspectives on the construction of national identity, Verlag Dr. Köster, Berlin, 2017, pp. 124–150.
28. ***Marquardt (2011),*** Marquardt K., Framing language policy in post-Soviet Azerbaijan: political symbolism and interethnic harmony, Central Asian Survey, Vol. 30/2, 2011, pp. 181–196, doi.org/10.1080/02634937.2011.567067.
29. ***Mozaffari & Akbar (2022),*** Mozaffari A., Akbar A., Iran's Soft Power in Azerbaijan: Shifting Cultural Dynamics in the Post-Soviet Era, International Journal of Cultural Policy, Vol. 29(6), 2022, pp. 667–685, doi:10.1080/10286632.2022.2135706.
30. ***Souleimanov et al. (2014),*** Souleimanov E., Ehrmann M., Aliyev H., Focused on Iran? Exploring the Rationale behind the Strategic Relationship between Azerbaijan and Israel, Southeast European and Black Sea Studies, Vol. 14(4), 2014, pp. 471–88, doi:10.1080/14683857.2014.967945.
31. ***Tokluoglu (2005),*** Tokluoglu C., Definations of national identity, nationalism and ethnicity in post-Soviet Azerbaijan in the 1990s, Ethnic and Racial Studies, Vol. 28, Issue 4, 2005, 722–758. doi.org/10.1080/01419870500092951.
32. ***Tonoyan (2018),*** Tonoyan A., "The price of political stability of Azerbaijan: the opponents of democracy", In Aleksanyan, Arusyak (ed.), Political stability of newly independent countries under conditions of modernization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine, Moldova), YSU Press, Yerevan, 2018, pp. 86–121.

33. ***Traub et al. (2024),*** Traub D., Cohen R. A., Kertcher Ch., Azerbaijan's dual foreign policy strategy toward Israel: a realist alliance and a neoliberal knowledge-based economy cooperation, 2011–2022, Cogent Arts & Humanities, 11(1), 2024, https://doi.org/10.1080/23311983.2024.2335763.
34. ***Valiyev (2017),*** Valiyev A., Iranian soft power in Azerbaijan: does religion matter? In: Jödicke, Ansgar (ed.), Religion and Soft Power in the South Caucasus, Routledge, London & New York, pp. 85–104.
35. ***Valiyev & Mamishova (2019),*** Valiyev A., Mamishova N., Azerbaijan's Foreign Policy towards Russia since Independence: Compromise Achieved, Southeast European and Black Sea Studies, Vol. 19 (2), 2019, pp. 69–91, doi:10.1080/14683857.2019.1578053.
36. ***Yilmaz (2013),*** Yilmaz H., The Soviet Union and the Construction of Azerbaijani National Identity in the 1930s, Iranian Studies, Vol. 46, Issue 4, 2013, pp. 511–533, doi.org/10.1080/00210862.2013.784521.

Համացանցային հղումներ

37. ***ԱԳՆ (2012),*** Էդվարդ Նալբանդյանը ելույթ ունեցավ Չմիացած երկների արտգործնախարարների հանդիպմանը, 10.05.2012, ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, https://www.mfa.am/hy/press-releases/2012/05/10/nalbandian-nam/2940, (հսն. 04.05.2024):
38. ***Հովհաննիսյան (2020),*** Հովհաննիսյան Տ., Հուլիսյան մարտեր. պատճառները և հնարավոր հետևանքները, Օրբելի. վերլուծական-հետազոտական կենտրոն, 29.07.2020, https://orbeli.am/hy/post/517/2020-07-29/Հուլիսյան+մարտեր+պատճառները+և+հնարավոր+հետևանքները, (հսն. 05.06.2024):
39. ***Al Jazeera (2024),*** Russian peacekeepers start withdrawal from Azerbaijan's Nagorno-Karabakh, 17.04.2024, https://www.aljazeera.com/news/2024/4/17/russian-peacekeepers-start-withdrawal-from-azerbaijans-nagorno-karabakh, (Acc. 28.08.2024).
40. ***Anadolu Ajansı (2022),*** Azerbaycan ordusunun yeni gücü komandolar [Ադրբեջանական բանակի նոր ուժերը՝ կոմանդոները], 08.02.2022, https://www.aa.com.tr/tr/dunya/azerbaycan-ordusunun-yeni-gucu-komandolar/2496645, (Acc. 29.08.2024).
41. ***APA informasiya agentliyi (2021),*** Akar: "Türkiyə Azərbaycan Ordusunun modernizasiyasına dəstək verir" [Աքար. «Թուրքիան աջակցում է ադրբեջանական բանակի արդիականացմանը»], 11.12.2021, https://apa.az/az/herbi/akar-turkiye-azerbaycan-ordusunun-modernizasiyasina-destek-verir-675471, (Acc. 29.08.2024).

42. ***Arannews (2009),*** Bakının mərkəzində məscidi sökürlər [Բաքվի կենտրոնում քանդում են մզկիթը], 31.03.2009, http://arannews.com/News/11402/Bakının-mərkəzində-məscidi-sökürlər.html, (Acc. 28.08.2024).
43. ***Armenpress (2023a),*** ԱՄՆ Սենատը միաձայն ընդունել է Ադրբեջանին ամերիկյան ռազմական օժանդակությունն արգելափակող օրինագիծ, 17.11.2023, https://armenpress.am/hy/article/1124348, (հսն. 30.05.2024):
44. ***Armenpress (2023b),*** Հայաստանը պատրաստ է ճանաչել Ադրբեջանի 86.6 հազար քկմ տարածքային ամբողջականությունը, որը ներառում է ԼՂ-ն. Փաշինյան, 22.05.2023, https://armenpress.am/arm/news/1111461.html, (հսն. 04.06.2024):
45. ***Ayna (2023),*** Milli Məclisdə ABŞ tənqid atəşinə tutuldu - "Bayden bu sənədi imzalasa..." [Խորհրդարանում ԱՄՆ-ն խիստ քննադատության ենթարկվեց], 21.11.2023, https://ayna.az/milli-meclisde-abs-tenqid-atesine-tutuldu-bayden-bu-senedi-imzalasa, (Acc. 30.05.2024).
46. ***Azatutyun (2022),*** Սարգսյան Տ., Եվրամիությունն ու Ադրբեջանը էներգետիկ ոլորտում ռազմավարական գործընկերության փոխըմբռնման հուշագիր են ստորագրել, 18.07.2022, https://www.azatutyun.am/a/31948831.html, (հսն. 29.05.2024):
47. ***Baycan (2022),*** Seymur Baycan, Cəmil Həsənli ümumiləşdirilmiş obraz kimi [Ջամիլ Հասանլին՝ որպես հավաքական կերպար], 31.03.2022, https://azlogos.eu/cəmil-həsənli-umumiləsdirilmis-obraz-kimi/, (Acc. 29.08.2024).
48. ***Caucasus Watch (2024),*** Turkey-Russia joint monitoring centre in Aghdam officially closed, 26.04.2024, https://caucasuswatch.de/en/news/turkey-russia-joint-monitoring-centre-in-aghdam-officially-closed.html, (Acc. 28.05.2024).
49. ***Dünya İnformasiya Agentliyi (2020),*** Bir millət, bir ordu" tezisinə keçməliyik" – TƏKLİF [[Առաջարկ. «Պետք է անցնենք «մեկ ազգ, մեկ բանակ» թեզին»]], 03.11.2020, http://www.dia.az/8/269693-bir-millet-bir-ordu-tezisine-kechmeliyik.html, (Acc. 29.08.2024).
50. ***Fact Azərbaycan (2024),*** Azay Quliyev başa çatan təlimlər haqda: "Bir Ordu, bir Millət!" [Ազայ Գուլիևը ավարտված զորավարժությունների մասին. «Մեկ բանակ, մեկ ազգ»], 08.11.2024, https://www.fact-info.az/news?id=10509, (Acc. 29.08.2024).
51. ***Güneş (2021),*** Azerbaycan Savunma Bakanı Hasanov: Ordumuzu TSK modeline uygun olarak yeniden yapılandırıyoruz [Ադրբեջանի պաշտպանության նախարար Հասանով. «Մենք վերակառուցում ենք մեր բանակը՝ թուրքական զինված ուժերի մոդելին համապատասխան»], 09.11.2021, https://www.gunes.com/dunya/azerbaycan-savunma-bakani-

hasanov-ordumuzu-tsk-mode line-uygun-olarak-yeniden-yapilandiriyoruz-1121024, (Acc. 29.08.2024).

52. ***İhlas Haber Ajansı (2021),*** Türkiye'de komando eğitimini tamamlayan Azerbaycan askerleri Bakü'ye döndü [Թուրքիայում կոմանդոյի կուրսն ավարտած ադրբեջանցի զինվորները վերադարձել են Բաքու], 31.10.2021, https://www.iha.com.tr/ haber-turkiyede-komando-egitimini-tamamlayan-azerbaycan-askerleri-bakuye-dondu-990895/, (Acc. 29.08.2024).
53. ***Irdiplomacy (2023),*** Mošārekat-e 12 šerkat-e esrā'īlī dar bāzsāzī-ye manāṭeq-e bāzpas gerefte šodeh-e Qarehbāγ-e Kūhestānī [Իսրայելական 12 ընկերությունների մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի՝ հետ վերցված տարածքների վերակառուցման գործում], 13,08,2023, http://irdiplomacy.ir/fa/news/2021192/ مشارکت-۱۲-در-احیای-سازی-مناطق-باز گ رفته-شده-قره-باغ-با-همکاری-تانی وهسک ازپس, (Acc. 28.08.2024).
54. ***Kılıç (2021),*** Kılıç Hulusi, "Bundan sonra bir millət, bir ordu, bir diaspor olacaq" – EKSKLÜZİV [Քըլըչ Հուլուսի. «Այսուհետ մեկ ազգ, մեկ բանակ, մեկ սփյուռք»: Բացառիկ [հարցազրույց]], 17.02.2021, https://yenicag.az/hulusi-kilic-bundan-sonra-bir-millet-bir-ordu-bir-diaspor-olacaq-ekskluziv/embed, (Acc. 29.08.2024).
55. ***Meclis.gov (2024),*** Speaker of Milli Majlis Sahiba Gafarova Delivers a Speech at BRICS Parliamentary Forum, 11.07.2024, The Milli Majlis of the Republic of Azerbaijan, https://meclis.gov.az/news.php?id=1976&lang=en, (huն. 28.08.2024).
56. ***Mehr News (2019),*** Eǰlās-e se-ǰānebe-ye Rūsīye, Īrān va Āḏarbāyǰān be ta'vīq oftād [Իրան, Ռուսաստան և Ադրբեջան եռակողմ նիստը հետաձգվեց], 12.08.2019, https://www.mehrnews.com/news/4690862, (Acc. 28.05.2024).
57. ***MFA (2024a),*** About us, Official website of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, https://mfa.gov.az/en/category/about-us, (Acc. 05.05.2024).
58. ***MFA (2024b),*** The United States of America, Official website of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, https://mfa.gov.az/en/category/amerika/abs, (huն. 30.05.2024).
59. ***MFA (2024c),*** Böyük Britaniya və Şimali İrlandiya Birləşmiş Krallığı, Official website of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, https://mfa.gov.az/az/category/avropa/boyuk-britaniya, (huն. 30.05.2024).
60. ***MFA (2024d),*** Non-Aligned Movement (NAM), Official website of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan,

https://mfa.gov.az/en/category/beynelxalq-teskilatlar/qosulmama-herekati-qh, (hսն. 03.06.2024).

61. ***MFA (2024e),*** Azerbaijan Transfers Non-Aligned Movement Chairmanship to Uganda, Official website of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan.
62. ***MFA (2024f),*** No:117/22, No:117/22, Head of the Press Service Department of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan Leyla Abdullayeva answers the media's question, Official website of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, https://www.mfa.gov.az/en/news/no11722, (hսն. 05.06.2024).
63. ***MFA (2024g),*** The State of Israel, Official website of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, https://mfa.gov.az/en/category/asiya-ve-okeaniya/israil, (hսն. 28.08.2024).
64. ***Milli (2013),*** Azərbaycan və Türkiyənin vahid ordusunun formalaşması prosesi başlayıb [Մեկնարկել է Ադրբեջանի և Թուրքիայի միասնական բանակի ձևավորման գործընթացը], 05.08.2013, https://news.milli.az/politics/206053.html, (Acc. 29.08.2024).
65. ***President (2016),*** Opening speech by Ilham Aliyev at the trilateral meeting of Azerbaijani, Iranian and Russian presidents, 08.08.2016, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/20843, (hսն. 28.05.2024).
66. ***President (2017),*** Trilateral Summit of heads of state of Azerbaijan, Iran and Russia was held in Tehran, 01.11.2017, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/25664, (hսն. 28.05.2024).
67. ***President (2019),*** Ilham Aliyev was interviewed by Real TV, 12.02.2019, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/31826, (hսն. 05.05.2024).
68. ***President (2020a),*** Opening speech by Ilham Aliyev at the Cabinet meeting on results of socio-economic development in first quarter of 2020 and future tasks, 17.07.2020, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/39687, (hսն. 27.05.2024).
69. ***President (2020b),*** İlham Əliyev Ceyhun Bayramovu Xarici İşlər naziri təyin olunması ilə əlaqədar videoformatda qəbul edib [Իլհամ Ալիևը Ջեյհուն Բայրամովին արտգործնախարար նշանակելու կապակցությամբ տեսազանգի ձևաչափով ընդունելություն է կատարել], 16.07.2020, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/az/articles/view/39702/print, (hսն. 27.05.2024).

70. ***President (2020c),*** Ilham Aliyev inaugurated Balakan regional "ASAN xidmət" center, 29.07.2020, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/40166, (huk. 28.05.2024).
71. ***President (2020d),*** Ilham Aliyev addressed the nation, 01.12.2020, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/48205, (huk. 28.05.2024).
72. ***President (2020e),*** Ilham Aliyev was interviewed by TRT Haber TV channel, 05.10.2020, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/41763, (huk. 29.08.2024).
73. ***President (2021a),*** Ilham Aliyev held a press conference for local and foreign media representatives, 26.02.2021, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/50738, (huk. 28.05.2024).
74. ***President (2021b),*** Shusha Declaration on Allied Relations between the Republic of Azerbaijan and the Republic of Turkey, 16.06.2021, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/52122, (huk. 29.08.2024).
75. ***President (2022),*** Speech by Ilham Aliyev at the 9th Summit of Organization of Turkic States, 11.11.2022, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/57856, (huk. 28.05.2024).
76. ***President (2023a),*** To the participants of the Non-Aligned Movement Conference on Advancing the Rights and Empowerment of Women, 20.11.2023, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/62263, (huk. 29.05.2024).
77. ***President (2023b),*** Ilham Aliyev received UK Parliamentary Under Secretary of State, Minister of State for Europe and North America, 22.11.2023, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/62288, (huk. 29.05.2024).
78. ***President (2023c),*** Ilham Aliyev is attending expanded meeting of Supreme Eurasian Economic Council in Moscow, 25.05.2023, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/59936, (huk. 04.06.2024).
79. ***President (2023d),*** Ilham Aliyev participated in Ministerial Meeting of NAM Coordinating Bureau, 07.07.2023, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/60366, (huk. 04.06.2024).
80. ***President (2024a),*** Inauguration ceremony of Ilham Aliyev was held, 14.02.2024, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/63979, (huk. 29.05.2024).

81. ***President (2024b),*** Ilham Aliyev attended the International Forum “COP29 and Green Vision for Azerbaijan”, 23.04.2024, Official website of the President of the Republic of Azerbaijan, https://president.az/en/articles/view/65580, (հսն. 04.06.2024).
82. ***Press Klub (2022),*** İlham Əliyev İrana mesaj verdi: “Azərbaycandan kənarda yaşayan 40 milyon azərbaycanlı...” [Իլհամ Ալիևն ուղերձ հղեց Իրանին. «40 միլիոն ադրբեջանցիներ, որոնք ապրում են Ադրբեջանի սահմաններից դուրս...»], 11.11.2022, https://pressklub.az/az/ xeber/ilham-eliyev-irana-mesaj-verdi-299798-az, (Acc. 28.05.2024).
83. ***Prime Minister (2023),*** Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարցազրույցը Հանրային հեռուստաընկերությանը, 10.10.2023, ՀՀ վարչապետի պաշտոնական կայք, https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2023/10/10/Nikol-Pashinyan-Interview-Petros-Ghazaryan/, (հսն. 05.06.2024):
84. ***Prime Minister (2024),*** Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 10.11.2020, ՀՀ վարչապետի պաշտոնական կայք, https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/, (հսն. 05.06.2024):
85. ***Report (2023a),*** Allahşükür Paşazadə: “İranda 40 milyona yaxın azərbaycanlı fars rejiminin əlində əsirdir” [Ալլահշուքյուր Փաշազադե. «Իրանում մոտ 40 միլիոն ադրբեջանցի գերի է պարսկական ռեժիմի ձեռքին»], 30.01.2023, https://report.az/dini-xeberler/ allahsukur-pasazade-iranda-40-milyona-yaxin-azerbaycanli-fars-rejiminin-elinde-esirdir/, (Acc. 28.08.2024).
86. ***Report (2023b),*** Azərbaycanda İsrail institutu ilə birgə Kibertəhlükəsizlik Mərkəzi yaradılıb [Ադրբեջանում իսրայելական ինստիտուտի հետ համատեղ ստեղծվել է Կիբերանվտանգության կենտրոնը], 28.03.2023, https://report.az/ikt/azerbaycanda-israil-institutu-ile-birge-kibertehlukesizlik-merkezi-yaradilib/, (Acc. 28.08.2024).
87. ***SWP,*** Deutsches Institut für Internationale Politik und Sicherheit der Stiftung Wissenschaft und Politik (SWP), կայքի հասցեն՝ https://www.swp-berlin.org, (Acc. 30.05.2024).
88. ***Teref (2021),*** Türkiyə modelinə keçiddə zəruri addım: - Ən nəhəng hərbi birliyimiz formalaşdırılır [Թուրքական մոդելին անցնելու անհրաժեշտ քայլ: Ձևավորվում է մեր ամենամեծ զորամասը], 07.08.2021, https://teref.az/gundem/201731-turkiye-modeline-kecidde-zeruri-addim-en-neheng-herbi-birliyimiz-formalasdirilir.html, (Acc. 28.08.2024).
89. ***Yeni Akit (2021),*** 'Ordumuz Türk Silahlı Kuvvetleri modeline geçiyor' [Մեր բանակն անցնում է Թուրքիայի ՋՈւ մոդելին], 11.11.2021,

https://www.yeniakit.com.tr/haber/ordumuz-turk-silahli-kuvvetleri-modeline-geciyor-1594116.html, (Acc. 29.08.2024).
90. ***Yeni çağ (2021),*** Orduda TÜRKİYƏ MODELİ: "Bir generalı eyni vəzifədə bir neçə ildən çox görməyəcəyik" - Rövşən Məhərrəmov [Ռովշան Մահարրամովը բանակում թուրքական մոդելի [ներդրման] մասին. «Նույն գեներալին նույն պաշտոնում մի քանի տարուց ավելի չենք տեսնելու»], Yeni çağ, 05.08.2021, https://yenicag.az/orduda-turkiye-modeli-bir-generali-eyni-vezifede-bir-nece-ilden-cox-gormeyeceyik-rovsen-meherremov/, (Acc. 29.08.2024).
91. ***Yeni Şafak (2021),*** Azerbaycan'a 4 general [Ղրս գեներալ Ադրբեջանին], 26.08.2021, https://www. yenisafak.com/gundem/azerbaycana-4-general-3689405, (Acc. 29.08.2024).
92. ***1lurer (2023),*** Azerbaijan is using Non-Aligned Movement platform for aggressive and anti-Armenian narratives, Armenian MFA Spox, 05.05.2023, https://www.1lurer.am/en/2023/07/05/Azerbaijan-using-Non-Aligned-Movement-platform-for-aggressive-and-anti-Armenian-narratives/957766, (Acc. 04.06.2024):

ARTYOM TONOYAN

THE MAIN DIRECTIONS AND FEATURES OF AZERBAIJAN'S FOREIGN POLICY (1991–2023)

This work examines the main trends and features of Azerbaijan's foreign policy during the post-Soviet period, with a special emphasis on the shifts and transformations following the post-war period of 2020.

Critical Discourse Analysis (CDA) and the comparative method, combined with a corpus-based approach, have been the primary research methods used in this study. This study draws on a corpus of pre-war and post-war speeches, interviews, and statements by the current president of Azerbaijan, Ilham Aliyev, retrieved from the official website of the President of Azerbaijan.

In this context, special attention was paid to two of Aliyev's speeches to examine the priorities of Azerbaijan's foreign policy in both the pre-war and post-war periods, and to compare and highlight the changes. The first of the two selected texts, representing the pre-war

period, is the speech Aliyev delivered on July 16, 2020, during a meeting with the newly appointed Foreign Minister, Jeihun Bayramov. In this speech, Aliyev outlined in detail the priority directions of Azerbaijan's foreign policy, the challenges it faced, and the areas where a new approach was needed. It is in this speech that Aliyev discusses in detail Azerbaijan's new foreign policy strategy, particularly the shift to "offensive diplomacy." The second text, selected from the post-war period and following the depopulation of Artsakh, is Aliyev's address during his inauguration on February 14, 2024, after his re-election in the extraordinary presidential elections held on February 7, 2024. In this speech, Aliyev provided a detailed overview of Azerbaijan's foreign policy priorities, especially relating to new tasks following the "resolution" of the Artsakh issue and the need to fill the resulting vacuum with new content.

This work analyzes the characteristics of Azerbaijan's foreign policy towards regional and neighboring countries, extra-regional power centers, and international and regional organizations (e.g. Organization of Islamic Cooperation (formerly Organization of the Islamic Conference), Non-Aligned Movement). The analysis is conducted using both diachronic and synchronic approaches.

In conclusion, the following key points are highlighted:

- Azerbaijan's foreign policy experienced significant shifts, particularly in the early post-Soviet period, when Heydar Aliyev, a proponent of the national ideology of "Azerbaijanism" (Azərbaycançiliq), succeeded Elchibey, who advocated for "Turkism" (Türkçülük).
- Unlike Elchibey, who pursued a one-vector approach in his foreign policy, relying exclusively on Turkey and thereby worsening relations with Russia and Iran, Heydar Aliyev chose a more balanced and cautious policy towards Russia and Iran. This approach was evident throughout both of his presidential terms and largely continued during the first three terms of his son, Ilham Aliyev.

▪ The alterations in Turkey's foreign policy, especially the gradual transition from Western integration to a more expansionist approach under Erdogan, provided Azerbaijan with an opportunity to resolve the Artsakh issue militarily with Turkey's active support.

▪ After the 2020 war, Turkey's influence in Azerbaijan increased significantly, and the ideology of "Turkism" became dominant in Azerbaijani society. This bottom-up rise of Turkism in Azerbaijan has prompted the current Azerbaijani government to reexamine its foreign policy.

▪ The period after 2020 has also seen a significant rapprochement between Azerbaijan and Russia, partly in response to the abovementioned challenges. For Azerbaijan's military-political elite, Russia has served as a counterbalance to Turkey's increasing dominance.

▪ Relations between Azerbaijan and Iran have been marked by heightened tensions since the 2020 war, particularly between 2021 and 2023. This tension arises from Turkey's expanded role in the South Caucasus, the perceived threat to the Iran-Armenia border following the 2020 war, and Azerbaijan's provocative actions and ambitions in the region.

ՍԵՐԳԵՅ ՄԻՆԱՍՅԱՆ
Քաղաքական գիտությունների դոկտոր
Կովկասի ինստիտուտի փոխտնօրեն

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՉԱՓՈՒՄԸ

Վրաստանի արտաքին քաղաքականության ակունքներն ու առաջնահերթությունները

Անկախության ձեռքբերումից և 1990-ականների առաջին կեսին Վրաստանի ներսում քաղաքացիական առճակատման, ինչպես նաև Հարավային Օսիայում և Աբխազիայում էթնոքաղաքական հակամարտությունների բարդ շրջանից հետո Վրաստանի արտաքին քաղաքականությունը պայմանավորված էր, առաջին հերթին, երկրի անվտանգության ապահովմանն ուղղված արտաքին քաղաքական առաջնահերթություններով, ազգային պետություն կառուցելու և պետական ինստիտուտներ ձևավորելու համաժամանակյա գործընթացներով, ինչպես նաև հետխորհրդային քաղաքացիական հասարակության ձևավորմամբ: Իհարկե, երկրի արտաքին քաղաքականությունը անկախության առաջին իսկ օրերից կրում էր նաև Վրաստանի դիրքորոշման դիվանագիտական ձևավորման ծանր բեռը՝ Հարավային Օսիայում և Աբխազիայում էթնոքաղաքական հակամարտությունների համատեքստում, ընդորում, ներառյալ երրորդ դերակատարների, առաջին հերթին՝ Ռուսաստանի հետ հարաբերություններում և տարբեր միջազգային կազմակերպությունների ու կառույցների հարթակներում:

Վրաստանի արտաքին քաղաքականությունն ի սկզբանե ձևավորող կարևոր գործոնները միայն աշխարհագրական և աշխարհաքաղաքական առանձնահատկությունները չէին: Երկրում ներքաղաքական ու տնտեսական իրավիճակի կայունացման, իշխանության ձևավորման և պահպանման գործընթացների վերաբերյալ արտաքին քաղաքական արձագանքի անհրաժեշտություն

էր առաջացել, որը Է. Շևարդնաձեի իշխանության գալով՝ աստիճանաբար սկսել էր ձեռք բերել «ավտորիտար», իսկ հետո՝ «հիբրիդային» ժողովրդավարության բնույթ: Երկրի արտաքին քաղաքականության այս գործառույթի արդիականությունը որոշ չափով նվազեց «Վարդերի հեղափոխությունից» անմիջապես հետո և Միխեիլ Սաակաշվիլիի կառավարման սկզբնական շրջանում: Սակայն հետագայում, Սաակաշվիլիի անձնավորված իշխանության ամրապնդմանը զուգահեռ, իշխող ռեժիմի պահպանման առաջնահերթությունն սկսեց ավելի ու ավելի մեծ դեր խաղալ Վրաստանի դիվանագիտական գործունեության մեջ:

Այս ավանդույթը շարունակվեց նաև 2012 թ. իշխանափոխությունից հետո՝ հատկապես հաշվի առնելով այն բացառիկ, թեև երկրի կառավարման գործում հիմնականում ոչ ֆորմալ դերակատարումը, որը Վրաստանի քաղաքական համակարգում ձեռք բերեց անձամբ Բիձինա Իվանիշվիլին: 2023–2024 թթ. ներքաղաքական գործընթացները՝ կապված «Վրացական երազանքի» կողմից երկրի հասարակական-քաղաքական դաշտը ՀԿ սեկտորի արտաքին ֆինանսավորումը վերահսկելու նպատակով արվող օրենսդրական փոփոխությունների փորձերի հետ, ինչպես նաև հաշվի առնելով այդ կապակցությամբ ԱՄՆ և ԵՄ համապատասխան արձագանքը, է՛լ ավելի մեծացրեցին արտաքին քաղաքականության այս գործառույթի կարևորությունը երկրի ղեկավարության առաջնահերթությունների շարքում:

Տարածաշրջանային համատեքստում, հատկապես 2003–2004 թթ. «Վարդերի հեղափոխությունից» հետո, Վրաստանի արտաքին քաղաքականության մեկ այլ կարևոր առաջնահերթություն էր Հարավային Օսիայի և Աբխազիայի էթնոքաղաքական հակամարտությամբ Ռուսաստանի հետ առճակատման հարցում արևմտյան երկրների աջակցությունն ստանալը: 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո այդ արտաքին քաղաքականության ռազմավարության կարևոր տարրերից էր՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի «չճանաչման քաղաքականության» սատարումը՝ առաջին

հերթին արևմտյան երկրների, բայց նաև միջազգային հանրության մեծամասնության կողմից:

Մյուս կողմից, պետք է նաև հաշվի առնել, որ Վրաստանի իշխանությունները Մոսկվայի հետ քաղաքական երկխոսություն հաստատելու ավանդական ձևով և փոփոխականորեն, սակայն, արդյունքում գրեթե անհաջող փորձեր արեցին՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի հարցում վերջինիս մոտեցումները մեղմելու նպատակով: «Փոխարենը» ակնկալվում էր Թբիլիսիի տարածաշրջանում ռուսական քաղաքականության նկատմամբ ավելի լոյալ մոտեցումը, Մոսկվայի հովանու ներքո իրականացվող ինտեգրացիոն գործընթացներին Թբիլիսիի հնարավոր սահմանափակ մասնակցությունը կամ Վրաստանի և արևմտյան երկրների ու կառույցների միջև փոխգործակցության տեմպերի նվազումը: Մոսկվայի հետ սիրախաղի այս փորձերը մերթընդմերթ տեղի են ունեցել Շևարդնաձեի օրոք և Սաակաշվիլիի կառավարման սկզբնական շրջանում և, հատկապես, 2012 թ. իշխանափոխությունից և Բիձինա Իվանիշվիլիի գլխավորած «Վրացական երազանքի» իշխանության գալուց հետո:

Այնուամենայնիվ, Իվանիշվիլիի ղեկավարման շրջանը բնութագրվում էր ռուսական ուղղությամբ պաշտոնական Թբիլիսիի շատ ավելի պրագմատիկ մոտեցումներով և դիրքորոշմամբ, քան նկատվում էր նախորդ փուլերում: Չնայած վրացական հասարակության և քաղաքական վերնախավի մոտ արմատացած խոր հակառուսական տրամադրություններին, դրանց վրա չազդեցին ո՛չ 2014 թ. Ղրիմի ճգնաժամը, ո՛չ անգամ 2022 թ. փետրվարին Ռուսաստանի լայնածավալ ներխուժումը Ուկրաինա: Սակայն, դրա հետ մեկտեղ, Ռուսաստանի և Արևմուտքի միջև արհեստավարժ հավասարակշռման միջոցով, ինչպես նաև Ուկրաինայում ռուսական պատերազմի բռնկումից հետո աշխարհաքաղաքական լայնածավալ տեղաշարժերի արդյունքում բացված եզակի «հնարավորությունների պատուհանի» օգտագործմամբ, Վրաստանը կարողացավ հասնել վերջին տասնամյակներում իր արտաքին քաղաքականության մեջ ամենակարևոր հռչակված նպատակներից

մեկին՝ 2023 թ. վերջին ստանալով ԵՄ անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակ:

2020 թ. աշնանը տեղի ունեցած ղարաբաղյան երկրորդ պատերազմը բավականին կարևոր դեր խաղաց Հարավային Կովկասում Վրաստանի տարածաշրջանային և արտաքին քաղաքական առաջնահերթությունների վերաձևակերպման գործում: Մասնավորապես, երկրի ներսում այն առաջացրեց քաղաքական և փորձագիտական դիսկուրսի ակտիվացում՝ Աբխազիայում և Հարավային Օսիայում հակամարտությունների կարգավորման հեռանկարների և մեթոդների վերաբերյալ: Այնուամենայնիվ, Վրաստանի դիրքորոշումը թե՛ ուղղակիորեն ղարաբաղյան հակամարտության, թե՛ Հայաստանի և Ադրբեջանի, ինչպես նաև Թուրքիայի հետ հարաբերություններում, ավելի շուտ, որոշվում էր ավանդական պատմական, աշխարհաքաղաքական, տնտեսական և հոգեբանական նկատառումներով և առաջնահերթություններով, որոնք ազդում են ողջ հետխորհրդային շրջանում այդ երկրների հետ Թբիլիսիի երկկողմ և բազմակողմ հարաբերությունների վրա:

Ռազմաքաղաքական մոտեցումներն ու ՆԱՏՕ-ին ինտեգրման գործընթացները

Վրաստանն առաջին անգամ դեռևս 2002 թ. պաշտոնապես հայտարարել էր ՆԱՏՕ-ին անդամակցելու իր ծրագրերի մասին: Սակայն մինչ այդ ևս, 1990-ականների կեսերից, Վրաստանը ակտիվ մասնակցում էր Դաշինքի հետ համագործակցության տարբեր ծրագրերին, այդ թվում՝ խաղաղապահ գործողություններին: Սաակաշվիլիի՝ իշխանության գալուց հետո այս գործընթացը նոր թափ ստացավ: Ամենակարևոր փուլը, որի ընթացքում Դաշինքը հայտարարեց, որ Վրաստանը, ինչպես նաև Ուկրաինան, կարող են ապագայում դառնալ ՆԱՏՕ-ի անդամ, թեև հրաժարվեց այդ երկրներին ռազմաքաղաքական դաշինքին միանալու գործողությունների ծրագիր տրամադրել: 2008 թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմը, բնականաբար, անմիջական ազդեցություն ունեցավ այս գործընթացի դինամիկայի և ընկալման վրա թե՛

Բրյուսելում, թե՛ Թբիլիսիում, սակայն ՆԱՏՕ-ի և Վրաստանի միջև համագործակցության խորացման ընդհանուր վեկտորը և փոխադարձ պատրաստակամությունը չեն փոխվել:

2012 թ. վերջին խորհրդարանական ընտրությունների արդյունքում Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը դրամատիկ ազդեցություն չի ունեցել երկրի արտաքին քաղաքականության և ռազմաքաղաքական առաջնահերթությունների, ինչպես նաև վրացական հասարակական և քաղաքական վերնախավի ակնկալիքների ու նախասիրությունների վրա: Երկրի անդամակցությունը ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին, ինչպես նաև ԱՄՆ-ի հետ երկկողմ ռազմավարական սերտ հարաբերությունների զարգացումը եղել և մնում են վրաց հասարակական և քաղաքական վերնախավի անշեղելի առաջնահերթությունը: Վերջին տասնամյակների ընթացքում անցկացված բոլոր սոցիոլոգիական հարցումների համաձայն, Վրաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը կողմ է ԵՄ-ին երկրի անդամակցությանը, և, փոքր ինչ նվազ համամասնությամբ՝ ՆԱՏՕ-ին:

Դրա հետ մեկտեղ, նույնիսկ Վրաստանի ներսում, քաղաքական էլիտայի և հասարակության շատ ներկայացուցիչների համար ակնհայտ էր, որ 2008 թ. պատերազմը և Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչումը շատ լուրջ, եթե ոչ՝ անհաղթահարելի, ինստիտուցիոնալ խոչընդոտներ են ստեղծել երկրի՝ ՆԱՏՕ-ին անդամակցության համար: Մինչև Ղրիմի ճգնաժամը՝ 2014 թ. սկիզբը, Հյուսիսատլանտյան դաշինքը նույնպես չի ձգտել Հարավային Կովկասի տարածաշրջանում Ռուսաստանի հետ հարաբերությունների արմատական սրման, ինչը միանգամայն հնարավոր է Վրաստանի՝ ՆԱՏՕ-ի կազմի մեջ ընդունելու որոշման դեպքում: Հաշվի առնելով, որ Վրաստանը չի լուծել իր տարածքային ամբողջականության հետ կապված խնդիրները և ունեցել է շարունակական էթնո-քաղաքական հակամարտություններ, ՆԱՏՕ-ին այս երկրի անդամակցությունը Ղրիմում Ռուսաստանի ռազմական գործողությունից և 2014 թ. Ուկրաինայի արևելքում ռազմական գործողություններից անմի-

ջապես առաջ, կարող էր նոր պարտավորություններ ստեղծել ՆԱՏՕ-ի համար, և կիսկասեր Դաշինքի կողմից ընդունված ընդլայնման չափանիշներին[1] (Kakachia, 2013).

2014 թ. Ռուսաստանի՝ ղրիմյան գործողության մեկնարկից հետո Ռուսաստանի և Արևմուտքի հարաբերությունների կտրուկ վատթարացումը տեսականորեն կարող էր նպաստել Հյուսիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության հեռանկարներին: Այնուամենայնիվ, այդ ընթացքում ՆԱՏՕ-ի առաջատար երկրների ղեկավարների զուսպ հայտարարությունները ցույց տվեցին Արևմուտքի գիտակցությունը, որ Ուկրաինայի արևելքում խորացող զինված հակամարտության և Ռուսաստանի հետ նոր «սառը պատերազմի» փաստացի սկզբի համատեքստում, Վրաստանին ՆԱՏՕ-ին անդամակցելու հնարավորության ընձեռումը Մոսկվայի ընկալմամբ կնշանակի «կարմիր գծի» իրական հատում արդեն նաև Հարավային Կովկասում:

2022 թ. փետրվարին ռուսական լայնածավալ ներխուժումը Ուկրաինա՝ էապես չի ազդել այս հարցի վերաբերյալ Բրյուսելի դիրքորոշման վրա: Իր հերթին, այժմ էլ արդեն «Վրացական երազանքի» կառավարությունն էր փորձում առանձնապես չկենտրոնանալ հարցի գործնական կողմի վրա՝ փորձելով Վրաստանին չներքաշել Ռուսաստանի հետ նոր առճակատման մեջ՝ ուկրաինական ճգնաժամի ռազմական գործողությունների և Ռուսաստանի ու Արևմուտքի միջև աննախադեպ աշխարհաքաղաքական նոր առճակատման ֆոնին:

Ի դեպ, նույնիսկ դրանից առաջ, ելք փնտրելով այն փակուղուց, որում հայտնվել էր Վրաստանը՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու հեռանկարների առումով, թե՛ վրացի, թե՛ որոշ արևմտյան փորձա-

[1] «Մինչ ՆԱՏՕ-ի անդամ դառնալը, այն պետությունները, որոնք ներգրավված են միջէթնիկական կամ արտաքին տարածքային հակամարտությունների մեջ՝ ներառյալ իրեդենտիստական պահանջները կամ իրավազորության վերաբերյալ ներքին վեճերը, պետք է խաղաղ միջոցներով լուծեն նման հակամարտությունները՝ ԵԱՀԿ սկզբունքներին համապատասխան: Նման հակամարտությունների լուծումը որոշիչ գործոն է լինելու՝ հրավիրե՞լ արդյոք պետությանը՝ միանալու դաշինքին»:

գետներ արդեն հայտարարել էին, որ այդ հարցում Վրաստանը կարող է կաղապարներից դուրս մտածել: Խոսքն այն մասին էր, որ Վրաստանը կարող էր զոհաբերել Աբխազիայի և Հարավային Օսիայի վերադարձի գաղափարը, կամ նույնիսկ սեփական նախաձեռնությամբ դաշնային կառույցի վերաբերյալ միակողմանի առաջարկ անել երկու անջատված հանրապետություններին՝ հաշվի առնելով ստեղծված իրողությունները, այդ թվում՝ առանց այդ տարածքների նկատմամբ վերահսկողությունը Վրաստանին վերադարձնելու և առանց վրացի փախստականների վերադարձի իրավունքի (Cecire, 2013): Ըստ այդ տեսակետի, դա կարող էր ավելի բարենպաստ պայմաններ ստեղծել երկրի համար՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու ծրագիր ստանալու առումով, քանի որ ՆԱՏՕ-ն ստիպված չէր լինի պաշտպանել Վրաստանի տարածքային ամբողջականությունը և առճակատման մեջ մտնել Ռուսաստանի հետ, որը ճանաչել էր անջատված հանրապետությունների անկախությունը:

Այս ընթացքում վրացական փորձագիտական հանրության մոտ հակառակ տեսակետն էր գերիշխում. որևէ երաշխիք չկա, որ եթե նույնիսկ Վրաստանը լքի Աբխազիան և Հարավային Օսիան, Ռուսաստանը կհամակերպվի ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հետ: Ի վերջո, ինչպես նրանք նշում էին, «վրացական հասարակությունը չի մոռացել, որ Մոսկվայի ռազմական նպատակը ոչ թե Վրաստանի անջատողական շրջանների նկատմամբ վերահսկողություն հաստատելն էր, այլ ՆԱՏՕ-ին ինտեգրվելու ուղղությամբ շարժվելու համար երկրին պատժելը» (Kakachia, 2013):

Այս պայմաններում Վրաստանի ռազմաքաղաքական ղեկավարությունը շեշտը դրել էր աշխարհի տարբեր տարածաշրջաններում ՆԱՏՕ-ի և ԵՄ գործողություններում Վրաստանի խաղաղապահ մասնակցության ավելացման վրա՝ որպես Դաշինքի հետ Վրաստանի հետագա մերձեցման առումով կարևոր ռազմավարական բաղադրիչ: Փաստորեն, փորձ էր արվել խնդիրը լուծել ոչ թե այն մակարդակում, որում այն բախվել էր ամենամեծ դժվա-

րություններին (այսինքն՝ ռազմա-քաղաքական, Ռուսաստանի և Արևմուտքի միջև աշխարհաքաղաքական առճակատման մակարդակով), ինչպես նաև ավելի ցածր, այսպես ասած՝ Վրաստանի զինված ուժերի և ՆԱՏՕ-ի կառույցների միջև օպերատիվ փոխգործակցության տեխնիկական մակարդակում, հատկապես խաղաղապահ գործողությունների շրջանակներում: Որոշ առումով Վրաստանի փորձերը կարելի է համեմատել 1950–53 թթ. Կորեական պատերազմին Հունաստանի և Թուրքիայի ռազմական կոնտինգենտների մասնակցության հետ՝ որպես ՄԱԿ-ի կոնտինգենտի մաս: Ինչպես հայտնի է, Հունաստանի և Թուրքիայի մասնակցությունը Կորեական պատերազմին, գոնե հասարակական մակարդակով, այս երկու երկրների՝ ՆԱՏՕ-ի կազմում ընդգրկվելու որոշիչ գործոններից մեկն էր, այսպես կոչված, 1952 թ. փետրվարին Հյուսիսատլանտյան դաշինքի «առաջին էքսպանսիայի» ժամանակ:

2015 թ. հայտարարվել է, որ վրացական զորախումբը ներառվելու է ՆԱՏՕ-ի արագ տեղակայման ուժերի կազմում՝ Դաշինքի խաղաղապահ գործողությունների շրջանակներում կիրառման հնարավորությամբ: Միևնույն ժամանակ, Աֆղանստանում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի խաղաղապահ գործողության աստիճանական դադարեցումը, որտեղ վրացական կոնտինգենտը առաջատարներից էր ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող երկրների շարքում, և որն ավարտվեց 2021 թ. ամռանը՝ միջազգային կոալիցիայի զորքերի վերջնական դուրս բերումով, ցույց տվեց նաև ՆԱՏՕ-ի հետ տեխնիկական մերձեցման՝ վրացական մոտեցման հնարավորություններն ու սահմանները՝ առանց Դաշինքին երկրի անդամակցության ռազմավարական որոշման:

2022 թ. փետրվարին սկսված ուկրաինական ճգնաժամի նոր փուլը և Ռուսաստանի ու Արևմուտքի լայնածավալ առճակատումը, որի համատեքստում վրացական իշխանությունները ձգտում էին չհրահրել Մոսկվային և թույլ չտալ, որ երկիրը ուղղակի ներգրավվի հյուսիսային հարևանի հետ հակամարտության մեջ, հետաձգեցին ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցում Վրաստանի հետագա քայ-

լերի գործնական իրականացումը՝ առնվազն մինչև Ռուսաստանի և Ուկրաինայի միջև պատերազմի ակտիվ փուլի ավարտը: Այնուամենայնիվ, ՆԱՏՕ-ի հետ հետագա սինքրոնիզացիայի գործընթացը և Վրաստանի կողմից անվտանգության և պաշտպանության ոլորտում հիմնական չափանիշների ու փորձի ներդրումը շարունակում է կայուն տեմպերով զարգանալ տեխնիկական և ինստիտուցիոնալ մակարդակներում:

Վրաստանի հարաբերությունները ԵՄ հետ

1999 թ. ԵԽԽՎ ամբիոնից ելույթ ունենալիս Վրաստանի խորհրդարանի այն ժամանակվա խոսնակ Ջուրաբ Ժվանիան հնչեցրեց իր հայտնի խոսքերը. «Ես վրացի եմ, հետևաբար՝ եվրոպացի եմ»՝ հստակ բնութագրելով վրացական հասարակության և քաղաքական վերնախավի կողմից ԵՄ-ի և եվրոպական կառույցների նկատմամբ հարաբերությունների խորը հասարակական ընկալումը: Վրաստանի եվրոպական նկրտումները և ԵՄ-ին լիիրավ անդամակցությունը (ՆԱՏՕ-ին անդամակցելու ռազմաքաղաքական առաջնահերթություններին և ԱՄՆ-ի հետ երկկողմ ռազմավարական գործընկերության խորացմանը զուգահեռ) տասնամյակներ շարունակ ամրագրված են արտաքին և անվտանգային քաղաքականության ոլորտում երկրի բոլոր կարևորագույն հայեցակարգային փաստաթղթերում (Merabishvili & Kiss & Rasz, 2015):

Այնուամենայնիվ, Վրաստանին և ողջ Հարավային Կովկասի տարածաշրջանին (բացառությամբ Կասպից ծովի էներգառեսուրսների հասանելիության հանդեպ անթաքույց հետաքրքրության) ԵՄ-ի ուշադրությունը ԽՍՀՄ-ի փլուզումից մինչև 2000-ականների սկիզբը բավականին մարգինալ էր: Իրավիճակը փոխվեց միայն 2004 թ., երբ Հարավային Կովկասը ներառվեց ԵՄ Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ, և, հատկապես 2008–2009 թթ. ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրում հետխորհրդային մի շարք երկրների ընդգրկումից հետո (գաղափարի զարգացման և ստեղծման շարժիչ ուժերից մեկը հենց 2008 թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմն էր): 2007 թ. ԵՄ կազ-

մում Բուլղարիայի և Ռումինիայի ընդգրկումը, ԵՄ-ին ևս դարձրեց Վրաստանի անմիջական աշխարհագրական հարևան՝ Սև ծովի ջրային ավազանի միջոցով, ինչը նույնպես նպաստեց Հարավային Կովկասի տարածաշրջանում ԵՄ քաղաքականության ավելի ակտիվ իրականացմանը, իսկ վրացական հասարակության համար ավելի իրատեսական դարձրեց Վրաստանի «եվրոպական երազանքի» ինստիտուցիոնալացման տեսլականը:

2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ Վրաստանի սահմանների երկայնքով Եվրոպական քաղաքացիական մոնիտորինգի առաքելության (EUMM) տեղակայումը դարձավ տարածաշրջանում եվրոպական քաղաքական ազդեցության և ներկայության ուժեղացման առաջին նշանակալի ցուցիչներից մեկը: Այն ուղեկցվում էր եվրոպական երկրների և Վրաստանի կառույցների ավելի դինամիկ աջակցությամբ Ռուսաստանի հետ առճակատման հարցում, ինչպես նաև Աբխազիայի և Հարավային Օսիայի շուրջ դիվանագիտական գործընթացներում: Ինստիտուցիոնալ առումով Վրաստանի եվրաինտեգրման գործընթացը նոր մակարդակի հասավ 2013 թ. Վիլնյուսի Արևելյան գործընկերության գագաթնաժողովում ԵՄ-ի հետ Ասոցացման մասին համաձայնագրի ստորագրումից հետո, որին հետևեց նաև Վրաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմի ազատականացումը:

Վրաստանի 2012 թ. իշխանափոխությունը և «Վրացական երազանքի» իշխանության գալը էապես չազդեց երկրի եվրաինտեգրման գործընթացների ո՛չ դինամիկայի, և ո՛չ էլ տեմպի վրա, և երկիրը ձգտում էր աստիճանաբար կատարել այն պայմանները, որոնք նպաստելու էին ԵՄ թեկնածու երկրներին ներկայացվող պահանջների կատարմանը: Զարգացել է նաև Վրաստանի և ԵՄ անդամ շատ երկրների միջև երկկողմ համագործակցությունը, առաջին հերթին՝ Արևելյան Եվրոպայի երկրների հետ, որոնցից շատերը պատմականորեն աչքի են ընկել Ռուսաստանի նկատմամբ իրենց առանձնահատուկ քննադատական վերաբերմունքով:

Իրավիճակը զգալի փոխվեց 2022 թ. փետրվարին Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժումից հետո, որի ժամանակ «Վրացական երազանքի» կառավարությունը բավականին խուսափողական և զգուշավոր դիրքորոշում որդեգրեց: Քանի որ Ռուսաստանի և Արևմուտքի միջև աշխարհաքաղաքական առճակատումը խորանում էր, ԵՄ-ն, ինչպես նաև ԱՄՆ-ը, պահանջում էին Վրաստանի ավելի հստակ դիրքորոշումը Ռուսաստանի դեմ, սակայն Վրաստանի իշխանությունները, վախենալով Մոսկվայի արձագանքից, փորձեցին խուսափել դրանից: Արդյունքում, եղան շարունակական զանգվածային անկարգություններ և բողոքի ցույցեր Վրաստանում արևմտամետ հասարակական կազմակերպությունների, քաղաքական ուժերի և, հատկապես, երիտասարդական շարժումների կողմից, որոնց աջակցում էին նաև եվրոպական կառույցները և Վրաստանում դիվանագիտական ներկայացուցչությունները:

Փորձելով նվազեցնել արևմտամետ ՀԿ-ների՝ Վրաստանի քաղաքական գործընթացների վրա սոցիալական ազդեցություն գործադրելու հնարավորությունը, «Վրացական երազանքը» (պաշտոնապես կառավարությանն առընթեր, չափավոր հակաարևմտյան «Ժողովրդի ուժը» քաղաքական կազմակերպության միջոցով) փորձեց օրենսդրական նախաձեռնություններ ընդունել («Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինագիծը, որն ավելի հայտնի է որպես «Օտարերկրյա գործակալների մասին» օրինագիծ), որն ուղղված է Վրաստանի ոչ կառավարական հատվածին տրամադրվող օգնության արտաքին ֆինանսական հոսքերի վերահսկմանը: Վրաստանի իշխանությունների առաջին փորձը՝ 2023 թ., զանգվածային բողոքի ակցիաների և ԵՄ-ի ու ԱՄՆ-ի բացահայտ քաղաքական ճնշման ազդեցության ներքո, անհաջող էր, և իշխանությունները ստիպված եղան հետ կանչել օրինագիծը: Սակայն 2024 թ. գարնանը «Վրացական երազանքը» նախաձեռնեց երկրորդ փորձը, և չնայած նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի վետոյին, որը տապալվեց

խորհրդարանական երկրորդ քվեարկությամբ, օրինագիծը վերջապես ընդունվեց 2024 թ. մայիսին:

Այնուամենայնիվ, Վրաստանում ՀԿ-ների ֆինանսավորման նկատմամբ պետական վերահսկողության աստիճանի և խորության գործնական նշանակությունը, ինչպես նաև եվրոպական կառույցների արձագանքի մասշտաբն ու խստությունը, որոնք սպառնում են «Վրաստանի եվրաինտեգրման հեռանկարների վրա» ազդող համապատասխան միջոցներ ձեռնարկել, դեռ այդքան էլ պարզ չեն: Օրինագիծն ունի անցումային դրույթներ և ժամկետներ, որոնց գործնական և քաղաքական հետևանքները տեսանելի կլինեն միայն դրա կիրարկման մեկնարկից հետո:

Սակայն ակնհայտ է նաև, որ «Վրացական երազանքի» իշխանության օրոք երկիրը ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացման հարցում իր ամենատպավորիչ հաջողությունը հասավ 2023 թ., երբ երկիրը վերջնականապես ստացավ ԵՄ անդամ երկրի թեկնածուի կարգավիճակ: Պաշտոնապես հայտարարված և իրական քաղաքական նպատակների ու խնդիրների միջև այս հակասությունը մոտ ապագայում նոր հանգրվան կդառնա Վրաստանի և ԵՄ-ի հարաբերություններում:

Վրաստանի ռազմավարական գործընկերությունը ԱՄՆ-ի հետ

Նախքան ԽՍՀՄ փլուզումից հետո Վրաստանի անկախության ձեռքբերումը Միացյալ Նահանգները այս նախկին խորհրդային հանրապետության հետ քաղաքական փոխգործակցության փորձ գործնականում չուներ: Այս առումով, օրինակ, Վրաստանը էականորեն տարբերվում էր հարևան Հայաստանից, որի հետ ԱՄՆ-ի ակտիվ հարաբերությունների պատմությունը ներառում է Առաջին Հանրապետության ժամանակաշրջանը՝ 1918–1920 թթ., Հայաստանի կառավարման ամերիկյան մանդատի փորձի հետ կապված գործընթացները, ինչպես նաև 20-րդ դարի առաջին կեսից ի վեր ԱՄՆ-ում հայկական մեծ սփյուռքի ներկայությունը և, որպես հետևանք, ազդեցիկ հայկական լոբբին, որը սառը պատե-

րազմից ի վեր ամերիկյան քաղաքական դաշտում պարբերաբար բարձրացրել է աշխարհաքաղաքական բնույթի հարցեր:

Վրաստանում Էդուարդ Շևարդնաձեի իշխանության գալով, որը, որպես ԽՍՀՄ ԱԳՆ նախկին ղեկավար և ԽՍՀՄ և ԱՄՆ միջև ռազմավարական միջուկային առճակատման դադարեցմանը նպաստող անձ, որը փաստացի ներդրում էր ունեցել Խորհրդային Միության փլուզման գործում և բարենպաստ քաղաքական իմիջ ուներ Արևմուտքում, իրավիճակը զգալիորեն փոխվեց: Ջորջ Բուշ ավագի և իր նախկին ամերիկացի գործընկերոջ՝ պետքարտուղար Ջեյմս Բեյքերի հետ Շևարդնաձեի ունեցած անձնական հարաբերությունները նույնպես դրական լիցք էին հաղորդում Վրաստանի և ԱՄՆ հարաբերություններին: Թեև պետք է խոստովանել, որ մինչև 1990-ականների ավարտը Վաշինգտոնի հետաքրքրությունը Վրաստանի և, ընդհանրապես, Հարավային Կովկասի նկատմամբ խիստ սահմանափակ էր:

Միայն կասպիական էներգառեսուրսների փոխադրման նախագծերի նկատմամբ աճող ուշադրությունը, որտեղ հայ-ադրբեջանական առճակատման պայմաններում Վրաստանը միակ այլընտրանքն էր Ռուսաստանը շրջանցելով Ադրբեջանից դեպի Արևմուտք խողովակաշարեր անցկացնելու համար, կտրուկ մեծացրեց Վրաստանի կարևորությունը ԱՄՆ ռազմավարական և աշխարհաքաղաքական առաջնահերթություններում: Այս գործընթացը նոր շունչ ստացավ 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո «ահաբեկչության դեմ համաշխարհային պայքար» ծավալելու համատեքստում:

Աֆղանստանում միջազգային կոալիցիայի գործողությունների մեկնարկով Վրաստանը դարձավ դեպի Կենտրոնական Ասիա և ընդլայնված Մերձավոր Արևելք ամերիկյան ռազմական ուժի ապահովման տարանցիկ, ինչպես նաև տարածաշրջանում ամերիկյան և միջազգային ուժերի գործողությունների լոգիստիկ մատակարարման և ապահովման կետերից մեկը:

2002 թ. ԱՄՆ-ն սկսեց Վրաստանին 64 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ռազմական օգնության տրամադրման առաջին լայնա-

ծավալ ծրագիրը (Georgia Train and Equip Program – GTEP)։ «Վարդերի հեղափոխությունից» և Միխեիլ Սաակաշվիլիի իշխանության գալուց հետո, ով իրեն և իր կառավարությունը ներկայացնում էր որպես արմատապես լիբերալ և արևմտամետ, և որը հավակնում էր ընկալվելու որպես տարածաշրջանում «ժողովրդավարության փարոս» (2005 թ. Վրաստան այցելած նախագահ Ջորջ Բուշ կրտսերի փոխաբերական արտահայտությամբ), Վրաստանի և ԱՄՆ հարաբերությունները սկսեցին նաև դիտարկվել ոչ միայն աշխարհաքաղաքական տեսանկյունից, այլև որոշակի արժեքային-գաղափարական իմաստ ստացան։ Ռուսաստանի հետ ԱՄՆ և եվրոպական երկրների խորացող առճակատմանը զուգահեռ Սաակաշվիլիի կառավարությունը ստանձնել էր «արևմտամետ սահմանի» գործառույթը՝ Ռուսաստանին Հարավային Կովկասից դուրս մղելու փորձերում։ Արդեն 2008 թ. ամռանը Վրաստանը դարձավ նաև ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող ամենամեծ երկիրը՝ թվակազմով երրորդ խաղաղապահ զորախմբով, որն ակտիվ մասնակցեց Իրաքում և Աֆղանստանում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի կողմից անցկացվող խաղաղապահ գործողություններին։

2009 թ. հունվարին ԱՄՆ-ը և Վրաստանը ստորագրեցին փաստաթուղթ՝ երկու երկրների միջև հաստատելով ռազմավարական գործընկերության ձևաչափը (US-Georgia Charter on Strategic Partnership)։ Սակայն 2008 թ. օգոստոսյան պատերազմից և Բարաք Օբամայի գլխավորած ԱՄՆ նոր դեմոկրատական վարչակազմի՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև լարվածության մեղմմանն ուղղված փորձերից, ինչպես նաև Սաակաշվիլիի կառավարման վերջին շրջանում Վրաստանի ներքաղաքական գործընթացներից որոշակի դժգոհության ի հայտ գալուց հետո, Վաշինգտոնը փորձում էր որոշակիորեն սահմանափակել հակառուսականության միտումը Թբիլիսիի հետ իր երկկողմ հարաբերություններում։ Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի և Վրաստանի միջև ռազմավարական գործընկերության ինստիտուցիոնալացումը շարունակվում էր։ Այս գործընթացի վրա չազդեց նաև 2012 թ. խորհրդարանական ընտ-

րությունների արդյունքում Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը:

2014 թ. սկսված Ղրիմի ճգնաժամը աշխարհաքաղաքական բնույթի նոր տարրեր մտցրեց Միացյալ Նահանգների և Վրաստանի ռազմավարական փոխգործակցության մեջ, թեև «Վրացական երազանքի» կառավարությունը ձգտում էր խուսափել հակառուսական հռետորաբանության այն կոշտ աստիճանից, որը Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության անփոխարինելի հատկանիշ էր համարվում նախորդ իշխանությունների օրոք: Ի դեպ, Ռուսաստանի և Արևմուտքի (առաջին հերթին՝ ԱՄՆ-ի հետ) հակասությունների սրման համատեքստում, Թբիլիսիի մանևրելու ազատությունը՝ Մոսկվայի նկատմամբ նրա համեմատաբար զուսպ դիրքորոշման առումով, գնալով ավելի էր սահմանափակվում: Այն ակնհայտ դրսևորվեց 2022 թ. Ուկրաինայում լայնածավալ պատերազմի բռնկման սկզբից: Խոսքով ակտիվ, բայց գործնականում շատ ավելի զուսպ պաշտոնական Թբիլիսիի դիրքորոշումը 2022 թ. փետրվարին Ուկրաինա Ռուսաստանի լայնածավալ ներխուժումից հետո, ինչը միևնույն ժամանակ էապես հակասում էր Վրաստանում հասարակական տրամադրություններին, զգալիորեն շտկել էր Վաշինգտոնի և Թբիլիսիի փոխհարաբերությունների բնույթը, այդ թվում Վրաստանի թե՛ ներքաղաքական, և թե՛ սոցիալական գործընթացների համատեքստում:

Ամենաբարձր մակարդակով ԱՄՆ հնչեցրած արձագանքը բավականին կոշտ էր, հատկապես «Վրացական երազանքի» կառավարության կողմից 2024 թ. գարնանը «Օտարերկրյա գործակալների մասին» օրինագծի նախապատրաստման և ընդունման գործընթացի վերջնական փուլում: Մասնավորապես, 2024 թ. մայիսի 24-ին ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հայտարարել էր Վրաստանի հետ ԱՄՆ հարաբերությունների համապարփակ վերանայման, ինչպես նաև ԱՄՆ մուտքի արտոնագրերի տրամադրման սահմանափակումների մասին՝ այն անձանց համար, ովքեր «սպառնում են Վրաստանում ժողովրդավարությանը, ճնշում են քաղաքացիական հասարակությանը և խախտում խա-

ղաղ հավաքների ազատությունը», ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների նկատմամբ (Blinken, 2024):

Ի դեպ, այս հարցում պաշտոնական Թբիլիսիի և Վաշինգտոնի առճակատման շրջանակը կախված կլինի «Վրացական երազանքի» կառավարության կողմից ընդունված օրինագծի կիրարկման հետագա մանրամասներից: Մյուս կողմից, դեռ լիովին պարզ չէ ԱՄՆ աշխարհաքաղաքական շահագրգռվածության աստիճանը Մոսկվայի հետ սրվող առճակատման համատեքստում՝ Ռուսաստանից Վրաստանի խելամիտ մակարդակի հեռավորության պահպանման համատեքստում, որին հավատարիմ են մնում Վրաստանի ներկայիս իշխանությունները:

Ռուսաստանի հետ հարաբերությունները. Վրաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը

Քաղաքական և պատմական տեսակետներից այնպես է ստացվել, որ Ռուսաստանի և Վրաստանի հարաբերությունները միշտ բնութագրվել են (ինչպես դրական, այնպես էլ բացասական տեսանկյունից) որպես ծայրահեղ բարդ և ոչ միանշանակ: Ռուս-վրացական հարաբերությունները բնութագրվում են ձեռքբերումների և կորուստների խառը համադրությամբ, ինչը բավականին բնորոշ է իրենց նախկին կայսերական մետրոպոլիաների հետ հարաբերվող երկրներին:

Մի կողմից, ըստ Վրաստանի պատմության ականավոր մասնագետներից մեկի՝ Ռոնալդ Սյունիի, 19-րդ դարում լուսավորությունը և ժամանակակից հասարակական-քաղաքական շարժումների առաջացումը հենց Ռուսաստանից են եկել Վրաստան, ընդորում, ոչ միայն Ռուսաստանից, Մոսկվայից կամ Սանկտ Պետերբուրգից, այլև Ռուսական կայսրության միջոցով, որը վրացի մտավորականներին կապում էր նաև Եվրոպայի և եվրոպական հասարակական-քաղաքական ուղղությունների ու ավանդույթների հետ (Suny, 1994): Դրա հետ մեկտեղ, ռուսական կայսրության գոյության վերջին փուլում, և, առավել ևս՝ Խորհրդային Միությունում, վրացական ծագում ունեցող քաղաքական գործիչները բավականին

ծանրակշիռ տեղ էին գրավում քաղաքական գործընթացներում: Սա նաև որոշակի դրական ազդեցություն ունեցավ այդ գործիչների հայրենիքի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Այս միտման յուրօրինակ ապոթեոզ հանդիսացան Վրացական ԽՍՀ Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղարի և հետագայում անկախ Վրաստանի ապագա նախագահ Էդուարդ Շևարդնաձեի՝ 1971 թ. ԽՄԿԿ XXIV համագումարի ժամանակ հնչեցրած խոսքերը. «Վրաստանի համար արևը, և արդեն վաղուց, ծագում է հյուսիսից»:

Մյուս կողմից, վրացական հասարակությունը չի մոռանում 1921 թ. վրացական առաջին հանրապետության խորհրդայնացումը, կոմունիստական ռեժիմի բռնաճնշումները, ԽՍՀՄ գոյության մայրամուտին Խորհրդային Վրաստանում ազգային ինքնության և անկախության շարժումների ճնշումը: Վրացիները հիշում են նաև արդեն անկախ Ռուսաստանի դիրքորոշումը 1990-ականներին Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների ժամանակ և հետագա տարիներին: Ներկայումս վրացիների հասարակական-քաղաքական և փորձագիտական ընկալմամբ Վրաստանի և Ռուսաստանի հարաբերություններում առկա հիմնական խնդիրներն ընկալվում են որպես Ռուսաստանի կայսերական բարդույթներ՝ հետխորհրդային տարածքում, ինչպես նաև Վրաստանից անջատված (և 2008 թ. օգոստոսին Ռուսաստանի կողմից անկախ ճանաչված) Աբխազիայի և Հարավային Օսիայի օգտագործումը՝ որպես Վրաստանի վրա ճնշում գործադրելու տարրեր, այդ թվում՝ Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան մտադրությունների հարցում:

Արդյունքում, հետխորհրդային ողջ ժամանակահատվածում Ռուսաստանն ու Վրաստանն անցել են երկկողմ հարաբերությունների բարդ ժամանակաշրջան, որտեղ յուրաքանչյուր նոր կառավարություն, առնվազն Էդուարդ Շևարդնաձեի իշխանության գալուց ի վեր, Մոսկվայի հետ երկկողմ հարաբերությունների արմատական բարելավումը համարում էր առաջնահերթություն: Սակայն արդյունքում, տարբեր, սակայն բազմաթիվ նմանատիպ

պատճառներով Թբիլիսին այդպես էլ չկարողացավ հասնել Մոսկվայի հետ լիարժեք կարգավորման: Ինչպես եղել է դեռ 1990-ականների սկզբից, գրեթե չորս տասնամյակ անց Ռուսաստանը շարունակում է մնալ անկախ Վրաստանի հիմնական արտաքին քաղաքական խնդիրը և, միևնույն ժամանակ, երկրի արտաքին քաղաքական ինքնության որոնման հիմնական տարրը (Kakachia & Minesashvili & Kakhishvili, 2018):

2008 թ. օգոստոսի պատերազմի արդյունքների հիման վրա Մոսկվայի՝ Վրաստանից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախացումը ճանաչելուց, ինչպես նաև դրան հաջորդած դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո երկու երկրներն էլ բացահայտ պատերազմից անցան երկկողմ հարաբերությունների բավականին մշուշոտ և ոչ միանշանակ ձևաչափի ներկա փուլ: Պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային, հոգեբանական և այլ գործոնների միահյուսումը հանգեցրել է նրան, որ Ռուսաստանը և Վրաստանը դեռևս պահպանում են հարաբերությունների որոշակի ձևաչափ, որն իր բովանդակությամբ ավելի լավն է, քան, օրինակ, Ռուսաստանի և Բալթյան երկրների կամ Լեհաստանի հետ ունեցած համանման ձևաչափը: Թեև, հարկ է նշել, որ Վրաստանն ու Ռուսաստանը դեռ չեն վերականգնել դիվանագիտական հարաբերությունները (և հազիվ թե դրանք վերականգնվեն տեսանելի ապագայում), իսկ Արևելյան Եվրոպայի նշված երկրները դեռևս չեն խզել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Լեհաստանը և Բալթյան երկրներն Ուկրաինա ռազմական տեխնիկայի և սպառազինության ակտիվ մատակարարներից են, իսկ Վրաստանը 2022 թ. փետրվարից պաշտոնապես հրաժարվեց Ուկրաինային մահաբեր զենք տրամադրելուց: Համապատասխանաբար, Մոսկվան Վրաստանին այլևս չի դասում ոչ բարեկամ երկրների շարքին և, նույնիսկ, Թբիլիսիի հետ վերականգնել է առանց մուտքի արտոնագրերի ռեժիմն ու ուղիղ թռիչքները, մինչդեռ Արևելյան Եվրոպայի երկրների պարագայում, Ռուսաստանի քաղաքացիների համար ներկայումս չափազանց դժվար է նույնիսկ հատել սահմանը:

Ելնելով հետխորհրդային շրջանում վրաց-ռուսական հարաբերությունների բարդ փորձից և աշխարհաքաղաքական իրողություններից, ներկա փուլում Վրաստանի ներքաղաքական դաշտում դժվար կլինի պատկերացնել ազդեցիկ և հարգված որևէ քաղաքական ուժ, որը կարող է բացահայտ ռուսամետ հայացքներ ունենալ կամ կողմնորոշվել դեպի Կրեմլ: Այնուամենայնիվ, գրեթե բոլոր քաղաքական ուժերը միմյանց մեղադրում են «ռուսամետ» լինելու և Վրաստանում Կրեմլի քաղաքականությունն իրականացնելու մեջ. բացի դավադրական գործոններից, սա բացատրվում է նաև վրացական ներքաղաքական դիսկուրսի արմատացած յուրօրինակ հետխորհրդային ավանդույթով:

Իրականում, վրացական հասարակական-քաղաքական դաշտում միակ քիչ թե շատ «լեգիտիմ» դերակատարը, որը կապ է պահպանում Մոսկվայի հետ, Վրաց ուղղափառ եկեղեցին է: Անկախ միջպետական հարաբերությունների բարդությունից, Վրաց ուղղափառ եկեղեցին բավականին սերտ աստվածաբանական և կրոնական կապեր է պահպանում Ռուս ուղղափառ եկեղեցու հետ (և, այդպիսով, նաև Մոսկվայի որոշակի քաղաքական շրջանակների հետ) և որոշ չափով կիսում հակաարևմտյան արժեքային մոտեցումները (Nodia, 2013):

Վրացական քաղաքական իրականությունում ավանդական դարձած պրակտիկայի համաձայն, 2012 թ. Բիձինա Իվանիշվիլիի գլխավորած «Վրացական երազանքն» իշխանության գալուց գրեթե անմիջապես հետո Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավումը դարձրեց նաև իր արտաքին քաղաքականության առաջնահերթությունը: Թեև առևտրի, տնտեսական, հումանիտար և հաղորդակցության ոլորտներում մասամբ հաջողություններ արձանագրվեցին, սակայն քաղաքական մակարդակում իրավիճակը կանգ է առել, հատկապես Վրաստանի խորհրդարանի շենքում Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի նիստին ռուս խորհրդարանականների մասնակցության հետ կապված սկանդալից հետո, որը շատ սուր արձագանք ստացավ վրացական ընդդիմության և հասարակության կողմից: Վրաստանի ներ-

սում բացասական արձագանքն այնքան ուժեղ էր, որ Ռուսաստանի իշխանությունները, արձագանքելով այս երկրում աճող հակառուսական տրամադրություններին, 2021 թ. հուլիսին նույնիսկ չեղարկեցին դեպի Վրաստան և հետադարձ ուղղություններով ուղիղ չվերթները, որոնք վերականգնվել էին 2012 թ. Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո՝ հարաբերությունների կարգավորման ակնկալիքների համատեքստում:

Բնականաբար, դա կրկին բացասաբար ազդեց երկու երկրների միջև առևտրաշրջանառության և տնտեսական համագործակցության ընդհանուր դինամիկայի վրա, այդ թվում՝ կորոնավիրուսի համավարակի և հետհամավարակային վերականգնման ակտիվ շրջանում:

2022 թ. փետրվարին Ռուսաստանի ներխուժումն Ուկրաինա է՛լ ավելի մեծ մարտահրավերներ ու սպառնալիքներ ստեղծեց ռուս-վրացական հարաբերությունների համար: Չնայած բավականին խորը հակառուսական տրամադրություններին, թե՛ հասարակության, թե՛ երկրի վերնախավերի շրջանում, վրացական իշխանությունները հակամարտության հենց սկզբից փորձում էին համեմատաբար չեզոք և հավասարակշռված դիրք գրավել Ռուսաստանի և Ուկրաինայի միջև: Թբիլիսին ակտիվ քննադատում էր Մոսկվայի գործողությունները, սակայն հրաժարվում էր բացահայտորեն ռազմական և ռազմատեխնիկական օգնություն տրամադրել Կիևին կամ սեփական տնտեսական պատժամիջոցները սահմանել Ռուսաստանի դեմ՝ հետևելով Արևմտյան երկրների մեծ մասի օրինակին: 2022 թ. մարտին իշխող կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ սահմանելով՝ Վրաստանը որևէ կերպ չի կարող ազդել Մոսկվայի քաղաքականության վրա ուկրաինական հակամարտությունում, այլ միայն վնասելու է սեփական տնտեսությանը՝ միևնույն ժամանակ ընդդիմադիր ուժերին մեղադրելով երկիրը Ռուսաստանի հետ պատերազմի մեջ ներքաշելու փորձերի մեջ՝ նրանց անվանելով «պատերազմի կուսակցություն»: Ակնհայտ է, որ ի սկզբանե Թբիլիսին փորձում էր խուսափել ցանկացած քայ-

լից, որը կարող էր սադրել Մոսկվայի պատասխան քայլերը, ինչն, ըստ ամենայնի, համապատասխան ձևով գնահատվել է ռուսական կողմից (Муханов, 2022):

Ուկրաինական հակամարտության զարգացման հաջորդ երկուսուկես տարիների ընթացքում պաշտոնական Թբիլիսին ընդհանուր առմամբ պահպանեց Մոսկվայի նկատմամբ այս բավականին պրագմատիկ մոտեցումը: Ընդ որում, վրացական իշխանությունները հստակ գիտակցում են, որ Ռուսաստանի նկատմամբ իրենց դիրքորոշման և վերաբերմունքի հետագա պարամետրերն ուղղակի կախված են ռուս-ուկրաինական պատերազմի դաշտերում ռազմական գործողությունների դինամիկայից և արդյունքներից: Եվ այդ պարամետրերը քաղաքական հեռանկարում կարող են ներառել հարցերի լայն շրջանակ, ինչպես նաև հնարավոր փոխզիջումներ Մոսկվայի և Թբիլիսիի միջև. սկսած վրացական քաղաքական տարածքում Աբխազիայի և Հարավային Օսիայի «վերաինտեգրման» հնարավորության մասին երկխոսությունից մինչև Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացներին Մոսկվայի արձագանքը:

Թուրքիա. Վրաստանի հիմնական տարածաշրջանային գործընկերը

Նախորդ հարյուրամյակների բավականին խնդրահարույց պատմական փորձը, ուղղափառ Վրաստանի մշակութային և կրոնական առանձնահատկությունները և մի շարք այլ գործոններ չեն նպաստում վրաց հասարակության կողմից Թուրքիայի հանդեպ խոր համակրանքին: Այնուամենայնիվ, դեռ 1990-ականներից՝ անկախության առաջին տարիներից, վրաց հասարակության և քաղաքական վերնախավի շրջանում, հատկապես հաշվի առնելով Թուրքիայի՝ ՆԱՏՕ անդամ լինելը և վերջինիս ավանդական աշխարհաքաղաքական մրցակցությունը Ռուսաստանի հետ, Անկարան ընկալվում է որպես արևմտյան քաղաքականության հիմնական տարածաշրջանային սպասարկող Հարավային Կովկասում՝ տնտեսագիտության, առևտրի, ինչպես նաև տարածաշրջանային

ռազմաքաղաքական գործընթացներում Ակկարայի աճող կարողություններով և ներուժով հանդերձ: Հաշվի առնելով նաև Թուրքիայի առանցքային դերը հետխորհրդային Վրաստանի համար կենսական նշանակություն ունեցող կապի և էներգետիկ նախագծերի իրականացման գործում (Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղ, TAP/TANAP գազամուղ, Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթուղի), այս բոլոր հանգամանքները պատճառ դարձան, որ դեռ 2001 թ. աշնանը Վրաստանի այն ժամանակվա նախագահ Էդուարդ Շևարդնաձեն հայտարարի. «Վրաստանը ոչ թե Ռուսաստանի ռազմավարական տարածքի հարավային թևն է, այլ Թուրքիայի և ՆԱՏՕ-ի ռազմավարական շահերի հորիզոնական շերտի հյուսիսային թևը» (Jones & Kakhishvili, 2013):

Իր հերթին, Թուրքիայի համար Վրաստանը մի կողմից ընկալվում է որպես Հարավային Կովկասում օսմանյան ավանդական աշխարհաքաղաքական ժառանգության մաս, իսկ մյուս կողմից՝ որպես աշխարհագրական և հաղորդակցության կարևորագույն օղակ, որը Թուրքիային կապում է Ադրբեջանի՝ էթնիկական, մշակութային, կրոնական և լեզվական իմաստով Թուրքիային սահմանների պարագծով ամենամոտ պետության, ինչպես նաև Թուրքիայի տնտեսության և ԵՄ երկրներ արտահանելու համար էներգետիկ ռեսուրսների ամենակարևոր մատակարարի հետ: Աշխարհագրական մերձությունը, հաղորդակցային և ենթակառուցվածքային նշանակությունը, բիզնես վարելու համար բարենպաստ պայմանները Թուրքիան դարձնում են Վրաստանի առաջատար արտաքին առևտրա-տնտեսական գործընկերը, ինչպես նաև վրացական տնտեսության մեջ ներդրումների հիմնական աղբյուրներից մեկը:

Դրա հետ մեկտեղ, պետք է հաշվի առնել, որ թուրքական ներդրումների ակտիվ ներգրավումը (հիմնականում Աջարիայում՝ պայմանավորված տեղի բնակչության շրջանում մասամբ պահպանվող մուսուլմանական տարրով), հանգեցնում է նաև վրաց հասարակության և վերնախավի որոշ մասի մոտ հակաթուրքական տրամադրությունների առաջացման, ինչը որոշ չափով սնուց-

վում է նաև վրաց ուղղափառ եկեղեցու կողմից: Ռուսական կայսրության ժամանակներից Վրաց ուղղափառ եկեղեցին փորձում է վերաքրիստոնեացման մասնակի քաղաքականություն իրականացնել Աջարիայում, որի տեղական բնակչությունը 16–17-րդ դարերում՝ Օսմանյան կայսրությանը միանալուց հետո, ենթարկվել է ինտենսիվ իսլամացման: Այնուամենայնիվ, Վրաստանում հակաթուրքական և հակամահմեդական տրամադրությունները գերակշռող չեն և էական ազդեցություն չունեն Թբիլիսիի և Անկարայի միջև ռազմավարական փոխգործակցության քաղաքական ձևաչափի վրա:

Նույն կերպ է նաև Աբխազիայի պարագայում՝ թուրքական ներկայության և ավանդական պատմական կապերի պատճառով (Թուրքիայում ազդեցիկ աբխազական և չերքեզական սփյուռքի առկայությունը) այս խնդիրներին թեև Վրաստանում զգուշությամբ են մոտենում, սակայն դա էական խնդիր չէ պաշտոնական Թբիլիսիի և Անկարայի հարաբերություններում: Թբիլիսիի համար ավելի լուրջ մարտահրավեր են Անկարայի՝ Բրյուսելի և Վաշինգտոնի հետ տարածաշրջանային տարբեր հարցերի շուրջ ծագող մշտական խնդիրներն ու դժվարությունները, որոնք պայմանավորված են ԵՄ և ԱՄՆ, ինչպես նաև ՆԱՏՕ-ի կառույցների հետ հարաբերություններում Թուրքիայի «ռազմավարական ինքնավարության» աճով:

Թուրքիայի և Վրաստանի միջև ռազմավարական գործընկերության կարևոր տարր է ռազմական և ռազմատեխնիկական համագործակցությունը, ներառյալ՝ համատեղ զորավարժությունները, վարժանքները և տարածաշրջանային հաղորդակցությունների և էներգետիկ նախագծերի անվտանգությունն ապահովելու միջոցառումները: 2012 թ. անվտանգության ոլորտում Վրաստանի և Թուրքիայի համագործակցությունը սկսեց ձեռք բերել եռակողմ ձևաչափ՝ Ադրբեջանի ներգրավմամբ, եռակողմ զորավարժություններին և խորհրդակցություններին կողմերի ակտիվ մասնակցությամբ:

Վերջին տասնամյակների ընթացքում տարածաշրջանում Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բարդ և հակասական հետագիծը, հատկապես 2022 թ. Ռուսաստանի և Ուկրաինայի միջև լայնածավալ պատերազմի մեկնարկից ի վեր, ստեղծում է ինչպես նոր սպառնալիքներ, այնպես էլ նոր հնարավորություններ Վրաստանի և Թուրքիայի միջև համագործակցության համար: Վրաստանը, մի կողմից, զգուշությամբ դիտարկում է Անկարայի և Մոսկվայի միջև մերձեցման բոլոր նոր փորձերը, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ Հարավային Կովկասում արևմտյան երկրների քաղաքականության և մոտեցումների առավել ակտիվ իրականացման համար: Մյուս կողմից, «Վրացական երազանքը» որոշ չափով տպավորված է «ռազմավարական ինքնավարությամբ», որին հավատարիմ է Թուրքիայի նախագահ Էրդողանը, ընդ որում, ոչ միայն Արևմուտքի, այլև Մոսկվայի հետ հարաբերություններում: Մի շարք վրացի փորձագետների կարծիքով, Թուրքիան կարող է նաև միջնորդական դեր խաղալ, եթե Վրաստանը բարելավի հարաբերությունները աբխազական կողմի հետ՝ չառաջացնելով Մոսկվայի կոշտ ու խանդոտ արձագանքը:

Ի վերջո, ուկրաինական ճգնաժամի բռնկումից և 2022 թ. սկզբից Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցների սահմանումից հետո Վրաստանի տարանցիկ դերը կտրուկ ակտիվացավ, և Թուրքիայի հետ Ռուսաստանի առևտրաշրջանառությունից ստացված առևտրա-տնտեսական օգուտները ներկայումս նույնպես կարևոր ֆինանսատնտեսական գործոն են Թուրքիայի և Վրաստանի հարաբերություններում: Թեև Վրաստանը ձգտում է պահպանել Ռուսաստանի դեմ ԱՄՆ և ԵՄ պատժամիջոցների պահանջները, ակնհայտ է, որ Վրաստանի տարածքով Թուրքիայից Ռուսաստան ապրանքների, այդ թվում՝ զգայուն բնույթի ապրանքների, արտահանման և վերաարտահանման ծավալների աճը ևս պետք է հաշվի առնվի վրաց-թուրքական հարաբերությունների համատեքստում:

Ադրբեջան և Վրաստան. լիարժեք ռազմավարական գործընկերություն

Ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության ոլորտում երկու երկրների հայեցակարգային բոլոր հիմնական փաստաթղթերում Վրաստանի և Ադրբեջանի հարաբերությունները բնութագրվում են որպես «ռազմավարական գործընկերություն»: Սակայն հետաքրքիր է նշել, որ, համաձայն 2011 թ. ընդունված և մինչ օրս գործող Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգի՝ Ադրբեջանի հետ ռազմավարական գործընկերությունը վրացական կողմը դիտարկում է հիմնականում էներգետիկ և հաղորդակցության նախագծերի իրականացման համատեքստում: Հատկանշական է նաև, որ նույն փաստաթղթում Թուրքիան նշված է որպես տարածաշրջանում Վրաստանի գլխավոր գործընկեր և տարածաշրջանային առաջատար, որի հետ հարաբերությունները Վրաստանի համար կարևոր են սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական հարաբերությունների առումով (NSC): Այս փաստն ընդգծում է այն հանգամանքը, որ առ այսօր ադրբեջանա-վրացական հարաբերությունները, ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական հարթության վրա, շատ առումներով փաստացի ձեռք են բերել թուրք-վրաց-ադրբեջանական եռակողմ ձևաչափ:

Չնայած պատմական մտերմությանը, ընդհանուր մշակութային ինքնությանը, բավականին մեծ ադրբեջանական համայնքի առկայությանը, որը ներկայումս հանդիսանում է Վրաստանի ամենամեծ ազգային փոքրամասնությունը (ինչպես նաև հաշվի առնելով Ադրբեջանում համեմատաբար փոքր վրացական համայնքի առկայությունը), երկրների՝ միմյանց հետ ռազմավարական գործընկերության ձևաչափի հաստատումը կանխորոշված չէր երկրների անկախության հենց սկզբից՝ 1990-ականներից: Երկու երկրներիբարդ ներքաղաքական գործընթացները և բարդ էթնո-քաղաքական հակամարտություններում երկրների ներգրավվածությունը (Վրաստանը Աբխազիայում և Հարավային Օսիայում, Ադր-

բեջանը՝ Լեռնային Ղարաբաղում) հանգեցրին նրան, որ քաղաքական և տնտեսական հարաբերությունների հաստատումը 1990-ականների առաջին կեսին ակտիվացավ միայն երկու երկրների ներքին և արտաքին տարածաշրջանային համեմատական կայունացումից հետո:

Էդուարդ Շևարդնաձեի և Հեյդար Ալիևի անձնական հարաբերությունների ձևաչափը, որոնք իրենց նախորդած առավել արտասովոր ղեկավարներ Զվիադ Գամսախուրդիայի և Աբուլֆազ Էլչիբեյի ղեկավարման կարճ ժամանակաշրջանից հետո ստանձնել էին երկու երկրների ղեկավարումը, նույնպես որոշ չափով նպաստեց սերտ և պրագմատիկ փոխգործակցության հաստատմանը Ադրբեջանի ու Վրաստանի միջև, որոնք բախվել էին բազմաթիվ նմանատիպ արտաքին մարտահրավերների և ներքին խնդիրների: Երկու նախկին առաջին քարտուղարները և խորհրդային տարիներին իրենց հանրապետությունների երկարաժամկետ ղեկավարները, որոնք անվտանգության հանրապետական կառույցները ղեկավարելու հարուստ փորձ ունեին (Շևարդնաձեն՝ Վրացական ԽՍՀ ՆԳՆ, Ալիևը՝ Ադրբեջանական ԽՍՀ Պետական անվտանգության կոմիտեն (ԿԳԲ)), շարունակել էին իրենց բյուրոկրատական կարիերան Մոսկվայում՝ ԽՍՀՄ հիերարխիայի կուսակցական և պետական բարձրագույն պաշտոններում: 1990-ականների սկզբներին՝ իրենց երկրների զարգացման համար կրիտիկական ժամանակաշրջաններում, երկուսն էլ վերադարձան իրենց հանրապետություններ: Շատ առումներով Շևարդնաձեն և Ալիևն ունեին բավականին նման քաղաքական մոտեցումներ տարածաշրջանային քաղաքականության հարցերում, ներառյալ՝ առաջին փուլում իրենց նախորդների կտրուկ հակառուսական դիրքորոշման մերժումը:

1990-ականների երկրորդ կեսին Վրաստանի և Ադրբեջանի երկկողմ հարաբերություններում զգալի ձեռքբերումներ արձանագրվեցին. 1997 թ. երկու երկրների միջև ստորագրվեց «Ռազմավարական գործընկերության խորացման մասին» հռչակագիրը: Այս փաստաթուղթը գործնական նշանակություն ստացավ 1999 թ.՝

Բաքու–Սուփսա նավթամուղի բացումով, որը դարձավ կասպյան նավթը Ռուսաստանը շրջանցելով արևմտյան շուկաներ արտահանող առաջին գործող նավթամուղը: Մոսկվայի քաղաքականությունից երկու երկրների կախվածության աստիճանական նվազումն իր ձևակերպումն ստացավ 1997 թվականին ՎՈՒԱՄ կազմակերպության ստեղծմամբ, որում ակտիվ դեր են խաղացել Վրաստանը (ավելի մեծ չափով) և Ադրբեջանը (ավելի փոքր չափով): Այն դիտարկվում էր որպես հետխորհրդային տարածքում ռուսական ձևաչափի՝ տրանս-տարածաշրջանային համագործակցության այլընտրանք՝ տարածքային ամբողջականության սկզբունքի և հետխորհրդային տարածքում էթնո-քաղաքական հակամարտությունների վերաբերյալ նույնանման դիրքորոշումներ ունեցող անդամներով:

Հետագայում երկու երկրներն էլ այդ մոտեցումները դրսևորեցին բոլոր հնարավոր միջազգային հարթակներում (ՄԱԿ-ից մինչև ԵԱՀԿ, ԵԽԽՎ և այլ եվրոպական կառույցներ)՝ գրեթե միշտ փոխադարձաբար աջակցելով միմյանց՝ Ադրբեջանին, Վրաստանին կամ, ընդհանրապես, Հարավային Կովկասի տարածաշրջանում կամ հետխորհրդային տարածքում իրավիճակին վերաբերող համապատասխան բանաձևերի ու հայտարարությունների միջոցով: Բաքվի և Թբիլիսիի համանման աշխարհաքաղաքական մոտեցումները դրսևորվեցին նաև 1999 թ.՝ Ռուսաստանի գլխավորած ՀԱՊԿ ռազմաքաղաքական դաշինքին իրենց մասնակցությունը երկարաձգելուց հրաժարվելով՝ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների վերաբերյալ այս կազմակերպության՝ երկու երկրներին չգոհացնող դիրքորոշման մասին շատ նույնաբովանդակ հղումներով:

Վրաստանում Վարդերի հեղափոխությունից և 2003 թ. Հեյդար Ալիևի մահվանից հետո երկու նախկին կոմունիստ առաջնորդների գրեթե միաժամանակյա քաղաքական հեռացումն իրենց արդեն անկախ հանրապետությունների ղեկավարների պաշտոնից, ինչպես նաև ավելի երիտասարդ առաջնորդների իշխանության գալը (ներքին քաղաքականության հարցերում բա-

վականին տարբեր առաջնահերթություններով) կտրուկ ազդեցություն չեն ունեցել երկու երկրների միջև ռազմավարական փոխգործակցության առավել խորացման միտումների վրա: Ավելին, մի կողմից տարածաշրջանային էներգետիկ նախագծերի արդիականացումը, մյուս կողմից երկու երկրների ներգրավվածությունը Աֆղանստանում և Կենտրոնական Ասիայում ամերիկյան և միջազգային զորախմբերի մատակարարման գործում (որը մեծապես իրականացվում էր եվրոպական ուղղությամբ՝ Վրաստանի և Ադրբեջանի օդային տարածքով և օդանավակայաններով) երկու երկրներին էլ ներգրավեց ԱՄՆ հովանու ներքո գործող նոր աշխարհատնտեսական գծապատկերի մեջ, որին ակտիվ մասնակցեցին նաև Թուրքիան և եվրոպական երկրները:

2006 թ. Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթատարի լիարժեք շահագործումից և 2007 թ. Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազատարի գործարկումից հետո (որը հետագայում պետք է հիմք դառնար ավելի մեծ TAP/TANAP նախագծի համար), երկկողմ վրաց-ադրբեջանական ռազմավարական համագործակցությունը, շատ դեպքերում, առաջին հերթին՝ աշխարհատնտեսական և անվտանգային առումով (ներառյալ խողովակաշարերի անվտանգության ապահովման թեմայով համատեղ զորավարժությունները), սկսեց փաստացի ձեռք բերել եռակողմ բնույթ՝ Թուրքիայի ակտիվ մասնակցությամբ: Ադրբեջանը ևս սկսեց ավելի ու ավելի կարևոր դեր խաղալ Վրաստանի ներքին տնտեսական կյանքում՝ որպես խոշորագույն ներդրողներից մեկը, իսկ SOCAR-ը դարձավ վրացական գազատրանսպորտային համակարգում ամենամեծ դերակատարն ու հիմնական մատակարարը: Ադրբեջանի և Վրաստանի միջև ռազմական համագործակցությունը ներառում էր նաև ռազմատեխնիկական համագործակցության կարևոր բաղադրիչ, ներառյալ՝ Ադրբեջանին տասնյակ Սու-25 հարվածային ինքնաթիռների մատակարարումը, որոնք արտադրվել էին Թբիլիսիի ավիացիոն գործարանում՝ դեռ խորհրդային տարիներին: Հետխորհրդային շրջանում վրացական ռազմարդյունաբերական ձեռնարկությունները ոչ միայն Ադրբեջանին մատակարարում էին գործող գրոհա-

յին ինքնաթիռներ, այլև իրականացնում էին ադրբեջանական ռազմաօդային ուժերին սպասարկող մարտական ինքնաթիռների վերանորոգում և արդիականացում:

Վրաստանում 2012 թ. իշխանափոխությունից և Բիձինա Իվանիշվիլիի՝ իշխանության գալուց հետո, որն ավելի զուսպ ընկալում ուներ Վրաստանի և արևմտյան երկրների հարաբերությունների մասին և որոշակի մերժողականություն էր ցուցաբերում լիբերալ ժողովրդավարական գործընթացների հանդեպ, Ադրբեջանի հետ ռազմավարական գործընկերությունը շարունակեց ստանալ պրագմատիկ բովանդակություն: Ընդ որում, այդ գործընթացները նախորդ՝ Սաակաշվիլիի կառավարության օրոք երկրի ներքին քաղաքականության կարևորագույն գաղափարախոսությունն ու տրամաբանությունն էին, և, միևնույն ժամանակ, Բաքվում դիտարկվում էին որպես ադրբեջանա-վրացական հարաբերությունների ամենազգայուն կողմերից մեկը՝ հիմնվելով Իլհամ Ալիևի ավտորիտար ռեժիմի կայունության ակնհայտ առաջնահերթությունների վրա: Ընդ որում, Վրաստանի վրա Ադրբեջանի տնտեսական և, հետևաբար, քաղաքական ազդեցությունը շարունակեց աճել տարածաշրջանային համատեքստում: Դա դրսևորվեց, օրինակ, Բաքվի կողմից Թբիլիսիի վրա ճնշում գործադրելով՝ Աբխազիայի տարածքով երկաթուղու վերականգնման նախագծերում էական բեկում թույլ չտալու նպատակով, թեև գաղափարն ինքնին չէր վայելում վրաց հասարակության աջակցությունը: Նախագծերի քննարկումները նախաձեռնվել էին Ռուսաստանի կողմից՝ Հայաստանի աջակցությամբ, իսկ դրանց շուրջ գործընթացները ակտիվացել էին մինչև Հարավային Կովկասի տարածաշրջանային համատեքստում 2020 թ. աշնանը տեղի ունեցած փոփոխությունները:

Ադրբեջանի ուժեղացված ազդեցության գործոնն ավելի ցայտուն դրսևորվեց 2020 թ. աշնանը ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ Թբիլիսիի գործողություններով: Վրաստանը Լեռնային Ղարաբաղում մարտերի ամենաթեժ պահին արգելեց Ռուսաստանից Հայաստան ռազմական օդային տարանցումը,

մինչդեռ թուրքական և ադրբեջանական ռազմատրանսպորտային ինքնաթիռները, ռազմական գործողություններն սկսվելուց անմիջապես առաջ, Թուրքիայից, Իսրայելից և այլ երկրներից ազատ թռիչքներ էին կատարում դեպի Ադրբեջան: Համաձայն Հայաստանի պետական համապատասխան կառույցների տեղեկությունների, այդ թռիչքներով տեղափոխվել են նաև սիրիացի թուրքամետ զինյալները՝ Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողություններին մասնակցելու համար:

Նույն կերպ, դեռևս ռազմական գործողությունների մեկնարկից առաջ, Վրաստանի տարածքով Ադրբեջան էին վերատեղակայվել թուրքական F-16 կործանիչները և «Բայրաքթար» անօդաչու թռչող սարքերը՝ թուրքական սպասարկող անձնակազմով, որոնք ակտիվ աջակցում էին ադրբեջանական բանակին՝ 44-օրյա պատերազմի ժամանակ: Վրացական կողմը, սակայն, իր դիրքորոշումը հիմնավորեց նրանով, որ ռազմական տարանցումն Ադրբեջան տեղի է ունեցել 2020 թ. սեպտեմբերի 27-ի լայնածավալ ռազմական գործողությունների մեկնարկից առաջ, որից հետո վրացական կողմը փակել է իր օդային տարածքը երկու կողմերի ռազմական բեռների համար: Վրաստանի օդային տարածքը որոշակի ժամկետով բացվել է ռուսական ռազմատրանսպորտային ինքնաթիռների առջև՝ միայն Լեռնային Ղարաբաղում տեղակայվելու նպատակով ռուսական խաղաղապահ զորամիավորումների տեղափոխման համար՝ 2020 թ. նոյեմբերի 9-ին կնքված հրադադարի եռակողմ հայտարարության դրույթների համաձայն:

Ընդհանուր առմամբ, Վրաստանի և Ադրբեջանի հարաբերությունները, որոնք որոշ հետազոտողներ և քաղաքական գործիչներ հակված են բնութագրելու ոչ միայն որպես ռազմավարական գործընկերություն, այլև որոշ ոլորտներում նույնիսկ որակելով որպես գրեթե դաշնակցային հարաբերություններ, ունեն բավականին լուրջ քաղաքական, տնտեսական և հաղորդակցային հիմքեր: Ռազմավարական փոխգործակցությունը նաև Թուրքիայի հետ՝ այս հարաբերությունները վերածում է Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական կարևորագույն գործոններից մեկի, որի

կարևորությունն, ամենայն հավանականությամբ, միայն կաճի և կխորանա:

Հայաստան և Վրաստան. միավորված՝ պատմությամբ, բաժանված՝ աշխարհաքաղաքականությամբ

Հայաստանն ու Վրաստանը, հայերն ու վրացիները պատմական համակեցության ու բարիդրացիության հազարամյա փորձ ունեն: Լինելով եվրոպական քաղաքակրթության արևելյան թևի ամենահին քրիստոնյա ժողովուրդները, երկու ժողովուրդներն էլ պատմականորեն բախվել են իրենց մշակութային, էթնիկ և կրոնական ինքնությունը պահպանելու հետ կապված բազմաթիվ նմանատիպ մարտահրավերների ու սպառնալիքների, ինչպես նաև կիսում են նույնական քաղաքակրթական և մշակութային արժեքներն և առաջնահերթությունները, ունեն փոխադարձ համակեցության հարուստ փորձ, ինչի վկայությունն է Վրաստանում ավանդական հայկական համայնքի առկայությունը, որը տարբեր ոլորտներում և տարբեր փուլերում նշանակալի դեր է խաղացել այս երկրի պատմական զարգացման գործում:

Սակայն անկախության վերականգնումից հետո Հայաստանն ու Վրաստանը բավականին տարբեր մոտեցումներ ցուցաբերեցին ազգային անվտանգության ապահովման, իրենց արտաքին քաղաքականության իրականացման և տարածաշրջանային հակադիր դերակատարների ընտրության, ինչպես նաև քաղաքական և ռազմաքաղաքական կառույցների նկատմամբ: Դա հատկապես ակնհայտ դարձավ Վրաստանի և Ռուսաստանի միջև 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո: Այս ընթացքում Ռուսաստանը Հայաստանի հիմնական ռազմաքաղաքական գործընկերն էր ինչպես երկկողմ, այպես էլ ՀԱՊԿ ձևաչափով, մինչդեռ Վրաստանը, որը պատմականորեն Հայաստանի մերձավոր հարևանն ու հաղորդակցման հիմնական գործընկերն էր, հայտնվեց Ռուսաստանի հետ թշնամական հարաբերություններում: Վրաստանի հասարակության և վերնախավի քաղաքական ընկալումը հետխորհրդային զարգացման նախորդ շրջաններում ևս էականորեն պայ-

մանավորված էր Մոսկվայի և Երևանի միջև առկա ռազմավարական համագործակցության բացասական ընկալմամբ:

Հայաստանն, իր հերթին, անթաքույց մտահոգությամբ հետևում էր Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանի համագործակցության և ռազմավարական գործընկերության խորացմանը՝ այդ երկրների կողմից Հայաստանի տրանսպորտային և հաղորդակցության շրջափակման վատթարացման մտավախությամբ, ընդ որում, նաև Վրաստանի ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ: Հայկական կողմից մտահոգություններ են հնչել Վրաստանի տարածքով երեք երկրների կապի, էներգետիկայի և ենթակառուցվածքային նախագծերի վերաբերյալ, որոնք, առնվազն ադրբեջանական կողմից, բացահայտ նպատակաուղղված էին Հայաստանի հետագա մեկուսացմանը (Կովկասի ինստիտուտ, 2015):

Տարածաշրջանային էթնիկ հակամարտությունների կարգավորման վերաբերյալ երկու երկրների դիրքորոշումները նույնպես հիմնականում տարբեր էին մնացել: Վրաստանը պաշտպանում էր տարածքային ամբողջականության սկզբունքը (Աբխազիայի և Հարավային Օսիայի պարագայում), իսկ Հայաստանը պաշտպանում էր ինքնորոշման սկզբունքը (Լեռնային Ղարաբաղի պարագայում): Ջավախքի հիմնախնդիրը, որը մեծամասամբ հայաբնակ Վրաստանի հարավային շրջանն է, նույնպես կարևոր դեր է ունեցել և այժմ էլ ունի երկու երկրների երկկողմ հարաբերություններում՝ հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանին սահմանակից այս վարչատարածքային շրջանում ապրում է մոտ 100 հազար էթնիկ հայ (Minasyan, 2006):

Միևնույն ժամանակ, Ջավախքի հիմնախնդիրները վկայում են նաև Վրաստանի իշխանությունների և Հայաստանի ու Սփյուռքի հայկական կազմակերպությունների հետ դրական համագործակցության բազմաթիվ օրինակների մասին: Մասնավորապես, ԱՄՆ հայկական կազմակերպությունների աջակցությամբ էր, որ Վրաստանին տրամադրվեց Թբիլիսին ամենակարճ աշխարհագրական ճանապարհով Սամխցե-Ջավախեթի հայաբնակ շրջա-

նին կապող մայրուղու կառուցման դրամաշնորհը: ԱՄՆ հայկական լոբբիստական կազմակերպությունների օգնությունը, որոնց առաջնորդները 2005 թ. Վաշինգտոնում հանդիպել էին Սաակաշվիլիին, նույնիսկ Վաշինգտոնի և Թբիլիսիի միջև խորը քաղաքական երկխոսության պայմաններում, նպաստել էր Վրաստանի համար կարևոր ենթակառուցվածքային նախագծի իրականացմանը: Այն մեծապես նպաստեց վրացական հասարակական և հաղորդակցային դաշտ հայկական համայնքի մուտք գործելուն, ինչպես նաև Սամցխե–Ջավախքի տարածաշրջանի բնակչության սոցիալ-տնտեսական որոշ խնդիրների լուծմանը:

Ընդհանուր առմամբ, ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի իշխանությունների, նաև տարածաշրջանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների և սփյուռքի կառույցների դիրքորոշումները ողջ հետխորհրդային շրջանում ցույց տվեցին, որ չնայած տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների անմիջական ներգրավվածությանը, Հայաստանի և Վրաստանի՝ երբեմն նույնիսկ միմյանց հակասող արտաքին և անվտանգության քաղաքականության վեկտորների պայմաններում, Ջավախքը դարձավ գործնական մակարդակում մեր հարաբերությունների իսկապես որակական խորացման օրինակ:

Միևնույն ժամանակ, երկու երկրները ունեն համագործակցության այլ օրինակներ ևս՝ հիմնված իրատեսական պրագմատիզմի և, հնարավորության դեպքում, միմյանց շահերը հաշվի առնելու պատրաստակամության վրա: Օրինակ, 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո Հայաստանը չճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը, իսկ Վրաստանը հնարավորության սահմաններում (թեև ոչ միշտ, ինչպես ցույց տվեցին 2020 թ. աշնան իրադարձությունները), փորձում էր չեզոքություն պահպանել հայ-ադրբեջանական դիմակայության հարցում:

Գլոբալ մակարդակում և եվրոպական ու միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակներում երկու երկրների դիրքորոշումները բավականին նման են: Սակայն 2023 թ. վերջին Վրաստանի կողմից ԵՄ անդամության թեկնածու երկրի

պաշտոնական կարգավիճակ ստանալուց հետո Վրաստանը թևակոխել է եվրաինտեգրման գործընթացի՝ էականորեն նոր փուլ, եթե, իհարկե, դրա վրա չազդեն երկրի հետագա ներքաղաքական գործընթացները: Բացի այդ, Հայաստանն ու Վրաստանը սերտ և արդյունավետ հարաբերություններ ունեն Միացյալ Նահանգների հետ՝ հաշվի առնելով այդ երկրում ազդեցիկ հայկական համայնքի առկայությունը և ԱՄՆ քաղաքական աջակցությունը Վրաստանին: Վերոնշյալ բոլոր գործոնների արդյունքը բավականին կայուն քաղաքական modus vivendi է Թբիլիսիի և Երևանի միջև:

Հատկանշական է, որ 2012 թ. աշնանը Վրաստանում խորհրդարանական ընտրությունների արդյունքում Բիձինա Իվանիշվիլիի կառավարության գալով Վրաստանի նոր իշխանությունները փորձեցին շտկել իրենց արտաքին քաղաքականությունը, հատկապես Ռուսաստանի նկատմամբ, այդ թվում՝ օգտագործելով որոշ տարրեր, որոնք շատ նման էին Հայաստանի կողմից այն ժամանակ իրականացվող «կոմպլեմենտարիզմի» արտաքին քաղաքականության հայեցակարգին և դրա տրամաբանական տատանումներին:. Դրա պատճառը մասամբ վրացական քաղաքական վերնախավի հիասթափությունն էր նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի նախկին միավեկտոր քաղաքականության արդյունքներից: Վրաստանի համարձակ, բայց անհավասարակշիռ արտաքին քաղաքականության վտանգը ակնհայտ դարձավ 2008 թ. օգոստոսյան պատերազմի արդյունքում: Ուստի, խիստ ախտանշանային է, որ 2013 թ. հունվարին Երևան կատարած իր առաջին պաշտոնական այցի ժամանակ Վրաստանի վարչապետ Իվանիշվիլին ուղղակի մատնանշեց Հայաստանի հավասարակշռված արտաքին քաղաքականության առավելությունները՝ նկատելով. «Հայաստանը լավ օրինակ է վրացիների համար [այս համատեքստում]: Սրան կարող ենք նայել միայն «բարի նախանձով» (RFE/RL, 2013): Բնականաբար, այս հայտարարությունն արժանացավ Սաակաշվիլիի և նրա թիմի խիստ քննադատությանը, ինչը ցույց էր տալիս, որ Ռուսաստանի ուղղությամբ Վրաստանի արտաքին քաղաքականությունը

վերաիմաստավորելու բոլոր փորձերը պահանջում էին ավելի լուրջ հանրային աջակցություն, որին «Վրացական երազանքի» կառավարությունը երբեք չկարողացավ հասնել հետագա տարիներին ևս:

Հայաստանում ներքին և արտաքին քաղաքական փոփոխությունները, որոնք տեղի ունեցան 2018 թ. Նիկոլ Փաշինյանի գլխավորած նոր կառավարության իշխանության գալուց հետո, էապես շտկեցին հայ-վրացական հարաբերությունների արտաքին շրջանակները: Փաշինյանը վարչապետի պաշտոնում իր առաջին պաշտոնական այցը կատարեց Վրաստան՝ այցելելով նաև Ջավախք, որտեղ տարածաշրջանի տեղի հայ բնակչությունը նրան զանգվածային ողջույններով դիմավորեց: 2020 թ. 44-օրյա պատերազմից և, հատկապես, 2023 թ. աշնանը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության տեղահանումից հետո Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների սառեցման դինամիկան, ԵՄ և ԱՄՆ հետ Երևանի հարաբերությունների ակտիվացումը, բնականաբար, դրական ազդեցություն ունեցան հայ-վրացական հարաբերությունների ընդհանուր մթնոլորտի վրա: Դրանց վրա էապես չազդեց 2020 թ. աշնանը Լեռնային Ղարաբաղում ընթացող ակտիվ ռազմական գործողությունների ընթացքում պաշտոնական Թբիլիսիի դրսևորած դիրքորոշումը:

Հետագա ժամանակահատվածում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին սահմանը հատելու ռեժիմը երկու երկրների քաղաքացիների համար էապես դյուրացնելու վերաբերյալ (միայն անձը հաստատող ներքին փաստաթղթով), քննարկվեցին տնտեսական և տրանսպորտային ոլորտներում համագործակցությունն ակտիվացնելու տարբեր նախագծեր, հստակեցվեցին պաշտպանության ոլորտում և տարածաշրջանային քաղաքականության շուրջ փոխգործակցության ծրագրերը: Օգտագործելով Բաքվի հետ իր հատուկ հարաբերությունների ձևաչափը, վրացական կողմն աջակցել է 2021 թ. Ադրբեջանից մի խումբ հայ ռազմագերիների վերադարձին:

Ի վերջո, 2024 թ. հունվարի 26-ին Թբիլիսիում, միջկառավարական տնտեսական հանձնաժողովի հերթական նիստի ժամանակ, երկու երկրների ղեկավարները ստորագրեցին փաստաթուղթ՝ Հայաստանի և Վրաստանի միջև ռազմավարական տնտեսական գործընկերության մասին: Սակայն, որոշ փորձագետների կարծիքով, այս փաստաթուղթն իրականում բավականին ֆորմալ բնույթ է կրում (JAMnews, 2024): Այն էապես տարբերվում է Վրաստանի և Ադրբեջանի ռազմավարական գործընկերության փաստաթղթերից, որոնք ուժի մեջ են արդեն տասնամյակներ շարունակ և հաստատվում են զգալի պայմանավորվածություններով և երկկողմ, իսկ որոշ դեպքերում՝ եռակողմ (Թուրքիայի հետ) համագործակցության կոնկրետ ձևաչափերով, ընդ որում, ոչ միայն տնտեսական, էներգետիկ և հաղորդակցության, այլև քաղաքական, անվտանգային և պաշտպանության ոլորտներում:

Այնուամենայնիվ, վերջին տարիներին գործնական հարթությունում Հայաստանն ու Վրաստանը իսկապես իրական դինամիկա են դրսևորել երկկողմ հարաբերություններում: Փորձի, կարողությունների փոխադարձ փոխանակումը և երկկողմ համագործակցության քաղաքական կամքի դրսևորումը առանցքային նշանակություն ունեցան ոչ միայն Հայաստանի և Վրաստանի միջև երկկողմ հարաբերությունների հեռանկարի, այլև տարածաշրջանային տեսանկյունից, մասնավորապես՝ երկրների՝ ԵՄ հետ համագործակցության համատեքստում: Վերջին տարիների արտաքին քաղաքականության և անվտանգության ոլորտում Հայաստանի կարևորագույն ձեռքբերումներից մեկը՝ ԵՄ դիտորդական առաքելության (EUMA) տեղակայումը Հայաստանի սահմաններին, մեծապես պայմանավորված էր 2008 թ. Վրաստանում տեղակայված EUMM եվրոպական առաքելության վրացական փորձով, որը կիրառվեց Հայաստանում նմանատիպ առաքելության գաղափարը առաջ մղելու համար: Դեռ 2021 թ. ամռանը Ռումինիայի, Ավստրիայի և Լիտվայի արտգործնախարարների՝ Հարավային Կովկաս կատարած եռակողմ այցի ժամանակ Ռումինիայի ԱԳՆ այն ժամանակվա ղեկավար Բոգդան Աուրեսկուն առաջ քաշեց Հայաս-

տանում ԵՄ առաքելություն տեղակայելու գաղափարը, որը շատ առումներով նման կլիներ արդեն իսկ Վրաստանում գործողին՝ հաշվի առնելով այն փաստը, որ Ռումինիան ամենաակտիվ եվրոպական երկրներից էր, որ ներգրավված էր 2008 թ. պատերազմից հետո Վրաստանում այս առաքելության կազմակերպման գործում: Հատկանշական է նաև, որ երբ 2022 թ. աշնանը ԵՄ-ն որոշում ընդունեց EUMA-ի տեղակայման մասին, առաջին փուլում այն, մինչև անգամ, ժամանակավորապես ձևավորվեց Վրաստանում EUMM առաքելության կազմից:

Երրորդ երկրների, մասնավորապես՝ Ֆրանսիայի հետ Հայաստանի և Վրաստանի հատուկ հարաբերությունների գործոնի օգտագործումը, չնայած Բաքվի ակտիվ ճնշումներին, նույնպես նպաստեց Թբիլիսիի որոշմանը՝ 2024 թ. տրամադրել իր տարածքը՝ Հայաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցության ծրագրերի շրջանակներում Փարիզի կողմից տրամադրված մի շարք ֆրանսիական սպառազինության համակարգեր Հայաստան ռազմական տարանցման համար:

Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները 2022 թ. Ուկրաինայում պատերազմի սկսվելուց հետո

Ամնկախության առաջին իսկ օրերից ուկրաինական գործոնը առանձնահատուկ նշանակություն ունեցավ Վրաստանի թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականության համար: Ուկրաինան Վրաստանում ընկալվում էր որպես պոտենցիալ կարևոր քաղաքական, տնտեսական, ռազմատեխնիկական և հաղորդակցային և Ռուսաստանին հավասարակշռող գործոն Սևծովյան տարածաշրջանում՝ հաշվի առնելով նաև Ուկրաինայում վրացական զգալի սփյուռքի առկայությունը: Սաակաշվիլիի օրոք Ուկրաինան Վրաստանի գլխավոր ռազմատեխնիկական գործընկերներից էր, և նախկին նախագահին, անձնական և քաղաքական առումով, շատ բաներ էին կապում այդ երկրի հետ: Հենց այստեղ էր, որ 2013

թ. Վրաստանում իր նախագահության ավարտից հետո Սաակաշվիլին շարունակեց իր քաղաքական գործունեությունը:

Միևնույն ժամանակ, հետագայում Ուկրաինայում Միխեիլ Սաակաշվիլիի մնալն ու քաղաքական գործունեությունը Պյոտր Պորոշենկոյի և Վլադիմիր Զելենսկու նախագահության օրոք, բացասաբար են ազդել պաշտոնական Կիևի և Թբիլիսիի երկկողմ հարաբերությունների վրա՝ հաշվի առնելով նաև Ուկրաինայի ուժային կառույցներում բազմաթիվ վրացի քաղաքական ակտիվիստների ներկայությունը, որոնք քննադատում են «Վրացական երազանքի» կառավարությանը և անձամբ Բիձինա Իվանիշվիլին: 2021 թ. աշնանը Միխեիլ Սաակաշվիլիի՝ իշխանությունը փոխելու նպատակով Ուկրաինայից Վրաստան վերադառնալու անհաջող փորձը և դրա հետ կապված հետագա դատական և քաղաքական գործընթացները ավելի բարդացրին վրացական իշխանությունների և Ուկրաինայի հարաբերությունները՝ դեռևս Ռուսաստանի և Ուկրաինայի միջև 2022 թ. փետրվարին սկսված լայնամասշտաբ պատերազմից առաջ: Սա, ինչպես արդեն նշվեց, զգալիորեն տարբերվում էր վրաց հասարակության մեծամասնության մոտ Ուկրաինայի հանդեպ ունեցած մոտեցումներից, համակրանքից և ակնկալիքներից:

2022 թ. գարնանը, Ուկրաինա ռուսական ներխուժման սկզբնական ցնցումից հետո, Վրաստանում շատերին Ուկրաինայի ռազմական փլուզումը մոտ էր թվում: «Դոմինոյի սկզբունքի» ընկալման համաձայն աճում էին մտավախությունները, որ Ուկրաինայի նկատմամբ վերահսկողություն հաստատելուց հետո կարող է տեղի ունենալ ռուսական զորքերի հետագա ներխուժում Վրաստան: Սակայն Ուկրաինայում ռուսական բանակի սկզբնական անհաջողությունների մասշտաբները գիտակցելուն զուգահեռ, 2022 թ. գարնանը Վրաստանում հասարակական կարծիքը զգալիորեն փոխվեց. երկրի ընդդիմադիր դաշտում ակտիվ սկսեցին հնչել ոչ միայն Ուկրաինային բացահայտ ռազմական օգնություն տրամադրելու, այլև «Ռուսաստանի մոտալուտ ռազմական պարտության» ստեղծվող հնարավորությունից օգտվելու և ուժի միջոցով 2008 թ.

պատերազմի արդյունքում կորցրած Աբխազիան և Հարավային Օսիան վերադարձնելու կոչեր (Wesolowsky, 2022):

Այնուամենայնիվ, պաշտոնական Թբիլիսին, չնայած գործադրվող ճնշումներին ինչպես Ուկրաինայի, այնպես էլ հենց Վրաստանի ներսում ընդդիմադիր տրամադրություններ ունեցող հասարակության կողմից, որը կոչ էր անում բացել «Ռուսաստանի դեմ երկրորդ ճակատը», շարունակեց պահպանել բավականին զուսպ և գործնականում գրեթե չեզոք դիրքորոշում այս հարցում: Արդյունքում, Ուկրաինայի իշխանությունները 2022 թ. մարտին «խորհրդակցության» պատրվակով նույնիսկ Թբիլիսիից հետ կանչեցին Ուկրաինայի դեսպանին՝ այն հիմնավորմամբ, որ վրացական իշխանությունները թույլ չեն տվել, որ երկրից մեկնի վրացի կամավորներով չարտերային ինքնաթիռը, ովքեր ցանկանում էին միանալ ուկրաինական բանակին՝ ռուսական զորքերի դեմ մարտերում:

Այնուամենայնիվ, վրացի կամավորները տարբեր ճանապարհներով և բավականին զգալի քանակությամբ հայտնվեցին Ուկրաինայում ընթացող մարտերում, այդ թվում՝ որպես հատուկ «Վրացական լեգեոնի» (ստեղծվել է մինչև 2022 թ. ռուսական ներխուժումը և արդեն ակտիվ մասնակցություն է ունեցել Դոնբասի մարտերում) և այլ նմանատիպ կազմավորումների մաս՝ ուկրաինական բանակի կազմում, ինչը նույնիսկ դարձավ Վրաստանի ներքաղաքական դիսկուրսի անբաժանելի մասը:

Վրացական հասարակության շրջանում լարվածության աճը, ռուս–ուկրաինական պատերազմում իշխանությունների խուսափողական դիրքորոշման քննադատությունը և դինամիկ փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակի ոչ միանշանակ գնահատականները ակտիվացան նաև ռուս միգրանտ–ռելոկանտների զանգվածային հոսքին զուգահեռ, որոնք լայնածավալ ռազմական գործողությունների ծավալումից հետո տասնյակ հազարներով լքել էին Ռուսաստանը և հաստատվել Վրաստանում (ինչպես նաև հարևան Հայաստանում, Ադրբեջանում և հետխորհրդային այլ երկրներում, Թուրքիայում և այլուր)՝ չցանկանալով մոբիլիզացվել

կամ կրել Արևմուտքից կիրառվող պատժամիջոցների հետևանքները: Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի բացասական ընկալումը՝ հաշվի առնելով 2008 թ. ռուս-վրացական պատերազմի հիշողությունները, տարածվեց նաև այս երկրից ժամանած և փաստացի պատերազմից փախած ռուս ռելոկանտների վրա՝ ելնելով այն մտավախությունից, որ ռելոկանտները կարող են նաև Կրեմլի կողմից օգտագործվել Վրաստանի դեմ, այսպես կոչված, «հիբրիդային պատերազմում»:

Թեև վրացական արժույթի զգալի ամրապնդումը՝ կապված միգրանտների հոսքի և ռուսական կապիտալի արտահանման հետևանքով Ռուսաստանից Վրաստան ֆինանսական ռեսուրսների զանգվածային հոսքի հետ, ինչպես նաև միգրանտների՝ ընդհանուր առմամբ օրինապաշտ պահվածքը, աստիճանաբար նվազեցրին վրաց հասարակության անհանգստությունը, սակայն ուկրաինական հակամարտության վերաբերյալ իշխանությունների զգուշավոր քաղաքականության շուրջ դժգոհությունը պահպանվեց: Այն խորացավ նաև ռուս-ուկրաինական պատերազմում պաշտոնական Թբիլիսիի՝ գործնականում չեզոք դիրքորոշման պատճառով Արևմուտքի դժգոհության և Վրաստանի իշխանությունների՝ Ռուսաստանի դեմ սահմանված արևմտյան պատժամիջոցների ռեժիմին լիովին միանալու դժկամության հետևանքով:

Արդյունքում, ի տարբերություն Ուկրաինայի և Մոլդովայի, Վրաստանը 2022 թ. հունիսին չստացավ ԵՄ անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակ, թեև եվրոպական պահանջներին համապատասխանելու տեխնիկական տեսանկյունից Վրաստանը չէր զիջում, և որոշ առումներով գերազանցում էր հետխորհրդային մյուս երկու երկրներին՝ Ասոցացման համաձայնագրի մասնակիցներին: Եվրոպացի պաշտոնյաների հաշվարկներում գերակշռում էին քաղաքական նկատառումները, ինչն ակնհայտ էր նաև 2022 թ. հունիսի 9-ին Եվրախորհրդարանի ընդունած բանաձևի պարագայում, որով կոչ էր արվում պատժամիջոցներ սահմանել Բիձինա Իվանիշվիլիի դեմ՝ ի վնաս Ուկրաինայի Ռուսաստանին աջակցելու կասկածների հիման վրա:

Թեև արևմտյան պատժամիջոցների միտումնավոր շրջանցման և Ռուսաստանին օգնելու փաստերը չհաստատվեցին, 2022 թ. ամռանից Վրաստանում սկսեցին ակտիվ թափ հավաքել ընդդիմադիր ուժերի և արևմտամետ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից կազմակերպված բողոքի ակցիաները: Դրան զուգահեռ, վրաց հասարակության ներքին դժգոհությանը նպաստեց նաև 2023 թ. սկզբին իշխող կուսակցության ներկայացրած օրենսդրական նախաձեռնությունը, այսպես կոչված, «օտարերկրյա գործակալների» մասին, որը հասարակական զանգվածային դժգոհություն առաջացրեց, հատկապես երիտասարդների, հասարակական կազմակերպությունների ակտիվիստների և ընդդիմադիր ուժերի շրջանում: Սակայն 2023 թ. ամռանը Ուկրաինայի սպասվող հակահարձակման ձախողումից հետո, երբ մարտերն Ուկրաինայում տեղափոխվեցին երկարատև «հյուծման պատերազմի» փուլ, որում Ռուսաստանի շանսերն ավելի բարենպաստ էին թվում, վրացական իշխանությունների՝ Ռուսաստանին չհրահրելու և չեզոքություն պահպանելու դիրքորոշումը Վրաստանի ներքաղաքական դաշտում սկսեց ավելի հիմնավորված համարվել: Այդուհանդերձ, 2023 թ. արևմտյան երկրների ճնշման ազդեցության տակ և շարունակվող բողոքի ցույցերի համատեքստում «Վրացական երազանքի» կառավարությունը որոշեց ժամանակավորապես չընդունել «օտարերկրյա գործակալների մասին» օրինագիծը:

Այս ֆոնին վրացական իշխանությունները փորձեցին լրացուցիչ գործոն գտնել՝ իրենց տարածաշրջանային քաղաքականությունը ազդեցիկ դերակատարների միջև հավասարակշռելու համար: 2023 թ. հուլիսի վերջին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին պաշտոնական այց կատարեց Չինաստան և միանգամայն անսպասելի ստորագրեց Ռազմավարական գործընկերության մասին հռչակագիր, ինչը զարմանք և, նույնիսկ, ցնցում առաջացրեց երկրի ընդդիմադիր ուժերի մոտ: Չնայած այս համաձայնագրի հակաարևմտյան բնույթի մասին բոլոր մեղադրանքներին, Վրաստանի իշխանությունների դիրքորոշումն այն էր, որ Չինաստանը ոչ միայն Վրաստանի, այլև արևմտյան երկր-

ների կարևոր տնտեսական գործընկերներից է, ինչպես նաև իրեն դրսևորել է որպես երկրի առաջատար ներդրողներից մեկը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է կապի և ենթակառուցվածքային լայնածավալ նախագծերի իրականացմանը:

Զգույշ, բայց միևնույն ժամանակ բավականին վստահ, Վրաստանի իշխանությունների վարած հավասարակշռության քաղաքականությունը, չնայած արտաքին և ներքին ուժերի ճնշմանը, ի վերջո՝ 2023 թ. դեկտեմբերին տվեց իր առաջին գործնական պտուղը՝ արտաքին քաղաքական տարբեր հարթակներում Ուկրաինայի պատերազմի և Ռուսաստանի ու Արևմուտքի առճակատման համատեքստում: Թեև ընդդիմադիր ուժերը գործադրում էին բոլոր ջանքերը՝ արևմտյան մայրաքաղաքներում «Վրացական երազանքի» կառավարությունը և անձամբ դրա առաջնորդ Բիձինա Իվանիշվիլիին ներկայացնելու որպես Կրեմլի վստահելի անձ, ԵՄ-ն որոշեց Վրաստանին տրամադրել Եվրամիության անդամ դառնալու թեկնածու երկրի կարգավիճակ, թեև հենց Արևմուտքն էր ճնշումներ գործադրում՝ ռուս-ուկրաինական հակամարտությունում Վրաստանի ավելի ակտիվ դիրքորոշմանը հասնելու նպատակով: Թեև սա միջանկյալ արդյունք էր, սակայն նշանակալի ու կարևոր ձեռքբերում էր, որին իշխող կուսակցությունը կարողացավ հասնել միջազգային և տարածաշրջանային բարդ իրավիճակում. այն է՝ իրականություն դարձավ վերջին տասնամյակների ընթացքում Վրաստանի արտաքին քաղաքականության ամենակարևոր առաջնահերթություններից մեկը՝ Վրաստանի եվրաինտեգրումը:

Այնուամենայնիվ, Վրաստանի շուրջ ստեղծված բարդ աշխարհաքաղաքական համատեքստը շարունակում է պահպանվել՝ ստեղծելով նոր մարտահրավերներ և սպառնալիքներ երկրի համար: 2023 թ. ավարտից ի վեր Վրաստանը, ավելի կոնկրետ՝ երկրի՝ միջազգայնորեն ճանաչված Աբխազիայի տարածքը, կանգնած է ռուս-ուկրաինական հակամարտության ձևաչափում ներգրավման նոր սպառնալիքի առաջ: Սև ծովում մարտական գոտու ընդլայնումը, մասնավորապես, 2023 թ. կեսերից սկսած Ուկրաի-

նայի կողմից առանց անձնակազմի մոտորանավակների ակտիվ օգտագործումն ընդդեմ Սևաստոպոլում և Ղրիմի թերակղզու տարածքում ռուսական Սևծովյան նավատորմի ռազմածովային բազաների, ինչպես նաև ուկրաինական կողմից հրթիռային հարձակումները, ինչի հետևանքով խորտակվեցին ռուսական մի քանի ռազմանավեր և մոտորանավակներ, ստիպեցին ռուսական հրամանատարությանը՝ վերգետնյա նավերի մեծ մասը վերատեղակայել Նովոռոսիյսկի ավելի հեռավոր ռազմածովային բազայում: Սակայն Նովոռոսիյսկի ռազմածովային բազան նույնպես գտնվում է ուկրաինական հեռահար խոցման զինատեսակների արդյունավետ հասանելիության գոտում (Hudson Institute, 2024):

Այդ իսկ պատճառով, Սևծովյան նավատորմի հրամանատարությունն ստիպված էր այլընտրանքային և ակտիվ ռազմական գործողությունների գոտուց ավելի հեռու գտնվող հենակետեր որոնել մնացած վերջրյա նավերի համար՝ դրանք ուկրաինական առանց անձնակազմի մոտորանավակների, թևավոր և բալիստիկ հրթիռների հարձակումներից պաշտպանելու համար՝ հաշվի առնելով նաև ապագայում օդային հարվածների հավանականությունը՝ Ուկրաինայի կողմից F–16 կործանիչներ ձեռք բերելու դեպքում: 2023 թ. հոկտեմբերին Աբխազիայի նախագահ Ասլան Բժանիան հայտարարել է Օչամչիրեում (Սուխումիից 50 կմ հարավ և վրաց-աբխազական սահմանի մոտ կառուցվող վրացական Ախալցիխա նոր նավահանգստից 20 կմ հյուսիս) ռուսական ռազմածովային ուժերի նոր բազայի բացման մասին: Օչամչիրե նավահանգիստը գտնվում է Սևծովյան նավատորմի գլխավոր ռազմածովային բազայից մոտավորապես 500 կմ հարավ, ինչը հնարավորություն է տալիս՝ ավելի անվտանգ կազմակերպել այնտեղ ռուսական ռազմանավերի տեղակայումը, թեև նավահանգստի ոչ բավարար խորությունը պահանջում է վերակառուցել այն՝ ավելի խոշոր ռազմանավեր տեղակայելու համար:

Վրացի փորձագետների գնահատմամբ, Օչամչիրեում Սևծովյան նավատորմի նավերի նույնիսկ մի մասի մշտական տեղակայման հնարավորությունը ոչ միայն ամրապնդում է Վրաստանից

անջատված և Ռուսաստանի կողմից ճանաչված Աբխազիայի նկատմամբ նկրտումները, այլև ուղղակի սպառնալիք է ստեղծում վրացական Փոթի և Բաթումի նավահանգիստների համար: Այն նաև վտանգներ է ստեղծում ինչպես Վրաստանի չեզոքության, այնպես էլ ռուս-ուկրաինական հակամարտության մեջ ներքաշվելու առումով, ընդ որում՝ երկու կողմից: Վտանգներ կան նաև Օչամչիրեում տեղակայված ռուսական ռազմանավերի՝ Ուկրաինայի դեմ ուղղակի օգտագործման պարագայում այդ ռազմածովային բազայի և Սևծովյան նավատորմի նավերի վրա ուկրաինական հնարավոր հարվածների դեպքում: Ուկրաինայի նախագահ Զելենսկին արդեն հայտարարել է, որ ցանկացած նոր ռուսական բազա, ներառյալ՝ Աբխազիայում տեղակայվածը, կդիտարկվի որպես Ուկրաինայի օրինական ռազմական թիրախ (Kakachia & Minesashvili & Kakhishvili, 2024):

Ակնհայտ է, որ շարունակվող ուկրաինական ճգնաժամը սեղմում է Վրաստանի արտաքին քաղաքական մանևրի շրջանակը ոչ միայն ռուսական, այլև արևմտյան ուղղությամբ: Վրաստանի իշխանությունները ձեռնարկում են բոլոր հնարավոր միջոցները՝ հյուսիսային հարևանին չհրահրելու նպատակով: Օրինակ, 2024 թ. փետրվարի սկզբին Վրաստանի պետական անվտանգության ծառայությունը հայտարարել էր Ռուսաստանի հետ սահմանին Ուկրաինայից պայթուցիկներով բեռնված ավտոմեքենայի կալանման մասին (Лебедева, 2024):

Մյուս կողմից, հիմնականում ներքաղաքական բնույթի նկատառումները, 2024 թ. աշնանը տեղի ունենալիք խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման համատեքստում, ստիպում են Վրաստանի իշխանություններին՝ ձեռնարկել քայլեր, որոնք էապես կսառեցնեն երկրի հարաբերությունները ԵՄ և ԱՄՆ-ի հետ: 2024 թ. գարնանը վրացական իշխանությունները կրկին շրջանառության մեջ դրեցին օտարերկրյա գործակալների մասին օրենքի նախագիծը՝ անտեսելով Թբիլիսիում և Վրաստանի ողջ տարածքում բողոքի զանգվածային ցույցերը, ինչպես նաև

ԵՄ և ԱՄՆ ուղղակի սպառնալիքներն ու ճնշումները[2] (Armenpress, 2024)։ Մայիսին այն հավանության է արժանացել Վրաստանի խորհրդարանի կողմից (ընդունված օրինագիծը Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին չի ստորագրել, սակայն, Սահմանադրության դրույթների համաձայն, մայիսի 28-ին Վրաստանի խորհրդարանի մեծամասնության քվեարկությամբ նախագահի վետոն մերժվել է)։

Եզրակացություն

Վրաստանի արտաքին քաղաքականության տարածաշրջանային հարթության դինամիկան ցույց է տալիս, որ հետխորհրդային ողջ ժամանակահատվածում երկիրը տարատեսակ հաջողություններով և արդյունքներով փորձել է խաղալ կամ հավասարակշռության, կամ ազդեցիկ արտաքին տարածաշրջանային և համաշխարհային դերակատարների հակասական շահերի վրա, ինչը պայմանավորված է պատմական, քաղաքական, աշխարհագրական, ինչպես նաև մշակութային և սոցիալական առանձնահատկությունների և գործոնների բարդ փոխկապակցվածությամբ, որոնք բնութագրում են ժամանակակից Վրաստանի արտաքին քաղաքականությունը, դրա ակունքներն ու իրականացման ավանդույթները։

Ներկայումս, նույնիսկ Ուկրաինայում շարունակվող պատերազմի ընթացքում Ռուսաստանի և Արևմուտքի միջև արտաքին քաղաքական մանևրումների շրջանակի սեղմման և «Արևելքի ու Արևմուտքի» նոր առճակատման պայմաններում, թվում է, թե

[2] Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի խոսքերով, իր հետ հեռախոսազրույցի ընթացքում «եվրահանձնակատարներից մեկը» թվարկել է այն միջոցների ցանկը, որոնք կարող են ձեռնարկել արևմտյան քաղաքական գործիչներն այն բանից հետո, երբ Վրաստանում վերջնականապես ընդունվի «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին օրենքը»՝ հիշատակելով Սլովակիայի վարչապետի դեմ կատարված մահափորձի միջադեպը. «Դուք տեսաք, թե ինչ եղավ Ֆիցոյի հետ, և պետք է զգույշ լինեք»։ Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհեյն իր հերթին ասել է, որ Վրաստանի վարչապետի հետ զրույցում իր խոսքերը «կտրվել են համատեքստից»։

Վրաստանը դեռևս կարողանում է ավելի հավասարակշռված ու զգուշավոր քաղաքականություն իրականացնել: Թե որքան ժամանակ պաշտոնական Թբիլիսին կկարողանա շարունակել այս քաղաքականությունը՝ ցույց կտա ժամանակն ու գլոբալ և տարածաշրջանային մասշտաբով ռազմաքաղաքական գործընթացների բարդ դինամիկան: Ակնհայտ է նաև, որ Վրաստանի իշխանությունները երկրի արտաքին քաղաքական վարքագծի երկարաժամկետ քաղաքական պլանավորման ժամանակ հաշվի են առնում զարգացման բոլոր հնարավոր սցենարները: Դիտարկվող սցենարների շրջանակը և Վրաստանի արտաքին քաղաքականության արձագանքը տատանվում են ուկրաինական պատերազմի դանդաղ շարունակությունից մինչև կողմերից մեկի հնարավոր հաղթանակը, որը կարող է տարածաշրջանային և գլոբալ հետևանքներ ունենալ Վրաստանի, վերջինիս եվրոպական և եվրատլանտյան հավակնությունների, տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հեռանկարների ու երկրի տարանցիկ հնարավորությունների, ինչպես նաև Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ հարաբերությունների ապագայի վրա:

Մոտ ապագայում Վրաստանի արտաքին քաղաքականության գլխավոր ինտրիգը, թերևս, գտնվելու է երկրի ներքին քաղաքականության և ներկայիս իշխանությունների կայունության հեռանկարների տիրույթում, հատկապես՝ 2024 թ. աշնանը սպասվող խորհրդարանական ընտրությունների համատեքստում: Առաջիկա խորհրդարանական ընտրությունների արդյունքներից է մեծապես կախված լինելու, թե Վրաստանը որքանով կկարողանա շարունակել այն հավասարակշռված արտաքին քաղաքականությունը, որը բնորոշ է Թբիլիսիի վերջին մի քանի տարիների մոտեցումներին, կամ թե գլոբալ քաղաքական գործընթացների ազդեցության տակ որքանով կփոխվեն Վրաստանի արտաքին քաղաքականության սկզբունքները և դրանց իրականացումն Ուկրաինայում շարունակվող և խորացող պատերազմի և Ռուսաստանի ու Արևմուտքի առճակատման համատեքստում:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

Մենագրություններ

1. ***Minasyan (2006),*** Minasyan S., Ethnic Minorities in Georgia: Potential for Integration, A CASE STUDY OF THE COUNTRY'S ARMENIAN POPULATION, Yerevan, 2006, see more.
2. ***Suny (1994),*** Suny R. G., The Making of the Georgian Nation, Indiana University Press, 1994, p. 123.

Հոդվածներ

3. ***Կովկասի ինստիտուտ (2015),*** Կովկասի ինստիտուտ, Հայաստանն ու Վրաստանը ժամանակակից քաղաքական գործընթացների համատեքստում. նոր մարտահրավերներ և հնարավորություններ տարածաշրջանային անվտանգության համատեքստում, Կովկասի ինստիտուտ - Հանրապետական ինստիտուտ, Երևան-Թբիլիսի, 01. 2015:
4. ***Муханов (2022),*** Муханов В., «Российско-грузинские отношения: от эмоций к прагматизму», Россия и новые государства Евразии, № II(LV), 2022, с. 107.
5. ***Cecire (2013),*** Cecire H.M., Security and Symbolism: Georgia's NATO Aspirations in Perspective, GEORGIAN FOREIGN POLICY: THE QUEST FOR SUSTAINABLE SECURITY, Konrad Adenauer Stiftung, Tbilisi, 2013, pp. 76–77.
6. ***Jones & Kakhishvili (2013),*** Jones S., Kakhishvili L., The Interregnum: Georgian Foreign Policy from Independence to the Rose revolution, GEORGIA FOREIGN POLICY: THE QUEST FOR SUSTAINABLE SECURITY, Konrad-Adenauer-Stiftung, Tbilisi, 2013, p. 17.
7. ***Kakachia & Minesashvili & Kakhishvili (2018),*** Kakachia K., Minesashvili S., Kakhishvili L., Change and Continuity in the Foreign Policy of Small States: Elite perceptions and Georgia's Foreign Policy Towards Russia, Europe – Asia Studies, Vol. 70, Issue 5, 2018.
8. ***Kakachia & Minesashvili (2024),*** Kakachia K., Minesashvili S., Russia's Intended Naval Base in Ochamchire: Implications for Georgian and Black Sea Security, PONARS Eurasia Policy Memo, No884, March, 2024.
9. ***Kakachia (2013),*** Kakachia K., NATO – Georgia Relations: Will 2014 Bring Anything New?, PONARS Eurasia Policy Memo, No291, September, 2013.
10. ***Merabishvili & Kiss & Rasz (2015),*** Merabishvili G., Kiss A., Rasz A., Development of Georgian Security Policy in the Light of the Strategic Documents: Analysis of the National Security Concepts of 2005 and 2011,

PANORAMA OF GLOBAL SECURITY ENVIRONMENT 2014, Center for European and North Atlantic Affairs (CENAA), Bratislava, 2015.

11. ***Nodia (2013),*** Nodia Gh., Divergent Interests: What Can and Cannot be Achieved in Georgia-Russian Relations", GEORGIA FOREIGN POLICY: THE QUEST FOR SUSTAINABLE SECURITY, Konrad-Adenauer-Stiftung, Tbilisi, 2013, pp. 100–106.

Համացանցային հղումներ

12. ***Armenpress (2024),*** Եվրահանձնակատարը պատասխանել է Վրաստանի վարչապետի հայտարարությանը՝ իրեն ուղղված սպառնալիքների մասին, 24.05.2024, https://armenpress.am/hy/article/1137869, (31.07.2024):
13. ***Лебедева (2024),*** Грузия перехватила взрывчатку, перевозимую из Одессы в РФ, 05.02.2024, https://www.dw.com/ru/gruzia-zaavila-o-perehvate-vzryvcatki-perevozimoj-iz-ukrainy-v-rf/a-68176861, (31.07.2024).
14. ***Blinken (2024),*** https://www.state.gov/announcement-of-a-visa-restriction-policy-for-undermining-democracy-in-georgia-and-comprehensive-review-of-all-u-s-georgia-cooperation/, (31.07.2024).
15. ***Hudson Institute (2024),*** The Battle for the Black Sea Is Not Over, 16.04.2024, https://www.hudson.org/events/battle-black-sea-not-over, (31.07.2024).
16. ***JAMnews (2024),*** Стратегическое партнерство Армения-Грузия. «Историческое решение» или формальность?, https://jam-news.net/ru /%D1%81%D1%82%D1%80%D0%B0%D1%82%D0%B5%D0%B3%D0%B8%D1%87%D0%B5%D1%81%D0%BA%D0%BE%D0%B5-%D1%81%D0%BE%D1%82%D1%80%D1%83%D0%B4%D0%BD%D0%B8%D1%87%D0%B5%D1%81%D1%82%D0%B2%D0%BE-%D0%B0%D1%80%D0%BC%D0%B5%D0%BD/, (31.07.2024).
17. ***NSC,*** National Security Policy of Georgia, https://mfa.gov.ge/en/national-security-concept, (31.07.2024).
18. ***RFE/RL (2013),*** Interview: Georgian Prime Minister Bidzina Ivanishvili, 18.01.2013, https://www.rferl.org/a/24877492.html, (31.07.2024).
19. ***Wesolowsky (2022),*** In Georgia, Calls Emerge To Retake South Ossetia, Abkhazia, 10.03.2022, https://www.rferl.org/a/georgia-abkhazia-south-ossetia-russia-ukraine/31746764.html, (31.07.2024).

SERGEY MINASYAN

REGIONAL DIMENSION OF GEORGIA'S FOREIGN POLICY

Following Georgia's independence and going through the complex period of civil unrest, as well as the ethno-political conflicts in South Ossetia and Abkhazia in the early 1990s, the country's foreign policy was guided mainly by the need to ensure national security while simultaneously engaging in nation-building processes and the formation of governmental institutions. Also, Georgia's foreign policy had to deal with the diplomatic challenges arising from the unresolved conflicts in South Ossetia and Abkhazia.

A significant feature of Georgia's foreign policy also involved adressing the domestic political and economic instability, with an emphasis on building and sustaining the political order. Regarding the internal political processes taking place in Georgia, 2023–2024 developments, particularly the move made by the "Georgian Dream" to implement legal control over foreign funding for Georgian NGOs, as well as the response of the USA and the European Union served to emphasize the significance of the aforementioned foreign policy of the country's leadership among other primary concerns.

In the regional context, especially after the "Rose Revolution" of 2003-2004, a top priority of Georgia's foreign policy has been securing Western support for its position over the ethno-political conflicts in South Ossetia and Abkhazia. After the August 2008 war, Georgia's foreign policy strategy gradually more focused on the "non-recognition" policy toward Abkhazia and South Ossetia, getting support from Western countries and a significant part of the international community.

At the same time, Georgian authorities have sporadically attempted to restart a political dialogue with Moscow, with the aim of softening Russia's position on Abkhazia and South Ossetia. Such efforts were made during the Shevardnadze era, the early period of Saakashvili's

administration, and especially after the rise to power of "Georgian Dream" in 2012, led by Bidzina Ivanishvili.

Ivanishvili's leadership is characterized by a more pragmatic approach towards Russia as compared to previous administrations. Thus, neither the 2014 Crimean crisis nor the large-scale Russian invasion of Ukraine in February 2022 notably changed this approach. However, through careful balancing between Russia and the West, and taking into cosnsideration the large-scale geopolitical shifts after the war in Ukraine, Georgia achieved a major foreign policy target: obtaining candidate status for EU membership in the end of 2023.

The second Karabakh war in the fall of 2020 played an important role in altering Georgia's regional and foreign policy priorities in the South Caucasus. At the same time, Georgia's position on the Karabakh conflict, as well as the relations with Armenia, Azerbaijan, and Turkey, have been largely shaped by traditional historical, geopolitical, economic, and psychological factors that have influenced Tbilisi's bilateral and multilateral relations during the post-Soviet era.

The development of the regional dimension of Georgia's foreign policy shows that, during the post-Soviet period, the country has tried to balance or navigate the conflicting interests of influential regional and global actors. This balancing has been influenced by historical, political, geographical, and cultural components that characterize Georgia's foreign policy traditions and strategic implementation.

In the nearest future, a critical issue in Georgia's political development will be the result of the parliamentary elections scheduled for October 26, 2024. These elections will play a significant role in deciding whether Georgia continues its balanced foreign policy or shifts its approach under the influence of global political developments, particularly the ongoing war in Ukraine and the broader confrontation between Russia and the West.

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ
Քաղաքական և տնտեսական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի նախագահ, պատմական գիտությունների թեկնածու

ԱՄՆ-Ի ԵՎ ԵՄ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ 1991–2023 ԹԹ.

1991 թ. ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասը, հետխորհրդային այլ տարածաշրջանների հետ միասին, մուտք գործեց միջազգային աշխարհաքաղաքականության կիզակետ: Տարածաշրջանը հայտնվեց միջազգային տարբեր դերակատարների, այդ թվում ԱՄՆ-ի, իսկ 1993 թ. Եվրամիության ձևավորումից հետո, նաև Բրյուսելի ուշադրության կենտրոնում: ԱՄՆ-ի և Եվրամիության քաղաքականությունը Հարավային Կովկասի նկատմամբ այս ժամանակահատվածում՝ կարելի է բաժանել մի քանի փուլերի.

1990-ականներ, երբ հավաքական Արևմուտքի հիմնական խնդիրը նորանկախ պետություններին աջակցության ցուցաբերումն էր՝ պետականաշինության մեկնարկի փուլում.

2000-ական թվականներ, երբ առաջին հերթին ԱՄՆ-ի ջանքերով ձևավորվեց Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա ռազմավարական գործընկերությունը՝ միտված տարածաշրջանում Ռուսաստանի և Իրանի թուլացմանը, և ադրբեջանական էներգակիրների՝ Ռուսաստանի շրջանցմամբ միջազգային շուկաներ արտահանմանը.

2010-ական թվականներ, որոնք բնորոշվեցին Եվրամիության ներգրավման աստիճանական ավելացմամբ, առաջին հերթին՝ Արևելյան գործընկերության ծրագրի գործարկման միջոցով, և, միաժամանակ, տարածաշրջանի հանդեպ ԱՄՆ-ի հետաքրքրության թուլացմամբ՝ պայմանավորված ԱՄՆ-Չինաստան աճող մրցակցությամբ և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի նկատմամբ ԱՄՆ-ի մեծացող ուշադրությամբ.

2021–2023 թթ., երբ Ռուսաստան-Արևմուտք հակասությունների ծայրահեղ սրման, Արցախյան երկրորդ պատերազմից հետո Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության փոփոխման պայմաններում հավաքական Արևմուտքը, առաջին հերթին՝ ԱՄՆ-ը, որդեգրել էին տարածաշրջանից Ռուսաստանի դուրս մղման քաղաքականություն՝ այդ նպատակի համար օգտագործելով նաև տարածաշրջանում առկա հակամարտությունների կարգավորման գործընթացում ներգրավվածությունը:

Սույն ենթաբաժնի հիմնական նպատակն է՝ ներկայացնել Հարավային Կովկասում հավաքական Արևմուտքի քաղաքականության և շահերի վերլուծությունը, և դրանց՝ ՀՀ անվտանգային միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատականը: Աշխատանքում հիմնական ուշադրությունը դարձվել է 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմից հետո տեղի ունեցած զարգացումների վերլուծությանը, միևնույն ժամանակ ներկայացվելու են 1991–2020 թթ. իրադարձությունները:

ԱՄՆ-ի և ԵՄ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ 1990-ական թվականներին

ԽՍՀՄ փլուզումից հետո, ինչպես ողջ հետխորհրդային տարածաշրջանի, այնպես էլ Հարավային Կովկասի նկատմամբ հավաքական Արևմուտքի քաղաքականության հիմնասյունը տարածաշրջանի նորանկախ պետություններին աջակցության ցուցաբերումն էր տնտեսական և քաղաքական բարեփոխումների, ինչպես նաև պետական ինստիտուտների զարգացման գործում: Այդ աջակցությունը, մի կողմից, հենվում էր այն գաղափարի վրա, որ արևմտյան օրինակով ժողովրդավարական պետությունների ձևավորումը բխում է Արևմուտքի շահերից, քանի որ այդ պետությունները դառնում էին Արևմուտքի բնական դաշնակիցները, մյուս կողմից՝ կար ընկալում, որ հետխորհրդային պետություններում քիչ թե շատ զարգացած են պետական ինստիտուտները, ինչը թույլ կտա մեծացնել վերջիններիս անկախության աստիճանը և նվազեցնել Ռուսաստանի ազդեցության վերականգնումը:

Միևնույն ժամանակ, հավաքական Արևմուտքն այս շրջանում բավականաչափ պասիվ էր տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործում: Պատահական չէ, որ թե՛ Արցախում, թե՛ Աբխազիայում, և թե՛ Հարավային Օսիայում ռազմական գործողությունների դադարեցումն ու զինադադարի համաձայնագրերի ստորագրումը տեղի ունեցան հիմնականում Ռուսաստանի ակտիվ մասնակցությամբ: Իհարկե, Արևմուտքը ներկայացված էր 1992 թ. ստեղծված Մինսկի խմբում, սակայն 1994 թ. մայիսին Արցախում հաստատված հրադադարը Ռուսաստանի ներգրավման արդյունք էր:

ԱՄՆ-ը և Եվրամիությունը տարածաշրջանի պետություններին ցուցաբերվող օգնության շրջանակներում քայլեր ձեռնարկեցին նաև այդ պետությունների և արևմտյան տարբեր կառույցների միջև համագործակցության սերտացման ուղղությամբ: Սկզբում ստեղծվեց ՆԱՏՕ-ի Եվրատլանտյան համագործակցության խորհուրդը, որի շրջանակում էլ գործարկվեց «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրը, որին անդամակցեցին Հարավային Կովկասի բոլոր պետությունները (NATO, 2024): Եվրամիությունը 1990-ական կեսերին Հայաստանի, Վրաստանի, և Ադրբեջանի հետ կնքեց գործընկերության և համագործակցության պայմանագրեր, որոնք կարգավորում էին երկկողմ հարաբերությունները: 1990-ական թվականները կարելի է բնորոշել որպես հավաքական Արևմուտքի կողմից տարածաշրջան ներթափանցման և կողմերի՝ միմյանց ավելի լավ ճանաչելու տարիներ: Նշված ժամանակահատվածում հավաքական Արևմուտքի հիմնական ուշադրությունը սևեռված էր Արևելյան Եվրոպայի պետությունների՝ ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին անդամակցության գործընթացին, նախկին Հարավսլավիայի հակամարտությունների կարգավորմանը, ինչպես նաև Ռուսաստանի հետ հարաբերությունների ճշգրտմանը: Հարավային Կովկասն այս տարիներին հավաքական Արևմուտքի հիմնական առաջնահերթությունների մեջ չէր մտնում, և տարածաշրջանի հետ հարաբերությունները կրում էին որոշակի իներցիոն բնույթ: Արևմուտքի համար տարածաշրջանի նկատմամբ հե-

տաքրքրության հիմնական աղբյուրն այս փուլում ադրբեջանական նավթն էր, և 1994 թ. ստորագրվեց «Դարի պայմանագիրը»:

Հարաբերությունները 2000-ական թվականներին

21-րդ դարի սկզբում Հարավային Կովկասի նկատմամբ հավաքական Արևմուտքի քաղաքականության մեջ նկատվեցին որոշակի փոփոխություններ: Դրանք պայմանավորված էին մի քանի հանգամանքով:

Առաջին հերթին, հարկ է նշել ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ կրտսերի ռազմավարությունը՝ աշխարհում ժողովրդավարության առաջ մղման ուղղությամբ: Այն առավել մեծ կարևորություն ստացավ Բուշի նախագահության երկրորդ ժամկետում, ինչի մասին էր վկայում երդմնակալության ժամանակ նախագահի ելույթը (Bush, 2005): Աշխարհում, այդ թվում՝ հետխորհրդային տարածաշրջանում, ժողովրդավարության առաջ մղման ռազմավարությունն ակտիվորեն պաշտպանվում էր նաև նախագահի աշխատակազմում էական ազդեցություն ունեցող նեոպահպանողականների կողմից, որոնց առաջնորդը փոխնախագահ Դիք Չեյնին էր:

Այս համատեքստում փոփոխությունների էր ենթարկվում Արևմուտքի քաղաքականությունը ողջ հետխորհրդային տարածաշրջանի նկատմամբ: Եթե 1990-ականներին հիմնական ուշադրությունը կենտրոնացած էր Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի պետությունները արևմտյան տնտեսական և քաղաքական համակարգերի մեջ ներառելու վրա, ապա արդեն 2000-ականների սկզբին ավելի մեծ ուշադրություն էր դարձվում նախկին խորհրդային հանրապետություններին: Միևնույն ժամանակ, արդեն 1990-ականների վերջին, Արևմուտքում սկսել էր ձևավորվել որոշակի անվստահություն Ռուսաստանի նկատմամբ: Հատկապես 1999 թ. Սերբիայի դեմ ՆԱՏՕ-ի սանձազերծած ռազմական գործողություններին Ռուսաստանի կոշտ արձագանքը (Lippman, 1999), ինչպես նաև 2000 թ. ՌԴ-ում Վլադիմիր Պուտինի իշխանության գալը, Արևմուտքում սկսեցին որոշակի կասկածներ առաջացնել Ռուսաստանի՝ արտաքին քաղաքականության հետագա ուղղութ-

յան վերաբերյալ: Այս համատեքստում առավել կարևորվեց հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության վերականգնման կանխումը: 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում իրականացված ահաբեկչական հարձակումները և դրանից հետո ԱՄՆ-ի կողմից «ահաբեկչության դեմ պատերազմի» հայտարարումը ևս մեծացրին ԱՄՆ-ի հետաքրքրությունը հետխորհրդային տարածաշրջանի նկատմամբ, այդ թվում Աֆղանստանում ընթացող ռազմական գործողություններին լոգիստիկ աջակցություն ցուցաբերելու համատեքստում: Միևնույն ժամանակ, 21-րդ դարի սկզբին Եվրամիությունն սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել արտաքին քաղաքականությանը՝ գործարկելով «Հարևանության քաղաքականությունը», որի նպատակը Եվրամիության սահմանակից պետություններում բարեփոխումներին աջակցության ցուցաբերումն էր և Եվրամիության սահմանների երկայնքով կայունության հաստատումը (European Commission): Հարավային Կովկասը ևս ընդգրկվեց հարևանության քաղաքականության մեջ, ինչը հանգեցրեց Եվրամիության հետ տարածաշրջանի կապերի խորացմանը:

2000-ականների սկզբից Հարավային Կովկասում ԱՄՆ-ի քաղաքականության հիմնական ուղղություն դարձավ Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան ռազմավարական համագործակցության ձևավորումը: Այն միտված էր ինչպես կասպյան էներգետիկ ռեսուրսները Ռուսաստանի շրջանցմամբ միջազգային շուկաներ դուրս բերելու լոգիստիկ միջանցքների ձևավորմանը, այնպես էլ տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության մեծացմամբ Ռուսաստանի ներկայության սահմանափակմանը: Այս քաղաքականության մշակման ժամանակ հաշվի էին առնվել ինչպես ռուս-վրացական լարված հարաբերությունները վրաց-աբխազական և վրաց-օսական հակամարտությունների պատճառով, այնպես էլ Թուրքիայի և Ադրբեջանի միջև էթնիկ և լեզվական ընդհանրությունների փաստը:

Տարածաշրջանում Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան ռազմավարական գործընկերության ձևավորման գործում առաջնահերթ

նշանակություն ուներ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի (BP (a)) և Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազամուղի (BP (b)) կառուցումը: Իհարկե, Ադրբեջանը օտարերկրյա նավթային ընկերությունների հետ «Դարի պայմանագիրն» ստորագրել էր դեռևս 1994 թ. սեպտեմբերին, սակայն դրա պրակտիկ իրականացումը, այդ թվում՝ համապատասխան երթուղիների ընտրությունն ու շինարարության մեկնարկը, տեղի ունեցան 1990-ականների վերջին և 2000-ական-ների սկզբին: Այս հարցում ԱՄՆ-ի դիրքորոշումն ուներ էական նշանակություն, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նավթի գների անկման պայմաններում շատերն էին կասկածի տակ դնում Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի տնտեսական շահավետությունը: Տարածաշրջանում ԱՄՆ-ի ներկայության ամ-րապնդման գործում էական նշանակություն ունեցան նաև Վրաս-տանում 2003 թ. նոյեմբերին տեղի ունեցած «Վարդերի հեղափո-խությունը» և Միխեիլ Սաակաշվիլու՝ իշխանության գալը (CNN, 2004):

Վրաստանը եվրատլանտյան ինտեգրման քաղաքականութ-յուն որդեգրել էր դեռևս Էդուարդ Շևարդնաձեի նախագահության վերջին տարիներին, սակայն Սաակաշվիլու իշխանության գալը էականորեն արագացրեց Վրաստանի կտրուկ շրջադարձը դեպի Արևմուտք: ԱՄՆ-ի ինտենսիվ աջակցությամբ Վրաստանը կարո-ղացավ Ռուսաստանի հետ պայմանավորվել Վրաստանի տա-րածքից ռուսական ռազմակայանների դուրս բերման վերաբերյալ: 2005 թ. մայիսին տեղի ունեցավ Հարավային Կովկասի պատմութ-յան մեջ առայժմ միակ դեպքը, երբ ԱՄՆ-ի գործող նախագահը այցելեց տարածաշրջան, երբ Ջ. Բուշը ժամանեց Վրաստան և իր ասերկբա աջակցությունը հայտնեց Վրաստանին (CNN, 2005): Ռուսաստան-Արևմուտք հարաբերություններում նկատվող լար-վածությունը, ինչպես նաև «գունավոր հեղափոխությունների մեկ-նարկը Վրաստանում, Ուկրաինայում և Ղրղզստանում» զգալիո-րեն սրեցին Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունները:

Այս փուլում Հարավային Կովկասում ռուս-ամերիկյան հարա-բերությունների լարվածության գագաթնակետը թերևս նախ

ՆԱՏՕ-ի՝ 2008 թ. ապրիլին Բուխարեստի գագաթնաժողովն էր, որտեղ հայտարարվեց, որ Ուկրաինան և Վրաստանը ինչ-որ պահի կանդամակցեն ՆԱՏՕ-ին (NATO, 2008a), ապա նաև՝ 2008 թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմը: Պատերազմը ցույց տվեց, որ Ռուսաստանի համար ՆԱՏՕ-ի հետագա ընդլայնումը հետխորհրդային տարածաշրջանում՝ անընդունելի է, և Ռուսաստանը պատրաստ է ռազմական ուժ կիրառել՝ նմանատիպ զարգացումները կանխելու համար: Միևնույն ժամանակ, ակնհայտ դարձավ, որ հավաքական Արևմուտքը, այդ թվում ԱՄՆ-ը, պատրաստ չեն ուղղակի ռազմական ներգրավվածություն ունենալ հետխորհրդային տարածաշրջանում: Հարավային Կովկասի և հավաքական Արևմուտքի հարաբերությունների կոնտեքստում էական էր 2007 թ. Մյունխենի անվտանգության համաժողովում Ռուսաստանի նախագահի ելույթը, որտեղ Վլադիմիր Պուտինն առաջին անգամ հայտարարեց, որ Ռուսաստանի համար անընդունելի է ԱՄՆ-ի գերիշխանության ներքո ձևավորված միաբևեռ աշխարհը (Kremlin, 2007):

Այս փուլում տարածաշրջանում իր ներգրավվածությունը մեծացրեց նաև ՆԱՏՕ-ն՝ Հարավային Կովկասի պետությունների հետ ստորագրելով Անհատական գործընկերության գործողությունների ծրագրեր, որոնք կարևոր ուղենիշ դարձան հարաբերությունների զարգացման համար (Tonoyan, 2013, Civil, 2004, Bakinski & Muradova, 2007): 2008 թ. սեպտեմբերին ստեղծվեց ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովը (NATO, 2008b):

Հավաքական Արևմուտքի քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ 2009–2020 թթ.

Նշված ժամանակահատվածը կարելի է բաժանել երկու ենթափուլի. առաջին՝ 2009–2013, և երկրորդ՝ 2014–2020 թթ.:

Առաջին փուլը բնորոշվում է մի կողմից ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում նկատվող դրական միտումներով, և, մյուս կողմից, տարածաշրջանում Եվրամիության ներգրավման ակտիվացմամբ:

2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունները բավականաչափ լարված էին, և թվում էր, թե դրանց բարելավվման հնարավորությունները գրեթե բացառված են: 2009 թ. հունվարի սկզբին ԱՄՆ-ը և Վրաստանը ստորագրեցին ռազմավարական համագործակցության պայմանագիր, որը որակական նոր մակարդակի հասցրեց երկկողմ հարաբերությունները: Սակայն 2008 թ. նոյեմբերի նախագահական ընտրություններում հաղթանակ տարած Բարաք Օբամայի վարչակարգը որոշեց գնալ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման ուղով: Դա պայմանավորված էր մի քանի հանգամանքով: Նախ, Օբաման ընտրություններին մասնակցում էր նախագահ Բուշի օրոք սկսված «Անվերջ պատերազմները» ավարտին հասցնելու կարգախոսով և, ընդհանուր առմամբ, նվազ ագրեսիվ արտաքին քաղաքականություն վարելու խոստումներով: Միևնույն ժամանակ, արդեն 2000-ականների վերջին ԱՄՆ-ում ձևավորվում էր ընկալում, որ 21-րդ դարում ԱՄՆ-ի ռազմավարական հակառակորդը Չինաստանն է, հետևաբար, անհրաժեշտ է հիմնական ռեսուրսներն ուղղել ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, իսկ երկրագնդի այլ հատվածներում հնարավորինս նվազեցնել ԱՄՆ-ի ուղղակի ներգրավումը: Այս համատեքստում Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավումը դիտարկվում էր Եվրոպայում ԱՄՆ-ի ուղղակի ներգրավվման մակարդակի իջեցման շրջանակում: Միևնույն ժամանակ, Ռուսաստանում 2008 թ. Դմիտրի Մեդվեդևի ընտրությունը նախագահի պաշտոնում հույսեր էր առաջացրել ԱՄՆ-ում առ այն, որ Ռուսաստանը որոշակի վերադարձ կկատարի ժողովրդավարական բարեփոխումներին՝ ինչ-որ չափով նվազեցնելով Վլադիմիր Պուտինի նախագահության հատկապես երկրորդ ժամկետում ձևավորված միտումները:

ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների բարելավման մեկնարկը տրվեց 2009 թ. մարտին՝ Սերգեյ Լավրով-Հիլարի Քլինթոն հանդիպմամբ և հարաբերությունների «վերագործարկման» հայտնի կոճակի փոխանցմամբ (Cloud, 2009): 2009–2011 թթ. ԱՄՆ-ը և Ռուսաստանը մի շարք «ձեռքբերումներ արձանագրեցին», այդ

թվում՝ Ռուսաստանի անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (WTO, 2012), Ռուսաստանի կողմից Իրանի դեմ պատժամիջոցներ սահմանող՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2010 թ. հունիսի բանաձևին կողմ քվեարկելը, 2011 թ. Լիբիա ռազմական ներխուժում նախատեսող՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևին Ռուսաստանի ձեռնպահ քվեարկելը (Kaczmarski, 2011):

Երկկողմ հարաբերություններում նկատվող բարելավման միտումները, սակայն, ընդհատվեցին 2011 թ. սեպտեմբերին, երբ Վլադիմիր Պուտինը հայտարարեց 2012 թ. նախագահական ընտրություններին մասնակցելու մտադրության մասին: ԱՄՆ-ում այդ քայլն ընկալվեց որպես «ավտորիտարիզմի վերադարձ»: ԱՄՆ-ը բավականաչափ կոշտ արձագանքեց 2011 թ. հոկտեմբերին Պուտինի կողմից «Իզվեստիա» պարբերականում հրապարակված՝ Եվրասիական Միության ստեղծման մասին հայեցակարգային հոդվածին (Government): Պետքարտուղար Հիլարի Քլինթոնը դա անվանեց ԽՍՀՄ վերականգնման փորձ՝ նշելով, որ ԱՄՆ-ը դա թույլ չի տա (RFERL, 2012): Երկկողմ հարաբերություններն է՛լ ավելի սրվեցին 2011 թ. դեկտեմբերին Ռուսաստանում Պետդումայի հերթական ընտրություններից հետո, որոնք խիստ քննադատության արժանացան ԱՄՆ-ի կողմից՝ որպես ժողովրդավարության չափանիշներին չհամապատասխանող (CNN, 2011):

ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների ճնհալի ժամանակահատվածը բնորոշվեց Հարավային Կովկասի նկատմամբ ԱՄՆ-ի ուշադրության նվազմամբ: Բարաք Օբամայի վարչակարգը բավականաչափ զուսպ էր վերաբերվում Միխեիլ Սաակաշվիլիին, ինչը հանգեցրեց երկկողմ հարաբերությունների որոշակի սառեցման: Ադրբեջանի հետ հարաբերություններում շարունակում էր դեր խաղալ էներգետիկ գործոնը, ինչպես նաև Ադրբեջանի տարանցիկ դերակատարությունը՝ Աֆղանստանում գտնվող ամերիկյան ուժերին մատակարարումներ ապահովելու համար: Ինչ վերաբերում է Հայաստանի հետ հարաբերություններին, ապա այստեղ ԱՄՆ-ը բավականաչափ ակտիվ դերակատարություն էր ստանձ-

նել 2008–2009 թթ. հայ-թուրքական «ֆուտբոլային դիվանագիտության» ժամանակ (Reuters, 2009), սակայն գործընթացի տապալումից հետո ԱՄՆ-ի հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ սահմանափակվեց տնտեսական և քաղաքական բարեփոխումներին և քաղաքացիական հասարակությանը ցուցաբերվող աջակցությամբ, հիմնականում՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ամերիկյան այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի միջոցով:

Հարավային Կովկասում ԱՄՆ-ի ներգրավման նվազմանը զուգահեռ տարածաշրջանում ավելացավ Եվրամիության դերակատարությունը: Դա առաջին հերթին պայմանավորված էր 2009 թ. մեկնարկած «Արևելյան գործընկերության ծրագրով» (Europa, 2022): Լեհաստանի և Շվեդիայի կողմից առաջ քաշված այս ծրագիրը ԵՄ հարևանության քաղաքականության մաս էր, և միտված էր հետխորհրդային վեց հանրապետությունների՝ Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա, և ԵՄ միջև հարաբերությունների խորացմանը՝ ասոցացման համաձայնագրերի ստորագրման միջոցով: Հարավային Կովկասի բոլոր երեք պետությունները մասնակցեցին 2009 թ. Պրահայում կայացած առաջին գագաթնաժողովին: 2009–2012 թթ. ծրագիրը բավականաչափ ինտենսիվ զարգանում էր, և արդեն 2013 թ. գարնանը Հայաստանը և Վրաստանը ավարտին էին հասցրել բանակցությունները և պատրաստ էին նախաստորագրել ասոցացման համաձայնագրերը: Ադրբեջանն ի սկզբանե ավելի զգուշավոր էր տրամադրված այս ծրագրին՝ հայտարարելով, որ նպատակահարմար չի գտնում Ասոցացման համաձայնագրի ստորագրումը: Ասոցացման համաձայնագրի ստորագրման նախապատրաստմանը զուգահեռ Վրաստանում և Հայաստանում զգալի աշխատանք կատարվեց օրենսդրության ոլորտում՝ այն եվրոպական չափանիշներին մոտարկելու ուղղությամբ:

Արևելյան գործընկերության ծրագրի իրականացման գործընթացում էական խնդիրներ առաջացան՝ Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունների վատթարացմանը զուգահեռ: Եթե 2009–2011

թթ. Ռուսաստանը համեմատաբար հանգիստ էր վերաբերվում այս ծրագրին, ապա արդեն 2012 թ. պաշտոնական Մոսկվայի մոտ սկսեց ձևավորվել կարծիք, որ այս նախաձեռնությունը հավաքական Արևմուտքի հերթական քայլն է՝ միտված հետխորհրդային տարածքում Ռուսաստանի ազդեցության նվազմանը: Ռուսաստանին հատկապես մտահոգում էր Ուկրաինայի կողմից ասոցացման համաձայնագրի ստորագրումը: Համաձայնագրերը ներառում էին ԵՄ-ի հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու ձևավորում, ինչը բացառում էր պայմանագրեր ստորագրած պետությունների անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը:

Ի վերջո, Ռուսաստանի ջանքերով Հայաստանը նախ 2013 թ. սեպտեմբերի սկզբին որոշում ընդունեց անդամակցելու Մաքսային միությանը, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միությանը (Armenpress, 2013), ապա Ուկրաինան 2013 թ. նոյեմբերի սկզբին հայտարարեց ասոցացման համաձայնագրի նախաստորագրումից հրաժարվելու մասին (Konończuk, 2013):

Միևնույն ժամանակ, 2012 թ. հոկտեմբերին Վրաստանում կայացած խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ գործարար Բիձինա Իվանիշվիլիի կողմից ստեղծված ընդդիմադիր «Վրացական երազանք» կոալիցիան: Իվանիշվիլին դարձավ Վրաստանի վարչապետ (BBC, 2012), իսկ 2013 թ. աշնանը, լիազորությունների ավարտից հետո, նախագահ Սաակաշվիլին հեռացավ Վրաստանից:

«Վրացական երազանքի»՝ իշխանության գալուց հետո որոշակի նվազեց ռուս–վրացական հարաբերություններում առկա լարվածությունը, վերականգնվեցին տնտեսական կապերը, մասնավորապես, Ռուսաստանը կրկին թույլ տվեց վրացական գինեգործական և գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը ՌԴ:

Այս ժամանակահատվածում ՆԱՏՕ-ն շարունակում էր զարգացնել հարաբերությունները տարածաշրջանի պետությունների, առաջին հերթին Վրաստանի հետ:

Հավաքական Արևմուտքի քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ 2014–2020 թթ.

Հարաբերությունների այս փուլը հիմնականում պայմանավորված էր ուկրաինական ճգնաժամով: 2014 թ. Ուկրաինայում սկսված հերթական հեղափոխությունը, որը հանգեցրեց 2010 թ. ընտրված նախագահ Յանուկովիչի հեռացմանն իշխանությունից՝ Կիևի կենտրոնում ընթացող զինված բախումների պայմաններում, ինչպես նաև Ղրիմի միացմանը Ռուսաստանին, որն էականորեն վատթարացրեց Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունները, և, միևնույն ժամանակ, Արևմուտքի հիմնական ուշադրությունը բևեռեց Ուկրաինայի վրա: Այս պայմաններում հավաքական Արևմուտքի հետաքրքրությունը Հարավային Կովկասի նկատմամբ ավելի նվազեց:

ԱՄՆ-ը հարկադրված էր զգալի ավելացնել ներկայությունը Եվրոպայում, ինչպես նաև արձագանքել Մերձավոր Արևելքում մեկը մյուսին հաջորդող ճգնաժամերին: Եվրամիությունը ևս ուշադրությունը կենտրոնացրել էր Ուկրաինայի, Մերձավոր Արևելքից միլիոնավոր միգրանտների՝ Եվրոպա ներթափանցմամբ պայմանավորված ճգնաժամի, ինչպես նաև «Բրեքսիթի» շոկի վրա:

Հավաքական Արևմուտքի հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ ավելի նվազեց նախագահ Թրամփի ընտրությունից հետո: Սկսած 2017 թվականից, ԱՄՆ-ի վարչակազմն սկսեց իրականացնել «Ամերիկան՝ առաջինը» քաղաքականությունը, որը ենթադրում էր ԱՄՆ-ի ներկայության նվազում նախկինում ԱՄՆ-ի համար էական նշանակություն ունեցող այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք էին՝ Մերձավոր Արևելքը, Արևմտյան և Արևելյան Եվրոպան: Միևնույն ժամանակ, նախագահ Թրամփը էականորեն մեծացրեց ԱՄՆ-Չինաստան հակամարտության մակարդակը՝ սկսելով առևտրային պատերազմ Չինաստանի դեմ (Swanson, 2018): Թրամփի վարչակազմը շրջանառության մեջ դրեց «Մեծ տերությունների մրցակցության» գաղափարը՝ որպես ժամանակակից աշխարհաքաղաքականության հիմնական տարր

(Trump, 2017)։ Այլ տարածաշրջաններում ԱՄՆ-ի ազդեցության նվազման համատեքստում ամերիկյան իշխանությունները որոշում ընդունեցին Աֆղանստանից զորքերի դուրս բերման վերաբերյալ՝ 2020 թ. համապատասխան պայմանագիր ստորագրելով Թալիբան շարժման հետ (Maizland, 2020)։

2014 թ. ռուս-ուկրաինական հակամարտության մեկնարկը ազդեցություն ունեցավ նաև Հարավային Կովկասում Եվրամիության քաղաքականության վրա։ Վերջինս իր հիմնական ուշադրությունը կենտրոնացրեց Ուկրաինային ցուցաբերվող աջակցության, ինչպես նաև ԱՄՆ-ի աջակցությամբ սեփական անվտանգության բարձրացման վրա։ 2014 թ. Եվրամիությունն Արևելյան գործընկերության շրջանակներում ասոցացման համաձայնագրեր ստորագրեց Ուկրաինայի, Մոլդովայի և Վրաստանի հետ, ինչը ինստիտուցիոնալ առումով ամրապնդեց կազմակերպության դիրքերը Հարավային Կովկասում։ Ասոցացման համաձայնագիրը ենթադրում էր նաև ազատ առևտրի գոտու ստեղծում, ինչը տեսականորոն մեծացնում էր ԵՄ տնտեսական ներգրավվածությունը Հարավային Կովկասում։ Միևնույն ժամանակ, 2015 թ. միգրացիոն ճգնաժամը, 2016 թ. Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ-ից դուրս գալու որոշման ընդունումը, ինչպես նաև ԱՄՆ-ում Թրամփի ընտրությունը, էականորեն սահմանափակեցին ԵՄ հնարավորությունները և ցանկությունը՝ ակտիվ նեգրավվելու Հարավային Կովկասում ընթացող գործընթացներում։ Թրամփի՝ ԵՄ-ին ուղղված քննադատությունը և ԱՄՆ-ԵՄ հարաբերություններում նկատվող լարվածությունը ևս նվազեցրին Հարավային Կովկասում ակտիվ քաղաքականություն իրականացնելու՝ ԵՄ հնարավորությունը։ ԵՄ-Հայաստան ասոցացման համաձանագրի ստորագրման ձախողումից հետո ԵՄ-ն կարճ դադարից հետո վերսկսեց բանակցությունները Հայաստանի հետ, որոնք 2017 թ. նոյեմբերին ավարտվեցին Հայաստան-ԵՄ Խորը և համապարփակ համագործակցության մասին համաձայնագրի ստորագրմամբ (MFA, 2017)։

Այն, քաղաքական համագործակցության առումով, գրեթե կրկնում էր 2013 թ. Ասոցացման համաձայնագրի տեքստը, սակայն չէր պարունակում ազատ առևտրի գոտու ստեղծման հատվածը, քանի որ Հայաստանն արդեն անդամակցել էր Եվասիական տնտեսական միությանը: 2014 թ. Վրաստանի հետ ասոցացման, իսկ 2017 թ. Հայաստանի հետ համագործացության համաձայնագրի ստորագրումը ինստիտուցիոնալ նոր աստիճանի բարձրացրին ԵՄ ներկայությունն ու ներգրավվածությունը Հարավային Կովկասում, սակայն մեր կողմից արդեն նշված մի շարք այլ գործոններ զսպող ազդեցություն ունեցան ԵՄ-ի՝ տարածաշրջանում ավելի ակտիվ դեր խաղալու հնարավորությունների վրա: Միևնույն ժամանակ, ԵՄ-ն շարունակում էր աջակցել Ադրբեջանից նավթի և գազի՝ եվրոպական շուկաներ արտահանմանը, այդ թվում՝ Հարավային գազային միջանցքի ստեղծմանը, որը նախատեսում էր ադրբեջանական գազի արտահանում Եվրամիություն՝ Թուրքիայի, Հունաստանի, Ալբանիայի տարածքով և Ադրիատիկ ծովով (Energy):

ԵՄ-ում գոհունակությամբ ընդունեցին 2018 թ. Հայաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունը»՝ դա համարելով տարածաշրջանում ժողովրդավարության տարածմանն ու ամրապնդմանն ուղղված քայլ: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ դա չհանգեցրեց Հայաստան-ԵՄ հարաբերությունների որակական փոփոխության: Կողմերը շարունակեցին հիմնական շեշտը դնել 2017 թ. ստորագրված համաձայնագրի վավերացման և իրականացման վրա:

Նշված ժամանակահատվածում ՆԱՏՕ-ն էականորեն ընդլայնեց իր համագործակցությունը Վրաստանի հետ (Agenda, Defense-News, 2015): Միևնույն ժամանակ, Հայաստանի հետ համագործակցությունը հիմնականում ուղղված էր խաղաղապահ կարողությունների զարգացմանը և ռազմական կրթության բարեփոխումներին (Armenpress, 2018, Azatutyun, 2015):

Հավաքական Արևմուտքի քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ 2020–2023 թթ.

2020 թվականը միջազգային հարաբերություններում բնորոշվեց առաջին հերթին ՔՈՎԻԴ-19 համավարակի տարածմամբ: Աշխարհի գրեթե բոլոր պետություններում միաժամանակ իրականացված կարանտինային միջոցառումներն աննախադեպ իրավիճակ ստեղծեցին՝ գրեթե կաթվածահար անելով պետությունների տնտեսական կյանքն ու միջպետական հարաբերությունները: Համավարակն իր ազդեցությունը ունեցավ նաև Հարավային Կովկասում ԱՄՆ-ի և Եվրամիության ներգրավվածության վրա՝ օբյեկտիվորեն նվազեցնելով նրանց ներկայությունը: Միևնույն ժամանակ, 2020 թ. ԱՄՆ-ում մեկնարկած նախընտրական արշավը, ինչպես նաև 2020 թ. մայիսից ամերիկյան տարբեր քաղաքներում ռասայական հողի վրա մեկնարկած բողոքի զանգվածային գործողությունները ու բախումները է՛լ ավելի նվազեցրին Հարավային Կովկասի նշանակությունը ԱՄՆ-ի համար:

Թվում էր, թե տարածաշրջանում որևէ էական փոփոխություն տեղի չի ունենա՝ առնվազն մինչև համավարակի ավարտը, սակայն 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված Արցախյան երկրորդ պատերազմը էականորեն փոխեց տարածաշրջանի ուժային բալանսը: Ռազմական գործողությունների ընթացքում Ֆրանսիան և ԱՄՆ-ը որոշակի քայլեր ձեռնարկեցին հրադադարի հասնելու նպատակով, պատերազմի առաջին օրերին հրապարակվեց Մինսկի խմբի համանախագահ պետությունների ղեկավարների համատեղ հայտարարությունը, որը կոչ էր անում դադարեցնել ռազմական գործողությունները և վերադառնալ բանակցություններին (Daventry, 2020):

Սակայն, ընդհանուր առմամբ, ռազմական գործողությունների ժամանակ հավաքական Արևմուտքի դերը բավականաչափ սահմանափակ էր: ԱՄՆ-ում քաղաքական ուժերի ուշադրությունը կենտրոնացած էր նոյեմբերի սկզբին նախատեսվող նախագահական ընտրությունների վրա, իսկ Եվրամիությունն իր հիմնական

ուշադրությունը կենտրոնացրել էր համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների մեղմման վրա: Պատահական չէ, որ պատերազմն ավարտվեց Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև նոյեմբերի 10-ին ստորագրված եռակողմ հայտարարությամբ, որի մշակմանը հավաքական Արևմուտքը որևէ մասնակցություն չէր ունեցել (Prime Minister, 2020): Սակայն ԱՄՆ-ի և Եվրամիության՝ հայ-ադրբեջանական հարաբերություններից դուրս մղման գործընթացը երկար չտևեց:

ԱՄՆ-ի պարագայում դա պայմանավորված էր նախևառաջ 2020 թ. նոյեմբերին նախագահական ընտրություններում Ջո Բայդենի հաղթանակով: Բայդենի վարչակազմը հայտարարեց «Ամերիկան վերադարձել է» ռազմավարության մասին՝ միևնույն ժամանակ նշելով, որ 21-րդ դարի աշխարհաքաղաքականությունն առաջին հերթին պայքար է ժողովրդավարության և ավտորիտարիզմի միջև (White House, 2021): Այս ռազմավարությունը ենթադրում էր հարաբերությունների է՛լ ավելի սրում Ռուսաստանի և Չինաստանի հետ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018-ից հետո Հայաստանը Արևմուտքում ձեռք էր բերել Հարավային Կովկասում ժողովրդավարական առավել շատ ձգտումներ ունեցող պետության համարում, հատկապես Վրաստանի և Արևմուտքի միջև նկատվող լարվածության ֆոնին, ժողովրդավարությանն աջակցության վերադարձը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության օրակարգ ենթադրում էր Հայաստանի նկատմամբ հետաքրքրության որոշակի ավելացում:

Միևնույն ժամանակ, Արցախյան երկրորդ պատերազմի ավարտից որոշ ժամանակ անց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն սկսեցին քայլեր ձեռնարկել իրենց գործունեության վերականգնման ուղղությամբ, ընդունվեցին մի շարք հայտարարություններ, որտեղ հղում էր արվում դեռևս 2007–2009 թթ. մշակված Մադրիդյան սկզբունքներին՝ որպես հակամարտության կարգավորման ճանապարհ (Diplomatie, 2021a, Diplomatie, 2021b): Այս գործընթացին զուգահեռ, Եվրամիությունն սկսեց քայլեր ձեռնարկել Հարավային Կովկասում իր ներգրավման ավելացման ուղ-

ղությամբ: 2021 թ. հուլիսին Հայաստան և Ադրբեջան այցելեց Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը (Consilium, 2021a): Միևնույն ժամանակ Եվրամիությունը հայտարարեց Արևելյան գործընկերության շրջանակներում անդամ պետություններին ֆինանսական աջակցության, ներդրումների և վարկային երաշխիքների տրամադրման մասին, որոնք միայն Հայաստանի մասով կազմում էին մինչև 2.6 միլիարդ եվրո (Azatutyun, 2021): Եվրամիությունը ձեռնամուխ եղավ Հայաստան-Ադրբեջան բանակցությունների նոր հարթակի ձևավորման աշխատանքներին: 2021 թ. ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները երկու հանդիպում էին ունեցել Ռուսաստանում՝ 2021 թ. հունվարին և 2021 թ. նոյեմբերին, որոնց արդյունքներով համապատասխան հայտարարություններ էին ստորագրվել հաղորդակցության ուղիների բացման և հակամարտության կարգավորման այլ հարցերի շուրջ (Prime Minister, 2021a, Prime Minister, 2021b):

Եվրամիության հովանու ներքո հայ-ադրբեջանական առաջին գագաթնաժողովը տեղի ունեցավ 2021 թ. դեկտեմբերին՝ Բրյուսելում՝ Արևելյան գործընկերության հերթական գագաթնաժողովի շրջանակում: Հանդիպումից հետո Շառլ Միշելի հրապարակած հայտարարությունը նշում էր, որ կողմերը վերահաստատել են 2020 թ. նոյեմբերի, 2021 թ. հունվարի և նոյեմբերի եռակողմ հայտարարությունները (Kremlin, 2020, Prime Minister, 2021a, Prime Minister, 2021b) կատարելու իրենց պատրաստակամությունը, իսկ Եվրամիությունը խոստացել է աջակցել այդ գործընթացին (Consilium, 2021b): Բացի եռակողմ հանդիպումից, Բրյուսելում տեղի ունեցավ նաև քառակողմ քննարկում՝ Ֆրանսիայի նախագահի մասնակցությամբ:

Ռուսաստանի միջնորդությամբ ձեռք բերված հայտարարությունների հիշատակումը վկայում է, որ այս փուլում դեռևս պահպանվում էր Ռուսաստանի և Արևմուտքի միջև համագործակցության հնարավորությունը՝ արցախյան համակարգության կարգավորման համատեքստում: Պատահական չէ, որ 2021 թ. դեկտեմբերի 21-ին Ֆրանսիայի և Ռուսաստանի նախագահների հեռախո-

սազրույցում քննարկվել էր նաև արցախյան հիմնախնդիրը: 2021 թ. դեկտեմբերին ընդունվեց նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին համատեղ հայտարարությունը հակամարտության կարգավորման վերաբերյալ (OSCE, 2021):

Իրավիճակը կտրուկ փոխվեց 2022 թ. փետրվարին՝ ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո: Այն փաստացի վերջ տվեց Ռուսաստան-Արևմուտք համագործակցության հնարավորությանը: Միևնույն ժամանակ, Ռուսաստանը հարկադրված էր իր ուշադրության և ռեսուրսների մեծ մասն ուղղել ուկրաինական պատերազմին, ինչը հավելյալ հնարավորություններ ստեղծեց հավաքական Արևմուտքի համար՝ Հարավային Կովկասում առավել ինտենսիվ ներգրավման համատեքստում: Ռուսաստան-Արևմուտք փաստացի պատերազմի պայմաններում ԱՄՆ-ի համար տարածաշրջանում թիվ մեկ նպատակը դարձավ Ռուսաստանի ներկայության և ազդեցության սահմանափակումը, ինչը չէր կարող բացասական ազդեցություն չունենալ բանակցային տարբեր ձևաչափերի միջև համագործակցության վրա:

Ռուս-ուկրաինական պատերազմից անմիջապես հետո հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործում իր ներգրավվածության ավելացման ուղղությամբ առաջին հերթին քայլեր սկսեց ձեռնարկել Եվրամիությունը: 2022 թ. ապրիլին, մայիսին և օգոստոսին ԵՄ միջնորդությամբ Բրյուսելում կայացան հայ-ադրբեջանական բարձր մակարդակի բանակցություններ, որոնց ընթացքում կողմերը վերահաստատեցին հակամարտության խաղաղ կարգավորմանն իրենց հանձնառությունը (Consilium, 2022a, Consilium, 2022b, Consilium, 2022c): Այս բանակցությունների ընթացքում նաև առաջին անգամ բարձրացվեց Արցախի կարգավիճակի հարցում Հայաստանի կողմից նշաձողի իջեցման հնարավորությունը, ինչի մասին Հայաստանի վարչապետը հայտարարեց Ազգային ժողովում 2022 թ. ապրիլին ունեցած ելույթում՝ պնդելով, որ այդ դեպքում Հայաստանը կունենա միջազգային հանրության աջակցությունն արցախահայերի անվտանգության ապահովման հարցում (Armenpress, 2022):

2022 թ. սեպտեմբերին Հայաստանի դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ պատերազմը, թվում էր, թե էականորեն ստվերեց բանակցությունների բրյուսելյան հարթակի կարևորությունը, սակայն Հայաստանի իշխանությունները որոշեցին շարունակել մասնակցությունն այդ ձևաչափում: Միևնույն ժամանակ, սեպտեմբերյան ագրեսիայից անմիջապես հետո Հայաստանը դիմեց ՀԱՊԿ-ին՝ աջակցության համար, ինչպես նաև Եվրամիությանը՝ Հայաստանի տարածքում դիտորդական առաքելություն տեղակայելու խնդրանքով: ԵՄ-ի համապատասխան որոշմամբ 2022 թ. հոկտեմբերին Հայաստանում երկու ամիս ժամկետով տեղակայվեց դիտորդական առաքելություն (EEAS, 2022), և, միևնույն ժամանակ, բանակցություններ սկսվեցին ավելի երկարաժամկետ առաքելություն տեղակայելու ուղղությամբ:

2022 թ. ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո, տարածաշրջանում ԱՄՆ-ի, ինչպես նաև Եվրամիության համար հիմնական խնդիր դարձավ Ռուսաստանի ներկայության թուլացումը: Այն ներառում էր ինչպես ռուսական ռազմական ներկայության չեղարկում Արցախում, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում Հայաստանից ռուսական ռազմակայանի և ռուս սահմանապահ զորքերի դուրսբերում: Այս ռազմավարության շրջանակում հավաքական Արևմուտքի տեսանկյունից առաջնահերթ կարևորություն էր ստանում հայ-ադրբեջանական խաղաղության համաձանագրի ստորագրումը:

Արևմուտքի տրամաբանությունը հետևյալն էր. հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից հետո Հայաստանը ավելի քիչ կարիք կունենար Ռուսաստանի աջակցության, ինչը կարող էր հանգեցնել Ռուսաստանի ազդեցության թուլացմանը: Միևնույն ժամանակ, հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրի ստորագրումը և հակամարտության կարգավորումը հիմքեր կստեղծեին Ադրբեջանի համար՝ չերկարաձգելու ռուսական խաղաղապահ զորակազմի մանդատը Ադրբեջանում՝ 2025 թ. նոյեմբերից հետո: Այս տրամաբանության շրջանակում հավաքական Արևմուտքը առաջ քաշեց Հայաստանի

և Ադրբեջանի կողմից միմյանց տարածքային ամբողջականության ճանաչման հարցը՝ որպես հակամարտության կարգավորման իրական հնարավորություն:

Այս ուղղությամբ առաջին հայտարարությունն ընդունվեց 2022 թ. հոկտեմբերին՝ Պրահայում կայացած Եվրոպական գագաթնաժողովի շրջանակում: Դրանով Հայաստանն ու Ադրբեջանը ճանաչում էին միմյանց տարածքային ամբողջականությունը՝ 1991 թ. Ալմա-Աթայի հռչակագրի համատեքստում (Consilium, 2022d), ինչը Ադրբեջանը մեկնաբանում էր որպես Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի ճանաչում՝ որպես Ադրբեջանի մաս: Իհարկե, իրավական տեսակետից դա այդպես չէր, քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը հռչակվել էր 1991 թ. սեպտեմբերի 2-ին՝ մինչև Ալմա-Աթայի հռչակագրի ստորագրումը: 1991 թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած անկախության հանրաքվեն ևս տեղի էր ունեցել նախքան Ալմա-Աթայի հռչակագրի ստորագրումը, ընդ որում, ԼՂՀ-ն հռչակվել էր դեռևս գործող ԽՍՀՄ օրենդրության համաձայն, մասնավորապես, հենվելով 1990 թ. ապրիլի 3-ին ընդունված ԽՍՀՄ կազմից հանրապետությունների դուրս գալու կարգի վերաբերյալ օրենքի վրա:

2022 թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում տեղի ունեցած հանդիպումից հետո Ռուսաստանի նախաձեռնությամբ եռակողմ հանդիպում տեղի ունեցավ 2022 թ. հոկտեմբերի վերջին, որտեղ կողմերը ևս մեկ անգամ հաստատեցին իրենց հավատարմությունը Ալմա-Աթայի հռչակագրին (Kremlin, 2022):

2022 թ. հոկտեմբերին Պրահայի հայտարարության ընդունմամբ սկսվեց արցախյան հակամարտության կարգավորման նոր փուլ: Այս փուլում Հայաստանի իշխանությունների համար Արցախի կարգավիճակը փոխարինվեց «արցախահայերի իրավունքների և անվտանգության ապահովման խնդրով»: Այս համատեքստում Հայաստանի իշխանությունների կողմից առաջ քաշվեցին Արցախում միջազգային ներկայության, ինչպես նաև Բաքու-Ստեփանակերտ երկխոսության անհրաժեշտության մասին գաղա-

փարները, ընդ որում վերջինիս համար կարևոր պայման էր դիտվում միջազգային մեխանիզմի ստեղծումը:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանը կտրուկ մերժում էր այս գաղափարների իրականացման հնարավորությունը՝ պնդելով, որ որևէ միջազգային ներկայություն Արցախում չի կարող լինել, իսկ արցախահայերը ունեն ընտրության երկու տարբերակ՝ կամ ընդունել Ադրբեջանի քաղաքացիություն և ապրել որպես Ադրբեջանի քաղաքացիներ՝ առանց որևէ հատուկ իրավունքների, կամ հեռանալ Արցախից: Այդ մասին նախագահ Ալիևը մի քանի հրապարակային հայտարարություններ արեց, այդ թվում 2023 թ. հունվարի սկզբին հրավիրված մամուլի ասուլիսում (Civilnet, 2023), ինչպես նաև 2023 թ. մարտին և 2023 թ. մայիսին ունեցած ելույթներում (President):

Ռուս-ուկրաինական շարունակվող պատերազմի պայմաններում հայ-ադրբեջանական բանակցություններում տարբեր հարթակների ստեղծումն աստիճանաբար սկսեց վերածվել Ռուսաստան-Արևմուտք մրցակցության: Ռուսաստանը գնալով իր դժգոհությունն էր արտահայտում բանակցային գործընթացում Արևմուտքի աճող ակտիվության կապակցությամբ՝ դա դիտարկելով որպես տարածաշրջանից Ռուսաստանին դուրս մղելու փորձ:

Այս համատեքստում Ռուսաստանի քննադատությանն արժանացավ նաև Հայաստանի դիրքորոշումը՝ հրաժարվել հայ-ադրբեջանական սահմանագծի երկայնքով ՀԱՊԿ դիտորդական առաքելության տեղակայումից և փոխարենը Հայաստան հրավիրել ԵՄ դիտորդական առաքելություն (Reuters, 2023), որը նախ տեղակայվեց երկամսյա ժամկետով՝ 2022 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, այնուհետև՝ 2023 թ. փետրվարից, ևս երկու տարի ժամկետով (Krikorian, 2023):

2023 թ. առաջին կեսին բանակցային գործընթացում էականորեն ավելացավ ԱՄՆ-ի մասնակցությունը: Ամերիկացիները 2023 թ. փետրվարին Մյունխենում կազմակերպեցին վարչապետ Փաշինյանի և նախագահ Ալիևի հանդիպումը պետքարտուղար Բլինքենի մասնակցությամբ (State.gov, 2023a), իսկ 2023 թ. մայիս և հու-

նիս ամիսներին Վաշինգտոնում ինտենսիվ բանակցություններ կայացան Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների թիմերի մասնակցությամբ, որոնց ընթացքում կողմերը համաձայնեցրին խաղաղության պայմանագրի հոդվածների մի մասը, որոնք առնչվում էին միմյանց տարածքային ամբողջականության ճանաչմանը և ուժի կիրառումից հրաժարմանը (US Embassy, 2023, MFA, 2023):

Վաշինգտոնյան հարթակին զուգահեռ, ինտենսիվ շարունակվում էր Բրյուսելյան ձևաչափի գործունեությունը: 2023 թ. մայիս և հուլիս ամիսներին Բրյուսելում տեղի ունեցան հերթական եռակողմ գագաթնաժողովները, որոնց ընթացքում Հայաստանը ևս մեկ անգամ վերահաստատեց իր դիրքորոշումը՝ Լեռնային Ղարաբաղը ճանաչել որպես Ադրբեջանի մաս: Հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով Հայաստանը համաձայնեց հայտարարություններում օգտագործել Ադրբեջանի տարածքային ամբողջականության թվային արտահայտությունը՝ 86.600 քառակուսի կիլոմետր, ինչը վերջ էր տալիս բոլոր այն քննարկումներին, որ Ալմա-Աթայի հռչակագրով Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչումը կապ չունի Լեռնային Ղարաբաղի հետ (Consilium, 2023a, Consilium, 2023b):

Բանակցային գործընթացին զուգահեռ, Ադրբեջանը 2022 թ. դեկտեմբերին սկսեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջափակումը՝ նախ, այսպես կոչված «էկոակտիվիստների» միջոցով, իսկ 2023 թ. ապրիլի վերջին՝ Լաչինի միջանցքում սահմանային ուղեկալի տեղակայմամբ (EIU, 2023): 2023 թ. հունիսի կեսից Ադրբեջանն ընդհանրապես արգելափակեց որևէ տիպի բեռների տեղափոխումը Արցախ՝ բնակչությանը փաստացի կանգնեցնելով սովամահության վտանգի առջև:

2023 թ. ամառվանից սկսած Արևմուտքի կողմից իրականացվող բանակցային հարթակներում ինտենսիվ քննարկվում էր նաև Արցախի շրջափակման հարցը: Այս խնդրում թե՛ Եվրամիությունը, և թե՛ ԱՄՆ-ը երկակի դիրքորոշում էին որդեգրել: Նրանք մի կողմից պահանջում էին վերացնել Լաչինի միջանցքի շրջափակումը,

մյուս կողմից նշում էին այլ ճանապարհների օգտագործման կարևորությունը (Stet.gov, 2023b, State.gov, 2023d), ինչն Ադրբեջանի հիմնական պահանջներից մեկն էր, և որի նպատակը Արցախն Ադրբեջանին ինտեգրելու ուղղությամբ ևս մեկ քայլ կատարելն էր:

2023 թ. հունիսի 1-ին Եվրոպական քաղաքական համայնքի երկրորդ գագաթնաժողովի շրջանակում Քիշնևում տեղի ունեցավ հնգակողմ հանդիպում՝ Հայաստանի, Ադրբեջանի, Ֆրանսիայի, Գերմանիայի ղեկավարների և Եվրոպական Միության Խորհրդի նախագահի մասնակցությամբ (State.gov, 2023c): Գերմանիայի ներգրավումն այս գործընթացում առաջ էր քաշվում Ադրբեջանի կողմից՝ որպես Ֆրանսիային հակակշիռ: Ադրբեջանը 2022 թ. դեկտեմբերին հրաժարվեց մասնակցել Բրյուսելում կայանալիք հանդիպմանը՝ այն բանից հետո, երբ Հայաստանը պնդեց դրանում Ֆրանսիայի նախագահի մասնակցության անհրաժեշտությունը (Reuters, 2022): Քիշնևում կայացած հանդիպմանը Գերմանիայի մասնակցությունը սկզբնավորեց Գերմանիայի ավելի ակտիվ ներգրավումը հայ-ադրբեջանական հարաբերություններում:

Բանակցային գործընթացին զուգահեռ, թե՛ ԵՄ-ն, և թե՛ ԱՄՆ-ը հրապարակային ուղերձներ էին հղում Ադրբեջանին՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ուժի կիրառման անթույլատրելիության մասին: Մասնավորապես, 2023 թ. սեպտեմբերի 14-ին այդ մասին ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում կայացած լսումների ժամանակ հայտարարեց ԱՄՆ-ի պետքարտուղարի՝ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնականի պաշտոնակատար Յուրի Քիմը (Foreign, 2023):

Չնայած նշված հայտարարություններին, 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը լայնածավալ հարձակում սկսեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ՝ դա ներկայացնելով որպես «հակաահաբեկչական գործողություն» (Eurasianet, 2023a): Մեկ օր տևած ռազմական գործողություններից հետո Արցախի իշխանությունները հարկադրված էին ընդունել Ադրբեջանի բոլոր պահանջները, այդ թվում՝ պաշտպանության բանակի լուծարման հարցում (Oc Media, 2023): 2023 թ. սեպտեմբերի 23-24-ից սկսվեց

արցախահայերի զանգվածային տեղահանությունը, և արդեն հոկտեմբերի սկզբին ավելի քան հարյուր հազար մարդ լքել էր Արցախը (REFRL, 2023)։ 2023 թ. սեպտեմբերի 28-ին Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանը հրամանագիր ստորագրեց մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը Արցախի Հանրապետության գոյությունը դադարեցնելու վերաբերյալ (CNN, 2023)։ Ադրբեջանի իշխանությունները ձերբակալեցին Արցախի նախկին նախագահներին, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին, Ազգային Ժողովի նախագահին, պաշտպանության նախկին նախարարին և պաշտպանության բանակի հրամանատարի նախկին տեղակալին (Eurasianet, 2023b)։ Միևնույն ժամանակ, Արցախի Հանրապետության լուծարման վերաբերյալ Շահրամանյանի հրամանագրի իրավազորությունը լուրջ կասկածներ է առաջացնում, և տարբեր շրջանակներ հանդես են եկել այն չեղարկելու կամ հակասահմանադրական ճանաչելու առաջարկներով (Hovhannisyan, 2023)։

Չնայած Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ուժի կիրառումն անթույլատրելի լինելու մասին հավաքական Արևմուտքի հայտարարություններին, սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի հարձակումը և դրան հաջորդած Արցախի հայ բնակչության ամբողջական բռնագաղթը չհանգեցրեց Ադրբեջանի նկատմամբ ԱՄՆ-ի կամ Եվրամիության կողմից պատժամիջոցների կիրառման։ Նրանք բավարարվեցին միայն որևէ ազդեցություն չունեցող հայտարարություններով և Արցախից տեղահանվածներին հումանիտար օգնություն ցուցաբերելու քայլերով։ ԱՄՆ-ը Հայաստան ուղարկեց ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության տնօրենին և Յուրի Քիմին, ովքեր հայտարարեցին Հայաստանին 11.5 միլիոն դոլար օգնություն տրամադրելու որոշման մասին։ Օգնության մասին հայտարարություններ արվեցին նաև ԵՄ-ի, ինչպես նաև մի շարք առանձին պետությունների կողմից։

Միևնույն ժամանակ, թե՛ ԱՄՆ-ը, թե՛ ԵՄ-ն հայտարարեցին բանակցությունների շարունակման և Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագրի ստորագրման անհրաժեշ-

տության մասին: Եվրամիության ջանքերով Բրյուսելում սեպտեմբերի 26-ին կազմակերպվեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի և Ադրբեջանի նախագահի՝ արտաքին քաղաքական հարցերով օգնականի հանդիպումը, որի նպատակը 2023 թ. հոկտեմբերի 5-ին Գրանադայում կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի երրորդ գագաթնաժողովում հերթական հնգակողմ հանիպման նախապատրաստումն էր՝ Հայաստան, Ադրբեջան, Ֆրանսիա, Գերմանիա, ԵՄ (Consilium, 2023c):

Թեև Ադրբեջանի նախագահը հրաժարվեց մասնակցել այդ հանդիպմանը (France24, 2023a)՝ այդ քայլը պատճառաբանելով Ֆրանսիայի հայամետ դիրքորոշմամբ և Թուրքիայի մասնակցությունը մերժելու հանգամանքով, Գրանադայում տեղի ունեցավ քառակողմ հանդիպում: Միևնույն ժամանակ, Եվրամիությունը և ԱՄՆ-ը շարունակում են ջանքերը Բրյուսելյան և Վաշինգտոնյան ձևաչափով նոր հանդիպումներ կազմակերպելու ուղղությամբ, չնայած նրան, որ Ադրբեջանը հրաժարվեց մասնակցել հոկտեմբերի վերջին Բրյուսելում, իսկ նոյեմբերի 20-ին՝ Վաշինգտոնում նախատեսված հանդիպումներին (Armenpress, 2023, France24, 2023b): Տեղահանված արցախահայերի խնդիրը աստիճանաբար մղվում է երկրորդ պլան, և ուշադրությունը հիմնականում կենտրոնանում է նրանց հումանիտար խնդիրների լուծման վրա (Europa, 2023): Գրանադայում ընդունված քառակողմ հայտարարության մեջ նշվում էր արցախահայության վերադարձի իրավունքի մասին՝ միջազգային մոնիտորինգի ներգրավմամբ, սակայն որևէ կոնկրետ քայլ կամ մեխանիզմ չէր առաջարկվում այս գաղափարի իրականացման համար (Consilium, 2023d):

2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմից հետո ՆԱՏՕ-ն իր աջակցությունը հայտնեց ԵՄ և ԱՄՆ հովանու ներքո ընթացող հայ-ադրբեջանական խաղաղ բանակցություններին՝ շարունակելով ձեռնպահ մնալ գործընթացում ուղղակի ներգրավումից (ARKA, 2023):

Եզրակացություն

Ամփոփելով 1991–2023 թթ. Հարավային Կովկասում ԱՄՆ-ի և ԵՄ կողմից իրականացվող քաղաքականությունը, կարող ենք նշել, որ սկզբնական շրջանում դրա հիմնական նպատակը նորանկախ պետությունների պետական հաստատությունների կարողությունների զարգացումն էր, արևմտյան մոդելով իրականացվող քաղաքական և տնտեսական բարեփոխումներին աջակցության ցուցաբերումը: Արդեն 2000-ականների կեսերից Արևմուտքի համար կարևոր նշանակություն ստացավ նաև Հարավային Կովկասում ռուսական ազդեցության թուլացումը, որը մաս էր կազմում հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի ներկայության դեմ պայքարի ընդհանուր ռազմավարությանը:

ԱՄՆ-ի և ԵՄ ներգրավվածությունը Հարավային Կովկասում էականորեն ավելացավ 2020 թ. Արցախյան պատերազմից հետո, երբ թե՛ ԱՄՆ-ը, թե՛ ԵՄ-ն ակտիվորեն ներգրավվեցին հայ-ադրբեջանական բանակցություններում՝ ձևավորելով Բրյուսելյան և Վաշինգտոնյան հարթակները: 2022 թ. փետրվարին ռուս-ուկրաինական պատերազմի բռնկումից հետո Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հարավային Կովկասն աստիճանաբար դառնում է այդ հակամարտության թատերաբեմերից մեկը, ինչն է՛լ ավելի է մեծացնում տարածաշրջանից, այդ թվում Հայաստանից Ռուսաստանին դուրս մղելու՝ ԱՄՆ-ի, և մասամբ նաև՝ ԵՄ ցանկությունը: Ստեղծված պայմաններում հավաքական Արևմուտքը հայ-ադրբեջանական խաղաղության պայմանագրի ստորագրումը և հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումը հիմնականում դիտարկում է այդ համատեքստում: Ստեղծված պայմաններում Հայաստանը պետք է հնարավորինս խուսափի Արևմուտք-Ռուսաստան բախման նոր թատերաբեմ դառնալու հեռանկարից: Արտաքին և անվտանգության քաղաքականության դիվերսիֆիկացումը հակառուսական քաղաքականության հետ նույնացնելը կարող է հավելյալ անվտանգային սպառնալիքներ ստեղծել Հայաստանի համար:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

Մենագրություններ

1. ***Tonoyan (2013),*** Tonoyan A., The Future of the Armenia – NATO Relationship, United States Army War College, U.S., 2013, pp. 1–30.

Համացանցային հղումներ

1. ***Agenda,*** NATO makes public intro to NATO-Georgia Substantial Package, https:// agenda.ge/en/news/2014/2467, (Acc. 05.08.2024).
2. ***ARKA (2023),*** NATO supports normalization of relations between Armenia and Azerbaijan – Colomina, 15.05.2023, https://arka.am/en/news/politics/nato_supports_normalization_of_relations_between_armenia_and_azerbaijan_colomina/, (Acc. 05.08.2024).
3. ***Armenpress (2013),*** Serzh Sargsyan announced about Armenia's decision to join Customs Union, 03.09.2013, https://armenpress.am/en/article/731583, (Acc. 05.08.2024).
4. ***Armenpress (2018),*** NATO DEEP 2019 cooperation plan discussed at Armenian defense ministry, 08.11.2018, https://armenpress.am/en/article/953817, (Acc. 05.08.2024).
5. ***Armenpress (2022),*** Pashinyan addresses reactions to speech on international community's calls to lower the bar on NK status, 22.04.2022, https://armenpress.am/en/article/1081298, (Acc. 05.08.2024).
6. ***Armenpress (2023),*** Brussels summit was postponed by Azerbaijan – FM, 25.10.2023, https://armenpress.am/en/article/1122780, (Acc. 05.08.2024).
7. ***Azatutyun (2015),*** Armenian Peacekeeping Force Gets Higher NATO Status, 25.09.2015, https://www.azatutyun.am/a/27271313.html, (Acc. 05.08.2024).
8. ***Azatutyun (2021),*** EU Plans Large-Scale Aid, Investments For Armenia, 09.07.2021, https://www.azatutyun.am/a/31350909.html, (Acc. 05.08.2024).
9. ***Bakinski & Muradova (2007),*** Bakinski Kh., Muradova M., Azerbaijan Pursues NATO Integration, 16.03.2007, https://eurasianet.org/azerbaijan-pursues-nato-integration, (Acc. 05.08.2024).
10. ***BBC (2012),*** Ivanishvili confirmed as prime minister of Georgia, 25.10.2012, https://www.bbc.com/news/world-20081392, (Acc. 05.08.2024).
11. ***BP(a),*** Baku-Tbilisi-Ceyhan pipeline, https://www.bp.com/en_az/azerbaijan/home/who-we-are/operationsprojects/pipelines/btc.html, (Acc. 05.08.2024).
12. ***BP(b),*** South Caucasus Pipeline Project, https://www.bp.com/en_ge/georgia/home/who-we-are/scp.html, (Acc. 05.08.2024).

13. ***Bush (2005),*** President Sworn-In to Second Term, 20.01.2005, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2005/01/20050120-1.html, (Acc. 05.08.2024).
14. ***Civil (2004),*** NATO Approves Georgia's IPAP, 30.10.2004, https://civil.ge/archives/106466, (Acc. 05.08.2024).
15. ***Civilnet (2023),*** Those who don't want Azerbaijani citizenship can leave Karabakh, says Aliyev, 21.01.2023, https://www.civilnet.am/en/news/688650/those-who-dont-want-azerbaijani-citizenship-can-leave-karabakh-says-aliyev/, (Acc. 05.08.2024).
16. ***Cloud (2009),*** Cloud D. S., VIDEO: Wrong red button, 03.06.2009, https://www.politico.com/story/2009/03/video-wrong-red-button-019719, (Acc. 05.08.2024).
17. ***CNN (2004),*** Saakashvili claims Georgia victory, 05.01.2004, https://edition.cnn.com/2004/WORLD/europe/01/04/georgia.election/index.html, (Acc. 05.08.2024).
18. ***CNN (2005),*** Bush: Georgia 'beacon of liberty', 11.05.2005, https://edition.cnn.com/2005/WORLD/europe/05/10/bush.tuesday/, (Acc. 05.08.2024).
19. ***CNN (2011),*** Clinton cites 'serious concerns' about Russian election, 06.12.2011, https://edition.cnn.com/2011/12/06/world/europe/russia-elections-clinton/index.html, (Acc. 05.08.2024).
20. ***CNN (2023),*** Nagorno-Karabakh will cease to exist from next year. How did this happen?, 28.09.2023, https://edition.cnn.com/2023/09/28/europe/nagorno-karabakh-officially-dissolve-intl/index.html, (Acc. 05.08.2024).
21. ***Consilium (2021a),*** President Michel meets Eastern Partnership leaders during South Caucasus visit, 19.07.2021, https://www.consilium.europa.eu/en/european-council/president/news/2021/07/19/20210718-president-michel-visits-south-caucasus/, (Acc. 05.08.2024).
22. ***Consilium (2021b),*** Statement of President Charles Michel following the trilateral meeting with President Ilham Aliyev and Prime Minister Nikol Pashinyan, 14.12.2021, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2021/12/14/statement-of-president-charles-michel-following-the-trilateral-meeting-with-president-ilham-aliyev-and-prime-minister-nikol-pashinyan/, (Acc. 05.08.2024).
23. ***Consilium (2022a),*** Statement of European Council President Charles Michel following the Second Trilateral Meeting with President Ilham Aliyev and Prime Minister Nikol Pashinyan, 06.04.2022, https://www.consilium. europa.eu/en/press/press-releases/2022/04/06/statement-of-european-council-president-charles-michel-following-the-second-trilateral-meeting-with-president-ilham-aliyev-and-prime-minister-nikol-pashinyan/, (Acc. 05.08.2024).

24. ***Consilium (2022b),*** Press statement by President Michel of the European Council following a trilateral meeting with President Aliyev of Azerbaijan and Prime Minister Pashinyan of Armenia, 23.05.2022, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/05/23/press-statement-by-president-michel-of-the-european-council-following-a-trilateral-meeting-with-president-aliyev-of-azerbaijan-and-prime-minister-pashinyan-of-armenia/, (Acc. 05.08.2024).
25. ***Consilium (2022c),*** Press statement by President Charles Michel following the trilateral meeting with President Aliyev of Azerbaijan and Prime Minister Pashinyan of Armenia, 31 August 2022, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/08/31/press-statement-by-president-charles-michel-following-the-trilateral-meeting-with-president-aliyev-of-azerbaijan-and-prime-minister-pashinayn-of-armenia-31-august-2022/, (Acc. 05.08.2024).
26. ***Consilium (2022d),*** Statement following quadrilateral meeting between President Aliyev, Prime Minister Pashinyan, President Macron and President Michel, 6 October 2022, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/10/07/statement-following-quadrilateral-meeting-between-president-aliyev-prime-minister-pashinyan-president-macron-and-president-michel-6-october-2022/, (Acc. 05.08.2024).
27. ***Consilium (2023a),*** Press remarks by President Charles Michel following the trilateral meeting with President Aliyev of Azerbaijan and Prime Minister Pashinyan of Armenia, 14.05.2023, https://www.consilium. europa.eu/en/press/press-releases/2023/05/14/press-remarks-by-president-charles-michel-following-the-trilateral-meeting-with-president-aliyev-of-azerbaijan-and-prime-minister-pashinyan-of-armenia/, (Acc. 05.08.2024).
28. ***Consilium (2023b),*** Press remarks by President Charles Michel following trilateral meeting with President Aliyev of Azerbaijan and Prime Minister Pashinyan of Armenia, 15.07.2023, https://www.consilium.europa.eu/de/press/press-releases/2023/07/15/press-remarks-by-president-charles-michel-following-trilateral-meeting-with-president-aliyev-of-azerbaijan-and-prime-minister-pashinyan-of-armenia/, (Acc. 05.08.2024).
29. ***Consilium (2023c),*** Statement by Spokesperson for President of the European Council Charles Michel on Armenia-Azerbaijan normalisation - 26 September 2023, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2023/09/26/statement-by-spokesperson-for-president-of-the-european-council-charles-michel-on-armenia-azerbaijan-normalisation-26-september-2023/, (Acc. 05.08.2024).
30. ***Consilium (2023d),*** Statement by Prime Minister Nikol Pashinyan of Armenia, President Michel of the European Council, President Macron of

France and Chancellor Scholz of Germany, 05.10.2023, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2023/10/05/statement-by-prime-minister-nikol-pashinyan-of-armenia-president-michel-of-the-european-council-president-macron-of-france-and-chancellor-scholz-of-germany/, (Acc. 05.08.2024).

31. ***Daventry (2020),*** Daventry M., Macron, Putin and Trump call for immediate Nagorno-Karabakh ceasefire, 01.10.2020, https://www.euronews.com/2020/10/01/macron-putin-and-trump-call-for-immediate-nagorno-karabakh-ceasefire, (Acc. 05.08.2024).
32. ***DefenseNews (2015),*** NATO Opens Training Center In Georgia Amid Russia Tensions, 27.08.2015, https://www.defensenews.com/home/2015/08/27/nato-opens-training-center-in-georgia-amid-russia-tensions/, (Acc. 05.08.2024).
33. ***Diplomatie (2021a),*** Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group (13 April 2021), https://www.diplomatie.gouv.fr/en/country-files/armenia/news/article/statement-by-the-co-chairs-of-the-osce-minsk-group-13-apr-2021, (Acc. 05.08.2024).
34. ***Diplomatie (2021b),*** Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group (29 July 2021), https://www.diplomatie.gouv.fr/en/country-files/armenia/news/article/statement-by-the-co-chairs-of-the-osce-minsk-group-29-jul-2021, (Acc. 05.08.2024).
35. ***EEAS (2022),*** Q&A EU Monitoring Capacity to Armenia, 25.10.2022, https://www.eeas.europa.eu/eeas/qa-eu-monitoring-capacity-armenia_en, (Acc. 05.08.2024).
36. ***EIU (2023),*** Azerbaijan sets up checkpoints on the Lachin corridor, 27.04.2023, https://www.eiu.com/n/azerbaijan-sets-up-checkpoints-on-the-lachin-corridor/, (Acc. 05.08.2024).
37. ***Energy,*** Diversification of gas supply sources and routes, https://energy.ec.europa.eu/topics/energy-security/diversification-gas-supply-sources-and-routes_en#the-southern-gas-corridor, (Acc. 05.08.2024)
38. ***Eurasianet (2023a),*** Azerbaijan launches massive offensive in Nagorno-Karabakh, 19.09.2023, https://eurasianet.org/azerbaijan-launches-massive-offensive-in-nagorno-karabakh, (Acc. 05.08.2024).
39. ***Eurasianet (2023b),*** Azerbaijan arrests more ex-leaders of Nagorno-Karabakh, 04.10.2023, https://eurasianet.org/azerbaijan-arrests-more-ex-leaders-of-nagorno-karabakh, (Acc. 05.08.2024).
40. ***Europa (2022),*** Eastern Partnership, 17.03.2022, https://www.eeas.europa.eu/eeas/eastern-partnership_en, (Acc. 05.08.2024).
41. ***Europa (2023),*** Joint Statement by European Commission President Ursula von der Leyen and Armenian Prime Minister Nikol Pashinyan, 5 October

2023, 05.10.2023, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/statement_23_4789, (Acc. 05.08.2024).
42. ***European Commission,*** European Neighbourhood Policy: What is it?, https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/european-neighbourhood-policy_en, (Acc. 05.08.2024).
43. ***Foreign (2023),*** Assessing the Crisis in Nagorno-Karabakh, 14.09.2023, https://www.foreign.senate.gov/hearings/assessing-the-crisis-in-nagorno-karabakh, (Acc. 05.08.2024).
44. ***France24 (2023a),*** Azerbaijan's president refuses to attend EU talks with Armenia PM, 04.10.2023, https://www.france24.com/en/europe/20231004-azerbaijan-s-president-refuses-to-attend-eu-talks-with-armenia-pm, (Acc. 05.08.2024).
45. ***France24 (2023b),*** Azerbaijan rejects Armenia peace talks in US over Washington's 'biased remarks', 16.11.2023, https://www.france24.com/en/asia-pacific/20231116-azerbaijan-rejects-armenia-peace-talks-in-us-over-washington-s-biased-remarks, (Acc. 05.08.2024).
46. ***Government,*** Izvestia publishes an article by Prime Minister Vladimir Putin on cooperation and interaction in the post-Soviet space, http://archive.government.ru/eng/docs/16622/print/, (Acc. 05.08.2024).
47. ***Hovhannisyan (2023),*** Hovhannisyan A., Suren Petrosyan: Artsakh`s dissolution not only contradicts international legal norms, but is also unconstitutional process, 10.10.2023, https://arminfo.info/full_news.php?id=79652&lang=3, (Acc. 05.08.2024).
48. ***Kaczmarski (2011),*** Kaczmarski M., Russia on the military intervention in Libya, 23.03.2011, https://www.osw.waw.pl/en/publikacje/analyses/2011-03-23/russia-military-intervention-libya, (Acc. 05.08.2024).
49. ***Konończuk (2013),*** Konończuk W. Ukraine withdraws from signing the Association Agreement in Vilnius: The motives and implications, 27.11.2013, https://www.osw.waw.pl/en/publikacje/analyses/2013-11-27/ukraine-withdraws-signing-association-agreement-vilnius-motives-and, (Acc. 05.08.2024).
50. ***Kremlin (2007),*** Speech and the Following Discussion at the Munich Conference on Security Policy, 10.02.2007, http://en.kremlin.ru/events/president/transcripts/24034, (Acc. 05.08.2024).
51. ***Kremlin (2020),*** Statement by President of the Republic of Azerbaijan, Prime Minister of the Republic of Armenia and President of the Russian Federation, 10.11.2020, http://en.kremlin.ru/events/president/news/64384, (Acc. 05.08.2024).

52. ***Kremlin (2022),*** Sochi hosted trilateral talks between President of Russia Vladimir Putin, President of Azerbaijan Ilham Aliyev and Prime Minister of Armenia Nikol Pashinyan, 31.10.2022, http://en.kremlin.ru/events/president/news/69729, (Acc. 05.08.2024).
53. ***Krikorian (2023),*** Krikorian O., EU Deploys Two-Year Monitoring Mission in Armenia, 23.02.2023, https://iwpr.net/global-voices/eu-deploys-two-year-monitoring-mission-armenia, (Acc. 05.08.2024).
54. ***Lippman (1999),*** Lippman Th. W., Russian Leader Cancels Trip in Protest, 24.03.1999, https://www.washingtonpost.com/wp-srv/inatl/daily/march99/russia032499.htm, (Acc. 05.08.2024).
55. ***Maizland (2020),*** Maizland L., U.S.-Taliban Peace Deal: What to Know, 02.03.2020, https://www.cfr.org/backgrounder/us-taliban-peace-deal-agreement-afghanistan-war, (Acc. 05.08.2024).
56. ***MFA (2017),*** The Armenia-European Union Comprehensive and Enhanced Partnership Agreement has been signed, 24.11.2017, https://www.mfa.am/en/press-releases/2017/11/24/cepa-signing/7718, (Acc. 05.08.2024).
57. ***MFA (2023),*** The Trilateral meeting of the Minister of Foreign Affairs of the Republic of Armenia, the United States national security advisor to President and the Minister of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, 28.06.2023, https://www.mfa.am/en/press-releases/2023/06/28/arm_usa_aze/12067, (Acc. 05.08.2024).
58. ***NATO (2008a),*** Bucharest Summit Declaration, 03.04.2008, https://www.nato.int/cps/en/natolive/official_texts_8443.htm, (Acc. 05.08.2024).
59. ***NATO (2008b),*** NATO-Georgia Joint Press Statement on the occasion of the North Atlantic Council visit to Georgia and the inaugural meeting of the NATO-Georgia Commission, 15.09.2008, https://www.nato.int/docu/pr/2008/p08-115e.html, (Acc. 05.08.2024).
60. ***NATO (2024),*** Partnership for Peace programme, 28.01.2024, https://www.nato.int/cps/en/natohq/topics_50349.htm, (Acc. 05.08.2024).
61. ***OC Media (2023),*** Live updates | Stepanakert surrenders amidst Azerbaijani assault, 20.09.2023, https://oc-media.org/live-updates-azerbaijani-assault-on-nagorno-karabakh-enters-second-day/, (Acc. 05.08.2024).
62. ***OSCE (2021),*** Joint Statement by the OSCE Minsk Group Co-Chair Countries, 07.12.2021, https://www.osce.org/minsk-group/507320, (Acc. 05.08.2024).
63. ***President,*** Ilham Aliyev met with people who returned to the city of Lachin and presented house keys to them, https://president.az/en/articles/view/60027, (Acc. 05.08.2024).

64. ***Prime Minister (2020),*** Statement by the Prime Minister of the Republic of Armenia, the President of the Republic of Azerbaijan and the President of the Russian Federation, 10.11.2020, https://www.primeminister.am/en/press-release/item/2020/11/10/Announcement/, (Acc. 05.08.2024).
65. ***Prime Minister (2021a),*** Joint statement issued following meeting between Nikol Pashinyan, Vladimir Putin and Ilham Aliyev, 11.01.2021, https:// www.primeminister.am/en/press-release/item/2021/01/11/Nikol-Pashinyan-Moscow-meeting-Announcement/, (Acc. 05.08.2024)
66. ***Prime Minister (2021b),*** Armenian Prime Minister, Russian President, Azerbaijani President adopt joint statement, 26.11.2021, https://www. primeminister.am/en/press-release/item/2021/11/26/Nikol-Pashinyan-Sochi/, (Acc. 05.08.2024)
67. ***Reuters (2009),*** Clinton exhorts Turkey, Armenia on normalization, 29.09.2009, https://www.reuters.com/article/uk-armenia-turkey-usa-idUKTRE58R53320090928/, (Acc. 05.08.2024).
68. ***Reuters (2022),*** Azerbaijan cancels Armenia talks, says Macron cannot take part, 25.11.2022, https://www.reuters.com/world/planned-brussels-meeting-between-armenia-azerbaijan-leaders-scrapped-interfax-2022-11-25/, (Acc. 05.08.2024).
69. ***Reuters (2023),*** Russia slams new EU mission to Armenia, says it will stoke tensions, 26.01.2023, https://www.reuters.com/world/europe/russia-slams-new-eu-mission-armenia-says-it-will-stoke-tensions-2023-01-26/, (Acc. 05.08.2024).
70. ***RFERL (2012),*** Clinton Calls Eurasian Integration An Effort To 'Re-Sovietize', 07.12.2012, https://www.rferl.org/a/clinton-calls-eurasian-integration-effort-to-resovietize/24791921.html, (Acc. 05.08.2024).
71. ***RFERL (2023),*** Armenian Exodus From Nagorno-Karabakh Tops 100,000; UN Readies For Visit, 30.09.2023, https://www.rferl.org/a/karabakh-armenian-exodis-100000-un-visit-azerbaijan/32616962.html, (Acc. 05.08.2024).
72. ***State.gov (2023a),*** Secretary Blinken's Meeting with Armenian Prime Minister Pashinyan and Azerbaijani President Aliyev, 18.02.2023, https:// www.state.gov/secretary-blinkens-meeting-with-armenian-prime-minister-pashinyan-and-azerbaijani-president-aliyev/, (Acc. 05.08.2024).
73. ***State.gov (2023b),*** Secretary Blinken's Call with Azerbaijani President Aliyev, 30.07.2023, https://www.state.gov/secretary-blinkens-call-with-azerbaijani-president-aliyev-14/, (Acc. 05.08.2024).
74. ***State.gov (2023c),*** Remarks by President Charles Michel after his meeting with the leaders of Armenia, Azerbaijan, France and Germany, 01.06.2023, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2023/06/01/ remar

ks-by-president-charles-michel-after-his-meeting-with-the-leaders-of-armenia-azerbaijan-france-and-germany/, (Acc. 05.08.2024).
75. ***State.gov (2023d),*** Statement by the spokesperson of Charles Michel, President of the European Council, regarding Armenia and Azerbaijan, 01.09.2023, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2023/09/01/statement-by-the-spokesperson-of-charles-michel-president-of-the-european-council-regarding-armenia-and-azerbaijan/, (Acc. 05.08.2024).
76. ***Swanson (2018),*** Swanson A., Trump's Trade War With China Is Officially Underway, 05.07.2018, https://www.nytimes.com/2018/07/05/business/china-us-trade-war-trump-tariffs.html, (Acc. 05.08.2024).
77. ***Trump (2017),*** President Donald J. Trump Announces a National Security Strategy to Advance America's Interests, 18.12.2017, https:// trumpwhitehouse.archives.gov/briefings-statements/president-donald-j-trump-announces-national-security-strategy-advance-americas-interests/, (Acc. 05.08.2024).
78. ***US Embassy (2023),*** Armenia-Azerbaijan Peace Negotiations, 04.05.2023, https://am.usembassy.gov/peace-negotiations/, (Acc. 05.08.2024).
79. ***White House (2021),*** Interim National Security Strategic Guidance, 03.03.2021, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/03/03/interim-national-security-strategic-guidance/, (Acc. 05.08.2024).
80. ***WTO (2012),*** WTO membership rises to 157 with the entry of Russia and Vanuatu, https://www.wto.org/english/news_e/pres12_e/pr671_e.htm, 22.08.2012, (Acc. 05.08.2024).

BENYAMIN POGHOSYAN

THE US AND THE EU POLICY IN THE SOUTH CAUCASUS IN 1991–2023

The United States' and the European Union's policies towards the South Caucasus from 1991 to 2023 can be divided into several distinct phases.

The first phase occurred in the 1990s, when the primary objective of the collective West was to support the newly independent states at the onset of their state-building processes.

The second phase, during the 2000s, saw the formation of the Georgia–Azerbaijan–Turkey strategic partnership, primarily facilitated by the United States. This alliance aimed to weaken Russia and Iran's influence in the region and to ensure the export of Azerbaijani energy resources to international markets, bypassing Russian routes.

In the 2010s, there was a gradual increase in the European Union's engagement in the region, most notably through the launch of the Eastern Partnership initiative. Simultaneously, U.S. interest in the South Caucasus began to wane.

The fourth phase, from 2021 to 2023, was marked by a significant escalation in tensions between Russia and the West. Following the second Artsakh (Nagorno-Karabakh) war, the balance of power in the South Caucasus shifted, and the collective West – particularly the United States – adopted a policy aimed at reducing Russia's influence in the region, with the West becoming more involved in conflict resolution efforts.

After the war broke out with Ukraine in 2022, Russia had no choice but to shift most of its forces and resources towards the Ukrainian front. This change provided new opportunities to the collective West regarding the South Caucasus region. Amidst what can be described as a de facto war between Russia and the West, the U.S.'s primary objective in the region became limiting Russia's presence and influence. Within this strategy, the signing of a peace agreement between Armenia and Azerbaijan gained particular importance for the West.

The West's rationale was as follows: resolving the Armenia–Azerbaijan and Armenia–Turkey disputes would diminish Armenia's reliance on Russia, potentially weakening Russia's regional influence. Furthermore, signing an Armenia–Azerbaijan peace agreement would create conditions for Azerbaijan to refuse extending the mandate of Russian peacekeeping forces in the region beyond November 2025.

A new phase in the resolution of the Artsakh conflict commenced with the signing of the Prague Declaration on October 6, 2022. At this

stage, the Armenian authorities shifted their emphasis from the status of Artsakh to “ensuring the rights and security of the Armenians of Artsakh.” In this context, Yerevan advocated for an international presence in Artsakh, as well as for dialogue between Baku and Stepanakert, proposing the establishment of an international mechanism as a crucial condition for such dialogue.

Despite the collective West's declarations that the use of force against Artsakh was unacceptable, Azerbaijan’s military offensive on September 19, 2023, followed by the complete deportation of the Armenian population from Artsakh, did not result in sanctions from either the United States or the European Union. Instead, the West limited its response to issuing statements of condemnation and providing humanitarian assistance to those displaced from Artsakh. Both the U.S. and the EU continued to advocate for negotiations and the signing of a peace treaty between Armenia and Azerbaijan. However, despite these efforts, Azerbaijan has persistently obstructed the finalization of the treaty.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ԿԱՋՄԵԼ Է

Մենուա Սողոմոնյան

«Հարավային Կովկաս. կայունության և անվտանգության արդի մարտահրավերները» վերտառությամբ միջազգային գիտաժողով Երևան, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ, 28–29 նոյեմբեր, 2023 թ.

2023 թ. նոյեմբերի 28-ին և 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հարավային Կովկաս. կայունության և անվտանգության արդի մարտահրավերները» վերտառությամբ միջազգային գիտաժողովը՝ կազմակերպված ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5F218 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Գիտաժողովին գիտական զեկուցումներով հանդես եկան 14 գիտնականներ Հայաստանից, Իրանից, ԱՄՆ-ից և Լիբանանից: Որպես ունկնդիրներ՝ գիտաժողովին մասնակցում էին գիտնականներ, դիվանագետներ, հասարակական, քաղաքական գործիչներ, լրագրողներ և ուսանողներ:

Գիտաժողովի բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը:

Յուրի Սուվարյան

Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս–քարտուղար

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳԵՐԱՐԴԻԱԿԱՆ ԹԵՄԱՅՈՎ

Միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժինը՝ Հայաստանի

Հանրապետության գիտության և բարձրագույն կրթության կոմիտեի աջակցությամբ, նվիրված է գերարդիական հիմնախնդրի: Բավականին ուշագրավ է գիտաժողովի խորագիրը՝ «Հարավային Կովկաս. կայունության և անվտանգության արդի մարտահրավերները»: Ըստ էության շատ կարևոր թեմա թե՛ գիտական, հետազոտական տեսակետից, թե՛ գործնական քաղաքականության: Աշխարհում հիմա, ինչպես հայտնի է, տեղի են ունենում փոփոխություններ, միաբևեռ աշխարհից անցում է կատարվում բազմաբևեռ աշխարհին: Հավանաբար՝ դրա դրսևորումը կլինի այն, որ արևմուտքից ուժային կենտրոնները մասամբ կտեղափոխվեն արևելք: Արևելքն արթնանում է. փոխվում են տեղերը, դերերը: Մինչև 15-րդ դարը տիրապետում էր արևելքը, 15-րդ դարից՝ Եվրոպան, արևմուտքը և հիմա նորից արևելքը ինտենսիվորեն աճում ու զարգանում է: Տեղի են ունենում քաղաքական փոփոխություններ ևս: Այս փոփոխությունները կրում են աշխարհաքաղաքական սուր լարվածության դրսևորումներ, հատկապես խոշոր տերությունների միջև, և ահա օգտվելով խոշոր տերությունների «զբաղվածությունից», որոշ երկրներ էլ փորձում են լուծել իրենց խնդիրները: Եվ թերևս դա պատճառներից մեկն է, որ Հարավային Կովկասում իսկապես կա անվտանգության և կայունության սպառնալիք, և գիտաժողովը պիտի անդրադառնա այդ հարցերին:

Մասնավորապես Հայաստանի Հանրապետության վերաբերյալ մեր հարևանների՝ արևմտյան և արևելյան, Թուրքիա, Ադրբեջան նկրտումները նույնպես այդ տրամաբանության մեջ պետք է տեսնել: Ունեն խնդիրներ, որոնք դեռ ծրագրվել են հարյուր տարի առաջ՝ Թուրքիայի կողմից Ադրբեջան պետության ստեղծմամբ: Եվ ահա այսօր, օգտվելով իրենց համար նպաստավոր միջազգային պայմաններից, աստիճանաբար իրենց ծրագրերով նախատեսված խնդիրները փորձում են լուծել: Այս միտքը պետք է մեզ մի ուշագրավ գաղափարի բերի՝ անկախ պետություն կառուցելու դեպքում պետք է ունենալ նաև երկարաժամկետ քաղաքական ծրագիր, երկարաժամկետ քաղաքականություն կամ, ավելի ճիշտ

կլինի ասել բազմակողմանի ռազմավարություն: Եվ այն երկրները, որոնք չեն ունենում այդ հեռանկարային ռազմավարությունը և չեն ստեղծում լուծման նախադրյալներ իրենց ծրագրային խնդիրների համար՝ կարող են հանգել դժվարությունների: Եվ իհարկե, դժվարություններից խուսափելու համար պետք է ունենալ հզոր երկիր՝ զարգացող գիտությամբ, հզոր արդյունաբերությամբ, տեխնոլոգիական բարձր հագեցվածությամբ տնտեսությամբ, ռազմաարդյունաբերական համալիրով, և յուրաքանչյուրն իր հույսը պիտի դնի իր ուժերի վրա:

Հուսալով, թե հարևանները կամ հեռումոտիկ բարեկամները կօգնեն, օգտակար կլինեն, կասկածահարույց են այդպիսի մոտեցումները: Եվ այս պատճառով էլ մեր գիտաժողովը իսկապես ունի քննարկելու լուրջ խնդիրներ, գիտական առումով կարևորելու դրանք և, ինչ խոսք, նաև մշակելու հանձնարարականներ, մանավանդ մեր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը շատ է առնչվում իշխանության մարմինների հետ և ճիշտ է անում: Գուցե մենք ունենանք որոշ մշակումներ, որոշ հանձնարարականներ՝ խորհրդատվության ձևով ներկայացնելու, որպեսզի այն մարտահրավերները, որոնք իսկապես առկա են, կան, կարողանանք դիմագրավել դրանց, գտնենք ճիշտ մեթոդաբանություն դրանց դիմագրավելու համար:

Կարևորելով գիտաժողովի նշանակությունն ու գիտագործնական կարևորությունը՝ գիտաժողովը հայտարարում եմ բացված: Եվ ի սկզբանե ցանկանում եմ գիտաժողովին հաջողություն, զեկուցողներին՝ ստեղծագործական նվաճումներ: Ելույթի համար խոսքը կփոխանցեմ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակույթի կենտրոնի խորհրդական պրն. Մոհամմադ Ասադի Մոհավեդին:

Մոհամմադ Ասադի Մոհավեդ
Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակույթի կենտրոնի ղեկավար

Հանուն Աստծո

Ելույթիս սկզբում կցանկանայի շնորհակալություն հայտնել ամենակարող Աստծուն՝ մեծ նշանակություն ունեցող այս գիտաժողովին իմ մասնակցությունը ունենալու, ինչպես նաև մի քանի րոպեով ձեզ հետ իմ մտքերը կիսելու հնարավորության համար: Ամհրաժեշտ եմ գտնում նաև երախտիքիս հավաստիքը հայտնել գիտաժողովի կազմակերպիչներին: Լիահույս եմ, որ այս գիտաժողովը իր նպաստը կունենա տարածաշրջանում կայունության և անվտանգության գործում, քանի որ մենք համոզված ենք, որ մասնակիցների միջև նմանատիպ քննարկումները կարող են բավականին արդյունավետ լինել: Մենք այսօր աստեղ ենք հավաքվել՝ քննարկելու անվտանգության և քաղաքական կայունության կենսական հարցերը. հարցեր, որոնք տնտեսական և մշակութային զարգացման համար մեծ խթան են հանդիսանում, և ինչպես գիտենք, կայունության և անվտանգության բացակայությունը բազմաթիվ մարտահրավերների կարող է հանգեցնել:

Մենք բոլորս քաջատեղյակ ենք, որ պատմականորեն Իրանի և Հայաստանի միջև կապը Մերձավոր Արևելքի ժողովուրդների շրջանում հնագույն և ամենաերկարատև աղերսներից է: Այս երկու հարևան երկրների միջև հարաբերությունները մոտ չորս հազար տարվա վաղեմություն ունեն: Հայաստանի պատմությունը իմանալու համար անհրաժեշտ է իմանալ նաև Իրանի պատմությունը, ինչը երկու ազգերի միջև հարաբերությունների խորքայնության առհավատչյան է: Դարեր շարունակ Հայաստանը Իրանի հետ լավ հարաբերություններ է ունեցել՝ մշակութային արժեքներ փոխառելով Իրանից և փոխադարձաբար իր մշակութային արժեքները փոխանցելով Իրանին: Այս առումով իրանահայերի հետ երկարատև

գոյակցությունը կրկնապատկել է Իրանի և Հայաստանի շահագրգռվածությունը՝ հարաբերությունները զարգացնելու և ամրապնդելու գործում:

Ներկայում երկու ազգերի և երկրների միջև հարաբերությունների ամրապնդման հարցում կարևորագույն գործոնը մշակույթն է: Այս հարցը առանձնակի նշանակություն ունի, երբ խոսքը գնում է աշխարհագրական հարևանների մասին: Անհերքելի փաստ է, որ Իրանի և Հայաստանի միջև բարեկամական հարաբերությունները հիմնված են մշակութային և քաղաքակրթական տարրերի վրա: Հետաքրքրական է, որ հայերենում իրանական ծագման ավելի քան 1400 բառ կա:

Իրականում, երկու երկրների միջև մշակութային ոլորտում գործունեության ծավալման, մշակութային տարատեսակ ծրագրերի իրագործման համար միմյանց արժեքների, հետաքրքրությունների և հավատալիքների խորը իմացություն է պահանջվում, քանզի ճշմարիտ ճանաչողությունն է մշակութային փոխազդեցությունների վերափոխման աղբյուրը: Մեր կրոնական համոզմունքների համաձայն, ճիշտ ճանաչողությունը և գիտելիքը ամեն բանի աղբյուր են, մինչդեռ բավարար գիտելիքի բացակայությունը և թերիմացությունը բազմաթիվ մարտահրավերների պատճառ կարող են դառնալ: Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունը մշտապես միտված է եղել խաղաղության և բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը: Այս քաղաքականությունը պետության զարգացման հիմնարար նախադրյալներից է: Իրանի Իսլամական Հանրապետությունը միշտ ընդգծել է խնդիրների լուծման դիվանագիտական ուղու կարևորությունը՝ հիմնված տարածաշրջանի ժողովուրդների միջև երկխոսության սկզբունքի վրա: Սա տարածաշրջանում խաղաղություն և անվտանգություն հաստատելու, ինչպես նաև տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացում ապահովելու լավագույն եղանակն է:

Ռոբերտ Բեգլարյան
Իրանի Իսլամական Հանրապետության
Մեջլիսի պատգամավոր

Մեծարգո պարոն Սուվարյան, հարգարժան ակադեմիկոսներ, մեծարգո պարոն Ասադի, հարգարժան հյուրեր,

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի Հանրապետություն – Իրանի Իսլամական Հանրապետություն հարաբերությունները որակվել են և եղել են բարիդրացիական, փոխադարձորեն վստահված, ուստի և կայուն ու զարգացման միտումներ ունեցող: Սակայն այդ զարգացման ընթացքում միշտ էլ տնտեսականը զիջել է քաղաքականին, ինչի լուրջ բացը նկատվեց հատկապես Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո, ի մասնավորի, ենթակառուցվածքների մասով: 44-օրյա պատերազմից հետո, աշխարհաքաղաքական տագնապաբնույթ եռուզեռից ելնելով, երկու երկրների հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ, որը ունի և կունենա բազմակողմանի բնույթ:

Տարածաշրջանի հարևանների և տարածաշրջանից դուրս ուժերի ներկայությունը և դերակատարությունը ստեղծել են և ստեղծելու են մարտահրավերներ: Այս գիտաժողովը, որ իր վերնագրում ներառել է մարտահրավերների առկայությունը, բնականաբար կանդրադառնա դրանց՝ թեկուզ սահմանափակվելով դրանցից մի քանիսով: Ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետությունում բազմազան են այն գիտական, լրատվական և վերլուծական կենտրոններն ու անձինք, որոնք ուշի ուշով հետևում են հարավկովկասյան անցուդարձներին և Հայաստանի ու Իրանի հարաբերություններին:

Ողջունելով այս գիտաժողովն ի մի բերելու նախաձեռնողներին և ի կատար ածողներին ու մասնակիցներին՝ ցանկանում եմ արտահայտվել, որ նման միջոցառումները չափազանց կարևոր են, որ երկու երկրների պետական համակարգն ու որոշումների կայացման կենտրոնները տեղյակ լինեն իրարու հայացքներից և մտահոգություններից, ծանոթանան աշխարհընկալումներին ու

քաղաքականության մշակման ոճին և ձևավորմանը: Պիտի ընդգծեմ, որ, ըստ իս, այս պահի դրությամբ Իրանի Իսլամական Հանրապետության համար շատ կարևոր է, որ ընկալի նախ, թե Հայաստանի Հանրապետությունը ի՞նչ հեռանկար է տեսում Իրան-Հայաստան հարաբերությունների համար, երկրորդ՝ ինչպե՞ս է ընկալում Իրանի դերը տարածաշրջանի անվտանգության տիրույթում, և երրորդ՝ Հայաստանի Հանրապետությունն ինչպե՞ս է արձագանքում Իրանի Իսլամական Հանրապետության անվտանգության քաղաքականությանն ու առաջնահերթություններին՝ տարածաշրջանը խաղաղ պահելու հարցում: Վերստին ողջունելով բոլոր կազմակերպիչներին և մասնակիցներին՝ մաղթում եմ արդյունավետ գիտական մտքերի փոխանակություն և որ այդ ամենը նպաստի Իրան-Հայաստան երկու վաղեմի բարեկամ-հարևաններիի նորանոր հարաբերությունների բարգավաճմանը:

ԲԱՅՄԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

«Հարավային Կովկասում տեղի ունեցող նոր զարգացումները. հայացք Հայաստանից» թեմայով զեկուցում կարդաց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ **Գոհար Իսկանդարյանը**, ով վերոնշյալ գիտական ծրագրի (որի շրջանակներում կազմակերպվել է գիտաժողովը) ղեկավարն է: Գ. Իսկանդարյանի զեկույցի շրջանակներում, ի թիվս այլոց, արծարծվեցին հետևյալ թեզերը.

- Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության խախտումը, որը հանգեցրել է նաև 2020 թ. 44-օրյա պատերազմին, արդյունք էր Թուրքիայի ու Իսրայելի կողմից Ադրբեջանին միակողմանի, մեծածավալ ու անթաքույց աջակցության, Ռուսաստանի կողմից Հայաստանի և Ադրբեջանի հանդեպ քաղաքականության մեջ բալանսավորված մոտեցումներով, հայ-իրանական հարաբերությունների ներուժը երկուստեք լիարժեք չօգտագործելով և այլն:

- 2020 թ. տարածաշրջանի ուժային հավասարակշռության խախտմամբ վերահաստատվեց միջազգային քաղաքականության մեջ ուժային գործոնի գերակայությունը: Անվտանգային փխրուն նոր ճարտարապետությունը, որի տարրերից են Ադրբեջանի տարածքից Իսրայելի կողմից Իրանի հյուսիսային շրջանները վերահսկելու հանգամանքը, այսպես կոչված Զանգեզուրի միջանցքի օրակարգի առաջմղումը, Արևմուտքի միջամտության զուտ վերբալ բնույթը, Ադրբեջանի ընդգծված հակաիրանական և թուրքամետ ու իսրայելամետ քաղաքականությունը և այլն, հակասում է թե՛ Հայաստանի, թե՛ Իրանի շահերին:
- Հարավային Կովկասում խախտված հավասարակշռության հետևանքով անվտանգային ահագնացող մարտահրավերները հրամայական են դարձնում հայ-իրանական հարաբերությունները բարձրացնել ռազմավարական դաշնակցության մակարդակի, ինչը պատմականորեն բռնել է իր քննությունը և կայանալու օբյեկտիվ հիմքեր ունի՝ քաղաքական հստակ կամքի պարագայում:

«Հայաստան – Իրան առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դոցենտ, տ.գ.թ. **Սուրեն Պարսյանը**, ով ընդգծեց հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների հատկապես անվտանգային նշանակությունը թե՛ Հայաստանի, թե՛ Իրանի համար: Մասնավորապես, կարևորվեց 1990-ականներին Իրանի հետ ծավալված առևտրի կարևորությունը Հայաստանի պարենային անվտանգության դիրքերից, ինչպես նաև Հյուսիս-Հարավ ավտոմոբիլային ճանապարհի շինարարության հանգամանքը Իրանի և Հայաստանի անվտանգության համար, ինչը որոշ չափով բնականորեն իմաստազրկում է Թուրքիայի կողմից առաջ քաշվող այսպես կոչված Զանգեզուրի միջանցքի գաղափարը: Ս. Պարսյանը առանձնացրեց հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ,

որոնք վերհանվել են գործարարների կարծիքների ուսումնասիրումից ու մասնագիտական այլ քննարկումներից. դրանցից են.

- Հայաստանում պարսկերենի իմացության խիստ ցածր մակարդակը,
- իրանական օրենսդրության մեջ հաճախակի ու անկանխատեսելի փոփոխությունները,
- ճանապարհների հուսալիության ու նվազ ծախսատարության հետ կապված անելիքների ոչ բավարար մակարդակը,
- ճանապարհային տուրքի առկայությունը՝ որպես լրացուցիչ ծախս բեռնափոխադրողների համար,
- լոգիստիկ կենտրոնի բացակայությունը՝ որպես երկկողմ փոխանակումների կապերի ամրապնդման ենթակառուցվածք,
- փոխանցումների հուսալի և քիչ ծախսատար համակարգի թերզարգացվածությունը, SWIFT համակարգից իրանական բանկերի անջատված վիճակը, «Մելլաթ» համակարգով փոխանակելիս փոխարժեքի տատանումները և այլն:

Ս. Պարսյանը կարևորեց Հայաստան – Իրան առևտրատնտեսական հարաբերությունները հայ-իրանական ռազմավարական փոխգործակցության մեջ՝ համարելով, որ այդ հարաբերությունների զարգացումը, ընդլայնումն ու խորացումը միանգամայն դրականորեն կանդրադառնան հայ-իրանական անվտանգային փոխադարձ հանձնառությունների վրա:

«Ուժային բալանսի փոփոխությունը Հարավային Կովկասում և ՀՀ-ի անվտանգային մարտահրավերները» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Երևանի պետական համալսարանի դոցենտ, ք.գ.թ. **Ալեն Ղևոնդյանը**, ով համակողմանի անդրադարձ կատարեց աշխարհակարգի փոփոխության՝ Հարավային Կովկասի վրա ունեցած ազդեցության դրսևորումներին՝ ընդգծելով կոշտ ուժի պարադիգմայի անփոփոխելիության, բարոյական ու իրավական նորմերի չգործելու, միջազգային համակարգի բազմաբևեռ ձևին անցնելիս տեղային բալանսները պատերազմներով խախտվելու հանգամանքները: Հատկանշական համարվեց, որ մեր տարածաշրջանում ուժային բալանս դեռևս չի հաստատվել, այն ընթա-

ցիկ վիճակում է և առերևույթ Հայաստանի առաջ խնդիր է դնում վերանգահատել դաշնակցային եղած հարաբերությունները, փնտրել նոր դաշնակիցներ, ինչն էլ, իր հերթին, ռիսկային ու անկանխատեսելի հանգամանք է փոքր, սակավ ռեսուրսներով երկրի համար: Հայաստանի անվտանգային խնդիրները, Ա. Ղևոնդյանի գնահատմամբ, վերը նշված օբյեկտիվ, աշխարհակարգային վերափոխումների ազդեցության հանգամանքներից զատ, պայմանավորված են նաև այդ օբյեկտիվ գործոնների ոչ ադեկվատ, սուբյեկտիվ և հայեցողական ընկալումներով ու դրանց հիման վրա տարվող քաղաքական ուղեգծերով, որոնք ՀՀ արտաքին քաղաքականությանը հաղորդում են անկանխատեսելիություն (գործընկերներին ստիպելով պարբերաբար հնչեցնել իրենց կարմիր գծերը), ստեղծում պատրանք, որ իբր հնարավոր է զիջումներով ու զուտ փաստաթղթային ձևակերպումներով ապահովել կայուն խաղաղություն ու անվտանգություն:

«Հայաստանի աշխարհագրական բնորոշումները իսլամական աղբյուրներում» թեմայով զեկուցում կարդաց Իրանի 9-րդ և 10-րդ գումարման Մեջլիսի պատգամավոր, Իսլամական Ազատ համալսարանի պրոֆեսոր **Կարեն Խանլարին**, ով իր զեկուցման թեմայի արդիականությունը գիտաժողովի անվտանգային թեմատիկայի շրջանակներում հիմնավորեց նրանով, որ Ադրբեջանի կողմից Հայաստանի և Իրանի հանդեպ ունեցած տարածքային ու մշակութային հավակնությունների համար ստեղծվում են կեղծ պատմական հիմքեր: Կ. Խանլարիի հետազոտությունը հիմնված է մոտ 250 իսլամական աղբյուրների վրա, որոնցից երկու տասնյակը վկայակոչվեցին զեկույցի ընթացքում: Ըստ նշված իրանական, օսմանյան և իսլամական այլ աղբյուրների (Խազենի, Ղազվինի, Սիփահիզադե, Բաքիրխանով, Մահմուդ Միրզա, Ահմադ Ձևդեթ, Մոսավի Թավրիզի և այլք), որոնք ընդգրկում են միջին դարերից մինչև 20-րդ դարը ներառյալ ժամանակաշրջան, բազմիցս հիշատակվել է Հայաստան երկրանվանումը ինչպես ներկայիս Ադրբեջանի, այնպես էլ Թուրքիայի տարածքներում (Փայտակարան, Շերվան, Արդիշ, Կուր-Արաքսյան դելտայի բնակավայրեր, Գանձակ, Ղա-

րաբաղ, Էրզրում, Վան բնակավայրերն ու շրջանները նշված են որպես Հայաստանին պատկանող, իսկ Ադրբեջան անվանումն այդ մասերում չի գործածվել):

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատող, պ.գ.թ. **Քրիստինե Մելքոնյանը** հանդես եկավ «Թուրքիա – Ռուսաստան առևտրատնտեսական հարաբերությունները 2000–2020 թթ.» թեմայով զեկուցմամբ՝ շեշտադրելով այն թեզը, որ գիտական, մասնագիտական ու հանրային-քաղաքական ուշադրության կենտրոնում մշտապես պետք է լինի Ռուսաստան – Թուրքիա տնտեսական փոխգործակցությունը, ինչը շահեր գեներացնող հանգամանք է: Ք. Մելքոնյանը ներկայացրեց Թուրքիայի և Ռուսաստանի միջև առևտրաշրջանառության դինամիկան, որը թեև զգալի տատանումներ է արձանագրել, սակայն ուսումնասիրված ժամանակահատվածում մշտապես բնորոշվել է միլիարդ ԱՄՆ դոլարի երկնիշ թվերով: Հատկանշական է, որ 2015 թ.-ից ի վեր այդ շրջանառության դինամիկան ցուցաբերում է կայուն աճ: Ներկայացվեցին նաև նշված տատանումների պատճառները՝ 2009 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը, 2013 թ. ռուբլու արժեզրկումը, էներգակիրների համաշխարհային գների իջեցումը, ռուս-թուրքական լարվածությունը 2015 թ. և այլն: Ք. Մելքոնյանը ներկայացրեց նաև Թուրքիա-Ռուսաստան ներմուծման ու արտահանման կառուցվածքն ու բովանդակությունը: Հատկանշական է, որ Թուրքիայից Ռուսաստան արտահանման մեջ գերակշռում են մեքենաները, սարքավորումները, սպառողական ապրանքները, տեքստիլը, քիմիական արդյունաբերության ապրանքները, մինչդեռ Ռուսաստանից Թուրքիա արտահանման մեջ հումքն է գերակշռում՝ հանքամթերք, մետաղներ, ինչպես նաև սպառողական ապրանքներ ու գյուղմթերք: Ներկայացվեց նաև երկկողմ ներդրումների կառուցվածքը: Թուրքիայից Ռուսաստան ներդրումները առավել բազմազան են (շինարարական ապրանքների, ապակու, սննդի, սպառողական ապրանքների, կենցաղային տեխնիկայի արտադրություն), մինչդեռ Ռուսաստանից Թուրքիա

ներդրումների մեջ էներգետիկայի ճյուղն է գերակշռում, ինչը նաև քաղաքական ազդեցության հանգամանք է:

«Հարավային Կովկասում ընթացող զարգացումների աշխարհաքաղաքական ազդեցությունները» թեմայով զեկուցում կարդաց Իրանի Իսլամական Հանրապետության Քաղաքական և միջազգային հարաբերությունների հետազոտությունների ինստիտուտի եվրասիական հետազոտությունների դեպարտամենտի տնօրեն, պ.գ.դ. **Ալիբեման Էղբալի Զարչը**: Նրա դիտարկմամբ՝ միջազգային համակարգի վերափոխումը միաբևեռությունից դեպի բազմաբևեռություն, իր ուղիղ դրսևորումներն է գտնում Հարավային Կովկասում: Ի մասնավորի, Ա. Է. Զարչը նշեց, որ չնայած բլոկային պատկանելության հանգամանքին՝ Թուրքիան Հարավային Կովկասի համար մրցակցությունում հանդես է գալիս որպես առանձին խաղացող: Հայաստան-Ադրբեջան հակամարտության մեջ ԱՄՆ-ի ներգրավումը, ի տարբերության Եվրոպական Միության ու նրա առավել ակտիվ անդամ Ֆրանսիայի ներգրավվածության, մեծացնում է աշխարհաքաղաքական լարվածությունը: Զարչը ընդգծեց Իրանի հավասարակշռված մոտեցման կարևորությունն ու օգտակարությունը՝ առանձնացնելով դրա որոշ դրսևորումներ, օրինակ՝ երկրների առաջնորդների միջև քաղաքական կոնսուլտացիաներին նպաստելը:

Երևանի պետական համալսարանի դոցենտ, պ.գ.թ. **Մենուա Սողոմոնյանը** հանդես եկավ «Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական ճարտարապետության և դինամիկայի ուսումնասիրության տեսական-հայեցակարգային հենքը» թեմայով զեկուցմամբ: Զեկույցի հիմնական թեզն այն էր, որ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական ճարտարապետությունն ու դրա դինամիկան խորությամբ հասկանալու համար անհրաժեշտ է դրանք ուսումնասիրել միջազգային հարաբերությունների կառուցվածքային ռեալիզմի, նոր դասական ռեալիզմի, գիտական լիբերալիզմի և կոնստրուկտիվիզմի տեսությունների շրջանակներում առկա հայեցակարգերի համադրությամբ: Կառուցվածքային ռեալիզմի կարողությունների բաշխվածության հայեցակարգը 44-օրյա պա-

տերազմի պատճառների վերհանման ամենաէական հայեցակարգային գործիքն է, սակայն զուտ կարողությունների բաշխվածության դինամիկան վերհանելը չի կարող սպառիչ պատասխան տալ պատերազմի պատճառի հարցին: Հարկավոր է վերհանել նաև Հարավային Կովկասի ուժային բալանսի փոփոխության իրողությունների ադեկվատ ընկալման հանգամանքը, ինչի հնարավորությունն ընձեռում է նոր դասական ռեալիզմը: Բացի այդ, այդ ընկալումներն առավել հիմնավոր պատկերացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գիտական լիբերալիզմի շրջանակներում գործող պետական նախընտրությունների հայեցակարգը, դե իսկ պետական նախընտրությունների ձևավորման հարցում հնարավոր չէ անտեսել էլիտայի ինքնությունների փոփոխության գործոնը, որն էլ արժևորվում է կոնստրուկտիվիզմի տեսության կողմից:

«Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության պատմական ակունքները» թեմայով զեկուցում կարդաց Թեհրանի Փայամ Նուր համալսարանի դոկտոր **Մոթահարի Հոսեյնին:** Նրա զեկուցման հիմնական թեզն այն էր, որ Արցախյան հակամարտությունը չորս ժամանակաշրջանային զարգացումների արդյունք է. 1. Սեֆյան դարաշրջան, երբ Իրանի կառավարող դինաստիան հայկական էթնիկ տարրն օգտագործել է օսմանցիների դեմ պայքարում, 2. Ռուս-իրանական պատերազմների ժամանակաշրջան (1804–1828 թթ.), երբ հայ և մահմեդական տարրերի միջև սկզբնավորվեցին տարածքային վեճերը, 3. Ցարական կառավարության վարչական բաժանումների ժամանակաշրջանը, 4. Ռուսական կայսրության փլուզման արդյունքում Հարավային Կովկասում նորանկախ պետությունների՝ Հայաստանի ու Ադրբեջանի գոյության ժամանակաշրջանը:

«Ռուսաստանը, «Հյուսիս-Հարավ» միջանցքը, տարածաշրջանային տնտեսական փոխկապակցվածությունը և Հայաստանը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Բեյրութի Ամերիկյան համալսարանի հանրային քաղաքականության և միջազգային հարաբերությունների Իսսամ Ֆարես ինստիտուտի ասոցացված գիտաշխատող **Եղիա Թաշճյանը:** Նրա զեկուցման հիմքում առկա հե-

տազոտության թիրախը Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարավկովկասյան և մերձավորարևելյան ուղղություններ վրա միջանցքային փոխկապակցվածության ազդեցությունն է, հատկապես ուկրաինական պատերազմի լույսի ներքո: Ուկրաինական պատերազմը Ռուսաստանին ստիպում է մեծացնել առևտրատնտեսական գործընկերությունը Արևելքի երկրների հետ, ինչի պայմաններում մեծանում է Ռուսաստանի հետաքրքրությունը միջանցքային նախագծերի հարցում: Այս համատեքստում, պայմանավորված աշխարհագրական դիրքի ու հետևողական դիվանագիտության գործոններով, աճում է Ադրբեջանի աշխարհաքաղաքական կշիռը Ռուսաստանի համար, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում Արցախյան հարցի ու Հայաստանի անվտանգային միջավայրի վրա: Ե. Թաշճյանը համարեց, որ միջանցքային աշխարհաքաղաքականության մեջ ամենաթույլ օղակը Հայաստանն է, որն իր դիրքերն ամրապնդելու համար ռազմավարական մի շարք քայլեր պետք է ձեռնարկի, որոնցից են, օրինակ՝ Ծոցի երկրներում իր դիվանագիտական ներկայության ընդլայնումը, Սփյուռքի հետ գործակցությամբ «Զանգեզուրի միջանցքի» թուրք-ադրբեջանական ձգտումներին արդյունավետ հակազդումը, աշխարհաքաղաքական բախումների թատերաբեմի չվերածվելը:

«Հայաստան – Իրան փոխգործակցության խորացումը 44-օրյա պատերազմից հետո» թեմայով զեկուցում կարդաց Երևանի պետական համալսարանի ասիստենտ, պ.գ.թ. **Լիանա Պետրոսյանը**: Իրանի հետ փոխգործակցության ընդլայնումն ու խորացումը, ռազմական բաղադրիչի շեշտադրմամբ, Հայաստանի համար, ըստ Լ. Պետրոսյանի, ձեռք է բերում կենսական նշանակություն հատկապես 2020թ. 44-օրյա պատերազմից հետո Հարավային Կովկասում Թուրքիայի, Իսրայելի և Արևմուտքի ազդեցությունների մեծացման պայմաններում: Այդ փոխգործակցության հնարավորությունը մեծացնող հանգամանքներ են, ի թիվս այլոց, հետևյալները.

- Իրանի համար թուրք-ադրբեջանական «Զանգեզուրի միջանցք» գաղափարի անընդունելի լինելը,

- հայ-իրանական տնտեսական կապերի զարգացման լուրջ ներուժը, ներառյալ տրանսպորտային-կոմունիկացիոն նախագծերում համատեղ մասնակցության հնարավորությունը,
- հայ-իրանական պատմամշակութային դարավոր կապերը զարգացնելու ներուժը:

«Իրանական «Դիմադրության առանցք» գաղափարախոսության տարածման գործիքը. Ադրբեջանական Հանրապետության օրինակով» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Երևանի պետական համալսարանի դասախոս **Գարիկ Միսակյանը:** Միսակյանը նշեց, որ ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի՝ «Չարիքի առանցք» արտաքին քաղաքական գաղափարին ի պատասխան, Իրանը շրջանառության մեջ է դրել «Դիմադրության առանցք» գաղափարը, որի բովանդակությունը վերաբերում է շիայականությանը՝ որպես իսլամական արդարության վերականգնման ուղու, ինչպես նաև արևմտյան իմպերիալիզմի ազդեցության դեմ համատեղ ու կազմակերպված դիմակայությանը: Գաղափարի արդյունավետության դրսևորումներից է, ըստ Միսակյանի, այն, որ դրան ակտիվորեն հարում են Իրաքը, Սիրիան, Հաթիմյանների բանակը, Հեզբոլլահը և նույնիսկ Ադրբեջանի հուսեյինականները: Վերջիններս Ադրբեջանում պայքարում են իսրայելական ազդեցության, հակակրոնական բռնապետության դեմ և հանուն շիայական կարգի հաստատման:

ԻԻՀ Հայաստան – Իրան համագործակցության զարգացման հիմնադրամի նախագահ **Փույա Հոսեյնին** հանդես եկավ «Հարավային Կովկասի դերը տարածաշրջանային և միջազգային զարգացումներում և մրցակցությունում» վերտառությամբ զեկուցմամբ: Զեկույցի հիմնական թեզն այն էր, որ Հայաստանի համար բացասական դերակատարություն հանդես բերող խաղացողների՝ Հարավային Կովկասում ներգրավմանը զուգընթաց առկա են այդ խաղացողներին հակակշռող դերակատարներ, որոնց ներգրավումը և այդպիսով մրցակցային դաշտ բերելը ռիսկային է, բայցև միաժամանակ կան դրանից օգտվելու հնարավորություններ: Հոսեյնին նշեց, որ Հայաստանի համար ձեռնտու հեռանկար է Իրանին հայ-ադրբեջանական դիվանագիտական, բանակցային գոր-

ծընթացներում ակտիվորեն ներգրավելը, քանի որ Իրանը կարող է առաջ տանել որևէ բևեռից անկախ գործելու դիրքորոշումներ:

«Իրանի հյուսիս-արևմուտքի թյուրքախոսների դիրքորոշումը 2020 թ. Արցախյան պատերազմում» թեմայով զեկուցում կարդաց Օրբելի կենտրոնի վերլուծաբան **Ժաննա Վարդանյանը**: Նա էական համարեց Իրանի հյուսիս-արևմուտքի թյուրքախոսների գործոնը Իրանի արտաքին քաղաքականության ձևավորման ու կենսագործման գործում, որն արտահայտվում է այդ շրջանի պատգամավորների գործունեությամբ: Այդ գործոնը դրսևորվում է նաև թյուրքախոսների ազդեցությունը կրող լրատվամիջոցներով հանրային կարծիքի գեներացմամբ, որոնց բացասական հետևանքներն արդեն իսկ զգալ են տալիս իրենց, օրինակ՝ որոշ պատգամավորների կողմից հայ-իրանական հարաբերությունները թիրախավորելով: Ըստ այդմ, հայկական կողմի ջանքերը պետք է ուղղվեն Իրանի հայամետ պատգամավորներին ու հասարակական գործիչներին հայանպաստ բովանդակություն մատակարարելուն:

ԱՄՆ-ի Մասաչուսեթսի Սթոնհիլ քոլեջի պրոֆեսոր **Աննա Օհանյանն** էլ հանդես եկավ «Գերմայրցամա՞ք, թե՞ խորխորատ. Համաշխարհային կարգի եվրասիական կոնտինենտալիզմի հեռանկարներն ու վտանգները» վերտառությամբ զեկույցով: Նրա դիտարկմամբ՝ առավել փոքր տարածաշրջաններում ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացների և հատկապես կոնֆլիկտների ուսումնասիրման կարևոր բանալի են մեգատարածաշրջանների (գերմայրցամաքների – supercontinent) հատույթով տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումները: Հարավային Կովկասի անվտանգային իրադրության սրումը, 2020 թ. պատերազմը և շարունակվող վտանգավոր կոնֆլիկտային գործընթացները Մեծ Եվրասիայի աշխարհաքաղաքական առանձնահատկությամբ են նաև պայմանավորված: Այս հարցում էական հանգամանք համարվեց Ռուսաստանի կողմից կայսերական հայացքով տարածաշրջանային գործընթացներին վերաբերվելը: Չինաստանի բարձրացումն էլ իր հերթին է ազդում փոխկապակցված տարածաշրջանների ապահամաշխարհայնացման տեմպերի վրա:

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՈՒԺԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ 2020 Թ. ՊԱՏԵՐԱԶՄԸ

TRANSFORMATION OF THE BALANCE OF POWER IN THE SOUTH CAUCASUS REGION AND THE 2020 ARTSAKH WAR

Հայերենի խմբագիր և սրբագրիչ Ք. Խեմչյան
Ամգլերենի թարգմանիչ և սրբագրիչ Ն. Ադամյան

Հրատ. պատվեր N 1331
Ստորագրված է տպագրության՝ 20.09.2024 թ.:
Չափսը՝ 60x84¹/₁₆: 25.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24.



Շապիկը՝ Արմինե Ավետիսյանի

ISBN 978-5-8080-1548-7